2.6(47.925)
Ա-58
29-50
103-145
168-207
207-16

Ս.Ա.ԵՍԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ս.Ա.ԵՍԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐԱԿ 1

ՔԱՐԻ ԴԱՐ - ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԴԱՐ

ԵՐԵՎԱՆ - 1992

Խմբագիր՝ պատմ. գիտ. թեկնածու Գ. Ե. Արեշյան

Հայաստանի հնագիտության վերաբերյալ առաջին ամփոփ դասագիրքն է սա, ուր վեր են հանված Հայկական լեռնաշխարհի հուշարձանները, դրանց նյութական, հոգևոր մշակույթը, տնտեսաձևերը, արհեստները, կապերը հարակից շրջանների հետ:

Հնագիտական տվյալներով ցույց է տրված պատմական պրոցեսի վերականգնման մեթոդիկան և պրակտիկան, ինչպես նաև հնագիտության դերը պատմական մյուս գիտությունների շարքում:

Դասագիրքը նախատեսվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների պատմության ֆակուլտետների ուսանողության, ինչպես նաև պատմաբանների, հնագետների, ազգագրագետների, արվեստաբանների և ընթերցող լայն հասարակության համար:

Ե ---------- - 92

704 / 02/

171770

ЕСАЯН СТЕПАН АЛЕКСАНДРОВИЧ

АРХЕОЛОГИЯ АРМЕНИИ

выпуск I

(каменный век - поздняя бронза)

На армянском языке

Издательство Ереванского университета

Ереван - 1992

Եսայան Ս. Ա., 1992

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հնագիտությունը[1] ուսումնասիրում է մարդկային հասարակության զարգացումը և այդ զարգացման օրինաչափությունները քար մշակույթի պեղածո մնացորդների:

Պատմական գիտությունն իր ուսումնասիրության համար օգտվում է երկու խումբ աղբյուրներից՝ գրավոր և առարկայական: Հնագիտությունը հիմնականում ուսումնասիրում է իրեղեն աղբյուրները: Մարդկային հասարակության ամենավաղ ու երկարատև շրջանի ուսումնասիրության հիմքում դրվում են միայն իրեղեն աղբյուրները: Գրավոր աղբյուրները հանդես են եկել մոտ 5500 տարի առաջ, իսկ Հայաստանի պատմությունը լուսաբանվում է գրավոր վավերագրերով մ.թ.ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսից սկսած: Այդ հնագույն տեքստերը գրվել են հարևան երկրներում՝ շումերերեն, աքքադերեն լեզուներով: Հայաստանում գրված հնագույն տեքստը և հիերոգլիֆ արձանագրությունները վերաբերում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի երկրորդ և 1-ինի առաջին կեսին: Դրանք գրված են խեթերեն, աքքադերեն, ուրարտերեն, էլամերեն և հին պարսկերեն լեզուներով: Աղբյուրագիտական հսկայական նշանակություն ունեն ավելի ուշ գրված արաբերեն, հունարեն և լատիներեն արձանագրությունները, ինչպես և հայերեն միջնադարյան վիմագրերը: Ուստի հնագետը պետք է լավատեղյակ լինի քանասիրական գիտությունների մեթոդներին: Հնագիտության հարակից պատմական օժանդակ գիտություններ են դրամագիտությունը, հերալդիկան /զերբերի և գինանշանների ուսումնասիրությունը/: Հնագիտությունը սերտորեն կապված է հնամարդաբանության /պալեոանթրոպոլոգիա/, հնակենդանաբանական /պալեոզոոլոգիա/, հնաբուսաբանության /պալեոբոտանիկա/, չորրորդական /անթրոպոգենի/ երկրաբանության և այլ գիտությունների հետ: Հնագիտության աղբյուրները հնագիտական հուշարձաններն են՝ բնակավայրերը, ամրոցները, պաշտամունքային տարբեր կառույցները, դամբարանները, դրանցից հայտնաբերված նյութը ենթարկվում է մանրակրկիտ ուսումնասիրության, որի եղանակները արմատապես տարբերվում են գրավոր աղբյուրների ուսումնասիրության եղանակներից: Նշված նյութերի ուսումնասիրությունը ինքնանպատակ չէ, դրա արդյունքները լայնորեն օգտագործվում են որպես պատմական ուսումնասիրության նյութ կամ, ինչպես նշվել է, որպես պատմական աղբյուրներ: Ըստ անգլիացի հայտնի Գ.Չայլդի, հնագիտությունը հեղաշրջում մտցրեց պատմական գիտության մեջ. ,,Այն պատմության տարածական հորիզոնը լայնացրեց եռյեղքան, որքան

---

1. Հնագիտությունը /միջազգային արխեոլոգիա տերմինը/ հունարեն ,,արխայոս,,-հին և ,,լոգոս,, - խոսք բառերի միաձուլությունն է, որն այժմ ընկալվում է որպես հնագիտություն:

ատաղձիությունը ատաղձիության հորիզոնը: Այն պատմության համար հարյուրավոր անգամներ մեծացրեց անցյալը ներթափանցելու հնարավորությունները, այնպես, ինչպես մանրադիտակը կենսաբանության համար քանդահայտեց մեծ օրգանիզմներում թաքնված անգամ ամենափոքր հյուսվածքների կյանքը: Վերջապես այս ուսումնասիրությունը մացրեց այնպիսի փոփոխություններ պատմական քավանդակության և ծավալի մեջ, ինչպես ռադիոակտիվ ուսումնասիրության մեթոդը քիմիայի մեջ,,:

Այս ամենի նշանությունը ապացուցված է նրանով, որ առանց հնագիտության ավյալների չէին կարող զրվել նախնադարյան հասարակության, Հին Արևելքի, անտիկ ժամանակաշրջանի կամ միջնադարի պատմությունները, ինչպես նաև հայ ժողովրդի պատմությունը:

Հնագիտական պեղումներից հայտնաբերված նյութերի հիման վրա հնագետները կատարել են մարդկության պատմության ժամանակաշրջանների հետևյալ բաժանումը՝ քարի դար, բրոնզի դար, երկաթի դար: Ավելի ուշ ժամանակաշրջանները բաժանվում են զրավոր պատմության սկզբունքով՝ անտիկ դարաշրջան, միջնադար, երբ նյութի բազմազանությունը թույլ չէր տալիս շարունակել զուտ հնագիտական դասակարգումները:

Գնահատելով հնագիտական նյութերը որպես պատմական աղբյուրներ, անհրաժեշտ է նշել, որ համեմատական հուշարձանները շատ ավելի հուսալի և օբյեկտիվ աղբյուրներ են, քան այս կամ այն պատմական ժամանակաշրջանի ժամանակակիցների զրավոր աղբյուրներում պահպանված վկայությունները: Պատմության համակողմանի ուսումնասիրության նպատակով հնագիտությունը ուսումնասիրում է՝ ոչ միայն գտնված իրերը, այլև շինությունները, որտեղից դրանք գտնվել են, վայրերը, որտեղից դրանք թերվել են, և հնագիտական հուշարձանի միջավայրը: Եվ այս պատճառով հնագիտությունը դասվում է պատմական հիմնաբար գիտությունների շարքին: Քանի որ հնագիտական աղբյուրները հանվում են հողի տակից, հնագիտությունը պատկերավոր անվանում են ,,թաղված գինված պատմագիտություն,,:

Իսկ ինչպե՞ս հողի տակ հայտնվեցին հնագիտական մնացորդները: Բացի հազվադեպ գտնվող գանձերից, այս կամ այն պատճառով հողում թաղված թանկարժեք իրերից, մնացած իրերը հողի մեջ են ընկել բուսրովին այլ պատճառներով: Դամբարաններում դրանք տեղադրվել են՝ կապված անդրշիրիմյան աշխարհի մասին պատկերացումների հետ, ուր այդ նյութերը պետք է ծառայեին ֆ տիրոջը անդրշիրիմյան աշխարհում: Դամբարաններում գտնված նյութերը կազմում են այսպես կոչված փակ հավաքիրներ, որոնց վերլուծությունը կարևոր է ժամանակագրական հետազոտությունների համ և արժեքավոր տեղեկություններ է հաղորդում ավյալ հասարակությունու զուլբային և սոցիալական վիճակի մասին, իսկ դամբարանային կառույց-

ները ներկայացնում են ճարտարապետական և շինարարական մշակույթը: Եղել են դեպքեր, երբ հավալիրները կողոպտվել են և թանկարժեք իրերը տանելուց բացի խախտվել է մնացածի դասավորությունը: Այդ փակ համալիրները խաթարված են լինում նաև երկրորդական և երրորդական թաղումներով, երբ դարեր կամ հազարամյակներ հետո հնագույն դամբարանների մեջ թաղվում էին ուրիշ ննջեցյալներ: Այս դեպքում հին թաղումը կամ ծածկվում էր հողով, կամ նրա նյութերը հավաքվում էին մի անկյունում, իսկ ազատված տեղում տեղադրվում էր նոր հանգուցյալը՝ իրեն ուղեկցող նյութերով:

Շատ ավելի բարդ է ամրոցներից, բնակատեղիներից և այլ շինություններից հողի հատ շերտի տակից հայտնաբերված իրերի մեկնաբանումը: Յուրաքանչյուր բնակավայրի մնացորդների ամբողջությունը կազմում է մշակութային շերտ, որը ծածկում է նրա տակ գտնվող և երկրաբանական կազմվածք ունեցող հիմնահողը: Վերջինիս հնագիտության մեջ ընդունված է ,,մայր հող,, անվանել: Մշակութային շերտը մարդու գործունեության ընթացքում պատմականորեն կազմավորված շերտավորված համակարգ է:

Հայտնաբերվող գտածոները երբեք իրենք իրենց չէին կարող հայտնվել հողի տակ: Հայաստանում հնագույն շինությունները հիմնականում կառուցվում էին չթրծած աղյուսից, որոնք փլվում էին 30-35 տարվա ընթացքում, և նրանց տեղում կառուցվում էին նորերը՝ հեռացնելով կավաքլուրները: Տների առաջ թափվում էին մոխիր, կերակրի մնացորդներ /ոսկորներ/, չարդված իրեր /խեցեղեն, ոսկոր, քար/ և այլն: Այս բնակատեղիները հնագիտական գրականության մեջ կոչվում են մոխրե բլուր՝ թել կամ թափ: Դրանց բարձրությունը Առաջատար Ասիայում հասնում էր 30-35 մ: Լեռնային և նախալեռնային գոտիներում շինությունները սովորաբար կառուցվում էին քարից կամ քարե հիմքի վրա՝ աղյուսե պատերով, այդ պատճառով բնական կառույցները ավելի երկար էին պահպանվում: Այդ շրջաններում մշակութային շերտի հաստությունը շատ ավելի նվազ է: Հին քարի դարի բնակավայրերի առկայությունը կապված է որսորդահավաքչական կենցաղի հետ: Այդ բնակավայրերը պայմանականորեն կոչվում են կայաններ, որոնք միավորում են ինչպես բացօթյա /Ասատնի դաշ, Արզնի և այլն/, այնպես էլ քարայրային բնակավայրեր /Ազոխ, Արցախում, Երևանյան և Լուսակերտի քարայրները և այլն/:

Նոր քարի դարից սկսած, մեծ խումբ են կազմում չամրացված գյուղական տիպի բնակատեղիները: Սկսած մ.թ.ա. 3-րդ հազարամյակից, չամրացված բնակատեղիներին զուգահեռ առաջանում են ,,կիկլոպյան,, շարվածքի պարիսպներով ամրացված բնակավայրեր, որոնք, որպես կանոն, գրականության մեջ կոչվում են կիկլոպյան ամրոցներ և հարատևում են մինչև մ.թ. 1-ին հազ. կեսը: Այս ամրոցներն ունեին տարբեր ֆունկցիոնալ նշանա-

կություն և ներկայացնում են հատակագծման և շինարարական տեխնիկայի մի քանի տիպ: Դրանց մի մասը անմշակ ժայռաբեկորների շարվածքով ամրացված խոշոր բնակավայրեր են: Հեռագայում պատերը դառնում են քազմաշերտ: Գոյություն ունեին նաև ամրոցներ առանց մշտական բնակության; Դրանք ապաստարաններ էին, ուր վտանգի պահին հավաքվում էին շրջակայքի բնակչությունը և ընտանի կենդանիների հոտերը: Լայնորեն տարածված էին պահակակետ-ամրոցները, որոնք կառուցվում էին լեռնացքներում, լեռնային արոտավայրերում կամ խոշոր բնակավայրերի մոտակայքում՝ թշնամու հարձակումները ետ մղելու համար: Ավելի ուշ առաջանում են նաև ամրացված քաղաքային տիպի բնակավայրեր՝ զարգացած արհեստավորական արտադրությամբ:

Վանի թագավորության շրջանում անտիկ և միջնադարյան ժամանակաշրջանների ընորոշ է հզոր պարիսպներով պաշտպանված խոշոր քաղաքների առաջացումը՝ քազմաթիվ քաղաքացիական և հոգևոր շինություններով: Նշված ժամանակաշրջանների քաղաքներն ունեին իրենց ընորոշ քաղաքաշինական-ճարտարապետական առանձնահատկությունները: Քաղաքների զարգացումը բնականոն չէր, այն հաճախ ընդհատվում էր քաղաքային կյանքի անկումով, մանավանդ ժամանակաշրջանների անցումային փուլերում:

Բազմատեսակ են նաև Հայաստանում գտնվող տարբեր տիպերի դամբարանները և դամբարանադաշտերը: Հանդիպում են ինչպես տարբեր կառուցվածքի, այնպես էլ տարբեր ժամանակաշրջանների դամբարաններ, որոնք վկայում են դամբարանադաշտերի երկարատև գոյատևման մասին: Այս քազմազանությունը պայմանավորված է ինչպես թաղումների էթնիկ պատկանելությամբ, դրանց հոգևոր մշակույթի առանձնահատկություններով, այնպես էլ զույգային և սոցիալական տարբերություններով: Դրանցից ամենահինը վերաբերում է ուշ նեոլիթյան և վաղենեոլիթյան ժամանակաշրջանին: Որպես օրենք, մինչև վերջերս քրիստոնեական ժամանակաշրջանի դամբարանները չէին հեռազոտվում հնագետների կողմից, քանի որ ըստ քրիստոնեական սովորույթի դամբարաններում ուղեկցվող նյութ չէր դրվում:

Հայաստանի քրոնզեդարի և երկաթեդարի դամբարաններն քաղ իրենց հատկանիշների քաժանվում են քարարկղերի, դամբարանաքլուրների և կրոմլեխների, չնայած վերջիններս կարող են հանդես գալ ինչպես ինքնուրույն /հիմնահողային դամբանաքցերով/, այնպես էլ շրջապատել դամբանաքլուրները և քարարկղերը: Սակայն հանդիպում են կառուցողական շատ ավելի քազմաքնույթ հորինվածքով դամբարաններ: Օրինակ՝ մի քանի տասնյակ քառակուսի մետր մակերեսով դամբանաքցերը ծածկվում էին գերանի ծածկով և ամրացվում փայտե այուներով, որի վրա շատ հաճախ լցվում էր դամբանաքումքը: Ամենից տարածվածը տարբեր կառուցվածքի քարարկղերն են,

որոնք մեծ դամբանաբլուրներում վեր են ածվում խոշոր քարե պատերով շարված, հարթ կամ ատիճանաձև խոշոր քարե սալածածկով դամբանարան-ների։ Միջին բրոնզեդարից սկսած, Հայաստանում առաջին անգամ հանդի-պում են կատակոմբային ձևի դամբանախցերը՝ փորված կավի կամ տուֆի շերտի մեջ։ Բացի դամբարանների կառուցվածքային ձևերից, բազմատեսակ է նաև թաղման ծեսը։ Տարբեր ժամանակաշրջաններում լայնորեն գործածա-կան էր դեակիզումը, երբեմն դիակը ենթարկվում էր մասնատման, հան-դիպում է նաև ոսկորների փշրում։ Հուղարկավորումը կատարվում էր խորի վրա հատուկ կառուցված կավե կամ փայտե հարթակների վրա, բազկա-թոռների վրա, կարասների մեջ, ինչպես նաև հատուկ պատրաստված քրոն-զե, քարե և կավե դագաղներում, տարբեր դիրքերում։

Յուրաքանչյուր այսպիսի բնակավայր, դամբարան, հանք, ոռոգման համակարգի մնացորդ, մոնումենտալ արվեստի նմուշ /ժայռապատկերներ, վիշապներ, քանդակներ, ֆալոսներ, կուռքեր/, հին շենքերի մնացորդ-ներ, ճանապարհներ և այլ կառույցներ, ինչպես նաև նրանցում հայտնա-բերված իրերը և մշակութային այլ մնացորդները պատմահնագիտական հու-շարձաններ են, հետևաբար և այն ժամանակաշրջանի ուսումնասիրման պատ-մական աղբյուրը, երբ դրանք ստեղծվել են կամ շարունակել են գոյա-տևել։ Երբեմն դրանք անվանում են ,,հնություններ,, կամ ,,արտեֆակտ-ներ,, , այդ պատճառով ,,հնագիտական հուշարձաններ,, և ,,հնագիտա-կան աղբյուրներ,, անվանումները որոշ իմաստով հոմանիշներ են։

Հնագիտական հուշարձանների քացահայտումը որոշակի դժվարու-թյուն է ներկայացնում։ Ճիշտ է, նրանց մեջ շատ կան այնպիսիները, որոնք հեշտ է ճանաչել։ Դրանց թվին են պատկանում մեծ մասամբ կիկլո-յան ամրոցները, հողահարթեցումից խուսափած բլուր-բնակավայրերը, բա-զմաթիվ դամբարաններ՝ դամբարանաբլուրներ, քարարկղներ, եկեղեցի-ներ, ավերակներ և այլն։ Բայց հուշարձանների մեծ մասը ծածկված է հողի հաստ շերտով։ Դա հաճախ է նկատվում Հայաստանում /ինչպես և այլ լեռ-նային շրջաններում/, որտեղ բնական գործոնների ազդեցությամբ լանջ-երից բերված հողը տեղ-տեղ ծածկել է հուշարձանները մի քանի մետրերի հասնող հաստ շերտով։ Դա հատկապես պարզ երևում է ճանապարհների շինարարության ժամանակ, ջրանցքների և հիմքերի փորվածքի կտրվածքու-ղղությամբ ակնհայտ երևում են հին հուշարձանները՝ ծածկված բերովի հողի շերտերով։

Նման հուշարձաններ բացվել են բնական ճանապարհով /ֆլվածք, ծնհալ, սելավ, հողմահարում/, ինչպես և հողը վարելու կամ շինարա-կան հողային աշխատանքների ժամանակ։ Այդպիսի աշխատանքների շնորհի բացվել են այնպիսի արժեքավոր գանձեր, ինչպես ՀՈՂազի, քարաշամքի,

Շիրակավանի, Լոռի-Բերդի Մեծամորի դամբանաբլուրները, Ջրաշենի /Երևան/, Աթթալայի, Այրումի հուշարձանները, որոնք հարստացրել են հայ գիտությունն ու մշակույթը վաղ քրոնզե դարից սկսած մինչև մ.թ.ա. 4-5-րդ դարերը և այլն: Հողմահարման շնորհիվ հայտնաբերվել է ուրարտերեն սեպագիր արձանագրության բեկոր Կարմիր-բլուրում, որից սկսվել են հսկայական հայտնագործություններ Վանի թագավորության վերաբերյալ: Արարատի շրջանում կատարված հողային աշխատանքների ընթացքում հայտնաբերվեց լատինատառ մի արձանագրություն, որի շնորհիվ նշվեց Հին Հայաստանի մայրաքաղաք Արտաշատի տեղը և սկսվեցին անտիկ աշխարհի այդ հոյակապ հուշարձանի սիստեմատիկ պեղումները: Ճանապարհաշինության ընթացքում հայտնաբերվեց Սպիտակի միջնադարյան քարայրային ավանը: Այս ցուցակը կարելի է շատ երկար շարունակել, քայց պետք է հակիրճ ընութագրել նաև հուշարձանների որոնման հարցերը:

Բացի պատահաբար քացվող հուշարձաններից, շատ վաղուց հնագետները վարում են սիստեմատիկ որոնումներ: Իմանալով այս կամ այն խմբի հուշարձանների տեղադրման օրինաչափությունները, հետևաբար՝ նրանց գտնվելու հնարավոր վայրերը, նրանք ուսումնասիրում են տեղանքը, հավաքում հանքավայրերի այսօրվա մակերեսին գտնվող հին իրեր, խեցեղենի, աշխատանքի գործիքների բեկորներ, դիտարկում պատերի մնացորդներ և այլն՝ հանդես ուսումնասիրելով տարածական առանձին շրջանների կամ որոշակի տիպի հուշարձաններ փնտրելով, այդ ընթացքում գտնում են նաև այլ հուշարձաններ: Հնավայրերի մակերեսից առանց պեղումների հավաքված գտածոները կոչվում են վերգետնյա նյութ: Վերգետնյա նյութերի ժողովածուները կողմնորոշիչ են հնավայրերի տեղադրությունը, ժամանակագրությունը և զբաղեցրած տարածքը նշելու համար:

Հայաստանի նախախորհրդային շրջանի հնագետները փնտրում էին հիմնականում որոշակի ժամանակաշրջաններ կամ տիպեր ներկայացնող հուշարձաններ: Այսպես, Ակների /Որնակի/ հայտնի դամբարանադաշտում պեղումներ են կատարել Ա.Երիցյանը, Ն.Մառը, Ե.Թադայշվիլին Ռեդկին, Լազերում՝ Ֆ.Բայերնը, Մուրբեսը, Ֆիլիմոնովը, Ցիլոսիանին, Ուվարովան, Բոբրինսկին: Դեքեղ գետի ավազանը ուսումնասիրել է Ֆ. դե Մորգանը, որտեղ նա պեղել է շուրջ հազար դամբարան: Հայաստանի մշակույթի ուսումնասիրման գործում մեծ դեր է ունեցել Ն.Մառը, որը բացի Անիի փայլուն սիստեմատիկ պեղումներից և Ակներից, ուսումնասիրել է նաև Շիրակի և Գառնիի մի շարք հուշարձաններ: Նշանակալից է Երվանդ Լալայանի կատարած հնագիտական աշխատանքը, որը ուսումնասիրել է հատարյա ամբողջ Սևանի ավազանը, սկսել է Նախիջևանի հայտնի Քյուլթեփե առաջին բլուրի պեղումները և որոնումներ է կատարել Արցախի և Կուրի ձախափնյա շատ հուշարձաններում: Հայաստանի հնագիտության մեջ էական ներդրումներ ունեն

(նաև Ռ.Վիրխովը, Ա.Իվանովսկին, Է.Ռելսերը, Ս.Տեր-Ավետիսյանը, Խ. Գաղայանը և ուրիշներ:

Խորհրդային շրջանում Հայաստանի հուշարձանների հնագիտական (ուսումնասիրությունը սկսեց հետաքրքիր լինել պատմագիտական խնդիրների-(լուսաբանմանը և զարգացավ հիմնական երկու ուղղություններով: Առաջի-(նը դրսևորվել է որոնման երթուղային գիտարշավները և հետախուզական (պեղումների միջոցով և նպատակամղված էր աշխարհագրական որոշակի տա-(րածքում գտնվող տարբեր կամ որոշ ժամանակաշրջանների հնագիտական (հուշարձանների հնարավորին չափ համապարփակ հայտնաբերմանը, արտաքին (նշանների արժանագրմանը և նրանց վերաբերող առանձին նյութերի հայ-(թայթմանը: Երկրորդ ուղղությունը ներկայացնում են գիտական տեսանկ-(յունից առավել խոստումնալից առանձին հուշարձանների քազմամյա սիս-(տեմատիկ պեղումները:

Հետախուզական երթուղային առաջին գիտարշավները դեռևս 1920-ական թթ. նախաձեռնել է Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեն: Առաջին նախաձեռնողներից էին Թ.Թորամանյանը և Ն.Լիսիցյանը Հետախուզական որոնման աշխատանքները տարբեր տարիների ընդգրկել են Սևանի ավազանը, Արազածոտնը, Զանգեզուրը, Լոռին, Ղոռայքը, Շիրակը: Գիտական առաջին որոշակի արդյունքներ ներկայացնող հետախուզական գիտարշավը իրականացվել է 1930-ական թթ. սկզբներին Բ.Գիսարովսկու, Ե.Բայբուրդյանի, Ա.Հաչյանի և Լ.Գյուլազդրյանի կողմից Արազածի լանջե-րին և մասամբ՝ Սևանի ավազանում: Այդ, ինչպես և Ս.Բարխուդարյանի հետախուզական աշխատանքների ընթացքում հիմնականում ուսումնասիրվել են, այսպես կոչված, կիկլոպյան ամրոցները: Հետպատերազմյան տարիներ-ին կատարված հետախուզական որոնման աշխատանքներից առավելապես արդ-յունավետ էին Հ.Եղիազարյանի որոնումները Վայքում, Ս.Եսայանինը՝ Շամշադինի, Իջևանի և Նոյեմբերյանի շրջաններում, Օ.Խնկիկյանը՝ Զան-գեզուրում: Այդօրինակ աշխատանքները նոր որակ են ստացել 1975 թվա-կանից, երբ Հայաստանի ԳԱ ինստիտուտները, Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման վարչությունը և Երևանի պետական համալսարանը սկսեցին իրականացնել ընդարձակ հետազոտություն-ների ծրագիր՝ Հայաստանի պատմության և մշակույթի հուշարձանների հան-րագիտարանային քազմահատոր համահավաքի ստեղծման նպատակով: Այդ հետա-զոտությունների միջոցով արդեն հայտնաբերվել են մինչև այդ անհայտ հնագիտական հարյուրավոր հուշարձաններ:

Հնագիտական դաշտային աշխատանքների մյուս ուղղությունը պայմա-նավորված է խոշոր հուշարձանախմբերի սիստեմատիկ պեղումների իրական-ացման անհրաժեշտությամբ: Այդպիսի պեղումների նախաձեռնման առաջին փորձը կատարվել է 1931 թ., Հին Վաղարշապատում Ա.Քալանթարի ղեկավա-

րությամբ: 1930-ական թթ. կեսերին հնագետների և մարտարագետների մի խումբ Հ.Օրբելու ղեկավարությամբ պեղումներ է կատարել Սմբերդում, որը հետագայում շարունակվել է Ս.Հարությունյանի կողմից: Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի սիստեմատիկ պեղումները սկսվել են 1937 թ. Ս.Տեր-Ավետիսյանի կողմից, իսկ այնուհետև շարունակվել են Կ.Ղաֆադարյանի, իսկ այժմ՝Ա.Քալանթարյանի գլխավորությամբ:

Հետագա տարիներին սիստեմատիկ պեղումները ընդգրկվել են հնագիտական գրեթե բոլոր հիմնական ստորաբաժանումներին պատկանող տարբեր տիպերի հնավայրեր: Հին քարեղարի /պալեոլիթ/ հուշարձաններ ուսումնասիրվել են Ս.Մարդարյանի /Արտենի կամ Արտին լեռան ստորոտում և Հրազդան գետի միջին հոսանքում/, Բ.Երիցյանի /Երևանի և Լուսակերտի քարայրներ/ և Հ.Ղազարյանի /Հատիս/ կողմից: Նոր քարեղարի /նեոլիթ/ և պղնձեքարեղարի /էնեոլիթ կամ խալկոլիթ/ բնակատեղիներ պեղվել են Արարատյան դաշտում Ռ.Թորոսյանի /Թեղուտ, Խաթունարխ/ և Գ.Արեշյանի /Աղաբլուր, Մասիս բլուր/ ղեկավարությամբ: Վաղ բրոնզեդարի քաղաքաթիվ բնակավայրերի և դամբարանադաշտերի ուսումնասիրման բնագավառում առավելապես արդյունավետ էին Ե.Բայբուրդյանի ու Ս.Մարդարյանի /Շենգավիթ/, Գ.Արեշյանի /Մոխրաբլուր, Նորաքաց/, Է.Խանզադյանի /Ջրահովիտ/, Ս.Սայանի /Այգևան/, Ռ.Բաղալյանի /Կառնուտ/ կատարած հետազոտությունները: Վերջին տարիներին Տ.Խաչատրյանը /Հառիճ/, Գ.Արեշյանը /Արում, Մայիսյան/, Հ.Սիմոնյանը /Վերին Նավեր/, Է.Խանզադյանը /Մեծամոր/, Վ.Հովհաննիսյանը /Քարաշամբ/ ծավալել են միջին բրոնզեդարյան հուշարձանների պեղումները: Հայաստանի ուշ բրոնզեդարի և վաղ երկաթեդարի փայլուն քաղաքակրթությունը բացահայտվել է Հ.Մնացականյանի /Լճաշեն, Սևանի ավազանի մի շարք դամբարանադաշտեր/, Հ.Մարտիրոսյանի /Կարմիր բլուրի նախաուրարտական ժամանակաշրջանի բնակավայր /, Տ.Խաչատրյանի /Արթիկ/, Ս.Նազարյանի /Աստղի բլուր/, Կարմիր բերդ/, Ս.Դևեջյանի /Լոռի բերդ/, Է.Խանզադյանի /Մեծամոր/, Գ.Արեշյանի /Շամիրամ/, Ռ.Թորոսյանի, Լ.Պետրոսյանի ու Օ.Խնկիկյանի /Շիրակավան/, Գ.Միքայելյանի /Սևանի ավազանի ամրոց-բնակավայրեր/ հետազոտությունների շնորհիվ:

Հայ ժողովրդի պատմական զարգացման մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում ուրարտական մշակույթը, որը հիմնական հատկանիշներով տարբերվում է ինչպես նախորդ, այնպես էլ՝ հաջորդող մշակույթներից: Նրա սիստեմատիկ ուսումնասիրությունը սկսվել է Կարմիր-բլուրի պեղումներով, որոնք կատարվել են 1939-1971 թթ. Բ.Պիոտրովսկու ղեկավարությամբ: Անիի հնագիտական արշավախմբից հետո Դվինի և Կարմիր-բլուրի արշավախմբերը դարձան հնագետների, հայագետների և արևելագետների նախապատրաստման կարևոր օջախներ: 1950 թվականից սկսվել են Երեբունի

ուրարտական քերդաքաղաքի սիստեմատիկ հետազոտությունները /Ն.Հովհաննիսյան և ուրիշներ/, որը կարևորագույն նշանակություն է ունեցել Երևանի նախապատմության և նրա անվան ծագման պարզաբանման համար: Հետազոտում սկսվել են ուրարտական մշակույթի կարևոր մի քանի հնավայրերի՝ Արգիշտիխինիլիի /Հ.Մարտիրոսյան, Գ.Տիրացյան/, Օշականի /Ս.Եսայան/, Արագածի /Կ.Հովհաննիսյան, Հ.Ավետիսյան/, Դովրիի /Ս.Հմայակյան/, Արամուսի /Ս.Եսայան , Հ.Ավետիսյան/ պեղումները:

Մեծ հաջողությամբ է պսակվել մ.թ.ա. 6-րդ մ.թ. 3-րդ դարերի հին հայկական մշակույթի ուսումնասիրությունը: 1949 թ-ից Ռ.Առաքելյանի ղեկավարությամբ սկսած Գառնիի ամրոցի պեղումները իրենց քանակական զարգացումն են ունեցել Հին Հայաստանի մայրաքաղաքներ Արմավիրի /Ռ. Առաքելյան, այնուհետև՝ Գ.Տիրացյան/ և Արտաշատի /Ռ.Առաքելյան/ ուսումնասիրության միջոցով: Այդ խոշոր հուշարձանախմբերի եզրին մանրամասն պեղվել են նույն դարաշրջանի նաև այլ տիպի հուշարձաններ՝ Շիրակավանում /Թ.Տեր-Մարտիրոսով/, Հացավանում /Գ.Տիրացյան/, Կարմրաղբյուրում /Ի.Կարապետյան/ և այլն:

Դվինի ուսումնասիրությանը զուգընթաց ուսումնասիրվել են միջնադարյան այլ հնավայրերի պեղումները: Լոռի քերդի /Ռ. Ղարիբյան/, Նալբանդի /Ա.Քալանթարյան/, Վահանավանքի /Գ.Գրիգորյան/, Ամբերդի /Ս.Հարությունյան/, Զաքարի քերդի /Ե.Սատրյան/, Հին Գետիկի /Գ.Կարախանյան/, Աղստևի հովտի համալիրների /Հ.Եսայան/ և մի շարք այլ հուշարձանների պեղումներ թույլ են տվել վերակազմելու վաղ /մ.թ. 4-8-րդ դ.դ./ և զարգացած /9-14-րդ դ.դ. միջնադարի քանակության կյանքի տարբեր կողմերը, որն ընթացել է երկրի և ավելի փոքր իշխանությունների մասնաքաղաքներում, ֆեոդալական ամրոցներում գյուղական քանակավայրերում, վանական միաբանություններում:

Հնագետներին մեծ օգնություն են ցույց տալիս հետազոտման մի շարք նոր եղանակներ, այդ թվում և օդային հետազոտությունը, որի միջոցով հեշտանում է ոչ միայն նոր հուշարձանների հայտնաբերումը, այլև դրանց հատակագծային լուծումը: Այս եղանակը Հայաստանում դեռևս լայն օգտագործում չի գտել, չնայած այն քանին, որ այն վաղուց օգտագործվել է Կարմիր բլուրի քաղաքային թաղամասերի ուսումնասիրության ժամանակ: Օդից շատ լավ երևում էին փողոցների դասավորվածությունը և քանակելի տների ու թաղամասերի հատակագծերը:

Խորհրդային Միությունում, ինչպես և աշխարհի շատ երկրներում օգտագործվում է ստորջրյա հնագիտությունը: Հայաստանում առաջին անգամ այս եղանակը օգտագործվել է 1960 թ., երբ մի խումբ մոսկովյան ջրասույզներ հետազոտեցին Սևանի հատակը՝ Լճաշեն գյուղից մինչև Այրիվանք տարածքը:

Հայտնաբերված հուշարձանները, որպես օրենք, ենթարկվում են պեղումների: Բնական է, որ մասնագետների սակավության պատճառով չեն կարող պեղվել բոլոր հուշարձանները: Մի մասը անձնազրվում է և վերցվում հաշվառման ու պետական պահպանության, մյուս մասը ենթարկվում է սիստեմատիկ պեղումների, դրանցից շատերը շարունակվում են տասնամյակներով, այլ հուշարձաններում կատարվում են հետախուզական պեղումներ, նշագրվում դրանց ժամանակագրությունն ու շերտագրությունը:

Հնագետը պեղումների ընթացքում ձգտում է հայտնաբերված ամեն մի իր շոշափել ձեռքով և հասկանալ նրա հարաբերակցությունը կողքի իրերի նկատմամբ: Հնագիտական իրերի տեղադրությունը և նրանց փոխադարձ հերթականության բացահայտումը պեղումների վարման ամենակարևոր օրենքն է: Մշակութային շերտերի հերթականությունը, որոնք առաջացել են տարբեր ժամանակներում մարդու գործունեության հետևանքով, կոչվում է շերտագրություն /ստրատիգրաֆիա, որը բաղկացած է լատիներեն ծածկ և հունարեն գրում են ,,գրաֆո,, բառերից. ստրատում նշանակում է շերտերի նկարագրություն/, որին հետևելը շատ քարդ գործ է, դրա համար հարկավոր են որոշակի գիտելիքներ և հուշարձանի իմացություն: Որպես օրենք, վերին շերտերը ստորիններից երիտասարդ են և ծածկում են նրանց: Եթե հուշարձանը անխաթար է, մշակութային շերտի կտրվածքում երևում է շերտերի հերթականությունը: Կարևոր է ոչ միայն ստույգ ֆիքսել և թվագրել շերտերը տանձին-տանձին, այլև պարզել նրանց փոխադարձ հարաբերակցությունը և տանձին թվագրել ամեն մի շերտը: Հանդիպում են նաև միաշերտ հուշարձաններ /ինչպես, օրինակ, Նորաքաղի քնակավայրերը, Զաքարի քերդ ամրոց-քնակավայրը և այլն, որտեղ ամբողջ մշակութային շերտը վերաբերում է մի ժամանակաշրջանի: Ավելի հաճախ հանդես են գալիս բազմաշերտ հուշարձանները, որտեղ կյանքը շարունակվել է մի քանի ժամանակաշրջան, և նրանցից ամեն մեկը թողել է իր հետքը: Այդ հուշարձաններից է միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի միջնաբերդը, որտեղ նշմարվում են շարունակաբար /ուշից դեպի վաղը/ ուշ, զարգացած և վաղ միջնադարյան շերտերը, անտիկ, վաղ երկաթի և վաղ քրոնզեդարի շերտերը, որոնք ներկայացնում են շուրջ 5000 տարվա ընթացքում գոյացած տարբեր մշակույթների մնացորդներ:

Այգեանի քնակատեղին ունի զարգացած և վաղ միջնադարյան շերտ անտիկ, վաղ երկաթի, միջին և վաղ քրոնզեդարյան շերտեր:

Եթե կյանքը որևէ որոշակի հուշարձանի վրա երկար ժամանակ ընդհատվում էր, հնագիտական շերտերի միջև որոշ դեպքերում առաջանում էին ,,մաքուր,, միջնաշերտեր, այսինքն քերովի հողաշերտեր, որոնք չեն պարունակում ոչ մի իր, այսպիսի պատկեր շատ տույգ երևում է Այգեանի,

նախիշևանի, Քյուլեթեփե 1-ին և Մոխրաքլուրի արհեստական „ամող„ բլուր-քնակավայրերում, երբեմն մեկ շինարարական հորիզոնի կամ շերտի հաստությունը հասնում է մի քանի մետրի, որը շատ դժվարացնում է ստույգ Ֆիքսման պրոցեսը: Դրա համար էլ հնագիտական փորձված եղանակ. ավյալ շերտը փորվում է 20-25 սմ խորությամբ, այսինքն այնքան, որքան կարող է փորվել քահով:

Չափման ճշտության համար նախապես կատարվում է ամբողջ հնավայրի ռելիեֆ հանույթը, իսկ այնուհետև պեղամասի մանրամասն հատակագիծը, որը համապատասխանում է հանույթի ավյալներին: Պեղամասը բաժանվում է քառակուսիների /2×2 կամ 4×4 և այլն/, ամեն քառակուսու սահմանում ստույգ Ֆիքսվում են բոլոր շինությունները և գտածոները: Հանույթի ժամանակ լայնորեն օգտագործվում են այնպիսի գործիքներ, ինչպես հարթաչափը, թեոդոլիթը և նիվելիրը:

Հնավայրը անհրաժեշտ է բացել մեծ մակերեսով: Սակայն պեղումները վարում են նաև փոսորակներով կամ ոչ մեծ պեղամասերով, բայց այդ եղանակով կարելի է բացահայտել միայն հուշարձանի շերտագրությունը կամ լավագույն դեպքում բացել առանձին կառույցներ կամ հետաքրքիր իրեր: Անհրաժեշտ է ամբողջովին ուսումնասիրել նաև դամբարանները և դամբանաբլուրների ամբողջ թումբը: Դամբանաբլուրների թմբում հնարավոր են նաև շերտագրական դիտողություններ: Շերտագրական ուսումնասիրությունները դամբանաթցում խիստ հազվադեպ են, այնտեղ ամեն ինչ թաղված է միաժամանակ, սակայն սա չպետք է հանգստացնի հնագետին, քանի որ, ինչպես նշվել է, գոյություն ունեն կրկնակի թաղումներ:

Հուշարձանի շերտագրությունը և հնագետի դիտարկումները օգնում են թվագրության ամբողջապես և նրա առանձին շերտերի և գտածոների թվագրությանը: Շերտագրությունը օգնում է նաև հուշարձանի հարաբերական ժամանակագրության որոշմանը և պարզում է, թե որն է բացված շինություններից կամ գտնված իրերից ավելի հին կամ նոր: Բայց ամենաարդ խնդիրներից է բացարձակ ժամանակագրության բացահայտումը: Այլ կերպ ասած, հնագետը պետք է որոշի, թե երբ է ստեղծվել ավյալ հավաքիրը կամ գտածոն՝ կապելով այն մեր տարեգրությանը: Այսպիսով, հարաբերական և բացարձակ ժամանակագրության հանրագումարը կազմում է ընդհանուր ժամանակագրական համակարգ, որը քնորոշում է հուշարձանի, դամբարանի, իրի, այսինքն յուրաքանչյուր ուսումնասիրվող հուշարձանի ժամանակը: Նման համակարգի կազմման և թվագրման ճշգրտման համար պարտադիր պետք է կազմվի հնությունների ժամանակագրական ստանդարտ: Սակայն անգամ ճիշտ թվագրվող իրերի առկայության դեպքում /դրամներ, արձանագրությամբ իրեր և այլն/ դժվար է ճշգրիտ թվագրել հուշարձանի տարեթիվը, քանի որ իրերը կարող են հայտնվել այդ հուշարձանում շատ ավելի ուշ շրջանում /օրի-

նակ, մ.թ.ա. 8-րդ դարի թագավորներ Արգիշտի 1-ի, Սարդուրի 2-րդի արձանագրություններով վահանները, սաղավարտները, զավաթները գտնված են մ.թ.ա. 7-րդ դարի Թեյշեբայինիի ամրոցում/: Եթե դրանք անգամ համաժամանակյա են իրերին, այնուհանդերձ դրանց՝ հողաշերտի մեջ ամփոփելու ժամանակը անպայման պետք է տարբերվի պատրաստման ժամանակից: Անգամ այդ դեպքում տարբեր գործոնների միջև կարող է մի քանի տասնյակ տարվա տարբերություն լինել: Այդ պատճառով հնագիտական առանձին գտածոների ամենատույլ թվագրությունը սովորաբար ունի 50-100 տարվա ճշգրտություն: Որքան հուշարձանը հին է, այնքան թվագրությունները անճիշտ են: Մարդկային ամենավաղ պատմության փուլերի, ասենք պալեոլիթյան շրջանի հուշարձանների թվագրության ճշտությունը չափվում է հարյուր հազար տարով:

Գտնված իրերի քացարձակ թվագրության պարզման համար հիմնականում օգտագործվում է վիճակագրական համեմատության եղանակը: Դրանից ելնելով, կարևոր նշանակություն է ստանում ամենատարածված գտածոների՝ խեցեղենի, քարի, ոսկորի ուսումնասիրությունը: Ոչ պակաս նշանակություն ունի նաև մետաղե առարկաների ուսումնասիրությունը, չնայած այդ իրերի մի մասը կարող էր կամ ներմուծված լինել, կամ պատրաստվել քերված օրինակների հիման վրա:

Գտնված բոլոր իրերը բաժանվում են տիպերի՝ ըստ ձևի, հարդարման եղանակի, գույնի, զարդանախշերի և այլն: Իրերի ամեն մի խումբ նշված հատկանիշներով բաժանվում է տիպերի, ենթատիպերի և տարբերակների: Այսպիսով տիպը միանշանակ կիրառության նման նյութերի խումբ է, որը այլ խմբերից տարբերվում է որոշակի ձևաքանակական հատկանիշներով:

Միանման նյութերը, հուշարձանները համեմատվում են այլ տեղերից հայտնի հնությունների, փակ համալիրների հետ, որը շատ հեշտացնում է դրանց ինչպես հարաբերական, այնպես էլ քացարձակ թվագրման գործը: Դիտարկելով առանձին հուշարձաններից՝ դամբարանից, քնակատեղիից, գանձից գտնված նյութերը կարելի է առանձնացնել հնագիտական համալիրը: Այսպիսով, հնագիտական համալիր կոչվում է հողի մեջ համաժամանակ ընկած հնությունների հանրագումարը:

Թվագրման համար մեծ նշանակություն ունեն ժամանակակից ֆիզիկայի նվաճումները: Դրանցից ամենատարածվածը ռադիոածխածնային եղանակն է, *որը հիմնված է 14 ատոմային կշռով ածխածնի քայքայման ատիճանի որոշման վրա:* Բացահայտելով ածխածնի քայքայման ատիճանը օրգանական գտածոներում, կարելի է սահմանել ծառի կտրելուց հետո կամ կենդանու մահանալուց հետո անցած ժամանակը: Այս եղանակը տալիս է քացարձակ թվա-

գրություն, երբեմն շատ մեծ տատանումներով:

Առանձին գտածոների կամ համալիրների թվագրության հաստատումը շատ կարևոր է հնագետի համար, բայց դա նրա միակ խնդիրը չէ: Նյութերի քանակական ավելացման հետ, ինչպես միաժամանակյա, այնպես էլ տարաժամանակյա, պետք է ստեղծել ժամանակագրական ամբողջական սանդղակներ, որոնք ընդգրկում են աշխարհագրական ամփոփ տարածքներ, նույնիսկ՝ մայրաքաղաքներ: Այս աշխատանքը հնարավորություն է տալիս մի կողմից մեծ մշտությամբ որոշել նորահայտ հուշարձանների ժամանակագրական դիրքը, մյուս կողմից՝ ուսումնասիրել են այստեղ գտնված իրերի արտադրության հարցերը, թե գտածոների պատմական տեղաշարժերի հետ կապված խնդիրները: Այսպես օրինակ, միջին և ուշ բրոնզեդարյան մեռաղե իրերի ձևաքանության և արտադրության մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Թեղքում, Կիրովականում, Քարաշամքում, Լճաշենում, Լոռիբերդում և այլ հուշարձաններում գտնված իրերի զգալի մասը պատրաստված է խեթական թագավորության մշակույթի ազդեցության ներքո: Շատ ավելի վաղ՝ էնեոլիթի դարաշրջանի հնավայրերում՝ Նախիջևանի Ջյուլթափի 1-ինում, Թեղուտում, Շամիրամալթիում և այլուր ստույգ նկատվում են հալաֆյան և օբեյդյան մշակույթների ազդեցությամբ պատրաստված իրեր: Այդ անոթները հիշեցնում են հենց հալաֆյան և օբեյդյան խեցեղենը: Այս հանգամանքը մի կողմից օգնել է նշված հուշարձանների քիչ թե շատ ստույգ թվագրությանը, մյուս կողմից՝ տեղական մշակույթի յուրահատկությունների բացահայտմանը և նրա ունեցած կապերի պարզաբանմանը: Միջնադարյան Դվինից գտնված իրերի մանրակրկիտ քարտեզագրումը նույնպես օգնեց վեր հանել տեղական արտադրության առանձնահատկությունները, ներմուծված իրերի նմանությամբ տեղականի արտադրությունը, ինչպես նաև ներմուծված նյութերի՝ սիրիական և քյուզանդական հախճապակու առկայությունը:

Իրերի պատրաստման տեղը որոշելու համար, բացի տիպաբանական վերլուծությունից, գոյություն ունեն ֆիզիկատեխնիկական և քիմիական եղանակներ, ինչպես երկաթի և գունավոր մետաղների սպեկտրալ և մետաղագրական վերլուծությունը, որը թույլ է տալիս պարզել հնագույն իրերի պատրաստման տեխնոլոգիական արտադրության պատմությունը, ինչպես նաև ընտրված հնարավորությունների դեպքում մշտել տեղը: Այսպես, Լճաշենից գտնված ոսկե իրերի վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք պատրաստված են Ջոդի հանքերից ստացված հումքից: Այդ նույն եղանակով բացահայտվեց, որ Լճաշենի ոսկեմանան զենքը պատրաստված է բարձրարակ բրոնզից, իսկ թարմ զեղարվեստական արժեք ունեցող քանդակները, ծիսական առարկաների և զարդերի մի մասը ձուլված են մետաղական խառամից, որը նրանց տալիս էր արծաթափայլ երանգ:

Հետազա տարիներին պետք է հնագիտական խեցեղենի ռենտգենաֆ-ռուցվածքային վերլուծության կիրառումը, որը հնարավորություն է տալիս վերհանել ինչպես անոթների պատրաստման եղանակների բազմազանությունը, այնպես էլ դուրգի տեսակի պատման արագությունը, որը շատ մեծ նշանակություն ունի ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Անդրկովկասի խեցարտադրության պատմության համար:

Հնագիտական հետազոտության կարևորագույն քաղաքամասերից է առանձին հնագիտական մշակույթների քացահայտումը: Քարտեզագրելով բազմամակաշրջանների բնակավայրերի ու դամբարանադաշտերի տեղաբաշխումը, այդ հնավայրերում հայտնաբերված մարտարվեստական կառույցների ձևերն ու շինարարական եղանակները; քարից, կավից, մետաղներից, փայտից և այլ նյութերից պատրաստված աշխատանքի գործիքների, զենքերի, զարդերի, կենցաղի առարկաների ձևերի յուրահատկությունները, թաղման սովորույթներն արտացոլող յուրահատուկ մնացորդները, կիրառական արվեստի առարկաներով ներկայացված գեղարվեստական տարբեր ոճերի տարածումը, աշխարհի հնագետները հանգել են որոշակի եզրակացությունների: Նրանք հայտնաբերել են, որ նշված մնացորդների որոշակի հատկանիշներով բնորոշվող տիպերը, միակցված եղանակով հանդես գալով տարբեր հնավայրերում, գրաղեցնում են աշխարհագրական որոշակի տարածքներ և գոյություն են ունեցել ժամանակագրական նույնքան որոշակի ժամանակներում: Հնությունների տիպաբանական այդպիսի ընդհանրությունները անվանվել են հնագիտական մշակույթներ: Համաշխարհային հնագիտության փորձը միանշանակ ցույց է տվել, որ գոյություն չունի հիմնական բոլոր հատկանիշներով իրար կրկնող հնագիտական երկու մշակույթ: Յուրաքանչյուր հնագիտական մշակույթ մարդկանց որոշակի ընդհանրության գործունեության արգասիք է և թնութագրում է տվյալ ընդհանրության նմանությունն ու տարբերությունը մարդկանց այլ ընդհանրություններից: Այստեղից պարզ է դառնում հնագիտական առանձին մշակույթների սահմանազատման և նրանց փոխառնչությունների ուսումնասիրության նշանակությունը ցեղախմբերի ու ժողովուրդների կազմավորման և հետագա պատմության հետազոտման համար:

Էթնիկ պատմության համարժեք վերակազմության համար հնագիտությանը մեծապես օժանդակում է ֆիզիկական մարդաբանությունը, որը թույլ է տալիս քացահայտել հնագույն բնակչության մարդաբանական տիպերը:

Տնտեսական պատմության հարցերի քացահայտման համար մեծ նշանակություն ունի Հայաստանում լայն տարածում ստացած կենդանիների մնացորդների հնաբանական ուսումնասիրությունը:

Բոլոր այս եղանակները թույլ են տալիս հնագետներին լիովին ուսումնասիրել նյութական մշակույթն ընդհանրապես, իսկ ազգագրության մեջ տարածված վերապրուկների մեթոդի օգտագործման միջոցով հնարավոր է պատկերացում կազմել հետազոտվող հուշարձաններում ապրող տեղաբնիկների զարգացման աստիճանի մասին:

Արվեստի առարկաների զտնված նմուշները՝ տարբեր օջախներ, արձանիկներ, հմայիլներ, զարդեր, ապառազինության նմուշներ /վահաններ, սաղավարտներ, զոտիներ, նվիրատվական թիթեղներ և այլն/, որոնք զարդարված են դրոշմված կամ փորագրված պատկերներով, թույլ են տալիս որոշակի կարծիք ունենալ նրանց տերերի հոգևոր մշակույթի մասին:

Հնագիտական աղբյուրների հայտնաբերման, մշակման և մեկնաբանման համար հնագետը դիմում է տարբեր գիտությունների՝ երկրաբանության, հնաաշխարհագրության, ֆիզիկայի, մաթեմատիկայի, աստղագիտության և այլ գիտությունների օգնությանը: Հնագիտական աղբյուրները հիմք են ծառայում հնագիտության հիմնական խնդրի ուսումնասիրության համար, այն է՝ հասարակական համակարգերի զարգացման քացահայտումը՝ սկսած նախնադարյան համայնական հասարակարգից՝ վերջացրած միջնադարով:

Հնագետները պատմական վերակազմության համար ելնում են այն փաստից, որ նյութական մշակույթի և հասարակական կյանքի միջև գոյություն ունի որոշակի կապ: Այս պատճառով նրանք ձգտում են վեր հանել առանձին ժողովուրդների և ամբողջ մարդկության զարգացման սոցիալական պրոցեսները, որը մարդկության զարգացման հիմնական բովանդակությունն է, և ապացուցել, որ կարելի է ինքնուրույն դնել և լուծել հնագիտական խնդիրներ:

Հնագիտությունը աշխարհի առաջ բացեց նախօրոք անհայտ հասարակություններ և պետություններ և հազարամյակներով հնացրեց մարդկության պատմությունը:

Աշխարհագրական միջավայրը հնագույն մշակութային համակարգերի զարգացման և գոյատևման նյութական անհրաժեշտ պայմաններից է: Հնագիտական հուշարձանների, պեղածո իրականության հետազոտության անքակտելի մասն է կազմում ուսումնասիրվող տարածքների քնական հարստությունների, կլիմայական և առհասարակ աշխարհագրական պայմանների քննությունը:

Դասագրքում ներկայացվող հնագիտական մշակույթների, հայ ժողովրդի պատմական զարգացումը ընթացել է Հայկական լեռնաշխարհում, որը ֆիզիկա-աշխարհագրական տեսակետից մի առանձին տարածություն է /ռեգիոն/, միասնական լեռնային երկիր՝ ծալքավոր, ծայրաբեկորավոր լեռների, հրաբխային սարահարթերի ու զանգվածների, միջլեռնային գոգավորությունների ու լճային գոգավորությունների, լեռնագագաթների ու գետահովիտների բարդ համակարգերի ամբողջությամբ: Հայկական լեռնաշխարհը Ալպիական-Հիմալա-

յան լեռնային կառուցվածքների համակարգի օղակներից և զբաղում է Տավրո-Անդրկովկասյան կենտրոնական շրջանը: Այն ընկած է Իրանական և Անատոլիական բարձրավանդակների միջև և գրաղեցնում է հյուսիսային լայնության 36°40 -ից մինչև 42° 08, արևելյան 36°-ից մինչև 47° 32 ընկած տարածությունը, 344 780 քառ կմ ընդհանուր մակերեսով: Հայկական լեռնաշխարհի հյուսիսային սահմաններն անցնում են Սև ծովի հարավային ափով և Փոքր Կովկասի հյուսիսային լանջերով, հյուսիս -արևելքում՝ Փոքր Կովկասի հյուսիսարևելյան լանջերով, արևելքում՝ Կարսու գետի հովտով /Արաքսի աջ վտակը/, հարավ-արևելքում՝ Կարա-Դաղի, Միշոխ-Դաղի լեռների հարավային լանջերով և Ուրմիոյի գոգավորության արևմտյան հատվածում: Հարավում Հայկական լեռնաշխարհի բնական սահմանները համարվում են Քրդստանի լեռները և Հայկական Տավրոսը: Արևմտյան սահմանները ցցուն չեն ընդգծված և ոչ մեծ գոգավորությունների գծով /Ամիկյան, Մարաշի, Կիզիլ-Իրմակի, Գայլ գետ/ վերին հոսանքի և ավելի հյուսիս՝ Էշիալ-Իրմակի ստորին հոսանքի գոգավորություններով ստիպողաբար երիզվում են Անատոլիական բարձրավանդակին: Հայկական լեռնաշխարհը կոնկրետ օրոգրաֆիկ և ժառանգական հատկություն է և իրենից ներկայացնում է միասնական բարձրավանդակային երկրամաս: Վերջինիս ռելիեֆը ժառանգվել է երրորդական-չորրորդական շրջանում և համարվում է համեմատաբար երիտասարդ գոյացում, որի սահմաններում երկրակեղևի շարժումները դեռևս ավարտված չեն: Հայկական լեռնաշխարհի լեռնային համակարգերի հիմնական միավորը թեք և կորտված լանջերով, բարձրագագաթ, ձգված լեռնաշղթաներն են, որոնցում առանձնանում են հեռակալ ուղղահայաց գոտիները՝ ցածրադիր /մինչև 1500 մ բարձրության/, համեմատաբար բարձր /1500-ից մինչև 2800 մ/ և բարձր լեռնային /2800-ից ավելի/:

Հայկական լեռնաշխարհը Առաջավոր Ասիայի խոշորագույն գետերի ջրբաժանն է: Այստեղից սկիզբ առնող ամենամեծ գետը Եփրատն է /2700կմ/, որը հակայական լեռնաշխարհի տարածքով հոսում է 600 կմ? Այն գոյանում է երկու գետերի միախառնումից՝ բուն Եփրատ /այժմ Կարա-սու/ և Արածանի /այժմ Մուրատ/: Տիգրիսը կամ Դիկլաթ գետն ունի 1950 կմ երկարություն, որից 540-ը՝ լեռնաշխարհի սահմաններում: Արաքսն ունի 1072 կմ երկարություն և մեծ մասամբ հոսում է լեռնաշխարհի տարածքով: Հյուսիսում Հայաստանը եզերվում է Կուր գետով: Սև ծովը թափվող խոշոր գետերից են Ծորոխը և Գայլ գետը: Հայկական լեռնաշխարհի գետային ցանցի մեծ մասը սելավաբեր է, արագահոս և նավարկության համար պիտանի չէ: Հայկական լեռնաշխարհին բնորոշ են միմյանց հաջորդ բարձունքների միջև գոյացած գոգավորությունները՝ Արարատյան, Շիրակի, Ալաշկերտի, Մանազկերտի, Մուշի, որոնց մի մասը գրաղեցնում են լճերը: Սրան-

ցից առավել խոշորներն են Ուրմիան, Վանը և Սևանը:

Ուրմիա /Կապուտան, Դեզայե/ լիճը զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի և Իրանական բարձրավանդակի միջև ընկած գոգավորության մեծ մասը: Գտնվում է 1275 մ բարձրության վրա, հայելու մակերեսը՝ 578 հազար քառ. կմ, խորությունը՝ 15 մ: Լճի շուրջը արտակարգ աղի է: Լիճ է թափվում 12 գետ: Վերջինիս ցածրադիր ափերը շատ նպաստավոր են երկրագործության համար: Հնուց ի վեր լիճը օգտագործվել է նավարկության համար:

Վանա լիճը գտնվում է 1720 մ բարձրության վրա և զբաղեցնում է 3690 քառ. կմ տարածք: Նրա ջրերը պարունակում են մեծ քանակությամբ սոդա, որի պատճառով այն ոռոգման և խմելու համար պիտանի չէ: Լճում ապրում է ձկան մի տեսակ՝ տառեխը, որը հնուց ի վեր արդյունահանվել է: Լճի արևելյան և հյուսիսարևելյան ափերը մեղմ կլիմա ունեն և հարմար են շրջակա գետերի ջրերով ոռոգելի երկրագործության համար:

Սևանա լիճը գտնվում է 1916 մ բարձրության վրա: Նրա մակերեսը 1416 քառ. կմ է /մինչև լճի մակարդակի արհեստական նվազումը/: Լճի ափերը երիզված են բարձր լեռնաշղթաներով: Սևանա լիճ է թափվում մոտ 30 գետ ու գետակ, նրանից սկիզբ է առնում միայն Հրազդանը:

Հայկական լեռնաշխարհին բնորոշ են կլիմայական հակադրությունները, ուր հերթափոխվում են կլիմայի բոլոր տիպերը՝ մերձարևադարձայինից մինչև հավերժական ձյուն և սառույց: Ձմռանը չափավոր ցուրտ է: Հունվարի միջին ջերմաստիճանը տատանվում է -5-ից մինչև -9 աստիճաններում, նվազագույնը՝ -35: Լեռներում տեղումները հասնում են մինչև 500-700 մ.մ., իսկ ցածրադիր վայրերում՝ 150-300 մմ: Գարունը կարճատև է, անձրևային, ամառը չոր է և տաք:

Հայկական լեռնաշխարհի բուսականությունը շատ հարուստ է, որը պայմանավորված է ռելիեֆի, հողի և կլիմայական պայմանների բազմազանությամբ: Վերջինս գտնվում է երկու իրարից խիստ տարբեր բուսաբանական-աշխարհագրական երկրամասերի՝ խոնավ և անտառոտ Վրկանա-պոնտական և չոր ու անտառազուրկ Իրանականի միակցման վայրում: Մինչև 2000-2200 մ բարձրության վրա, լեռնալանջերին, հանդիպում են անտառներ /կաղնի, հաճար, սոճի, առանձին պուրակներով՝ կեչի և լորի/: Սրանցից ավելի բարձր՝ 2200-2700 մմ-ի վրա, ամռում են թփուտներ, որոնցից բարձր ժայռեր են կամ ալպիական մարգագետիններ: Հայկական լեռնաշխարհի ցածրադիր հովիտները բավականին քերքաբեր են և նպաստել են երկրագործության զարգացմանը, իսկ բարձր լեռնային մարգագետինները՝ անասնապահության զարգացմանը: Հայկական լեռնաշխարհի ընդերքը հարուստ է

օգտակար հանածոներով: Հայտնի են պղինձ-մոլիբդենային /Քաջարան, Ազարակ, Լիճք, Հանքավան և այլն/, պղնձի /Մառնեուլի, Ալավերդի, Շամլուղ, Ղափան, Գետաբեկ և այլն/, ոսկու /Զոդ, Մեղրաձոր, Քաջարան, Հասանկալա, Վանա լճի ավազան և այլն/, կապարի ու ցինկի /Ախթալա, Ղազմա, Պրիվոլնոյե/ հանքավայրերը: Երկաթով հարուստ են Մուշի, Բիթլիսի և Վանի շրջանները, ինչպես նաև Ուրմիայից արևմուտք ընկած լեռները: Կապարի, պղնձի և երկաթի հարուստ պաշարներ կան Ռշտունյաց լեռներում, որոնք ավանդաբար կոչվել են ,,կապարահատաց և երկաթահատաց լերրինք,,: Երկաթի, պղինձի և արծաթի հանքերով հայտնի է Անգեղ-տուն գավառը Աղձնիքում: Հնագույն ժամանակներից Հայկական լեռնաշխարհը և հարակից շրջանները եղել են մետաղի արդյունահանման խոշորագույն բենտրոններ և համարվում են մետաղագործության սկզբնական օրգաններից մեկը:

Լեռնաշխարհի տնտեսական կյանքում կարևորագույն դեր են ունեցել քարձրադիր հարթավայրերը, հովիտներն ու գոգավորությունները, որոնք հնագույն դարաշրջաններից եղել են երկրագործության կենտրոններ: Արա ծանիի գետային ավազանում ընկած են Բազրևանդ, Հանք և Տարոն գավառները կազմող դաշտերը, Արաքսի հովտում՝ Բասենի, Շիրակի, Երասխաձորի սարահարթերը, որոնք հացաբույսերի մշակման համար քարենպաստ պայմաններ ունեն: Հայկական լեռնաշխարհի բնապատմական շրջաններից կարևորագույնը Արարատյան դաշտն է: Սա լեռնաշխարհի առավել արգավանդ հատվածն է:

Հայկական լեռնաշխարհը, շրջապատված լինելով քարձր լեռնաշղթաներով, հարևան երկրների հետ հաղորդակցվում էր մի քանի լեռնանցքների միջոցով, որոնք հին հայերի մոտ կոչվում էին ,,դրունք,, ,,,,կապան,, ,,պահակ,, և այլն: Տիգրիսի ակունքների մոտ Հայկական Տավրոսի բնական պատնեշը հարավից կտրում է լեռնանցքների մի ամբողջ համակարգ, որոնցից հիշատակելի են Զորապահակը, Կրերաց լեռնանցքը Կորդվաց լեռներում: Վասպուրականում հայտնի են Կոտորի և սուրբ Խաչ անցքերը: Հայտնի են Դրունք Հայոց և Դրունք Կասպից լեռնանցքները /Դարբաղ 2/: Փոքր Կովկասում հայտնի են Դուռն Փառոսի /Ծատանախաչ/, Ծողք-Բերդկունքի, Շահապունքի /Բռնակոթ/ անցքերը: Բարձր Հայքի և Հայկական պարի միջև հայտնի է Գայլախազուտ, Աղտաձոր, Զոր և ,,Կղերսուք,, կոչվող միմյանց հաջորդող լեռնանցքների շարանը: Նշված լեռնանցքներով անցել են հին աշխարհի ռազմաստրատեգիական ու միջազգային քարավանային առևտրի ճանապարհները, որոնց իշխելու համար հարևան պետությունները արյունահեղ պատերազմներ են մղել, և այդ պատերազմների թատերաբեմը մշտապես լինում էր Հայաստանը, որի ռազմաստրատեգիական նշանակությունը շատ մեծ էր:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՔԱՐԻ ԴԱՐ

Քարի դարի հնագիտության պարբերացման հիմքը քարը տարբեր ձևերով մշակելու տեխնիկան է. այն իր ամբողջ գոյատևման ժամանակաշրջանում մնում է գործիքներ պատրաստելու հիմնական հումքը:

Քարի դարը մի դարաշրջան է, որի ընթացքում ձևավորվեց մարդը և հարյուր հազարավոր տարիներ շարունակ օգտագործեց միայն քարե գործիքներ: Այն բաժանվում է երկու անհավասար մասերի. հին քարի դար՝ պալեոլիթ /հունարեն ,,պալայոս,, - հին և ,,լիթոս,, - քար բառերից/ և նոր քարի դար՝ նեոլիթ: Պալեոլիթի դարաշրջանը հարյուր անգամ երկարատև է նեոլիթից:

Պալեոլիթի հնագիտությունը՝ պալեոլիթագիտությունը, հնագիտության մի յուրօրինակ բաժին է, որը բավականին հստակ տարբերվում է ավելի ուշ դարաշրջաններ ուսումնասիրող այլ բաժիններից:

Պալեոլիթագիտության առարկան հսկայական ժամանակահատվածների ուսումնասիրությունն է, որտեղ հնագետը գործ ունի ոչ թե դարերի, հազարամյակների, այլ միլիոնավոր տարիների հետ: Նման հսկայական ժամանակային հեռավորության պատճառով հնագիտական հուշարձանները, ինչպես և պալեոլիթյան գտածոները մեզ են հասնում ոչ մեծ քանակությամբ, այն էլ խիստ քեկորային ձևով:

Պալեոլիթյան գտածոներից մի շարք օրինակներ, մասնավորապես, փայտե, կաշվե առարկաներ չեն պահպանվել կամ էլ հանդիպում են հազվադեպ: Քանի որ պալեոլիթը նախորդում է ներկայիս ժամանակաշրջանին, իսկ բազմաթիվ կենդանիներ և բուսական աշխարհի տեսակներ շատ վաղուց անհետացել են, ուրեմն առավել արդիական է պալեոլիթագիտության անմիջական կապը այլ, առաջին հերթին չորրորդական ժամանակաշրջանի բնական գիտությունների՝ բուսաբանության, հնէաբանության և սեդիմենտաբանության /նստվածքային ապարների ձևավորում/ և այլնի հետ:

Վերջապես, պալեոլիթյան մշակույթն իր իսկ ամբողջականությամբ համաժամանակյա աշխարհում քացահայտվում է որպես առավել միաբնույթ, քան ուշ ժամանակաշրջանի մշակույթները:

Հին կամ վաղ /ստորին/ պալեոլիթը ըստ սկզբնական տիպաբանության ստորաբաժանվում է հետևյալ դարաշրջանների՝ մինչշելյան, շելյան, աշելյան, և մուստիերյան: Վերին կամ ավելի ուշ պալեոլիթը սկսվում է մ.թ.ա. 40-35 հազ. տարի առաջ՝ ստորաբաժանվելով հետևյալ դարաշրջանների. օրինյակի, սոլյուտրե, մաղլենյան ու ազիլ-տարդենուազյան: Երբեմն,

բացի ստորին և վերին պալեոլիթից, առանձնացվում է նաև միջինը, որին վերաբերվում են աշելյան, մուստիերյան հնագիտական մշակույթները: Այդ ժամանակագրությունը կազմված է ըստ Ֆրանսիայում կատարված համապատասխան հայտնագործությունների և գիտական շրջանառության մեջ է դրվել Ֆրանսիացի հնագետ Մորտիլյեի կողմից /օրինյակի դարաշրջանն ավելացվել է նրանից հետո/:

Գիտնականները, պահպանելով Մորտիլյեի՝ պալեոլիթի հիմնական ժամանակագրական սխեման, վերջին տասնամյակներում համառորեն աշխատում են ճշտումներ մտցնել պալեոլիթի մշակույթի ժամանակագրության և դասակարգման մեջ, քանի որ այն բավականին էական փոփոխությունների է ենթարկվել: Այսպես, ամենավաղ պալեոլիթյան դարաշրջանը ներկայումս ընդունված է կոչել օլդուվա /նախորդ ժամանակագրությամբ՝ մինչշելյան/: Հաճախ օգտագործվում է ,,գետաքարերի մշակույթ,, ձևով, որին հաջորդում է աշելը /նախորդ ժամանակագրությանը համապատասխանող/ և մուստիերյանը: Մեկ այլ խումբ հետազոտողներ պալեոլիթի եռանդամ բաժանման կողմնակիցներ են. նրանք այդ ժամանակաշրջանի վաղ կամ ստորին դարաշրջանները օլդուվայից հացնում են մինչև ուշ աշելը ներառյալ, իսկ մուստիերյան ժամանակաշրջանը առանձնացնում որպես միջին պալեոլիթ:

Առավել ենթաբաժանվածությունը ուշ կամ վերին պալեոլիթի համար, ի տարբերություն ստորինից, ունի միայն տեղային բնույթ: Օրինակ կարող է ծառայել Ռուսաստանի հարթավայրերի, Ղրիմի, Կովկասի և այլնի ուշ պալեոլիթը, որն ունի որոշակի փուլեր, սակայն դա ընդհանուր չէ ամբողջ ԽՍՍՀ տարածքի կամ էլ ամբողջ աշխարհի ուշ պալեոլիթի համար: Ներկայիս գիտական ոլորտներում կարելի է հաստատել, որ ամենուրեք ներկայացված ուշ պալեոլիթի ժամանակագրության ենթափուլերը, որոնք մի քանի տասնամյակներ առաջ համարվում էին օրինյակը, սոլյուտրեն, մադլենյանը և այլն, իրականում բացակայում են, քանի որ դրանք բնորոշ են միայն Եվրոպայի որոշակի շրջաններին:

Այսպես, Կովկասի ուշ պալեոլիթի մշակույթն իր ողջ բազմազանությամբ շատ որոշակի ընդհանուր գծեր ունենալով հանդերձ, ձգտում է դեպի Մերձավոր Արևելքի մշակույթը: Կովկասի, Զագրոսի, Լևանտի հուշարձաններն ակնհայտ նմանություն ունեն և կարող են միավորվել այս մշակույթի ինքնատիպ զարգացածություն ունեցող առաջավորասիական շրջանում: Այն տարբերվում է հարավում՝ հյուսիսաֆրիկյան, արևելքում՝ միջնասիական և հյուսիսում՝ հարավռուսական տափաստանային մշակույթներից:

Վերջին տասնամյակների հրաշալի հայտնագործությունները բավականին հարստացրին մեր գիտելիքները մարդու ծագման մասին, որի սկզբը դրվել է 18-19-րդ դ.դ. մի շարք բնագետների կողմից: Դեռևս Կարլ Լիննեյը

մարդուն դասում էր կենդանական աշխարհի համակարգը՝ միացնելով նրան այն ժամանակ հայտնի կապիկների հետ, առանձնացնելով կաթնասունների խմբում որպես պրիմատների տիպ /լատիներեն ,,առաջին,, բառից/:

Կապիկների համակարգված և համեմատական անատոմիայի խոր հետազոտությունները, ինչպես և 18-րդ դ. երկրորդ կեսին, 19-րդ դ. մարդու անատոմիային վերաբերող աշխատությունները հնարավորություն ընձեռեցին Թոմաս Հեքսլիին անելու հաջորդ քայլը, որը հանգեցնում է մարդու և մարդանման կապիկների նմանությանը միևնույն համակարգում:

Դեռևս Չալզ Դարվինը ի մի է բերել գիտությանը հայտնի ողջ պաշարը անթրոպոգենեզի բնագավառում և համոզիչ կերպով ցույց տվել կենդանական էակի անցումը մարդուն՝ մարդացումը: Սակայն մարդու հիմնական տարբերությունը կենդանական աշխարհից հանգում է ոչ կենսաբանական գործոնին:

Ֆ.Էնգելսը ցույց է տվել, որ մարդացման պրոցեսը տևել է բավականին երկար: Որպեսզի մարդու նախնին սովորեր պատրաստել աշխատանքային գործիքներ, պետք է ձերբազատվեր զազանային վիճակից, մասնավորապես, կանգներ երկու ոտքի վրա:

Առաջընթացն այնքան դանդաղ է ընթանում, որ անցան հարյուր հազարավոր տարիներ, մինչև մարդը կարողացավ պատրաստել պարզունակ քարե աշխատանքային գործիքներ:

Ներկայումս Հին աշխարհի տարբեր շրջաններում հայտնի են երրորդական ժամանակաշրջանի վերջին մեծ քանակությամբ մարդանման կապիկների գտածոներ: Մարդուն առավել մոտ է կանգնած, այսպես կոչված, դրիոպիթեկների խումբը, որոնց մնացորդները գտնվել են ուշ երրորդական ժամանակաշրջանի տարբեր շրջաններում, մասնավորապես, Արևմտյան Եվրոպայում, Աֆրիկայում և Ասիայում: Այդ կապիկների մեջ առանձնանում են մի քանի տեսակներ, որոնք ունեն հատակ ձևաբանական ինքնատիպություն. դա թույլ է տվել դրանց նույնացնել մի քարձր կարգի կատեգորիայի մեջ: Դրիոպիթեկները իրենց չափերով հիշեցնում են ժամանակակից պավիանների և շիմպանզեների: Սրանց բնորոշ ձևաբանական հատկանիշներից պետք է առանձնացնել ժանիքների համեմատաբար փոքր լինելը և կտրիչ ատամների առավել խտությունը, ինչը և համարվում է առաջընթաց դեպի մարդացման ճանապարհը, խոշոր

Առավել կարևոր նշանակություն ունեն հոմինիդների ընտանիքի նախնիներին վերաբերող հայտնագործությունները Հարավային Աֆրիկայում, ուր գտնվել է պեղածո մարդանման կապիկների լավ պահպանված հինգ կմախք, որոնք խմբավորված են երեք շարքերում՝ ավստրալոպիթեկների, պարանթրոպների, պլեզիանթրոպների, որոնք բնութագրվում են խոշոր ուղեղով /500-600 սմ^3/ և քայլում են երկու ոտքերի վրա:

Դրանց հետ գտնվել են մեծ քանակությամբ գանգեր, եղջյուրներ, թունավորությամբ սնվող կենդանիների պատկանող խողովակաձև ոսկորներ, ինչպես նաև սրածայր քարե առարկաներ: Մի քանի քարերի վրա նշմարվում են բեկոտման հետքեր, որոնք մի խումբ մասնագետներ համարում են արհեստական մշակման արդյունք:

1959 թ. Լիկին շատ կարևոր հայտնագործություն կատարեց Օլդուվայի կիրճի /Տանզանիա/ վաղ հորդորդական շերտերում, որտեղից գտնված գանգը ստացավ զինջանտրոպ անվանումը: Այն աչքի էր ընկնում մի քանի ինքնուրույն հատկանիշներով, որոնք իրենց զուգահեռներն ունեն զորիլայի հետ, սակայն զինջանտրոպը քայլում էր երկու ոտքերի վրա, ուներ ծավալուն ուղեղ և մարդուն բնորոշ առանձնահատկություններ ատամնաշարի համակարգում: Զինջանտրոպի տարիքը մոտավորապես 1,5 մլն տարի է: 1960թ վերջին այն նույն վայրում, ուր կատարվել էր զինջանտրոպի գյուտը, երկրաբանական շերտերում հայտնաբերեցին մեկ այլ էակի մնացորդներ: Դրանցից մեզ են հասել գանգի ոսկորները, ներքին ծնոտը, ուսի ոսկորը և ոսկորներ ոտքի թաթից: Վերլուծությունները ցույց են տվել, որ ձևաբանորեն այդ էակի ստորին վերջավորությունները նման են ավստրալոպիթեկների ոտքերին. նա ունեցել է ուղղաձիգ քայլվածք, իսկ ոսկորները նման են մարդու ոսկորներին: Բայց առավել հետաքրքիր էր նրա ուղեղի ծավալը՝ 670-680 սմ^3, այսինքն ավելի, քան ավստրալոպիթեկինն է և ժամանակակից մարդանման կապիկներինը: Զինջանտրոպի մնացորդները հետազոտող Ֆ.Տոքայասը առաջարկեց նրան կոչել - հմուտ /կարող/մարդ:

Այդ նույն շերտերում հայտնաբերվեցին նաև կոպիտ բեկոտումով արված, անկասկած, առաջին քարե գործիքները: Ժամանակը, երբ ապրել է կալիստարեզոնյան մեթոդով համապատասխանում է 1.750 000 տարվան:

Բրածո պրիմատների մնացորդները, որոնք կարող են մոտենալ հոմիդներին, հայտնաբերվել են Հին աշխարհի տարբեր վայրերում: Դրանք բոլորը որոշակի համաժամանակություն ունեն և միմյանց, և երկրաբանական ժամանակաշրջանի նկատմամբ, այդ պատճառով էլ հնէամարդաբանական տվյալները հնավորություն չեն ընձեռնում տալու հին մարդու առաջացման կոնկրետ վայրը:

Երկրաբանական, հնէաբանական և հնէկլիմայական փաստերը տալիս են Ճշգրիտ տվյալներ պրիմատների բարնպատ զոյատևման պայմանների վերաբերյալ այն ընդգրկել է բավականին լայն տարածություն Կենտրոնական, Հարավային Ամերիկայում և Կենտրոնական Ասիայում:

Այդ փաստերը իրենց վերահաստատումը գտան Նվգենի Դյուբուայի՝ 1891 թ. Յավայում /Ճավա/ կատարած հայտնագործության ժամանակ: Այստեղ գտնված գանգի կափարիչի և վերջույթների ոսկորների հետազոտություն-

ներն ապացուցեցին, որ այդ էակները քայլել են ուղղահայաց դիրքով, այդ պատճառով էլ անվանվեցին պիթեկանթրոպներ /հունարեն՝ պիթեկուս-կապիկ և անթրոպուս-մարդ/: Դրանք ռադիոկարբոնային վերլուծության հիման վրա թվագրվում են մ.թ.ա. 400 հազար թվով: Լինելով ուղղահայաց քայլող՝ պիթեկանթրոպը, հավանաբար, առանձնացվում է որպես փոքր ծալված ունեցող ոտքերով էակ: Սրանով կարելի է համոզվել, որ արդեն աշխատանքի համար մշակվել էր պիթեկանտրոպոգենի ուղղահայաց քայլելու և առջևի վերջույթները զետնից կտրելու գործողությունը: Այս փուլում, սակայն, ուղեղի զարգացումը դեռևս ետ էր մնում: Չնայած պիթեկանտրոպի գանգը բնորոշվում է պրիմիտիվ կառուցվածքով և կապիկներին հատուկ մի շարք հատկանիշներով, մասնավորապես, գանգի տուփի բարձր լինելը, ճակատային հատվածը, նրա ուղեղի ծավալը /900 սմ^3/ զերազանցում են 1 մլն տարի առաջ ապրած -ի ուղեղի ծավալին շուրջ 200 սմ^3-ով:

Պիթեկանթրոպի՝ գործիքներ պատրաստելու գործունեության հետ կապված փաստեր դեռևս չունենք, քանի որ նրանց հետ չեն գտնվել քարե ինդուստրիայի ոչ մի տեսակի նմուշներ: Սակայն Յավայում, նույն շերտերում և նույն կենդանական միջավայրում գտնվել են քարե գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս ենթադրելու, որ դրանք պատրաստվել են պիթեկանտրոպի կողմից: Իրենց մշակման ձևով այս գործիքները, ինչպես կնշվի ստորև, պատկանում են աբևիլյան և աշելյան խմբի մշակույթին: Աբևիլյան ժամանակաշրջանի մարդիկ ապրել են խմբերով և թափառել գետերի, լճերի մերձարևադարձային անտառային գոտիներում. նրանց գոյատևման աղբյուր են եղել կենդանիների որսը, հատապտուղների հավաքչությունը, ինչպես նաև միջատների և մողեսների հավաքումը:

Հոմինիդների հնագույն ժամանակաշրջանի ձևաբանական էվոլյուցիան հասկանալու համար չափազանց կարևոր էին այն հայտնագործությունները, որոնք կատարվեցին 1927 թ. Չինաստանում, Պեկինից ոչ հեռու գտնվող Չժոու-Կու-Տան քարայրում: Այստեղ պեղումների ընթացքում հայտնաբերվեց հնագույն որսորդների կայան՝ ճամբար, ուր մեծ քանակությամբ հնագիտական նյութերի հետ բացվեցին քառասուն տղամարդու, կանանց և երեխաների ոսկորների մնացորդներ: Սրանցից շատերի ուղեղի ծավալը կազմում է 950-ից մինչև 1150 սմ^3: Ինչպես իրենց զարգացմամբ, այնպես էլ ձևաբանական բնորոշմամբ դրանք ավելի մոտ էին կանգնած ժամանակակից մարդուն, քան պիթեկանթրոպը՝ պատկանելով ավելի ուշ դարաշրջանի՝ միջին պլեյստոցենին: Իրենց հատկանիշներով այս էակները կազմում են առանձին տոհմ /խումբ/՝ սինանթրոպներ /լատիներեն Սինա-Չինաստան/՝ չինական պիթեկանթրոպներ, որոնք ապրել են 300 հազ. տարի առաջ, այսինքն պիթեկանթրոպից

ավելի քան 100 հազ. տարի ուշ:

Սինանթրոպը, ինչպես և պիթեկանթրոպը ամուր մարմնակազմվածքով, միջին հասակի էակներ էին, սակայն առաջինիս քայլվածքը առավել հաստատուն էր, քան պիթեկանթրոպինը և հնարավորություն էր տալիս լինելու առավել շարժունակ: Սինանթրոպի գանգոսկրի ներսի մասում, մասնավորապես ճակատային կողմից, տակա են ուղուցիկ թմբիկներ, որը հնարավորություն է տալիս ենթադրելու սինանթրոպի խոսքի բաժանվածության /կտրվածության/ մասին: Այն ուներ ապրելու մշտական վայր՝ քարայրներն ու զառիթափ տեղանքների մերձակայքը, օգտագործում էր կրակը: Դրա ապացույցն էին այրերում քացված մի քանի մետր հաստության հասնող մոխրի շերտերը: Սինանթրոպը կարողանում էր որս անել՝ սպանել խոշոր կենդանիներ /եղջերու, գազել, վայրի ձի և անգամ ռնգեղջյուր/:

Նախնադարյան կյանքում կրակի գյուտը հսկայական հնարավորություն ստեղծեց նախամարդու գոյությունը ավելի կայուն դարձնելու համար: Կրակը տաքացնում էր, պայմաններ ստեղծում կերակուր պատրաստելու համար, որով ուտելիքը դառնում էր առավել մարսելի: Այն լայնորեն կիրառվում էր որսորդության մեջ՝ գիշատիչ գազանների վախեցնելու նպատակով, փայտը այրելու միջոցով գործիքներ պատրաստելու համար: Ակնհայտ է, որ նախնադարյան մարդը միանգամից չէ, որ սովորեց կրակ ստանալ: Ամենից առաջ կրակը հրդեհներից հետո անտառից և այլ վայրերից քերվում էր քարայր և այնտեղ պահվում: Տեղից տեղ քոչելիս այն տեղափոխվում էր:

Շելյան վաղ շրջանին կարելի է համապատասխանեցնել 1907 թ. Գերմանիայի Հայդելբերգ վայրում գտնված մարդու ներքին ծնոտը, որը համեմատվում է պիթեկանթրոպի հետ /տես ստորև/: Խոշոր ատամնաշարով քավականին մեծ ծնոտը ունի մարդուն բնորոշ հատկանիշներ, որն իր զարգացման մակարդակով խոսում է սինանթրոպին առավել մոտ լինելու փաստի մասին:

1954-1965 թ.թ. Հյուսիսային Աֆրիկայում կատարվեց մեկ այլ հրաշալի հայտնագործություն, գտնվեցին երեք անհատների ներքին ծնոտներ, աշխատանքային գործիքների հետ մեկտեղ անխախտ վիճակում: Այդ էակները, որոնց պատկանում էին քարե էուիթյան[2] խոշոր գործիքները, կոչվեցին ավստրալոպիթեկներ:

Կապկամարդը՝ պիթեկանթրոպը, սինանթրոպը, ատլանթրոպը և հայդելբերգյան մարդը, հիմնականում ապրում էր տաք կլիմայական պայմաններում և բնակեցնում Աֆրիկայի մեծ մասը, Հարավային Ասիան, Եվրոպայի հարավը, ինչպես նաև նախկին Խորհրդային Միության հարավային տարածքները:

Ժամանակակից մարդու և սինանթրոպի միջև միջանկյալ դիրք է զբաղեցնում նեանդերթալյան մարդը, որն իր անվանումը ստացել է Գերմանիայի Դյուսելդորֆ քաղաքից ոչ հեռու գտնվող նույնանուն վայրից 1856 թ. Ավելի ուշ նեանդերթալցիների կմախքների ոսկորներ գտնվել են Անգլիայում, Բելգիա-

2 Էուիթ-հունարեն էոս-արևածագ /սկիզբ/: Այս քարե գործիքներն ունեն չհամակարգված մշակում:



Աղ. 1. Քարի դարի աշխատանքային գործիքներ սատանի դարից:

յում, Հոլանդիայում, Հարավսլավիայում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում, Ղրիմում և Աֆրիկայում ու Ասիայում տարբեր շրջաններում: Նեանդերթալցիների ձևաբանական տիպը ավելի լավ է հայտնի, քան հնագույն հոմինիդներինը: Նեանդերթալյան մարդիկ միջահասակ էին, ուժեղ, մկանուտ, լայնիկ մարմնի կազմվածքով ունեին և քավականին ծարպիկ էին: Ուղեղի զարգացածությունը մոտենում էր ժամանակակից մարդուն: Տարբեր նեանդերթալցիների ուղեղի ծավալը տատանվում է 1200 սմ^3 մինչև 1600 սմ^3, որը միջին հաշվով ավելի է մարդու ուղեղի ծավալից: Չնայած սրան, նրանց ուղեղի կառուցվածքը դեռևս մնում էր պարզունակ: Մասնավորապես թույլ էին զարգացած ծակատամասը, որտեղ կենտրոնացած էին հիմնականում մտածողական և արգելակման ուղեղի գոտիները: Նեանդերթալյան մարդաբանական տիպի հետ է կապվում պալեոլիթյան մուստիերյան մշակույթը՝ թվագրվող մ.թ.ա. 100-40 հազ. տարով:

Չնայած մարդու կենդանական հոտին բնորոշ ապրելաձև էր վարում, այնուամենայնիվ, նա ուներ որոշակի անհատականության առանձնահատկություններ: Նախնադարյան մարդկանց հոտում սուր պայքար էր ծավալվում անհատական և կոլեկտիվ վարքաձևերի միջև, ընդ որում առաջինը աստիճանաբար դուրս էր մղում երկրորդին, քանի որ հակառակ պարագայում հոտը որպես այդպիսին երբեք չէր վերածի տոհմային համայնքի: Անգամ ամենապարզունակ գործողությունները կարող էին կատարվել միայն կոլեկտիվում, թեկուզև հոտի պայմաններում: Այս հանգամանքը հնարավորություն է ընձեռում պնդելու, որ հասարակության արդեն ամենավաղ փուլերում կոլեկտիվը տնօրինում էր սննդի հայթայթման և քաշխման, ամուսնության և այլ կարևոր հարցեր:

Ամբողջ վաղ պալեոլիթյան ժամանակաշրջանը եղել է անհատական ձևերի վերացման աստիճանական պրոցես: Հետապնդող որսորդության զարգացումը, գիշատիչ գազաններից միասնական պաշտպանության կազմակերպումը, կրակի պահպանումը՝ այս բոլորը միասին նպաստում էին նախնադարյան հորդայի համախմբմանը, որտեղ սկզբում կարևոր հատկանիշ էր քնազդը, իսկ հետագայում, փոխհարաբերությունների ձևերում՝ ճանաչողական չափանիշը: Այս բոլոր համատեղ գործողությունները, քարե գործիքների կատարելագործումը իրենց հերթին հանգեցրին խոսքի զարգացմանը: Մտածողության և խոսքի /լեզվի/ առաջացումը, որոնք նույն պրոցեսի երկու համեմատական աստիճաններ են մարդացման գործում, հիմք ծառայեց նաև արտադրողական պրոցեսների և աշխատանքային գործունեության զարգացման համար: Այս տեսանկյունից միշտ չէ այն հարցադրումը, թե հնագույն մարդու պատմության մեջ միտքն ու խոսքը միմյանց նկատմամբ ունեն առաջնայնություն: Այդ երկու կարևոր գործոնները մտածողության պրոցեսում առաջացման միաժամանակ:

Առաջին աշխատանքային գործիքների գիտակցական պատրաստումը անհրաժեշտություն առաջացրեց նման վորձի փոխանցման համար կոլեկտիվի մի անդամից մյուսին, քանի որ ողջ ձեռք բերած փորձը, հմտությունները կարող էին ժառանգվել հաջորդ սերունդների կողմից և խոսքի, և գործնական կիրառության միջոցով:

Հայաստանի վաղ պալեոլիթը

Հայաստանի հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունը սկսվեց 1871 թվականից: Դրա համար կարևոր խթան հանդիսացավ 1881 թ. Թիֆլիսում անցկացված Ռուսաստանի 5-րդ համագումարը՝ նվիրված Կովկասի հնագիտությանը: Այն փաստորեն նոր էջ բացեց նաև Հայաստանի հնագույն շրջանի պատմության, մշակույթի ուսումնասիրության գործում: Տարբեր ժամանակաշրջաններին նվիրված հնագիտական ուսումնասիրությունների հետ մեկտեղ փորձեր էին արվում ոեգիոնում հայտնաբերելու ու ուսումնասիրելու քարի դարի հուշարձանները: Սակայն Կովկասի պալեոլիթյան ժամանակաշրջանի հուշարձանների հայտնաբերումը կատարվեց համագումարից հետո, երբ 1898 թ. Ֆրանսիացի գիտնական ժոզեֆ դե Բայը Հյուսիսային Կովկասում, Կրասնոդարի մոտ, գտավ Իլսկյան մուստիերյան կայանը: Հայաստանում, սակայն, նման գյուտ կատարվեց ավելի ուշ, 1909 թ., երբ Ֆրանսիացի հետազոտող ժակ դե Մորգանը Արագածի արևմտյան լանջերին, Արտենյան շրջակայքում, հավաքեց ոչ մեծ քանակությամբ վանակատ գործիքներ՝ վերագրելով դրանք վերին պալեոլիթյան /օրինյակի և մադլենյան տիպի/, ինչպես նաև ստորին քարի դարի /մուստիերյան/ ժամանակաշրջաններին:

1933 թ. երկրաբան Ա.Դեմյոխինը ներկայիս Արզնի առողջավայրի մոտ, Հրազդան գետի կիրճում, հայտնաբերեց հնագույն դարավանդներ, որտեղից էլ հավաքեց վանակատ, կաթնագույն փառով պատված խոշոր գործիքներ: Նմանատիպ մի քանի գործիքներ հանդիպում են նաև Հրազդանի կիրճում գտնվող Նուռնուս գյուղի շրջակայքում, 7 կմ երկարությամբ սփռված գետի կիրճով մեկ: Այս գործիքները պատկանում են տարբեր ժամանակների, քայց դրանց մեջ հանդիպում են աշելյան տիպի հատիչներ և ծլեփներ: Արզնիում հայտնաբերված ձեռքի հատիչները աչքի են ընկնում մեծ չափով և կոպիտ մշակմամբ: Դրանց մեջ առանձնանում է 14,5 սմ երկարությամբ, 4,5 սմ հաստությամբ նշաձև ձեռքի հատիչը որն ունի քեկոտման եղանակով կատարված երկկողմանի հարդարում:

1955 թ. Մ.Կուկասյանը Լենինականի շրջանում, Պեմզաշեն գյուղի արաջում, գետի գաղիճում, հայտնաբերեց մուստիերյան ժամանակաշրջ-



Նկ. 2. Քարի դար՝ աշխատանքային գործիքներ Սատանի դարից:

ջանի սայր: 1946-49 թ.թ. Ս.Հ.Մարդարյանը ժ.դե Մորգանից հետո Արտին լեռան վրա հայտնաբերեց շելյան և աշելյան տիպի գործիքներ: Նույն ժամանակաշրջանում /1946-47 թ.թ./ Ս.Ն.Զամյատինը և Մ.Զ.Պանիչկինը այստեղ կատարեցին հետախուզական պեղումներ, որոնց ժամանակ քարե տարբեր գործիքների հետ հայտնաբերվեցին նաև աշելյան տիպին բնորոշ մի քանի աշխատանքային գործիքներ: Սատանի դարի գործիքները /հիմնականում՝ վանակտից/ ամենահինն են նախկին Խորհրդային Միության տարածքում և հաստատում են այն տեսակետը, որ այս վայրը կենդանական աշխարհից մարդու անջատման կարևոր օջակներից մեկն է վերոհիշյալ շրջանում:

Սատանի դարի հնագույն ուշ աշելյան գործիքները նշաձև ձեռքի կոպտատաշ խոշոր հատիչներ են: Սրանք ունեցել են քաղմապիսի կիրառություն՝ ծառայելով կտրելու, ջարդելու, քերելու համար: Հատիչները քութ վանակատե քարե գործիքներ են՝ նշաձև կամ ձվաձև, 25 սմ երկարությամբ, 2 կգ ծանրությամբ, մի կողմը՝ սրածայր, մյուսը՝ հարթ: Նման գործիքները հարթ կողմից բռնվում էին ձեռքով, քանի որ դեռ չունեին մշակված կոթառի մաս: Ձեռքի հատիչների հետ գտնվել են նաև խոշոր ծեփներ, որոնց կողերն ունեն մասնակի կոպիտ մշակման հետքեր և հատող գործիքի նշանակությամբ պալեոլիթի վանակատե գտածոներ են: Այս գործիքների օգնությամբ Հայաստանի բնիկները պատրաստել են ամենատարբեր ձևերի փայտե մահակներ, ինչպես նաև մշակել են որսը ու հավաքչությամբ հայթայթած մթերքը: Սակայն Սատանի դարում գտնված գործիքները չեն սահմանափակվում վերոհիշյալով: Սրանց հետ /շելյան, աշելյան/ հանդիպում են նաև գործիքների ավելի կատարյալ ձևեր՝ եռանկյունի, հարթ, ուռուցիկ ձեռքի հատիչներ: Շատ գործիքների հարդարումը, մասնավորապես շեղքերի երկայնական մշակումը հնարավորություն է ընձեռում դրանք վերագրելու ուշ աշելյան գործիքների տիպին:

Ընդհանրապես այս հուշարձանի թվագրումը շատ մոտավոր է: Գիտնականների մի մասը, այդ թվում նաև առաջին հետազոտողները՝ Ս.Հ.Մարդարյանը, Մ.Զ.Պանիչկինան, Ս.Ն.Զամյատինը, ինչպես նաև նույն կարծիքը քաջալերող Ա.Ա.Ֆորմոզովը, Բ.Գ.Երիցյանը, Բ.Բ.Պիոտրովսկին այստեղ առանձնացնում են հին շելյան գործիքների մեծ խումբ: Միևնույն ժամանակ Վ.Պ. Լյուբինը և Ն.Պ.Պրասլովը այն վերագրում են աշելյան, ընդ որում Վ.Պ. Լյուբինը դրանք թվագրում է աշելով և անգամ ավելի ուշ ժամանակաշրջանով: Ն.Դ.Պրասլովը, գտնում են որ,համոզիչ չէ ավելի ուշ ժամանակաշրջանով Սատանի դարի նյութերը թվագրելու փորձը, և այստեղից հայտնի հավաքածուն վերոհիշյալ մասնագետները միշտ ձևով վերագրում են վաղ աշելյան /շելյան/ մշակույթին:

Այս աշխատությունները միաժամանակ քացահայտեցին, որ մարդացման

պրոցեսը տեղ է ունեցել նաև Հայաստանում և նրան հարող Անդրկովկասի, Առաջավոր Ասիայի շրջաններում: Դա հիանալի հաստատվում է անհնացած կենդանիների ոսկորների հայտնաբերումով, որոնք վերաբերում են ուշ երրորդական - վաղ չորրորդական ժամանակաշրջանների երկրաբանական տեսակներին նաև տեղական հումքից պատրաստված աշխատանքային գործիքներով: Կարևոր հայտնագործություն են նաև դեռևս 1959 թ. Կախեթիայի /Արևելյան Վրաստան/ Ուղաբնո վայրում գտնված մարդանման կապի մնացորդները, որոնք ապրել են երրորդականի վերջում, չորրորդականի սկզբում: Այդ էակը գտնված վայրի անունով ստացավ ուղաբնոպիթեկ անվանումը:

Սակայն Անդրկովկասում մինչև այժմ հոմինիդների հետ հնագույն աշխատանքային գործիքներ չեն հայտնաբերվել:

Հայկական Լեռնաշխարհի հնագույն կայանների, ինչպես նաև Կովկասի այլ հնավայրերի ուսումնասիրությունը կապված է տաճոմանիկ /ուժեղ սողանք/ պայմանների առկայության դժվարությունների հետ, որը չի նպաստում պալեոլիթյան կայանների կամ խաղումների շերտագրական պահպանվածությանը բաց երկնքի տակ: Մեծ մասամբ վաղ պալեոլիթյան հնավայրերը գտնվում էին նախալեռնային և նրանց հարող գոտիներում: Հաճախ դրանք տեղադրված են լեռների միջև առաջացած իջվածքների տարածքում:

Սառցապատման ժամանակաշրջանում բնաշխարհը կրում է խոր ձևափոխություններ, և պալեոլիթյան մարդկանց ապրելու ու գոյատևելու պայմանները տեղափոխվում են դեպի սարահարթեր և նախալեռնային գոտիներ: Չնայած համեմատաբար քիչ քանակությամբ հնագույն զտածոների, կարելի է որոշակիորեն ասել, որ Հայաստանում և Կովկասում մարդու առաջացումը վերաբերում է վաղընջական ժամանակներին: Գտածոների մեջ առանձնանում են Սատանի դարից հայտնաբերված աշխատանքային գործիքները, որոնց շարքում Մ.Ջ.Պանիչկինան առանձնացնում է աբևելյան մշակույթին բնորոշ գործիքների մի խումբ: Ցավոք, Սատանի դարի զտածոների մեծ մասը, որը ամբողջովին վերգետնյա հավաքածու է, չի համապատասխանեցվում երկրաբանական վերականգնմանը /ինտերպրետացիա/:

Պալեոլիթի ուսումնասիրությունը հիմնականում կատարվել է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջաններում: Այսպես, 1955 թ. Ս.Ն. Ջամյատինը Լազախի մոտ գտավ քարի դարի հնաթեր: Նույն վայրում 1958թ. հայտնաբերվեց մի քարայր՝ Դաշսալախլի կայանը: Լուսը զտածոները պատկանում են մուստիերյան ժամանակաշրջանին /տես ստորև/: 1977 թ. Վ.Ա. Լյուբինը իր երկրորդ այցելության ժամանակ Ղազախի շրջան, նույն Յուքարի Սալախլիում, բացի մուստիերյան գործիքներից, հայտնաբերեց նաև աշելյան ձեռքի հատիչ: Նույն թվականներին Լեռնային Ղարաբաղի /Արցախ/ Հադրութի շրջանում հայտնաբերվեց Ազոխի պալեոլիթյան քարայրը: Այս

քարայրի աշելյան մշակույթային շերտի հզորությունը կազմում է 6 մ, որում ներկայացված են այս մշակույթի բոլոր փուլերը: Ստորև հայտնաբերվեցին 4 մ հաստությամբ մինչշելյան մշակութային շերտեր՝ էոալեյստոցենին պատկանող: Հայտնաբերվեցին մեր երկրի ամենահին պեղածո մարդկանց ոսկորները, որոնք համեմատական են երկրաբանական շերտերին: Քարայրում բացվել են 14 մ հզորությամբ փափկացրած հողի շերտեր: Ամենաստորին շերտերը՝ 5-10-րդը տվեցին քարե գործիքներ և կենդանիների ոսկորներ: Բացառված չէ, որ այստեղ մարդը հանդես է եկել մինդելյան սառցակալումից առաջ: Մասնավորապես, հայտնաբերված քարե գործիքների մեջ աչքի են ընկնում գետաքարեր, որոնք հնագույն օլդուվյան գործիքները հիշեցնող կոպիտ հետքեր ունեն:

Ազոխում որպես հումք հիմնականում հանդես են գալիս գետաքարերը, ապառաժի բեկորները, հրաբխային ապարները, որը բնորոշ է նաև Դաղստանի, Կուլիիդայի, Մերձկուբանի և այլ վայրերի պալեոլիթին: Մինչդեռ, ինչպես նշվեց, Հայաստանի, Ջավախքի և Օսեթիայի պալեոլիթյան հուշարձաններին բնորոշ է բազալտը և վանակատը:

Ազոխում շատ մեծ հետաքրքրություն են ներկայացնում միջինաշելյան մշակութային շերտերից գտնված պեղածո մարդու ներքին ծնոտի ոսկորները: Հայտնաբերվել են նաև պեղածո կենդանիների /միջագետքյան եղջերու, գյուսենքերզյան ձի, ռազեղջյուր, մերկան, քիզոն և այլն/ ոսկորներ: Այս նյութերը, որոնք բավականին համանշյուն են Տիրասպոլյան հավալիրներից հայտնի գտածոներին, վերաբերում են վաղ աշելին: Հետաքար, Ազոխի հիշյալ 6 շերտերը և ստորին նստվածքները վերաբերում են ավելի վաղ ժամանակաշրջանի, քան միջին աշելը: Ազոխի նյութերը ինչոր չափով հաստատում են նաև Ստատնի դարի վաղ թվագրության փաստը և վստահորեն հնարավորություն տալիս նշելու Հայաստանում, Կովկասում վաղ աշելում մարդու առաջացման մասին: Ն.Դ.Պրասլովը, գտնում է, որ Կովկասի և Մերձավոր Արևելքի հարևանության փաստը խոսում է այն մասին որ Անդրկովկասում մարդը առաջացել է ստորին պլեյստոցենում, ոչ ուշ մինդելյան ժամանակաշրջանից:

Վ.Գ.Լյուբինը Հայաստանում /Հրազդանի շրջանում/, Ջրաբերի և Ֆանտանի մոտ, 1960 թ. հայտնաբերեց պալեոլիթյան-աշելյան կայաններ: Դրանք գտնվում են Ջրաբերից 1 կմ հյուսիս, Երևան-Հրազդան մայրուղուց 100-150 մ արևմուտք, Հրազդան գետի գառիթափ կիրճում: Տարածքը ամբողջովին ողողված է բնական ամենատարբեր երանգավորումներով /սև, կարմիր, դարչնագույն/ վանակատե հանքով, որն այստեղ բնակիչների՝ աշելյան մարդու համար ծառայել է հումք: Հրազդանի միջին հոսանքում գտնվող Ջրաբերը աշելյան մշակույթին պատկանող առավել հարուստ հուշար-

ման է, որտեղից գտնված շուրջ 200 աշխատանքային գործիքները պատված են մուգ-մոխրագույն փառով: Ջրաբերի գործիքներն ավելի խոշոր են և իրենց չափերով երկու-երեք անգամ գերազանցում են Արզնիի հայտնի գտածոներին: Ջրաբերի գործիքների հավաքածուի կեսը միջուկներ են, սրանք մեր երկրի քոլոր նման հուշարձանների մեջ ամենամեծ տոկոսն են կազմում: Աշելյան միջուկները ունեն տարբեր ձևեր՝ միակողմանի /միանիստ/, եռանկյունի, ձվաձիր, ուղղանկյունի, երկնիստ և այլն: Հավաքածուի երկրորդ մասը կազմում են ծլեփները, շեղբերը և ոչ մեծ քանակի գործիքները՝ ձեռքի հատիչներ, սրածայրեր, քերիչներ, կոպիտ կտրող գործիքներ:

Միջուկները կազմում են ինքնուրույն կայուն խումբ և տարբերվում իրենց ձևաքանությամբ, որը առկա է Սատանի դարի, Արզնիի, Ամիրքաղի հավաքածուներում: Ջրաբերի երկնիստ միջուկներն իրենց ձևաքանությամբ նման են հարավ- օսեթական Լաշե-Բալտա վայրի աշելյան խմբին և մի շարք հուշարձանների Բերեք գետի ավազանում /Լիսայա գորա, Մորգո, Յաշտուխ և այլն/:

Ջրաբերի ծլեփները /100 օրինակից ավելի/ իրենց ձևերով համապատասխանում են միջուկներին: Կարելի է առանձնացնել ծլեփներ, որոնք նման են ծգված շեղբերի, եռանկյունաձև են, ուղղանկյուն, ինչպես նաև երկու մուստիերյան ծայրակալ: Այս հուշարձանն իր ուշիղ համեմատականը դեռևս չունի արտասահմանյան աշելյան հուշարձաններում, արհեստանոցներում: Հռչակավոր Կոմոնա և Կանի լյա Գարենի հուշարձանների /Ֆրանսիա/ հավաքածուները բնորոշվում են իրենց առավել արխայիկությամբ, մասնավորապես կապված քարի քեկոտման տեխնիկայի հետ, երբ լևալուգյան մշակման մեթոդները դեռ նոր էին ծնվում: Ջրաբերի կայանը վերինաշելյան արհեստանոց է՝ տեղադրված հումքի՝ ժայռերի ելուստների տարածքում և մեր երկրում աչքի է ընկնում իր եզակիությամբ: Այստեղ վառ արտահայտված է լևալուայի տեխնիկայի ծաղկումը:

Հետաքրքիր են նաև՝ 1960 թ. Լեռնային Ղարաբաղում /Արցախում/ կատարված երկու քարայրերի պեղումները, որոնք վերաբերում են մուստիերյան ժամանակաշրջանին: Առաջինը՝ Թազլարյան, երկրորդը՝ Շուշիում գտնվող կայաններն են: Հատկապես արժեքավոր է Թազլարյան քարայրը, որը տեղադրված է Ազոխից 3 կմ արևմուտք: Այս վայրը, ուր գտնվեցին երկու քարայրերը, պատկանում է յուրայի կավճային հրաբխային նստվածքային դարաշրջանին: Աշխատանքային գործիքներ պատրաստելու համար լայնորեն օգտագործվել են նստվածքային ապարները, հրաբխային օբսիդիանը /վանակատ/ և անդեզիտի տարբեր տեսակներ: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են մուստիերյան ժամանակին պատկանող, ոչ հստակ ձև ունեցող միջուկներ, սրածայր տեսքով ծլեփներ, քերիչներ, ծակիչներ, դանակաձև, ատամնավոր շեղ-



Սղ. 3. Քարի դար՝ աշխատանքային գործիքներ Ջրաբերդից։

քեր և այլ տիպի գործիքներ: Գտնվել են նաև մեծ քանակի ոսկրաքանական նյութեր, որն ապացույց է, որ այստեղի բնակիչները որսացել են ազնիվ եղջերու, բեզոարյան այծ, վարազ, ցուլ կամ բիզոն, ոնագեղջյուր, էշ, ձի: Հանդիպում են նաև վայրի գազաններ, անձավային առյուծ, քորենի, աղվես, կզաքիս: Թագլարի մուստիերյան քարե գործիքները քավականին մոտ զուգահեռներ ունեն Իրանական Քրդստանի և Լորիստանի նույն ժամանակաշրջանի քարայրներից գտնված աշխատանքային գործիքների հետ: Պետք է ավելացնել, որ Արցախի պալեոլիթյան հուշարձանները բազմաշերտ են:Ազոխի տորին շերտերը պատկանում են վաղ աշելին /շելյան ժամանակաշրջան/, մինչդեռ Թագլարի նյութերը հիմնականում թվագրվում են մուստիերյան դարաշրջանով, որը որոշ առանձնահատկություններով առանձնանում է նաև Ազոխի մուստիերյան շերտերին պատկանող ինդուստրիայում:

Ազոխի մուստիերը ներկայացված է եղնանձև սրածայրերով, առամնավոր գործիքներով, կտուցի ձև հիշեցնող ծակիչներով, քերիչներով: Մեծ քանակի են հասնում լևալուայի տեխնիկայով մշակված գործիքները, սրածայրերը: Հայտնի են նաև քերիչներ և կտրող քարե գործիքներ:

Մուստիերյան հուշարձաններ հայտնաբերվել են նաև Հայաստանի Հանրապետության տարածքում: Ս.Հ.Սարդարյանը, Ս.Ն.Զամյատինը և Մ.Զ.Պանիչկինան մուստիերյան կայաններ են հայտնաբերել Արտին լեռան վրա. այստեղ գտնվել են մեծ քանակությամբ ձեռքի հատիչներ, որոնք աչքի են ընկնում կոպիտ հարդարումով և փոքր՝ 5-8 սմ չափերով, ինչպես նաև հարվածի հրապարակի կրունկի անհետացմամբ: Գտնվել են նաև սկավառակաձև,եռանկյունաձև միջուկներ, ծայրակալներ, նուրբ, միջանկյալ ողով շեղքեր և այլն:

Սատանի դարի մուստիերյան զառածոները տարբերվում են աշելյանից առավել մանրակրկիտ հարդարմամբ և կատարելիությամբ: Ծլեփները ու շեղքերը ունեն համեմատաբար ոչ մեծ չափեր, լայնակի կտրվածքում շատ քարակ ու նրբին են և ունեն ծիշտ եռանկյունու կամ ձվաձիր տեսք: Ծլեփների մեծ մասը հարվածի հրապարակում ունի նախնական մշակման հետքեր: Այդ հարթությունները ուղիղ անկյուն են կազմում ծլեփի տորին հատվածի հրապարակի հետ: Սրածայրերը և քերիչները ձևավորված են նուրբ ռետուշով, որը գործիքներին տալիս է կտրելու հատկություն՝ միաժամանակ հարթեցնելով և նուրբը հարդարումով ծածկելու հատող կողը:

Արտին լեռան մուստիերյան գործիքներն իրենց մշակման ձևերով դեռ պահպանվում են աշելյան տեխնիկայի որոշակի գծերը: Այդ է վկայում երկկողմանի մշակման մի քանի փոքրիկ ձեռքի հատիչների և սկավառակաձև գործիքների հայտնաբերումը, որոնք հիշեցնում են Սատանի դարի ուշ աշելյան հավաքածուների նյութերը: Այս կապը վկայակոչում է այն փաստը, որ գտնված գործիքները իրենց տարիքով մոտ են Սատանի դարի մուս-

տիերյան զառածոներին ինչը որ հնարավորություն է ընձեռում վերջիններս համարել մուստիերյան մշակույթի վաղ փուլը:

1949 թ. Մ.Ջ.Պանիչկինան հետազոտեց Ամիրաքաղյան կայանը: Այն գտնվում է Հրազդան գետի աջ ափին, Երևանից 23-25 կմ հյուսիս, Ջրառատ և Ամիրաքաղ գյուղերի միջև, Արզնու պալեոլիթյան համալիրներից 4-5 կմ հեռավորությամբ, երկրորդ դարավանդի վրա: Պալեոլիթյան զառածոները հայտնաբերվել են կիրճի երկայնքով, 300-400 մ երկարությամբ և 100 մ լայնությամբ տարածքի վրա: Գործիքները պատրաստված են գետաքարե սև վանակատից: Դրանք փոքր չափեր ունեն՝ 5-7 սմ, որը կախված է գետաքարի չափերից: Ամիրաքաղում հայտնաբերված հավաքածուն կազմված է 80-ից ավելի մուստիերյան գործիքներից, որոնք բաժանվում են երկու խմբի՝ 1. պատրաստուքներ, որոնց մեջ մտնում են ծլեփները և միջուկները, 2. գործիքներ: Հավաքածուում կան 4-7 սմ երկարությամբ և 3-5 սմ լայնությամբ 32 ծլեփներ: Դրանք մեծ մասամբ եռանկյունաձև են և ունեն լավ արտահայտված հարվածի հրապարակ: Եզակի օրինակներ են ներկայացնում ժզված /երկարավուն/ ծլեփները, որոնք իրենց ձևերով մոտենում են դանակի տիպի շեղբերին: Մուստիերյան տեխնիկայի բնորոշ գծերով են օժտված միջուկները /6 օրինակ/, որոնց մեծ մասին հատկանշական է սկավառակի ձևը: Խոշոր, լայն, եռանկյունի ուրվագծերով երեսակը ծածկում է ողջ վերնամասը կամ միայն մի կողմը: Կան նաև երկու եռանկյունաձև միջուկներ: Դրանցից ծլեփներ են անջատվել միայն մի կողմից և միևնույն ուղղությամբ: Գտնվել է ձեռքի հատիչի եզակի օրինակ, որն ունի երկկողմանի կոպիտ բեկոտմամբ մշակում: Գտնվել են երկու սրածայրեր և ոչ մեծ դուր՝ երկկողմանի աշխատանքի հետքերով:

Ամիրաքաղի գործիքների մեջ մեծ թիվ են կազմում եռանկյունի ծլեփները և քերիչները, որոնց մի մասը հավանաբար գործածվել է կտրելու նպատակով: Իրենց ձևերով սրանք մոտենում են Ախշտուրյան և Նավալիշյան քարայրների /Աղլեր և Սռչիի շրջան/, ինչպես նաև Առաջավոր Ասիայի քարայրներից հայտնի մուստիերյան հավաքածուներին /Թազար-Մերդը Իրաքում, Շուքկան, Սուզարեղ էլ վաղը և Տաքուն Պաղեստինում/, որը հնարավորություն է ընձեռում Ամիրաքաղյան բնակավայրը թվագրել զարգացած մուստիերյան ժամանակաշրջանով:

1936 թ. Երևանում Բ.Ն.Երիցյանը հետազոտեց մուստիերյան մի կայան՝ Երևան 1-ին քարայրը: Այն գտնվում է Հրազդան գետի ափին, տեղադրված է լայն, բայց ոչ խոր /9 7 մ և 5 3 մ չափերով, 2,5 մ բարձրությամբ/ խորշում, անդեզիդ-բազալտե հրաբխային շերտերից առաջացած նստվածքներում: Քարայրի մուտքի առջև կա ոչ մեծ, 30 մ^2 հրապարակ:

Պեղումները կատարվել են քարայրի կենտրոնում և հյուսիսային հատվածում՝ 25 մ^2 տարածքով, 1,5 մ խորությամբ, ուր բացվել են հատակո-

րեն ընդգծված յոթ շերտեր: Բոլոր շերտերը հարուստ են մշակութային մնացորդներով, որոնք քարե գործիքների տեսքով են, կան նաև ոսկրե մնացորդներ: Այստեղ հայտնաբերված քարե գործիքների առանձին մնացորդները վկայում են այն մասին, որ հումքից աշխատանքային գործիքների պատրաստումը կատարվել է հենց քարայրում՝ տեղում: Գործիքների քացարձակ մեծամասնությունը պատրաստված է վանակատից, մնացած սակավ մասը՝ քազալտից, կայծքարից, կվարցից և սապիսից: Աշխատանքային գործիքների գերակշռող մասը քերիչներն ու սրածայրերն են, ավելի քիչ են մյուս տիպերը՝ միջուկները, ծլեփները, շեղբերը և այլն:

Երևան 1-ին մուստիերյան կայանն իր հնագիտական հավաքածուով դեռևս զուգահեռը չունի: Համեմատաբար սրան մոտենում են Նոաբլուրի և Ամիրբեգի զտածոները: Շեղբերի երկայնական մշակման տեխնիկայով Երևան 1-ին քարայրին հարում են Ներքին Կոքայի /Ղրիմ/ և Սուխոյ մեշեռկայի /Վուլգոգրադ/ նյութերը:

Պալեոլիթյան հուշարձաններից Հայաստանի Հանրապետության տարածքում առաջին անգամ հայտնաբերվել են պլյայստոցենի ժամանակաշրջանի շուրջ 24 տեսակ կենդանիների ոսկորներ՝ եղջերուի, իշայծյամի, ոնագեղջերուի, ձիու, վայրի էշի, ուշտարի, գեքրի, քեզոարյան այծի, քարայրի արջի, գայլի, նապաստակի, աղվեսի, շնագայլի, աղավնու, ճայի, հունական կրիայի և այլն: Հնաբուսաբանական ցուցանիշները ապացուցում են, որ քարայրի շրջակայքը բուսաբանական փոփոխությունների է ենթարկվել երեք անգամ: Հուշարձանի 7-5 շերտերից հայտնաբերված բուսական մնացորդների մի ամբողջ համալիրի վերլուծությունը ապացուցում է, որ այստեղ առկա են ցրտադիմացկուն տեսակներ, այն է՝ սոճի /89%/, եղևնի, կեչի և մամռային բուսականության տարբեր տիպեր:

3-4 հորիզոններում հանդիպում են չափավոր ցրտադիմացկուն և խոնավ բնակլիմային բնորոշ ծառատեսակներ՝ կեչի, սոճի և այլն, ինչպես նաև խոտի տեսակներից՝ իշամորուկը:

Երրորդ համալիրը /1-2 շերտեր/ պարունակում է 3-4 տեսակի ծառերի և 90-97 տեսակի խոտերի մնացորդներ, որով ծածկված է եղել շրջակայքի բնաշխարհը: Միայն առանձին վայրերում են աճել կազնին, հնդկական կաղնին, շագանակը, ինչը որ խոսում է տաք կլիմայի մասին:

Քարե զտածոները Երևան 1-ին քարայրում հասնում են մի քանի տասնյակ հազարի. սրանք հիմնականում պատրաստվել են Նուռնուսից և Հաղիսից բերված հումքով: Դրանց ուսումնասիրությունն ապացուցում է, որ գործունեները մուստիերյան քարե գործիքներին բնորոշ յուրօրինակ հայտնագործությունների հետ ամբողջ Կովկասի համար: Ռադիոածխածնային վերլուծության արդյունքներից պարզվում է, որ դրանք բացարձակորեն զոյատևում

են 44150 2400 /1850 տարվա ժամանակահատվածում:

1968-69 թ.թ. Ռ.Ն.Երիցյանը հետազոտեց Երևան 2-րդ քարայրը, որն առաջինից գտնվում է 300 մ ճեռավորության վրա և առաջացել է նույն երկրաբանական միջավայրում: Այն ունի զանգաձև կառուցվածք, 4 մ երկարություն, 1,75 մ բարձրություն և 3 մ խորություն: Մուտքի բարձրությունը 1,5 մ է: Այստեղ գտնվել են կայծքարե ձլեփներ, վանակատե միջուկ և նույնատիպ աշխատանքային գործիքներ, ինչ որ Երևան 1-ին քարայրի մուստիերյան շերտերում: Դրանց քվազրությունը նույնն է:

Ներկայումս Հրազդան գետի կիրճում հայտնաբերվել են հարյուրավոր քարայրեր: Դրանց առատությունը բնորոշ է ողջ Հայկական լեռնաշխարհին՝ նաև Արևմտյան Հայաստանին և Պարսկահայքին: Ներկայումս Կ.Ֆ.Կարապետյանի ավյալներով այստեղ կան 1500 նման քարայրներ: Ռ.Ա.Անտոնովը նշում է, որ քարայրների այսպիսի բազմաքանակություն առկա է նաև Արցախում /Լեռնային Ղարաբաղ/, մասնավորապես Թարխան գետի տարածքում, ինչպես պես նաև Ջյալքաջարի խառնարաններում:

Բացի Երևան 1,2 քարայրներից ներկայումս հետազոտվում են Զովունին և Լուսակերտ 1,2-ը:

Լուսակերտ 1-ին քարայրը բացվել է 1970 թ.: Այն տեղադրված է գետի կիրճում, փոքր-ինչ ընդարձակ անդեզիդ-բազալտե նստվածքներից կազմված ծնծաղոտում՝ կանյոնում: Իր երկրաբանական ձևաբանությամբ այնքան և նման է Երևան 1-ին քարայրին: Ունի ոչ խոր, լայն կտրվածք 7 սմ խորությամբ, 13 մ լայնքով, 3 մ բարձրությամբ: Հետազոտվող տարածքը կազմում է 2 6 մ և բաղկացած է 1,5 մ հզորությամբ չորս շերտերից, որոնք անհամեմատ հարուստ են մշակութային մնացորդներով՝ քարե գործիքներ, կենդանիների պեղածո ոսկորներ:

Չնայած գտնվել են մանրացված, կրակից խամրած ոսկորներ, բայց օջախի հետքեր չեն հայտնաբերվել:

Ոսկրաբանական նյութը կազմված է ձիու, քարայրի, արջի, գայլի, աղվեսի ոսկորներից, ինչպես նաև տարբեր կրծողների, թռչունների մնացորդներից: Քարե գործիքների 99 տոկոսը, դրանք շուրջ 6000 կտոր են, պատրաստված են վանակատից: Գործիքների մեջ առանձնանում են տարբեր ձևի միջուկներ, ձլեփներ, շեղբեր, բեկոտված մնացորդներ: Այս ինդուստրիան աչքի է ընկնում յուրօրինակությամբ և որոշակի նմանություններ ունի Արզնու, Երևան 1-ին և Ծոաբլուրի մուստիերյան աշխատանքային գործիքների հետ:

Ինչպես տեսնում ենք, մարդիկ գոյատևման համար ամենից հաճախ ընտրում էին քարայրները, անձավները և ցանկացած ծածկ: Այսպես, հյուսիսարևմուտքում և Հայկական լեռնաշխարհում դրանք հայտնի են Ծոմխթիում,

Նայթանդաղի և Ղարաբաղի լեռնաշղթաներում, որտեղ ուսումնասիրվում են չորս քարայր-կայաններ՝ Դամջիլի, Դամսալախլու, Թազար և Ազոխ: Հայաստանի Հանրապետության տարածքում աշել-մուստիերյան կայանները հիմնականում հայտնի են որպես քաց տիպի հուշարձաններ՝ Սատանի դար, Ջրաբեր, Ֆանտան, Արգունի, Եռաքար բլուր /Եռաքլուր/, Ջաջուռ և այլն:

Սակայն վերջին տարիների հայտնագործությունները թե՛ Հայաստանում, թե՛ ողջ Հայկական լեռնաշխարհում ցույց են տալիս, որ պալեոլիթյան կայանները գոյություն են ունեցել բնական կիրճերում, խոր կանյոններում, այրերում, ինչպես նաև հրաբխային շերտերում:

Կ.Ի.Կարապետյանը գտնում է, որ դրանք առաջացել են հրաբխային խարանը գետերի ջրերով լվացման հետևանքով: Նա Հայաստանում հաշվում է շուրջ 1500 նմանատիպ քարայրներ, իսկ Բ.Ա.Անտոնովը նմանատիպ քարայրների առկայությունը նշում է Ղարաբաղի այլ վայրերում: Քարայրներ կան նաև Ջուռ գետի կիրճում, Ախալքալաքում, Խրամում Աղստևում և այլն:

Ինչպես նշվեց, մարդկանց բնակվելու համար շատ կարևոր նշանակություն է ունեցել բնակլիմայական պայմանների առկայությունը: Այս բարենպաստ պայմաններով էլ պայմանավորված էր մարդկանց ապրելու տեղերի ընտրությունը քարայրներում, լճերի, գետերի, ափերին, բնական խորշերում: Ցուրտ եղանակին բնակվելու հիմնական տեղ են հանդիսացել քարայրները: Բուռը դեպքերում այս վայրերի ընտրությունը կախված էր և պայմանավորված գործիքներ պատրաստելու հումքի առկայությամբ:

Աշելյան և մուստիերյան դարաշրջաններում ըստ գտնված ոսկրաքանական նյութերի որսի օբյեկտներ են հանդիսացել քարայրի արջը, ազնիվ եղջերուն, ձին, բիզոնը, ոնգեղջյուրը: Հայկական լեռնաշխարհի առավել հարավային շրջաններում որսացել են հիպոպոտում փիղ, էտրուսկյան ոնգեղջյուր և այլ կենդանիներ:

Այս ամենով հանդերձ, Կովկասում վաղնջական ժամանակներից մարդու հանդես գալը դեռևս վերջնականորեն չի բացահայտված: Բաց է նաև ուղղաբնոպիթեկը՝ որպես մարդու նախնու առաջացման պրոբլեմը: Տեսականորեն այն հնարավոր է, սակայն կան քազմաթիվ հակասությունները՝ կապված վերջինիս հնաբանական տարիքի հետ: Գիտնականների մի մասը գտնում է, որ ուղղաբնոպիթեկը մոտ է կանգնած դիոպիթեկին և ռամոպիթեկին: Պարզ չէ նաև քարեր կամ պեղածո մարդու հանդես գալը կամ տեղափոխվելու փաստը Կովկաս, Հայաստան և այլ շրջաններ: Հենյած ասվածին, Երկրային գիտության նվաճումներից ելնելով, կարելի է նշել մշակութային հնագույն կապերի մասին Հայաստանի, Անդրկովկասի և Առաջավոր Ասիայի այլ շրջանների միջև: Բացի Հայաստանի Հանրապետության, Արցախի տարածքներից, հնագույն զտածոներ են հայտնաբերվել Ղարսում, Իրանի հյուսիսային շրջաններում,



Սղ. 4. Քարի դար՝ աշխատանքային գործիքներ Ազոխի քարայրից:

Լուրիստանում, Իրաքի Քուրդիստանում:

1967 թ. Կ.Ի.Կարապետյանը մուստիերյան հուշարձաններ քացեց Կոտայքի /Քանաքեռ/ սարահարթում, Գեղամա լեռների արևմտյան լանջերին, որտեղից հայտնաբերված նյութերը հետազոտվում են Բ.Գ.Երիցյանի կողմից: Հայտնագործությունների մեծ մասը կատարվել են Կոտայքի սարահարթում, ուր շատ վայրերում հանդիպում են մեծ քանակի աշխատանքային գործիքների կուտակումներ: Ամենակարևոր հայտնությունները հաստատագրվել են Գյամրեզ գյուղի հարավում, ինչպես նաև Զորաղբյուր գյուղից արևմուտք:

Ամենից հարուստը դրանց մեջ Եռաբլուրն է, որը գտնվում է Զորաղբյուրից 1 կմ հյուսիս-արևմուտք, Արամուս տանող հին Ճանապարհի մոտ: Հուշարձանի տարածքը ընդգրկում է եռանկյան տեսքի երեք բլուրներ, որտեղից էլ առաջացել է հուշարձանի անունը՝ Եռաբլուր, որը դաշտավայրից բարձր է 30-35 մ, իսկ ծովի մակերևույթից՝ 1600 մ: Գործիքների պատրաստման հիմնական հումքն են վանակատը և քազմերանգ գետաքարը: Եզակի են հասպիսից, անդեզիտ-բազալտից պատրաստված գործիքները: Այս հանքավայրն ունի 7-10 կմ շառավիղ: Գործիքները սփռված են բլուրների մակերեսով մեկ, որտեղից հավաքվել են 700 օրինակ: Հանդիպում են միջուկներ, լավ հարդարումով ծլեփներ, քեկոտված քարե կտորներ և առանց կրկնակի մշակման ծլեպներ:

Միջուկներն իրենց ձևերով տարբեր են՝ միահրապարակ, երկհրապարակ, սկավառակաձև: Կան կտրիչներ և սրածայրեր՝ ատամնավոր հարդարումով: Իրենց բնույթով առանձնանում են պատրաստման երկու փուլեր՝ ավելի վաղ, երբ գերակշռող են խոշոր, լևալուայի տեխնիկայով, երկայնակի ճեղքումով ստացված գործիքները: Հիշարժան են թեփուկաձև և զուգահեռ հարդարումով քերիչները, ծակիչները: Երկրորդ փուլը ավելի ուշ շրջանի համալիրներն են, որոնք տարբերվում են փոքր, նուրբ ծլեպների, շեղքերի, ատամնավոր գործիքների առատությամբ: Հանդիպում են նաև քերիչներ և ծայրակալ ծակիչներ: Եռաբլուրի երկու համալիրներն էլ, չնայած իրենց ժամանակային, տարբերություններին, պատկանում են միևնույն մուստիերյան պալեոլիթյան մշակույթին, առաջինը՝ վաղ, երկրորդը՝ ուշ:

1963 թ. Վ.Գ.Լյուբինը և Լ.Ա.Բարսեղյանը պալեոլիթյան նյութեր հայտնաբերեցին Նոյեմբերյանի շրջանում, Նոյեմբեր գյուղից 8 կմ հյուսիս, Հապիկ լեռան ստորոտին՝ 400 մ^2 տարածքով: Այս լեռը Գուգարքի լեռնաշղթայի զագաթներից է:

Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության մյուս պալեոլիթյան կայանների, ուր մեծամասնությամբ գործիքները պատրաստվել են վանակատից, քազալտից, այստեղ հումք է հանդիսացել կայծքարը, որի պատճառով

Հապիկ լեռան կայանը կայծքարե ինդուստրիայով առաջին պալեոլիթյան հուշարձանն է: Նախնադարյան մարդն այստեղ օգտագործել է տարբեր տեղական քարեր, որոնք ներկայացված են խոշոր քնկորների ձևով: Բազմաձև ծլեպները խոսում են այն մասին, որ դրանց համար որպես հումք ծառայել են տարբեր վայրերից բերված քարերը: Հանքերից ամենամոտը կայանից գտնվում է 0,5 կմ դեպի հարավ-արևմուտք: Աշխատանքային գործիքները ոչ մեծ չափերի են, 10 սմ երկարությամբ: Հուշարձանից հավաքվել են 110 զտածոներ, որոնց մեջ հանդիպում են պատրաստի գործիքներ, ներդիրներ, ծլեպներ, սրակող շեղբեր և ատամնավոր գործիքներ:

Միջուկները /10 հատ/ բրգաձև կամ պրիզմաձև են, հարթ հարվածի հրապարակով, երբեմն խորդուբորդ արտաքինով: Հանդիպում են նաև սկավառակաձև միջուկներ /2 օրինակ/: Ծլեպները /78 հատ/ ստացվել են լևալուայի տեխնիկայով: Գործիքները հիմնականում պատրաստվել են շեղբերից և ծլեպներից, մի քանիսը ունեն ատամնաձև մակերես: Հանդիպում են քերիչներ, ծակիչներ, տարբեր կտրող գործիքներ և այլն: Բնորոշ է, որ այս հավաքածուի մեջ բացակայում են ձեռքի հատիչները և երկկողմանի հղկումով գործիքները: Գործիքների ձևն ու մշակման տեխնիկան խոսում են այն մասին, որ հուշարձանը պատկանում է մուստիերյան մշակույթին և իր զուգահեռներն ունի Աբխազիայի կայանների՝ Յաշտուխի և Յարա-դերեի հետ:

1967 թ. Երիցյանը, նորից հետազոտելով այս շրջանը, մի նոր կայան հայտնաբերեց Հացուտում, որը գտնվում է Հապիկից 1 կմ հարավ-արևմուտք՝ ընդգրկելով 100-150 մ տարածք: Հետախուզական 0,5 մ խորությամբ շերտագրական փոսորակում պարզվեց, որ այդ մշակույթային շերտերը անխախտ են, իսկ վերգետնյա նյութը պատկանում է ավելի ուշ ժամանակաշրջանի՝ նույնպես թվագրվելով մուստիերով: Հավաքվել են 170 զտածոներ, որոնցից 5-ը՝ մուստիերյան, մնացածը վերաբերում են վերին պալեոլիթին: Այստեղ, բացի կայծքարից, գտնվեցին 10 վանակատ և 7 կվարցե զոտիներ: Հայտնաբերվել են նաև 18 միջին չափի պրիզմաձև միակողմանի տիպի միջուկներ: Ծլեպները զգալի մասը օգտագործվել են որպես գործիքներ: Գտնվել են ծալիչներ, քերիչներ, սրածայրեր և ատամնավոր՝ կտուցաձև գործիքներ: Կարող գործիքների տիպը բացակայում է: Չնայած բոլոր գործիքներն ունեն մուստիերյան ինդուստրիային բնորոշ մի քանի հատկանիշներ, բայց և այնպես դրանք ավելի զարգացած գործիքներ են և քավականին լավ կապվում են Ծատկերանի, ինչպես և Հայաստանի Հանրապետության այլ, վերին պալեոլիթյան կայանների հետ:

Ինչպես ցույց են տալիս պեղված նյութերը, Հայաստանի և Կովկասի պալեոլիթյան կայաններում մարդկանց զոյատևման հիմնական աղբյուրը եղել է որսորդությունը և հավաքչությունը: Վերը նշվեց, որ բոլոր քարայր-կայաններում գտնվել են մեծ քանակությամբ կենդանիների ոսկոր-

ների մնացորդները, որոնց մեջ կան նաև այրված, վառված օրինակներ: Ենթադրվում է նաև, որ բացի մսեղենից, հին մարդիկ օգտագործել են նաև կենդանիների մորթին՝ հագուստի՝ ավելի ուշ՝ տանիքի ծածկի, հատակին փռելու համար: Ոսկորները ծառայել են նաև որպես վառելիք և ավելի պակաս չափով՝ հումք գործիքներ պատրաստելու համար: Նշված դարաշրջանում որսի օբյեկտ էին խոշոր կաթնասուն կենդանիները՝ այծը, բիզոնը, ձին, ոնգեղջյուրը, քարայրի արջը և այլն: Կան նաև թռչունների և կրծողների ոսկորներ:

Հավաքչությունը տնտեսության երկրորդ խոշոր ճյուղն էր, որը բուսական սննդի հիմնական աղբյուրն էր: Տարբեր հատապտուղների, բույսերի, պտուղների հավաքելն ու օգտագործելը քանակական առումով ամենօրյա քնույթ էր կրում: Զորրորդական ժամանակաշրջանի Կովկասում և Հայկական լեռնաշխարհում մարդկանց համար կար այնքան առատ և բազմատեսակ բուսական կեր, որի նմանը չկա ողջ նախկին ԽՍՀՄ-ի տարածքում: Հավաքչության նշանակությունը հավանաբար ամում էր նաև հետագա տաքացմանը զուգընթաց, երբ լայնորեն տարածվեցին անտառները՝ նորանոր ռեսուրսներ ստեղծելով կերի հավաստարչափ և ռացիոնալ օգտագործման համար:

Հնագիտական գրականության մեջ առաջ են գալիս մի շարք փաստարկները, որոնք վկայակոչում են Հայաստանում և Կովկասում հնագույն գաղափարական պատկերացումների մասին: Դրա համար հիմք են ծառայում նեանդերթալյան թաղումները, ինչպես նաև արջի պաշտամունքը: Չնայած թաղումներ այստեղ չեն հայտնաբերվել, սակայն արջի պաշտամունքը հաստատագրված է մի քանի վայրերում, Օրինակ, Հարավ-Օսեթիայի Կուդարո քարայրում հանդիպում են արջի և եղջերուի գանգոսկրեր, որոնք տեղադրված են քարայրի արևելյան պատի մոտ:

Ցուխզաայան քարայր-կայանում /Իմերեթիա/, որի մուտքը շարված էր միջին չափի քարակույտերով, պատի երկայնքով որոշակի կանոնավոր հաջորդականությամբ շարված էին անձավի արջի վերջույթների ու գանգի ոսկորները: Ազոխյան քարայրի աշելյան վերին շերտերում հայտնաբերվեց Ազոխանարոպի թաքստոցը, որտեղ կոնկրետ հաջորդականությամբ թաղված էին անձավի գորշ արջի ոսկորներ: Դրանք կրոնահոգևորական պատկերացումների խորհրդանշաններ էին:

Անգամ այս նյութերի ամենախիստ քննադատական վերլուծությունը այնուամենայնիվ հնարավորություն է ընձեռում մտածելու Հայկական լեռնաշխարհում, Կովկասում արջի պաշտամունքի առկայության մասին:

Քարե աշխատանքային գործիքների ուսումնասիրությունը թույլ է տալիս պատկերացում կազմելու աշելյան և մուստիերյան համայնքներում „տոցիալ-տնտեսական„ հարաբերությունների որոշակիության մասին: Ծա-

կայն այստեղ անհրաժեշտ է ելնել քարե ինդուստրիայի էթնոսոցիալական բնույթից: Մի կողմից քարե գործիքների բնույթը հաստատում է, որ սերունդների փորձը պայմանավորված է տեղական ավանդույթներով, մյուս կողմից բացահայտվում է, որ ամեն մի մշակույթի կրողը ու տարածողը կազմել է որոշակի էթնիկական ամբողջություն: Այս մեխանիզմը հնարավորություն է տալիս խոսելու այն մասին, որ հիմնականում Հայկական լեռնաշխարհում, Կովկասում մուստիերյան ժամանակաշրջանում գոյություն ունեին նեղ, տեղային միևնույն մշակույթին պատկանող հուշարձանների խմբեր: Ամեն մի խումբ տարածքային, ժամանակագրական և գենետիկ փոխառնչվածության կապ ունի: Ամեն մի խմբի մեջ տարբեր հուշարձանների /կայաններ, որսորդական ճամբարներ և այլն/ առկայությունը հիմնավոր փաստարկ է՝ վեր հանելու սոցիալ-տնտեսական բազմաբնույթ մարդկային հարաբերությունները /որսորդություն, հավաքչություն, գործիքների պատրաստում/: Կոլեկտիվի շահերը պահանջում էին, որ խիստ կարգավորվածության պայմաններում աշխատանքի բաժանում կատարվեր ըստ սեռատարիքային և բնական ընտրության:

Հետաքրքիր նյութեր են հայտնաբերվել Արևմտյան Հայաստանում: Դեռևս 1885 թ. Մ.Ժ.Ե. Գոտյեն Եփրատի ավազանի վերին հոսանքում, Բիրիջիկ /Ուրֆայի վիլայեթ/ լեռան մոտ, հին երկրաքանակական նստվածքներում գտավ աշելյան ձեռքի հատիչ: Այն կայծքարից է, 20 սմ երկարությամբ, 9 սմ լայնությամբ: 1907 թ. շվեդ զիտնական Ֆ.Անեն հետազոտեց Բիրիջիկ լեռան շրջակայքը, որտեղից հավաքեց 22 ձեռքի հատիչներ: Դրանք բոլորը բաց գույնի կայծքարից էին. զիտնականը հավաքածուն թվագրեց շելյան ժամանակով:[1]

1928 թ. Նվեյցարացի զիտնական Նվզենի Պիքարդ Ադիման /Մալաթիայի վիլայեթ/ լեռան մոտ հայտնաբերեց Պիրին պալեոլիթյան կայանը: Վերջինս հետազայում ուսումնասիրվեց Մ.Ֆ.Քոշայի և Շ.Ա.Կանսուի կողմից: Նույն վայրը հետազոտել են գերմանացի զիտնական Գ.Գ.Օստենը և թուրք հնագետ Ի.Կ.Կյոկտենը: Հայտնաբերված գործիքները հիմնականում պատկանում են օրինակյան մշակույթին, դրանք քերիչներ են, շեղբեր, կտրիչներ, ծակիչներ, դանակներ, պարզունակ միջուկներ և այլն: Սակայն Պիրինի նյութերում կան նաև մուստիերյան, ինչպես և նեոլիթյան դարաշրջանների զտածոներ, որը հնարավորություն է տալիս այս հուշարձանը թվագրել ամբողջ պալեոլիթյան ժամանակաշրջանով:

Հայկական Տավրոսի և Սիրիական սարահարթի սահմաններում հայտնաբերվեցին այլ նյութեր նույնպես: 1983 թ. Գազիայնթափից 20 կմ հյուսիս, Դյուլյսկ գյուղի շրջակայքում, հայտնաբերվեցին ստորին պալեոլիթյան մի խումբ հատիչներ և շեղբեր: Գազիայնթափից 20 կմ հյուսիս-արևմուտք, Մեսմենգիե գյուղի տարածքում, հայտնաբերվեց բազալտից

շելյան ձեռքի հատիչ: 1945 թ. Ջեյսուն լեռան մոտ /Ազիամանից հարավ-արևմուտք/ նույնպես գտնվեց աշելյան վերջին ժամանակաշրջանին պատկանող ձեռքի հատիչ:

Ստորին պալեոլիթին վերաբերող հուշարձաններ են քացվել Մուրաղ գետի ավազանում՝ Էլազիզ, Լիզ քաղաքների մոտ, ուր Կ.Քոչան հավաքել է մուստիերյան մշակույթին պատկանող գործիքներ: Հետագայում նման հայտնագործություններ կատարվեցին նաև Ղարսի մոտ:

Հայաստանը վերին կամ ուշ պալեոլիթում

Այս դարաշրջանը համապատասխանում է 40-12 հազար տարի առաջվա ժամանակաշրջանին: Այն ընդգրկում է վյուրմի վերջին ժամանակը, երբ կլիմայի խստագույն պայմանները հասնում են գագաթնակետին: Եվրոպայի և Ասիայի լեռնային գոտիներում, տունդրայում, ինչպես նաև ցրտաշունչ տափաստաններում, հյուսիսի անտառային գոտիներում նկատվում է առավելագույն ցրտություն: Նման բնակլիմայական պայմաններով է բնութագրվում նաև Հովկասը:

Նախնադարյան մարդու կյանքում անցումը դեպի վերին պալեոլիթյան ժամանակաշրջանը բնորոշվում է խոր և կարևոր փոփոխություններով: Հանդես է գալիս քարի մշակման նոր տեխնիկա: Վերին պալեոլիթի քարե գործիքների օգտագործմանը զուգընթաց լայն թափ է ստանում նաև ոսկորից, եղջյուրից գործիքների կիրառումը: Քարե աշխատանքային վերին պալեոլիթյան գործիքների մի մասին հարմարեցվում էին նաև ոսկորից կոթառները: Սրա հետ մեկտեղ աննախընթաց վերելք ու զարգացում է ապրում որսորդությունը: Փոփոխություններ են կատարվում մարդաբանական տիպի մեջ: Նրանք ձեռք են բերում կանոնավոր արտահայտությունից, ձեռքերը, նմանվում են ժամանակակից մարդու ձեռքերին, շարժումները դառնում հստակ: Վերին պալեոլիթյան մարդը իր ֆիզիկական կառուցվածքով համարյա չէր տարբերվում ժամանակակից մարդուց; Վյուրմի ժամանակաշրջանի վերջին, խիստ ցրտացուրտ պայմաններում որպես բնակվելու, պատրաստվելու վայր շարունակում են մնալ քարայրները, որոնց կողքին տարածում են ստանում նաև դեռևս աշելյան հայտնի արհեստական կայանները՝ կիսագետնափոր, վերգետնյա կառույցների տեսքով, երբեմն ընդգրկելով 200 մ^2 տարածք: Այս կացարանների պատերը ամրացվում էին քարերով, իսկ տանիքը /հավանաբար այն կոնաձև էր/ ծածկվում էր ֆյուղերով և կաշվով: Ցրտեցման հետ կապված փոխվում է նաև մարդու հագուստը: Առանձին հուշարձաններից հայտնաբերված ոսկրե ասեղները վկայում են այն մասին, որ մարդիկ ան-

վորել էին կարել: Կենդանիների կաշվից, մորթուց կարել են հագուստ, ինչպես նաև ծածկել կացարանների տանիքները: Վերին պալեոլիթի վերջում օջախից բացի, տաքացվում էր բնակարանը, լուսավորվում, հնարավորություն ընձեռվում կերակուր պատրաստելու համար, կացարաններում հավանաբար օգտագործվում էին նաև պարզունակ, քարե փորվածքով ճրագներ, վերջինիս մեջ լցվում էր յուղ /ձեթ/, և դրվում պատրույզ:

Արտադրողական ուժերի զարգացումը իր հետ բերեց նաև խոշոր փոփոխություններ համայնքի կարգավորման գործում: Մարդկանց ,,տեխնիկական գինվածությունը,, բնության հետ պայքարի մեջ մտնելու գործում խթանեց նաև ավելի կազմակերպված կոլեկտիվների ստեղծմանը: Դա իր հերթին պահանջում էր աշխատանքի գործիքների ավելի արդյունավետ օգտագործում և հմտությունների ձեռք բերում: Նախնադարյան հոտը իր համեմատաբար ոչ կայուն կառուցվածքով չէր կարող զոյատևել և տեղը պիտի զիջեր առավել զարգացած ու կազմակերպված համայնական օրգանիզմի, որը և հանդիսացավ մայրական տոհմը: Վերջինիս առաջացումը բնութագրվում է մի շարք պայմաններով՝ տարերայնորեն առաջացած բնական արյունակցություն, սեռական հարաբերությունների անկանոնություն և սրանից էլ հայրության զաղափարի իմաստի բացակայումը: Այս իմաստով հաստատված էր սերունդների կողմից միայն մորը ճանաչելը, որը խոշոր դեր էր խաղում տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում: Մայրը բացառիկ հոգատարություն էր ցուցաբերում երեխաների նկատմամբ, պահում էր օջախը և զբաղվում տան գործերով:

Այդ ժամանակաշրջանում, ինչպես նշվեց վերը, կային համեմատաբար մեծ, մինչև մի քանի հարյուր քառ. մ տարածք ունեցող բնակարան-կացարաններ: Դրանք, իհարկե, տանձին անհատների կամ խմբի միջոցով չէին կառուցվում, այլ արդյունք էին մի քանի կոլեկտիվների ամուր դաշինքի, որոնք համախմբվում էին արտադրողականության սկզբունքների հիման վրա:

Ի տարբերություն հոտի /հորդայի/, մայրական տոհմական համայնքը ձևավորված միավոր էր, որն իր բարձրագույն զարգացածությանը հասավ՝ հիմք դնելով նախնադարյան կոլեկտիվիզմի զաղափարին:

Նախկին ԽՍՀՄ-ի պալեոլիթը լավ է ուսումնասիրված: Համակարգված և պլանավորված հետազոտությունների արդյունքը եղավ մեծ քանակությամբ տարբեր ժամանակների հուշարձանների հայտնաբերումը: Խորհրդային գիտնականները պարզել են, որ մեր երկրում վերին պալեոլիթը կարելի է բաժանել երեք խոշոր տարածքային շրջանների.

1. Արևելյան-եվրոպական հարթավայր, 2. Սիբիր և հարավային շրջան, 3. Ղրիմ, Կովկաս և Միջին Ասիա: Այս սահմանազատումը, սակայն, բերված է մասնակիորեն, քանի որ ամեն մի խոշոր շրջան տարաբաժանված է ըստ մշակույթների:



Աղ. 5. Քարի դար՝ աշխատանքային գործիքներ Թագլարի քարայրից։

Վերին պալեոլիթի ժամանակաշրջանում ավարտվում է մարդկային հասարակության պատմության նախնական փուլը, և կենսաբանական տեսակի ձևավորումը հանգեցնում է -ի /քանական մարդու/ առաջացմանը: Մարդը անցավ նստակեցության, երկարատև բնակվելով քնական քարայրներում: Առաջացան զաղափարային պատկերացումներ, որոնց սաղմերը ձևավորվել են ստորին պալեոլիթի՝ մուստիերի վերջում:

Եվրոպայում, վերին պալեոլիթի վերջին փուլում ուժեղանում են մշակութային կապերը: Այդ հիմքի վրա լայն տարածում է ստանում տնտեսական տեխնիկական և մշակութային առաջընթացը առանձին ցեղերի կյանքում: Այդ ժամանակ Առաջավոր Ասիան / սրա քաղկացուցիչ մասն է նաև Հայկական լեռնաշխարհը/ կանգնած էր արտադրող տնտեսաձևի շեմին՝ առաջ անցնելով Եվրոպայից մինչև Աֆրիկայում և Հնդկաստանում դեռևս գոյություն ուներ մուստիերյան մշակույթը:

Վերին պալեոլիթի ուսումնասիրությունը կատարվում էր ստորինին զուգահեռ: 1946-47 թ.թ. Մ.Զ.Պանիչկինան Դեմյոխինից հետո հետախուզական պեղումներ կատարեց Հրազդան գետի ավազանում, Երևանից հյուսիս: Աշխատանքների արդյունքը եղավ /բացի պատահական զտածոներից/ երկու, ուշ պալեոլիթյան ճաթկերան և Նուռնուս հուշարձանների հայտնաբերումը: Սակայն այս կայանները չպեղվեցին, այլ հավաքվեցին միայն վերգետնյա օբսիդաքարից գործիքները: Մ.Զ.Պանիչկինայի կարծիքով, այդ նյութերն իրենց զուգահեռները ունեն Իմերեթիայի երկրորդ ժամանակագրական խմբի հուշարձաններում: ճաթկերանի հավաքածուն կազմված է 86 գործիքից՝ դանակի ձև ունեցող 25 շեղբերից և 11 պրիզմաձև միջուկներից, կան նաև վանակատե ծլեփներ: Մեծ խումբ են կազմում կողային լայն շեղբերը՝ քերիչների ձևով, որոնք կողային մասերում ունեն հարդարման /ռետուշ/ հետքեր: Գտնվել են նաև քարդ քերիչներ, մեկը անկյունային մշակումով է, որը կտրող շեղբի դեր է խաղացել, երկուսը ծակիչներ են՝ դանակաձև շեղբերի հիմքով: Կան լայնակի պ հարդարումով, ինչպես նաև քութ կողային մասով նեղ շեղբեր: Ն.Օ.Բաղերի կարծիքով, այս ձևերը նման են Սակաժիայի, Դևիս-Խվրելիի, Մզվիլեթիի /Իմերեթիա/ նյութերին, բայց Իմերեթիայից գտնված ռետուշով գործիքները ավելի բազմազան են:

Նուռնուսը գտնվում է ճաթկերանից 3-4 կմ հեռավորության վրա: Այստեղի հավաքածուն 136 կտորից է, որոնցից 65-ը գործիքներ են /քերիչներ, կտրիչներ, դանակներ, ծակիչներ, դուրեր/, 16-ը՝ պրիզմաձև միջուկներ: Վերջիններս ամբողջ մակերեսի վրա ունեն նուրբ բեկոտան հետքեր: Կտրող գործիքները նույնպես դանակաձև հիմքի վրա են, մեկ գործիք հիշեցնում է ներդիր: Երկու համալիրներն էլ տարբերվում են Իմերեթիայի խմբերից սրածայրերի և ներդիրների աղքատությամբ: Արանից էլ քիչ

է այս երկու խումբ հուշարձանների անալոգիաների ընդհանուր մակերեսային բնույթը:

Ուշ պալեոլիթի հուշարձանները ուսումնասիրել է Ս.Հ.Սարդարյանը: Այդ շրջանի գործիքներ են հայտնաբերվել Արզնիում, Նուռնուսում, Զորաղբյուրում, Ամիրաքաղում, Հրաքերում և այլն: Վերին պալեոլիթյան կայաններ են հայտնաբերվել Արտին լեռան վրա, Անիի շրջանի Զորաշեն գյուղի տարածքում: Ցավոք, Ս.Հ.Սարդարյանի նյութերը ներկայացված չեն ըստ հուշարձանների: Դրանց թվում նշվում են բրգաձև միջուկներ, երկար դանակներ, տեգեր, քերիչներ, կտրիչներ, սրածայր-ծակիչներ: Այս գործիքների մի մասն ունի կողային կամ լայնակի ռետուշի հետքեր: Հանդիպում են նաև դուրեր:

Ինչպես տեսնում ենք, Ծաթկերանի և Նուռնուսի համալիրները չեն տալիս իրենց ժամանակին քնորոշ սրածայր և ներդիրների տեսքով գործիքներ, չնայած, դրանք առաջին հայացքից որոշակի մոտիկություն են ցուցաքերում իմերեթյան մշակույթների հետ: Բացի դրանից, համալիրներն ունեն տարբերություններ, որը հնարավորություն է ընձեռում մտածելու այստեղի ուշ պալեոլիթյան մշակույթի առանձնահատկությունների մասին, հավանաբար, այդ յուրօրինակ գծերը ժառանգականության արդյունք են ամբողջ Հայաստանի ուշ պալեոլիթի համար:

Չնայած Կովկասի ուշ պալեոլիթի քազմազանությանը, այն սերտ աղերսներ և ընդհանրություններ ունի Մերձավոր Արևելքի հետ: Կովկասի, Զագրոսի, Լևանտի հուշարձանները ուշ պալեոլիթում Արևմտյան Ասիայի հետ ընդգրկում են մեկ՝ առաջավորասիական պատմամշակութային մարզը, որը ձևավորվեց դեռևս մուստիերյան դարաշրջանում: Այս մշակույթը տարբերվում է հյուսիսում՝ հարավգալսական տափաստանների, Հյուսիսային Աֆրիկայի հարավի և Միջին Ասիայի արևելքի մշակույթներից:

Ուշ պալեոլիթի մարդը դեռևս որսորդական կյանքով էր ապրում, չնայած հավաքչությունը նույնպես մնում էր յուրացվող տնտեսաձևերից մեկը: Մեծ քանակի մանր, առանձին կենդանիների ոսկորների հայտնաբերումը Կովկասի հին կայանների շերտերում խոսում է այն մասին, որ որսորդությունը կատարվում էր ոչ մեծ խմբերով: Մի շարք կայաններում գերակշռում են քարայրի արջի, ձիու, բիզոնի ոսկորները: Հավանաբար, քարենպաստ պայմանների դեպքում որսորդությունը դառնում էր մասնագիտական: Ձի, բիզոն և այլ կենդանիներ, որոնք հոտերով չէին ապրում, կարելի էր որսալ միայն կոլեկտիվ ջանքերով: Դրանց քշում էին դեպի որսավայրերը և դրանները, ապա որսում:

Մեզոլիթ

Մեզոլիթի /հունարեն մեզոս՝ միջին և լիթոս՝ քար բառերի հանրագումարն է/ ժամանակաշրջանում մարդու գործունեությանը հնագետները տարբեր մեկնաբանություններ են տալիս: Մի մասը այն համարում պալեոլիթից հատուկ ժամանակաշրջան, որը շարունակական է այդ դարաշրջանի համար: Մյուսները համարում են պալեոլիթի վերջին փուլը, իսկ երրորդ խումբը, ընդհակառակը, մեզոլիթը վերագրում է՝ նեոլիթյան դարաշրջանին:

Անվիճելի կարելի է համարել, սակայն, այն հանգամանքը, որ ուշ պալեոլիթյան ինդուստրիան հնարավորություն ստեղծեց մեզոլիթյան մշակույթի առաջացման համար, որը և բացարձակ նշանակություն ունեցավ մարդկային հասարակության կյանքում: Մեզոլիթյան գործիքները հիմնականում պատրաստված են կայծքարի և վանակատի քեկորներից: Դրանք 1-2 սմ լայնությամբ սեգմենտներ են, եռանկյունաձև, սեղանաձև գործիքներ, որոնք ոչ մեծ չափերի են և հնագիտական գրականության մեջ ստացել են միկրոլիթներ անվանումը: Դրանք հիմնականում ոսկրե կամ փայտե հիմքի վրա ամրացված ներդիրներ են, որոնք ամրացվել կամ կապվել են;

Մեզոլիթում միկրոլիթյան գործիքների հաջորդ կիրառման նշանակությունը կապվում է մարդու կյանքում կատարված առավել նշանակալից հայտնագործության՝ նետ ու աղեղի գյուտի հետ: Նետի ծայրերը հիմնականում նմանատիպ երկրաչափական ձևի կայծքարե կամ վանակատե քեկորներ են:

Մեզոլիթում նուրբ և ,,թեթև,, գործիքների կողքին օգտագործվել են նաև խոշոր քեկորներ՝ մակրոլիթներ /հունարեն ,,մակրոս,,՝ մեծ, երկար/:

Մեզոլիթի ժամանակաշրջանի բնաշխարհագրական պայմանները էապես տարբերվում են ուշ պալեոլիթից: Փոփոխությունները հիմնականում կապված էին սառցադաշտերի նահանջի հետ, որն էլ շատ հնագետներ համարում են մեզոլիթի սկիզբը: Չնայած բնական, կլիմայական պայմանները բավականին դեր էին խաղում մարդու կյանքում, բայց դա անվիճելի չէ այն պատճառով, որ նոր ձևեր սկսեցին հանդես գալ քարի մշակման տեխնիկայի զարգացմամբ: Ճիշտ նույն ձևով- բնակլիմայական պայմանները չէին կարող լինել սկզբունքային մի դարաշրջանը մյուսից բաժանելիս:

Սակայն հենց սառցադաշտերի նահանջով պետք է բացատրել կլիմայական փոփոխությունները, երբ էապես փոխվեց կենդանական աշխարհը: Արդեն պալեոլիթի վերջում անհետացան քրդոտ ռնգեղջյուրը, մամոնտը և այլ խոշոր կենդանիներ, որոնք ոչնչացան կլիմայի փոփոխությունների հետ կապված, ինչպես նաև մեծ չափերի հասնող որսի պայմաններում:

Դրանց փոխարեն տափաստաններում, անտառներում և նախալեռներում հայտնվեցին ձիերը, վայրի էշերը, եղջերուները, վարազները և այլն: Այս կենդանիների որսը հետապնդման եղանակով կազմակերպելը քիչ արդյունավետ էր, և անհրաժեշտություն առաջացավ դիմել առավել արագ և ճարպիկ գործողությունների: Ստեղծվեցին նետող գործիքներ, որն էլ թերեց մեզուլիթյան *ինդուստրիայի զարգացմանը:*

Հայաստանի և Կովկասի մեզուլիթը ուսումնասիրված է չափազանց թույլ: Ներկայումս այս դարաշրջանին վերաբերող հուշարձանները խմբված են մի շարք շրջաններում՝ մերձսևծովյան, նախակովկասում, մերձկասպյան և Արևելյան Վրաստանում: Հայկական լեռնաշխարհում նրանցնպես կան առանձին կետեր, վայրեր: Ս.Հ.Սարդարյանը նշում է նման քարայրների առկայությունը Թալինի շրջանում, որտեղ բացվել են ետսառցապատման ժամանակաշրջանին վերաբերող մշակութային շերտեր: Դրանցից են Ձաղաներ /քարայրներ/ տիպի կայանները, ուր հայտնաբերվել են վանակատե շեղբեր: Այս շեղբերից պատրաստվել են երկկողմանի հարդարման հետքերով վանակատե նետի ծայրեր: Գտնվել են նաև քերիչներ, սրածայրեր: Այս ժամանակին են վերաբերում Ներգունի բլուրի կայանները, որի բնակիչները դեռևս վերին պալեոլիթյան եղանակով էինգործիքներ պատրաստում: Նրանք օգտագործում էին վանակատե մանր շեղբերից պատրաստված պարզունակ նետի ծայրեր: Բնակավայրի մարդիկ, ինչպես նախորդ շրջանում որսորդական կյանք էին վարում՝ օգտագործելով արդեն նորագույն տեխնիկայով պատրաստված քարե տարբեր գործիքներ: Մեզուլիթի դարաշրջանում այստեղի ,,վարպետները,, արդեն տիրապետում էին երկար մատիտաձև, բազմանիստ միջուկներից երկար, նուրբ, ուղիղ կողերով շեղբերի անջատման տեխնիկայի, որոնցից ստացված նետի ծայրերը ավելի զարգացած էին: Այդ սիմետրիկ գործիքները հիշեցնում էին ուռենու տերևներ:

Նման քարայրային բնակատեղիներ բացվեցին Արտին լեռան շրջակայքում: Հատկանշական է տեղի բնակչության կողմից անվանակոչված ,,Ձաղաներ,, կայան-բնակավայրը: Այս հուշարձանները կարևոր նշանակություն ունեն ամբողջ Հայաստանի մեզուլիթի ուսումնասիրության գործում: Այստեղի ուշ մեզուլիթի մշակութային շերտերում գտնվեցին ընտելացած շան ոսկորներ, որը առաջին ընտելացված կենդանին է: Շատ կարևոր է նաև այն, որ ուշ պալեոլիթյան ավանդույթներով այստեղ պատրաստված քարե գործիքները առանձնահատուկ ձևեր էին ընդունում մեզուլիթի համար: Դրանք նոր տեխնիկայով ստացված երկրաչափական միկրոլիթներ էին: Հուշարձանից գտնվել են նետեր, տեզի և նետի ծայրակալեր:

Մեզուլիթյան մշակույթի մասին լրիվ պատկերացում կազմելու համար պետք է անդրադառնալ վերը հիշատակված Առաջավոր Ասիայի հուշարձաններից հայտնի նյութերին, որը ինչ-որ չափով հնարավորություն է ընձեռում մոտավորապես նշելու մեզուլիթյան ցեղերի տնտեսական ձևերի

հիմնական ուղղվածությունը: Այս պրոբլեմի լուծումը մեծ մասամբ կապվում է նաև բնակլիմայական պայմանների ուսումնասիրության հետ, երբ Առաջավոր Ասիայում նման հուշարձանները տալիս են որոշակի պատկերացումներ արտադրողական տնտեսաձևերի հետազոտման գործում: Այս փաստերը վկայում են, որ մասնավորապես մեզոլիթյան վաղընջական ժամանակաշրջանում տնտեսաձևերի հիմնական բնազավառներն էին սաղմնավորվում՝ ի դեմս հողագործության և անասնապահության:

Առաջավոր Ասիայի և Մերձավոր Արևելքի մեզոլիթյան ժամանակաշրջանի հուշարձաններից հայտնաբերված նյութերը հնարավորություն են տալիս խոսելու այդ ռեգիոնում մի քանի մշակութա-տնտեսական շրջանների մասին, որտեղ սաղմնավորվել էին արտադրող տնտեսաձևերի տարրերը:

Ամենից հին հուշարձանը այդ շրջանում Կեբարն է, որը գտնվում է Լևանտում՝ թվագրվելով 18 հազար տարով: Այդ ինդուստրիան՝ բնորոշ գործիքներով՝ միկրոլիթներով և նետող զենքի տեսակներով, մեզոլիթի դարաշրջանում քարի մշակման տեխնիկական հնարքների զարգացման արտահայտությունն է՝ կապված որսորդության ինտենսիվության հետ:

Միկրոլիթյան գործիքները առավել բնորոշ են նատուֆյան մշակույթի հուշարձաններին, որը տարածվել է մ.թ.ա. 12-10 հազ. տարի առաջ: Նատուֆյան բնակավայրերը հիմնականում առաջացան վերին պալեոլիթյան քարայրներում, /Քեմել, Իուդեայան անապատ/ և քաց տիպի հուշահամալիրներում՝ տեղադրված Մեռյալ ծովի մերձակայքում, Հորդանանի գետերի դաշտավայրերում: Հետազոտողները տարբեր կարծիքներ են հայտնում նատուֆյան տնտեսության կառուցվածքի վերաբերյալ: Բայց ոչ մի կասկած չի հարուցում նատուֆյան տնտեսության մեջ որսորդության առաջնային դերը: Վաղ քարայրի նատուֆյան շերտերում հայտնաբերվել են զազելի ոսկորներ, իսկ Իուդեիայի հուշարձաններում՝ անապատի ձիու, անտիլոպի, զազելի, ցլի, ոչխարի, ընտելացված շան մնացորդներ: Մեծանում է ձկնորսության և հավաքչարարության դերը:

Սառցապատման վերջին փուլում, 14-12 հազարամյակներում, նկատվում են տաքացման որոշակի երևույթներ: Ահա այս ժամանակաշրջանում սկսվում է վերին պալեոլիթյան հասարակության ծաղնաժամը: Վերին պալեոլիթյան կենդանական աշխարհի մահացումը խթանեց որսորդական զենքի կատարելագործմանը: Առավել սրությամբ այն արտահայտվեց Առաջավոր Ասիայում, որի բնակչությունը, հավանաբար, վերին պլեյստոցենի ընթացքում արդեն հանդիպում էր սննդի ռեսուրսների պրոբլեմին: Եվ հենց այս պայմաններում առաջացավ կենդանիներ ընտելացնելու, ինչպես նաև բույսեր աճեցնելու առաջին փորձը: Այս բոլորի հետ մեկտեղ մեզոլիթի տնտեսությունը մնում էր յուրացնող:

Առավել վաղ հուշարձաններ, ուր արտադրողական սենդի նախնական ձևեր կան, հայտնի են Զագրոսի նախալեռներում և Զաբ գետի հովտում, ինչպիսիք են Շանիդար 2-ին քարայրը և քարայր և Զևի-Չեմմիքնակավայրը՝ թվագրվող 11-10 հազ. տարով: Ամերիկյան կենդանաբան Դ.Գերկինսը այն կարծիքն է հայտնել, որ այստեղ առաջին անգամ հանդիպում են ընտելացված այծի ոսկորներ: Քարե գործիքների մեջ հանդիպում են սանդկոթեր, արորիչներ, տանդեր և այլն, որոնք վկայում են հացաբույսերի վերամբշակման մասին: Այսպիսով, Շանիդար և Զևի-Չեմմի բնակավայրերում փաստագրված են արտադրող տնտեսության ամենավաղ հետքերը, չնայած դեռևս հիմնականում պահպանվում էին յուրացնող տնտեսությունը:

Նման երևույթի մենք հանդիպում ենք Նալչան Ջարմոյի /Իրաքի Քուրդիստան/ շերտերում՝ թվագրվող՝ մ.թ.ա. 12-11 հազարամյակներով: Դա հնարավորություն է տալիս մտածելու, որ Առաջավոր Ասիայի մեզոլիթյան մշակույթի, որը ծագել է 18 հազ. տարի առաջ, 8 հազ. տարի անց ավարտվեց:Այս մշակույթի խորքում սկսեցին զարգանալ յուրացնող տնտեսությունը,և անցում կատարվեց նեոլիթյան մշակույթին:Բացառություն չի կազմում նաև Հայաստանի մեզոլիթը,որը սակավաթիվ նյութերի և տվյալների հիման վրա նշանակալի թվագրումով վերաբերում է 12-9հազ. մ.թ.ա.:Տարբեր քնակավայրերի նյութերի առատությունը հիմք է տալիս խոսելու երկարատև պատմական պրոցեսում արտադրող տնտեսության մասին, որը հնագույն մարդկային կոլեկտիվների կողմից ստացել էր բազմաբնույթ արտահայտություն:

Այստեղ գոյություն ունեին տարբեր տնտեսական մոդելներ, որոնց հիմքն էր կազմում յուրացնող և նոր զարգացող արտադրող տնտեսությունը: Այն առաջացել է մեզոլիթյան ժամանակաշրջանի մշակույթի խորքերում: Դրան առաջին հերթին նպաստեցին հարուստ, բազմատեսակ կենդանական աշխարհը և այդ շրջանների բուսական ծածկույթը: Շարժվելով մեծ տարածությունների վրա՝ այդ որսորդական, հավաքչական խմբերը յուրացնում էին նորանոր շրջաններ: Այդ երևույթը հնարավորություն տվեց նախալեռները, դաշտավայրերը, լեռները դիտելու որպես մեկ ընդհանուր քնական համակարգ, որը ապահովում էր մարդու համար կյանքի և գործունեության բարենպաստ պայմաններ:

Այս պայմաններում տարբեր համայնքներ կամաց-կամաց անցնում էին նստակեցության: Առաջավոր Ասիայում այս նշանակալից պատմական ժամանակաշրջանում հանդես է գալիս կենդանիների ընտելացումն ու ատիճանաբար ինտենսիվ հավաքչությունից հացաբույսերի բուծմանն անցնելու կարևոր փորձը: Այս պրոցեսը Առաջավոր Ասիայում և Մերձավոր Արևելքում ընդգրկում է քնդարձակ տարածքներ, ուր լայն տարածում էին ստանում վերոհիշյալ պատմական անցքերը: Իրենց ժամանակին Ա.Կ.Մարքսը և Ֆ.Էնգել-

ը նշում էին, որ պատմական զարգացման առաջին փուլում ամեն օր, ամեն տեղ, նորից ու նորից տեղի էին ունենում հայտնագործություններ տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում:

Անգլիացի հնագետ Ջ.Մելլաարը գտնում է, որ երկրագործական և անասնապահության ծագման կենտրոնը պետք է փնտրել Մերձավոր Արևելքում: Հայաստանի, Սիրիական տափաստանների, Իրանական սարահարթի և Անատոլիայի կենդանական աշխարհը կազմված էր այծերից, ոչխարներից, ցուլերից, խոզերից: Վայրի ցորենի, գարու հավաքը կատարվում էր նախալեռներում, ծովի մակերևույթից 600-900 մ բարձրության վրա: Այսպես, ցորենի երկու տեսակներից ժիտոտիկավորը հայտնի է դեռ վաղնջական ժամանակներից Բալկաններից մինչև Արևմտյան Իրան: Երկրորդ տարատեսակը՝ էմմարը, ամուսնում էր Հայկական լեռնաշխարհում, Պաղեստինում, Հարավային Սիբիրում:

Հայաստանը նոր քարի դարում

Առաջավոր Ասիայի մեզոլիթյան ժամանակաշրջանի բնակչության տնտեսական կյանքը աննախընթաց զարգացածության հասավ 15-14 հազ. տարի առաջ, երբ խոր փոփոխություններ կատարվեցին բնաշխարհում: Արդյունքը եղավ մարդկային հասարակության նորագույն նվաճումներից մեկի՝ արտադրող տնտեսական կացուրաձևի առաջացումը: Այս նույն ժամանակաշրջանում առաջին քայլերն են կատարվում հողագործությունից արհեստների անջատման բնագավառում, առաջանում են փոփոխության հիմքի վրա մշակութային լայն կապեր տարբեր շրջանների միջև: Երկրագործական և անասնապահական տեղերի առաջացումն ու անջատումը նոր փուլ հանդիսացավ պատմության կյանքում, որը Ֆ.Էնգելսը անվանեց քարքարոսային դարաշրջան: Համաձայն հնագիտական ժամանակագրության, երկրագործության փուլը նյութական մշակույթի պատմության սկիզբը հանդիսացավ, որը ստացավ նեոլիթ /նեո՝ նոր/ անվանումը: Այդ անցումը կատարվեց մոտավորապես 10-8 հազ. տարի առաջ, սկզբնավորելով ժամանակակից պատմական փուլը երկրագնդի վրա՝ հոլոցենը: Այդ ժամանակ սառցապատման սահմանները նահանջելով հասան Հյուսիսային Եվրոպա, Բալթիկ ծով, հարավարևելյան Ֆինլանդիա: Դրա հետ կապված, բարձրացավ ծովերի մակարդակը, իսկ բնաշխարհը ս տաքանալու հետ մեկտեղ, խոնավացավ: Սակայն նեոլիթի առաջացումը չի բնորոշվում միայն արտադրող տնտեսաձևերին անցումով: Այստեղ հաշվի պետք է առնել այն, որ մշտական և երկարաժամկետ գոյատևող բնակատեղիները՝ մարտարապետական տարրերի նորանոր ձևերով, քարի մշակման /հղկման/



Նկ. 6. Քարի դար՝ աշխատանքային գործիքներ Լուսակերտ 1-ին, 2-րդ քարայրից:

նոր տեխնիկան, խեցեղենի հանդես գալը և այլն կարևոր խթանիչներ էին այս ժամանակաշրջանի համար: Մարդկային կոլեկտիվները նեոլիթում ավելի շատացան և տարածվեցին, քան մեզոլիթյան ժամանակաշրջանում: Մարդիկ, ընկնելով տարբեր բնական շրջաններ, հարմարվելով, պայմաններ էին ըստեղծում բազմաքանակ նեոլիթյան մշակույթի համար, որը և իր հերթին քերեց մարդկային հասարակության ոչ հավասարաչափ զարգացմանը: Առանձին ռեգիոններում առաջանում են արտադրող տնտեսական կենտրոններ, մինչդեռ մարդկանց մնացած խմբերը շարունակում էին զբաղվել հավաքչության փուլում: Սրա հետ մեկտեղ արտադրող տնտեսաձևերի առանձին կենտրոնների առաջացումը ոչ ամենուրեք էր կատարվում միաժամանակ: Այսպես, կարելի է նշել, որ հուլցենը բնորոշվում է միասնական բնատնտեսական շրջանի քայքայմամբ՝ կապված կերի, ուտելիքի յուրացման հետ: Սկսվում է կերի, ուտելիքի արտադրության պրոցեսը, որը կարևոր պահ հանդիսացավ մարդկության կյանքում արտադրողական հարաբերությունների ձևավորման համար: Արտադրողական տնտեսության պրոցեսը այնքան կարևոր դեր խաղաց հասարակական կյանքում, որ շատ մասնագետներ վերոհիշյալ ժամանակաշրջանը անվանեցին նեոլիթյան հեղափոխության դարաշրջան:

Առաջավոր Ասիայում 9-7 հազարամյակներում ձևավորվեցին վաղ-զուլյն երկրագործական, անասնապահական մի շարք կենտրոններ, որտեղ ամեցնում էին հնագույն ցանովի կուլտուրաներ՝ ցորեն, գարի, ինչպես նաև ընտանի կենդանիներ՝ ոչխար, այծ, հավանաբար, խոզ և խոշոր եղջերավոր անասուններ:

Առաջավոր Ասիայի ամենալավ ուսումնասիրված հնագույն նեոլիթյան հուշարձաններից է Կալահատ Ջարմո /Իրաքի Քուրդիստան/ բնակավայրը, որը գտնվում է Զեմ Զեմալ դաշտավայրում: Այն զբաղեցնում է 1,2-1,6հա տարածություն: Պեղված հուշարձանն ունի 16 շինարարական հորիզոններ, որոնց ստորին շերտից հաշված 11-ը պատկանում են նախակերամիկական նեոլիթին: Որպես ամանեղեն-սպասք օգտագործվել են քարե թասերը, մյուղերից հյուսված, բիտումով ծեփված զամբյուղները: Բնակավայրերը գոյաևման ողջ ընթացքում մնում էին փոքրածավալ, քաղկացած 20-25 կացարաններից, մոտավորապես 150 անձ բնակչությամբ: Կացարանները կառուցվում էին աղյուսից, իսկ վերին հորիզոններում ի հայտ են գալիս քարե հիմքեր: Բնակարանների պատերը, ինչպես նաև հատակը պատված էին ողորկ սվաղով, հատակին կան նաև դաշած ծղոտի հետքեր: Կացարանները ոչ մեծ չափեր ունեին՝ 1,5-2 մ երկարություն: Այս բնակարաններում հաստատագրվել են երկրագործության մի շարք մթերքների մնացորդներ՝ միահատիկ ցորեն /էմմո/, երկհատիկ, գարի, դաշտի ոլոռ, ոսպ և տարբեր

կաղնու տեսակներ, պիստակ: Կենդանիներից ընտելացված էին միայն այծը և, հավանաբար, շունը, իսկ խոզը, ոչխարը, գազելը /վիթ/ և վայրի ցուլը որսի օբյեկտներ էին: Գործիքները հիմնականում շեղբերի տեսքով են՝ հիմնականում կայծքարից: Դրանք ներդիրներ են, դանակներ, որոնք բիտումի օգնությամբ ամրացվել են փայտե, ոսկրե կոթառի վրա: Հանդիպում են նաև դեռևս մեզոլիթյան միկրոլիթներ, որոնք վանակատից են: Դան սեգմենտաձև, շեղբի տեսքով եռանկյունի գործիքներ, քերիչներ և այլն: Բարձր զարգացման հասավ քարի հղկման տեխնիկան: Հայտնաբերվել են սանդեր, սանդկոթեր, արորիչներ, աղորիքներ, դոան կրունկներ և այլն: Ոսկրե իրերը բազմաքանակ են՝ ասեղներ, օղեր, կախիկներ, անիվաձև առարկաներ; Դան չթրծված կենդանիների և մայր-աստվածուհու արձանիկներ, որը խորհրդանշում է աղաքերության գաղափարը:

Առաջավոր Ասիայի հիմնական երկրագործական մշակույթի կարևորագույն կենտրոններից է Երիքով քնակավայրը: Այն տեղադրված է Մեռյալ ծովի դաշտավայրում և շերտագրորեն հաջորդում է նատուֆյան մի փոքրիկ քնակավայրի: Արդեն 9-8 հազ. մ.թ.ա. այն վերածվեց իսկական քաղաքի՝ իր քարե ամրարաշտությամբ, պաշտպանական համակարգով, դամբարանային համալիրներով և բավականին մեծ թվով քնակչությամբ /2-3 հազ. մարդ/: Այստեղ գտնվել են ցորենի և գարու պահեստներ:

Այդ քաղաքի տների հատակագիծը կլոր է, պատերը քարե հիմքի վրա բարձրացող հում աղյուսով են շարված: Հատակները հողի մակերևույթից ավելի ցածր մակարդակի վրա են և կացարան կարելի էր մտնել աստիճաններով: Տները կազմված են կլոր կամ ձվաձիր կացարաններից՝ 3 4-5 մ արամագծով: Տանիքը պատերը ու հատակը սվաղված են:

Սկզբում Երիքովը զուրկ էր պաշտպանական կառույցներից: Պարիսպները կառուցվեցին առաջին երեք կլոր կացարաններով շինարարական շերտերի զոյատևման վերջում, որը պայմանավորված էր հաստատուն և ուժեղ հարևաններով: Երիքովի պաշտպանական պարիսպները հիմքերում հասնում են մինչև մայր հողը: Դրանք սկզբից ունեցել են 1,64 մ թաստություն, 4 մ բարձրություն, որը հետագայում բարձրացվել է մինչև 5 մ: Այստեղից սկսվում է հում աղյուսի շարվածքը: Պարսպի բարձրության մասին կարելի է դատել ըստ բացված կլոր աշտարակի, որի պահպանված բարձրությունը հասնում է 8,15 մ: Այն ներսից ունի բարձրացող աստիճանավանդակ: Պատերի մեջ պահպանվել են գլանատակոներ /ցիստեռնա/՝ անձրևաջրերը հավաքելու համար: Երիքովի նախակերամիկական նեոլիթը ունի 23 շինարարական հորիզոն: Բացի հողագործությունից, անասնապահությունից և որսորդությունից, որոնք կախված են քնակլիմայական պայմաններից, հավանաբար, կային նաև 2000-ից ավելի քնակչություն ունեցող քաղաքի կարիքները ապահովող

այլ աղբյուրներ /Երիքովը ծովի մակարդակից 200 մ ցածր է/: Անգլիացի խոշորագույն հնագետ Ջ.Մելլարթի կարծիքով, այդ աղբյուրներից էր առուտուրը, քանի որ Երիքովը հսկում էր Մեռյալ ծովի ռեսուրսները՝ աղը, բիտումը: Միաժամանակ Երիքովը ակտիվորեն մասնակցում էր միջազգային առևտրին՝ Հայկական լեռնաշխարհից և Անատոլիայից ներմուծելով վանակատ, նեֆրիտ, թեորիտ, Սինայից՝ փիրուզ, իսկ Մեռյալ ծովից՝ խունձ /կաորի/:

Հարմոն և Երիքովը զոյատևել են կերամիկական նեոլիթում՝ հասնելով առավել բարձր զարգացման: Հայաստանի նեոլիթը քացարելու համար կարևոր է այս հուշարձանների փուլերի ուսումնասիրությունը:

Հետաքրքիր նեոլիթյան հուշարձաններ են հայտնաբերվել Անատոլիայում, չնայած դրանք վերաբերում են ավելի ուշ փուլի, քան Անատոլիայի հարավում գտնվող հուշարձանները, որտեղ կան պալեոլիթից նեոլիթին անցնող հնավայրեր: Անատոլիայի ամենավաղ նստակյաց համայնքներից պետք է առանձնացնել նախակերամիկական Հաջիլարը՝ թվագրվող 7-րդ հազ. մ.թ.ա. և Զաթալ-Հույուկը՝ 6-րդ հազ. կեսերով և վերջով: Հաջիլար բնակավայրը հիմնադրվել է մայրցամաքային շերտում: Այն ոչ մեծ բնակատեղի է, ունի յոթ շինարարական հորիզոն. կացարանների պատերը շարված են քարե հիմքի վրա, հում աղյուսով:

Բակերում, հացահատիկի պահեստներից քացի, հանդիպում են խնամքով պատրաստված օջախներ և վառարաններ: Նացարանները քաղկացած են մեծ սենյակներից, որոնց հատակները և պատերը ունեն հենքեր՝ հաճախ կարմիր ներկված, երբեմն հանդիպում է պարզ երկրաչափական նախշազարդ: Գլխավոր նացարանները շրջապատված են փոքր սենյակներով, որոնցում գտնվել են օջախներ: Հաջիլարի պեղումներից թեցեղեն չի գտնվել, չնայած հանդիպում են կավե արձանիկներ: Որպես սպասք օգտագործել են մարմարե թասեր, հավանաբար, կաշվե և փայտե անոթներ: Գտնվել են ոսկրե ասեղներ, վանակատից և կայծքարից գործիքներ, ներդիրներ և մեկ հղված կացին: Բնակավայրի տարածքում դամբարաններ չկան, բայց մարդու գանգեր հայտնաբերվել են կացարանների հատակին, որը վկայում է նախնիների պաշտամունքի մասին: Հայտնաբերվել են նաև ոչխարի, այծի, ցլի, եղջերուի, քայց ոչ ընտանի կենդանիների /քացի շնից/ ոսկորների մնացորդներ: Երկրագործության մասին վկայում են ցորենի, գարու, ոսպի ածխացված գրածոները: Առավել շատ նյութեր են հայտնաբերվել Հաջիլարի ուշ նեոլիթյան շերտերից, որը զոյատևել է շուրջ մեկ դար /5700/5600 տարի մ.թ.ա./: Այս ժամանակի վերջին փուլին պատկանող շերտերում քացվել են 9 մեծ տներ, որոնք կործանվել են հրդեհից: Դրանք տեղադրված են ուղղանկյուն քակի երկու կողմերում: Այս կացարանները ունեն 10,5 մ երկարություն, 6 մ

լայնություն: Պատերն ունեն 1 մ լայնություն. կազմված են քարե հիմքի վրա բարձրացող քառանկյունի հում աղյուսներից: Դրանց վրա կառուցվել է վերին հարկը՝ ամբողջովին փայտից, ընդ որում տանիքը պահվել է կենտրոնում տեղադրված գերան-սյան օգնությամբ: Բնակավայրում բացվել են վառարաններ, աղորիքներ, ցորենի պահեստներ: Գտնվել է դեպի երկրորդ հարկ տանող աղյուսից աստիճան, իսկ մի այլ դեպքում կացարանի հեռուի մասում բացվել է ջրհոր: Կացարանները կառուցվել են իրար կպած և հաղորդակցվել նեղ դռներով կամ փոքր փողոցներով: Հատուկ կուլտային կառույցներ չեն գտնվել, բայց կան մեծ քանակությամբ կանանց կավե արձանիկներ: Դրանց հետ գտնվել են ծիսական անոթներ՝ նստած կամ կանգնած կանանց տեսքով, ինչպես նաև եղջերուի և խոզի պատկերներով: Հայտնի թասերը զարդարվել են մարդու, արջի, ցլի գլուխներով կամ մարդու ձեռքի պատկերով:

Շատ են տարբեր կենդանիների ոսկորները՝ խոշոր եղջերավոր անասուններ, ոչխար, այծ, խոզ: Դրանց մի մասը ընտելացված էր: Գտնվել են ցորենի, ոլոռի, ոսպի, կաղնու մնացորդներ: Երկրագործությունը դեռևս ոռոգովի չէր:

Գտնվել են եղջյուրից քարե ներդիրով մանգաղներ, ծակիչներ, որոնց կոթերը կենդանու գլխի տեսք ունեն: Եղջյուրը օգտագործվել է նաև որպես քարե կացինների, կտրիչների, ուրագների կոթառ: Հայտնաբերվել են հյուսված զամբյուղներ և կտոր, ինչպես նաև ոսկրե իլիկներ: Հազվադեպ է հանդիպում մետաղը: Մեծ խումբ են կազմում լավ թրծված, նուրբ խեցանոթները:

Վաղ /9-8-րդ հազ./ շերտերում խեցեղենը բաց կամ մուգ գույնի է, իսկ ուշ շերտերում /7-6-րդ հազ./՝ կարմիր, դեղին և շագանակագույն, շատ քիչ են գունազարդ անոթները: Հաջիլարի կործանումից /մև /մ.թ.ա. 5600 տարի առաջ/ հետո կյանքն այստեղ շարունակվեց, սակայն, ինչպես կտեսնենք ստորև, ուշ նեոլիթը փոխվեց վաղ էնոլիթյան ժամանակաշրջանով:

<u>Չաթալ-Հույուկ:</u> Մերձավոր Արևելքի նեոլիթյան ամենախոշոր բնակավայրն է, որը զբաղեցնում է 13 հա տարածություն: Չնայած այս ընդարձակ տարածքի վրա պեղվել է մոտ 0,5 հա տարածություն, այստեղ հայտնաբերված նյութը կարևոր նշանակություն ունի Առաջավոր Ասիայի նեոլիթի ուսումնասիրության գործում: Այստեղ բացվել են 12 շինարարական հորիզոններ, որոնցից 10-ը /ստորին շերտից հաշված/ գոյատևել են, ըստ ռադիոածխածնային եղանակի տվյալների, մ.թ.ա. 6500-5600 թվականներին:

Չաթալ-Հույուկի ճարտարապետությունը միօրինակ է: Տները և արքարանները ամբողջովին կառուցված են հում աղյուսից, առանց քարե հիմքի: Դրանք բոլորը միահարկ են, հատակագծում՝ ուղղանկյուն, և բոլոր կացարանները որևէ պատին կից ունեն պահեստ-մթերանոցներ: Մուտ-



Նկ. 7. Քարի դար՝ աշխատանքային գործիքներ Երևանյան քարայրից:

ը բացվել է տանիքից, որը փայտե ստիպաններից է կառուցված: Տան ծուխը սովորաբար դուրս է եկել երդիկից կամ պատուհանից: Կացարանները կառուցվել են դարավանդների վրա և հաղորդակցվել միմյանց հետ տանիքների օգնությամբ: Կացարանների ներսում եղել են երկու հարթակներ, որոնց վրա կանգնեցվել են կարմիր գույնի փայտե հենակներ: Հարթակները ավարտվում են քարե նստարաններով: Այդ նստարան-հարթակները ծառայել են որպես մահիճներ, իսկ դրանց հաճախակի թաղումներ են կատարվել: Հատակները ծածկվել են խսիրով: Կենդանիներին պահել են ոչ հեռու կառուցված հատուկ ,,զոմերում,,, բնակավայրի արտաքին պատերը բավականին հզոր են եղել, դրա պատճառներից է նաև տանիքի մուտքի առկայությունը: Բնակատեղին, որը ինքնին պաշտպանական հզոր համակարգ էր կազմում, հնարավորություն է տալիս նետերով, տեգերով պաշտպանվել թշնամիներից:

Զաթալ-Հույուկի բնակիչները զբաղվել են անասնապահությամբ և հողագործությամբ: Պահել են ոչխարներ, խոշոր եղջերավոր անասուններ, ցանել էմմոր, միահատիկ ցորեն, գարի, ոլոռ: Ստացել են պիստակից և նշից բուսական յուղ, ինչպես նաև գարեջուր:

Բնակիչները զբաղվել են նաև որսորդությամբ, որը ապացուցված է ոսկրաբանական նյութով /վայրի խոզ, ազնիվ եղջերու, ընձայուծ/: Տարածված էին նաև թռչունները, որի ապացույցն են պահպանված որմնանկարներից հայտնի թեռարանները: Այստեղ պատկերված է եղջերուի որսի տեսարան, երբ որսորդին ուղեկցում է շունը: Հավանաբար, Զաթալ-Հույուկի բնակիչների հիմնական եկամուտներից էր առևտրից ստացված արդյունքը: Վանակատե հարուստ հանքերը ապահովում են առևտուրը Անատոլիայի, Կիպրոսի և Լևանտի միջև: Այդ են վկայում պարերում հավաքված նիզակի ծայրերը: Միջերկրականից բերվում էր հումք՝ խխունջներ, տարբեր քարե վզնոցների, թասերի, կոկիչների և արձանիկների համար: Հանվում են օխրա, մետաղ, երկաթե հանքաքար, որոնցից պատրաստվում էին նաև տարբեր ներկեր: Վանակատից պատրաստվել են տարբեր դաշույններ, նիզակի ծայրեր և հայելիներ:

Բնակավայրի 9-րդ հորիզոնում գտնվել են պղնձից և արծիթից պերճանքի առարկաներ, նաև՝ կտոր /զորձվածք/: Խեցեղենը հայտնվում է 10-11-րդ հորիզոններից, որը առավել զարգանում է մ.թ.ա. 5900 թվականից, իսկ 6-րդ հորիզոնից սկսվում է Զաթալ-Հույուկի՝ խեցեղենով հարուստ մշակույթի վերջին շրջանը: Բայց անգամ այս ժամանակ շատ անոթներ իրենց ձևերով կրկնում են փայտից կամ զորձվածքից առարկաները՝ անոթները:

Զաթալ-Հույուկում բացվել են 40 սրբարաններ, որոնք ձևով նման են կացարաններին՝ տարբերվելով ներքին հարդարանքով: Դրանք սովորաբար կազմված են 4-5 սենյակներից: Այստեղ գտնվել են քարե և թրծված

կավե կանանց, կենդանիների արձանիկներ: Սրանց մեջ գլխավոր խորհրդանշանն է եռակազմությունը՝ երիտասարդ կին- մայր - ծեր կին: Հանդիպում են տղամարդու արձանիկներ, որոնք խորհրդանշում են տղամարդասծուն:

Անկրկնելի հուշարձաններ են որմնանկարները, որտեղ, բացի երկրաչափական զարդանախշից հանդիպում են տարբեր սիմվոլներ՝ ձեռքեր, եղջյուրներ, խաչեր: Պատերին կան նաև խոշոր պատկերներ, ցուլերի եղջյուրներ, կանացի կրծքեր, վարազի ծնոտ, աղվեսի գանգ, քաշ և այլն: Շատ պատկերներ կապված են անդրշիրիմյան կյանքի հետ, կան որսի տեսարաններ:

Այս բոլոր նյութերը վկայում են Հաթալ-Հուլուկի քարձր զարգացման մասին, որի հետագա ուսումնասիրությունը կարող է մեծապես հարստացնել պատկերացումները ոչ միայն Առաջավոր Ասիայի նեոլիթի, այլև հետագա ժամանակաշրջանների մշակույթի վերաբերյալ:

Այս ամբողջ հենքի վրա ավելի դյուրին է պատկերացնել Հայկական լեռնաշխարհի նեոլիթը, որը վատ է ուսումնասիրված: Պետք է նշել, որ հյուսիսում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում, հետազոտվել են միայն կայաններ, իսկ Արևմտյան Հայաստանում՝ մի քանի բնակատեղիներ:

Դեռևս 1926 թ. Կերչում տեղի ունեցած հնագիտական կոնֆերանսի ժամանակ ուկրաինացի հնագետ Ա.Ա.Գոտսովը ներկայացրեց Անդրկովկասի՝ Թիֆլիսի և Էջմիածնի մոտակայքի նեոլիթյան հուշարձաններից հայտնի նյութերը: Նա Անդրկովկասի նեոլիթը բնորոշեց որպես դաշտավայրերի դարավանդների վրա քարձրացված բնակավայրեր: Այդ նյութերը վերաբերում են ուշ նեոլիթին, իսկ մասնակիորեն՝ մեսոլիթի վաղ փուլին: Դրանք մշակված շեղբեր են, քերիչներ, ծակիչներ, կտուցաձև գործիքներ: Նման գործիքներ 1930 թ. հավաքեց Բ.Բ.Պիոտրովսկին նոր Բայազետի մոտ գտնվող Ղշլաղ ամրոցից: Ե.Ա.Լալայանը նման նյութեր հավաքել է Էլարից:

Հայաստանի նեոլիթի ուսումնասիրության համար անարժեշտ էին ավելի խոր ուսումնասիրություններ, որոնք առաջին հերթին կապված էին նոր հետախուզական հետազոտությունների հետ: Դեռևս Ժ.դե Մորգանը նեոլիթի հետ էր կապում Արազած լեռան լանջերից հավաքած վանակատե գործիքները: Այս նյութերը լրացվեցին 1945 թ., երբ Ս.Հ.Սարդարյանը Արտին լեռան շրջակայքից հավաքեց մեծ քանակի նեոլիթյան գործիքներ: Դրանց պատրաստման համար օգտագործվել են լայն, մեծ շեղբերը, ընդ որում գործիքներ՝ սարծայրեր, քերիչներ, որոնք իրենց ձևով հիշեցնում են մուստիերյան գործիքները, սակայն դրանց համեմատական եղանակով մանրամասն ուսումնասիրությունը մի շարք նեոլիթյան հուշարձաններից հաստատում է այն, որ վերոհիշյալ գործիքները վերաբերում են վաղ նեոլիթին:



Նկ. 8. Քարի դար՝ աշխատանքային գործիքներ
Յուկարի Սաղախլիից:

1946 թ. նույն Արտին լեռան /Բողուտլու/ տարածքում Ս.Ն.Զամյատինը և Մ.Զ.Պանիչկինան նեոլիթյան արհեստանոցից հայտնաբերեցին գործիքներ, որոնք նույնպես շեղբերի տեսք ունեն: Այս գործիքների մեծ մասը զուրկ են փառից և պահպանվել են իրենց սկզբնական ձևը, դրանք հիմնականում երկար շեղբերից են պատրաստված: Այս գործիքներից են սղոցները, սրածայրերը, քերիչները և դանակաձև շեղբերը: Բոլոր վերոհիշյալ գործիքները բեկոտված են բազմանիստ միջուկներից: Այս նյութերը էապես տարբերվում են ուշ պալեոլիթյան գործիքներից: Շեղբերը իրենց ձևով բաժանվում են երկար և քարակ շեղբերի՝ հիշեցնելով վերին պալեոլիթյան գործիքները:

Նեոլիթյան հուշարձաններ բացվել են վերը հիշատակված ստորին պալեոլիթյան Հաղիս կայանից: Հ.Ղազարյանը, որը ուսումնասիրել է այս վայրը, նեոլիթին է վերագրում Հաղիս 10-ը: Այն զբաղեցնում է դարավանդի ստորին հատվածը՝ 3 հա տարածությամբ: Այս հուշարձանը շեղբաձև գործիքների պատրաստման տիպիկ արհեստանոց է: Այստեղից ինդուստրիան հիմնականում վանակատից է՝ միջուկներ, շեղբեր: Միջուկները բազմանիստ, բրգաձև, կոնաձև են, պատրաստված ճակատային բեկոտման եղանակով:

Ինչպես նշվեց, Հայկական լեռնաշխարհում, բացի նեոլիթյան կայաններից, գտնվել են նաև նույն ժամանակի բնակավայրեր: Այս ժամանակի ամենավաղ հուշարձանն է Զոյունու Թեփեսին՝ Աղձնիքում, Անգեղակոթ գավառում: Այն ներկայիս Թուրքիայի Դիարբեքիր վիլայեթի Սրգունա գյուղի տարածքում է, Արևելյան Տիգրիսի ափին: 1963 թվականից այստեղ ընդհատումներով պեղումներ են կատարել ամերիկա-թուրքական արշավախմբերը Ռ.Բրայդվուդի և Զ.Չեմբելի ղեկավարությամբ:

Զոյունու Թեփեսի բնակավայրը 25 մ տրամագծով, 4,5 մ բարձրությամբ ծվածիր արհեստական բլուր է:Պեղումներից բացվել են 5 մշակութային շերտեր: Մարդիկ այստեղ ապրել են երեք ժամանակաշրջան: Այս շերտերը իրարից անջատված են երկարատև նստվածքային /ստերիլ/ շերտերով: Առաջին շերտը վերաբերում է 8 հազ. նախակերամիկական նեոլիթին /թվագրումը՝ ռադիոածխածնային եղանակով/: Ստորին շերտը հնագետները բաժանում են մի քանի ենթափուլերի: Այստեղի ճարտարապետությունը դեռևս հրատարակված չէ:

Ստորին 2-3-րդ շերտերը բաղկացած են ուղղանկյուն սենյակներից՝ 5 10 մ չափերով, իսկ ավելի խոշոր կացարաններն ունեն 9 10 մ չափեր, որոնց հատակները պատված են գունավոր խմանկարով:Այս սենյակներին կից կառուցվել են առանձին սենյակներ: Վերին 4-5 շերտերում բացվեցին նմանուղղանկյուն տներ, որոնց պատերը, ի տարբերություն ավելի վաղ

շերտերի, կազմված են հում ապյուսից: 4-րդ շերտից հայտնաբերվեց 6-7 ոչ մեծ կացարաններից բաղկացած արհեստանոց, որտեղ գտնվեց կավե տան մանրակերտ: Այն ուղղանկյուն է, հարթ տանիքով, իսկ դուռը քացվածքում քավանին նեղ է: Պատերը ավաղվել են կավով՝ քաղկացած մանր կտրված քուսական մնացորդներով:

Զոյանու Քեփեսին բնակավայրը է, որտեղ վառ արտահայտված է յուրացնող տնտեսածների արտադրողին անցնելու փուլը: Ստորին շերտերում հանդիպում են շատ ոսկորներ, հացահատիկի մնացորդներ: Վերին շերտերում գտնվել են ցորենի, ոսպի, ուլոտի մնացորդներ և ընտանի կենդանիների՝ ոչխարի, այծի, խոզի ոսկորներ: Գտնվել են քարե ամաններ և արզունակ խեցանոթներ, որոնք հանդես են գալիս 2-րդ շերտից: Քարե գործիքները ներկայացված են դանակաձև շեղբերով, տեգի ծայրերով, նետալաքներով, սղոցներով, ծակիչներով, կոկիչներով և խոշոր օղակներով: Գտնվել են մեծ քանակի ծակիչներ, ասեղներ, կեռիկներ: Շատ մեծ հետաքրքրություն են ներկայացնում մանգաղների ոսկրե հիմքերը, որոնք նման են Հաշիլարից գտնվածներին, նավակաձև, աշտաձև ապորիքները՝ Մի քանի կացարաններում գտնվեցին քարե դրան կրունկներ, որը ապացույց է շարժական, պտտվող հիմնաձողի վրա գոյություն ունեցող դռների առկայության:

Ոչ մեծ խումբ են կազմում կնոջ, ոչխարի, արջի դիմակով, մարդու գլխով կավե արձանիկներ: Նստարաններից մեկի հատակին գտնվեց մարդու պատկերով քարձրաքանդակ:

Զոյունու Քեփեսից հայտնի նյութերից պետք է առանձնացնել ծովային խեխունչների խումբը, որը վկայում է Միջերկրականի հետ առևտրական կապերի մասին: Այստեղի խոշոր նվաճումներից են Աղանա-Մեղինի ատրաքների հանքերից բերված կոփածո պղնձի կտորները, ինչպես նաև մետաղե հուլունքները, ասեղները, քզերը:

Նեոլիթյան ժամանակի մի այլ հուշարձան բացվել է Արարատյան դաշտավայրում: 1969 թ. Ռ.Մ.Թորոսյանը Էջմիածնի շրջանի վերին Թաթուլարի գյուղի հյուսիսային ծայրում, Արաքս գետի ընական դարավանդների վրա, առաջացած ծվածև բլրի վրա, 16 մ քառ. տարածքով շերտագրական փոսորակ դրեց: Պեղումներից բացվեց երկու շերտ. վերին՝ միջնադարյան պատկանող, և ստորին՝ նեոլիթին բնորոշ մշակութային փերտով: Վերջինս հագեցված է օբսիդիանից, կրաքարից, բազալտից պատրաստված աշխատանքային գործիքներով, կենդանիների ոսկորներով, երեք հարթատակ խեցանոթների բեկորներով: Քարե գործիքների մեջ առանձնանում ես միջուկներ, դանակաձև շեղբեր, ներդիրներ, քերիչներ: Հանդիպում են ապորիքներ, սանդոքներ, ապորիչ-մուրճներ: Ոսկորից պատրաստվել են քզեր, մանգաղի հիմքեր, ինչը որ առկա է Զոյունու Քեփեսիում: Այս նյութերը վկայում



Նկ. 9. Քարի դար՝ աշխատանքային գործիքներ և զենքեր Սասանի դարից:

են, որ Խաֆունարխի բնակավայրը վերաբերում է ուշ նեոլիթին, թվագրվելով մ.թ.ա. 7-6-րդ հազ.

Հատուկ ուշադրության է արժանի Զոյունու թեփեսի մարտարվեստությունը: Չնայած ստորին հորիզոնի շինարարական կառույցների վերաբերյալ դեռևս ոչինչ հրատարակված չէ, բայց դատելով վերին շերտերից պիտի ենթադրել, որ դրանք նույն տիպի են և վկայում են Զոյունու բարձր զարգացման մասին: Այս հուշարձանը ուսումնասիրողները առանձնացնում են կառույցների չորս ձևեր, որոնք իրարից տարբերվում են թե՛ հատակագծային, թե՛ շինարարական տեխնիկայով: Ամենահին հատակագծման ձևին պատկանող յոթ կացարանները բշշի տեսք ունեն: Արտաքինից դրանք ուղղանկյուն են՝ 5×7 մ չափերի, իսկ ներսի կողմից անշատվում են միջանկյալ պատով՝ զուգահեռ կացարանի նեղ կողմին: Պատերը կազմված են մեծ և մանր քարերից՝ կավե շաղախով: Հավանաբար, այս հիմքի վրա փովել է փայտե հատակը: Առաջավոր և Միջին Ասիայի հուշարձաններում հայտնի են միջանկյալ պատերով կառույցներ, որոնց միջև ընկած տարածքի մի մասը հանդիսացել է ցորենի պահեստ, հոր: Դրանք այս համալիրներում հանդիպում են քնակելի կացարանների հետ համատեղ: Այս երևույթը չբառացելով, պիտի նշել, որ բշշաձև հատակագծով կացարանները նաև այլ տիպի են:

Վերին հորիզոնի կացարաններն ունեն երկու հատկանիշ: Այստեղ հատակը խորացվում էր, իսկ որպես շինարարական տեխնիկայի նորույթ հանդես են գալիս ուղղահայաց դրված կրաքարե սալիկները: Այս կացարանները ուղղանկյուն են, ավելի մեծ չափերի՝ մինչև 9,5×7,5 մ: Հատակը սալապատ է: Կացարանի պատի հիմքը քարերից է, որի վրա բարձրացել է հում աղյուսե շարքը /ըստ հետազոտողի՝ 3-րդ բշշաձև հատակագծի/: Այս կառույցները միջանկյալ պատերով բաժանվում են մինչև 6 բշիշների, որոնք, ըստ երևույթին, ունեն տնտեսական բնույթ: Վերջապես, մի տիպ ևս հայտնաբերվել է Զոյունու-թեփեսիի երրորդ քնակավայրում: Այն նույնպես ուղղանկյուն է, բարե հիմքով /5,1×9 մ չափերով/ շարված-քով, առանց միջանկյալ պատերի: Մի բշշաձև կացարանում գտնվել է երկու տան մանրակերտեր: Դրանք հարթ, գետնածածկ տանիքով կառույցներ են: Զոյունու թեփեսիում, գտնվել են նաև հնագույն մետաղից քեկորներ: Զարգացած հողագործական տնտեսության մասին է վկայում մանգաղների և եղջերուի եղջյուրներից քրիչի հայտնագործումը: Դրանցից մեկը գտնվել է 1,7 մ խորությունում, որի հետ հայտնաբերվեն վանակատ շեղբեր, այսպես կոչված, ,,մատիտաձև,, ներդիրով, ոսկրե դուր և մեկ կարմրավուն անոթ: Այս շերտի թվագրման համար պիտի նշել, որ ավելի վերին շերտերում, 1,2-1,4 մ խորությամբ գտնվել են գունազարդ, հյուսիսմիջագետքյան տիպի խեցեղենի քեկորներ, սեղանաձև միկրոլիթներ, որից



Աղ. 10. Քարի դար՝ աշխատանքային գործիքներ Սատանի դարից:

ելնելով ստորին վերոհիշյալ շերտը թվագրվում է ուշ նեոլիթով, վաղ էնեոլիթյան ժամանակաշրջանով:

Խաթունարխից գտնվել են խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ոսկորներ, իսկ վայրի կենդանիներից՝ բեզոարյան այծի, վարազի, աղվեսի, որը վկայում է որսորդության զարգացածության մասին:

Հայկական լեռնաշխարհում, հրաբխային սարահարթերում և Ուրմիայի ավազանում, բացի վերոհիշյալ հուշարձաններից, գտնվել են նույնպես երկու հուշարձան՝ Ցանիկ Թեփեն և Հաջի Ֆիրուզը:

Հաջի Ֆիրուզը գտնվում է Ուրմիա լճից հարավ, Սուլազ գետի մոտ, Հասանլուի մերձակայքում: Պեղումների շնորհիվ բացվեցին վեց շինարարական հորիզոններ՝ համաժամանակյա Հաջիլարի 5-1-ին շերտերին: Այստեղ բացվեցին ուղղանկյուն կավե տներ, որոնք խմբված են քակի շուրջը, օջախներով և հացահատիկ պահելու համար խոշոր անոթներով: Վերևից 2-րդ կացարանը կործանվել է հրդեհից՝ թվագրվելով 6-րդ հազ-ի վերջով /5152 թ. մ.թ.ա./, ստորինը՝ 6 հազ. տարով:

Հրդեհից զոհվել է վերին շերտի ողջ բնակչությունը, որի մասին վկայում են երեք կուլեկտիվ թաղումներից բացված 28 կմախքները, հարդախառն կավից անոթները: Հաջի Ֆրուզի խեցեղենը կոպիտ է և վատ թրծված: Խեցեղենը, որը քավականին համանչյուն է Զնիսթեփեի /Թավրիզի հարավարևմուտք/ նյութերին, հավանաբար, այս շրջանի ամենավաղ օրինակն է: Գունազարդ խեցեղենը կարմրավուն կամ վարդագույն է, իսկ երկրաչափական նախշը արված է մարմնագույն ֆոնի վրա:

Ցանիկ Թեփերից գտնվել են ալաբաստրից անոթներ, ապարանջաններ, որոնք իրենց Շիշտ համեմատականներն ունեն հյուսիս-զագրոսյան հուշարձաններում: Հաջի Ֆիրուզի կացարանները կառուցվել են միմյանց հպված կամ նեղ անցումներով: Դրանք հատակագծում ուղղանկյուն են՝ 4×5 մ չափերով՝ բաղկացած մեկ մեծ սենյակից, որն իր հերթին բաժանվում է քնակելի տարածքի, խոհանոցի և մթերանոցի: Մի քանի կացարանների հատակները ներկված են կարմիր օխրայով: Պատերի տակ հատուկ կառուցված ոչ բարձր հարթակներին դրվել են օջախներ: Ցանիկ Թեփերի մշակույթը թվագրվում է մ.թ.ա. 6-րդ հազարամյակով: Այստեղից բացված կացարանները, ինչպես Հաջի Ֆրազինը, հատակագծում ուղղանկյուն են, աղյուսաշար պատերով, որոնց հատակները ներկված են կարմիր օխրայով:

Առաջավոր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի նշված ժամանակաշրջանի մշակույթը հատակ ընդգծում է նեոլիթյան մշակույթը, որը թվագրվում է մ.թ.ա. 10-6-րդ հազարամյակներով: Այն մարդկային հասարակության պատմության կարևոր դարաշրջաններից է: Ահա հենց այս ժամանակաշրջանում էր, որ յուրացնող տնտեսաձևից արտադրողին անցնելու փուլը ավարտվեց: Սկսվեց կենդանիների ընտելացումը: ոչխարի, այծի, խոզի, ցուլի, առաջնեկան առաջին մշակովի բույսերը՝ ցորենի տարբեր տեսակներ, ոլոռ, գարի, ոսպ և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ.Ս.Ավդուսին, ԽՍՀՄ հնագիտության /դասագիրք/, Երևան, 1981
Ս.Ա.Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան,1967
1967:

П.И.Борисковский. Возникновение человеческого общества. Л-д, 1947.

М.М.Гусейнов. Мустьерская стоянка в пещере Дашсалахлы. Изв. АН АзССР, 1959, № 6.

М.М.Гусейнов. Пещера Азых. Баку, 1981.

А.К.Джафаров. Мустьерская культура Азербайджана по материалам тагларской пещеры. Баку, 1983.

Б.Г.Ерицян.Палеолитическое местонахождение в Ноемберянском районе.Лрабер АН Арм.ССР, 1970, № 5.

Б.Г. Ерицян. Ереванская пещерная стоянка и ее место среди древнейших памятников Кавказа. Автореферат канд.дисс. М.,1970.

Б.Г.Ерицян.Новая нижнепалеолитическая пещерная стоянка Лусакерт I. Краткие сообщения Института археологии вып.141,М.1975.

Б.Г.Ерицян,С.А.Семенов. Новая нижнепалеолитическая пещера, Ереван,Краткие сообщения Института археологии,вып. 126,М.,1974.

С.Н.Замятин. Находки нижнего палеолита в Армении.Изв.АН Арм.ССР,1947, № 1.

В.П.Любин. Верхнепалеолитическая мастерская Джрабер.Краткие сообщения Института археологии,вып. 82,М.,1961.

В.П.Любин.Первобытный человек в горах Большого Кавказа.Краткие сообщения Института археологии,вып.131,М.,1972.

В.П.Любин. Мустьерские культуры Кавказа,М., 1977.

А.Л.Археология в СССР. М.,1955.

М.З.Паничкина. К вопросу о верхнем палеолите Армении.Изв. АН Арм.ССР, 1948, № 7.

М.З.Паничкина. Палеолит в Армении. Ереван, 1954.

А.И.Першиц, А.Л.Монгайт, В.П.Алексеев.История первобытного общества, М., 1982.

Б.Б.Пиотровский. Археология Закавказья. Л-д,1949.

Палеолит СССР в серии "Археология СССР" под редакцией П.И.Борисковского,М.,1984.

С.А.Сардарян. Палеолит в Армении. Ереван, 1954.

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՈԼԻԹԸ

Նեոլիթյան մշակույթով ավարտվեց քարե դարը, և մարդկությունը ոտք դրեց նոր դարաշրջանի շեմին՝ ստեղծելով նախադրյալներ մեծաղգործության առաջացման համար, որն արմատապես կապված էր արտադրող տնտեսական ընտանիքների՝ երկրագործության և անասնապահության հետ: Միևնույն ժամանակ նեոլիթը արդեն սպառել էր իր հնարավորությունները քարե գործիքների սկզբունքորեն կատարելագործման գործում:

Չնայած քրոնզե դարում քարի մշակման մի քանի նոր եղանակներ առաջացան, բայց այնուամենայնիվ, քարե ինդուստրիան, որին զուգընթաց օգտագործվում էին ոսկորն ու փայտը, կորցրեց երբեմնի առաջատար նշանակությունը՝ որպես արտադրական գործունեության ամբողջ համալիրն ապահովող հիմնական հումք:

Մեծաղի առաջին ժամանակաշրջանը կոչվում է էնեոլիթ: Այն լայնորեն էնոս-պղինձ և հունարեն լիթոս-քար բառերից է, այսինքն նշված ժամանակաշրջանը բնորոշվում է մրպես „պղինձի քարի դար„ , երբ պղնձե գործիքները օգտագործվում են քարի հետ մեկտեղ, ընդ որում քարը դեռևս գերակշռող է: Որպես հոմանիշ, գրականության մեջ օգտագործվում է „խալկոլիթ„ տերմինը, որը լրիվ հունարեն է և նշանակում է „պղնձի դար„: Սակայն „էնեոլիթ„ հասկացությունը խորհրդային գրականության մեջ առավել տարածված է: Սակայն հետազոտողների վերաբերմունքը „էնեոլիթ„ հասկացության քronոլոգիական բովանդակությանը տարբեր է: Մի մասը, մասնավորապես անգլիացի գիտնականները, այն համարում են նեոլիթի կամ քրոնզի դարի քաղաքրմամա: Մյուսները, հատկապես եվրոպական գիտնականները, էնեոլիթը տեղադրում են ուշ նեոլիթից քրոնզին անցնելու փուլում՝ որպես առանձին ժամանակաշրջան:

Խորհրդային գիտնականների մոտեցումը „էնեոլիթի„ պրոբլեմին երկակի է: Մի մասը այն համարում են մետաքանիմետաքանական հասկացություն, երբ անկյունաքար է ընդունվում պղնձե և քարե գործիքների առկայության փաստը, որով և ավարտվում է կոնցեպցիայի բացատրությունը: Սակայն պետք է նշել, որ հնագիտական ժամանակագրությունը չի բնորոշվում միայն աշխատանքի գործիքներով, այլ հիմնվում է մի ամբողջ մշակութային համալիրի փոփոխության վրա, կապված արտադրության տեխնոլոգիայի հետ և հնագիտական համալիրներում համապատասխան արտացոլում գտած գաղափարների տեղով, դերով և նշանակությամբ: Առավել հետաքրքրային է „էնեոլիթ„ հասկացության մեթոդաբանական մեխանիզմների հետազոտումը, որը նաբելի է բնութագրել որպես դարաշրջանի բովանդակային մոտեցման կոնցեպցիա: Նրա մշակման գործում մեծ լուսա ունեն մի շարք

խորհրդային գիտնականներ, որոնց ներդրումները փայլուն էջ են պատմագիտության մեջ: Դրանցից են Բ.Բ.Պիոտրովսկին, Ա.Վ.Արցիխովսկին, Մ.Գ. Գրյազնովը, Վ.Մ.Մարտոսը, Ս.Ա.Սիմյոնովը, Ն.Ն.Սերեբրյանը, Ի.Մ.Մուշեղյանը և ուրիշներ: Վերջիններս, բացի մեծաղի փաստացի տեղեկությունների ընդունումից, մեծ ուշադրություն են դարձնում հատարակության ընդհանուր մշակութային առանձնահատկություններին և հատարակական կազմակերպվածության օրինաչափություններին, որը հատակորեն ցույց է տալիս էնեոլիթի տարբերությունը նախորդող դարաշրջանից:

Բացի այդ, նոր հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ մեծաղի մշակման ծագումը Փոքր Ասիայում /Հաթալ-Հույուկ/ և Հայաստանում /Զայունյու թեփեի/ մ.թ.ա. 8-7-րդ հազ.-ում սկզբնական փուլում չհանգեցրեց աշխատանքի գործիքների կազմի փոփոխությունների, որոնք բնորոշվում էին տնտեսության հիմնական ճյուղերը: Այս դարաշրջանում օգտագործվող քարից, ոսկորից, եղջյուրից պատրաստված աշխատանքի գործիքների արտադրողականությունը, շատ բարձր մակարդակի վրա լինելով, դեռևս պահվում էր վաղ երկրագործա-տնտեսական հատարակության կարիքները:

Այս քայլերի հետ մեկտեղ մեծաղը, որպես տեխնոլոգիական նորություն, իր որոշակի դերն ուներ հին հատարակարգի տնտեսական կյանքում ամրապնդությամբ վերցրած: Այսպես, մեծաղյա գործիքները մեծ արդյունք էին տալիս տնտեսական կյանքում՝ բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը/ ենթադրաբար շուրջ 25 տոկոսով, չխոսելով անգամ աշխատանքի որակի մասին/: Նոր, բարձր արդյունավետությամբ օժտված գործիքների առաջացումով՝ կապված մեծաղի տանձգականության հետ, իսպառ վերացվեց քարե գործիքների չափազանց մեծ տարբերակումը, և հանդես եկան գործիքների նոր ձևեր՝ կապված ձուլման կաղապարի առաջացման հետ:

Հաշվի առնելով, որ էնուլիթը առանձնացվում է, որպես կանոն, հնագիտական նյութի հիման վրա, այն պետք է դիտարկել որպես բան ժամանակագրության և փուլերի առանձնացվող հնագիտական հասկացություն, որը, ի վերջո, հնագիտական համալիրների հատկանիշների արդյունք է: Սրա մեջ տիպերի հավաքածուն արտացոլում է մշակութային ստերիոտիպ ու նորամուծությունը, որոնք համապատասխանում են ավյալ համալիրների թողած հին մարդկանց ապրելակերպին:

Էնեոլիթի ժամանակաշրջանում նկատվում է նշանակալի առաջընթաց մարդկության պատմամշակութային զարգացման գործում: Լայն զարգացում են ստանում հոգագործությունը, տնտեսությունը, նկատելիորեն ուժեղանում են միջցեղային կապերը, առաջանում են ցցուն արտահայտված երկրագործական մշակույթներ, իսկ Հին Արևելքի մի քանի ռեգիոն-



Նկ. 11. Էնեոլիթ՝ Շոմու թեփե բնակավայրի վերականգնումը, Շուլավերիս գորայի հատակագիծը:

ներում ժամանակվում են վաղ դասակարգային հասարակության նախադրյալները:

Դրա հետ մեկտեղ պետք է նշել, որ նեոլիթյան մշակույթի հուշարձանները, ինչպես հայտնի է, դեռևս պարունակում են նեոլիթյան գծեր: Եթե հաշվի առնենք, որ էնեոլիթյան վաղ երկրագործական հանրույթում մետաղ չի հանդիպում, պարզ է դառնում, թե ինչու էնեոլիթյան և ուշ նեոլիթյան հուշարձանները հնարավոր չէ միանգամից սարքերակել: Այս հանգամանքը պարզորեն վկայակոչում է նեոլիթի և էնեոլիթի սերտ կապի մասին, որ նեոլիթի մշակույթը զարգանում է նեոլիթյան արտադրողական տեխնիկայի հիման վրա:

Հայաստանի և Կովկասի էնեոլիթի, մասնավորապես, Ենգրկովկասի վաղ վաղերկրագործական մշակույթների ուսումնասիրության պատմությունը, բավական է. նրա ուսումնասիրումը սկսվել է վերջերս: Դեռևս 20 տարի առաջ Կովկասի էնեոլիթյան մշակույթի մեջ առանձնացված քաղ-արաքսյան և մայկոպյան մշակույթները բնորոշում են ոչ թե Կովկասի էնեոլիթը, այլ հետագա փուլում՝ վաղ բրոնզե դարում առաջացած պատմամշակութային առանձին համակարգերը:

Ենգրկովկասի մ.թ.ա. 3-րդ հազ. և ավելի վաղ ժամանակաշրջանի պատմամշակութային հարցերը ընդգրկող պրոբլեմների ժամանակագրական և առանձին փուլերի հաջորդականության վերազանդման հարցում որոշակի ներդրում ունի Ա.Ա. Իսահակը: Նաև կարևոր նշանակություն են ստացել նաև Ռ.Սելիմխանովի աշխատությունները, մասնավորապես, հնագույն մետաղյա իրերի ապակարգ վերլուծության վերաբերյալ:

Նախիջևանի հնագիտական ջոկատը 1951 թ. Ա.Ա.Իսահակի ղեկավարությամբ առաջին անգամ Ջյուլֆեի 1. հուշարձանի տարին հորիզոնում բացեց ,,քաղ-արաքսյան,, հզոր մշակույթին շերտին նախորդող հում աղյուսից Ցարտարաշեն շինություններ, ինչպես նաև վաղ երկրագործական բնակավայրերի համար սիրական զանազան, մետալից առանձին զարդիքներ:

Ինչպես ցույց ավելի պեղումները, Նախիջևանի Ջյուլֆեի 1. էնեոլիթյան շերտի շինություններ հատակագծում ունեն կլոր ձև, որը բնորոշ է համաժամանակյա հուշարձաններին: Սակայն կան նաև ուղղանկյուն կացարաններ, որոնք չեն կցակառուցվել կլոր շինություններին: Տները, որպես կանոն, կառուցվել են քարից՝ կավե շաղախով կամ ծեփածո կավով:

Հայաստանում քարե հիմքի վրա հում աղյուսե շարվածքով կացարաններ բացվել են Տերտերի ձոր և Աղվեսի քներ բնակավայրերում: Ս.Հ.Սարգսյանը այս կառույցները վերագրում է նեոլիթին, չնայած դրա համար չկան բավարար հիմքեր: Վերջին ժամանակաշրջանում կլոր տներ բացվել են նաև Շուլավերի բնակավայրում:

Նախիջևանի Ջյուլֆեփի տարին հարիզոնում /1/ պեղվել է 85 դամբարան, որոնք տեղադրված են մշակութային շերտում, կառույցների միջև, կամ նրանց տակ՝ առանց որոշակի հաջորդականության: Հանգուցյալը կծկված է կողմերի կամ մեջքի վրա, պառկած վիճակում, ձգված ձեռքերով: Դամբարանների հատակը, ինչպես նաև կմախքը, որոշ դեպքերում կավածեփ են: Երբեմն թաղված գլխի տակ դրվել է կավե ամանի բեկոր, կամ էլ քար: Դամբարանները մեծ մասամբ զուրկ են ուղեկցող նյութից, հազվադեպ հանդիպում են մեկից չորս կմախքներ, երբեմն օգտագործվել: Դամբարաններում հանդիպում են նաև մոխրի կուտակումներ, բացի կմախքի վրա՝ եղեզի և խարի հետքեր, քուսական մնացորդներ, քարե մուրճեր, եղջյուրե մանգաղի մասեր, վանակատից դանակի շեղբեր, տանձաձև քարե զուրգեր, հուլունքներ /սերդալիկ, փիրուզ, մածուկ, խուսլ/, որոնց մի մասը գուներ կախելու համար անցքեր: Ծակավ է հանդիպում խեցեղենը: Դրանց մի մասը լավ թրծված է, մյուսները՝ ճամեմատաբար վատ, հարդախառն հումքից պատրաստված:

/Այդ նույն ժամանակ արշավախումբը հայտնաբերեց մի շարք հուշարձաններ Միլ-Ղարաբաղյան դաշտում/: Դրանց մշակութա ժամանակագրական մեկնաբանությունը պատկանում է Ա.Ա.Իսահակին, որը մոտեցնելով այս հուշարձանների նյութերը նախիջևանի Ջյուլֆեփ 1-ին, մեկ անգամ էլ ապացուցեց այն փաստը, որ ,,քուռ-արաքսյան էնեոլիթը,, վերաբերում է վաղ երկրագործական մշակույթին: Միևնույն ժամանակ քուռ արաքսյան մշակույթը բնորոշվում է մեծաղագործության զարգացմամբ, որը հանգեցրեց վաղ քրոնզի դարի հնագիտական մշակույթի առաջացմանը:

Սկզբունքորեն նոր աղբյուրներ տվեցին մ.թ.ա. 5-4-րդ հազ. վերաբերող Բաբա դերվիշ /բլուր 1-ին/, Շումուլֆեփ, Թոյրեֆեփ, Գարջալար Թեփեի հուշարձանների պեղումները, որոնք կատարվեցին Ի.Գ.Նարիմանովի կողմից: Այս հավալիրները ամբողջովին ներկայացնում են Անդրկովկասի վաղ երկրագործական մշակութային փուլերը:

Կարևոր արդյունքների են հասել Վրաստանում, մասնավորապես հարավարևելյան շրջաններում /Բոլնիսի և Մարնեուլի շրջաններում/: Քուռի աջակողմյան կենտրոնական հատվածում բացվել են մի խումբ վաղ երկրագործական բնակավայրեր, որոնք պատմամշակութային պատկանելությամբ, համահնչյուն են Շումուլֆեփեի տիպի հուշարձաններին: Այս հուշարձանների թվին են պատկանում Շուլավերիս-գորան, Իմիրիս գորան, Թրամիս-դիդ գորան, Արխոն և այլն: Մի շարք էնեոլիթյան հուշարձաններ պեղվել են նաև նախկին Վրացական ԽՍՀ-ի այլ շրջաններում: Դրանք, այսպես կոչված, Դելիի բնակավայրն է Թբիլիսիի մոտ, Արազվի գետի ավազանի հուշարձանները, Նախիջևանի և Արևմտյան Վրաստանի հավալիրները:



Աղ. 12. Էնեոլիթ՝ նյութեր Նուլավերիս գորայից։

Ոչ մեծ քանակի նստակյաց երկրագործական տնտեսության հուշարձաններ են քացվել Հայաստանի Հանրապետության տարածքում, մասնավորապես Արարատյան դաշտավայրում, որոնցից Թեղուտի, Նենգավիթի /տորին շեր/, Աղջալուրի /Աղջյակ գլուր/, Ծաղկունքի, Խաթունարխի և այլ բնակավայրերը:

Հայկական բարձրավանդակի հարթավայրերն ու դաշտավայրերը ծածկված են վաղ երկրագործական, մասնաշրջանային մշակույթի զարգացած փուլերին պատկանող հուշարձանների բավականին խիտ ցանցով: Դրանք տարածվում են, որ քացի Առաջավոր Ասիայի վերոհիշյալ շրջաններից, Հայաստանը նույն պես վաղագույն ժամանակներից բնակեցված է եղել երկրագործ-անասնապահական ցեղերով: Վերջիններիս հնագիտական մշակույթի պատկանելության հարցը կարևոր նշանակություն ունի առաջավորասիական շրջանում եռը, ինքնուրույն մշակութային կենտրոնների պատկանելության և պատմական պրոցեսների ուսումնասիրման գործում:

Արևմտյան Հայաստանում /քացի Վանի և Խարբերդի շրջաններից/ հայտնաբերվել են հիմնականում վերգետնյա նյութեր, որոնք լավագույն դեպքում ծառայում են որպես ուղեկցող զուգահեռներ:

Ընդամենը նմանօրինակ դրությունները, մ.թ.ա. 6-4-րդ հազ. հուշարձաններում հայտնաբերված գտածոները վկայակոչում են Հայաստանի էնեոլիթյան մշակույթի ուսումնասիրության հնարավորության մասին:

Շամիրամալիթի /Վանա լճի ափին/ բնակավայրերի, Նորշուն Թեփեի, Ցյուլինթեփեի /Խարբերդի դաշտ/, Նախիջևանի Ջյուլթեփեի 1-ինի, Թեղուտի /Արարատյան դաշտավայր/ նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրագործական տնտեսության փուլերի զարգացումը՝ իր տարբեր դրսևորումներով, մոտենում է առաջավորասիական մշակույթների զարգացման առանձին ատիճաններին, որոնց հետ հիշյալ բնակավայրերի բնակիչները ունեցել են սերտ կապեր: Այդ են վկայում քարե գործիքների և խեցեղեն առարկաների առանձին տիպերը Հասունում և վաղ Հալաֆում:

Հայաստանի էնեոլիթյան հուշարձանները ներկայացված են ինչպես արհեստական բազմաշերտ գլուխների /թեփ/, այնպես էլ բնակավայրերի տեսքով:

Դրանցից առավել հետաքրքրականների թվին պետք է դասել Շամիրամալիթին /Թիլկի-Թեփե/: Վերջինիս ուսումնասիրությունը 1898 թ. սկսել է Վ.Բելքը: Վ.Ս.Ջենին Բեռլինի թանգարանում հավաքված նյութի դիտարկման հիման վրա այն վերագրեց նեոլիթին: Շամիրամալիթի նյութերը ուսումնասիրվել են նաև Գ.Ե.Բեյլիի, Կ.Բիտելի, Զ.Բարնեթի, Լ.Պերկինսի, Ա.Բրայդվուդի, Ջ.Մելլառի, Ա.Ինսենի, Վ.Մասոնի, Մ.Կորֆմանի և ուրիշների կողմից, որոնք սրանց պատկանելությունը նշելով՝ որպես են

որպես էնեոլիթյան մշակույթ: Պետք է նշել, որ մ.թ.ա. 5-4-րդ հազ. վերաբերող ատորին շերտերի բոլոր խեցեզարդական զանգվածները շատ մոտ են միմյանց: Սակայն ատորին շերտերի նյութերը թվագրվում են մ.թ.ա. 5-րդ հազ. և հանդիսանում են հալաֆյան մշակույթի արևելյան տարբերակը: Այստեղ հիմնականում գտնվել են հարդախառն խեցեղեն, ինչպես նաև հալաֆյան մշակույթին բնորոշ մեծ քանակի անոթներ:

Վերին շերտը ներառում է արդեն ուբեյդյան տիպի խեցեղեն և թվագրվում մ.թ.ա. 5-դարից հետո: Այս խեցեղենն ուղեկցվում էր ամրոցի քանակի շեղջերի և ծլեփների առկայությամբ /շուրջ 1500-ից ավելի, կանաչավուն, թափանցիկ վանակաթից, եղջերուի եղջյուրից հիանալի մշակված կոթառ ունեցող դիորիտե կացնով, մի քանի վանակաթից նետաձայրերով, գլխաձև զուրգերով, ասեղներով, աղորիքներով, ինչպես նաև եղջյուրից և ոսկորից քրիչներով, ծակիչներով, ասեղներով և այլն:

Բացի Շամիրամալթիից, 1957 թ. Զ.Բարնեյի գլխավորությամբ մի արշավախումբ սկսեց հետազոտել Հայկական բարձրավանդակի հարավարևմտյան շրջանները՝ Մուշի դաշտը, Նիրաքի հովիտը: Մալաթիայի և Էլազիգի շրջաններում հիմնականում հայտնաբերվել են մի շարք, քան վերգետնյա նյութերից էնեոլիթին վերաբերող հուշարձաններ:

Արարատյան դաշտավայրի քնաքիմայական պայմանները, մանավանդ հին գետերի հունների ուսումնասիրումը հստակ ապացուցում են, որ այստեղ երկրագործությունը զարգացել է արհեստական ոռոգումների հիմքի վրա: Երկրագործական քնույթի մի քանի գործիքներ՝ եղջյուրից քրիչները ինչպես նաև դրանց ծանրոցակիները, վկայում են, որ դրանք կապված են արհեստական ոռոգումների հետ:

Շամիրամալթիում, նախիջևանի Քյուլթեփե 1-ինում գտնված մետաղ առարկաները վկայում են, որ էնեոլիթյան մետաղագործության զարգացումը մ.թ.ա. 5-4-րդ հազ. արդեն ուներ իր սեպհական զարգացման որոշակի փուլերի առաջընթացը:

Հատկանշական է, որ ինչպես Շամիրամալթիում, այնպես էլ Արարատյան դաշտավայրի հուշարձաններում գտնվել են հյուսիս-միջագետքյան խեցեղենի նմուշներ: Ծիշտ է Զ.Բարնեյը, երբ նշում է, որ Հայկական լեռնաշխարհում հալաֆյան և ուբեյդյան խեցեղենի, ինչպես նաև Միջագետքում վանակաթի հայտնաբերումը քացատրվում են այս երկու շրջանների միջև կենդանի կապերի առկայությամբ, որը կատարվել է գետերի, դաշտավայրերի միջոցով:

Փատական հայտնագործությունները կատարվեցին 1948 թ. Հայկական բարձրավանդակի հրանական հատվածում: Անգլիացի հնագետ Տ.Բրաուն-Բրաունը Ուրմիա լճի ավազանում, Գյոյթեփե քնակավայրում, մեթ.ա.



Աղ. 13. Էնեոլիթ՝ նյութեր Արուխլո 1-ից:

3-րդ հազ. շերտից ներքև հայտնաբերեց տիպիկ սև փայլեցված քուռ-արաքսյան խեցեղեն, ինչպես նաև քաջ զունազարդ խեցեղենով շերտ՝ հարդախառն պարունակությամբ, որը ձգվում է Առաջավոր Ասիայի արևելյան շրջանների խեցեղենին:

Ավելի ուշ, Անդրկովկասում /Նախիջևանի Քյուլ-թեփե և Մելի դաշտ/ քաղաք բնակավայրին զուգահեռ, հյուսիսարևմտյան Իրանում քաղաքեցին նմանատիպ մշակույթով Պիշելի թեփե և Յանիկ թեփե բնակավայրերը:

Նախիջևանի Քյուլթեփե 1-ինի էնեոլիթյան խեցեղենը ամբողջովին տարբերվում է մնացած շերտերի խեցեղենից: Դա մեծ մասամբ ժեռքով է պատրաստված, հարդախառն, երբեմն ավազով հագեցված կավե քաղադրամասերով: Ամանները ծեփվել են պարույրաձև պարույրները իրար վրա քարձրացնելով: Թրծումը թույլ է, կարմրավուն երանգավորմամբ: Հանդիպում են լայն բերանով անոթներ, գրեղաներ, գլանաձև իրանով, տակառի տիպի խեցեղեն զոտոներ: Մի քանի ձևեր աչքի են ընկնում հատակամերձ մասի հաստ պատերով: Բերանները լայն են, շուրթերը՝ հուղիղ կտրված: Մի քանիսի իրանին արված են ծեփած ելուստներ՝ կեղծ կանթի ձևի: Հուշարձանի վերին հորիզոններում հանդիպում են գլանաձև վզով, կլորացող իրանով, ծանր հատակով սափորներ: Քիչ քանակով հանդիպում են երկու տիպի քաժանվող զունազարդ անոթներ: 1-ին տիպին են պատկանում փայլեցրած, բարակ խեցուց, հարդախառն կավով պատրաստված, կարմիր, շագանակագույն, դեղին և գորշ գույնի անոթները, որոնց վրայի երկրաչափական զունազարդումը արված է սև, կարմիր, շագանակագույն ներկով: Այս խեցեղենը հանդիպում է 16,85-19 մ խորության վրա և, սեկտորաձև, ներմուծված է: 2-րդ տիպի անոթները հարդախառն են, տեղական ծագումով: Դրանք լավ թրծված են, փայլուն մակերես ունեն և ավելի տարբերակ զունազարդում՝ արված կարմիր, դեղին, սև գույնով, կարծես ներմուծվածի հորինվածքները կրկնող կավանոթներ լինեն: Առաջին տիպի անոթները պատկանում են, հավանաբար, հալածյան մշակույթին:

Աշխատանքի գործիքները նախ և առաջ վկայում են երկրագործական տնտեսության մասին, դրանք ոսկրե տուլուկով քրիչներ են, զանազան ձևաձիր աղորիքներ, արորիչներ, ծեծիչներ, սանդեր, սանդկոթեր, քարե գործիքներ, մանգաղի ներդիրներ, սամանավոր աղացող գործիքներ, գայլի կոններ, գորգեր և տարբեր ձևի ու տեսակի հնաքերով միջուկներ: Քարե ինդուստրիային քնորոշ հատկանիշ այստեղ խոշոր շեղբերի առկայությունն է:

Էնեոլիթյան ստորին շերտերում հայտնաբերվել են մեսաղյա 7 առարկաներ՝ քառակող /կարմրացում սեղանաձև/ ծակիչներ, նեռասլաքներ, շեղանկյուն շեղբով սայր, երկու հուլունք և երեք մեսաղե անորոշ քնարներ:

Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Արարատյան դաշտավայրի էնեոլիթյան հուշարձանները: Էջմիածնի շրջակայքում տեղադրված են մի շարք բնակավայրեր՝ Թեղուտ, Մաշտոց բլուր, Ծաղկունք, Խաթունարխ, որոնք իրենց քնույթով մոտենում են Նախիջևանի Քյուլթեփե 1-ինի ստորին հորիզոնին:

Այս կապակցությամբ պետք է նշել նաև մի կարևոր ճանաչարժանի՝ Շենգավիթի մասին /Երևանի շրջակայքում/: Վերջինիս ստորին շերտում /Շենգավիթ 1-ին/ բացվել են կլոր կացարաններ, որտեղ հայտնաբերվել է կոպիտ խեցեղեն: Ս.Մարդարյանը նշում է, որ այս շերտից վեր բացվել է մեկ ուրիշ շերտ՝ բաց անգոբապատ մակերես ունեցող գունազարդ խեցեբեկորներով, որոնք նման են հարավային շրջանի հուշարձանների խեցեղենին:

Այսպիսով, հարավային զոտու բնակավայրերն իրենց տարածման սահմաններում /Արաքսի ավազան/, Վանի շրջակայք և Ուրմիա/ ներկայացնում են այլ բնույթի խեցեղեն, որը տարբերվում է հյուսիսային զոտու /Շուլավերի-Շումա թեփե/ հնագիտական համալիրից: Դրանք բաց անգոբապատ, սովորաբար փայլեցրած, երբեմն գունազարդ մակերես ունեցող, հարդախառն կավախեցուց կամ նաև մեռաղից պատրաստված զոռծոներ են, որն ապացուցում է հարավի հետ ինտենսիվ կապերը:

Հալաֆյան մշակույթի դասական հուշարձան է Գիրիկի-հաջյանը, որը գտնվում է Արգանից 20 կմ հարավ-արևելք, Դիարբեքիրի դաշտավայրում, Էնինչելար գյուղի մոտ և թվագրվում է մ.թ.ա. 6-րդ հազ-ի երկրորդ կեսով:

Բնակավայրի ստորին շերտում, հալաֆյան խեցեղենի հետ, բացվել են տուլոսի քարե հիմքի մնացորդներ: Որոնց կողքին պեղվեցին 6 կլոր կացարաններ՝ առանց կից ուղղանկյուն շինությունների: Պատերը կավածեփ են, սակայն պարզված չէ, թե տոլուսի շարվածք կա՞, թե ոչ:

Մինչև փորձենք պարզել, թե Անդրկովկասում ինչ ճանապարհով են հայտնաբերվել միջագետքյան մշակույթի տարրերը, անհրաժեշտ է նշել մի շարք էնեոլիթյան այլ հուշարձաններ, որոնք բացվել են ինչպես հյուսիսարևմտյան իրանում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում: Խոսքը վերաբերում է Գյոյթեփե, Ցանիկթեփե /Ուրմիայի շրջան/, ինչպես և Շամիրամալթիի/ Թիլթիթեփե, Վանի շրջակայք/ հուշարձաններին:

V Սկսենք Արևմտյան Հայաստանից: Այս լեռնային շրջանը անմիջականորեն հարում է հարավարևմտյան Անդրկովկասին և ծայր հյուսիսարևմտյան իրանին: Հատկապես այս տարածքով հավանաբար պիտի անցներ այն ճանապարհը, որով կապվում էր Հյուսիսի միջագետքյան մշակույթը Անդրկովկասի հետ: Ցավոք, հնագիտական հուշարձաններն այս կարևորագույն շրջանում ամբողջովին չեն ուսումնասիրվել: Բայց նման համալիրների առ-



Աղ. 14. Էնեուլիթ՝ մարդակերպ արձանիկներ, նկ. 1-2, Արուխլո 1-ին, նկ. 3 Գարգալար թեփեսի, նկ. 4-7 Խրամիս Դիդի գորա, նկ.8 Շուլավերիս գորա:

կայությունը հիշյալ շրջանում կասկածից վեր է:

Ինչ վերաբերվում է Նախիջևանի Ջյուլֆեփե 1-ին, ապա անկասկած է, որ վերջինիս կոնկրետ հորիզոնները /սեռորին շերտ/, ուր զտնվում է տիպիկ հալաֆյան խեցեղեն, կարող են համադրվել Թիլքիթեփեի սառորին շերտերի հետ:

Նման շերտագրական, ժամանակագրական համեմատականից կարելի է եզրակացնել, որ Թեղուտը ավելի երիտասարդ է Ջյուլֆեփե 1-ից, չնայած հնարավոր է, որ Ջյուլֆեփե 1-ինի վերջին փուլում արդեն առաջացել է Թեղուտի բնակավայրը: Այսպիսով, Անդրկովկասի այս երկու կարևորագույն վաղ երկրագործական բնակավայրերն ունեն հարաբերական համաժամանակյա բնույթ:

Անդրադառնալով Արևմտյան Հայաստանի այլ հուշարձանների, պետք է նշել, որ Թիլքիթեփեն միակը չէ, որտեղ առկա է հալաֆյան և ուբեյդյան խեցեղենը: Զ.Բարնեյը նշում է, որ Հեկիմխանայում /Մալաթիայի և Սիվասի միջև/, ինչպես և Իսկեռում, Արսլանթեփեում և այլուր զտնվել են ուբեյդյան խեցեղենի նմուշներ:

Հյուսիս-ուբեյդյան նյութերը հատակ դիտվում են ոչ միայն Հայկական լեռնաշխարհի, հյուսիս-միջագետքյան տարածքներում, այլև Անդրկովկասին հարող Հյուսիսային իրանում: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել Գիշլիթեփեի բնակավայրի մասին, որը զտնվում է Ուրմիայից հարավ, Սուղուզ-կալա դաշտավայրում: Այդ համալիրի վերաբերյալ բազոր հայտնի նյութերը հատակորեն խոսում են վերջինիս Ուրբեյդյան մշակույթին պատկանելու մասին: Անկասկած է, որ հյուսիս-ուբեյդյան ազդեցությունն այստեղ բավականին ցցուն է արտահայտված: Ըստ երևույթին, Անդրկովկաս և նրան հարող իրանի համապատասխան մարզեր Միջագետքից, նրա հյուսիսային շրջաններից այս մշակութային թափանցումները կատարվել են մ.թ.ա. 6-դ հազ. երկրորդ կեսին, 4-րդ հազ. սկզբին:

Ներկայումս կուտակվել են բավականին խոսուն փաստեր, որոնք վկայում են Արևմտյան Հայաստանի և Միջագետքի, Սիրիայի մշակութային շփումների մասին ոչ միայն մ.թ.ա. 5-րդ հազարամյակում, ինչպես նշել է Զ.Բայները, այլև 4-րդ հազ.:

Պարզագույն է, որ Արևմտյան Հայաստանը այն տարածքն էր, որտեղով կարող էր միջագետքյան խեցեղենը ներթափանցել Անդրկովկաս, դրա հետ մեկտեղ չի բացառվում այն, որ Անդրկովկաս արտահանված նյութերը կարող էին զալ անմիջապես Միջագետքից կամ Սիրիայից, բայց բազոր դեպքերում դրանք պետք է անցնեին Արևմտյան Հայաստանով:

Մենք արդեն ավելացինք Գիշլիթեփեի բնությունը՝ կապված ՀյուսիսՈւրբեյդյան մշակույթի հետ, սակայն կովկասագետներն իրենց ուշադրությունը

ության կիզակետում են պահում մեկ այլ նշանակալի, քազմաշերտ բնակավայր՝ Գյոյ Թեփեն Ուրմիա լճի մոտ: Այստեղ քացվել են 6 շերտ, հետաքրքիր է, որ դրանց թիվը ավելանա պեղումների վերջնական ավարտումով:

Գյոյթեփե ,,Ն,,-ն ընդգրկում է քուռ-արաքսյան մշակույթը: Դրա տակ, ինչպես Քյուլթեփե 1-ինում, ընկած է ավելի վաղ ,,Մ,, շերտը: Սակայն Գյոյթեփե ,,Ն,, -ն համապատասխանում է նախիջևանի երկրորդ Քյուլթեփե 1-ին շերտի՝ հզորությամբ և նյութի բնույթով, ինչը որ չի կարելի ասել ,,Մ,, շերտի մասին: Վերջինս իր հզորությամբ քավականին զիջում է Քյուլթեփե 1-ին /հզորությունը՝ 0,95 մ/: Գլխավորն այն է, որ չնայած, ,, →, հետազոտվել է ամբողջովին, քայց ընդգրկում է ընդամենը 40 մ^2 տարածք, և հասկանալի է, որ այն ընդգրկում է մշակույթի պատկանելիությամբ այլ հնագիտական զտածոներ, հատկապես խեցեղեն: Գտնվել են վաղ երկրագործական բնակավայրին բնորոշ քարե և ոսկորե գործիքներ, երեք մետաղյա իրեր: Խեցեղենը քաց անգոբապատ է, հարդախառն խեցիով: Գունազարդումը կատարված է շագանակագույն ներկով:

Ինչպես նշել է դեռևս Ա.Ա.Իսաենը, Քյուլթեփե 1-ին և Գյոյթեփե ,,Մ,, շերտերը մոտիկ լինելը արտահայտված է միայն մի հատկանիշով՝ կավի քաղադրության մեջ քուսական խառնուրդների առկայությամբ: Մնացածում խեցեղենը իրարից հիմնովին տարբեր է:

Գյոյթեփե ,,Մ,,-նի տալիս է քուսական զարդամոտիվներով հարուստ խեցեղեն, որը ինչպես ձևով, այնպես էլ մոտիվներով և ոճով քացարձակապես տարբեր է: Քյուլթեփե 1-ինի նյութերից: Չի կարելի անտեսել նաև այս փուլում բնակելի ճարտարապետական հավալիրների տարբերությունները Գյոյթեփե ,,Մ,, և Քյուլթեփե 1-ինի միջև: Վերջինիս, որպես կանոն, բնորոշ են հատակագծում կլոր կացարանները, իսկ Գյոյթեփե ,,Մ,,-ում առայժմ քացվել են միայն ուղղանկյուն տներ:

Այսպիսով, ակնհայտ է, որ այս երկու հուշարձանները չի կարելի միացնել մեկ ընդհանուր պատմամշակութային խմբի մեջ, ինչը որ անում են միշարք հետազոտողներ: Մի շարք հանրահայտ փաստեր վկայակոչում են, որ Գյոյթեփե ,,Մ,,-ն ավելի երիտասարդ է Քյուլթեփե 1-ին հնագույն բնակավայրից: Այն հավանաբար առաջացել է Քյուլթեփե 1-ինի տորին շերտի վերջին, ուշ օբեյդյան փուլում: Հայտնի է, որ Քյուլթեփե 1-ինի տորին հորիզոնը /18,8 մ մակարդակում/ թվագրվում է մ.թ.ա. 4-րդ հազ. սկզբով: Այդ պատճառով զարմանալի չէ, որ Գյոյթեփե ,,Մ,,-ում քացակայում է տիպական հալաֆյան խեցեղենը: Այն չկա նաև հուշարձանի տորին շերտերում: Պարզվում է, որ հյուսիսային Իրանի նման հուշարձանները զուրկ են հալաֆյան խեցեղենից: Դա քացատրվում է նրանով, որ Իրանի այդ և կենտրոնական շրջանները, ի տարբերություն Աքեմյան



Նկ. 15. Էնեոլիթ՝ նյութեր Շուլավեր թաղից:

Հայաստանի, չեն զտնվել հալաֆյան մշակույթի ազդեցության ուղղությամբ: Այստեղից միանգամայն պարզ է դառնում, որ Ջյուլթեփե 1-ինի հալաֆյան խեցանոթների առանձին նշումներ վանից և հյուսիսարևմտյան Իրանի և Արևմտյան Հայաստանի վրայով հայտնվել են նախիջևանում:

Իրանական Ադրբեջանում, բացի Փիշելիից և Գյոյթեփեից, հայտնի են նաև տվյալ ժամանակաշրջանի այլ հուշարձաններ՝ Յանիկթեփեն և Դալմաթեփեն: Յանիկթեփեն գտնվում է Թավրիզից 25 կմ հարավ-արևմուտք, երեքուկես ու փոքր արհեստական բլրակների վրա: Պեղումներից պարզվել է, որ այստեղ առկա են մի շարք մշակութային հորիզոններ, որոնցից ամենաուշը թվագրվում է մ.թ.ա. 1-ին հազ. կեսով: Մեծ բլրի վրա բացվել է քուռ-արաքսյան հզոր շերտ, որից ստորև առկա է էնեոլիթյան խեցեղենով հարուստ հորիզոն: Յանիկ թեփեն էնեոլիթյան շերտերում բացվել են նեղ ալյուսից կառուցյներ՝ միատիպ, ձեռքով ձևված հարդախառն խեցեղենով: Դրանց հետ հանդիպում են նաև բարձրորակ, լավ թրծված, երբեմն զունազարդ /սև ներկով բաց դարչնագույն անգոբի վրա/ խեցեղեն: Զարդանախշի մոտիվներում կան հատարակ շևրոններ, եռանկյուն կետազծեր և Ջյուլթեփեի և Միլի դաշտավայրի խեցեղենի նման այլ տարրեր:

1960-ական թ.թ. Տ.Յանգի կողմից պեղված Դալմաթեփեի հին շերտերում գտնվել են Իրանին ոչ բնորոշ միագույն, կոպիտ խեցեղեն: Այն զարդարված է ոսկրե գործիքներով արված անատամ նախշով, կլոր ելուստներով և փոսիկներով: Աչքի են ընկնում գործվածքով նախշազարդված անոթները: Դալմա թեփեի այդ շերտը թվագրվում է 5-րդ հազ. մ.թ.ա. երկրորդ կեսով: Նման խեցեղեն հանդիպում է Յանիկթեփեի էնեոլիթյան շերտերում և Շուլավերի՝ Շումուլթեփեի խմբին պատկանող ցնակավայրում, ինչպես և Իլանլիում Ղարաքաղյան /չ/ դաշտավայր/:

5-4-րդ հազ. Անդրկովկասի և դրան համաժամանակյա հուշարձանների կապը բացահայտելու համար կարելի է անել հետևյալ եզրահանգումները: Նախ, Հարավային Կովկասի հուշարձանները պարունակում են այնպիսի նյութեր, որոնք ցույց են տալիս դրանց կապը հյուսիս-միջագետքյան մշակույթի հետ: Խոսքը վերաբերում է Նախիջևանի Ջյուլթեփե 1-ին և Թեղուտի՝ շերտերում: Դրանցից առաջինը /զարգացման վաղ փուլում/ վկայում է, որ լայն կապեր են եղել հատկապես Հալաֆի, երկրորդը՝ հյուսիս-ուբեյդյան մշակույթների հետ, որն իրագործվում էր Վանի տարածքով:

Հաջորդ հանգամանքն այն է, որ կուտակված փաստերը խոսում են այն մասին, որ մ.թ.ա. 5-րդ և 4-րդ հազ. ազգային կեսին հարավային պատմամշակութային հուշարձանները կապվում են Իրանի հետ՝ քուրդ ինքնուրույն զծերը պահպանելով հանդերձ:

Ներկայումս Հայկական լեռնաշխարհում և Հարավային Կովկասում առավել սիստեմատիկաբար ուսումնասիրվող հուշարձանները տեղադրված են Քուռ գետի կենտրոնական հոսանքում, ուր պեղվել է էնեոլիթյան հուշարձանների Շուլավեր-Շումուքթափ խումբը՝ Շումուքթափեն, Թոյուքթափեն, Գարգալարքթափեսին, Արուխլո 1-ինը, Շուլավերիս գորան, Խրամիս դիդիգորեն, Իմերիս գորան: Դրանք հիմնականում ոչ մեծ, արհեստական բլուրների վրա տեղադրված բնակավայրեր են: Այսպես, օրինակ, Շուլավերի խումբը գտնվում է Խրամ գետի աջ ափին, շուրջ 500 հա տարածքով և ընդգրկում է այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Շուլավերին, Իմերիս և Խրամիս դիդի գորանները, Գաղաչքթիլին: Այս բնակավայրերը միմյանցից գտնվում են ոչ ավելի 0,5-1,7 կմ հեռավորության վրա: Արուխլո գյուղի մոտ, ուր խառնվում են Խրամի և Մաշավերա գետերը, տեղադրված է մի ուրիշ հուշարձանախումբ՝ բաղկացած հինգ բլուրներից, որոնցից պեղվել են ընդամենը երեքը /Արուխլո 1-3-ը/:

Ոռնաա գետի հովտում, ուր այն թափվում է Քուռ գետի մեջ, տեղայնացված են այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Բաքաղերվիշը, Շումուքթափ 1-ինը, Գարգալարքթափեսին: Հաջորդ բնակավայրերի խումբը՝ Թոյուքթափ 2-ը, Մենքեջը և Ռուսթեփեսին գտնվում են Թյուզ և Շամխոր գետերի ավազանում: Այս բնակավայրերի միջակուքային շերտերի հզորությունը տարբեր է, տատանվում է 1-ից 10 մ միջև:

Այս հուշարձանների մեջ վաղագույններից է Շուլավերս գորան, որն ունի շուրջ 1 հա տարածք: Պեղումը կատարվել է 252 մ տարածքով: Շերտի հզորությունը կազմում է շուրջ 8 մ, որը բաժանված է ինը շինարարական հորիզոններով: Բացվել են 32 կացարանների և տնտեսական շինությունների մնացորդներ, պարիսպ, քարեր և հոր-պահեստներ: Շինությունները շարված են տարբեր չափերի հում աղյուսից՝ 30×20, 30×15×8, 25×15×7 սմ, որոնք ունեն կամ միացություն: Բոլոր կառույցները հատակագծում կլոր կամ ձվաձիր են, կարմրացրած՝ կոնաձև կամ գլանաձև: Բնակելի կացարանների տրամագիծը 2,5-5 մ է, տնտեսականինը՝ 0,5-0,75-2 մ: Ամեն մի կացարան կազմված է մեկ սենյակից, որն ունի 2,5 մ-ից ավելի բարձրություն, 7-17 մ^2 տարածք, ոչ մեծ մուտք, երբեմն նեղ լուսամուտով: Ամեն մի տան մեջ բացվել է ձվաձիր կավե օջախ՝ 0,5-0,7մ տրամագծով, որը հատակից բարձր է 10-12 սմ-ով:

Իմերիս գորանի /ուր պեղվել է շուրջ 800 մ^2 տարածք / յոթ շինարարական հորիզոններում հայտնաբերվեցին հում աղյուսից շուրջ 60 շինություններ: Դրանք ի տարբերություն Շուլավերիս գորայի, հատակագծված են առավել փռվածքով: Բոլոր հորիզոններում, բացի վերին երեքից, տակա էին կլորացող, 12 մ տրամագծով քարեր, որոնց կցակա-

Աղ. 16. Էնեուլի՝ զունազարդ խեցեղեն նկ. 1-4, Նախիջևանի Քյուլ-Թեփե 1-ին, նկ. 5-13 Միլ-Ղարաբաղից:

ուցվել են տնտեսական և քնակելի կառույցներ: Նման հատակագծային լուծումները բնորոշ են հասունյան և միջնադարյան մշակույթներին: Բնակարաններում գտնվել են ձվածիր կավե օջախներ, իսկ նոր 8 կացարանում քացվեց երեք հորերի ձևով օջախ, որն ուշ ժամանակաշրջանի թոնիրների նախատիպն է հանդիսացել:

Նմանատիպ կառույցներ քացվել են Արուխլո 1-3-րդում: Բացի այդ, Արուխլո 1-ում, բլոքրի շրջակայքում հայտնաբերվել է երկու քանդակ՝ փորված տարբեր ժամանակներում: Առաջին քանդակը կտրվածքում սեղանաձև է, լայնությունը վերին մասում 9,5 մ է, իսկ հիմքում՝ 2,5 մ, խորությունը 2 մ է: Այս խանդակը լցվել է ջրով: Երկրորդը չոր էր և հավանաբար ունեցել է 2 մ լայնություն: Տ.Ն.Հուքինշվիլին գտնում է, որ առաջինը ծառայել է որպես ոռոգելի ,,ջրանցք,, և սնվել է Մաշուվերա գետից, չնայած հնարավոր է, որ ծառայել է նաև պաշտպանական նպատակների:

Հիշյալ հուշարձաններից հետաքրքիր է Շոմու թեփեն, որը մի կլոր բլուր է՝ մոտ 100 մ տրամագծով: Հ Պահպանված մշակութային շերտի հզորությունը կազմում է 1 մ: Պեղվել է 400 մ^2 տարածք՝ մեկ շինարարական հորիզոնով: Հատակագծում կլոր կացարաններն ունեն 3 և ավելի մեծ տրամագիծ, իսկ տնտեսականները՝ մինչև 2 մ տրամագիծ: Դրանք բոլորը կառուցված են հում աղյուսից՝ 50-55×22-25×8 36×16×9 սմ չափերով: Մուտքերը ոչ մեծ չափերի են՝ 0,5 0,5 մ: Օջախներ չեն հայտնաբերվել, սակայն տակա են կրակի հետքեր: Ենթադրվում է, որ կացարանների տանիքները կլեղ թաղի ձև ունեին, որոնց վրա արված էր երդիկ՝ լուսավորման, ինչպես նաև մուտքի համար: Այստեղի օջախները քակում էին, ինչպես Իմիրիս գորոյում, այլ ոչ թե կացարանի մեջ:

Թոյրեթեփեն ունի 4 մ էնեոլիթյան շերտ, իսկ Գարգալար թեփեսիում այն կազմում է 10 մ: Երկու բնակավայրերի կացարանները հիշեցնում են Շոմուլթեփեն: Մի քանի կիսագետնափոր տներ քացվել են Բաքադիրվիշում /Ղազախից 3 կմ հարավ-արևմուտք/:

Վերը նշվածը թույլ է տալիս ասելու, որ բոլոր բնակավայրերը բոլոր հորիզոններում ունեին նույն հատակագծերը, կից շինությունները նույն տիպին են պատկանում: Նույն ձևի կացարանները և տնտեսական կառույցները, օջախների և այլ հատկանիշների վերլուծականը ապացուցում են, որ այդ մշակույթը հար և նման է առաջավորասիական վաղ երկրագործական մշակույթներին:

Այդ տիպի բնակավայրերին բնորոշ են մի սենյականոց, կլոր,զբաղեցնող տանիքով, խառը հատակագծումով կացարանները: Շոմուլթեփեի մի քանի կացարաններ միացվել են պատերով՝ ստեղծելով ընդհանուր քակ: Դրա հետ մեկտեղ, այստեղ, Գարգալարթեփեսիում, Բաքադերվիշում, Արուխ-

լոյում և այլուր բացվել են կլոր հատակագծով, կիսագետնափոր տներ: Սրանք հավանաբար Անդրկովկասի էնեոլիթին բնորոշ ճարտարապետական հորինվածքներ են և ըստ ամենայնի հանդես են գալիս որպես տեղական, վաղնջական ժամանակներից եկող վերապրուկային ձևեր: Խանդակ-շրջանցքները հատատազրվել են Արուխլոյում, Իմիրիս գորայում և հավանաբար կատարել են պաշտպանական կամ ավելի շուտ ոռոգման ֆունկցիաներ:

Շուլավերի-Շոմու թեփե խմբին պատկանող հուշարձաններից հայտնաբերվել են մեծ քանակությամբ քարե գործիքներ: Այս հանգամանքով այն առանձնանում է միջագետքյան վաղ խմբերի հասուն-հալաֆյան մշակույթից: Քարե բազմազան գործիքներում հանդիպում են նեոլիթյան ձևեր: Վանակատից և կայծքարից պատրաստվել են կոնաձև և բազմանիստ-բրգաձև միջուկներ, միկրոդանի շեղբեր՝ կեռացող ծայրերով, քերիչներ, սղոցատիպ առանավոր գործիքներ, դուրեր, մուրճեր, կացիններ, նետաձաքներ, աղորիքներ և այլն:

Աղտաևի հովտի հուշարձաններից գտնված քարե գործիքների վերլուծությունը ցույց է տալիս դրանց տեղական ծագումը, որտեղ հումքը առատ էր: Օրինակ, վանակատը բերվել է Փարվանա լճի մոտից, օգտագործվել է նաև տեղական գետաքարը:

Ոսկորից և եղջյուրից պատրաստվել են տարբեր գործիքներ: Հատկապես տարածված են ծակիչները, ասեղները, քզերը, հերունները, կոկիչները, քրիչները, մանգաղի հիմնամասերը: Մի քանի գդալներ իրենց զուգահեռներն ունեն Ձաթալ հույլուկում, նման են նաև նետաձաքները:

Մեծ խումբ են կազմում կավե գոտծոները: Խեցանոթները սարգ ձև ունեն և կոպիտ հարդարում: Դրանք քուլորը ձեռքով են ծեփվել: Միայն առանձին անոթներ ունեն ելուստավոր կանթեր: Խեցեղենի ձևերը մի քանիսքն են՝ գլանի տեսքով անոթներ, թասեր, կնուճներ՝ երբեմն դուրս ծռված պսակով: Որոշ անոթներ քարձրորակ են, ունեն կարմիր-գորշ կամ դեղին-դարչնագույն մակերես: Արուքլո 1-ին և Յոփի բնակավայրերից պեղվել են կարմիր անգոբապատ խեցանոթներ, որոնք ներմուծվել են: Հիմնականում խեցեղենը սև գորշ, դարչնագույն է, հարդախառն կավից ծեփած: Որոշ անոթների հատակին արվել է հյուսվածքաձև նախշազարդարում: Հանդիպում են նաև զուգահեռ գծերով նախշեր, կոնտակաձև ելուստներ, ուռուցիկ ալիքաձև գոտիներ: Որոշ անոթներ ներկված են կարմիր ներկով: Հարկ է նշել, որ քննարկվող խմբին պատկանող անոթներն ունեն յուրօրինակ գծեր: Դրանք տարբերվում են Տրիպոլիի և Անաուի, ինչպես նաև Առաջավոր Ասիայի հնավայրերի խեցեղենից: Այն ոչ մի կապ չունի նա խալաֆյան մշակույթին պատկանող քարձրորակ զարդարված, բազմաձև և գունազարդ խեցանոթների հետ: Դրա հետ մեկտեղ Շուլավերի-Շոմու թեփեի խեցեղենը



Աղ. 17. Էնեուլիթ՝ խցեղեկ նախի Ջլանի Ջյուլ թեփե 1-ին:

որոշակի զուգահեռներ ունի հասունյան մշակույթի հետ, և այդ կապն արտահայտվում է խեցանոթների համեմատական վերլուծությամբ: Երկու խմբերի խեցեղենը աչքի է ընկնում կոպիտ, հաստախեցի պատերի առկայությամբ՝ ծեփածո կոնկանախշով: Նման խեցեղենը բնորոշ է Ռում-Դեքազիա և Թել-Սոռո հուշարձաններին: Այս երկու՝ Անդրկովկասի և հյուսիսային Միջագետքի տարբեր ժամանակագրական սահմաններ ունեցող հուշարձաններից հայտնաբերված խեցեղենի նմանության բացարությունը դեռևս իր լուծումը չի ստացել: Հիմնավորված չէր լինի, եթե նշվեր, որ Անդրկովկասում հայտնի խեցեղենի զարդամոտիվները՝ ելուստ-կոնկավոր նախշը, ալիքաձևային գծերը, Միջագետքյան ծագում ունեն, նամանավանդ մարդատիպ ծեփապատկերներով անոթները, քանի որ Միջագետքում արդեն վաղուց չէր կիրառվում նման ոճի անոթների զարդանախշում:

Բացի խեցանոթներից, քննարկվող հուշարձաններից հայտնաբերվել են մեծ թվով ամբողջական և բեկորային մարդակերպ արձանիկներ, որոնք գտնվել են Շուլավերիս գորային վերին շերտում, Իմիրիս գորայում, Շոմու թեփեում, Գարգալար թեփեում: Հատկապես դրանք շատ են /30 հատ/ Խրամիս-Դիդիգորայում: Բոլոր այս արձանները պատկանում են մերկ, նըստած կամ ծալված ոտքերով կանանց: Ձեռքերը, որպես կանոն, ծեփված չեն, ոտքերը՝ միացված, վիզը՝ արտահայտված, իսկ դեմքը՝ ուռուցիկ ծեփված ելուստով ընդգծված: Կարծիք կա, որ կլոր աչքերը ազուցվել են: Արձանիկների մի մասը իրանին արված են ուռուցիկ բուրդանախշով զոտիներ, որը ժեռքերի ընդօրինակումն է հանդիսացել: Բացի սրանից Արուխլոյում գտնվել են գետաքարե ներկված երկու մարդու գլուխ-քանդակ՝ դիմային մանրամասներով:

Թեղուտի բնակավայրը ոչ մեծ, միաշերտ հուշարձան է, Էջմիածնից 3 կմ հարավ գտնվող ժվաժև բլրի վրա. այն հարթ զագաթ ունի և շուրջ 2,5 մա տարածք: Ընդհանուր մշակութային շերտը խաթարված է: Առանձին հատվածներում, ուր պահպանվել են կացարանները, հնագիտական շերտի հզորությունը կազմում է 1,6 մ: Թեղուտում բացվել են հում աղյուսից շինություններ՝ 2,6-3 տրամագծով, որոնց հատակները կավածեփ կամ սվաղված են: Կան նաև կավից պատրաստված օջախներ: Կացարանների պատերի աղյուսները 30 /40/10 սմ չափի են: Մի քանի սենյակների պատերին պահպանվել են կարմիր ներկի հետքեր: Ի տարբերություն Շուլավերիի խմբի հուշարձանների, Թեղուտի կացարանները խիտ չեն կառուցված: Դրանք առանձին խմբերով, որոշակի հեռավորությամբ ծավալվել են քակերի շուրջը: Ամեն մի խմբին կից կառուցվել են 1,5 մ տրամագծով տնտեսական շինություններ և հորեր: Այսպիսով, Թեղուտը էնեոլիթյան հուշարձան է, որի առանձնահատկություններից է առանձին մեկ կացարանով և կից

հինությունները աղյուսաշատ ճարտարապետական հորինվածքը:

Պեղումներից գտնված նյութերը տիպիկ էնեոլիթյան են: Հիմնական զտածոների մեջ մեծ թիվ են կազմում վանակատից, կայծքարից դանակաձև միակողմանի շեղբերը, մանգաղի ներդիրները, քերիչները, դանակները և այլ գործիքներ: Այստեղ, ի տարբերություն Շուլավերի հուշարձանների, արխայիկ միկրոլիթյան գործիքները քացակայում են, քայց գտնվել են մեծ թվով աղորիքներ, սանդեր, սանդակոթեր, տրորիչներ, ծակիչներ, կապիկներ: Առատ են ոսկորե գործիքները՝ քրիչները, կոկիչները, ծակիչները, քզերը, ասեղները: Եզակի զտածոների շարքին պիտի դասել խոշոր եղջերավոր անասունի ազդրոսկրից /18 սմ երկարությամբ/ մանգաղաձև հիմքի հայտնաբերումը:

Թեղուտում, ինչպես և Նախիջևանի Քյուլթեփեի ստորին շերտում, հայտնաբերվել են մետաղյա առարկաներ: Դրանք են՝ ձվաձև, հարթ, ձգված տեսքով դանակը, ասեղի երկու բեկորներ, որոնք պատրաստված են մկնդեղային քրոնզից: Այս զտածոները Խրամիս Դիդի-գորայի, Գարգալարթեփեսիի նյութերի հետ միասին կազմում են Զոյանու թեփեսից հետո, Հայկական լեռնաշխարհի երկրորդ մետաղական իրերի խումբը, որոնք շատ արխայիկ են և հետագա զարգացումն ստացան վաղ քրոնզի դարում:

Թեղուտից հայտնաբերված խեցանոթները ներկայացված են, ինչպես մյուս համալիրներում, տարբեր ձևի, քեկորային և ամբողջական հատակ, զունազարդ անոթներով: Բացի ամաններից, այստեղ ե գտնվել են կլոր տապակաների տեսքով կավե օջախներ, որոնք կողերը ուղիղ են, իսկ շուրթերը՝ դեպի ներս կլորացող: Վերջիններիս տրամագիծը տատանվում է 25-30 սմ; Բոլոր օջախները ստորին մասում ունեն միջանցիկ անցքեր: Որոշ օջախներ օժտված են կոպիտ, ծեփված կանթով: Մի մասի մեջ պահպանվել են մոխրի հետքեր: Թեղուտի քնակավայրը դեռևս միակն է Անդրկովկասում, որտեղ հայտնաբերվել են շարժական օջախներ: Թեղուտի խեցեղենի ամենաքնորոշ հատկանիշը հարդի և ավազի առկայությունն է խեցու քաղադրության մեջ: Հաճախ անոթը երկու կողմից պատված է ուրիշ գույնի, հիմնականում դեղին կավե նուրբ շերտով: Նման բազմաշերտությունը քնորոշ է նաև Քյուլթեփե 1-ին և Միլ-Հարաքաղյան դաշտավայրի հուշարձաններից հայտնի խեցեղեն անոթներին: Թեղուտի խեցեղենի ուսումնասիրությունից պարզվում է, որ դրա վրա՝ կտրվածքում, կան գործվածքի հետքեր, մի փաստ, որը վկայում է խեցեգործության մեջ գործվածքի լայն օգտագործման մասին:

Այստեղից խեցեղենը բաժանվում է երկու քնորոշ խմբի: Առաջինը և առավել բազմաքանակը կոպիտ մակերեսով, հարդախառն քաղադրությամբ խեցեղենի խումքն է: Երկրորդ խումքը կազմում են սակավ քանակի, համե-



Աղ. 18. Էնեոլիթ՝ նյութեր նախի Քյուլթեփե 1-ին:

մասաբար քարձր որակի, երբեմն անզորաքար, փայլացրեած մակերեսով անոթնե-
ները: Դրանք զեղաձև իրանով, ատրքեր քարձրության սափորներ, թասեր,
գրեղաններ են, որոնք զուրկ են նախշազարդումից: Հատկապես հետաքրքիր
են սակավ քանակի զունազարդ, բեկորային ձևով ներկայացված անոթները:
Նկարազարդումն արված է սև կամ կարմիր գույնով վարդագույն, կարմիր,
առավել հաճախ դաղին հիմնածոնի վրա: Հորինվածքին տիպիկ են ալիքանախ-
շը, շեղանկյունները, հորիզոնական գծերը և այլն: Գունազարդ անոթների
մեջ կան քարձր որակի ներմուծված արինակներ:

Թեղուտի խեցեղենը չնայած տեխնոլոգիական վերը նշված հատկանիշ-
ներով նմանվում է Անդրկովկասի մի շարք հուշարձաններից պեղված անոթ-
ներին, այնուհանդերձ, ատրքերվում է վերջիններից ձևով և զունազարդու-
թյամբ: Այն առավել մոտ է կանգնած միջագետքյան համալիրներին: Բացի
դրանից, անոթների զունազարդ խումբը համահնչյուն է հյուսիսարևելյան
խեցեղենին, ինչը որ նկատվում է նաև դրանց ձևերում: Նման նույնու-
թյունը առկա է նաև Շամիրամալթի նյութերում /Վանի մոտ/:

Վերը քննարկված հուշարձաններն իրենց նյութերով հնարավորություն
են ընձեռում ճշտելու նաև թվագրական հարցերը. այսպես՝ Շուլավերի-Շու-
մու թեփ խմբի հուշարձանները թվագրվում են մ.թ.ա. 6-5-րդ հազ-ով,
Նախիջևան-Միլ-Ղաբաղանք՝ մ.թ.ա. 5-րդ հազ. վերջին, 4-րդ հազ. առա-
ջին կեսով: Վերջին թվագրական սանդղակի մեջ կարելի է դասել նաև Թե-
ղուտի բնակավայրը:

Ինչպես տեսնում ենք, քուլոր էնեոլիթյան հուշարձանները բազմա-
շերտ բնակավայրեր են՝ հզոր մշակութային շերտագրությամբ, որը ապա-
ցուցյն է երկրաքանական /տոդզելի տարածքների/ պայմանների զորձոննե-
րով պայմանավորված դրանց հատակ նստակեցության տնտեսաձևի:

Բազմաթիվ մշակույթի, ինչպես նաև վայրի հացաքույսերի տարբեր տե-
սակների առկայությունը խոսում է այն մասին, որ Հայկական լեռնաշխար-
հում էնեոլիթյան ժամանակաշրջանում-ոչ թե սկիզբ էր դրվում հացազգի-
ների մշակմանը , այլ տեղի է ունենում հացազգիների ցանքսի տարածու-
թյունների ինտենսիվ զարգացում: Սրանով էլ պայմանավորված է քարե և
ոսկրե աշխատանքային գործիքների ընտրությունը, որով առավել արդյունավետ
էր դառնում հողագործության զարգացումը, մթերքների վերամշակումը:
Այդ գործիքներից եղջյուրից և կենդանու թիոսկրից պատրաստված բրիչնե-
ր: Մի քանի բնակավայրերում՝ Աղաբլուր, Մաշտոց բլուր, օգտագործվել
են քարե բրիչներ, որոնց մի մասը լրացվել է ծանրոցաքարերով:

Հունձը կատարվել է ոսկրե և եղջյուրե՝ քարե ներդիրներով մանգ-
աղների օգնությամբ: Հազվադեպ են քարե մանգաղները: Գ Վանակատ և
կայծքարե ներդիրները բուն փորձերի արդյունքների ապացուցում են, որ
իրենց արդյունավետությամբ ժամանակակից մանգաղներին զիջել են ընդամե-
նը 1,7 անգամ:

Հացահատիկը մշակելու համար գործածվել են տարբեր սանդեր, աղորիքներ և արորիչներ: Երկրագործությանը զուգընթաց լայն տարածում ուներ անասնապահությունը: Այսպես Շոմուլեֆեում մանր եղջերավոր անասունների ոսկորները կազմում են 57 տոկոս, խոշորինը՝ 25 տոկոս: Նույն հարաբերակցությունն է նկատվում Բոյրու Թեփեի և Գարգալար Թեփեի նյութերում: Չնայած ոսկրաբանական զտածոները վկայում են մանր եղջերավոր անասունների տավելության մասին, սակայն խոզերի և խոշոր ու մանր եղջերավոր անասունների քանակական հարաբերությունը՝ 1:2, խոսում է արդեն իսկ հստակ նստակյաց հողագործական տնտեսաձևի մասին:

Արհեստներից զարգացում է ապրում խեցեգործությունը: Մի քանի հնավայրերում բացվել են պարզ կառուցվածքով, հողի մեջ խորացված, տաշած, ուժեղ այրված պատերով թրծման վառարաններ: Ինչպես նշվեց, ընթարկվող ժամանակաշրջանը աչքի է ընկնում մետաղագործությամբ, երբ, ըստ նախիջևանի Բյուլ Թեփե 1-ի և Թեղուտի նյութերի, սկսվում է մկնդեղային հանքաքարի օգտագործումը: Անկախ երանից, թե այն տեղում է հալեցվել, թե բերվել է.այս զտածոները խոսում են մետաղի լայն կիրառության մասին տեղական բնակչության կենցաղում: Չնայած ոչ մի բնակավայրից չի գտնվել գործվածքի մնացորդ, բայց իլիկի գլխիկների և այլ նյութերի հայտնաբերումը խոսում է այն մասին, որ հիշյալ ժամանակներում զարգանում էր մանագործական արվեստը:

Մինչև այժմ ոչ մի էնեոլիթյան հուշարձան չի պեղվել ամբողջապես, և բացարձակ ուսումնասիրված չեն դամբարանադաշտերը /չհաշված բնակավայրերի ներսում բացված մի քանի պատահական թաղումները/:Այս բացը բավականին դժվարացնում է կատարելու ավյալ ժամանակաշրջանի սոցիալական զարգացման քննությունը:

Անդրկովկասի, Հայաստանի քոլոր վաղ երկրագործական հուշարձանները ներկայացնում են 1-2 հա. տարածքով արհեստական բլուրներից կազմված բնակավայրեր, որոնցից մեկը, ըստ երևույթին, եղել է հիմնականը: Բնակավայրերի ամբողջական կառուցապատումը վկայում է, որ այստեղ միջին հաշվով կային 30-40 տներ, որտեղ, հաշվի առնելով նրանց ոչ մեծ տարածքը, կարող էին բնակվել 120-150 մարդ: Տնտեսական կառույցների ոչ մեծ չափերը և ճարտարապետական առանձին մանրամասների վերլուծությունը խոսում են այն մասին, որ հիշյալ բնակավայրում սոցիալական շերտավորում չկար:

Դժվար է ամբողջովին վերականգնել էնեոլիթյան ժամանակաշրջանի գաղափարախոսական պատկերացումները: Քիչ քանակով հայտնաբերված մարդակերպ և կենդանակերպ արձանիկներն, ըստ երևույթին, կապվում են պտղաբերության պաշտամունքի հետ: Այդ են վկայում նաև տան հատակնե-



Աղ. 19. Էնեոլիթ՝ նյութեր թեղուտից։

ում կատարված թաղումները, որոնք կապվում են նախնիների պաշտամունքի, վերածննդի, ետ գալու գաղափարի, ընտանիքի, տոհմի և նրա բարգավաճման հետ: Խրամիս դիդի գորայում առանձին պաշտամունքային օջախների հայտնաբերումը, որոնցում գտնվել են ոչխարի ոսկորներ, կավի կլոր բլիթներ, կարող են վկայել օջախի և կրակի պաշտամունքի մասին, որի շուրջ կատարվել են տարբեր արարողություններ:

Առատաշենի քնակատեղին գտնվում է Էջմիածնի շրջանի համանուն գյուղի տարածքում, Քասախ գետի աջ ափին: Պեղումները կատարվում են 1988 թվից և շարունակվում են առ այսօր Ս.Ա.Սալանյանի կողմից: Հուշարձանը միաշերտ է, որի նախնական թվագրումը վերաբերում է մ.թ.ա. 6-րդ հազ. վերջին, մ.թ.ա. 6-րդ հազ. սկզբին: Պեղումներից հայտնաբերվել են հատակագծում կլոր կամ ուղղանկյուն, կավածեփ տնտեսական, քնակելի մի շարք շինություններ: Գտնված քարից և ոսկորից պեղածո նյութերը վկայում են, որ այստեղ տնտեսական հիմնական ճյուղը երկրագործությունն ու անասնապահությունն էր: Այս տնտեսաձևի հետ զուգորդված է նաև որսորդությունը, որը ոչ պակաս կարևոր դեր է խաղում տնտեսական կյանքում: Հնագիտական գտածոները քաղկացած են խեցեղենից, քարից, ոսկորից և այլն:

Խեցեղենը սակավաթիվ է, քուլոր գտածոների ընդամենը 7 %/՝-ը: Անոթները ցածր, լայնաբերան են, հանդիպում են նաև խոշոր կարասի տիպի ձեռաձեփ խեցանոթներ: Հազվադեպ են գունազարդ խեցեղենի բեկորները: Պեղումներից հայտնաբերվել են վանակատից պրիզմայաձև, կոնաձև, միջուկներ, շեղբեր: Առատ են ոսկորից գործիքները /ասեղներ, ծակիչներ, հերուններ/: Գտնվել են ողորկ մշակումով կացիններ, աղորիքներ, սանդեր; Հետաքրքիր են կարված շուրթերով քարե անոթները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռ.Մ.Թորոսյան, Թեղուտի վաղ երկրագործական քնակավայրը /մ.թ.ա. 4-րդ հազարամյակ/, Երևան- 1976.

Ս.Ա.Սարգարյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967.

O.A.Абибулаев. Раскопки холма Кюль-тепе близ Нахичевани в 1955 г. МИА 67.

O.A.Абибулаев. Некоторые итоги изучения холма Кюль-тепе в Азербайджане СА 1963, № 3,

О.А.Абибулаев. К вопросу о древней металлургии Кавказа и Азербайджана МИА I25.

О.А.Абибулаев. Энеолит и бронза на теорритории Нахичеванский АССР.

О.А.Абибулаев. Погребальные памятники на поселении Кюль-тепе в книге: Арехеологические исследования в Азербайджане.Баку,1965.

Р.М.Абрамишвили, Н.И.Окропиридзе и др. Раскопки в Тбилиси. АО за 1978.М.,1979.

Р.Б.Аразова. Каменные орудия эпохи энеолита в Азербайджане. Авт.канд.диссертац. Баку,1974.

Н.О.Бадер.Раннеземледельческое поселение Тель-сото /по раскопкам 1971,1973-1974 гг/ СА 1975, № 4.

Н.И.Вавилов. Мировые ресурсы зерновых культур и льна. М-Л-д, 1957.

О.М.Джапаридзе, А.И.Джавахишвили. Культура древнейшего земледельческого населения на территории Грузии - на груз.яз. с русским резюме. Тбилиси. 1971.

О.М.Джапаридзе, А.И.Джавахишвили. Культура древнейшего земледельческого населения на территории Грузии. Тбилиси. 1976.

А.А.Иессен. Кавказ и Древний Восток в IУ-III тыс.до н.э.КСИА, вып. 93.

А.А.Иессен. Из исторического прошлого Мильско-Карабахской степи, МИА,I25.

Б.А.Куфтин.Археологические раскопки в Триалети.Тбилиси,1941.

К.Х.Кушнарева,Т.Н.Чубинишвили. Древнейшие культуры Южного Кавказа, Л-д, 1970.

Т.В.Кичурадзе. Периодизация раннеземледельческой культуры Восточного Закавказья. Тбилиси,1976- на груз.яз. с русским резюме.

Г.Н.Лисицына, Л.В.Пришепенко. Палеобатанические находки Кавказа и Ближнего Востока. М., 1977.

В.М.Массон,Н.Я.Мерперт,Р.М.Мунчаев, Е.К.Черныш. Энеолит СССР /в серии Археология СССР).

А.А.Мартиросян,Р.М.Торосян. К вопросу об интерпретации энеолитической культуры Армении. ВОН, 1967, № 3.

С.К.Межлумян. Палеофауна эпох энеолита,бронзы и железа на территории Армении.Ереван, 1972.

Р.М.Мунчаев. Кавказ на заре бронзового века. М.,1975.

И.Г.Нариманов.Археологичесуие исследования Шому-тепен в кни

ге: Археологические исследования в Азербайджане. Баку,1962.

И.Г.Нариманов. Керамика древнего поселения вблизи городища Оренкалы, МИА,№125.

И.Г.Нариманов. Исследования энеолитических памятников в Азербайджане АО за 1967 г.

И.Г.Нариманов. Раскопки энеолитического поселения Илаипынтапе.

И.Г.Нариманов. О земледелии эпохи энеолита в Азербайджане. СА 1971, № 3.

Отчет Квемо-картлийскрй экспедиции. Тбилиси,1975.

Отчет квемо-картлийской экспедиции /1965-1971/.Тбилиси,1978.

Р.М.Рамишвили, В.А.Джербенадзе,З.А.Каландадзе и др.Исследования в ущелье Арагви. АО за 1978. М.,1970.

И.Р.Селимханов. Историко-химические и аналитические исследования древних предметов из медных сплавов /на материале энеолита Азербайджана. Баку, 1960/.

Р.М.Торосян,Г.А.Микаелян, С.Г.Деведжян. Разведки древнейших памятников Армении. АО, 1969г.

Т.Н.Чубинишвили, К.Х.Кушнарева. Новые материалы по энеолиту Южного Кавказа №У-IУ тыс. до н.э./Тбилиси 1967/ Мацне № 6/.

Т.Н.Чубинишвили. К древней истории Южного Кавказа.Тбилиси, 1971.

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՂ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Պարագրաֆ 1. Վաղ բրոնզեդարի մշակույթը

Հայկական բարձրավանդակում 4-րդ հազարամյակի վերջին և 3-րդի սկզբին նկատվում են նախորդ պատմական ժամանակաշրջանի զարգացման առաջընթաց փոփոխություններ: Երկրագործության ինտենսիվ զարգացումը պայմանավորված էր պարզունակ արորի և հնագույն զանգվածող անիվներով սայլերի առաջացմամբ, երբ հերկովի տարածքները ընդարձակվեցին, և քերքը սկսեցին տեղափոխել հեռավոր շրջաններից: Ի հայտ եկան մետաղյա մանգաղները, որով խթանվեց քերքի հավաքման պրոցեսը: Առավել զարգացման հասավ անասնապահությունը: Խոշոր եղջերավոր անասունների, որպես անհրաժեշտ քարշող ուժի, գործածության հետ մեկտեղ մեծապես ավելանում էր մանր եղջերավոր անասունների քանակը: Դա վկայում է հեռագնա անասնապահության, ինչպես նաև արոտավայրերի յուրացման մասին: Զարգացավ ծիաքուծությունը: Աննախընթաց ծաղկման հասան արհեստները, խեցեգործությունը, ոսկրի, քարե մշակումը, մանածագործությունը և հատկապես մետաղագործությունը, մետաղի մշակումը Միջագետքի և Սիրիայի հետ անվանդական կապերի ընդլայնման հետ մեկտեղ նոր մշակութային կապ է հաստատվում Միջերկրականի շրջանների հետ: Այս ժամանակաշրջանը թվագրվում է վաղ բրոնզով և հայտնի է կուր-արաքսյան /Բ.Ա.Կուֆտինի առաջարկած անվանումը/ կամ շենգավիթյան /Ե.Հ.Բայբուրթյան/ մշակույթ անվանումով, որը ստեղծեց փաստացի քուլոր անհրաժեշտ պայմանները ավյալ ռեգիոնի հասարակության հետագա զարգացման համար:

Տնտեսական հզոր զարգացումը, արհեստները և հատկապես անասնապահությունը հանգեցրին ոչ միայն հարստության առավել կուտակմանը, սոցիալական տարբերակմանը առանձին ցեղերի միջև, այլև ստեղծեցին միջցեղային, միջհամայնքային մշակման փոխհարաբերություններ: Արդյունքում առաջացան պաշտպանական ձևերի նոր՝ կիկլոպյան համակարգեր: Ներմուծված զենքերի ձևերի ընդօրինակումը նպաստեց մետաղագործության զարգացմանը:

Բրոնզեդարի հաջորդ փուլը հնագիտական գրականության մեջ ընդունված է անվանել միջին բրոնզի ժամանակաշրջան, որը թվագրվում է մ.թ.ա. 20-16-րդ դ.դ.:

Այս դարաշրջանում Հայաստանում և Անդրկովկասում նկատվում են էական փոփոխություններ: Անասնապահության զարգացման հետ մեկտեղ ուժեղանում է ցեղերի գույքային տարբերակումը: Վաղ բրոնզե դարի մշակույթի հիման վրա Հայաստանում ձևավորվում են նոր մշակույթներ՝

իրենց ազգակից ընդհանրություններով՝ կարմիրբերդյան-թրիալեթյան, սևան-ուզերլիկյան և կարմիր վանքյան: Շարունակվում է արհեստների զարգացումը: Սև փայլեցրած կուր-արաքսյան խեցեղենի փոխարեն հանդես գալիս գունազարդ խեցանոթների նոր ձևեր, տարածվում են նաև սև, սպիտակ ագուցված զարդանախշով անոթներ: Շարունակվում է մետաղագործության զարգացումը: Մետաղի ժուլման մեջ մկնդեղային բրոնզը փոխարինվում է անագով:

Բրոնզեդարի երկրորդ փուլը Հայաստանում ընթանում է մշակության սերտ կապերի առկայության պայմաններում Միջերկրականի հետ, քայց, ի տարբերություն նախորդ շրջանների, համընկնում է խեթական ցեղերի միավորման հետ, երբ առաջացավ վերջիններիս թագավորությունը:

Բրոնզի ժամանակաշրջանի ավարտը ուշ բրոնզե դարաշրջանն է /15-12-րդ դդ. մ.թ.ա./, որը Հայաստանի նյութական մշակույթում գրավում է քացահայտ յուրօրինակ տեղ: Այս դարաշրջանը բնորոշվում է ամենից էական առաջընթացով, որն ի հայտ է գալիս հիմնական անտեսաճյուղերում՝ երկրագործության, անասնապահության քնագավառում: Տարբեր դամբարանների հավաքածուներից պեղված բազմաթիվ նյութեր վկայում են կավագործության, մանածագործության, կաշվեգործության և այլ արհեստների զարգացածության մասին: Հատկապես քարձր զարգացման հասավ մետաղագործությունը, որը ակնառու երևում է տարբեր տիպի նիզակների, սրերի, դաշույնների, կացինների, նետասլաքների և այլ նյութերի ուսումնասիրման ժամանակ:

Հայաստանի վաղ բրոնզեդարի հուշարձանները հայտնի են վաղուց: Դրանց առաջին հայտնագործությունները կատարվել են դեռևս Անդրկովկասի հնագիտության ուսումնասիրման արշալույսին: Այսպես, 1869 թ. Ջազլիկի հանքավայրերում քացվեցին հավանաբար տարբեր ժամանակաշրջանների դամբարաններ, որոնցից մեկում գտնվեցին կուր-արաքսյան մշակույթին բնորոշ կավանոթներ: Այդ ժամանակից, դանդաղ ու տարերայնորեն սկսվեց այս մշակույթի նյութերի հավաքումը: 1879 թ. Ս.Ս.Ռևվարովը Արմավիր գյուղում հայտնաբերեց նշված ժամանակաշրջանին պատկանող անոթներ, իսկ ութ տարի անց, Ղարսի մարզում՝ Մեչետի գյուղի մոտ, գտնվեցին համանման նյութեր: Համարյա նույն ժամանակին են վերաբերում Մուրիեի կողմից Ռեղկին լազերից հայտնաբերված անոթները:

Հատկապես պետք է մատնանշել Ե.Լալայանի աշխատանքները: Նրա անվան հետ են կապվում ակնավոր հայտնագործությունները Անդրկովկասում՝ Նախիջևանի Ջյուլ թեփե 1-ինում 1904 թ.Ե.Լալայանը առաջինը ճեռագրեց այս գյուղը, հավաքեց արժեքավոր նյութեր, այդ թվում կուր-արաքսյան մշակույթին վերաբերող: 1913 թ. նա հետազոտեց այս մշակույթի մեկ այլ հուշարձան՝ Էջմիածնի մոտ գտնվող Շրեշ գյուղ-թանգավայրը: Ե.Լա-

լայանը արժեքավոր նյութեր հավաքեց /հիմնականում խեցեղենի հավաքածու/ ներկայիս Ադրբեջանի Նուխիի շրջանում, ինչպես նաև Սևանի արևմտյան ափից: Կուր-արաքսյան մշակույթին վերաբերող կարևոր հայտնագործություններ կատարվեցին Իզդիրի մոտ:

Հայաստանի Կուր-արաքսյան մշակույթին վերաբերող կարևոր նյութեր են գտնվել 1927 թ. Էջմիածնի Մոխրաբլուր /նախկինում՝ Քյուլթափա/ և Էլառի քնակավայրում:

1935-37 թ.թ. Ն.Ա.Բայբուրթյանը Երևանի տարածքում պեղեց Մուխանաթ-Թափա բազմաշերտ հուշարձանը, որի ստորին հորիզոնը պարունակում էր Կուր-արաքսյան մշակույթ: Նրա կողմից 1936-38 թ.թ. ընթացքում պեղվեց մի այլ կարևոր հուշարձան՝ Շենգավիթը, որը Կուր-արաքսյան մշակույթին վերաբերող ամենանշանավոր քնակավայրերից է: Պեղումները վերսկսվեցին 1958 թ.՝ տևելով շուրջ 25 տարի, քայց, ցավոք, մեր պատկերացումները այս եզակի հուշարձանի վերաբերյալ սահմանափակվում են միայն Ն.Ա.Բայբուրթյանի կատարած հետազոտություններով: Արցախում Ցա.Ի.Գումմելը պեղեց վաղ բրոնզի վերաբերող երկու դամբարանաբլուր /119,125/:

Առավել էական արդյունքներով նշանավորվեցին 1936-40 թ.թ. Բ.Ա. Կուֆտինի կողմից Թեղքում կատարված պեղումները: Դա Բեշտաշեն հայտնի ամրոցն էր և երկու այլ հնավայրեր, ինչպես նաև երկու սալարկղից դամբարան: Այստեղ, ինչպես Մուխանաթ-Թափայում, քացահայտվեց Կուր-արաքսյան մշակույթի շերտագրությունը:

Շենգավիթի և Վրատանի հնավայրերի պեղումներն իրենց նյութերով քացահայտեցին Անդրկովկասի վաղ մետաղի ժամանակաշրջանի ժամանակագրական մշակութային ամբողջականությունը: Նյութերի համակարգման, գիտական վերլուծության և մեկնաբանման գործում շատ կարևոր լուծա ներդրեց Բ.Ա.Կուֆտինը, որը մի շարք մենագրություններում ցույց տվեց, որ այդ նյութերը պատկանում են միևնույն հնագույն մշակութային շերտին, պահպանելով միատարրության հատակությունը որոշակի տարածքում՝ սկսած Արարատից մինչև Թիֆլիս, Նախիջևանից Սևեփանակերտ-Թեղք՝ ներթափանցելով արևմտյան Վրաստան և Դաղստան:

Բ.Ա.Կուֆտինը Անդրկովկասի այս խմբի հուշարձանները թվագրեց մ.թ.ա. 3-րդ հազարամյակով, որակելով դրանք որպես հնագույն անասնապահական, երկրագործական մշակույթին պատկանող, Մերձավոր Արևելքի զուգահեռ զարգացող խեցեղենով քնորոշվող հայտնի համալիրներից խիստ զատվող շրջան: Բ.Ա.Կուֆտինը քնորոշեց նաև այս խեցեղենի հիմնական տիպերը և զարդամոտիվները: Հաշվի առնելով, որ քննարկվող շրջանների համալիրներում մեծաքը ներկայացված է խիստ առանձնակ քանակով և պարզունակ ձևով, Բ.Ա.Կուֆտինը այն քնկալեց որպես էնեալիթյան մշակույթ և անվանեց

կուր-արաքսյան էենուլիթ, քանի որ ժամանակին հայտնի քուլոր նման հուշարձանները տեղադրվում էին Կուր և Արաքս գետերի միջև:

Հայրենական մեծ պատերազմից հետո վաղբրոնզեդարյան մշակույթին վերաբերող շերտեր հայտնաբերվեցին Դվինում, Գառնիում, Դմանիսիում: Հատկապես պետք է նշել, որ դեռևս պատերազմից առաջ կուր-արաքսյան մշակույթին պատկանող հուշարձաններ քացվել էին նաև Արևմտյան Հայաստանում, մասնավորապես Էրզրումի մոտ գտնվող Կարազ բնակավայրում:

Ժամանակի գիտական մակարդակից ելնելով՝ Բ.Բ.Պիոտրովսկին քուռ-արաքսյան խմբին պատկանող հուշարձանները թվագրեց պղնձե դարով, որը կարևոր նշանակություն ունեցավ Անդրկովկասի հնագիտության զարգացման գործում:

Արժեքավոր էին Ն.Բարոն-Բրաունի պեղումները Ուրմիայի մոտ գտնվող Գեոյթեփե բնակավայրում, որի „Կ„ շերտը քննգրկում է կուր-արաքսյան մշակույթին վերաբերող նյութեր: Այսպիսով, պարզվում է, որ նշված մշակույթը ստրածվում է իր սկզբնական սահմաններից՝ Արաքսի ավազանից հարավ:

Հաջորդ տասնամյակների ընթացքում սկսվեց նոր հուշարձանների ինտենսիվ ուսումնասիրությունը և նյութերի նախնական հավաքումը: Հետազոտողների ուշադրության կենտրոնում էին նոր հուշարձանների, դրանց շերտագրության, թվագրության և պատմամշակութային հարաբերությունների խնդիրները:

Բացառիկ կարևոր հուշարձաններից է 1953 թվից սկսած Նախիջևանում Օ.Ա.Աքիբուլաևի կողմից պեղված բազմաշերտ կուր-արաքսյան մշակույթին վերաբերող Ջյուլթեփե 1-ին բնակավայրը: Վաղ բրոնզե դարին վերաբերող մշակութային շերտի հզորությունը այստեղ հասնում է 8,5-9,5 մ: 1960 թ. Վ.Գ.Ալիևը սկսեց Նախիջևանի Ջյուլթեփե 2-ի հետազոտումը: Ներկայիս Ադրբեջանում պեղվել են այս ժամանակաշրջանին վերաբերող մի քանի այլ հնավայրեր Ղազախի և Ղուբայի շրջաններում, Խաչքուլաղում, Շամախիում, Բաքադերվիշում և մի շարք այլ վայրերում:

Հայաստանում Է.Վ.Խանզադյանը պեղումներ կատարեց Էլարի դամբարանադաշտում և ամրոցում, Գառնի ամրոցի ստորին շերտերում, ինչպես և Կիրովականի կուր-արաքսյան ժամանակաշրջանի բնակավայրում: Հատկապես հետաքրքիր էին Մեծամորի պեղումները, որի ստորին երկու հորիզոնները պատկանում են կուր-արաքսյան մշակույթին: Հետազոտողին են պատկանում նաև մեկ այլ հետաքրքիր հուշարձանի՝ Ջրահովտի պեղումները, որի նյութերը, ցավոք, նույնպես հրատարակված չեն: Հայաստանում պեղված բրոնզե ժամանակաշրջանի հետաքրքիր հուշարձաններից են Հ.Հ. Մնացականյանի ուսումնասիրված Լճաշենի բազմաշերտ բնակավայրը, դամբարան-

ները, ինչպես նաև Արթիկի շրջանում Տ.Ս.Թաչաթյանի կողմից ուսումնասիրված Հառիճի բնակավայրը: 1960 թ. Ս.Ա. Ենայանը Նոյեմբերյանի շրջանում պեղեց կիկլոպյան ամրոցներ. Շագլամա 2-րդ, 3-րդ և Քաղացատեղ բնակավայրերը, ինչպես նաև հյուսիսարևելյան Հայաստանի մի շարք հուշարձաններ և առանձին նյութեր /Ռեղկին-լագեր, Քողազ, Ղրդի/, որոնցից գտնված հավաքածուները մտել են գիտական լայն շրջանառության մեջ: 1970 թ. մինչև օրս Գ.Ե.Արեշյանը պեղումներ է կատարում Էջմիածնի Մոխրաբլուր բնակավայրում: Բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացնում 1967 թ. Երևանի մոտակայքում հայտնաբերված 3-րդ հազ. վերաբերող քրոնզե գործիքների գանձը:

Հետաքրքիր հայտնագործություններ են կատարվել Արևմտյան Հայաստանում: Այստեղ 1956-57 թ.թ. Զ.Ա.Բարնեյի կողմից հետազոտվեցին Սիվասի Մալաթիայի, Էլազիղի, Մուշի, Բիթլիսի, Վանի շրջանները, մասնակիորեն Իզդիրի /Արարատյան/ հարթավայրը: Բացվել են շուրջ 150 էնեոլիթյան և վաղ քրոնզե, երկաթի դարի հուշարձաններ, սակայն հեղինակի եզրակացությունները և ենթադրությունները, մասնավորապես, կուր-արաքսյան մշակույթի սահմանների և նրա ձևավորման շրջանի մասին և համոզիչ չեն:

Հետաքրքիր արդյունքներ են ստացվել Արևմտյան Հայաստանի Կարնո դաշտում պեղված Պուլուր, Կարազ առավել լավ ուսումնասիրված բնակավայրերից: 1971 թ. հրատարակվեց Զ. Բարնեի գիրքը, որին հեղինակակից է Դ.Մ.Լանգը: Այն նվիրվում է վերին Եփրատից մինչև Կովկասյան լեռնաշղթան, Ուրմիան ընդգրկող պատմամշակութային ընդարձակ մարզի բնութագրմանը, նրա զարգացմանը՝ սկսած քարի դարից մինչև միջնադար: Համապատասխան բաժիններում /գլուխ 3-րդ/ քննարկված է կուր-արաքսյան մշակույթը, որը հեղինակը առաջարկում է անվանել „վաղ կովկասյան և արևելյան անատոլիական մշակույթ„:

Ինչպես տեսնում ենք, կուր-արաքսյան մշակույթը, որը շուրջ 40 տարի առաջ Բ.Ա.Կուզմինը մեկնաբանեց որպես էնեոլիթյան, այժմ ընդգրկում է Հայկական լեռնաշխարհը և հարավյան ամբողջ Անդրկովկասը: Հարավ-արևելքում այն մասնավորապես մոտենում է Իրանական բարձրավանդակի հյուսիսային և արևմտյան շրջաններին, հյուսիսում և հյուսիս-արևելքում՝ Դաղստանին, Չեչենո-Ինգուշեթիային և անգամ Հյուսիսային Օսեթիայի մի շարք շրջաններին: Պետք է արձանագրել նաև, որ վերոհիշյալ մշակույթի առանձին տարրեր նկատվում են նաև Սիրիայում և Պաղեստինում, ուր դրանք կազմում են, այսպես կոչված, Կիրբեթ-Կերակյան մշակույթ /Կիրբեթ-Կերակ բնակավայրի անունով/, որը առաջին անգամ հայտնաբերվեց 1924 թ.: Անտարակույս այս շրջանը ոչ միշտ է եղել այս-

քան ընդարձակ և սկզբից այն սահմանափակվել է, հավանաբար, Հայկական լեռնաշխարհի ինչ-որ շրջանով, այդ թվում՝ կուր-արաքսյան միջագետքով: Այս ենթադրությունը հիմնավորվում է նրանով, որ հենց այս տարածքում դիտվում են այս մշակույթին պատկանող առավել մեծ քանակությամբ հուշարձաններ, ընդ որում դրանք հանդիպում են և՛ հարթավայրերում, ծովի մակերևույթից շուրջ 2000մ բարձրության վրա տեղադրված շրջաններում: Այս փաստը խոսում է Անդրկովկասի և Հայաստանի ժամանակին խիտ բնակեցված լինելու մասին: Հատկապես շատ խիտ էին բնակեցված Արարատյան դաշտավայրը, Շիրակը, Սևանի ավազանը, Մուշը, Մերձեփրատյան տարածքները, Շիդա Քարթլին և այլն:

Չնայած բավականին մեծ քանակի /շուրջ 400/ հուշարձանների ուսումնասիրությանը, դեռևս կուր-արաքսյան մշակույթի առաջացման հարցերը վերջնականապես չէին լուծված: Այս մշակույթը վեր հանելու համար նպատակահարմար է ընդհանուր գծերով ներկայացնել առանձին հուշարձաններ:

Հայաստանի կուր-արաքսյան բնակավայրերը տեղադրված են գետերի, բնակարանից պաշտպանված բլուրների, բարձունքների, դարավանդների վրա, ուր քարենպաստ պայմաններ կան երկրագործության և անասնապահության զարգացման համար: Այս բնակավայրերը առաջացել են կամ նախկինում չբնակեցված տեղերում /Գառնի, Քոսի, ձոթեր, Օգնի, Բեշտաշեն և այլն/, կամ կառուցվել են էնեոլիթյան բնակավայրերի տեղում /Քյուլթեփե, Շենգավիթ, Բաքա-դերվիշ, Գեոյ-թեփե և այլն/: Հայաստանի այդ մշակույթը ներկայացնող բնակավայրերը բաժանվում են երեք խմբի, որոնք էլ բնորոշվում են իրենց կառույց-շինություններով: Հարթավայրային շրջաններում դրանք հիմնականում ներկայացված են մշակութային մնացորդներից կազմված բլուրներով, որոնք, որպես կանոն, ունեն որոշակի մեծ չափերի հասնող բարձրություն և շերտի հզորություն՝ մինչև 10 և ավելի մետրի: Նախալեռնային շրջաններում դրանք ունեն շերտի ավելի փոքր հաստություն, իսկ կացարանները հիմնականում կառուցված են քարե հիմնապատի վրա շարված աղյուսով: Շերտի հաստությունը հասնում է մի քանի մետրի: Հաշորդ խումբը կազմող բարձրլեռնային բնակավայրերը, կառույցները, որպես վրա, և մշակութային շերտը համեմատաբար մեծ չէ:

Առանձին դեպքերում այս բնակավայրերը ամրացված էին: Այսպես, Շենգավիթում բացվել է 4 մ հաստությամբ քարե բլոկներից աշտարակներով պարիսպ, ինչպես և դեպի գետը տանող ստորգետնյա ուղի: Քարե հիմնապատով պաշտպանական պարիսպի մի հատված բացվել է Գառնիում: Այսպիսի պարսպապատերով են ամրացված Մոխրաբլուրը, Ցրեշ բլուրը, Մուխանթթեփան, Գեոյթեփեն, Ախթամիրը, Թազավորանիստը, մի քանի այլ բնակավայրեր

Նոյեմբերյանի շրջանում, Քախսի և այլն: Ինորոշ այն է, որ պաշտպանական պարսպապատերը հիմնականում օգակում են խոշոր բնակավայրերը, որտեղ կենտրոնացվել է հացահատիկի և անասունների մեծ քանակություն: Տեղանքի օգտագործումը և հատակագծային լուծումներին վերաբերող հարցերը այս ժամանակաշրջանի համար ունեն մեծ նշանակություն: Բնակավայրերի համար հարմարավետ տեղերում հարթեցվել են ժայռերը՝ ստեղծելով հենապատերով դարավանդներ, որոնք ցատայել են սողանքը արգելակելու համար, ինչպես նաև առանձին թեքություններ, որով բնակավայրերից հեռացվել են անձրևաջրերը:

Շրեշ բլուր, Սա մի կանաչապատ արհեստական բլուր է, որը տեղադրված է Էջմիածնից ոչ հեռու, Քասախ գետի ափին: Այն ուներ 3,5 մ բարձրություն, 123 մ տրամագիծ: Ե.Լալայանը գրում է, որ բլուրն իր անվանումը ստացել է տեղանքում ամող շրեշ քույսի անունով: Բլուրի պեղումները կատարվեցին 1913 թ. Այստեղ դրվեցին խաչաձև խանդակներ՝ 1,5 մ

խորությամբ, ուր հայտնաբերվեցին երեք մշակութային շերտեր: 1935 թ. այն հետազոտեց Ե.Բայբուրթյանը և բացահայտեց հուշարձանի ստորին շերտի պատկանելությունը մ.թ.ա. 3-րդ հազ.-ին և այն, որ այստեղ կային կիկլոպյան ամրոցի պատեր:

Մոխրաբլուր: Գտնվում է Էջմիածնից 4 կմ հարավ, Շրեշ բլուրից 7 կմ հեռավորության վրա: Այն հյուսիսից հարավ՝ 250 մ, իսկ արևելքից արևմուտք՝ 160 մ տրամագծով արհեստական բլուր է: 1928 թ. այստեղ այցելելով, Թ.Թորոմանյանը հավաքեց վերգետնյա նյութեր: 1935 թ. Ե. Բայբուրթյանը կատարեց հետախուզական պեղումներ, նշելով, որ Մոխրաբլուրն ունի նույն շերտագրությունը, ինչ որ Շրեշ բլուրը: Այստեղից հավաքվեցին մեծ քանակի խեցեղեն, օջախի պատվանդաններ, քարե գործիքներ: 1943 թ. Ս.Հ.Մարդարյանը նույնպես հավաքեց մեծ քանակի նյութեր, որոնց մեջ կային հետաքրքիր կենդանակերպ /թռչունի/ և մարդակերպ մրջանիկներ: 1970-85 թ.թ. Մոխրաբլուրի սիստեմատիկ պեղումներ կատարվեցին Երևանի պետհամալսարանի արշավախմբի կողմից /ղեկավար՝Գ.Ե.Արեշյան/:

Մոխրաբլուրը հատակագծում հյուսիսից հարավ կողմնորոշված ժվածիր արհեստական բլուր է /հյուսիսից հարավ՝ 250 մ, իսկ արևելքից արևմուտք՝ 160 մ տրամագծով/, բնդգրկում է 3,5հա տարածք: Շրջակայքից այն գտնվում է 10 մ բարձրության վրա: Շերտագրական կտրվածքներից /1970,1975-77 թ. պեղումներ/ պարզվում է, որ Մոխրաբլուրի հնագույն բնակավայրերը առաջացել է բնական, ոչ բարձր բարձունքի վրա, իսկ մշակութային շերտի առավելագույն հզորությունը գերազանցում 9 մ-ից: Պեղումների ընթացքում բացվել են իրար հաջորդող 11 շինարարական հո-



Նկ. 20. Վաղ ջրոնգի դարաշրջան՝ նյութեր Շենգավիթից։

րիզոնները վերաբերում են հելլենիստական ժամանակաշրջանին: Դրանք նախորդ մնացորդներից անջատված չ են անարատ շերտով, որի առկ բացվեց վաղ երկաթեղարի թույլ մշակութային շերտ: Վերջինս նստած է անմիջապես 3-րդ շինարարական հորիզոնի վրա, որ վերաբերում է կուր-արաքսյան մշակույթին՝ վաղ բրոնզե դարին: Մնացած հաջորդական հորիզոնները՝ 3-11, վերաբերում են այն մշակույթի վաղ զարգացած փուլին՝ թվագրվելով 4-րդ հազ. երրորդ քառորդով մինչև 3 հազ. կեսը:

Բնակելի կացարանները /երրորդ հազարամյակի/ կառուցված են հում աղյուսով: Մառորին շինարարական հորիզոններում գերակշռում է հատակագծում կլոր շինություններով մարարապետությունը, իսկ վերինում՝ ուղղանկյուն: Բոլոր քնակելի համալիրներում /11-ից մինչև 3-րդ շինարարական հորիզոններ/ հայտնաբերվել են մեծ քանակությամբ խեցանոթներ, աշխատանքային գործիքներ, աղորիքներ, արորիչներ, սանդղակներ, մանգաղներ, ներդիրներ, կացինների և դաշույների կաղապարներ, պաշտամունքային առարկաներ: Մառորին հորիզոններում գերակշռում են զարդամոտիվներից զուրկ խեցանոթները, մինչդեռ վերին հորիզոններում՝ վաղ բրոնզե դարաշրջանին բնորոշ սև փայլեցված, արտաքինից զարդամոտիվներով հագեցված խեցեղենը: Հարդարումը կատարվել է ակոսի եղանակով: Պաշտամունքային առարկաներից հայտնի են օջախները, զոհարանները, որոնցից շատերն ունեն կենդանակերպ ձևավորում, ինչպես և մանրակրկիտ քանդակներ կանանց, ստվածուհու և կենդանիների պատկերներով:

Իր ծաղկման շրջանում՝ մ.թ.ա. 3-րդ հազ. առաջին կեսին, Մոխրաբլուրը աղյուսե պարսպապատով օղակված քնակավայր-նախաքաղաք էր՝ քնակավայրի կենտրոնական հրապարակի հետ կապվող փողոցներով ,ուր կառուցվել է տաճար: Վերջինս մի քանի կառույցներից բաղկացած աղյուսաշեն կառույց է, որի կենտրոնում վեր է բարձրանում քարերից շարված աշտարակը: Այն ավարտվում է բազալտե մոնոլիտից զոհարանով, որի առջև Մոխրաբլուրի քրմերը զոհաբերության հետ կապված ծիսական արարողություններ են կատարել: Աշտարակի բարձրությունը 6 մ է: Մոխրաբլուրի տաճարը ներկայումս համարվում է նախկին ԽՍՀՄ-ի տարածքում մոնումենտալ մարարապետության ամենահին նմուշը:

Արևիկ: Գտնվում է Արմավիրից դեպի Արևիկ տանող ճանապարհի մոտ /ավելի մոտ Արևիկ գյուղին/: Այն մի արհեստական բլուր է, որը համարյա ոչնչացվել է ճանապարհաշինարարների և գյուղացիների կողմից, որոնք այստեղից երկար ժամանակ հող էին տանում դաշտերը հարստացնելու, պարարտացնելու համար: 1962 թ. այստեղ է.Կ.Խանզադյանը կատարել է հետախուզական աշխատանքներ՝ հավաքելով խեցեղենի հետաքրքիր հավաքածու, պայտաձև հենակներ, քարից և ոսկորից աշխատանքային գործիքներ,

վանակաթից ծքեպներ, խոշոր և մանր անասունների ոսկորներ, ցորենի հատիկներ և այլն:

Դվին: Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի ստորին շերտի պեղումներից 1939-52 թ.թ. հայտնաբերվեցին վաղ բրոնզե ժամանակաշրջանի առարկաներ: 1953 թ. բացվեց հում աղյուսից պատ, որի երկու կողմերում, փոքր տարածության վրա, հայտնաբերվեցին քարե ճակիչներ, ոսկոր, պղնձե ասեղ, մետաղե պայտաձև առարկա, կայծքարից ներդիրներ, ոսկորից իրեր, կավից անիվների մոդելներ, խեցեղեն և այլն:

Նախիջևանի Քյուլ-Թեփե 1-ին: Արդեն վերը հիշատակվել է՝ կապված էնեոլիթյան ժամանակաշրջանի հետ: Այստեղի կուր-արաքսյան մշակութային շերտը տեղադրված է էնեոլիթի և միջին բրոնզե միջև՝ 12,5-18 մ խորությամբ, 3,5-4,5 մ հզորությամբ: Առանձնացվել են 14 շինարարական հորիզոններ, որոնցում բացվել են կլոր հատակագծով 28 կառույց /4-13 մ տրամագծով/, ինչպես նաև կից կառուցված ուղղանկյուն շինություններ: Կառույցների հիմնապատերը շարված են գետաքարերից, որոնց վրա քարձրացվել է կավե շաղախով աղյուսաշարը: Պատերը կավով սվաղված են: Տների կենտրոններում, գետնի մեջ սվաղված բացվել են ծիսական օջախներ: Տնտեսական կարիքների համար օգտագործվել են հորեր: Մի քանի տների պատերին կից կառուցվել են ուղղանկյուն երկմասանի վառարաններ: Պահեստհորերը սովորաբար գտնվում են կացարաններից դուրս: Մի քանի հորիզոններում նկատվում են հրդեհի հետքեր՝ մոխրի շերտի, փայտածխի, այրված գերանների տեսքով: Գտնվել են մեծ քանակությամբ տարբեր ձևի խեցանոթներ, օջախի հենակներ, աղորիքներ, տարբեր քարերից և ոսկորից գործիքներ, կենդանակերպ և մարդակերպ արձանիկներ, ժուլման կաղապարներ և մետաղե առարկաներ՝ մանգաղներ, դանակներ, ասեղներ, ծակիչներ, շքասեղներ և այլն: Փայտածխի ռադիոածխածնային վերլուծության արդյունքներով այդ շերտը թվագրվում է 4880-90 տարի, այսինքն՝ 2930 տարի մ.թ.ա.

Կարաս: Գտնվում է Էրզրումի մոտ: Պեղումների սկզբան պահին իսկ այն արդեն ավերված արհեստական բլուր էր: Բարձրությունը 16 մ է, տրամագիծը՝ 20 մ: Այստեղ դրվեցին երեք շերտագրական փոսիկներ՝ 841 քառակուսի մ ընդհանուր մակերեսով: Հիմնական պեղամասում, /Բ/, միջնադարյան շերտից ներքև, հայտնաբերվեց 15 շինարարական հորիզոն, որոնք դարավանդաձև տեղադրված էին բլրի լանջին: Մի այլ հատվածում՝ 9 մետրանոց մշակութային շերտում, հաստատագրվեցին շինարարական հորիզոններ, որոնցից ստորև կար էնեոլիթյան շերտ: Քարե հիմնապատերը վկայում են, որ բնակատները հատակագծում ուղղանկյուն են՝ 9-45 մ^2 մակերեսով: Ստորին հորիզոնի կացարաններում գտնվել են մեծ քանակի



Աղ. 21. Վաղ բրոնզի դարաշրջան՝ նյութեր Շենգավիթից

առանձնահատուկ կավե պաշտամունքային օջախներ՝ երեք ելուստներով որոնցից յուրաքանչյուրն ուներ ֆալոսաձև տեսք և հիշեցնում էր քարե ֆալոսները, որոնք մեծ քանակությամբ հանդիպում են Հայաստանի և Անդրկովկասի հուշարձաններում՝ սկսած վաղ բրոնզե ժամանակաշրջանից: Օջախների ամեն մի ֆալոս զարդարված է կրկնակի կախված ուղղանախշի ռելեֆային պատկերներով:

Կարազից գտնված նյութերը սև և կարմիր փայլեցրած, հարուստ մոտիվներով հարդարված խեցանոթներ են: Կացարաններում /ստորին հորիզոնում/ քացվել են ցուլի գլուխ հիշեցնող օջախներ մեծ քանակի հենակներ, ինչպես նաև խազազծված զարդամոտիվներով կափարիչներ: Գտնվել են կավե, ոչ մեծ չափի ձիու գլուխ, ոսկորե առարկաներ վանակատե գործիքներ, աղորիքներ: Վերին հորիզոնի շերտերում հանդես են գալիս մետաղից կախ կոթառով կացիններ, դաշույններ, մանգաղներ, զուրգեր և այլն:

Բաքա-դեբվիշ: Գտնվում է Ղազախի մոտ, Աղստև գետի ձախ ափին: Հուշարձանը տեղադրված է երեք բլուրների վրա: Ստորին շերտը պատկանում է էեեուլիթին՝ որը ծածկված է վաղ բրոնզե դարի մշակութային շերտով: Այստեղ դրվեց 600 մ^2 տարածքով պեղամաս՝ 0,6 մ խորությամբ: Նկատվում են մոխրի շերտեր, հում աղյուսի մնացորդներ, սվաղի հետքեր և այլն: Այս շերտից քացվեցին տարբեր նշանակության 25 հորեր: Հորերից մի քանիսը պատերը ամրացված են հում աղյուսի մնացորդներով, կավե սվաղով: Հորերում հայտնաբերվեցին մեծ քանակի խեցեղեն, կենցաղային իրեր, անասունների ոսկորներ, ածխացած հացազգիներ: Հորերից շատերը ստորին մասում լայնանում են: Դրանք, անկասկած, հացահատիկի պահեստ-ամբարներ են; Կան նաև աղքի համար նախատեսված հորեր: Հատկապես հետաքրքիր են օջախ-հորերը, որոնք ունեն գլանի ձև և կարմիր թրծված պատեր: Երկրորդ բլուրի վրա 1956 թ. գտնվեցին մետաղի հալեցման երեք վառարաններ, որոնք ներսից լցված էին մոխրով, խարամով, ածխով՝ վկայելով մետաղի ձուլման մասին:

Հիմնական պեղամասի կենտրոնում քացվեց պատ, որը կրկնակի պարուրաձև նախշով հարդարում ուներ: Գտնված նյութերը ներկայացված են խեցանոթներով, ոճավորված շարժական և անշարժ օջախների քեկորներով, քարե, ոսկրե գործիքներով՝ կացիններ, մուրճեր, աղորիքներ, սանդեր, բրիչի կտորներ, դանակաձև շեղբեր, նետի ծայրեր, զավազանի գլուխներ, ծակիչներ, ասեղներ և մեկ պղնձե ծկնորսական կարթ: Գտնվել են մարդու և կենդանիների կավե մանրակերտեր:

Նորաբաց: Գտնվում է Երևանից հարավ, ներքից Զարբախ և Նորաբաց գյուղերի միջև, երկու իրար մոտ գտնվող բլուրների վրա: Հյուսիսային բլրի վրա պեղվել է 1000 քառ. մ մակերեսով մշակութային շերտ՝ 1 մ հզորությամբ: Օարտարապետական կառույցները կազմում են մեկ շինարա-

քական հորիզոն, որտեղ տակա են վերակառուցման երկու փուլեր: Պեղվել է 8 շինություն: Դրանցից վաղագույնները շարված են հում աղյուսից, իսկ ավելի ուշ շրջանի մի կառույց ունի քարե հզոր հիմնապատ: Մի քանի պատերի հիմքերի մոտ պահպանվել են ավազից և մանր գետաքարերից խոնավացած լիցքեր: Պատերը սվաղված են: Ներքը հատակազծում կլոր են: Այդ կացարաններին կից կառուցվել են օդակող կցակառույցներ, որոնք ընդգրկում են շինության կեսից մինչև երեք քառորդ մասը: Կլոր կացարաններից մեկի կենտրոնում քացվեց կլոր, պաշտամունքային կավե օջախ: Պատի տակ քացվեց երկմասանի ծածկով խոհանոցային վառարան, իսկ երկրորդ օջախը, որը պատրաստված է փոքր կարասի իրանի վերին մասից, ջերմացուցիչի գործառույթն է ունեցել: Մեկ այլ տան պաշտամունքային օջախը քացվել է պատի տակ: Օջախի եզրին գտնվեց ոճավորված ցլակերպ գոտարան, իսկ օջախի մեջ քացվեց ծիսական անոթի մանրակերպ: Գտնվել են քարից և ոսկորից մեծ քանակի աշխատանքային գործիքներ, խեցեղեն, քրոնզե կտորներ, արձան-քանդակներ: Բնակավայրը եզրագծվում էր լայն խանդակով: Մեկ այլ, փոքր չափերի խանդակ քացվեց բնակավայրի տարածքում:

Հարավային բլուրի վրա քացվեցին մեծ քանակի հորեր, որոնցում գտնվեցին գոտարան-սրբարանների մնացորդներ, խեցանոթներ, ածուխ, խրսրի դաշվածքի հետքեր, այրված ոսկորներ:

<u>Ներքաղաքը բնակավայրը:</u> Գտնվում է Երևանի հարավարևմտյան մասում, Հրազդան գետի ձախ ափին, ուր ներկայումս լցվում են արհեստական „Երևանյան ծովի„ ջրերը: Բնակավայրի տարածքը 6 հա է: Այն բաղկացած է հինգ մշակութային շերտերից, որոնցից առորինը /1-ին շերտ/ վերաբերում է էնեոլիթին: Երկրորդը /ներքևից/ իրենից ներկայացնում է 1-ին փաղ քրոնզին վերաբերող հորիզոնը, որը հետազոտողների կողմից թվագրվում է 3000-2700, 2600թ.թ. մ.թ.ա., իսկ հաջորդ հորիզոնները ընդգրկում են 2600-2000 թ.թ. մ.թ.ա. ժամանակահատվածը: Այլ հետազոտողներ /Գ.Ե.Արեշյան/ վաղ քրոնզի դարին վերաբերող չորս շերտերի ամբողջությունը թվագրում են 2800-2400 թթ. մ.թ.ա.:

Բոլոր շերտերում գտնվել են կլոր, 5-6 մ տրամագծով կացարաններ՝ քազմաթիվ կից ուղղանկյուն շինություններով: Կլոր կացարանները գտնվում են իրարից 15-20 մ հեռավորության վրա: Հիմնապատերի շարվածքի համար օգտագործվել են գետաքարեր և տաշված քարաքեկորներ, իսկ ամբողջ պատը քարձրացվել է /28-29 20-40 10 սմ չափերի/ հում աղյուսե շարվածքով: Պատերը դրսից սվաղվել են կավով: Կլոր տները ունեցել են միջանցք-մուտք, իսկ դռան շեմը հաճախ ատիճանաձև է: Հատակները պատված են գետաքարերով, որոնք սվաղվել են կավով: Կլոր կացարանների քաղը կառուցվել է գլխատան սկզբունքով, իսկ ուղղանկյունի-

ներինը՝ հարթ և վերևից ծվաղվել է կավաշաղախով:

Ամեն մի կլոր տան կենտրոնական մասում գտնվել են կավե երեք քարձիններից բաղկացած կլոր պաշտամունքային օջախներ, հարթ, մեծ սալքարեր՝ հավանաբար սյան խարիսխներ, շարժական պաշտամունքային օջախների պայտաձև մանրամասներ, կենդանիներով և մարդկերով արձանիկներ: Բնակավայրից գտնվել են հսկայական քանակի տարբեր խեցանոթներ, քարե գործիքներ, ոսկորից, կավից առարկաներ, մետաղական արտադրանքի մնացորդներ, մետաղյա առարկաներ, կոթառավոր կացնի կաղապար և այլն: Հայտնաբերվել են ահռելի քանակությամբ հացահատիկի մնացորդներ, վայրի և ընտանի կենդանիների ոսկորներ, որը ներկայացնում է երկրագործության անասնապահության և որսորդության զարգացման մակարդակը: Ինչպես նշվեց, Շենգավիթը ամրացված խոշոր բնակավայր էր՝ կառուցված քարձր գետի ափին, գարիթափի վրա: Այն շրջափակված էր հզոր քարից շարված 4 մ լայնքով պարսպապատով, որն ունի աշտարակներ և դեպի գետը տանող ստորգետնյա ուղի: Հարավային կողմում նկատվում են լցված խրամի հետքեր:

Գառնի: Անտիկ շերտերի պեղումների ժամանակ 1,5 մ խորության մեջ բացվեցին վաղ քրոնզեդարի երեք շինարարական հորիզոններից բաղկացած մնացորդներ: Բոլոր հորիզոններում գտնվել են կլոր կացարանների հիմնապատեր՝ շարված հում աղյուսով, քարե հիմքով՝ ներսից և դրսից կավով սվաղված: Կացարանները հատակագծում կլոր են, 6-7 մ տրամագծով, 0,9 մ հաստության պատով: Մուտքի լայնությունը 1 մ է:

Ստորին հորիզոնի կացարանի պատերի պահպանված բարձրությունը տանձին տեղերում հասնում է 1,2 մ: Հատակները հավատարեցվել են խիճով՝ սվաղված հատ հարդախառն շերտով:

Ներսի կողմից, կացարանի պատերին կից կառուցվել են կավե նստարաններ՝ 0,5 մ բարձրությամբ և նույնքան լայնքով: Նման նստարաններ բացվել են Շենգավիթում, Յանիբ-Թեփեում, Կվացխելեթիում: Այդ շինությունները ծառայել են որպես մահճակալ կամ հարթակ՝ ապրանքի համար: Այս շերտերում բացվել է հին կիկլոպյան հիմնապատ՝ 13 մ երկարությամբ, որը հաստատում է, որ Գառնիի հին բնակավայրը ամրացվել է պարսպապատով: Այստեղ հայտնաբերվել են մեծ քանակի խեցեղեն, աղորիքներ, տաղեր, տրորիչներ, ծծիչներ, մանգաղի ներդիրներ, մետաղից մանգաղ, ձկնորսական ցանցի ծանրոց, մետաղյա կեռիկ, մանածագործի դազգահի կախիկ-ծանրոց, իլիկ, ոսկորից ասեղներ, վանակատից շեղբեր, դանակներ և այլն: Գտնվել են զլանաձև կառուցվածքով հալոց-վառարանի հետքեր, փուքս, կաղապար, կախակոթառ, կացնի կաղապար և այլն:

Դարանի ամրոց: Գրականության մեջ հայտնի է Էլառ կամ Էլառ-Դարանի անուններով: Տեղադրված է Աքովյան քաղաքի հարավային մասում՝ 40-50 մ բարձրությամբ խոշոր, հրաբխային ծագում ունեցող ցլրի վրա: Այս ամրոցի պեղումները կատարվել են 1927 թ.՝ Ե.Լալայանի,



Նկ. 22. Վաղ բրոնզի դարաշրջան՝ նյութեր նկ. 1-4, Էջմիածին նկ. 5 Շենգավիթ:

1929 թ.՝ Ծ.Հ.Բայբուրթյանի, 1937 թ.՝ Է.Վ.Խանզադյանի կողմից: Բլուրի գլխին տեղադրված է ամրոցի միջնաբերդը, որն ամրացված է տարբեր ժամանակաշրջանների կիկլոպյան շարվածքի պատերով: Վերին հրապարակը շրջափակում է հին կիկլոպյան պատը, որի մուտքը պաշտպանված է առաջ եկած երկու որմնահեցերով: Այստեղ կատարված պեղումները քացահայտեցին, որ Դարանի ամրոցի ամենավաղ շերտերը պատկանում են վաղ բրոնզե ժամանակաշրջանին:

Վաղ բրոնզի շերտ է հայտնաբերվել բլրի վերնամասում, դաշտավանդների տարածքում: Այսպես, երկու դարավանդների հյուսիսարևելյան մասերում քացվեց վաղ բրոնզի դարի մշակութային շերտ, որտեղից գտնվեցին հացահատիկի մնացորդներ և տնտեսական նշանակության իրեր, օջախներ, խեցեղեն և այլն:

Բլրի հարավային թևի դարավանդներին դրվեցին երկու շերտագրական փոսորակներ: Դրանցից մեկում հայտնաբերվեց երկու շերտ, որտեղ ստորին շերտում քացվեց վաղ բրոնզին վերաբերող շինարարական հորիզոն՝ 1 մ հզորությամբ, կլոր կացարաններով, խեցեղենով և աշխատանքային գործիքներով: Մյուս պեղավայրում քացվեց կիկլոպյան պաշտպանական պարսպապատի հատված:

Պեղված նյութերը հնարավորություն են ընձեռում Դարանի ամրոցը թվագրելու մ.թ.ա. 3-րդ հազարամյակով:

Հառիճի բնակավայրը: Ուսումնասիրվել է Տ.Ա.Խաչատրյանի կողմից: Այն գտնվում է Արթիկի շրջանի Հառիճ գյուղի հարավային ծայրամասում, տուֆի բարձր հրվանդանի վրա՝ հարավից՝ հյուսիսից և արևմուտքից շրջապատված փոր ձորերով: Արևելքից հրվանդանը ատիճանաբար քարձրանալով ձուլված է Արագածի լեռնազանգվածին:

Բնակավայրը ձգվում է արևելքից արևմուտք, որտեղ հստակ ուրվագծվում է երեք դարավանդ՝ ամրացված կիկլոպյան պատերով: Առավել հետաքրքրական է երրորդ դարավանդը, որտեղ տեղադրված է Հառիճի ամրոցի միջնաբերդը: Նավ են պահպանվել ամրոցի կիկլոպյան պատերը, որոնցից մեկը ամրացվել է որմնահեցերով: Առաջին հրվանդանի վրա պեղվել են ուղղանկյուն հատակագծով, տուֆ քարերից շարվածքով մի քանի կացարաններ: Երկրորդ դարավանդի վրա դրվել է շերտագրական փոսորակ, մի քանի քնակարան պեղվել են միջնաբերդում:

Այս տարածքի ընակարաններից հայտնաբերվել են մեծ քանակի խեցեղեն, շարժական օջախներ, ոչ քար պատկերող կավե արձանիկներ, բրոնզե շքասեղ, աղորիքներ, քարից և ոսկորից աշխատանքային գործիքներ, տուֆից կուռքեր:

Առաջին դարավանդի սենյակներից մեկում քացվեց տուֆի մեջ փորված, 0,9 մ խորությամբ հոր, որտեղից գտնվեցին խեցանոթներ և աղորիքներ:

Այստեղ բացվեց քարերից շարված քառանկյունի օջախ:

Երկրորդ պեղամասի պեղումների ժամանակ քնորոշ սև փայլեցված խեցեղենի հետ միասին գտնվեցին գունազարդ ամենների բեկորներ, որոնք հիշեցնում է Նեռզավիթում, Քրահովտում և հատկապես Այգևանի պեղումների ընթացքում ի հայտ բերված պատկերը: Ժայռե ելուստների առկայության պատճառով հետագայում կառուցվելիք շինությունների համար նախկին կառույցների մնացորդները մաքրվել են: Սրա հետ մեկտեղ հեռացվում էին ողջ նյութական մշակույթի նմուշները, որոնց մի շարք օրինակներ հավաքվել են կիրճից:

Կիրճի ստորոտ հատվածների հետախուզական պեղումներից հայտնաբերվել են բացառիկ նյութեր՝ սև փայլեցված խեցանոթներ, վանակատ և բազալտ աշխատանքի գործիքներ, կենդանակերպ և մարդակերպ կավե մանրակերտեր; Հատկապես հետաքրքիր են Հառիճի բնակավայրից հայտնաբերված սայլերի կավե մանրակերտերը, որը ապացուցում է քարշող ուժի օգտագործումը Հին Հայաստանում: Այս բոլոր նյութերը հնարավորություն են տալիս Հառիճի բնակավայրը թվագրելու մ.թ.ա. 2400-2000 թ.թ.:

<u>Կառնուտի բնակավայր:</u> Գտնվում է համանուն գյուղի մոտ գտնվող քարի գագաթին և լանջերին: Իր տեղադրությամբ մոտենում է Հառիճի և Կեթիի բնակավայրերին, որոնք նույնպես դարավանդային հատակագծման սկզբունքներով են կառուցվել: Այստեղից 1938 թ. նյութերը բերվեցին Հուշարձանների պահպանության կոմիտեի ձեռնարկած հետազոտությունների շնորհիվ: 1980-ական թվականներին պեղումներ է կատարել Ռ.Ա.Բաղալյանը: Արդյունքում պարզվեց, որ Կառնուտի բնակավայրը կառուցվել է հատակագծում ուղղանկյուն շինություններով, որոնց պատերը քարաշար են: Բնակելիները բաժանվում են երկու տիպի: Առաջին տիպին վերաբերվում են 1 սենյականոցները՝ 5,5-5,1 մ չափերով: Կենտրոնում դրվում էր հողի մեջ թաղված կավե օջախ, որի վրա տեղադրված էր պայտաձև հենակ՝ զարդարված երկու խոյերի խոշոր արձաններով: Օջախի դիմաց, կացարանի անկյունում, դրված էին չորս խոշոր անոթներ: Այսպիսի համակցությունը օջախի և հացահատիկի անոթների միջև վկայում է տան օջախի պաշտամունքի մասին: Երկրորդ տիպը ներկայացված է 3 սենյականոց համալիրներից /յուրաքանչյուրի մակերեսը՝ 3-9 քառ. մ/: Ամեն մի կացարան ուներ առանձին մուտք: Պեղումներից հայտնաբերվել են վանակատ աղչուկավոր նետասլաքներ, ձուլման փոքրիկ կաղապար, գծային նախշազարդումով մեծ թվով խեցեղեն: Նյութերի քննությունը հնարավորություն է տալիս բնակավայրը թվագրել մ.թ.ա. 26-25 դ.դ.:

<u>Դամբարանադաշտեր և դամբարանները?</u> Բացի բնակավայրերից, Հայաստանում պեղվել են նաև վաղ բրոնզե դարի դամբարաններ:



Նկ. 23. Վաղ բրոնզի դարաշրջան՝ նյութեր Հարիճից, Լենինականից

Էլաղ-Դարանի դամբարանադաշտ: Գտնվում է հանքի տարածքում: Այստեղ պեղվել է 21 դամբարան, որոնք ունեն տարբեր ձև և կառուցվածք: Առաջին տիպին են պատկանում պայտաձև հատակագծով քարարկղերը՝ կառուցված ոչ մեծ չափի քարերից, ծածկված երկու-երեք ծածկասալերով: Հանգուցյալը պառկած է ձախ կողքի վրա, կծկված, գլխով ուղղված հարավ:

Դամբարանների երկրորդ տիպը ներկայացված է քարակ սալերից, կառուցված սալարկղերով, որոնք կողմնորոշված են հյուսիսից հարավ կամ հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք և ծածկված են 2-4 քարե սալերով: Ննջեցյալը պառկած է կծկված վերջույթներով, ձախ կողքի վրա:

Երրորդ տիպին պատկանում են հիմնահողային պատերով ուղղանկյուն ձևի դամբարանները, ննջեցյալը զտնվել է նման դիրքով:

Ներտազրորեն հիմնահողային դամբարանները մեծ մասամբ 0,3-0,5 մ-ով խորն են քարարկղերից:

Այստեղից զտնված խեցանոթների ձևատիպաբանական քննությունը հնարավորություն է տալիս Էլաղի դամբարանները վերագրելու երկու ժամանակագրական փուլերի՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 1-ին և 2-րդ կեսերին: Այս թվագրմանը չի հակասում նաև բրոնզից որոշակի տիպերի դաշույնների, դանակների, տեգի ծայրերի և նետասլաքների, վանակատ զորձիքների, զարդերի և այլ զտածոների առկայության փաստը:

Շենգավիթի դամբարանադաշտ: Գտնվում է քնակավայրի պարիսպներից դուրս: Դրանք ուղղանկյունաձև խոշոր դամբարաններ են՝ կուլեկտիվ թաղումներով, մինչև մի քանի տասնյակ ննջեցյալներով: Ամեն մի թաղված կմախքի մոտ զտնվել են կավե սափորներ, զենք կամ լայն օգտագործման քարե տարբեր առարկաներ՝ սերդուլիկից և հասպիսից հուլունքներ, վանակատից կամ կայծքարից նետի ծայրեր, քարե զուրզեր, պղնձե զարդեր: Կավե սափորների վրայի հարուստ երկրաչափական նախշազարդերը, ըստ հեռազոտողի, հիշեցնում են նույն քնակավայրից, Շրնշ գյուղից, Մոխրաքլուրից հայտնի խեցեղենը, որը հնարավորություն է ընձեռում այն թվագրելու մ.թ.ա. 3-րդ հազ. 1-ին կեսով:

Ստեփանակերտի դամբարանաբլուրները: Գտնվում են Ստեփանակերտի հյուսիսային ծայրամասում: Պեղվել են Յա.Ի.Գումմելի և Լ.Ի.Թաշչյանի կողմից: Դրանք զտնվում են իրարից ոչ այնքան հեռու: Բոլոր դամբարանաբլուրներն ունեն ոչ բարձր /մինչև 1,5 մ/ թումբ, 24 մ տրամագիծ և հիմնահողային խուց:

Ստեփանակերտի դամբարանաբլուրներում հետաքրքիր են հանգուցյալներին ծածկող հարթակները, որոնք տոփանված հողաշերտեր են՝ 4,5 մ տրամագծով: Ննջեցյալները նույնպես պառկած էին կլոր հատակաձևի հարթակի վրա: Կմախքների քանակը մինչև 36 է: Իրենց չափերով և ձևով հարթակ-

ները հիշեցնում են վերը նկարագրված կլոր կացարանները: Ավերված ստորին հարթակի վրա գտնվեցին տղամարդու և երեխաների պառկած, նրստած կողքի կծկված և ձգված 36 դիակներ: Կենտրոնում, մեջքին պառկած տղամարդու դիակի հետ հայտնաբերվեցին գուրզ, պղնձե դանակի շեղբ, երկու քարե տրորիչներ:

Նույն դամբարանի հյուսիսարևմտյան անկյունում բացվեցին քարե 6 նետի սլաքներ և 5 ոսկրե իլիկի գլուխներ, իսկ հյուսիսային մասում՝ հուլունքների երևսպատման 8 ոսկյա թիթեղներ: Բացի այս, հայտնաբերվել են 22 ճզմված կավանոթներ, որոնք ձևված էին զորձվածքային հիմքի վրա: Մեկ այլ, ավելի փոքր դամբարանաբլուրը նույնպես եռաշերտ էր: Այն ամփոփում էր կոլեկտիվ թաղում, որից պահպանված էր մեկ դիակ՝ պառկած խիստ կծկված վիճակում: Ննջեցյալի գլխի և ոտքերի մոտ բացվեցին այծի կմախք, բրոնզե շեղբ, կայծքարե 5 նետասլաք, ոսկե թիթեղից կրծքազարդ, քարե ծեծիչ, վանակատ 30 ձլեկ, մեկ միջուկ և զորձվածքային հիմքն վրա ձևված խեցանոթների բեկորներ:

Ստեփանակերտի դամբարանաբլուրներում դիամաղման ծեսը միատեսակ չէ: Այստեղ հանդիպում են դիամասնատումով թաղումներ: Դամբարանում պեղվել են կամ գլուխը, կամ կմախքը՝ առանց գանգի: Վաղ բրոնզե դամբարաններ գտնվել են նաև Բաքաղերվիշում: Այս կոլեկտիվ թաղումները շրջազծված են քարաշար կրոմլեխով: Տարբեր կողմնորոշումներ ունեցող կմախքները պառկած են կծկված դիրքում, աջ կողքի վրա:

Հառիսի դամբարանադաշտ: Սկսվում է անմիջապես քնակավայրի եզրից՝ տարածվելով տարբեր ուղղություններով: Այստեղ դամբարանները տուֆե սալերով ծածկված հողե թմբից կազմված ծվածև, առանց հստակ ուրվագծվող անկյունների հիմնահողեր են: Դամբարաններում թաղված է մեկական կմախք: Ուղեկցող նյութը առանց բացառության շաղ է տրված խցում, ջարդված վիճակով: Մեկ դամբարանից գտնվել է նաև ոսկրե իլիկ և կոթառով դաշույն:

Առանձնանում են Հառիսի դոլմենաձև դամբարանները: Արտաքին հատկանիշներով դրանք ոչնչով չեն տարբերվում Հառիսի սովորական թաղումներից: Դրանց նեքքին չափերն են՝ 2,6 մ երկարություն, 1,9 մ լայնք, 0,9-1 մ խորություն: Կողային և հետևի պատերը կազմված են երկու զույգ սալերից: Ծածկը նույնպես բաղկացած է երկու սալից: Առջևի պատը, որի մեջ բացվում է մուտքը, ուղղված է արևմուտք, այն ունի երկու սալեր, որոնց միջև թողնված է նեղ անցք: Մուտքը արտաքինից ծածկված է երկու սալերով: Այն ունի շեմ՝ կազմված երկու սալերից: Խցի մեջ կա ոչ բարձր /46 սմ/ հողե մահիճ, որի վրա պառկած էր հանգուցյալը,



Նկ. 24. Վաղ բրոնզի դարաշրջան՝ խեցեղեն Հառիճից:

և կային կենցաղային սպասքի քեկորներ: Դամբարանի մուտքի առջև կատարվել է զոհաբերություն, որի մասին վկայում են խեցեղենի և խոշոր եղջերավոր անասունի ոսկորների մնացորդները: Հարիճի դամբարանները; ինչպես և բնակավայրը, թվագրվում են մ.թ.ա. 3-րդ հազ. երկրորդ կեսով:

Ջողազի հուշարձանախմբի Մեյդաններ դամբարանադաշտ: Գտնվել են հիանալի շրջանի Բերքաբեր գյուղի մոտ գտնվող Մեյդաններ վայրում, Ջողազի ջրամբարի ոչ ափին: Պեղվել են Գ.Ե.Արեշյանը և Հ.Ե.Սիմոնյանը: Բացվել են երեք դամբարաններ: Դամբարան նո. 2 և նո. 3-ը ավերված են: Դրանք բլրալանջի մեջ փորված ուղղանկյուն հատակագծով կառույցներ են, որոնք շարված են խոշոր գլաքարերից և քարաքեկորներից: Հավանաբար դրանք գերանածածկ են եղել: Նո. 2 դամբարանում գտնվել են շուրջ 50 ննջեցյալների մնացորդներ: Ուղեկցող նյութը նույն չափով է՝ անոթներ, բրոնզե զարդեր և շքասեղներ՝ պարուրաձև գլխիկով: Հափազանց հետաքրքիր է այստեղ հայտնաբերված կավե կաղապարը՝ նախատեսված կոնի ձև ունեցող առարկաներ ձուլելու համար: Մեյդանների դամբարանները տոհմական թաղումներ էին և վերաբերում են շենգավիթյան /կուր-արաքսյան/ մշակույթի ուշ փուլին՝ թվագրվելով 26-25 -րդ դ.դ. մ.թ.ա.:

Սիստեմատիկ պեղումներով և հետախուզական աշխատանքներով ուսումնասիրված վաղ բրոնզեդարի շենգավիթյան /կուր-արաքսյան/ մշակույթի բազմաթիվ բնակավայրեր ներկայացնում են հարուստ շինարարական մշակույթ, որը դրսևորում է էնեոլիթյան որոշ ավանդույթների զարգացում: Ժառանգականությունը դիտվում է բնակարանաշինության ասպարեզում էնեոլիթյան կլոր հատակագծի պահպանումը: Սրանց հետ մեկտեղ կուր-արաքսյան մշակույթի ժամանակաշրջանում առաջ են գալիս ուղղանկյուն կացարաններ, որը մի քանի հետազոտողների հնարավորություն է տալիս տեսնելու դրանց առաջացման մեջ Միջերկրականի կամ Հյուսիսային Սիրիայի և Միջագետքի ազդեցությունը: Այս ժամանակի բնակավայրերը, ինչպես նշվեց, տարածված են ամենուր՝ հարթավայրերում, լեռնային շրջաններում: Դաշտավայրերում, գետերի ափերին դրանք մշակութային նստվածքներից կազմված արհեստական բլուր-բնակավայրեր են, իսկ լեռնային և նախալեռնային շրջաններում կառուցվել են դարավանդների, հրվանդանների, բլրագագաթների և լանջերի վրա, ուր բնակավայրերն ունեն համեմատաբար պակաս հզորությամբ մշակութային շերտեր: Այս բնակավայրերը գոյատևում են փոքր բնակատեղիների ձևով, բայց կան և խոշորները / Շենգավիթ, Հարիճ, Ամիրանի գորա, Դարանի և այլն/, որոնք տեղանքի նկատմամբ իշխող դիրք ունեն օղակաձև պաշտպանական պարիսպներով: Վերջին հանգամանքը արտահայտված է մեծ քանակի ցորենի և այլ պաշարների մթերմամբ,

անասունների պահպանմամբ:

Այս ժամանակաշրջանի բնակավայրերի կառուցապատումը հոծ է, երբեմն՝ բլջաձև /Շենգավիթ/: Երբեմն էլ տեղանքը նախապատրաստվել է շինարարության համար. հարթեցվել են շինարարական հրապարակները, դրվել են հենապատեր, փորվել են դարավանդներ կամ ջրահեռացման խանդակներ: Բնակավայրերի կենտրոնական մասում թողնվում է ազատ հրապարակ՝ հավաքների և անասունների համար: Որպես շինանյութ օգտագործվել են կավը, հում աղյուսը, փայտը, հյուսված ցյուղերը: Լայնորեն օգտագործվել է քարը; Պատերի հաստությունը հասնում է 0,6-1 մ: Կլոր կառույցների միջին տարածքը կազմում է 30-40 մ^2, բայց կան նաև փոքր՝ 10 մ^2 և չափազանց մեծ՝ 112 մ^2 հասնող տներ: Ուղղանկյուն սենյակներն ունեն տարբեր՝ 9-ից մինչև 109 մ^2 մակերես:

Կլոր տներն ունեցել են կեղծ թաղակապ՝ զանգաձև, հարթ կամ զբլխատան կառուցվածք ունեցող քրզաձև ծածկ: Կլոր կացարաններում /երբեմն նաև ուղղանկյուններում/ եղել են խոշոր կավե օջախներ, որոնք հարդարված են ցուլի գլուխ հիշեցնող ելուստներով, Ֆալոսներով և այլն, որոնց վերագրվել է կրակի պահպանման մոգական նշանակություն, ամբողջականության և հաջողության խորհուրդը՝ ապահովելով ընտանիքը զոհարաններով, պտղաբերության կուլտով և այլն, որոնց շուրջ անցկացվում էին կոնկրետ արարողություններ, այդ են վկայում այստեղ գտնված կենդանակերպ և մարդակերպ մանրակերտներ: Կլոր կացարանները, բացի օջախներից, ունեն նաև այլ տարբերակիչ գծեր՝ ոչ մեծ կից կառույցներ, քարե շեմով դռներ, նստարաններ, լավ, ողորկ սվաղված հատակներ: Դրանք վկայում են, որ կլոր կացարանները նախատեսված չէին բնակվելու համար: Այստեղ հայտնաբերված ե մեծ քանակի պաշտպամունքային գոծոներ թույլ են տալիս ենթադրելու, որ կլոր կառույցները սրբարաններ էին՝ տեղադրված բազմասենյակ տան, շենքի մեջ: Բացի այդ գտածոներից կան քարե գնդակներ, քարե կենցաղային իրեր, ոսկրե և հատկապես խեցեղենից պատրաստված տարկաներ, որոնք վկայում են կլոր կացարանների ոչ միայն սրբարան, այլև տնտեսական քնույթի կառույց լինելու մասին:

Վաղ բրոնզի ժամանակաշրջանում բացառիկ դեր է խաղում երկրագործական տնտեսաձևը, որը մեծ զարգացման է հասել, երբ յուրացվում էին ցանքսի համար պիտանի համարյա բոլոր հողակտորները: Այդ փաստը շատ լավ հաստատված է Հայաստանում և Անդրկովկասում: Այդ է վկայում հուշարձանների խիստ կուտակումը գերիի դաշտավայրերում, գետերի ափերին, ինչպես նաև նախալեռնային շրջաններում: Ցանված բերքը լեռնային և անտառային շրջաններում մեծ մասամբ հավաքվում էր մի քանի անգամ, որից հետո այդ տարածքը լքվում էր, և ուժասպառ հողակտորները փոխա-



Նկ. 25. Վաղ քրոնզի դարաշրջան՝ խեցեղեն Հառիճից:

րինվում էին նոր տարածքներով: Այստեղ սարերից հոսող ջրերի օգնությամբ ոռոգվում էին հողակտորների հիմնական տարածքները՝ գետն ի վար: Դրա համար բավական էր ոչ մեծ չափերի ամբարների կամ ակոսների անցկացումը, որով ջուրը կարելի էր հասցնել նպատակին: Առավել դժվար էր այդ գործի կազմակերպումը Արարատյան դաշտավայրում, Մուշի տարածքում, Մանանուլի անտառոտ շրջաններում և այլուր, որտեղ արհեստական ոռոգման խիստ կարիք կար, քանի որ տեղումները բավարար չէին, և բնակիչները պիտի մեծ աշխատանք կատարեն ոռոգիչ համակարգ կառուցելու համար, առանց որի վերի հիշյալ բնակավայրերը չէին կարող գոյատևել մի քանի հարյուր տարի, այն էլ սկսած էնեոլիթյան դարաշրջանից: Բացի այդ ջրանցքների առկայության մասին պարզ ենթադրությունից, Անդրկովկասում, դեռևս էնեոլիթյան ժամանակաշրջանից հայտնի են տարբեր խանդակներ՝ Սրուխլո, Մոխրաբլուր, Արարատյան դաշտավայր: Երկրագործության զարգացման մասին վկայում են նաև խեցեղեն հավաքածուները, սայլերի մանրակերտերը՝ ըստ սած մ.թ.ա. 4-րդ հազ. վերջից, անիվավոր փոխադրամիջոցների կիրառումը, քաշող ուժի լծկան ցուլեցով առկայությունը և այլ փաստեր:

Անիվավոր փոխադրամիջոցների կիրառումը լայն հնարավորություն է տալիս հեռավոր վայրերից դեպի բնակավայրերը բերել հավաքված բերքը: Քաշող ուժի կիրառումը /ցուլեր, եզներ/ հնարավորություն տվեց նաև անցնելու քրիչագործությունից պարզունակ արորի կիրառմանը: Հետաքրքիր է, որ Վրաստանում՝ Կվացխելերի բնակավայրում, գտնվել է եղջյուրից պատրաստված փորող գործիք՝ արորի նման, որը, սակայն, չէր կարող խոր ակոս թանել: Ըստ երևույթին, դրա միջոցով խազվում էին ոչ խոր ակոսներ, որոնք հետագայում նորից փորվում էին քրիչի միջոցով, ինչը որ հաստատվել է Շումերում: Դրանից հետո ձեռքով կատարվում էր ցանքի աշխատանքը, որը վկայակոչված է ազգագրական նյութերով:

Վաղ բրոնզի բնակավայրերում հանդիպում են նաև վանակատ, ծկայծքարե մանգաղի մեծ քանակությամբ ներդիրներ, հնձելու համար նախատեսված գործիքների առանձին հատվածներ: Այս տիպի գործիքները շատ շուտ էին շարքից դուրս գալիս, իսկ դրանց անհրաժեշտությունը շատ էր: Զարմանալի չէ, որ մեծաղից առաջին գործիքները Հայաստանում և Անդրկովկասում մանգաղներն են, որոնց օրինակները հայտնաբերվել են Նախիջևանի Ջյուլթեփեում, Գառնիում, Իգդաշատ գորայում և Կարագում:

Այս դարաշրջանի մի շարք բնակավայրերում՝ Շենգավիթ, Էլար, Նախիջևանի Ջյուլթեփե, Բաքա դերվիշ և այլն, հանդիպում են հնաքուսաքանական գտածոներ՝ ածխացած ցորենի, գարու հատիկների տեսքով, ինչպես նաև կորեկ, ոսպ, վուշ: Ելնելով սրանից, ենթադրվում է, որ այստեղ բուծվել են կլորահատիկ ամուր հացազգիներ և թույլ-փափուկ թեփուկավոր ցորեն, վեցաշար կորեկ և գարի: Այս տեսակները պահպանվել են հորերում խրձերով, որոնց հայտնաբերումը ցորենի, գարու, կորեկի և

այլնի հետ վկայում է դրանց համախառն ցանքսի մասին:

Որոշակիորեն ասել, թե ինչպես էին աղում հացահատիկը, դժվար է: Որոշ ուսումնասիրողներ գտնում են, որ այն տրորվել է, քովվել, հետո մահակով ծեծվել, ընդ որում մարդը կարող էր մահակով ծեծել 3-4 փութ ցորեն: Միևնույն ժամանակ Անդրկովկասում /Խիզանաթ գորա/ եղել է ծեծելու արդյունավետ մեթոդ՝ կապված քարշող ուժի և լայն տախտակի օգտագործման հետ՝ տրորելու համար: Անկասկած, երկրագործական տարբեր փուլերում քարշող ուժի կիրառումը և մետաղե մանգաղների օգտագործումը նպաստեցին երկրագործության զարգացմանը, որը տվյալ փուլում Հայաստանի կուր-արաքսյան ժամանակաշրջանի ցեղերի տնտեսական կյանքում առաջավոր քնազավառ էր:

Ցորենի հետագա մշակման ժամանակ հատիկները մի քիչ քովվել և տրորվել են աղորիքներով: Բնակավայրերից մեծ քանակությամբ աղորիքների գտնվելու փաստը վկայում է, որ ամեն մի ընտանիք տվյալ օրվա համար անհրաժեշտ հացահատիկը կարող էր աղալ իր ուժերով: ԿմացխելեքիթՒ գտնված լավ աղացած ցորենի ալյուրի առկայությունը խոսում է այն մասին, որ կար հաց թխելու հնարավորություն:

Երկրագործությանը զուգընթաց զարգանում էր անասնապահական տնտեսությունը՝ պահպանելով էնեոլիթյան ավանդույթները. ոսկրաբանական նյութում տոկոսային հարաբերությամբ գերակշռում են խոշոր եղջերավոր անասունների ոսկորները: Այս երևույթը բնորոշ է դաշտավայրային նախալեռնային շրջանների: Այսպես, խոշոր եղջերավոր անասունները մեծ տոկոս են կազմում այնպիսի հուշարձաններում, ինչպիսիք են Թառավորանիստը, Քոսի մոթերը, Մեծամորը, Շիրակի ստորին գոտու հուշարձաններում /Կառնուտ, Շիրակավան, Քեթի/, Կոտայքում, Հյուսիսարևելյան Հայաստանում, Տաշիր Զորագեղում և այլն: Նման պատկեր նկատվում է Անդրկովկասի այլ հուշարձաններում՝ Իլթո, Ելբակեթի և այլն: Շենգավիթում խոշոր և մանր եղջերավոր անասունների հարաբերակցությունը կազմում է 1:2 /720-1573/:

Խոշոր եղջերավոր անասունների քանակական մեծությունը նկատմամբ բացատրվում է առաջին հերթին նստակյաց-երկրագործական սաձևերի առկայությամբ ողջ Անդրկովկասում և Հայաստանում: Դրա խթանիչ գործոն էր հատկապես քարշող ուժի կիրառումը: Արդյունքում լայն զարգացման հասան կաշեգործությունը, մսի և կթի ստացումը երկրագործության համար կարևոր էր սայլերի և անիվավոր փոխադրամեջոցների ստեղծումը: Խոշոր եղջերավոր անասնապահության նախալեռնային բնակավայրերում, իսկ ավելի ուշ /մ.թ.ա. 3-րդ հազարամյակից/ հարթավայրերում մեծացավ մանր եղջերավոր անասունների քանակը՝ հատատելով արածովի անասնապահական ձևի գերակշռության պատճառով յուրացվեցին Հայաստանի և Կովկասի բարձրալեռնային



Նկ. 26. Վաղ բրոնզի դարաշրջան՝ խցեղեն Հառիճից։

շրջանները:

Մի քանի , մասնավորապես անտառային շրջաններում զարգանում է խոզաբուծությունը: Նման երևույթը առկա է նաև Արևելյան Վրաստանում և Հյուսիսային Կովկասում: Սակայն մանր եղջերավոր անասունների քանակական մեծացումով կանգ չառավ խոշորների քուծումը: Այս ժամանակ հարաբերությունը համարյա անփոփոխ էր՝ 1:2 կամ 1:3-ի: Սակայն այս փաստը խոսում է խոշոր եղջերավոր անասունների առավելության մասին, քանի որ մանր եղջերավոր անասունների որակական առավելության համար անհրաժեշտ է 1:5 հարաբերությունը, իսկ որոշ հետազոտողների կարծիքով՝ 1:7: Ավելին, խոշոր եղջերավոր անասունները պահպանում են իրենց առաջատար դերը անասնապահական տնտեսությունում: Սրա հիման վրա կարելի է նշել, որ Հայաստանում չկային զուտ անասնապահ ցեղեր: Հետևաբար խոշոր եղջերավոր անասունների առկայությունը Հայաստանում և Անդրկովկասի բնիկների մոտ ոչ թե կոնկրետ պատմական զարգացման արդյունք էր այս ընազավառում, այլ կացության՝ թելադրված բնակլիմայական պայմաններով: Մանր եղջերավոր անասունների հատկապես ոչխարաբուծության զարգացումը թելադրում էր նոր տարածությունների յուրացում, որը նպաստեց անասնապահության հետագա առավել զարգացմանը՝ հնարավոր է դարձնելով հոտի մեծացումը: Սրա հետ մեկտեղ այս տնտեսաձևի ինտենսիվ զարգացումը բնականորեն հանգեցրեց հարստության կուտակմանը առանձին ընտանիքների մոտ և զուլքային անհավասարության առաջացմանը: Վերջինս իր հերթին հենք հանդիսացավ համայնքի սոցիալական շերտավորման համար:

Կուր-արաքսյան մշակույթի մի շարք հնավայրերում՝ Շենգավիթ, Կարազ, Թազավորանիստ, Մոխրաբլուր, Էլար, Մեծամոր և այլն, գտնվել են ձիու ոսկորներ, որի ընտանեացումը, կատարվել էր դեռևս էնեոլիթյան դարաշրջանում: Խոշոր և մանր եղջերավոր անասունների ոսկորներից հետո, քանակական առումով երրորդ տեղն են զբաղում ձիու ոսկորների մնացորդները; Բացի այն, որ ձին հեծվել է, օգտագործվել է նաև վերջինիս միսն ու կաթը:

Ձիաբուծությունը առավել զարգացման հասավ լեռնային շրջաններում: Հետաքրքիր է Ի.Մ.Դյակոնովի ենթադրությունն այն մասին, թե հին ժամանակներում Հայաստանի բնիկների ռազմական զորքի համար հեծելազորի ձիեր էին բերվում Հայաստանի արևելյան, Ուրմիայի, Հյուսիսային Իրանի /Պարսկահայք/ և այլ լեռնային շրջաններից, որն ըստ էության, համապատասխանում է կուր-արաքսյան մշակույթի ընդգրկման սահմաններին:

Վաղ բրոնզի դարաշրջանում տնտեսության քուռն զարգացմանը զուգընթաց բացառիկ զարգացման հասան նաև տարբեր արհեստներ, որոնց մեջ հիմնական տեղ էին գրավում մետաղամշակումն ու մետաղի ձուլումը:













Նկ. 27. Վաղ քրոնզի դարաշրջան՝ խեցեղեն Մեծամորից:

Արդեն 4-րդ հազ. վերջին, 3-րդ հազ. սկզբին Հայկական լեռնաշխարհում ստեղծվեցին բոլոր նախադրյալները մետաղագործության բուռն զարգացման համար, որին նպաստում էին տեղական հարուստ հանքային առկայությունը և Հին Արևելքի երկրների հետ կապը, ուր մետաղագործության արժատները թվագրվում են մ.թ.ա. 8-6-րդ հազ. /Զաթալ հույուկ, Հաջիլար, Հոյունու թեփեսին՝ Հայկական լեռնաշխարհի հարավում/, իսկ դրանց բուն ծաղկման շրջանը համապատասխանում է մ.թ.ա. 4-րդ հազ.:

Հայաստանի և Անդրկովկասի հուշարձաններում հայտնի մետաղե առարկաների մեծ քանակի հայտնաբերումը, ինչպիսիք են ծուլման կաղապարները, ապացուցում են, որ այստեղ ցեղային միությունները 3-րդ հազ. տիրապետում էին մետաղագործական հմտություններին՝ կապված պղնձի մշակման հետ: Սրա պատճառներն են՝ 1/ պղինձը կոփման է ենթարկվում հեշտությամբ, 2/ տաքացման պրոցեսում վերանում է նրա առաձգականությունը, 3/ պղինձը հալվում է և կարող է լցվել կաղապարների մեջ, 4/ մետաղը կարող է ստացվել հանքաքարից՝ ուժեղ տաքացման միջոցով ածուխի հետ խառնվելով, այսինքն ծուլման ճանապարհով:

Կովկասում հայտնի բոլոր հին մետաղե իրերի սպեկտրալ վերլուծությունը հնարավորություն է տալիս հաստատելու, որ դրանք մաքուր մետաղից չեն, այլ արհեստական խառնուրդից՝ մկնդեղային-պղնձից, որից ստացվում է բրոնզ, չնայած առանձին առարկաներ պատրաստվել են բարձր հագեցվածության նիկելից, որը մի քանի հետազոտողներ համարում են ներմուծված, բերովի:

Հատկանշական է, որ մետաղական շատ զտածոներ և կաղապարներ գտնվել են մետաղի հանքավայրերից զուրկ շրջաններում, որը վառ ապացույցն է այն բանի, որ մ.թ.ա. 3-րդ հազ. վարպետ մետաղագործներն արդեն աշխատում էին բերված մետաղի հետ, կամ բերված հումքով, երբեմն կատարելով կրկնակի հալեցում: Հնագույն մետաղագործության ուսումնասիրման գործում մեծ հետաքրքրություն են ներկայացնում առանձին երեք մետաղագործական հալոց-վառարանները՝ պեղված կուր-արաքսյան մշակույթին պատկանող հուշարձաններից Բաքու դերվիշում. դրանք գետնափոր, տարբեր հատակագծեր ունեցող հորեր են: Վառարանի վերգետնյա մասերը չեն պահպանվել: Երկուսում հաստատվել են փուքսի առանձին հատվածներ, մասնավորապես՝ օդամղիչ անցքը: Պատերը, հատակը ծածկված են և ունեն կարմիր-աղյուսագույն մակերես: Դրանց մեջ և շրջակայքում հայտնաբերվել են արտադրական թափոններ և խարամ: Հաստատված է, որ այստեղ կատարվել է պատրաստման ողջ պրոցեսը՝ հումքի մշակումից մինչև պատրաստի իրերի ստացումը, որի մասին վկայում են այստեղ գտնված կավե առարկաների, փոսերի ծայրախողովակների մնացորդները: Ստացվել են գլանաձև հովհարներ,

հալոցներ, խարամ և մետաղի մնացորդներ:

Նոյեմբերյանի Ջաղացի քար բնակավայրում հայտնաբերվել են նմանաձև վառարան-հնոց, փողերքի մնացորդներ:

Նախիջևանի Քյուլ թեփեում բացվել են ինչպես մետաղյա շլաքի, այնպես էլ քրոնզե առարկաների մնացորդներ, կաղապարներ: Նույնը կարելի է ասել նաև Շենգավիթի, Գյոյ թեփեի, Յանիերթեփեի, Կվացխելեքիի, Ամիրանիս գորայի և այլ բնակավայրերի մասին:

Բացի մետաղագործական արհեստանոցներից, կուր-արաքսյան հուշարձաններում գտնվել են մի քանի հարյուր մետաղե իրեր. գործիքների, զենքերի և զարդերի հիմնական տիպերի տեսակները, որոնց մեջ կան առաջավոր ասիական ազդեցության նմուշներ, մի քանի հարյուրամյակների ընթացքում կատարելագործվում են ստանալով տեղական առանձնահատկություններ: Տեղացի մետաղագործների հմտությունները և փորձը ժառանգվել են սերնդից սերունդ՝ պահպանելով մասնագիտական գաղտնիքները: Այս մետաղե զտածոների /կացիններ, նիզակի ծայրեր, դաշույներ, զարդեր/ ժամանակը և բնույթը որոշելու համար մեծ նշանակություն ունի իրերի հայտնաբերումը միշտ թվագրվող բնակավայրերի ծորիզոններում: Այս առարկաները բաժանվում են հետևյալ խմբերի:

Կացինները: Հայաստանում և Անդրկովկասում գտնված վաղ քրոնզեդարի կացինները բաժանվում են երեք խմբի, որոնք ծուլվել են քարե կամ կավե երկկողմանի կաղապարների մեջ, հետագայում ենթարկվելով կրկնակի մշակման՝ հղկման:

Առաջին խումբը ներկայացնում են արխայիկ ականջավոր կացինները, որոնք ունեն սեպի ձև: Դրանք հիմնականում գտնվել են պատահականորեն՝ Լենինականում, Էջմիածնում, Երևանի մոտ գտնվող գանձերի խմբում, Իգդիրում, Կուլբակբիում, Յաբլուզում, ԶազԷՍ և Ավանեթիայում, ուր ունեն քիչ կորացող աշխատող մաս և քիչ կախված ուսեր: Պղնձե ականջավոր կացինները հանդես են գալիս արդեն մ.թ.ա. 4-րդ հազ՝. ընդօրինակելով քարե կացիններին: Միջագետքում, ինչպես նաև Ուրում, գտնվել են սրանց մանրակերտները: Հետազոտողներից ոմանք գտնում են, որ այս տիպի կացինները ձևավորվել են Իրանում: Սրանց առաջավորասիական ծագման մասին է խոսում պղնձե-նիկելային խառնուրդը, որը առկա է նաև Մայկոպի մշակույթի ականջավոր կացիններում, որոնք Կովկաս են թափանցել Անդրկովկասով:

Երրորդ հազարամյակի երկրորդ կեսին հանդես են գալիս կացինների երկու այլ խմբեր՝ կախակոթաթ և խողովակակոթաթ, որոնք ունեն նուրբ, մանգաղաձև թեքված աշխատող մաս: Այսպիսի կացիններ գտնվել են Լենինականի, Սևանի, Այրումի, Լորուտի, Սուրմալուի, Ղարսի մարզի, Արևմտ-

յան Վրաստանի /Սաչխերե, Էշերի, ծիաթուրի և Հարավային Օսեթիա/ պեղումներից, իսկ Հաղիսի քնակավայրում հայտնաբերվել են խողովակակոթաղ կացինների մանրակերտեր:

Այս կացիններին հարում են, այսպես կոչված, կտուցի ձև ունեցող տարկաները, որոնք սեպաձև թույլ թեքությամբ կամ ուղիղ կացինների և ուսի մասից ձգված գործիքների կոմբինացիան են: Նման կացիներ հատնի են Լենինականի, Ալավերդու, մերձերևանյան գանձի, Բերդաձորի, Դմանիսի և այլ վայրերի պեղումներից: Դրանք ունեն տարածման լայն սահմաններ և հայտնի են Թեփե Գավրից, Նարամսինի ստելայից, Հիսար թեփեի 3-րդ շերտից Հիսարլիկի 2-րդ շերտից, Միալիկ թեփեից, Մայկոպից, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայից:

Այս կտուցավոր կացիններն ունեցել են նաև լայն կիրառություն՝ գործածվելով լեռնագործության մեջ, ինչպես նաև որպես մարտական զենք:

Այս կացինների մեծ մասը գտնվել են պատահականորեն, սակայն վերջինների կաղապարների հայտնաբերումը թույլ է տալիս ճշտելու դրանց ժամանակագրական սահմանները: Կավե երկփեղկ կացինների կաղապարներ հայտնաբերվել են Նախիջևանի Քյուլթեփե 2-րդի ստորին և շերտերում և Գառնիում, իսկ քարից՝ Շենգավիթում, Աշտարակի շրջանի Արտաշավան հնավայրում: Շենգավիթից հայտնի կաղապարը խոսում է ականջավոր կացինների մասին , իսկ Գառնիից գտնված կաղապարի հիման վրա կարելի է ենթադրել, որ այն ձևով կրկնել է Շենգավիթի կացինները, սակայն քիչ թեքված ուսերը և կորությունները ապացուցում են, որ վերջիններս իրենցից ներկայացրել են կախակոթաղ կացիններ: Նման կացիններից զատ Հայաստանում և Անդրկովկասում նշված ժամանակաշրջանում ծուլվել են նաև հարթ կացին-դուրեր: Հայաստանում նման կացիններ գտնվել են Կարազում, Երևանյան գանձում, որտեղ հայտնաբերվեցին քավականին մեծ չափերի 10 նման կացիններ /մինչև 28 սմ երկարությամբ/: Հաղիսից հայտնաբերվել է կավե կացնի մանրակերտ: Երևանյան գանձից հայտնի կացիններից մեկը ականջավոր է, 8-ը՝ կտուցի ձև, իսկ մնացածը՝ հարթ: Անդրկովկասում հարթ կացիններ հայտնի են Վրաստանում՝ Դիդոմի և Ադրբեջանում՝ Աստարայի շրջան: Վրաստանում /Կվացխելեբի/ հայտնի նման հարթ կացինը թվագրվում է մ.թ.ա. 2800-30 տարով:

<u>Նիզակները:</u> Ինչպես կացիններդ, այնպես էլ նիզակներդ, որոնք ունեն երկար կոթաղ, Անդրկովկասում, Հայաստանում, հայտնի են մ.թ.ա. 8-րդ հազ. Դրանք ստորաբաժանվում են երկու տեսակի՝ ուղիղ և կորացող՝ օղի նման կոթաղով: Առաջին տարբերակը՝ ուղիղ քառակող կտուցվածքով, ավելի հին է և կապվում է շումերական 4-րդ հազ. մ.թ.ա. նախատիպերի հետ: Նման նիզակներ Հայաստանում և Անդրկովկասում հայտնի են Ավանից, Կիրովականից, Ախալցխայից, ԵրԳԷՍ-ից, Թբիլիսիից և այլ վայրերից:



Սդ. 28. Վաղ բրոնզի դարաշրջանի զենքեր և թեցեղեն էլեռից, էջմիածնից, Կարմիր վանքից։

Դաշույնները: Մետաղական զենքի առաջին տեսակներն են: Դրանք բոլորն ունեն կոթառ, հարթ կամ կորված բռում եռանկյունաձև շեղբ, թեք կամ կլորացող ուսեր: Կոթառը սովորաբար փոքր է, որի վրա ամրացվել է բրոնակը: Նման դաշույններ Հայաստանում և Անդրկովկասում հայտնի են Լենինականից, Կիրովականից, Էլարից, Էջմիածնից, Կարմիր վանքից և այլն:

Մանգաղները: Առաջին մետաղյա մանգաղները, որոնք քարե համանման գործիքների հետ օգտագործվել են Հայաստանում և Անդրկովկասում, հանդես են գալիս արդեն մ.թ.ա. 3-րդ հազ. սկզբից: Այս մանգաղները բաժանվում են երկու տեսակի: Առաջինը ավելի վաղ շրջանի լայնաշեղբ մանգաղներ են, որոնք հայտնի են Գառնիից, Նախիջևանի Քյուլթեփե 2-րդրից, Խիզանթ գորայից: Երկրորդ տեսակի մանգաղների շեղբերը ավելի նեղ են դրանք հավանաբար հանդես են գալիս մ.թ.ա. 3-րդ հազ. կեսերից: Վերջիններս, ի տարբերություն լայնաշեղբերի, առանձնանում են իրենց բռնակով, և սայրի վերջում թեքվածությունը ավելի ակնառու է: Նման մանգաղներ գտնվել են Կարագուր, Գուլուրում, Ամիրանիս գորայում:

Ամենից վաղ մանգաղները /Քյուլ-թեփե-2-րդը/ իրենց ձևերով հիշեցնում են շումերական կավե օրինակներին և քացառված չէ, որ վերջիններս Անդրկովկասի, Հայաստանի որոշ բրոնզե մանգաղների համար հանդիսացել են նախատիպեր:

Հաթինի քնակայրից հայտնաբերվել է մանգաղի կավե կաղապար, որի միջոցով գիպսից սարքված օրինակի հետազոտությունը ցույց է տալիս, որ այն հավանաբար օգտագործվել է որպես կլորացնող գործիք՝ կաշեգործության մեջ: Հայաստանի և Անդրկովկասի կուր-արաքսյան մշակույթի ժամանակաշրջանի զենքի տեսակների և աշխատանքային գործիքների հետ մեկտեղ հայտնաբերվել են մեծ քանակի տարբեր ասեղներ, բզեր, շքասեղներ, ծքնորսական կարթի կեռիկ և այլն, որոնք վկայակոչում են մետաղագործության զարգացման, ինչպես նաև մետաղամշակման բարդ պրոցեսների մասին:

Խեցեղեն: Առավել քանակով և տարածվածությամբ կուր-արաքսյան ժամանակաշրջանի խեցեղենը իր տարբեր ձևերով հանդիպում է վերը նկարագրված բոլոր հուշարձաններում: Այս մշակույթին պատկանող տարբեր համալիրներում, դամբարաններում, բնակավայրերում հայտնաբերված խեցեղենը քննարկվող մշակույթի կարևորագույն ատրիբուտներից է, որն ընդգրկում է ընդարձակ տարածք: Իր տեխնոլոգիական ձևերով և զարդամոտիվներով կուր-արաքսյան խեցեղենը, բացի առանձին նմուշներից, չի կապվում էնեոլիթյան հուշարձաններից հայտնի անոթների հետ: Այն ավելի զարգացած է, որոկյալ և գուրկ է գունազարդումից:

Վաղ բրոնզի դարաշրջանի խեցեղենը հիմնականում ձեռաձեվ է: Այն բավականին մանրակրկիտ, լավ հունցված կավից է, բաղադրությունում ունի ատրբեր խառնուրդներ: Անոթները հատկապես աչքի են ընկնում սև /երբեմն կարմիր կամ մոխրագույն/ փայլեցված մակերեսով /մետաղի փայլի ատր-

ծանի/, որը ներսի կողմից ունի կարմրավուն պատում:

Անոթների մեծ մասը /միջին չափի կարասներ, սափորներ, կնուճներ, քրեղաններ, զավաթներ, խուփեր, սաջեր, օջախի հենակներ, փոքրիկ անոթներ և այլն/ օժտված է կիսագնդի ձևի կանթերով կամ քիչ ծռված բռնակներով: Անդրկովկասում և Արևմտյան Հայաստանում հանդիպում են ձվածիր ձգված կանթեր, փոքր անոթների հաճախ հանդիպում են կեղծ կանթեր:

Զարդանոց հետաքրքիր են այս անոթների զարդամոտիվները: Ավելի հետաքրքիր են ռելիեֆային կամ ուռուցիկ-ճկված կրկնակի բուլորանախշերը; որոնք միացվել են միջանկյալ զծիկներով, կոնցենտրիկ շրջանները, շեղանկյունները, ուղղանկյուն և այլ երկրաչափական մոտիվները: Մեծ խումբ են կազմում այն անոթները, որոնք զարդարված են նուրբ զծերով, թույլ ընդգծված զարդամոտիվներով: Բացի վերը նկարագրված զարդերից այստեղ կան գալարազարդեր, զծիկներով լցված քառակուսիներ, հատվող անկյուն կազմող զծիկներ և այլն:

Անոթների երրորդ խումբը զարդարված է ոչ մեծ ուռուցիկ ելուստներով, որոնք սովորաբար արված են առթների ուսերին: Մի քանի խեցանոթներ զարդարված են տարբեր քուլաների կամ այծերի, թռչունների և այլ կենդանիների պատկերներով:

Առաջին հայացքից կուր-արաքսյան մշակույթի խեցեղենը ցուցաբերում է կոնկրետ միասնականություն, խիստ տարբերակվելով մյուս դարաշրջանների անոթներից իր սև փայլեցրած, երբեմն արծաթափայլ մակերեսով /մետաղի փայլի ատիճանի/: Կան նաև կարմիր, գորշ փայլեցրած օրինակներ: Այս անոթներն ունեն նուրբ ձև, ինքնատիպ կանթեր:

Մասնագետների մեծ մասը կուր-արաքսյան խեցեղենը դասակարգում է երեք ժամանակագրական փուլերի, որը հաճախ այլմանական քնույթ ունի, և, ցավոք, ոչ մի հետազոտող այս հուշարձանների շերտագրությունը չի հստակեցրել: Բացի այդ, այս խեցեղենի զարգացումն ունի սահուն բնույթ, երկրորդ, դրա վաղ ձևերը և զարդամոտիվները հաճախ գոյակցում են միմյանց կուր-արաքսյան մշակույթի վերջը:

Կուր-արաքսյան խեցեղենի դասակարգմամբ զբաղվել են շատ հետազոտողներ՝ սկսած Բ.Ա.Կուֆտինից: Հետաքրքիր դիտարկումներ են կատարել Բ.Բ.Պիոտրովսկին, Ռ.Մ.Մունչաևը, Օ.Մ.Ջափարիձեն, Զ.Բարնեյը, Ջ.Մելարդը, Ց.Ջ.Կուշնարյովան, Տ.Ն.Զուբինիշվիլին, Է.Վ.Խանզադյանը և ուրիշներ:

Ընդունված դասակարգմամբ ավելի հին են համարվում այն անոթները, որոնք ունեն քիչ ձգված իրան, լայնացող վիզ: Նման տիպի անոթները թվագրվում են 4-րդ հազ. վերջով /մ.թ.ա./, 3-րդ հազ. առաջին քառորդով, և որպես կանոն, զուրկ են որևէ զարդամոտիվից: Նման խեցեղեն հայտնի է Գառնիից, Դիլիջանից, Բաբա դերվիշից, Նախիջևանի Քյուլթեփեից, Վրաստանում Օլնիից, Կախեթիայից, ինչպես նաև Իրանից, Գյոյթեփեից և այլ հնավայրերից:



Նկ. 29. Վաղ քրոնզի դարաշրջանի ոսկրե և քարե գործիքներ Էլառից:

Հատկապես հատկանշական է Էլարի խեցեղենը, որի առաջատար ձևը, լայնաբերան կնուններով, խոր քրեղանները հիշեցնում են վաղ ձևերը: Էլարի խեցանոթներում այս դարաշրջանի վերջին փուլում հանդես են գալիս կլոր փոսիկներ, որոնք հստակորեն վերաբերում են երկրորդ փուլին՝ զոյատևելով մինչև վաղ քրոնզի 3-րդ հազ. /մ.թ.ա./ վերջը:

Այս խմբի երկրորդ փուլի խեցեղենը, որը վերաբերվում է մ.թ.ա. 2700-2500 տ., նույնպես եռամասն է, խիստ սահմանազատվող անցումներով և ակոսավոր լայն զարդանախշով: Այս խեցեղենի տարածված մոտիվներից են քուլորանախշերը, կոնցենտրիկ օղակները, խոր ակոսները: Հանդիպում են նաև բուսական մոտիվներ,: Այս խմբի անոթներ հայտնի են Շրեշ-բլուրում, Ջյուլթեփեում, Մոխրաբլուրում, Շենգավիթում, Կարազում:

Անդրկովկասում, Հայկական լեռնաշխարհում երրորդ՝ վերջին խմբին վերաբերող խեցեղենը պահպանում է նախորդ՝ երկրորդ փուլի զարդամոտիվների տարրերը, չնայած հանդես են գալիս քարակ, նրբագիծ երկրաչափական զարդանախշերը, որոնք հիմնականում զարդարել են վզի հատվածը, իսկ անոթի իրանը հնի պես զարդարվել է խաչազոով: Այստեղից խեցեղենը հայտնի է Կիրովականից, Շենգավիթից, Գառնիից, Այգեվանից, Բաքաղերվիշից, Կարազից, Բեշտաշենից և Հայաստանի, Անդրկովկասի այլ վայրերից:

Երրորդ հազ. վաղ քրոնզի վերջին, 24-23--րդ դ. մ.թ.ա. առաջանում են նոր խեցանոթների մի շարք ձևեր, որոնք մի կողմից կրում են վաղ քրոնզի մշակույթի բնորոշ գծերը, մյուս կողմից ընդունում նոր գծեր, որոնք սկսում են զարգանալ միջին քրոնզի դարաշրջանում: Այս երևույթը լավ արտահայտված է Բերքաբերում, Գառնիում, որտեղի խեցեղենը կրում է վառ արտահայտված բեղենյան մշակույթի խեցեղենի գծերը: Այս սև փայլեցրած, արծաթափայլ անոթների մի մասը զարդարված է սանդանախշերով կամ ջամի գլխիկի ձև ունեցող ծեփանախշով: Այստեղ առկա են մի կողմից նուրբ, գծային ներմկված ուռուցիկ զարդանախշի մոտիվները, որոնք բնորոշ են Թռեղքին, իսկ մյուս կողմից՝ երկկոնիկ ձևերը՝ ներմկված փոսիկավոր, որը տիպական է Գառնիի և Էլարի խեցանոթներին:

Հաջորդ խումբը, որը կրում է ինչպես վաղ, այնպես էլ միջին քրոնզի խեցեղենին բնորոշ գծեր, հայտնի է Էջմիածնի Արագած գյուղի դամբարաններից: Դրանք կարմիր և սև անզոբապատ անոթներ են, միականթ սափորներ, ոչ մեծ չափերի կնուններ, թասեր, քրեղաններ, որոնք զուրկ են բնորոշ կիսագնդաձև կանթերից: Հանդես են գալիս լայն զոտիներ, ներմկված գծանախշով անոթներ, որոնց զարդամոտիվները առավել լայն զուգահեռներ ունեն միջին քրոնզի անոթների ճեռ:

Վաղ քրոնզի վերջին շրջանում հանդես եկող անոթների խումբը բնութագրվում է որպես զունազարդ խեցեղեն, որը հանդես է գալիս Շենգավի-

թում /վերին հորիզոն/, Գյոյ թեփեում, Մալաթիայում, Խարբերդում, Ջրահովտում: Գունազարդ խեցեղենի հարուստ հավաքածու է հայտնաբերվել Այգեվանի բնակավայրում, որը կքննարկվի ստորև:

Նոր խեցանոթներ, ինչպես նաև զարդամոտիվների տանձին տարրեր հանդես են գալիս քեղենյան մշակույթում, իսկ գունազարդ անոթների հայտնվելը ցույց է տալիս, որ կուր-արաքսյան մշակույթը արդեն ավարտվում է սկիզբ դնելով տեղական նոր մշակույթների մի ջին քրոնզե դարաշրջանում:

Բացի խեցեղեն արտադրանքից, վաղ քրոնզի ժամանակաշրջանում լայնորեն տարածված էին քարի, ոսկորի, մշակումը, ջուլհակությունը և այլ արհեստներ:

<u>Քարի մշակումը:</u> Այն Հայկական լեռնաշխարհի բնիկների տնտեսական կյանքում ունեցել է բացառիկ նշանակություն: Քարը լայնորեն օգտագործվել է շինարարության մեջ: Ինակելի կացարանների կառուցման ժամանակ քարի հայթայթումը դժվարություն չի հարուցել, քանի որ տեղում տուֆի, բազալտի բեկոտված կտորները օգտագործվել են անմիջապես: Սակայն ամրոցների շինարարական հումք օգտագործվել են նաև գետաքարերը: Սակայն ամրոցների կառուցման վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ պահանջվում էին ֆիզիկական մեծ ուժ և քարի մշակման կոնկրետ հմտություններ: Կացարանների պատերի գաղտնուղի կառույցների համար օգտագործվել են տեղից հայթայթված քարերը, որոնք կազմում են մի քանի տասնյակ հազար խորանարդ մետր: Շատ ամրոցների կառուցման համար քարեր են բերվել առավել հեռավոր վայրերից, որը վկայակոչում է խոշոր եղջերավոր անասունների՝ որպես քարշող ուժի օգտագործման փաստի մասին:

Ինչպես շինանարարական հումքը, այնպես էլ մետաղե հանքերից հումքը հանելու համար օգտագործվել են քարե խոշոր ուրազ-կացիններ, մուրճեր: Դրանք գործածվել են նաև անտառահատման ժամանակ, ինչը վառ արտահայտված է Շրեշ-բլուրի, Զվարթնոցի, Շենգավիթի, Ավանի և այլ հնավայրերի նյութերում:

Բացի շինություններում գործածվելուց, քարը օգտագործվել է նաև երկրագործական և անասնապահական մթերքների վերամշակման ժամանակ:

Առավել տարածված աշխատանքային գործիքներից են կլորացող, ուղղանկյուն աղորիքները, որոնց միջոցով ստացվել է ալյուր և տարբեր ծավարեղեն: Այս նպատակով օգտագործվել են նաև սանդեր, սանդկոթերը, տրորիչները, ծեծիչները և այլն: Բոլոր հուշարձաններում հայտնաբերվել են մանգաղի ներդիրներ, որոնք հիմնականում վանակատից, կայծքարից, լավ մշակված եզերով, տարբեր չափերի մի քանի տասնյակի հասնող զառծոներ են: Հետաքրքիր են միջին չափերի սղոցները: Պատրաստվել են ողորկ, խիստ փայլեցրած կախակոթաո կացիններ, զուրգեր, դանակներ, դաշույններ, նետասլաքներ: Քարից պատրաստվել են ոչ միայն գործիքներ,

այլև մետաղե իրերի կաղապարներ: Դրանք հայտնի են Քեթիից, Էլարից, Շենգավիթից, Այրումից և Հայաստանի վաղ բրոնզեդարյան այլ հնավայրերից: Այս ժամանակ մետաղի հետ միասին շատ խոշոր նշանակություն ուներ դեռևս քարի կիրառումը:

Քարը օգտագործվել է նաև զինագործության մեջ: Բացի քարից, անտեսության մեջ կարևոր նշանակություն ուներ ոսկորի օգտագործումը, որից պատրաստվել են ասեղներ, քիզեր, ծակիչներ, իլիկի գլխիկներ և այլն: Դրանք պատրաստվել են խոշոր և մանր եղջերավոր անասունների եղջյուրներից՝ օգտագործվելով ջուլհակության և կաշեգործության մեջ:

Վաղ բրոնզեդարի հուշարձաններից հայտնաբերված գտածոների մեջ առանձնանում են արվեստին վերաբերող նյութական մշակույթի մեծ քանակի նմուշները, որոնց ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի Հայաստանի բնիկների հավատալիքների և պաշտամունքի հետ առնչվող հարցերի պարզաբանման գործում: Դրանց մեջ կարևոր գտածո է համարվում քարե և կավե մարդկանց կենդանիների արձանիկների խումբը:

Կուր-արաքսյան հուշարձաններից գտնված հնագիտական մեծ քանակի նյութեր բացահայտվում են ոչ միայն տնտեսական ոլորտի հարցերը, բնակարանների և կացարանների ձևերը, այլև վաղբրոնզեդարյան արվեստի կարևոր պրոբլեմները՝ կապված մշակույթի ամենատարբեր արտահայտությունների հետ: Դրա մասին կարող են վկայակոչել խեցեղենի զարդամոտիվները, արձանիկների ձևերը, օջախների հետքերը, որոնք, չնայած սխեմատիկությանը, կենդանի և վառ կերպով, ռեալիստորեն արտահայտում են մարդկանց, կենդանիների պատկերները:

Սակայն ճնագույն ցեղերի հոգևոր մշակույթի ուսումնասիրությունը դեռևս դժվարին խնդիր է, քանի որ անդարձ կորել են շատ կարևոր, միշտ վերականգնություն անելու համար անհրաժեշտ արժեքներ:

Այս պայմաններում դյուրին է վերականգնել ծիսական մի քանի հարցեր, բայց ոչ հոգևոր պատկերացումների ամբողջ համալիրը:

Վաղ բրոնզի դարաշրջանում արտադրաուժերի զարգացումը, երկրագործության, անասնապահության, մետաղամշակման զարգացման ընթացքը խթանեցին մինչցեղային միությունների փոխանակությանը, որը հնարավորություն տվեց իր հետևից տանելու ոչ միայն տեխնոլոգիական առաջընթացը, այլև գաղափարախոսական պատկերացումների հետագա տարածումը: Այս դարաշրջանում ձևավորված հնագույն երկրագործական կուլտերի հետ սերտ կապված Հին Արևելքում, Անդրկովկասում, Հայկական լեռնաշխարհում առաջացան լայնորեն տարածված հոգևոր և նյութական փոփոխությունների արդյունք հանդիսացող նոր որակներ:

Գլխավոր արարողությունը կատարվել է հիմնականում կլոր կացարաններում, որոնք հանդիսացել են ինչպես տնտեսական, այնպես էլ պաշտա-



Աղ. 30. Վաղ բրոնզի դարաշրջանի քարե և ոսկրե գործիքներ Դարանի ամրոցից:

մունքային կառույցներ, աղթատեղիներ: Որպես կանոն, կենտրոնական մասում դրվել են խոշոր վառող կրակով կլոր, մշտական օջախներ, որոնք քնորոշ են մեծ հայկական ընտանիքին: Օջախը հանդիսացել է ընտանիքի հաջողության խորհրդանիշը, այդ պատճառով զարդարվել է ինչ-որ խորհրդանշանակություն ունեցող նշաններով, մինչդեռ առանձին քաժիններ ձևավորել են ցլագլուխ, ոչխարագլուխ և Ֆալլուսի ձևի ելուստներով, որը կապվում է պատրիարխալ ժամանակաշրջանին քնորոշ արական սկզբի հետ:

Բացի աղոթարաններից, տարբեր քնակավայրերում կառուցվել են սրբարաններ: Դրանց թվին են դասվում Շենգավիթի երեք կացարանները, որտեղ դրվել են խոշոր, մինչև մեկ մետրանոց քարե մարդկային կուռքեր, դիմային սխեմատիկ մանրմասներով:

Հիանալի հայտնագործություն է Մոխրաքլուրի սրբարանը, ուր կառուցվել է հզոր քարե հարթակ, 4 մետրանոց մոնուլիտից զոհասեղան: Շրջակայքի խոշոր քնակավայրերի համար այն հանդիսացել է ծիսական արարողության ընդհանուր համայնական սրբարան:

Բացի անշարժ կլոր օջախներից, ընդարկվող ժամանակի կացարաններում շատ հաճախ հանդիպում են պայտաձև, ցուլի գլխի տեսքով օջախի պատվանդաններ: Պայտաձև օջախները ներկայացնում են նստած, կարճ ոտքերով տղամարդու՝ ցուլի, գլխով, եղջյուրներով, որոնց գլխին կան թասաձև փոսիկներով պաշտամունքային առարկաներ: Օջախների նման զուգակցման ձևը, չնայած սխեմատիկության, հնարավորություն է տալիս մտածելու, որ այստեղ պատկերված է տղամարդու, տան օջախի պահապանի խորհրդանշանը: Այն պետք է նպաստեր ընտանիքի քարեկեցությանը, քազմացմանը և հարստացմանը:

Պետք է նշել, որ Անդրկովկասի մի շարք հուշարձաններում՝ Քյուլ թեփե, Ամեիտ, Ալիշար, Քուչուր, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում /Պուլուր/ գտնվել են խոշոր, անշարժ պայտաձև զոհարաններ, որոնց արտաքին մասը զարդարվել է ծեփածո օղակներով /արև/, մարդկանց սխեմատիկ դիմագծերով:

Պակաս հետաքրքիր չեն եղջյուրաձև հենակները, որոնք նույնպես գտնվել են Հայկական լեռնաշխարհի վաղ քրոնզեդարյան հուշարձաններում՝ Շրեշ քլուր, Մոխրաքլուր, Զվարթնոց, Բաքա դերվիշ և այլն:

Այս եղջյուրաձև օջախի հենակները Բ.Ա.Կուֆտինը կապում է Փոքր Ասիայում գտնված նույնաձև առարկաները և համապատասխանաբար կրետամիկենեության ,,ցլագլուխ զոհարանների,, հետ, որը նվիրաբերվում էր աստվածներին: Սակայն շատ հետազոտողներ գտնում են, որ ցուլի սխեմատիկ պատկերումը ենթադրում է, որ վաղ քրոնզի դարաշրջանում ցուլի պաշտամունքը լայն տարածում է ունեցել Միջերկրականից մինչև Կովկաս:

Դա բացատրվում է ոչ միայն վերջիններիս նշանակությամբ՝ որպես հոտի բեղմնավորողի, այլև ցուլի նոր Ֆունկցիայի՝ քարշող ուժի, վարող կենդանու մեծ նշանակությամբ:

Պայտածև հենակները, բացի մարդու պատկերից, Ֆալլուսածև ելուստներից, զարդարվել են նաև ոչխարի /խոյի/ գլուխ-քանդակներով /Հառիճ, Ամասիա, Հոռոմ, Քեթի և այլն/, որը վկայակոչում է մանր եղջերավոր անասունների նշանակության, ինչպես նաև տնտեսության մեջ հեռազնա անասնապահության զարգացման մասին: Այդ են հաստատում Մոխրաբլուրից և Հառիճից հայտնի շան կավե մանրակերտերը: Դրանց հետ մեկտեղ գտնվել են /Նախիջևանի Քյուլ Թեփե, Շենգավիթ, Կարազ/ ձիու արձանիկներ, որոնք վկայակոչում են ոչ միայն ձիաբուծության, այլև սեզոնային արոտավայրերի օգտագործման մասին:

Բացի օջախների հետ կապված ոչխարի և ցուլի պատկերներից, հայտնաբերվել են /Հառիճ, Ֆիուլետովո, Ջրահովիտ, Շենգավիթ, Մոխրաբլուր, Ամասիա/ նաև վերջիններիս կավե մեծ քանակի արձանիկներ,, որը խոսում է այս կենդանիների պաշտամունքային էության մասին:

Հնագույն մարդկանց պատկերացումների մեջ կարևոր տեղ էր զբաղվում հոտի մեծացման հանգամանքը, որի համար կատարվել են տարբեր զոհաբերություններ. այդ թվում նաև մանրակերտ արձանիկները նետվել են կրակի մեջ. / դրանք գտնվել են օջախների մոտ/: Մոխրաբլուրից գտնված ցուլի արձանիկի աչքերը և ոտքերը ներկված են կարմիր գույնով: Մյուսի մակատին կա խազային աստղ, որը կապվում է երկնքի աստվածության խորհրդանշանի հետ:

Հին պաշտամունքային առանձին արտահայտության նմուշները փաստագրված են վաղ բրոնզեդարյան խեցեղենի վրա: Ամենից տարածված մոտիվը բուլորանախշն է՝ կապված պտղաբերության կուլտի հետ, որը արտահայտում է հավերժ շարժվող արևի գաղափարը:

Հատկապես հետաքրքիր են այծերի և կռունկների /արագիլների/ պատկերները Շենգավիթում պեղված խոր թասի վրա:

Եթե առաջինները կապվում են կայծակ-ջրի/ երկնային ջրի/ խորհրդանիշի հետ, ապա մյուսները երկնքի, տարվա եղանակների /գարուն, աշուն/ սիմվոլներն են, նամանավանդ երբ համատեղ հանդես են գալիս թռչող կռունկների պատկերները:

Շենգավիթից հայտնի կարասներից մեկի գարդանախշը, ըստ հետազոտողների մի մասի, կապվում է քնության արթնացման, զարթոնքի հետ: Կենտրոնում պատկերված է թռչուն-արև, որը գարնան ավետաբերն է, իսկ շուրջը բուլորանախշեր են, որոնք ըստ ամենայնի խորհրդանշում են կծկված օձի պատկերները: Նման թռչուն՝ օձի հետ միասին կա Կիրովականի հայտնի անոթի վրա:



Նկ. 31. Վաղ քրոնզի դարաշրջանի մարդակերպ արձանիկներ և քարե կուռք Հառիճից, Շենգավիթից, Մոխրաբլուրից:

Արթնացող բնություն են իմաստավորում նաև տանձին զարդանախշային տարրեր՝ թփեր, հասկանախշ, ցորեն, տերև և այլն, որոնք ներկայացված են խիտ գծերով; ընդգծելով բնության զարթոնքը և բերրի ամառը:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի քնիկների կյանքում առկա են հին հավատալիքներով մի շարք տարրեր՝ կապված մայրության /հողի/, բերրիության, խնամության խորհրդանշանների հետ: Հայկական իշխանության խորացման և ամրապնդման ժամանակաշրջանում հանդես են գալիս տան՝ օջախի կուլտի տարրերը, երկրագործական հովվական բնութագրիչ հասկացություններ, որոնց հիմքն է կազմել տղամարդու ատամածային կերպարը՝ արտահայտված նաև տարբեր ցլագլուխ օջախների, աքծանների /ծի, ցուլ, ոչխար /խոյ/, շուն/ և այլ գառծոների ուղեկցությամբ:

Հետագա զարգացման է հասնում նախնիների պաշտամունքը: Տան հատակների թաղումները /նեուլիթ, էնեուլիթ/ փոխարինվում են բնակարաններից, բնակավայրերից դուրս դամբարանների առաջացմամբ: Հանդես են գալիս յատոմական դամբարաններ, որոնց կենտրոնում կառուցվել են առաջնորդների թաղումները /Ստեփանակերտ/:

Դամբարանների լիցքի մեջ նկատվում են ցուլերի, զենքի տեսակների զոհաբերման փաստեր: Կան զոհաբերության պատճառով առաջացած թաղումներ: Ստեփանակերտի դամբարաններում գտնվել են գլխատված թաղումներ:

Գլուխ 2 Վաղ բրոնզեդարի տնտեսությունը և հասարակական հարաբերությունները

Կուր-արաքսյան մշակույթը կրող Հայաստանի բնակչությունը վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանում ապրում էր վաղ երկրագործական վերջին, ամենազարգացած փուլում, երբ տնտեսական վերելքով սկիզբ դրվեց տոհմական կարգերի տրոհմանը: Այդ ժամանակ Հայկական լեռնաշխարհի տարածքում բնակվում էին տարբեր ցեղեր, որոնք, ըստ մի շարք գիտնականների, պատկանում էին տարբեր լեզվաընտանիքներին: Ի.Մ.Դիակոնովի կարծիքով, Կուր-արաքսյան մշակույթը կրողները եղել են արևելակովկասյան ցեղերը, որոնց թվին են դասվում խուրի-ուրարտական, պրոտոնախյան-դաղստանյան և, հավանաբար, արևելակովկասյան լեզուներով խոսող այլ ցեղեր: Գ.Մ.Մելիքիշվիլու, Թ.Վ.Գամքրելիձեի, Վ.Վ.Իվանովի մի շարք լեզվաբանների կարծիքով կուր-արաքսյան մշակույթը կրողները եղել են պրոտոհնդեվրոպական ցեղերը: Երրորդ վարկածը դիտում է կուր-արաքսյան մշակույթի կրողներին որպես նախակարթվելացիներ:

Հավանաբար, Հայկական բարձրավանդակում նշված դարաշրջանում ապրել են ինչպես խուրիական ցեղեր, որոնց մի մասը հարավային սահմաններում մտան Միտանիի պետության մեջ, իսկ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսին Նաիրիի կազմի մեջ՝ հետագայում Բիայնիլիի տարածքում, այնպես էլ պրոտոհնդեվրոպական: Վերջիններից անջատվել են հայալեզու ցեղեր, որոնք ըստ Գ.Բ.Ջահուկյանի, ապրում էին ճարտ գետի հովտում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբից: Դրանք, որպես հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ցեղեր, խմբեր, հատուկ ցույց, ապրբերվում են Փոքր Ասիայում ապրող մյուս հնդեվրոպական ցեղերից: Հայտնի է, որ Փոքր Ասիայում մ.թ.ա. 3-րդ հազ. և անգամ ավելի վաղ հանդես են գալիս հնդեվրոպական լեզվաընտանիքներին պատկանող ժողովուրդներ, հիմնականում խեթերը, լուվիացիները: Դրանց որոշ մասը բնակեցրել են Հայկական բարձրավանդակի արևմտյան կողմը և հետագայում խուրիի-ուրարտացիների հետ մտել կազմավորվող հայ ժողովրդի կազմի մեջ:

Կուր-արաքսյան մշակույթի տեսության մեջ, որը հիմնականում նատակյաց էր, բարձր զարգացման է հասնում երկրագործությունը: Այս ժամանակաշրջանում բնակավայրերը ավանդաբար տեղադրված էին գետերի և գետաբերանների փոքրիկ տարածությունների վրա: Ստիմանաբար նկատվում է, որ դաշտավայրային և նախալեռնային գոտիների բնակչությունը զբաղեցնում է նոր, ազատ տարածություններ: Հայկական բարձրավանդակում և հարևան շրջաններում մ.թ.ա. 4-3-րդ հազ. դաշտային և նախալեռնային գոտիներում բրիչային երկրագործության հետ մեկտեղ հանդես է գալիս քաշող ուժի գործածումը, որը հայտնի անգլիացի հնագետ Վ.Գ.Չայլդի կարծիքով, ժամանակի մարդկության կարևորագույն նվաճումներից մեկն է; նա գտնում է, որ Առաջավոր Ասիայում և հյուսիսարևելյան Աֆրիկայում եզներով լծված սայլի և փոկավոր փոխադրամիջոցների /ավանակներ/ հանդես գալը մ.թ.ա. 4-3-րդ հազ-ում եղել է մարդկային հասարակության պատմական նվաճումներից կարևորագույնը: Հայաստանը նույնպես անմասն չէր այս պրոցեսներում՝ մասնակցելով այդ նվաճման գործին, ստեղծելով մեծ թվով անիվային փոխադրամիջոցների տարբեր ձևեր:

Քաշող ուժի օգտագործումը նպաստեց արորի առաջացմանը, որը հնարավորություն ընձեռեց ավելի լայն տարածքներ յուրացնել, և բնակչությունը առավել ինտենսիվորեն սկսեց մշակել խոպան հողատարածությունները: Շենգավիթի, Մոխրաբլուրի, Այգևանի պեղումների ժամանակ բացի ցորենի, գարու և կորեկի հատիկներից, հայտնաբերվել են նաև խուրձերով ատվող հասկեր: Այդ հանգամանքը դեռևս 1930-ական թ.թ. հնարավորություն տվեց Եվ. Բայբուրդյանին նշելու, որ բերքը կալսվում է ոչ միանգամից, այլ տարվա ընթացքում, ըստ պահանջարկի: 3-րդ հազ. վերջին



Նկ. 32. Վաղ քրոնզի դարաշրջանի կենդանակերպ արձանիկներ Հարիցից, Ֆալեսովոյից, Ջրահովից, Նեսգավիթից:

և 2-րդ հազ. սկզբին հանդես են գալիս քարե կամերը: Բերքը հավաքելուց հետո պահվում էր խոշոր անոթներում կամ հորերում; որոնք առանձին ընտանիքների սեփականությունն էին: Ստացված հացահատիկը բերվում էին աղորիքով աղալուց հետո ստանում ալյուր և ծավար: Վերջինիս համար օգտագործում էին նաև սանդը: Սկսած մ.թ.ա. 3-րդ հազ. , հացը թխվել է թոնիր-վառարաններում, ինչպես նաև կավե ոչ մեծ տապակարաններում:

Հայաստանում և հարևան շրջաններում հողի մշակումը կախված էր եղանակային պայմաններից. երաշտի դեպքում հաճախ բնակչությունը զբաղվում էր բերքից: Շենգավիթի, Այգևանի, Մոխրաբլուրի պեղումների պարզվում է, որ ցանքսը կատարվում էր խառը՝ ցորեն և գարի կամ կորեկ: Վերջինս ավելի դիմացկուն էր երաշտի պայմաններում:

Հացազգիների մշակումից բացի բնակչությունը զբաղվում էր նաև այգեգործությամբ, որը վկայում են Շուլավերի և Խիզանուտ գորայի շերտերից հայտնաբերված խաղողի կորիզները: Գառնիի շերտերից գտնվել է ծիրանի կորիզը: Որոշ մասնագետների կարծիքով, Անդրկովկասը՝ ընտելացված խաղողի, իսկ Հայաստանը՝ նաև ծիրանի հայրենիքի է:

Այս ժամանակաշրջանում արդեն իսկ արհեստական ոռոգման որոշակի փաստեր են հաստատագրված: Երրորդ հազարամյակում ոռոգման կառույցների հետքեր հաստատագրվել են Մոխրաբլուրում, ուր քացվել են ջրանցքի մի քանի հատվածներ: Որպես վարելահողեր առավել ինտենսիվ օգտագործվել են նաև բնական ոռոգելի տարածությունները: Այսպես, Շենգավիթի մոտ Հրազդան կիրճի տարածքը /անցյալում Կողբ գյուղը/ կազմել է 100 հա տարածություն /ներկայիս Երևանյան լիճը/, ուր ճնում կատարվել են հողագործական մեծ ծավալի աշխատանքներ:

Անտառային շրջաններում հողերի յուրացումը կատարվել է անտառահատման եղանակով: Կարված ծառերն ու տերևները տեղում այրելուց հետո հարստացված հողը հերկվում էր մի քանի տարի, իսկ հետագայում յուրացվում էին նորանոր տարածքներ:

Բուն երկրագործական աշխատանքի հետ կապված փոխադրամիջոցների հանդես գալը, երբ անհրաժեշտություն առաջացավ հեռու վայրերից բերքը տեղափոխելու բնակավայրերը: Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ հուշարձաններում՝ Շենգավիթում, Մոխրաբլուրում, Այգևանիում և այլուր հայտնաբերվել են քարե կամ կավե անիվների մեծ քանակությամբ մանրակերտեր: Ցուլի կավե արձանիկների վրա հանդիպում են փոսիկներ, որոնք, ըստ Բ.Բ.Պիոտրովսկու, ապացուցում են սայլերը եզներին լծելու փաստը: 1940-ական թ.թ. առաջ քաշված այդ տեսակետը հաստատվեց Հառիճից հայտնաբերված մանրակերտերի /լծված եզների, ցուլերի/ օրինակով:

Երկրագործության զարգացման մասին են վկայում քարե ներդիրներով մանգաղների փոխարինումը պղնձե մանգաղով, որը հայտնի է Նախիջևանի Ջյուլ թեփեից, Գառնիից, Վրաստանի Խիզանանտ գորայից: Համեմատաբար նեղ բերանով մանգաղներ են գտնվել Կարագում, Փուլուրում, Ամիրանիս գորայում:

Նշված տնտեսաձևերի զարգացման ապացույցներից են խոշոր եղջերավոր անասունների՝ ցուլերի մանրակերտերի հայտնաբերումը օջախների հետ: Ցուլը, որպես քաշող ու նաև վարող կենդանի, ունեցել է նաև պաշտամունքային նշանակություն՝ կապված բեղմնավորման հետ: Ցլակերպ քանդակներ կան կավե օջախների հենակ-պատվանդանների վրա:

Վաղ բրոնզեդարում, բացի երկրագործությունից, քարծր զարգացման հասավ նստակյաց անասնապահությունը: Խոշոր եղջերավոր կենդանիների ոսկրաբանական ուսումնասիրությունից պարզվում է, որ դրանք մանրերի հետ գտնվում էին 1:2, 1:3 և անգամ 1:4 հարաբերության մեջ, կազմելով հոտի որակական մասը: Խոշոր եղջերավոր կենդանիների մանրակերտերի կողքին վերհիշյալ հուշարձաններում գտնվել են ոչխարի, այծի բազմաթիվ արձանիկներ: Վերջիններս նույնպես պաշտամունքային բնույթի են:

Հայաստանում, Կովկասում մ.թ.ա. 4-րդ հազ. վերջերից սկսած ծեվավորվում է հեռազնա անասնապահությունը, որը շարունակվում է մինչև մեր օրերը: Գարնանը հոտերը տանում են քարծրալեռնային ալպիական բուսականության հարուստ զոտիների արոտավայրեր: Ցրտերն ընկնելուն պես վերադառնում են գնակավայրերը, ուր կուտակված է կերը: Արոտավայրերում անասունների պահելը նաև նպաստում էր հոտի քանակական աճին:

Նշված անասունների մանրակերտ զտածոների մեջ առանձնանում է նաև շունը /Մոխրաբլուրի արձանիկները/, որը վկայում է հեռազնա անասնապահության մասին: Շունը հոտը պաշտպանում է գիշատիչ կենդանիներից: Գեղումներից գտնվել են նաև ձիու մեծ քանակի ոսկորներ, առանց որի հեռազնա անասնապահությունը անհնարին էր: Ձին մեծ դեր է խաղացել գնակավայրերի միջև արագ կապ հաստատելու համար: Երրորդ հազարամյակի հնավայրերից Շենգավիթում, Ջյուլ թեփեում գտնվել են ձիու կավե, քարե արձանիկներ Ջյուլ թեփեում պեղված մանրակերտի մեջքի վրա կա ծածկոց՝ թումբ, որը վկայում է ձին հեծնելու մասին: Այս կենդանիները նույնպես ունեցել են պաշտամունքային նշանակություն:

Հայկական բարձրավանդակում քննարկվող ժամանակաշրջաններում անասնապահական և երկրագործական տնտեսաձևերը ըստ էության հավասար են զարգացել. այս կամ այն շրջանում, ըստ աշխարհագրական, բնակլիմայական պայմանների գերակշռել է կացութաձևերից որևէ մեկը: Այս երևույթը շատ բնորոշ է Հայաստանում, ուր չի հաստատագրված միանշանակ „մաքուր„ բնույթի անասնապահական կամ երկրագործական տնտեսաձև :



Աղ. 33. Վաղ քրոնզի դարաշրջանի կենդանակերպ արձանիկներ Նեզավիթից, Մոխրաբլուրից, Հառիճից, Ամասիայից.

Մարդկանց տնտեսական կյանքում որոշակի դեր է խաղում որսորդությունը; որի մասին ցայտուն վկայում է բնակավայրերից և դամբարաններից հայտնաբերված ոսկրաբանական նյութը: Դեռևս վերապրուկային ձևով գոյություն ուներ հավաքչությունը: Սևանի ավազանում և լեռնային այլ գոտիներում բազմաթիվ հուշարձանների պեղումներից հայտնաբերվել են եղջերուի, այծյամի, որմիզդեղի ոսկորներ: Հավաքչությամբ ժեռք բերված վայրի պտուղները, բույսերը օգտագործում էին թարմ, չորացրած, իսկ հետագայում նաև աղ դրած վիճակում:

Որսորդության և հավաքչության դերը մեծ չէր, բայց այն զգալի չափով ավելացնում էր տեղաբնիկների սննդի բազմազանությունը և պաշարները:

Հայաստանում տոհմական համայնքների հիմքը նախապետական մեծ ընտանիքն էր: Այստեղ արական սեռի քանակը հնարավորություն է ընձեռում առավել զորեղ ընտանիքներին շատ եկամուտ ստանալ, թե երկրագործական և թե անասնապահական տնտեսաճյուղերի ապարեզում կուտակել հարստություն: Հարստության կուտակման մասին կողմնակիորեն վկայում են հատկապես Ստեփանակերտի, Շենգավիթի, Կարազի դամբարանների պեղումները, որտեղ բացի մետաղյա զենքերից /դանակներ, դաշույններ/ հայտնաբերվել են ոսկե, արծաթե իրեր՝ վկայակոչելով սոցիալական անհավասարության մասին:

Բնակչության որոշակի խմբերի հարստացմանը զուգահեռ հարատևում և զարգանում էին բազմաթիվ համայնքներ, որոնցից ամենազորեղները իրենց գույքը և ունեցվածքը պաշտպանելու համար ստիպված էին բնակավայրերի շուրջը պաշտպանական հզոր համակարգեր ստեղծել: Այդ պաշտպանական կառույցները կոչվել են ,,Կիկլոպյան,, ամրություններ: Նման ամրոցների կառուցողական տեխնիկայի հիմքում ընկած էի կոպիտ, խոշոր և մանր քարաբեկորներից, չոր շարվածքով, առանց շաղախի մի քանի մետր հաստության հասնող պատերի և մեկից մինչև երեք ավելի պարսպապատերով օղակված բնակավայրերի կառուցման սկզբունքը: Պարսպապատերի բարձրությունը հասել է մինչև 10 մ: Հայկական բարձրավանդակը մ.թ.ա. 3-րդ հազ. ամբողջովին պատված է նման կիկլոպյան ամրոց-բնակավայրերի ցանցով: Դրանցից հիշարժան են Գառնին, Զյանբերդը, Լճաշենը, Քաղսին, Այրումը, Հառիճը և շատ այլ վաղ բրոնզեդարյան բնակավայրեր: Կիկլոպյան ամրոցները վկայում են միջցեղային ընդհանումների հաճախակի և սովորական լինելու մասին հարձակողական և պաշտպանական զենքի մի շարք ձևերի մշակումը դրա ապացույցն է:

Երկրագործական տնտեսաճյուղի զարգացման պայմաններում Հայկական լեռնաշխարհում տեղի է ունենում քնակչության, հետևաբար նաև բնակավայրերի քանակական խիստ աճ: Դրա հետ մեկտեղ անասնապահության ասիմա-

նաբար զարգացման – հեռանքով դաշտավայրերից բնակչությունը շարժվում է նախալեռնային և լեռնային գոտիներ, և արդյունքում կուր-արաքսյան ցեղերը, ինչպես տեղաշարժեր նատարելով, տարածվում են նաև ամբողջ Հայկական բարձրավանդակում և նրան հարող շրջաններում: Բացառված չէ, որ նման միգրացիայի արմատները սկիզբ են առել մ.թ.ա. 4_րդ հազ-ի վերջից: Ինչպես նշում է անգլիացի հնագետ Ջ.Մելաարտը, ուղղահայաց բռնակներով գլանաձև անոթները, որոնք գտնվել են Բեերշեբա Գհասսուլ /հարավային Պաղեստին/ էնեոլիթյան բնակավայրերի վերին շերտում, տեղական ծագում չունեն և բերված են արևելյան Անատոլիայից, այսինքն Արևմտյան Հայաստանից եկած ցեղերի կողմից: Հայաստանում մ.թ.ա. 3-րդ հազ.-ի ամբողջ ընթացքում նման տիպի անոթներ հայտնի են Էլառից, Ջրահովտից,Շենգավիթից: Միգրացիան ավելի մեծ թափ է ստանում մ.թ.ա. 3_րդ հազ. երկրորդ քառորդում, երբ կուր-արաքսյան մշակույթը կրող ցեղերը Հայկական լեռնաշխարհից թափանցում են Պաղեստին, Եգեյան աշխարհ և հյուսիսարևելյան Կովկաս:

Այսպիսով, կարելի է նշել, որ կուր-արաքսյան մշակույթն իր կենտրոնով ամենայն հավանականությամբ ձևավորվել է Հայկական բարձրավանդակում և այդ մշակույթի կրողները կազմել են մի շարք ցեղեր և ցեղային միություններ: Վերջիններս իրենց տնտեսական զարգացման մեջ չէին զիջում հարևան երկրներին, այլ շարունակում էին մասնակցել Առաջավոր Ասիայի տնտեսական, քաղաքական կյանքին ստեղծելով հզոր կիկլոպյան ամրոցների համակարգեր, անվավոր փոխադրամիջոցներ, արորային երկրագործության և այլն:

Սակայն սոցիալական և քաղաքական զարգացման աստիճանը փոքր-ինչ ետ էր մնում Միջագետքի տարածքում առաջացած հզոր պետությունների մակարդակից: Հայաստանը դեռ շարունակում էր մնալ տոհմատիրական կարգերի պայմաններում, նայած հանդես էին գալիս ցեղային միություններ, որոնցում սաղմնավորում էին նախադասակարգային հասարակական հարաբերություններ:

Կուր-արաքսյան մշակույթում բարձր զարգացության հասան տարբեր արհեստներ, որոնց մեջ հիմնական դերը պատկանում էր մետաղագործությանը: Հայկական բարձրավանդակը հարուստ է մետաղի հանքերով, այսպես, պղնձի հանքեր հայտնի են Խնուսում /Էրզրումի շրջան/, Տիգրիսի ակունքում, Երզնկայի լեռներում, Ուրմիայի արևմտյան ափերին: Հատկապես պղնձով և արծիթով հարուստ են Ռշտունյաց և Ջուլամերկի լեռները: Արմի, անագի հանքերի առավել մեծ կուտակումներ են հաստատագրվել Սասունում, մեծ քանակի պղնձի հանքավայրեր կան Երզազա-Մաղենում /Եփրատի վերին հոսանք/, Տրապիզոնի, Սնարի-ձորախի շրջաններում, Լոռիում, Զանգեզուրում, Դիլիջանում, Հրազդանի շրջանում, փոքր չա-

փերի հանքապաշարներ հաստատագրվել են այդ շրջաններում: Արմիմի հարուստ կուտակումներ կան Վանի, Ջուլամերկի, Ուրմայի շրջաններում, ուր մի քանի տեսակի մետաղներ հանդիպում են միմյանց հետ, որը բավականին հեշտացնում էր պղնձի հիմքի վրա տարբեր համաձուլվածքների ստացումը: Այս փաստերը վկայում են, որ Հայաստանը հանդիսացել է Առաջավոր Ասիայի մետաղագործական հնագույն կենտրոններից մեկը, որտեղից ստացված մետաղը ապահովում է ոչ միայն տեղական պահանջարկը, այլև հանքաքարերի կամ ձուլված մետաղի ձևով արտահանվել է հարևան շրջաններ: Պղնձի հարուստ հանքերը, որոնք լրացվել են մկնդեղով, նարիրով, արմիմով և այլ զուտավոր զուտավոր մետաղներով, հնարավորություն են ընձեռել Հայկական բարձրավանդակի ցեղերին լայնորեն զարգացնելու և մեծացնելու մետաղագործական արտադրանքի տեսակները:

Հայաստանի վաղ բրոնզեդարյան մետաղագործության մասին վկայում են տարբեր հուշարձաններից հայտնաբերված ձուլման կաղապարները, հալոցները, ձուլարանների և խարամի մնացորդները: Հնագույն ձուլարանի հետքեր հայտնաբերվել են Նոյեմբերյանի շրջանի Ջուլեվան գյուղի մոտ գտնվող Ջաղացտեղ քնակավայրում, ուր բացվել է մի հալոց-փարարանի մնացորդ՝ օդամղիչ խողովակի և խարամի կտորների հետք: Հառիմի բնակավայրերից գտնվել են մեծ թվով հալոցներ, տարբեր առարկաների ձուլման համար նախատեսված քարե և կավե կաղապարներ: Նման կաղապարներ գտնվել են Շենգավիթից, Մոխրաբլուրից, Գառնիից, Նախիջևանի Քյուլ թեփեից, Արտաշավանից: Գտածոների մեջ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Հառիմի կաղապարը, որի գիպսի մոդելը 11 սմ երկարությամբ մանգաղաձև գործիք է, ըստ ամենայնի կաշի մշակելու համար: Բացի նշվածկաղապարներից գտնվել են տարբեր տիպի կացիններ, որոնք բաժանվում են հետևյալ խմբերի: Հիմնական տիպը ներկայացնում են, այսպես կոչված, կոթառով կացինները, որոնք ունեն սեպաձև իրան: Դրանց կաղապարները հայտնի են Շենգավիթից, Գառնիից, Արտաշավանից, իսկ բուն կացինները՝ Այրումից, Լենինականից, Ջրաշենից: Երկրորդ խումբ են կազմում կախակոթառ կացինները, որոնք հայտնի են Մարտունուց, Լենինականից, Ղարսից, իսկ դրանց կավե կաղապարները հայտնաբերվել են Հառիմից: Կացինների մի հատուկ տիպ հանդես է գալիս մ.թ.ա. 3-րդ հազ., որը ունի վերսալ գործիքների տեսակ է: Վերջինիս վերին մասը քլունգի ձև ունի: Նման կտցավոր կացիններ հայտնաբերվել են Ալավերդիում, Լենինականում, Ջրաշենի գանձում:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում տաշուրագի ձևի մեծ գործիքները՝ տափակ կացինները, որոնք հայտնաբերվել են Ջրաշենի գանձից: Դրանք հիմնականում օգտագործվել են կաշի և փայտ մշակելու համար:



Աղ. 34. Վաղ քրոնզի դարաշրջանի կենդանակերպ արձանիկներ Մոխրաքլուբից, Հառիճից, Զրահովիտից, Շենգավիթից:

Փոքր չափի տաշուրագի կավե կաղապար հայտնաբերվել է Հառիճի քնակավայրերից:

Զենքի ձևերի հաջորդ խումբը պոչուկավոր նիզակներն են: Նման մի նիզակ գտնվել է Նոր Բազայեթից, որն ունի կոթառի երկարությամբ՝կոր; փետրաձև սայլ: Փոքրիկ ելուստաձև պոչուկը ավարտվում է միաձույլ կլոր խնձորակով:

Բացի նիզակներից /Լենինական, Էլառ, Հառիճ/ հայտնաբերվել են նաև կարճ դաշույններ: Բրոնզե իրերի հայտնաբերումը չի սահմանափակվում վերոհիշյալով: Բացի աշխատանքային գործիքներից և զենքի տեսակներից գտնվել է նաև զարդեղեն՝ շքասեղներ, օղեր, պարանոչաններ, այս իրերը հիմնականում պատրաստված են պղնձից և մկնդեղային բրոնզից:

Մետաղական գտածոների լայն տեսականին, ինչպես նաև դրանց կաղապարների առկայությունը խոսում է Հայաստանում մետաղական արտադրանքի բարձր զարգացության մասին:

Սառը քննարկվելիք հարցերի միջև կապված առևտրի և փոխանակության հետ, առավել մանրամասնորեն կներկայացվեն մետաղագործության զարգացման կարևոր օջախների դերն ու նշանակությունը Առաջավոր Ասիայում մ.թ.ա. 3-րդ հազ.:

Վաղ բրոնզեդարյան նյութական մշակույթի մեջ իր ուրույն տեղն ունի խեցեղենը, որը լինելով թվագրվող կարևորագույն հնագիտական արտեֆակտ, զանգվածաբար տարբեր ձևերով հանդիպվում է բոլոր հուշարձաններում: Չնայած քննարկվող խեցեղենը պատկանում է միևնույն մշակույթին, բայց, այնուամենայնիվ, նրան բնորոշ են ինչպես ժամանակագրական, այնպես էլ տեղական տարածքային հատկանիշները:Հայաստանի կուր-արաքսյան մշակույթի խեցեղենը հարուստ է իր բազմաքանակությամբ և բազմաձևությամբ: Այն ներկայացված է լայնաբերան կարասներով, կրճումներով, գավաթներով, քրեղաններով, բաժակներով՝ պատրաստված քարձրորակ կավի հետ խառնված ավազով, շամոտով: Բացի խեցանոթներից քրուտ վարպետները պատրաստել են կավե կափարիչներ, հենակ-պատվանդաններ, օջախներ, արձանիկներ: Գավաթները և նուշաձև կճումները ունեն գլանաձև վիզ, ուռուցիկ կլորացող, շեշտված անցումներով իրան, որն ավարտվում է ներմկված հարթ կամ զոգավոր հատակով: Դրանցից շատերը վզին կամ ուսին ունեն կիսագնդաձև կանթեր: Իրանը սովորաբար զարդարված է փոսիկներով և ռելեֆային, ներմկված,փորագիր երկրաչափական հորինվածքով:

Լայն տարածում ունեցող խեցանոթների մյուս խումբը կազմում են քրեղանները, թասերը, որոնք ունեն եզրագծված, ուղիղ, կլորացող կողեր, մկված շուրթ: Նշված ժամանակաշրջանում հանդիպում են ձգված,

երկկոնիկ իրանով, բարձր, գլանաձև վզով, դուրս եկող շուրթով, նեղ հարթ հատակով կարասներ, ռելիեֆ շուրթով տարբեր ձևի անոթներ:

Կուր-արաքսյան խեցեղենի բնորոշ հատկանիշը նրա խեցեռի երկգույն, երկշերտ լինելն է՝ կարմիր կամ վարդագույն ստատով, սև փոշեփայլ, արտաքին մակերեսով: Սրանց զուգահեռ հանդիպակի հանդիպում են կարմիր, կարմրաշականագույն մակերեսով խեցեղեն անոթներ, որոնց ստատը երբեմն մուգ գույն ունի: Բ.Ա.Կուֆտինի կարծիքով, կուր-արաքսյան խեցեղենի երկգույն կառուցվածքը առաջացել է երկու պատճառով՝ կամ անոթները պատրաստելու ժամանակ ներքին և արտաքին կողմերին դրվում է տարբեր երանգներ ունեցող կավ, կամ էլ տարբեր գույներ ստացվում էին ոչ հավասար թրծման պատճառով: Բարձրորակ խեցեղենը հիմնականում երեսպատվում էր սև, զորշ, ավելի հազվադեպ կարմիր և շականակագույն անգոբով՝ փայլեցնելով մինչև հայելու ստիճանի փայլին: Թրծելուց հետո այն հղկվում էր: Ի տարբերություն բարձրորակ խեցեղենի, որը պատրաստվում է լավ մշակված կավից, կուր-արաքսյան մշակույթում հանդիպում է նաև խոհանոցային խեցեղեն: Վերջինս պատրաստվում էր խոշորահարկ կավի և մեծ քանակությամբ ավազի խառնուրդից, որի հետևանքով թրծումը ստացվում էր ոչ հավասարաչափ: Բնակավայրերում խեցեղենի խմբերի շերտագրության դիտարկումները, նրա կրած ձևական փոփոխությունները ցույց են տալիս վաղ բրոնզեդարյան կավագործության զարգացման առանձնահատկությունները: Այսպես, վաղ շրջանի՝ այլ կերպ ասած մ.թ.ա. 3-րդ հազ. 1-ին կեսի խեցեղենին ավելի հատկանշական են սահուն անցումներով,կը-լորացող տրաններով, ռելիեֆ-ներմկված ու փորագիր, բարդ երկրաչափական զարդերի բացակայությամբ, բայց փոքրիկ, նախշ-փոսիկների առկայությամբ, կանթի հիմքամասի կտրվածքում ճվածիր տեսքի և այլ հատկանիշներով անոթները:

Հետագա զարգացման ընթացքում, որն առավել ցայտուն է դիտվում մ.թ.ա. 3-րդ հազ. 2-րդ կեսից սկսած, այս հատկանիշներին փոխարինելու է գալիս ամենների եռամաս կառուցվածքը: Այս բոլոր անոթները հիմնականում պատրաստված են ձեռքով, վիզը, շուրթը, անոթի միջին և ստորին մասը հաջորդաբար միացվել են հատակին:.Այդ պատճառով բոլոր ձևերով հանդիպող անոթների առանձին մասերի միջև անցումները խիստ ընդգծված են: Է.Վ.Թանգաղյանը գտնում է, որ բազմաթիվ անոթների բեկորների մեջ հանդիպում են օրինակներ, որոնք ջարդված չեն, այլ անոթների անփույթ միացված մասեր են: Դրանք միմյանց ամրացվել են կավի քարակ շերտով: Հնայած այն կարծիքին, որ անոթները հիմնականում պատրաստված են ձեռքով, պետք է նշել, որ Մոխրաբլուրից, Շենգավիթից գտնվել են անոթներ, որոնք պատրաստված են դուրգի վրա: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս ենթադրել, որ մ.թ.ա. 3-րդ հազ-ից Հայաստանում սկսում է

հանդես գալ դուրգը, որը հետագայում կատարելագործվում է: Հանդես են գալիս նաև ռելիեֆ-ներմկված զոտիներ, ծվածիր տեսք ունեցող խոշոր փոսիկներ, կորվածքում եռանկյունի կանթեր և այլ քնորոշ տարրեր:

Նուր-արաքսյան մշակույթի զոյության վերջին շրջանում կավամանների ձևերի ու զարդանախշերի պարզեցում է նկատվում: Կրկին քնորոշ են դառնում սահուն անցումներով և ձգված իրանով ամանները, որոնց վրայից հիմնականում անհետանում են ռելիեֆ-ներմկված ու լցնակոս զոտիները. դրանց փոխարինում են պարզ փորագիր զարդերն ու փոքրիկ փոսիկները, որոնք արդեն հազվադեպ են հանդիպում խեցանոթների վրա, հանգամանք, որը մատանշում է տեղական խեցեղենի մշակույթի զարգացման ատիճանական ընթացքը:

Արհեստների մեջ կարևոր դեր էին խաղում քարից, ոսկրից պատրաստված գործիքներ: Բացի շինարարական հումքից քարից պատրաստված էին նաև զենքի տեսակներ: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի հուշարձաններում գտնվել են քազմաթիվ գուրգեր, դանակներ: Այսպես, Էլարից գտնվել է հասպիսից դաշույն, Քեթիից՝ հղկված կոթառավոր կացին, ինչպես նաև քազմաթիվ նետասլաքներ շենգավիթից, Մոքրաբլուրից, Այրումից, Նախիջևանի Քյուլթեփեից և այլ հնավայրերից: Քարի գործածությունը ծանրաշիռ էր նաև տնտեսության մեջ: Բազալտից պատրաստվել են մեծ և փոքր, կլոր, մակույկաձև ուղղանկյուն, ձվաձև աղորիքներ, որոնց ստորին քարը, իբրև կանոն, ավելի մեծ է, մինչդեռ վերինը՝ շարժականը, համեմատաբար փոքր: Հացահատիկը մշակման համար օգտագործվել են նաև քազմաթիվ սանդեր, սանդակոթեր, տրորիչներ: Հնձի համար օգտագործվել են կայծքարից, վանակատից պատրաստված մանգաղի ներդիրներ, որոնք ուղղանկյուն, կարճ կամ երկար ձևի են, հաճախ ծայրի առավել մանրակրկիտ մշակմամբ, կտուցաձև հարդարմամբ: Բացի երկրագործական նպատակներից, քարից պատրաստվել են տրորիչներ, կոկիչներ, սրաքարեր: Վերջիններս քնական հղկված զետաքարեր են՝ աշխատանքային մաշվածության որոշակի հետքերով: Հայտնաբերվել են ծակիչներ, քերիչներ՝ նետասլաքների նման ոետուշավոր եզրերով: Ինչպես վերը նշվեց, քարից պատրաստում էին նաև կաղապարներ, զդալներ, շերեփներ՝ ձուլման ընթացքում գտնվող մետաղի հալույթը հալոցից կաղապարի մեջ լցնելու համար: Այսպիսով, քարից պատրաստված գործիքները տնտեսության մեջ շարունակում էին հանդես գալ ավանդական կիրառական ձևերով: Այս ժամանակաշրջանում քարից պատրաստում էին նաև տարբեր ձևի ուլունքներ:

Քննարկվող դարաշրջանում լայնորեն շարունակվում էր ոսկորի գործածությունը: Շենգավիթում և այլ հնավայրերում հայտնաբերվել են կոկոնաձև, ուղղանկյուն, մեծ, փոքր մի քանի նետասլաքներ: Մանր եղջերավոր կենդանիների ոսկորներից պատրաստվել են ծակիչներ, հերուններ, կաշին մազից մաքրելու քերիչներ: Բացի կաշեգործությունից, ոսկորը լայ-

նորեն օգտագործվում էր նաև մանածագործության մեջ: Գտնվել են քարից և խոշոր եղջերավոր անասունների ոսկորի խնձորակներից պատրաստված իլիկի բազմաթիվ գլխիկներ, ինչպես նաև կարիչներ՝ գործվածքի տացման համար:

Ուսումնասիրվող ժամանակի հուշարձանների հետազոտումը բնակավայրերի, բնակարանների ձևերի հետաքրքիր պատկեր է տալիս: Ինչպես նշվեց, կուր-արաքսյան մշակույթի բնակավայրերը, ծագելով դաշտային և նախալեռնային գոտիներում, աստիճանաբար սկսեցին զբաղեցնել լեռնային և բարձր լեռնային շրջանները:

Բնապահպանական պայմանների առնչությամբ այս բնակավայրերը իրենց ձևով բաժանվում են 3 հիմնական խմբերի. դաշտային, նախալեռնային և լեռնային: Առաջին խմբի բնակավայրերը տարածված են դաշտային շրջաններում, հանդես են գալիս բազմաշերտ, երբեմն տասնյակ մետրի հասնող բարձր արհեստական բլուրների ձևով և իրենցից ներկայացնում են, այսպես կոչված, մոխրաբլուրներ և այդպես էլ անվանել են տարբեր ժողովուրդների կողմից/հայերեն մոխրաբլուր, թուրքերեն ցյուլ թափա կամ ցյուլ թեփե, Միջին Ասիայում՝ ցյուլ դեպե/:

Այս բնակավայրերում կյանքը զոյատևում է երկար ժամանակ, երբեմն մի քանի հարյուր տարի: Արհեստական այս բլուրները տարիների ընթացքում աստիճանաբար բարձրացել են ի հաշիվ շինարարական հորիզոնների նորացման: Այս փաստը ցույց է տալիս, որ տվյալ տեղում հիմնադրված հնագույն բնակավայրը չի տեղաշարժվել և զբաղեցրել է գրեթե նույն տարածքը: Սնակչության ամի հետ մեկտեղ բնակավայրի շրջակայքի տարածները ենթարկվում էին երկրագործական մշակույթի զարգացմանը, իսկ հետագայում հետագնա անասնապահության համար յուրացվել են լեռնային շրջանները: Շինարարական, կառուցողական տեխնիկայի հետ կապված քննարկվող տիպի բնակավայրերի բնակելի համալիրները կառուցվում էին հում աղյուսից և որպես կանոն զոյատևում էին 35-50 տարի: Բնակելի համալիրները ավերվելուց հետո նույն տեղում փլատակները հավասարեցվում էին, և կառուցվում էր նոր շինություն, որի հետևանքով, շինարարական հորիզոնների հարթեցման պատճառով տվյալ վայրը վեր է ածվում արհեստական բլուրի: Շինարարական հորիզոնները լցված են նյութական մշակույթի և ոսկրաբանական մնացորդների մեծ քանակով /կավանոթների բեկորներ, կերակրի՝ հատկապես կենդանիների ոսկորների մնացորդներ, կենցաղային և ծիսական օջախների մոխիր/: Մոխրի հսկայական շերտի առկայությունը խոսում է այն մասին, որ բնակիչները այն որպես պարարտանյութ դեռևս չէին օգտագործում:

Նախալեռնային գոտիների բնակավայրերը ունեն համեմատաբար ավելի պակաս բարձրություն: Եթե դաշտավայրերում տեղադրված համալիրները հիմնականում աղյուսաշեն են, ապա Նենգավիթի, Էլտեք, Հաուրմի, Կաղ-

նուսի և այլ հնավայրերում պատերի զեռնախարիսխի շարվածքի համար օգտագործվել է քարը: Վերջինիս վրա համախակի քարձրացել է աղյուսե պատը: Զեռնախարիսխը ավելի ամուր էր դարձնում պատերը և մեծացնում դրանց գոյատևման ժամանակաշրջանը: Մյուս կողմից, զրեթե անփոփոխ թողնելով քարե հիմքերը, նրանց վրա քարձրացվել են նոր կացարաններ:

Հայաստանի և Անդրկովկասի լեռնային գոտիներում տեղադրված բնակավայրերը անհամեմատ վատ են ուսումնասիրվել: Դրանք ունեն քիչ հզորությամբ մշակութային շերտեր, որպես շինանյութեր հիմնականում օգտագործվել է քարը:

Բնակավայրերի տեղադրության փոփոխությունը բացատրելու համար պետք է նշվի այն փաստը, որ զեռերի հուների փոփոխության պատճառով, հատկապես դաշտավայրերում, բնակիչները գերադասում էին կառուցել նոր բնակավայրեր, քան թե մշակել ջրից հեռու գտնվող հողակտորները: Բացի նշվածից, բնակավայրը լքվում էր նաև հրդեհի, եպիդեմիայի, ռազմական քախումների պատճառով:

Բնակավայրերի տեղը փոխելու պատճառը, հատկապես լեռնային գոտիներում, ուր դեռևս շատ էին անտառները, կապված է երկարատև օգտագործման հետևանքով հողի ուժասպառ և ցանքսի համար ոչ պիտանի դառնալու հետ:

Նշված երեք տիպերի բնակավայրերը քնորոշ բնակելի կառույցները ունեն հատակագծային ընդհանրություն; Բնակարանները հատակագծում կլոր են. մի քան, որը դեռևս նկատվում է էնեոլիթյան ժամանակաշրջանում, ամբողջ Առաջավոր Ասիայի, Միջագետքի, Միջին Ասիայի որոշ շրջանների բնակավայրում: Հայաստանում և Անդրկովկասում կուր-արաքսյան մշակույթի ժամանակաշրջանում կատարվում են հատակագծային լուծումների զգալի փոփոխություններ. կլոր կացարանների տրամագծերը մեծանում են, հանգամանք, որը վկայում է բնակիչների սոցիալական միավորի որակական փոփոխության մասին: Փոքր տոհմային ընտանիքը արդեն իսկ ձևավորվել էր նախապետական մեծ ընտանիքի: Մյուս կողմից, այս կլոր կացարաններին կից կառուցվում են ուղղանկյուն, երբեմն ոչ հավասար անկյուններով կացարաններ: Կլոր կացարանների կենտրոնում /մասնավորապես Շենգավիթի պեղումներից/ հայտնաբերվել են տափակ սալքարեր, որոնք ըստ Ե.Բայբուրդյանի, ծառայել են կոնաձև տանիքի համար սյան խարիսխներ: Սակայն հետագայում պարզվեց, որ նման սալերը միշտ չէ, որ տեղադրվել են կենտրոնում, կան նաև շեղումներ, երբ սալերը պատերից որևիցե մեկին կից են կամ մոտ: Հաստատագրված փաստերից կարելի է ենթադրել, տեղաններ՝ զանազան գործիքներ պատրաստելու համար: Ինչ վերաբերվում է տանիքին, ապա պետք է մտածել, որ վերջինս էնեոլիթյան կացարանների պես ունեցել է կիսակլոր, դեպի վերը նեղացող պատեր՝ կեղծ գմբեթի ձևով, որի

կենտրոնում թողնվել է երդիկ: Դրա հետ մեկտեղ շտեմարանը կարող էին ունենալ գլխատան բրգաձև տեսք:

Ինչ վերաբերում է ուղղանկյունաձև շինություններին, տարբերություն ունեցել են հարթ, վերևից հարդախառն սվաղով կավածեփ տանիքներ: Կլոր մեծ շինությունների նշանակության մասին կան տարբեր կարծիքներ: Ըստ Շենգավիթի, Կաղնուտի, Այգևանի, Կարազի պեղումների, կացարանների կենտրոններում տեղադրվել են կլոր, ծիսական մշտական օջախներ, որոնց մոտ գտնվել են քարմաթիվ մարդակերպ, կենդանակերպ արձանիկներ, ինչպես նաև կլոր, եռանկյունի, պայտաձև, ցուլի պատկերով հենարաններով շարժական պատվանդան-օջախներ:

Որոշ մասնագետների կարծիքով պայտաձև օջախները, որոնք պատկերում են ձեռքերը լայն բացած կանանց, ուրիշների կարծիքով՝ ոտքերը լայն բացած տղամարդկանց, ունեցել են մարդակերպ կամ Ֆալոսի ձևեր և դրվելով օջախների վրա՝ հանդիսացել են բեղմնավորման, պտղաբերության սիմվոլներ: Այդ ծիսական օջախները և առարկաները որոշ մասնագետներ համարում են սրբազան անկյունների, հարթակների պարտադիր տարրեր: Սակայն նույն սենյակներում հանդիպում են տնտեսական առօրեական քնույթի գտածոներ, գործիքներ, անգամ օջախներ, որ խոսում է տվյալ կացարանի ոչ թե սրբարան, այլ բնակելի սենյակ, առանձին արհեստակացային հատված ունեցող շինություն լինելու մասին, քանի որ վերջիններիս պեղումներից հայտնաբերվել են կացնի քարե կաղապարներ, խեցեղեն, ծլեպներ և այլն:

Վաղ բրոնզի դար ցեղերի հավատալիքների մասին մեզ հիմնական պատկերացումներ են տալիս հնավայրերից գտնված մի շարք գտածոներ՝ արձանիկներ, օջախներ, կավանոթներ՝ իրենց զարդամոտիվային հարուստ հորինվածքով: Վերը նշված կլոր կացարաններում, ինչպես նշվեց, գտնվել են մեծ թվով տարբեր, մի քանի խմբերի բաժանվող օջախներ: Հիմնական խումբ են կազմում կլոր օջախները, որոնք տեղադրվում էին կացարանի կենտրոնում և օգտագործվում էին ծիսակատարության ժամանակ: Դրանք ունեն դեպի ներս ընկած կոնաձև ելուստներ, ծայրերին ցուլի ծեփաքանակի ոճավորումով: Կառնուտից հայտնի օջախների վրա կան խոյի կերտվածքներ, մինչդեռ Կարազի գտածոները հարդարվել են Ֆալոսատիպ ելուստներով: Ակնառու է, որ օջախները, ապահայտելով տան բարեկեցության ընդհանուր ծիսական պաշտամունքը, ունեն ձևաբանական որոշ տարբերով առանձնացող տեղական հատկանիշներ: Ցուլը կապվում է լուսնի պաշտամունքի հետ, միաժամանակ դրսևորելով բեղմնավորման, ուժի, քաշող կենդանու խորհուրդը: Խոյը կապվում է ամպրոպի, երկնային ջրի գաղափարի հետ, իսկ Ֆալոսը /Կարազի օջախ/ ընդհանրացնում է պտղաբերության պաշտամունքը: Ի վերջո, երեքն էլ կապվում են նույն հիմնական գաղափարի հետ, քանի որ ցուլը

նաև բեղմնավորման, պաղաքերության խորհրդանշան է, իսկ երկնային ջուրը նույն գաղափարի մի այլ ձևական արտահայտությունն է: Ինչպես նշվեց, օջախները ձևավորվում են մարդակերպ, Ֆալոսաձև, կենտրոնում ելուստավոր, պայտաձև հենակներով, որոնք խորհրդանշում են կամ ձեռքերը քացած կանանց, կամ ոտքերը բացած տղամարդկանց, որոնք պաղաքերում են օջախները: Այս քանդակները, ինչպես կտեսնենք ստորև, կանանց և տղամարդկանց արձանիկների քանարկումից, դրսևորվում են հովվության, մայրության, նահապետական ընտանիքի պահպանման և բարգավաճման աստվածությունների քնույթ:

Ցեցանոթների վրա լայն տարածում է գտել այնպիսի զարդամոտիվ, ինչպիսին է պարույրանախշը՝ կապված երկնակամարում շարժվող արևի գաղափարի հետ: Միևնույն ժամանակ այստեղ հանդիպում են տարբեր եռանկյունիներ, որոնք արտացոլում են լեռների պաշտամունքի գաղափարը: Շախմատաձև զարդը որոշ գիտնականների կարծիքով կապվում է ցանքերի, իսկ բուսական հորինվածքի զարդամոտիվները՝ զարնան զարթոնքի պաշտամունքի հետ: Որոշ խեցանոթների կանթեր հարդարված են խոյաձև կամ ձիու գլխի ծեփաքանդակներով, ելուստներով, որոնք կենդանիների պաշտամունքի խորհրդանշան են

Հնագույն մարդկանց հավատալիքների մասին տավել հստակ պատկերացումներ են տալիս տարբեր տիպի կենդանակերպ և մարդակերպ արձանիկները:

Կենդանակերպ արձանիկների մի խումբը խոշոր եղջերավոր, հիմնականում ցլագլուխ, համեմատաբար զանգվածեղ արձանիկներն են: Դրանք ունեն կետ եղջյուրներ, հզոր վիզ, խոշոր իրան, փոքր այտեր և որպես կանոն՝ երկար պոչ: Շատերի վզին կան անցքեր՝ սայլի մանրակերտի հետ միացնելու համար, մյուսները, որոնք զուրկ են նման անցքերից, ըստ երևույթին կովի արձանիկներ են՝ չնայած սեռական հատկանիշները որոշակի չեն ընդգծվում: Նման կավե արձանիկներ գտնվել են Շենգավիթից, Մոխրաբլուրից, Նախիջևանի Ջուլթեփեից, Գյոյթեփեից, Փուլերից և այլ հուշարձաններից: Մոխրաբլուրի արձանիկներից մեկի աչքը ներկված է կարմիր ներկով, մյուսի ճակատին փորագրված է աստղ, որը խոսում է վերջինիս պաշտամունքային էության մասին: Նման խորհրդանշանը շումերական զաղտնագրերում աստվածության նշան է: Ցլակերպ որոշ տարբեր առկա են նաև շարժական կավե օջախների վրա, որոնք բաժանվում են երկու խմբի: 1-ին խումբը պատկերում է ոճավորված ցուլի արձաններ, որոնք ստորին մասում հարթ են, առանց ոտքերի, առջևից քարձրացող եղջյուրներով, մեջքին կիսագնդաձև քունակով, որից սկսվում է կենդանու կարճ պոչը: Նման գտածոները հայտնի են Շրեշ-ցլուրից, Մոխրաբլուրից, Ջավրթնոցից և մ.թ.ա. 3-րդ հազ. այլ հնավայրերից: Երկրորդ խումբը կազմում են նմանատիպ արձաններ, որոնց ստորին մասում արված են չորս ոտքեր, որը պատկերին

տալիս է առավել ռեալականություն: Այս տիպի արձանիկների մեծ մասը գտնվում է Շրեշ գյուղից և Մոխրաբլուրից: Այս տիպի արձանիկները Բ. Ա.Կուֆտինը կապում է Փոքր Ասիայի, Կրետա-միքենյան պաղաքերության ասպվածուհու եղջերավոր կուռքերի հետ: Ուսումնասիրողների մեծ մասը գտնում է, որ դրանք ցլի ոճավորված պատկերներ են, որի պաշտամունքը, գոյատևելով նաև ավելի ուշ ժամանակաշրջաններում, տարածված էր Միջերկրականից մինչև Կովկաս:

Առավել մեծ քանակի են մանր եղջերավոր մանրակերտները՝ Հառիճից, Ջրահովից, Մոխրաբլուրից, Նախիջևանի Ջյուլ Թեփեից և այլն, որոնք կապվում են պաղաքերության հոտի բարգավաճման պաշտամունքի հետ: Հատկանշական է, որ խոյաձև կերտվածքները նույնպես բնորոշ են օջախներին: Դրանք խոշոր գլխով, կլորացող եղջյուրներով, գլուխը ընդգծված եռանկյունի ելուստով, կլոր փոսիկներով արված աչքերով և հստակ ընդգծված ռունգերով քանդակներ են, հայտնի Հառիճից, Մոխրաբլուրից և այլ վայրերից: Առանձնակի հետաքրքիր են Հառիճի գտածոները, որոնք զարդարված են կենդանի եռանկյունիներով, եղջյուրներից մինչև հիմքի մասը արված կեռավոր ակոսանախշով, որը պատկերում է արորով վարած հողը:

Բացի վերոհիշյալ, մեծ թիվ են կազմում մարդակերպ արձանիկները: Դրանք բաժանվում են երեք խմբի: Առաջին խմբին են պատկանում, այսպես կոչված, նատուրալիստական արձանիկները, որոնք հայտնի են Ճենգավիթից, Մոխրաբլուրից, Ջրահովից, Էլազիգից: Այս արձանիկների խումբը ներկայացնում է կանանց՝ ամբողջ հասակով կանգնած, ընդգծված կրծքերով և երբեմն՝ սեռական օրգանով: Նման մանրակերտերն ունեն ոտքեր, թույլ նշմարվող քիթ: Որոշ կանանց արձանիկների կրծքերը նշված են փոսիկներով, որը ոճական նմանություն ունի զ ազգագրական նյութերում՝ խորհրդանշելով պտղաբերությունը:

Երկրորդ խումբն են կազմում կոնաձև հիմքով /իրանով/ արձանիկները: Ոտքերից զուրկ են գտածոները ընդհանրություն են ցուցաբերում կանացի ,,նստած,, քանդակների հետ: Նման ոճավորված քնույթի մանր քանդակները հայտնի են Հառիճից, Նորշունթեփեից, Փուլուրից, Էլազիգի մոտ գտնվող Թեփեչիկից: Այս խմբի որոշ օրինակներ պատկերված են կլորացող ելուստաձև կրծերով, հաճախ վզերին կլոր գծերով ընդգծված մանյակներով: Կան նաև որոշակի տարբերություններ, օրինակ՝ Թեփեչիկի արձանների վրա ընդգծված են կրծքերը, սեռական ծրգանները; ինչ Փուլուրից, Հառիճից գտնվածները զուրկ են այդ հատկանիշներից: Փուլերի, Թեփեչիկի արձանիկների ոտքերը կոնաձև են, մինչդեռ Հառիճինը գանգի տեսքով է: Կան նաև այլ տարբերություններ, երբ ձեռքերը ոչ թե ներս, այլ դուրս են տարածված, ինչը առկա է Հառիճի օրինակներում:

Երրորդ խումբը կազմում են սկավառակաձև իրանով արձանիկները: Դրանք հայտնի են Թեփեչիկից, Նորշունքթեփեից: Վերջիններիս ձեռքերը նույնպես դեպի դուրս են տարածված, իսկ սեռական հատկանիշները քացակայում են:

Բացի կանանց արձանիկներից, գտնվել են նաև տղամարդու մանրաքանդակներ, որոնց մեծ մասը նույնպես նատուրալիստական ոճի է: Նման արձան է գտնվել Շենգավիթում, որի ձեռքերը խաչված են կրծքին, դեմքը ընդգծված է խոշոր քթով, փոքրիկ աչքերով, սեռական հատկանիշը շատ պարզունակ է արտահայտված: Տղամարդու մյուս արձանիկը /Հառիճ/ կոնաձև է և ուսին ունի հովվի գավազան:

Բացի կավե քանդակներից Ծ-րդ հազարամյակում հանդես են գալիս ավելի մեծ չափերի քարե արձանիկներ, որոնք հայտնի են Հառիճից, Մոխրաբերդից և Շենգավիթից: Հառիճի օրինակներից մեկը կարմիր տուֆից, իրանով, ձվաձիր գլխով կնոջ արձան է: Այս գտածոյին մոտենում է Թալինի ծաղկաստր գյուղում պատահականորեն գտնված քարե կուռքը:

Հատկապես հետաքրքիր են Շենգավիթում հայտնաբերված 3 խոշոր տուֆից կուռքերը՝ 0,7 , 0,9, 0,4 մ բարձրությամբ, որոնք տեղադրված են կլոր կացարանում՝ օջախի դիմաց, կանգնած վիճակում: Դրանցից մեկի վերին մասը կտրված է, մյուսներն ունեն հատակ ընդգծված գլուխներ: Դեմքի վրա արված են աչքերը, իսկ բերանը ընդգծված է կլոր, ավելի մեծ անցքով: Գլխի հետևի մասում արված է ելուստաձև կարմրաձև, որը հանդիսանում է ուսի նմանակումը: Նման արձանները սրբարաններում իրենց որոշակի տեղն ու կիրառական նշանակությունը ունեն:

Այսօրինակ քազմաթիվ նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ Հայկական բարձրավանդակում մ.թ.ա. 3-րդ հազ-ում տարածված էր քազմաստվածությունը՝ իր պանթեոնին բնորոշ հիերարխիկությամբ: Նման ՀՀՆ արևելյան երևույթը վառ կերպով երևում է շումերական պանթեոնում, ուր նույնպես առկա է աստվածների հիերարխիկ դասակարգման սկզբունքը. հաշվվում էին մի քանի հարյուր աստված և աստվածուհիներ, որոնցից շուրջ հիսունը զերազուններն էին, յոթը՝ քախտազուշակները և այլն: Ս.Ն.Կրամերի կարծիքով այդ մարդակերպ էակները որոշակի օրենքներով, նորմերով հատարակական հարաբերությունները կանոնավորող խորհուրդ էին արտահայտում: Առանձին աստվածներ հսկում էին եկինքը, ծովը, արևը, լուսինը, փոթորիկը, քամին, ջրերը և այլն: Կային աստվածներ յուրաքանչյուր քաղաքի, անգամ կառույցի համար՝ որպես պահապան հովանավորող:

Հայաստանում հայտնաբերված արձանիկները, անշուշտ, կապված են տարբեր աստվածությունների պաշտամունքի հետ, սակայն այժմ միայն ընդհանուր գծերով կարելի է վերականգնել դրանց ֆունկցիաները: Մասնավորապես արձանների հիմնական խումբը կապված է կնոջ՝ պտղաբերության հետ: Տղամարդ-

կանց քանդակների իրենց առանձնահատկություններով կապված են բեղմնավորման ճեմ:

Բացի կառույցների ներսում տեղավորված փոքր սրբարաններից, հայտնի են նաև ամբողջ բնակավայրի համար նախատեսված տաճարները համապատասխան պաշտամունքներով: Օրինակ, Մոխրաբլուրից հայտնի 6 մետրանոց քարե հզոր հարթակի վրա ժամանակին կանգնած է եղել կաթող: Այս տաճարը աղոթատեղի էր ոչ միայն Մոխրաբլուրի, այլև շրջակայքի մանր բնակավայրերի բնակիչների համար:

Փոքրիկ սրբավայրեր հայտնի են Բաքդերվիշից, Քյուլթեփեից, ՂարաՀուլուկից, Բեյջե-սուլթանից և այլ վայրերից: Նման համեմատական նյութերի քննությունը վկայում է, որ այդ տիպի պաշտամունքային կառույցներ տարածված էին ոչ միայն Հայկական բարձրավանդակում, այլև Առաջավոր Ասիայում՝ կապված պտղաբերության ընդհանուր գաղափարի հետ, որի բաղադրամասերն էին մոր, հողի, կենդանիների բեղմնավորումը, բերության զարթոնքը, մարդկանց բարեկեցությունը, երկրագործական բերքը:

Հայկական բարձրավանդակի կուր-արաքսյան մշակույթը կրող ցեղերը սերտ մշակութային կապեր ունեին հարևան երկրների հետ, որը առանձնապես արտահայտվում էր տնտեսական հարաբերությունների ոլորտում: Այդ մշակույթի արտաքին կապերի զարգացմանը նպաստել է այն, որ կուր-արաքսյան ցեղերը շարժվում էին հարավ՝ սփռելով իրենց բնակավայրերը, և հասան մինչև Սիրիա, ապա Պաղեստին, ուր այդ մշակույթը ստացավ ,,Կիրբեթ կերակ,, անվանումը: Վերաբնակ համայնքները սերտ կապի մեջ էին գտնվում տեղական բնակչության հետ: Այդ գործընթացը տանում էր Հայկական լեռնաշխարհի ցեղերի կապերի ամրապնդմանը հարուստ միջազգության և սիրիական քաղաքակրթությունների հետ: Այս եզրակացությունը հաստատվում է մի շարք նյութերով: Օրինակ, Հայաստանում, Անդրկովկասում լայնորեն տարածված մի շարք զենքի տեսակներ՝ առչուկավոր նիզակների նման օրինակներ, գտնվել են Ուրից, Կարբեմիշից, Թիլ-Քարսիքից և այլ հնավայրերի պեղումներից: Միաժամանակ այս զենքի տեսակը տարածված էր արևմուտքում՝ Բողազ-քյոյում, Կրետեում, Կիպրոսում, վկայակոչելով առևտրական կապերի և արտադրական փորձի փոխանակման մասին: Նույն երևույթը բացահայտվում է կացինների վերլուծությամբ: Այսպես, ծակ կոթառով կացինները հայտնի են Ուրից, Սխալիկ թեփեից, Սուզից և այլն, մյուս կողմից նրանց հյուսիսային սահմանները հասնում են հարավային Օսեթիա: Նաթակոթառ կացինների մի այլ տիպ ավելի հայտնի է հյուսիսում՝ Աշխերոնում, Կոքանում: Նույն զուգահեռ պատկերն է ուրվագծվում խողովակավոր կոթառով կացինների ուսումնասիրության ժամանակ, որոնք ավելի հստակորեն կապվում են ջումերական աշխարհի և Էլամի հետ և հայտնի են Ուրի, Ջիշուի, Թել-Ասմարի և այլ հուշարձանների պեղումներից:

Ավելի շատ կապեր են պարզաբանվում արվեստի հուշարձանների մեկնաբանման միջոցով: Հայաստանում հայտնաբերված արձանիկները նմանվում են Ալիշարի, Տրոյայի և այլ հուշարձանների նյութերին: Նույնը մենք նկատում ենք Հառիճի նյութերն ուսումնասիրելիս, որոնք վկայում են Հայաստանի ցեղերի և արևմտյան փոքրասիական մշակույթի կապերի մասին:

Նորշուն թեփեի կանայի քանդակները ուսումնասիրող Հ.Հաուպտմանի կարծիքով դրանք մոտենում հյուսիս-սիրական արձաններին: Ավելի շատ ավյալներ է տալիս ցլակերպ օջախների վերլուծությունը, որոնք, ինչպես վերը նշեցինք, կապվում են Կրետեի և Անատոլիայի հուշարձանների հետ և հայտնի են Բեյջեսուլթանից, Ալիշարից և այլ հուշարձաններից:

Հետաքրքիր է նաև պայտաձև օջախների համեմատությունը, որոնց ծայրերը երբեմն զարդարված են լինում խոյերի պատկերներով, մարդակերպ էակների դեմքով և գիշատիչ կենդանիների մանկերով: Այդ տիպի օջախները նմանեցվում են փոքրասիական Քյուլթեփ, Բաբարա-էլ-Աքրաղ, Տարսուս, Ալիշար և այլ վայրերի սրբավայրերում գտնված խոշոր զոհասեղաններին, որոնց մեծությունը հասնում է մի քանի մետրի:

Այսպիսով, կարելի է ասել, որ Հայկական բարձրավանդակի Կուր-Արաքսյան մշակույթի ցեղերը մտնում էին Առաջավորասիական մշակույթային ոլորտի մեջ և սերտ կապեր ունեին հարևան երկրների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գ.Ե.Արեշյան, Հնագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում, „Բանբեր Երևանի համալսարանի", 1987, նո. 3

Լ.Ա.Բարսեղյան, Հայաստանի հնագույն ցեղային միությունները, Լրաբեր, 1962, 1

Ռ.Լ.Ջալալբեկյան, Մոխրաբլուր պատվաքները, ՊՔ ՊԲՀ, 1974, նո. 4

Հ.Ա.Մարտիրոսյան, Է.Վ.Խանզադյան, Վաղ բրոնզեդարյան Հայաստանի տնտեսության հիմնական ճևերը, Հայ ժողովրդի պատմության զրքում, հ. 1, Երևան, 1971

Հ.Ա.Մարտիրոսյան, Է.Վ.Խանզադյան, Վաղ բրոնզեդարյան Հայաստանում, Հայ ժողովրդի պատմության զրքում, հ. 1, Երևան, 1971:

Հ.Ա.Մարտիրոսյան, Պաշտամունքը, կրոնը և ր արվեստը նախնադարյան Հայաստանում, Հայ ժող. պատմության զրքում, հ. 1, Երևան, 1971:

Կ.Ա.Մկրտչյան, Է.Վ.Խանզադյան, Է.Վ.Պարսամյան, Մեծամոր, Երևան,1973

Ա.Հ.Մնացականյան, Լճաշենի մշակույթի հիմնական փուլերը, ՊԲՀ,1965, նո. 2

Է.Վ.Խանզադյան, Շերշ-բլուրի և Քյուլ-Թափայի խեցեղենը ու նրա արվեստը, ՊԲՀ, 1962, նո. 3

Է.Վ.Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մ.Թ.ա. 3-րդ հազ. մշակույթը, Երևան, 1976.

Է.Վ.Խանզադյան, Հետախուզական պեղումները Պիրոմալանի շրջակայքում, Լրաբեր, 1962, նո. 10.

Է.Վ.Խանզադյան, Գառնի 4-րդ Երևան, 1967.

Ա.Ս. Սարգսյան, Է.Վ.Խանզադյան, Վաղ բրոնզեդարյան օջախները, Հայ ժողովրդի պատմության զրքում, հ. 1, Երևան, 1971:

Г.Е.Арешян. Материалы из раскопок Мохраблура. 1970.г.Вестник ЕГУ, 1972, № I.

Г.Е.Арешян, К.К.Кафадарян. Открытие культовых сооружений начала III тыс. до. н.э. в Армении. В кн.: Археологические открытия 1972г. М.,1973.

Г. Е.Арешян. К характеристике нижних слоев Мохраблурского поселения. В сборнике: Арменоведческие исследования,вып.I.Ереван, 1974.

Г.Е.Арешян, К.К.Кафадарян. Рождение монументальней архитектуры на территории открытия. Ежегодник.1974, М.,1975.

Г.Е.Арешян. Искусство куро-аракской культуры. В кн.: IIмеж. симпозиум по арм.искусству,сб.докладов,т.I,Ереван, 1981.

Г.Е.Арешян. Культурный традиционизм на примере куро-аракской культуры. В кн.: Преемственность и инневации в развитии древних культур. Л.,1981.

А.Ц.Геворкян. О древнейшей меднорудной базе Армении СА,1973, № 4.

С.А.Есаян. Оружие и военное дело в древней Армении.Ереван, 1966.

С.А.Есаян, Ереван /Археологический очерк/.Ереван,1969.

С.А.Есаян. Скульптура древней Армении.Ереван, 19

С.А.Есаян. Древняя культура племен Северо-восточной Армении. Ереван,1976.

Л.Л.Карапетян. Формы и орнаментация энеолитической керамики Армении. Изв. 1964, № 6.

Г.О.Карапетян,П.Г.Сафян, Наскальные изображения Сюника.Ереван, 1970.

К.Х.Кушнарева. К вопросу о развитии ремесел на Южном Кавказе, в древности. ИФЖ, 1974, № 2.

Б.А.Куфтин. Археологические раскопки в Триалети. Тбилиси.1941.

Б.А.Куфтин. Урартский колумбарий у подошвы Арарата и куро-араксский энеолит. ВМГ.ХШ- В Тбилиси, 1944.

К.Х.Кушнарева. Т.Н.Чубинишвили. Древняя культура Южного Кавказа. Л.,1970.

А.А.Мартиросян. К предистории древнейших этапов - культуры Армении ИФЖ, 1960, № 1.

А.А.Мартиросян, А.О.Мнацаканян. Приереванский клад древней бронзы. КСИА, вып. 134, 1973.

А.А.Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван,1964.

С.К.Межлумян. Палеофауна эпох энеолита, бронзы и железа на территории Армении. Ереван, 1972.

Р.М.Мунчаев. Кавказ на заре бронзового века. М.,1975.

Б.Б.Пиотровский. Арехология Закавказья. Л., 1949.

Б.Б.Пиотровский. Поселение медного века в Армении. СА.XI,1949.

Б.Б.Пиотровский. Развитие скотоводства в древнейшем Закавказье. СА ХШ, 1955.

Б.Б.Пиотровский. Основные этапы древнейшего земледелия в Армении. ИФЖ, 1961, № 3,4.

Т.С.Хачатрян. Древняя культура Ширака. Ереван, 1975.

Э.В.Ханзадян. О металлургии древнебронзовой эпохи в Армении. СА, 1964, № 6.

Э.В.Ханзадян. Энеолитические поселения близ Кировакана. СА, 1963, № 1.

Э.В.Ханзадян, Раскопки поселения близ с Аревик,СА, 1969,№ 4.

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Պարբ. 1 Միջին բրոնզեդարի մշակույթը

Հայկական լեռնաշխարհի և Անդրկովկասի վաղ երկրագործական մշակույթի հետագա զարգացումը նշանավորվեց մ.թ.ա. 3-րդ հազ-ի 2-րդ կեսում „Կուր-արաքսյան„ մշակութային համակարգի անկումով և միջին բրոնզի դարաշրջանին բնորոշ նոր հնագիտական մշակույթների ձևավորմամբ: Վաղ բրոնզե դարի վերջին փուլում տեղի ունեցած արմատական փոփոխությունները տնտեսական, հասարակական, սոցիալական կյանքում, որոնք հատակ արտացոլվում են հնագիտական աղբյուրների զրեթե բոլոր խմբերում, հանգեցրին „Կուր-արաքսյան„ մշակույթի ընդհանրության քայքայմանն ու մայրամուտին:

Այս փոփոխությունները որոշ հետազոտողներ փորձում են բացատրել որպես նոր ցեղերի միգրացիայի հետևանք: Սակայն չի կարելի ենթադրել, ինչպես կարծում Լ.Վուլլին, որ զունազարդ խեցեղենի հանդես գալը կապված է եկվորների հարձակումներով և Կուր-արաքսյան մշակույթի կրողների անսպասելի անհետացմամբ: Սխալ ենք համարում նաև այն գիտնականների կարծիքը, որ վաղ բրոնզեդարյան մեծաթիվ բնակատեղիներում, որպես կանոն, կյանքի հետքերը բացակայում են ընդհուպ մինչև ուշ բրոնզի դարաշրջանը, ինչպես կարծում է Ջ.Մելլարտը: Ի հակակշիռ վերջիններիս, գիտնականների մեկ այլ խումբ գտնում է, որ այս փոփոխությունները ներքին զարգացման արդյունք են՝ կապված հզոր դեմոգրաֆիական պայթյունի, անասնապահության զարգացման, դուրգի անվիվի հանդես գալու հետ: Մշակութային այս փոփոխությունները պայմանավորված են նաև Փոքր Ասիայի, Հյուսիսային Միջագետքի և Սիրիայի մշակութային ընդհանրությունների հետ սերտորեն կապված Հայկական լեռնաշխարհի հարավային և արևմտյան շրջանների հակայական ազդեցությամբ:

Մ.թ.ա. 3-րդ հազ-ի վերջերում Կուր-արաքսյան մշակույթի ընդերքում տեղի ունեցող փոփոխությունները հանգեցրին ոչ միայն զունազարդ խեցեղենի, այլև այսպես կոչված բեղենյան մշակույթի հանդես գալուն:

Այս փոփոխությունների նախանշանները սկզբնավորվում են վաղ բրոնզեդարյան բնակատեղիներում միջին բրոնզի դարաշրջանին բնորոշ զունազարդ խեցեղենի հանդես գալով:

Վաղ բրոնզեդարյան հուշարձաններում զունազարդ խեցեղենի գոծոնները հանդիպում են թթե ոչ համատարած, ապա շատ հաճախակի: Նման խեցեղեն հայտնի է Շենգավիթի 3-4 շերտերից: Այն ներկայացված է կարմիր և բացդեղնավուն անոթների բեկորներով, որոնց վրա սև և գորշ-կարմրա-

վուն ներկով արված են հորիզոնական զարդաշերտեր և ալիքանախշեր: Այս օրինակ խեցեղեն գտնվել է նաև Մեծամորում, Նոյեմբերյանի շրջանի Ջաջևան գյուղի շրջակայքում գտնվող ,,Քաղացտեղ,, բնակավայրում, Բեշտաշենում, Հառիճում, Ջրահովտում, Նախիջևանի Քյուլ-Թեփեում և այլն: Մեծ քանակությամբ գունազարդ անոթներ հանդիպում են հատկապես Գեոյ-Թեփեում, Մալաթիայում և Խարբերդում, որտեղ վարդագույն և դեղին հիմնագույնով անոթները հարդարված են սև-դարչնագույն և կարմիր-դարչնագույն գունազարդով: Մակայն ,,Կուր-արաքսյան,, մշակույթի ընդերքում գունազարդ խեցեղենի հանդես գալու պրոբլեմների ուսումնասիրության առումով առանձնահատուկ նշանակություն ունեն Արարատի շրջանի Այգևան գյուղի արևելյան ծայրամասում գտնվող բնակատեղիի պեղումները. այն բազմաշերտ մոխաբլուրի վրա է, Երևան-Արարատ մայրուղու 44-րդ կմ-ին կից: Պեղումները սկսվել են 1971թ. Բ.Բ.Պիոտրովսկու և Ս.Ա.Եսայանի ղեկավարած ՀԽՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախմբի կողմից: Երկու խոշոր շերտադրական փոսորակների պեղումների ընթացքում պարզվեց, որ բնակատեղին ունի վաղ միջնադարից վաղ բրոնզի դարաշրջանն ընդգրկող 16 մ հզորության մշակութային շերտ: Բացի այդ 1200 քառ. մ մակերեսով պեղամասում բացվել է միջնադարյան և վաղ բրոնզի դարի 1-ին շերտը 4 մ հզորությամբ: Վերոհիշյալ փոսորակներում գունազարդ խեցեղենի գտածոները հանդես են գալիս 5 մ խորության վրա, ուր զբաղեցնում են ,,Կուր-արաքսյան,, ուշ փուլին բնորոշ արտադրության նմուշները: 4,2-4,5 մ խորության վրա նյութեպես դրանք կան, սակայն ավելի մեծ թվով: Սկսած 3,5-4,1 մ խորությունից, գունազարդ խեցեղենը հանդես է գալիս ինքնուրույն և շատ բնորոշ է մ.թ.ա. 3-րդ հազ-ի վերջերին, իսկ վերջին շերտում 2,2-3,5 մ խորության վրա գունազարդ խեցեղենը արդեն բնորոշվում է մ.թ.ա. 20-18-րդ դ.դ. թվագրվող հուշարձաններով: Այս մեծաքանակ գտածոները մ.թ.ա. 20-18-րդ դ.դ. վերջին փուլին բնորոշ սև կեռազարդ խեցեղենի ուղեկցությամբ, գ գտնվում էին խիստ խառնված շինարարական հորիզոններում: Նման պատկեր կրկնվում էր նաև հիմնական պեղամասում, ուր բացի գունազարդ անոթների բեկորներից, գտնվեցին նաև կավե քրջաձև, խիստ ոճավոր, ցլի գլխով զարդարված կուռք, ինչպես նաև մանգաղի վանակատե ներդիր և ոսկրե շքասեղ: Բացի նշված գտածոներից, բացվել են նաև երկու խոշոր ուղղանկյուն կացարանների հետքեր, որոնց պահպանված պատերի բարձրությունը հասնում է 0,5-0,7 մ-ի: Այս պատերի հետքերը շարված էին անտաշ, սպիտակ կրաքարով, իսկ պատերը՝ հում աղյուսով:

Ինչպես ցույց են տալիս Այգևանի պեղումները, այստեղ կարմիր-քերդյան տիպի գունազարդ խեցեղենը հանդես է գալիս մ.թ.ա 23-21-րդ դ.դ. շերտերում, դեռևս վաղ բրոնզեդարյան մշակույթին բնորոշ իրերի ուղեկցությամբ, իսկ սկսած մ.թ.ա. 20-18-րդ դդ. զոյատևում է ինք-

նուրույն: Դատելով տանձին զարդոներով, նման պատկեր դիտվում է նաև Բեշտաշենում, Ջրահովտում, Հառիճում, Նախիջևանի Բյուլ-Թեփեի 2-րդ շերտում, Կվացխելեքիում: Սակայն նյութական մշակույթում տեղի ունեցող փոփոխությունները, կապված գունազարդ խեցեղենի հանդես գալու հետ, քնորոշ են վաղ բրոնզե դարի բոլոր հայտնի հուշարձաններին: Սրանցից մի քանիսում կյանքը դադարում է մ.թ.ա. 3-րդ հազ-ի 2-րդ կեսի վերջերում, իսկ մյուսներում այն շարունակվում է մինչև նշված ժամանակահատվածի վերջը:

Գունազարդ խեցեղենի հանդես գալը հարևան շրջանների մշակույթների ազդեցությամբ բացատրող երկրորդ վարկածի կողմնակիցների օգտին են խոսում հատկապես Այգևանի բնակատեղիի նյութերը, ուր գունազարդ խեցեղենը թե միանգամից է հանդես գալիս, այլ աստիճանաբար, ձևավորվելով ,,կուր-արաքսյան,, մշակույթի ընդերքում: Բացի այդ հենց գունազարդերի տարբերում, ինչպես նաև որոշ անոթների ձևերում նկատվում է վաղ բրոնզեդարյան ձևերի և զարդամոտիվների ազդեցությունը: Այս քանը նշվել է դեռևս Է.Խ.Կուլնարցովայի, Հ.Հ.Մարտիրոսյանի, Է.Վ.Խանզադյանի, Օ.Մ.Ջափարիձեի, Ս.Ա. Նեսյանի, Թ.Ս.Խաչատրյանի և այլոց աշխատություններում, որով ընդգծվում է միջին բրոնզի դարաշրջանի մշակույթի էվոլյուցիոն զարգացումը:

Կուր-արաքսյան խեցեղենը միջին բրոնզի դարաշրջանի գունազարդ խեցեղենի հետ կապող յուրահատուկ հավաքիրներ են Էջմիածնի շրջանի Արագած գյուղի հյուսիսային ծայրամասում հայտնաբերված երկու-երեք ամբարված դամբարանների նյութերը: Դամբարանները տուֆե հարթ սալաքարերով կառուցված քարարկղեր են: Հ.Հ.Մարտիրոսյանի ուսումնասիրած դամբարաններից մեկի խեցանոթների խումբը բաղկացած է տարբեր տեսակի 12 անոթներից՝ սև և կարմիր հիմնագույնով միականթ սափորներից, գավաթներից, քրեղաններից և ոչ մեծ կնուճներից: Սրանցում հատկանշականն այն է, որ անոթների զարդամոտիվներում վաղ բրոնզե դարին քնորոշ հատկանիշները անհետանում են, տեղի տալով որակապես նոր անոթների ձևերին: Այստեղ մի կողմից նկատվում են փայլեցրած, անզարդ մակերես ունեցող անոթների հին ավանդույթները պահպանած ձևերը, իսկ մյուս կողմից լրիվ անհետանում են կուր-արաքսյան խեցանոթներին քնորոշ կիսագնդաձև բռնակները, որոնց փոխարինելու են գալիս կորացող կամ արմնկաձև բռնակները: Անհետանում են նաև ուռուցիկ-երկրաչափական զարդաձևերը, հանդես են գալիս վաղ բրոնզի դարի խիստ պարզեցրած զարդամոտիվներ պարունակող գծազարդեր, որոնց աղերսները նկատվում են գունազարդ անոթների նեղ ժապավենաձև զարդամոտիվներում: Արագածի թեք գծիկներով, շեղանկյուններով, փոքր եռանկյուններով, երբեմն անփույթ արված փոսիկներով նեղ



Աղ. 35. Մի չին քրոնզի դարաշրջանի խեցեղեն Արմիր քերդից։

ժապավենաձև զարդանախշերը աղերնվոում են Կարազի վերին շերտի և Սաչխերիի որոշ անոթների հետ, որի մեռաղական զույգը թվագրվում է մ.թ.ա. 3-րդ հազ-ի վերջին քառորդով:

Բեղենյան մշակույթ անվանումը ծագել է Բեդենի ջրբաժան լեռնաշղթայի հարավային լանջերին պեղված դամբարանաբլուրների անվանումից /նախկին Վրացական ԽՍՀ թեթրիցկարոյի շրջան/: Հետագայում նմանօրինակ մշակույթի դամբարանաբլուրներ գտնվել են Ալազանիի հովտում /Կախեթ/: Բեղենյան դամբարանաբլուրների տրամագիծը տատանվում է 25-80 մ սահմաններում, 1,5 մ - 5 մ բարձրությամբ: Բացառությամբ մեկի, մնացած բոլորը հատակազծում ուղղանկյուն, հիմնահողային դամբանափոսեր ունեն, որոնցից մի քանիսում դամբանախցերը կառուցվել են փայտից: Որպես կանոն, սրանց հատակները խարսպատ են եղել: Որոշ դամբարաններում գտնվել են փայտյա կուռքերի, կաշվի, պատգարակների, սկուտեղների, թասերի հետքեր, պղնձե տարկաներ՝ շքասեղներ, հերուն, կացին, դաշույն, ոսկյա և արծաթյա իրեր և այլն: Պեղող հնագետ Գ.Ֆ. Գոբեջիշվիլու և այլ հետազոտողների կողմից ստացված գտածոների համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս Բեդենյան դամբանաբլուրները թվագրել մ.թ.ա. 8-րդ հազ-ի 2-րդ կեսով 2-րդ հազ.-ի սկզբով: Հայաստանի Հանրապետության տարածքում Բեդենյան մշակույթի հուշարձան պեղվել է Ինջևանի շրջանի Բերքաբեր գյուղի շրջակայքում /պեղ. ղեկ. Գ.Ե.Արեշյան, Հ.Ե.Սիմոնյան/: Այն գտնվել է Ջողազի ջրամբարից 1- կմ-ի վրա-Ջողազ գետի աջ ափին, ,,Գիլեսնու հողեր,, վայրում և իրենից ներկայացնում է քարահողային լիցքով 1,2 մ բարձրությամբ, 25 մ տրամագծով խոշոր դամբանաբլուր: Լիցքը ուղղահայաց կտրվածքով բազմաշերտ է: Ստորին շերտը դեղնավուն օխրայի գնդիկներով կավահող է, որի վրա լցված է միագույն մանրահող, որն էլ իր հերթին պատված է 30-60 սմ հզորությամբ քարե ,,զրահով,,: Քարեհողային լիցքը, որը ծածկում էր ,,զրահը,, , ջրամբարի շինարարության ընթացքում քշվել-տարվել է: ,,Զրահի,, տակ և նրա մեջ գտնվեցին, ըստ երևույթին, զոհաբերված մարդու 7 կմախք, որոնց հետ դրված էին վանակատե ձլեպներ և ջարդոտված խեցեղեն: Դամբանախուցը հիմնահողային է, որը վերին մասում /1,9 մ խորությամբ / ձվաձև է,5-4 մ/, իսկ փորված կենտրոնում, ստորինում /մինչև 2,6 մ խորությամբ/ ուղղանկյուն է, ուր դրված են տարբեր մեծության 20 սև և կարմիր կավանոթներ: Դամբանախցի ստորին հորիզոնում, պնտերի եզրերին թողնվել է 0,6-1,2 մ լայնությամբ ելուստ-հենապատ, որի վրա նկատվում էին վառված եղեգնի հետքեր և դրված էր զենքը՝ քրոնզե տեգի ծայր, երկու քրոնզե և երկու վանակատե նետասլաքներ: Խուցը ծածկված է եղել գերաններով, որոնց հետքերը երևում էին լիցքում: Այս

դամբանաբլուրը պատկանում է հուշարձանների այն խմբին, որոնք ներկայացված են Ալազանի հովտի և Բեղենյան մեծ դամբանաբլուրներով/Արեվելյան Վրաստան/ և ներկայումս միավորվում են Կուրի միջին հոսանքներում տարածված Բեղենյան հնագիտական մշակույթի շրջանակներում և վերաբերում են վաղ բրոնզի դարաշրջանի ավարտական փուլին, թվագրվելով մ.թ.ա. 23-20-րդ դ.դ.-ով:

Այսպիսով, մ.թ.ա. 3-րդ հազ-ի վերջերին, 2-րդ հազ.-ի սկզբներին ձևավորվում են նոր մշակութային ընդհանրություններ, որոնք, զբաղեցնելով Հայկական լեռնաշխարհի մեծագույն մասը և Անդրկովկասի նրան հարող շրջանները, գոյատևում են ընդհուպ մինչև մ.թ.ա. 2-թդ հազ-ի կեսերը, համընկնելով խեթական ցեղերի կենտրոնացման, նրանց թագավորության ձևավորման, փոքր Ասիայի մշակույթների աննախադեպ զարգացման ժամանակահատվածին:

Հայաստանի և Անդրկովկասի միջին բրոնզեդարյան հուշարձանները որոնք կազմում են մեկ մշակութային ընդհանրության չորս տեղայնական տարբերակներ՝ Կարմիր-բերդյան, Թռեղք-կիրովականյան, Կարմիր-վանքյան և Սևան-ուզերլիկյան, ըստ Հ.Հ.Մարտիրոսյանի առաջադրած ժամանակագրության, բաժանվում են երեք ժամանակագրական փուլերի: Առաջին փուլին՝ մ.թ.ա. 20-18-րդ դ.դ., վերաբերում են Կարմիր-բերդի, Կարմիր-վանքի և Թռեղքի 1-ին փուլի դամբարանները: Այս ժամանակահատվածի էտալոնային հոյակապ հուշարձան է համարվում Կարմիր-բերդի դամբարանադաշտը: Կիկլոպյան ամրոցի զոնվում է Հրազդան գետի աջ ափին, Երևանից Եղվարդ տանող Ճանապարհի և Կիրճի միջակայքում: Հնագիտական գրականության մեջ այս դամբարանադաշտը հայտնի է նաև Թազաքենդ, Ղալ-դալա, Գայախարաբա անուններով: Դամբարանադաշտից ներքև, Հրազդանի կիրճին կախված կլորավուն հրվանդանի վրա պահպանվել է միջնադարյան կիսավեր ամրոց, որի հսկայական քարաբեկորներով շարված պատերի ստորին մասը հուշում է, որ ամրոցը գոյատևել է դամբարանադաշտի հետ մեկտեղ: Մի քանի հարյուր դամբարաններից բաղկացած այս հսկա դամբարանադաշտը առաջին անգամ պեղվել է 1896 թ. Պ.Վ.Զարկովսկու կողմից, որն այստեղ պեղել է 22 դամբարան: 1903 թ. այստեղ պեղումներ է կատարել հնագիտությունից շատ հեռու կանգնած Մ.Զաքարյանը, իսկ 1904 թ. նրա պեղած դամբարանները նորից ուսումնասիրել է Է.Ռեյսլերը: Պեղված դամբարանները ստորաբաժանվում են երկու տիպերի՝ 1. առավել հները զանգվածեղ տուֆե սալաքարերով ծածկված հիմնահողային խցեր են, ուր հիմնականում զտնվում էին կարմիր հիմնագույնի վրա սև գունազարդումով անոթներ և 2. ավելի ուշ շրջանի ,,քարարկղային,, տիպի դամբանախցերը, որոնք նույնպես ծածկված էին տուֆե սալաքարերով: Երկու տիպի դամբանախցերն էլ շրջազված

էին կրոմլեխով և ունեին ոչ բարձր քարահողային լիցք? Մ.թ.ա. 20-18-րդ դ.դ. թվագրվող կարմիր-բերդյան դամբարաններից հայտնաբերված խեցանոթները ներկայացված են հիմնականում կարմիր հիմնազույնով, տարբեր տիպերի սափորներով, որոնք հարդարված են սև գունազարդով: Զարդամոտիվները բաղկացած են տարբեր տեսակի շեղանկյուններից, զուգահեռ գծերից, թեք գծիկներից, զուլգ, զազաթներից միացած եռանկյունիներից, ցանցաձևով սովերազծված ուղղանկյունիներից, խոշոր գալարազարդերից, հորիզոնական զիգզագ գծերից, որոնցից իջնում են պարուրներ, խաչերից, շախմատանախշից և այլն: Պ.Վ.Զարկովսկու հավաքածուում միակ բացառությունն է կետ-գծերով արված զիգզագներով զարդարված սև փայլեցրած անոթը և 1967 թ. այստեղ պատահականորեն գտնված կետ-գծերով արված ուղիղ և ալիքանախշ գծերով զարդարված լայնաբերան, սև փայլեցրած անոթը: Այս հավաքածուում: Հ.Հ.Մարտիրոսյանը առանձնացնում է խեցանոթների ոչ մեծ խումբ, որը բնորոշ է միջին բրոնզի ավելի ուշ փուլին՝ մ.թ.ա. 17-16-րդ դ.դ.-ին: Սրանց թվին են պատկանում Պ.Վ.Զարկովսկու կողմից պեղված 11 դամբանաբլրի նյութերը և Է.Ռյոսլերի պեղումներից մի քանի անոթ: Այդ փուլին հատկապես բնորոշ է ներգծված կիսաշրջաններով զարդարված թասը:

Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում նոր Բայազետի /Կամո/ թատրոնի քակում 1956 թ. գտնված գունազարդ անոթների խումբը՝ բաղկացած երկու կարմիր հիմնազույնով թասերից և մեկ կնուցից: Սրանց զարդամոտիվները համապատասխանում են Կարմիր-բերդյան անոթների մոտիվներին, սակայն զարդանախշերը կատարված են երկու գույնով՝ եռանկյունիների զարդագոտին արված է իրար հաջորդող սև և սպիտակ գույներով, որոնցից իջնում են սև եզրագծերով սպիտակ պարուրներ:

Հառիճի քնակատեղին և դամբարանադաշտը: Վաղ բրոնզի դարին նվիրված գլխում նկարագրված Հառիճի քնակատեղիի տարածքը քննարկվող ժամանակահատվածում էական փոփոխություններ չի կրել: Այդ են վկայում ինչպես վերգետնյա նյութերը, այնպես էլ 2-րդ դարավանդում և կիկլոպյան ամրոցի քնակելի կառույցների պատերը .մաքրելիս Թ.Ա.Խաչատրյանի կատարած հետախուզական պեղումները: Հատկապես մեծ քանակի նյութեր են ստացվել Հառիճի դամբարանադաշտի դամբարանների ուսումնասիրության ընթացքում, ուր պեղվել է միջին բրոնզի դարաշրջանի 85 դամբարան: Դամբարանադաշտը գտնվում է ամրոցին անմիջապես կից և զբաղեցնում է 3 հա տարածքը: Հառիճում արված թաղումների համար ընդհանուր և տարածված են 0,7-0,8 մ բարձրությամբ քարահողային, երբեմն քարային լիցքով, 10-16 մ շրջագիծ ունեցող կրոմլեխներով հիմնահողային դամբարանները: Դամբարանաքցերը հատակազծում ուղղանկյուն են, թեև հանդիպում են նաև



Նկ. 37. Միջին բրոնզի դարաշրջանի խեցեղեն և ոսկրից սանր Հառիճից։

այնպիսիները, որոնք ունեն կլորացող անկյուններ կամ ծվածև են: Դամբանախցերի չափերը տարբեր են: Գերակշռում են 3,2 մ երկարությամբ, և 1,8 մ լայնությամբ խցերը, որոնք ունեն քարահողային լիցք և ծածկված են խոշոր տուֆե սալաքարերով: Միայն մեկ դեպքում են գրանցվել փայտյա ծածկի հետքեր /դամբ. 44/, որով վերջինս աղերսվում է Լճաշենի դամբարանների ծածկի ձևերին: Հիմնականում կատարվել են անհատական թաղումներ, բացառիկ դեպքերում գրանցվել են զույգ թաղումներ: Դիաթաղման ձևերում երբեմն հանդիպում են մասնատված թաղումներ, գերակշռում է գլուխը մարմնից անջատելու սովորությունը: Այս դեպքում գլուխը սովորաբար դրվում էր կավե քրեղանի մեջ: Գլուխը մարմնից անջատված թաղումներ հանդիպում են նաև Լճաշենի դամբարաններում: Կառուցողական հատկանիշներով Հառիճի դամբարանները իրենց զուգահեռները ունեն Կարմիր-բերդի, Գառնիի, Խաթունարխի, Լճաշենի և այլ համաժամանակյա հուշարձաններում: Գեղումների ընթացքում հաճախ հանդիպում էին ածխացած փայտի, մոխրի հետքեր, որը կապված է դամբարանը ,,չար,, ոգիներից մաքրելու ծեսի հետ:

Հառիճի միջին քրոնզեդարյան դամբարանադաշտը, ըստ Տ.Մ.Խաչատրյանի, գոյատևել է ամբողջ միջին քրոնզի դարաշրջանում և ժամանակագրորեն բաժանվում է երեք փուլի՝ մ.թ.ա. 20-18-րդ, 18-17 և 17-16 դ.դ.-ին համապատասխանող: Նո. 4-6,8,9,17,63 դամբարանները համարվում են Հառիճի առավել վաղ համալիրները: Այս դամբարանները մետաղ չեն պարունակում, և նրանց համալիրները բաղկացած են միայն հիմնականում անզարդ նավանոթներից՝ կնուններից, անկանթ սափորներից: Անոթներից մի քանիսը զարդարված են զգաթները ներքև եռանկյունիներով, դրանց մի մասը արվերագծված է կետերով, զույգ զիգզագ գծերով: Կավանոթների այս հավաքածոյի մեջ հատակ առանձնանում են կավանոթների երկու խումբ՝ կոպիտ խոհանոցային և կոկափայլ անոթներ: Խոհանոցային խեցեղենը հիմնականում պատրաստված է ավազի և մանր քարերի խառնուրդով քաց գույնի կավից: Իր արխայիկ ձևերով առանձնացող այս խեցանոթների մեջ կան նմուշներ, որոնք աղերսվում են վաղ քրոնզեդարյան անոթների ձևերին: Այս կապը շատ ավելի երևում է կոկափայլ սպասքի ձևերում: Այս անոթները հիմնականում պատրաստված են լավ հունցված կավից և ունեն հիմնականում սև, շատ քիչ դարչնագույն կամ մուգ գորշագույն գույն:

Հառիճի 2-րդ խմբի դամբարաններում /դամբ. 7,12,14,15,20,19,62 91,102,104, 108 և այլն/ կետ-գծերով և գծազարդով զարդարված կոպիտ խոհանոցային և սև կոկափայլ խոհանոցային և զունազարդ անոթները համատեղ են հանդես գալիս: Գունազարդ անոթների համալիրներում, որպես կանոն, մետաղե իրեր չկան: Միայն նո. 104 դամբարանում գտնվել է ոս-

կորից հրաշալի մշակված սանր: Հարիճի վաղ զունազարդ խեցանոթները բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբում հիմնականում ներկայանում են քրեղանները և անկանթ սափորները, որոնց զարդանմոտիվները ոչնչով չեն տարբերվում Կարմիր-բերդյան անոթների զարդանախշերից: Երկրորդ խմբի զունազարդ անոթները, որոնք անմիջապես կրկնում են 1-ին խմբի անոթների ձևերը և զարդամոտիվները, հանդես են գալիս ժամանակագրորեն մի փոքր ավելի ուշ հանդիպող կետ-գծային զարդարված սապանի հետ:

Արուճի դամբանաբլուրները: Աշտարակի շրջանի Արուճ գյուղի մոտակայքում գտնվել է դամբանաբլուրների մի խումբ, որը տեղաբաշխված է Թամիրամից սկսվող ավազաբլուրների երկայնքով: Դամբանաբլուրների այս խմբում պեղվել են երեք դամբարան, որն իրականացրել է Երևանի պետական համալսարանի արշավախումբը 1976-78 թ.թ. /արշ. ղեկ. Գ.Ե.Արեշյան/: Դամբանաբլուրների տրամագիծը հասնում է 27-28 մ, որոնք հիմքում շրջապատված էին կրոմլեխով: 1-ին և 2-րդ դամբանաբլուրները ներկայացնում են միջին բրոնզի դարի Թոեղք կիրովականյան մշակույթը: Սրանք ունեն արևելյան կողմից դրոմոս-մուտքով ընդարձակ դամբանասրահներ: 2-րդ դամբանաբլուրում բացվել են խարույկի հետքեր: Թաղման գույքը ներկայացված է կավանոթներով, քրոնզե, ոսկյա և արծաթյա պերճանքի իրերով, զենքով, զոհաբերված կենդանիների ոսկորներով: Առանձնանում են անոթների հետևյալ խումբ՝ կարմիր անգրաստատ հիմնազույնի վրա սև զունազարդ, կարմիր անգրաստատ, տատմնավոր դրոշմիչով զարդարված, սև կոկափայլ և կոպիտ զորշ-մոխրագույն խեցանոթներ: Ըստ ձևերի առանձնանում են խոր թասերը, նեղվիզ սափորները և խոր, լայնաբերան կճուճները: Մնացած գտածոների մեջ պետք է նշել բրոնզե նիզակը, որի կոթատը ունի զոտեկապ, բրոնզե կաթսան, սերդուլիկով զարդարված ոսկյա գլխիկով արծաթե շքասեղը զավազանի ոսկյա գլխիկը, ոսկյա և սերդուլիկե ուլունքները, վանակատե նետասլաքները: Այս բոլորը թվագրվում է մ.թ.ա. 19-18-րդ դ.դ.:

Միջին բրոնզի դարի դամբարանները 1969-70 թթ. պեղել է Լ.Պետրոսյանը: Դամբարաններն ունեն շրջագիծ կրոմլեխ և քարարկղերի տեսք, ուր բացվել են ինչպես դիաթաղում, այնպես էլ դիակիզում: Այս դամբարաններից գտնված զունազարդ և կետ-գծերով զարդարված սև կակափայլ անոթները, վանակատե նետասլաքները և քազմաթիվ ուլունքներից բաղկացած շարաններ թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազ. 1-ին կեսով:

,,Վերին նավեր,, - Դամբարանադաշտը գտնվում է Աշտարակից 3 կմ արևմուտք, Երևան-Լենինական ծանապարհից աջ, ,,Վերին նավեր,, կոչվող տեղանքում: Զբաղեցնում է 100 հա տարածք, ուր ներկայումս պահպանվել է մոտ 300 դամբարան: Դամբարաններն ունեն 7-ից 4 մ տրամագիծ և մինչև 3 մ բարձրություն: Թումբ կազմող լիցք: Դամբանախցերը հիմնահողային են, շրջագծված կրոմլեխով: Ծածկված են 2-5 տուֆե սալաքարերով: Մի-

ջին բրոնզեդարյան դամբարաններում կան Կարմիր-բերդյան, Սևան-ուզերլիկյան և Թռեղք-կիրովականյան մշակույթներին վերաբերող նյութեր և թվագրվում են մ.թ.ա. Ż-րդ հազ. 1-ին կեսով: Գտնվել են մեծ քանակությամբ խեցանոթներ, բրոնզե պարանոցի իրեր, բրոնզե դաշույներ, վանակատե և կայծքարե նետասլաքներ, ապակյա, հախմապակյա ուլունքներ, ծովային խխունջներ և այլն: Խեցեղենը ներկայացված է սև կոկափայլ միագույն գունազարդումով անոթներից: Հանդիպում է նաև դարչնագույն կոպիտ խոհանոցային խեցեղեն: Հետաքրքիր է, որ 1-ին խմբի անոթները պատրաստվել են դուրգի անիվի վրա, իսկ խոհանոցայինը՝ ձեռքով: Բացի թաղման գույքից, դամբարաններում դրվել են նաև խոշոր եղջերավոր անասուններ՝ ամբողջական կամ մասնատված վիճակում: Թաղումները հիմնականում անհատական են, կծկված վիճակում: Դամբանափորները կողմնորոշված են հյուսիս-հարավ առանցքով:

Գառնի: Միջին բրոնզի դարաշրջանի մշակույթի մնացորդներ այստեղ հայտնի են ինչպես անտիկ ժամանակաշրջանի ամրոցի տարածքից, այնպես էլ մի շարք պատահաբար բացված դամբարաններից, բնակատեղիում, ուր միջին բրոնզի դարաշրջանի շերտեր չէին պահպանվել: Սկսած 1950 թ., այդ դարաշրջանի մշակույթի հետքեր գրանցվել են անտիկ պարսպի հիմքերի և աշտարակների մոտ՝ 4 կետերում: Այս նյութերը գտնվել են ինչպես բերդապարսպից ներս, այնպես էլ դուրս, սա հնարավորություն է տալիս ենթադրելու, որ միջին բրոնզեդարյան բնակատեղին ավելի մեծ տարածք է զբաղեցրել: Միջին բրոնզեդարյան խեցեղենը այս պեղամասերում ընկած է վաղ բրոնզեդարյան շերտերից վեր, անտիկ և միջնադարյան խեցեղենի հետ խառնված շերտերում: Գառնիի ամրոցի միջին բրոնզեդարյան խեցեղենը ներկայացված է գունազարդ և զծազարդ կավանոթների բազմաթիվ բեկորներով: Գունազարդ անոթներից գտնվել են թաս և խոշոր անոթների բեկորներ, որոնք զարդարված են թեք ստվերագծերով պատված շեղանկյունների զարդաշղթայով: Այստեղ գտնվել են նաև զիգզագներով, ալիքանախշերով զարդարված խոշոր սափորների բեկորներ, քիզոններ և վայրի ցուլերի հիշեցնող ֆանտաստիկ էակների պատկերներ: Հնավորավոր է, որ դրանք ներկայացնում են որսորդական տեսարան: Հանդիպում են նաև երկարավիզ և երկարապոչ կենդանիներ, կարապ հիշեցնող թռչունների գունազարդ պատկերներով անոթների բեկորներ:

Բացի այս զտածոներից, գտնվել են նաև մի շարք հիմնահողային դամբարաններ: Դամբարանների մի խումբը ընկած էր գյուղի հյուսիսարևելյան ծայրում, մյուսը՝ արևելյան: Դամբարաններից մեկում գտնվել է 9 անոթ, քարե փոքր թաս /աղաման/, վանակատե բեկոր: Այս անոթներից մեկը՝ գունազարդ թասը, զարդարված է ներգծված կիսաշրջաններով, որը Ուզերլիկ-թեփեի սև փայլեցրած խեցանոթների սերված զարդամոտիվն է, այն արվել

է քայլող դրոշմիշով: Այստեղից գտնված մյուս երկկոն անոթը, ինչպես և վերը նշված թասը, աղերսվում են Թոեղքի 15-րդ դ. դամբարանաբլի արձաթե սպասքին, որը հնարավորություն է տալիս այս դամբարանը թվագրել Կիրովականի ժամանակաշրջանով՝ մ.թ.ա. 18-16-րդ դ.դդ.: Սրտաշատ տանող Ճանապարհի եզրին գտնվող դամբարանից գտնվել է 13 կավանոթ, որոնցից 3-ը՝ գունազարդ, մյուսները՝ բաց գորշավուն մակերեսով; երկու գունազարդ սափորները զարդարված են թեք ստվերագծով շեղանկյունիների զարդաշղթայով:

Գառնիի գունազարդ անոթների մյուս քնորոշ խումբն կազմում սափոր-հիդրաները: Հիդրաներից մեկը՝ երկդաշտ կոմպոզիցիայով, զարդարված է խոշոր ստվերագծված գիգզագով, ալիքանախշով և թռչունների պատկերներով: Հանդիպում են նաև միադաշտ կոմպոզիցիայով հիդրաներ, որոնք զարդարված են երկրաչափական նախազարդով և ջրային թռչունների պատկերներով:

<u>Մեծամորի քնակավայրը:</u> Մեծամորում միջին բրոնզի դարաշրջանի մշակույթը հաստատագրված է շերտագրական փոսորակում, ինչպես նաև բլրի տարբեր տարածքներում և դամբարանադաշտում հողային աշխատանքների ժամանակ պատահական զտածոներով: Շերտագրական փոսորակում զրանցվել են կավածեփ հատակով և տեղ-տեղ պահպանված պատերով մի քանի շինարարական հորիզոններ: Այստեղ գտնված նյութերը ներկայացված են հիմնականում միազույն զարդանախշով գունազարդ և սև կետ-գծերով զարդարված անոթների բեկորներով:

Գունազարդ խեցեղենը ներկայացված է խոշոր անոթների, ոչ մեծ սափորների՝, քրեղանների և այլ բեկորներով, որոնք զարդարված են զույգ սակրերով, ցանցաձևով, պարույրներով, բազմաշար անկյուններով, զիգզագներով և այլն: Սրանց հետ մեկտեղ հանդիպում են միջին բրոնզի դարի 2-րդ փուլին քնորոշ խեցու բեկորներ, որոնք հայտնի են Ուզերլիկթեփեից և Լճաշենից: Սև խեցանոթները զարդարված են քայլող դրոշմիշով արված կետ-գծերով և կետերով: Բեկորներից մեկի վրա պատկերված է օձ, որը ճանդիպում է գունազարդ խեցեղենի հետ ինչպես վերը նշված հուշարձաններում, այնպես էլ հետագա դարերում, մինչև միջին բրոնզի դարաշրջանի վերջին: Խեցանոթների հետ մեկտեղ գտնվել են նաև քարե գործիքներ՝ աղորիքներ և բեկորներ, վանակատ ծլեներ, սրոցաքարեր, կոկոնչ և խոշոր ու մանր եղջերավոր անասունների մեծ քանակությամբ ոսկորներ: Հատկապես հետաքրքիրություն են ներկայացնում մի քանի տասնյակ Ճաները, որոնցից մեկը հղկված է երկու կողմից:

<u>Կարմիր-վանքի դամբարանադաշտը:</u> Ժամանակագրորեն Կարմիր-բերդյան խեցեղենի մոտ են Կարմիր-վանք /Կիզիլ-վանք/ մենաստանի մոտերքում



Նկ. 36. Միջին քրոնզի դարաշրջանի խեցեղեն Հառիճից:

1895 թ. սահմանագահ սա Ն.Վ.Ֆեդորովի կողմից պեղված դամբարանների կավանոթները, որոնք հատակ ստորաբաժանվում են մ.թ.ա. 2-րդ հազ. 1-ին կեսի սահմաններում տարբեր ժամանակների վերաբերող երկու խմբերի:

Այս խմբի մեջ են մտնում բաց անգոբով պատված ծեռաձեփ ցածրադիր թասերը, սափորները և կնուծները, որոնց վրա սև և մուգ-կարմիր գույներով արված են սվերազծված կամ սև ներկով պատված եռանկյունիներ, շեղանկյունիներ, զարդաղաշտեր, անկյուններ և այլն: Գունազարդ անոթների մեջ առանձնանում է ձեռք-ձեռքի տված, աղոթքի դիրքում կանգնած երկու մարդու պատկերներով զարդարված անոթը: Մի շարք այլ անոթների վրա հանդիպում են ծովային թռչունների, ինչպես նաև օձի պատկերներ. վերջինս նկատվում է Կարմիր-բերդի պեղումներից հավաքված Մ.Զաքարյանցի հավաքածուում եղած անոթի զարդանախշում և Երևանից պատահականորեն գտնված անոթի վրա: Կարմիր-վանքի այս համալիրները, որոնք պարունակում են բազմազույն զարդաքանդակ խեցանոթներ, ցավոք, ըստ համալիրների փաստագրված չեն, և նրանց հնարավոր է թվագրել միայն ամբողջությամբ վերցրած, վերագրելով 19-18-րդ դդ.-ով: Խեցանոթների այս խմբին են վերաբերում տանձաձև երեք գուրգերը, քրոնգե շքասեղները և ոսկյա քարակ լարից ականջօղը: Կարմիր վանքն իր բազմազույն զարդարանքով աղերսվում է մերձուրմյան շրջանի խեցանոթների հետ /Գեոյթեփե, Հավթվանթեփե/՝ պատկանելով Հայկական լեռնաշխարհի ֆարավարևելյան շրջանին բնորոշ միասնական մշակույթին: Սրա հետ մեկտեղ Կարմիր-վանքի խեցեղենը մի շարք բնորոշ գծերով՝ օձի պատկերներով, գունազարդ ցանցաղաշտով, սվերազծված դեկլուններով և զարդանախշի կոմպոզիցիաներով նույնական է Կարմիր-բերդի անոթներին, որը հնարավորություն է տալիս խոսելու ոչ թե առանձին մշակույթների, այլ շատ մոտ մշակույթների ընդհանրությունների մասին, որ բնորոշ է Հայկական լեռնաշխարհին: Սրա օգտին են խոսում նաև Նոր-Բայազետից գտնված վերը նշված բազմազույն զարդով խեցեղեն գտածոները, որոնք նույնպես համաժամանակյա են Կարմիրբերդի խեցեղենի հետ:

Կարմիր վանքից, նշված համալիրներից առանձին, գտնվել է մ.թ.ա. 18-րդ դարով թվագրվող շրջանակաձև դաստակով դաշույն, որը նմանվում է Հաուիցից գտնված նմանօրինակ դաշույնին՝ կազմելով Հայաստանի շրջանակաձև դաստակով առավել վաղ դաշույնների մի փոքր խումբ:

1926 թ. Ի.Մ.Մեշչանինովը, նույնպես Կարմիր վանքում, հայտնաբերել է գունազարդ անոթներ: Սրանք գտնվել են ,,քարարկղային,, դամբարաններում, որոնցում հանգուցյալները պառկած էին կծկված վիճակում,

ալ կողքի վրա: Այս դամբարաններից գտնված գունազարդ, ինչպես նաև կավանոթները ներկայացված են երկար վզերով սափորներով, յուրահատուկ թեյնիկներ հիշեցնող ծորակավոր կնճռներով: Զարդանախշը հիմնականում արված է սև և կարմրադարշնագույն ներկերով: Այստեղ գտնված մեռելի իրերը ներկայացված են տափակ շեղբով, լեզվակավոր դաշույնով և դողձև նետասլաքով: Թեև ուսումնասիրողները, մասնավորապես Հ.Հ. Մարտիրոսյանը, այս դամբարանները թվագրում են միջին բրոնզի դարաշրջանի 2-րդ փուլով, սակայն իրավացիորեն նշվում է, որ այստեղ նկատված մի շարք հատկանիշներ բնորոշ են միջին բրոնզի դարի վերջին և ուշ բրոնզի դարի սկզբին:

Էլառի դամբարանադաշտ: Միջին բրոնզի դարաշրջանի մշակույթը Էլառում ներկայացված է դամբարանային նյութերով: Ամրոցի պեղումները բացահայտեցին այդ դարաշրջանի մի շատ աննշան շերտ, որը պարունակում էր գունազարդ սև միագույն խեցեղեն և կնոցազներով զարդարվում դարչնագույն սափորներ: Դամբարանային նյութերը վերաբերում են միջին բրոնզի դարի տարբեր փուլերին: Դամբարանները հիմնահողային են: Կատարվել են ինչպես դիակիզումներ, այնպես էլ կծկված վիճակում դիաթաղումներ: Միջին բրոնզի վաղ փուլին են վերաբերում Նո.նո. 25,28,29,32 դամբարանները: Այս դամբարաններից գտնված խեցեղենը բաղկացած էր միագույն զարդարված և սև սափորներից, որոնք զարդարված էին փորագիր և կետ-գիծ զարդանախշով: Հանդիպում է նաև խոհանոցային խեցեղեն: Հատկապես հատկանշական է Նո. 32 դամբարանի գունազարդ սափորը, որի զարդանախշը կատարված է վառ կարմիր հիմնագույնի վրա սև ներկով: Իրանի կենտրոնը զարդարված է զիգզագներով և ցանցկեն դաշտով: Պատկերված են նաև կարճ ոտքերով, երկարակուռ, ոչ մեծ գլուխներով, երկար իրանով և վզով ֆանտաստիկ կենդանիներ: Սրանցից վեր պատկերված են լողացող ձկներ: Մնացած դամբարաններում գտնվել են բազմաշերտ զիգզագներով զարդարված տարբեր քրեղաններ, զորշ սափորներ, կնճռներ, բրոնզե սափորիկ, թարե և կավե կափարիչներ: Հատկապես հետաքրքիր են Նո. 25 դամբարանի խեցեղեն զառծոները, ուր հանդիպում են փորագիր զիգզագներով զարդարված սափորներ: Նմանօրինակ խեցեղենի բեկորներ գտնվել են նաև Էլառի ամրոցի վերին բրոնզեդարյան շերտերից:

Լճաշենի դամբարանադաշտ: Միջին բրոնզի վաղ փուլի հուշարձանները հայտնի են նաև Լճաշենից, ուր պեղվել են մի քանի դամբարաններ, որոնք բաժանվում են 3 խմբի: Ա-ին խմբին վերաբերում են Նո.նո. 7, 14,40,44 դամբարանաթուրները՝ ոչ մեծ դամբարանաթցերով, որոնք ուղղված են՝ ինչպես հյուսիսից հարավ, այնպես էլ արևելքից արևմուտք: Սրանցից երկուսում /Նո.նո. 7 և 14/ կատարվել է դիակիզում, մնացածներում գտնվել է 6 կմախք: Դամբարաններից մեկում /Նո. 40/ թաղվածներից մեկը դրված է հատուկ փայտյա պատվանդանի վրա: Սրա զանգի մոտ

գտնվեցին պղնձե ականջօղեր և խխունջներ: Դամբարաններում գտնվել են ցուլի գանգեր և վերջույթներ: Գտնված համալիրները բաղկացած են սովորական խոհանոցային սպասքի տարբեր խեցեղենից, կարմիր անգոբից, կեռ-գծերով զարդարված սև, անփայլ անոթներից:

Երկրորդ խմբին են պատկանում Լճաշենի 2-րդ դամբարանադաշտի նո.4 և 135 դամբարանները: Ն. 4 դամբանաբլրի տրամագիծը 21 մ է: Թաղման խուցը քարե պատերով, կեղծ թաղով դամբարան է, որը պահվել է գերանի սյուներով: Խցի հարավային մասում գտնվել է 3 կմախք, իսկ չորրորդը գտնվել էր կենտրոնում՝ կծկված, աջ կողքի վրա պառկած վիճակում: Այստեղ հայտնաբերված խեցեղենը ներկայացված է կեռ-գծերով զարդարված, սև փայլեցրած սափորներով և քրեղաններով և երկլայնափոր ծիսական անոթով:

8 մ տրամագիծ ունեցող, քարեհողային լիցքով, քարե պատերով նո. 135 դամբարանը ծածկված էր 9 սալաքարերով: Այստեղ գտնվել է Լճաշենի ամենահին երկանիվ փայտյա կառքը, որի թափքին դրված էր հանգուցյալը: Անիվները սկավառակաձև են: Սոնին անշարժ ամրացված էր թափքին: Ցցեղեն զույգը բաղկացած էր սպիտակ ազուցվածքով կեռ-գիծ զարդանախշեր ունեցող սև փայլեցրած տարբեր սափորներից և քրեղաններից:

Լճաշենի միջին բրոնզեդարի դամբարանների 3-րդ խումբը ներկայացված է տարբեր ուղղվածության ,,քարարկղերով,, և հիմնահողային դամբարանախցերով: Բացառությամբ մեկից, մյուսներում կմախքը բացակայում էր: Ուղեկցող զույգը հիմնականում բաղկացած էր խեցեղենից, մեծաքանակ վանակատե նետասլաքներից, բրոնզե տեզերից և դաշույններից: Յուրաքանչյուր դամբարանում գտնվել են 8-ից 20 խեցանոթ, խոշոր և մանր եղջերավոր անասուններ և թռչունների ոսկորներ: Խեցանոթները ներկայացված են տարբեր սափորներով և ընկույզի կեսի տեսքով քրեղաններով հիմնականում կեռազարդ են; Սրանք բոլորն էլ հրաշալի փայլեցված են, հանդիպում են նաև խոհանոցային անոթներ: Գտնվել են գունազարդ անոթներ, որոնք լավ աղերսվում են Կարմիր-բերդյան դամբարանի վաղ շրջանի գունազարդ անոթներին: Գունազարդ անոթների զարդամոտիվները բաղկացած են ալիքանախշերից և ծովային թռչունների պատկերներից: Սև փայլեցրած կավանոթները հիմնականում զարդարված են կեռազարդ զիգզագներով և պարույրներով:

Բոլոր այս երեք խմբերը թվագրվում են մ.թ.ա. 20-18-րդ դդ.:

Միջին բրոնզի դարաշրջանի 2-րդ փուլը անցումային դիրք է գրավում Կարմիր-բերդյան մշակույթի /20-18-րդ դ.դ./ վերջերից մինչև Կիրովականյան տիպի դամբանաբլուրների սկիզբը /16-րդ դ./, այսինքն 18-րդ դ. վերջից 17-րդ դ. ներառյալ: Այս տիպի հուշարձանների թվին է պատկանում Ապարանում պատահականորեն բացված դամբարանը, որը

1952 թ. ուսումնասիրվել է Թ.Ս.Խաչատրյանի և Ս.Ա.Ենայանի կողմից: Բացի հիմնահողային դամբարանում դրված մարդու կմախքի մնացորդներից, այստեղ գտնվեցին մի քանի սև փայլեցրած և գունազարդ անոթներ: Սև փայլեցրած խեցեղենը ներկայացված է երեք անոթներով, ազուցված զարդանախշով զարդարված սպիտակ, 8 խոշոր քեկորներով, իսկ կարմիր հիմնազույնով անոթները զարդարված են սև գունազարդումով:

Մուխանաթթափա: Նման խեցեղեն հանդիպում է Երևանի Մուխանաթթափա թաղամասում,որը 1935-37թ.թ. պեղվել է Ե.Բայբուրդյանը:Մուխանաթթափայի գունազարդ խեցեղենը ներկայացված է լայնաբերան սափորների և այլ խոշոր անոթների բազմաթիվ քեկորներով: Սրանք բոլորն ունեն դարչնագույն կամ կարմիր հիմնագույն և զարդարված են սև գունազարդով՝տարբեր պարույրներով, զիգզագներով, ալիքաձև և ուղիղ գծերով, եռանկյունիներով, ուղիղ և թեք ցանցաղաշտերով և այլն: Մուխանաթթափայի այս շերտի գունազարդ խեցեղենն իր զուգահեռներն ունի Կաիմրբերդի և Ուզերլիկթեփեի գունազարդ զարդամոտիվներում, որը մի փոքր երիտասարդացնում է նրան: Այս երիտասարդացումը հստակ երևում է նաև գունազարդ խեցեղենի հետ հանդիպող սև փայլեցրած անոթների քեկորներից, որոնք զարդարված են ատամնավոր կնիքով արված ալիքանախշ զարդարանքով: Նման խեցեղեն բացի Ապարանի նշված դամբարանից, հայտնի է Գիրովականի, Ցամաքաբերդի, Այրվանքի, Գառնիի, Լճաշենի, Կարսի և մ.թ.ա. 18-17-րդ դ.դ. թվագրվող այլ հուշարձաններից: Այս խմբի մեջ է մտնում Սևանի Հէկ-ի կառուցման ժամանակ բացված /1965թ./ և Հ.Հ.Ենացականյանի կողմից ուսումնասիրված հիմնահողային դամբանախցերով խեցանոթների հետաքրքիր խումբը: Այստեղ գտնված սև, հրաշալի կոկափայլ խոշոր կճումները և սափորները իրենք զարդամոտիվներով շատ մոտ են Ապարանի խեցեղենին, բայց շատ ավելի հարուստ են: Զիգզագ գծերով զարդանախշերը, մեկ դեպքում նաև մանգաղաձև ելուստով և ցանցաղաշտով; արված են սպիտակ, ազուցված կետ-գծերով: Նման անոթներ հայտնաբերվել են Կամոյում. այստեղ սրանք զարդարված են կետանախշերի շարքով և սպիտակ, ազուցված զիգզագներով: Այս ժամանակաշրջանի դամբարանների թվին են պատկանում Դիլիջանում, Աղստևի ափին պատահականորեն բացված դամբարանը, որի զույքը բաղկացած է մեկ սափորից և 3 խոշոր քրեղաններից: Սրանք բոլորը սև, փայլեցված են և զարդարված ալիքանախշով, որն արված է սպիտակ ազուցված գծիկներով, իսկ անոթների մի մասը, ինչպես Սևանի Հէկ-ի կավանոթները, ունեին դուրս եկող մանգաղաձև ճկված գծեր: Այդ ժամանակին են վերաբերում նաև Հառիճի դամբարանադաշտի մի խումբ դամբարաններ/նո.նո. 50,98,111/, որոնք պարունակում են հիմնականում կետագիծ նախշով զարդարված խոհանոցային և սև խեցեղեն: Սանրատամ դրոշմի-

չով արված կետ-գծերով զարդանախշը հանդիպում է առավել արխայիկ Թռեղ-կիրովականյան խմբի խեցեղենի նախաշաձևերում: Այս դամբարաններում գտնված խեցեղենը հիմնականում ունի սև, փայլեցրած մակերես, զարդարված է կետ-գծերով զարդանախշով՝ հաճախակի կրկնելով միջին բրոնզի վաղ փուլի խեցեղենի զունազարդման մոտիվները: Խոհանոցի խեցեղենը գրեթե չի տարբերվում 1-ին փուլի նման խեցեղենից:

Սև, փայլեցրած կավանոթները հիմնականում զարդարված են զիգզագ կամ ալիքաձև նախշով, որն արված է կետ-գծերով և քարակ գծերի շարքով, սրանց մի մասը սպիտակ ազուցված է: Հառիճի դամբարանի այս խմբի խեցեղենի զուգահեռներ կան ՀԷՆ-ի շինարարության ժամանակ պեղված և Ապարանում պատահականորեն բացված դամբարանների նյութերում: Սևանի և Հառիճի նյութերի նմանությունը նկատվում է հատկապես ոչ միայն զարդանախշում, այլ նաև անոթների ձևերում: Այս զուգահեռները, ինչպես նաև նյութի քննությունը՝ հնարավորություն են տալիս Հառիճի դամբարանների նշված խումբը թվագրել մ.թ.ա. 18-17-րդ դ.դ.-ով: Ձևերով նման անոթներ պատահականորեն գտնվեցին 1955 թ. Դիլիջանում, Աղստևի ափին: Սրանք բոլորը սև փայլեցրած են և բաղկացած են մեկ սափորից ու երեք ցրեղաններից: Այս անոթները զարդարված են կարճ գծիկներով արված ալիքանախշով: Որոշ անոթների վրա այս գծերից իջնում են նույն եղանակով արված մանգաղաձև ճկված գծեր: Տեղ-տեղ այս զարդերի վրա պահպանվել են սպիտակ ազուցվածքի հետքեր: Այս տիպի անոթներ շատ են հանդիպում հատկապես Լճաշենում, որոնց մի մասի հատակները զարդարված են արևը խորհրդանշող սպիտակ ազուցված խաչերով և կեռախաչերով: Ձևով նման անոթներ գտնվել են Լճաշենի նո. 6 դամբանաբլրից: Դամբանախուցը հիմնահող է, քառանկյունի /չափերը 2,5 4,5 մ/՝ ծածկված է քարեհողի լիցք ունեցող դամբարանթմբերով: Դամբարանում մարդու կմախք չի գրանցվել: Կարելի է ենթադրել, որ դիակիզումը կատարվել է դամբարանից դուրս:

Գտնվեցին մեծ քանակությամբ զունազարդ և խոհանոցային կավանոթներ, խոշոր և մանր եղջերավոր անասունների ոսկորներ, վանակատ ծլեներ: Այստեղ գտնված ոչ մեծ զունազարդ սափորները, քարե ցրեղանները, կնիքները ունեն վառ կարմիր հիմնագույն, անոթների վերին հատվածները զունազարդված են սև ներկով: Զարդանախշերը բաղկացած էին ուղղանկյունաձև ֆիգուրներից, հորիզոնական ուղիղ և ալիքաձև գծերից, որոնք կատարման ձևով և եղանակով համընկնում են Ուզերլիկ-Թեփեի անոթներին, ստեղծելով Անդրկովկասի զունազարդ անոթների Սևան-Ուզերլիկյան յուրահատուկ խումբ: Նման զարդարումով անոթներ հայտնի են Կիրովականից, Բայազետից /Կամո/, Էլառից-, Թռեղից, Զառնաբաղից և մի շարք այլ հու-

շարժաններից: Քննարկվող դամբարանի զորշ, խոհանոցային խեցեղենը նույնպես հանրնկնում է Ուզերլիկ-թեփեի խեցեղենին: Բացառություն են կազմում միայն երկու անոթներ, որոնցից մեկը խոշոր քրեղան է՝ ընկույզի կիսակեղևի ձևերով, որի գունազարդ օրինակները, ինչպես վերևում նշվեց, հայտնի են Ն.Բայազետից, և մյուսը ոչ մեծ նրբախեցի, երկկանթանի սափոր է: Սրա վերին մասը զարդարված է փայլանախշով արված ալիքանախշով և թեք գծերով, որը հանդիսանում է փայլանախշով արված զարդարանքի գունազարդ օրինակներից և լայն կիրառություն է ունեցել ուշ բրոնզի դարաշրջանում, վկայելով Հայաստանի մշակույթի ժառանգականության մասին:

Ուզերլիկթեփե: Միջին բրոնզի դարաշրջանի մշակույթի ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունեն Ուզերլիկթեփեի պեղումները, որը կատարել է Կ.Խ.Քուշնարցովան 1954-56 թ.թ.: Ուզերլիկթեփե բլուրը ընկած է Աղդամ քաղաքի արևելյան ծայրամասում, Ղարաքաղյան դաշտավայրի սկզբում: Արհեստական բլուր-բնակավայրերը անկանոն շրջանի ձև ունեն, 202 196 մ տրամագծով, միջին բարձրությունը՝ 9,8 մ, որի ձևավորվել է 3-3,5 մ բարձրության բնական թմբի վրա: Այստեղ պեղվել է 500 քառ. մ տարածք, ուր գրանցվել է 3 մշակութային շերտ:

70-80 սմ հաստությամբ ներքևի շերտը պաշտպանական կառույցներ չի ունեցել, և բնակատեղին սկզբնապես անպաշտպան է եղել: Այս շերտի բնորոշ հատկանիշը մեծ քանակությամբ հորերի /մոտ 70/ առկայությունն է: Կառույցների հատակներին փորված այս հորերը տարբեր նշանակություն են ունեցել: Այսպես, օջախների մոտ գտնվող հորերը հաճախ լցվում էին մոխրով: Պային հացահատիկ, այլուր պահելու համար հորեր: Այլ հորեր օգտագործվել են որպես այս կամ այն իրերի պահեստարաններ: Այսպես, մեկում գտնվեցին ուտելիքով լցված երկու խոշոր կնուններ: Կառույցներից մեկում, որի հատակը պատված էր 9 սմ հաստության կավածեփով գրանցվեցին ուժեղ հրդեհի հետքեր: Կուռույցի պատերը կազմված էին ծողունների շարքից, որոնց միջև եղած տարածքը լցված էր եղեգնի և ցյուղերի հյուսվածքով, իսկ վրայից ծեփված էր կավի հաստ շերտով: Հատակները երբեմն պատվել են խսիրով: Բնակատեղիի այս շարքի գտածոների մեծ մասը քացառապես խեցեղեն է, և շատ քիչ են ոսկրե և քարե իրեր: Քարե գործիքնեբը հիմնականում պատրաստված էին գետաքարերից՝ մշակման հետքերով, որոնք, ըստ երևույթին, օգտագործվել են որպես սանդակոթեր և սանդեր: Գտնվել են նաև փափուկ քարերից արված տափակ կլորավուն, ոչ մեծ անոթների կափարիչներ: Գտնվել են նաև քարե մի քանի կախիկներ: Ոսկրե իրերը հիմնականում ներկայացված են խողովակաձև ոսկորներից պատրաստված տարբեր քրեղաններով, հերուններով և այլն: Հանդիպում են

նաև մ.թ.ա. 3-րդ հազ-ից հանախակի հանդիպող, կենտրոնում անցքով մանր: Հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում ներքին շերտերում գտնված պղնձաձուլական արտադրության հետքերը, հալոց խարամի կտորները, որոնց մեջ առկա է անագ:

Ներքին շերտի խեցեղեն իրերը ստորաբաժանվում են երկու խմբի. 1-ին խումբը կազմում է քանկայածև կմումներից, փոքրիկ, երբեմն միականթ կմումներից, ոչ մեծ գավերից և քրեղաններից բաղկացած խոհանոցային խեցեղենը:

2-րդ խումբը ներկայացնում են լավ հունված կագից, մուգ գույնի նրբախեցի անոթները, որոնք ձեռաձեփ են, բայց խնամքով մշակված և արտաքինից կոկափայլ: Գրեթե բոլորը զարդարված են փորագիր զծագարդերով և պարզունակ քնույթ ունեն:

2-րդ շերտի պեղումները ցույց են տալիս, որ քնակատեղիի ամբողջ հիմնական տնտեսական կյանքը կենտրոնացվել է քլրի կենտրոնական հատվածում, որը շրջապատված էր պաշտպանական պարսպաշարքով: Պարիսպը քացվել է 30 մ երկարությամբ: Այն ունի 1,9-ից 2 մ լայնություն: Պատերը շարված են հարդախառն աղյուսով, որոնք ունեն տարբեր չափեր /երկ. 38,40, 42,46, 48 սմ, ավելի հանախ՝ 40 և 38, բարձ. 8 սմ/: Ամբողջ պեղամասի մակերեսով, 160 և 180 սմ խորության վրա գրանցվել են շատ ուժեղ հրդեհի հետքեր: Այստեղ, տարբեր հորիզոններում, գրանցվել են հատակի և ավերված կառույցների հետքեր, որոնք հարում են նշված պարսպապատին: Այդպիսի մի կացարանից ջարդոտված խեցանոթի մեջ գտնվել են հացահատիկի մնացորդներ, մի քանի սանդաթակեր և աղորիքներ, մանգաղի կայծքարե ներդիրներ և գնդաձև զույգի քեկոր: Մի փոքր հարավ, մեկ այլ ենթադրյալ կացարանում, գտնվել են քրոնզե դաշույնի շեղբ և ասեղ: Տարբեր մակարդակներում գտնվել են մեծ քանակությամբ հորեր, օջախներ, տարբեր քարե և ոսկրե գործիքներ և հատկապես քազմաքանակ խեցեղեն, որոնց մեջ հանդիպում են նաև ամբողջական իրեր:

1-ին շերտի կոպիտ խոհանոցային խեցեղենը, որ թվագրվում է մ.թ.ա. 20-19-րդ դ.դ., շարունակում է գոյատևել ՄՎերին շերտերում առանց որևէ որակական փոփոխությունների: Մնացած խեցանոթները նույնական են 2-րդ և 3-րդ շերտերի խեցեղենին: Այն ներկայացված է հիմնականում սև փայլեցրած խեցեղենով, որը 1-ին շերտի 2-րդ խմբի խեցեղենի զարգացած և կատարյալ փուլն է: Հանդես են գալիս մինչև 65 սմ բարձրության խոշոր անոթներ: Հատկապես նրբանում է մանրածավալ սպասքը, որը երբեմն ունենում է կրկնաձև նստուկներ: Շուրթերի տակով անցնում է հորիզոնական լայն ակոս; նախորդ փուլի համեմատությամբ նշանակալիորեն լավանում է սևացման և հատկապես անգոբների փայլեցման որակը: Վերին շերտերի խեցեղենն ունի սև փայլեցրած ,,ազաթային,, մակերես: Բայց կավի վրա սուր գործիքով

արված զծազարդին փոխարինում է ատամնավոր ,,թայլող-դրոշմիչը: Զարդանախշերը բազմազան են և բաղկացած են կամարաձև գծերից, հորիզոնական զարդագոտիներից, ներգծված կիսաշրջանաձևերից և օվալներից: Հանդիպում են ձգված շեղանկյուններ, զիգզագաձև գծեր և այլն: Վերջիններիս շատ մոտ խեցեղեն հայտնաբերվել է Գեոյթեփեի բլուրում, որն ընկած է Ուզերլիկից 10 կմ հյուսիս-արևմուտք, Թռեղջյան դամբանաբլուրներում, Սամթավրոյում և Պրինեվիում /հարավային Օսեթիա/: Ինչ վերաբերում է Հայկական լեռնաշխարհին, ապա նման խեցեղեն լավ հայտնի է Մուխանաթափայի Կիրովականի, Այրիվանքի, Ցամաքաբերդի, Լճաշենի և այլ հնավայրերից:

Վերին երկու շերտերում սև փայլեցրած խեցեղենի հետ հանդես է գալիս գունազարդը, կազմելով Ուզերլիկիթեփեի խեցանոթների 3-րդ խումբը: Այն միագույն է, արված սև ներկով՝ կարմիր հիմնագույնի վրա: Գունազարդը արվում է շուրթի վրա և անոթի վերին հատվածում: Այն արված է քավականին անփույթ և իրենից ներկայացնում է մի քանի զուգահեռ ուղիներ, ալիքաձև և զիգզագ գծեր, թեք ստվերագծված շեղանկյուններ: Մեկ դեպքում անոթի ուսին, կարմիր անգոբի վրայից արված է սպիտակ անգոբի լայն գոտի, որի վրա սև ներկով զարդանախշ կա: Զարդարման այս եղանակը առկա է նաև Այգևանի խեցանոթների բեկորներից մեկի վրա, միայն այն տարբերությամբ, որ այստեղ սպիտակի փոխարեն հիմնագույնը մարմնագույն է: Ուզերբլիկի խեցանոթների վրա նկատվում են այնպիսի ավանդական գծեր, որոնք ծաղկում են միջին քրոնզի դարաշրջանում և ուշ քրոնզի դարի սկզբում՝ հաղես գալով այնպիսի հայտնի հուշարձաններում, ինչպես սին են Թռեղքի, Կիրովականի, Լճաշենի, Լոռի-Բերդի հարուստ դամբանաբլուրները: Հատկապես հետաքրքիր է վերին շերտերում նստուկով մանրածավալ կնիքների հանդես գալը, որը գիտվում է որպես հաստատուն մետաղական ձևերի արտահայտություն խեցեղենում: Այդ առումով հետաքրքրություն են ներկայացնում Կիրովականի, Թռեղքի, ոսկյա և արծաթյա անոթները /ինչպես ծիծեռնակաբերդի կավե գավերը/:

Հայկական լեռնաշխարհի և Անդրկովկասի միջին քրոնզի դարաշրջանի մշակույթի ուսումնասիրության համար բացառիկ կարևոր նշանակություն ունեն Հայկական լեռնաշխարհի հյուսիսային ծայրամասում ընկած Թռեղջյան դամբանաբլուրները: Թռեղջյան դամբարանաբլուրը, որը պեղել է Բ.Ա.Կուֆտինը 1936-47 թ.թ., ունի մինչև 5 մ բարձրության լիցք և խոշոր դամբանախցեր: Այսպես, նո՝ 36 դամբանախցի դամբարանարահը ուներ 175 քառ. մ մակերես: Խոշոր քարերով նրա պատերը շարվածքը պահպանվել է 4 մ բարձրությամբ: Որոշ դամբանաբլուրների հիմնահողային դամբարանները /նո.10/ ունեին 8 մ խորություն, չհաշված լիցքի բարձրությունը:



Նկ. 38. Միջին բրոնզի դարաշրջանի խեցեղեն Հառիճից։

Նո. 17 դամբանարանի չափերը հասնում էին՝ երկ. 14 մ լայն. 7,5, խոր. 6 մ: Հիմնահողային դամբանախցերը հաճախ մինչև 3 հազ. քառ.մ մակերեսով թմբի նկատմամբ արտակենտրոն տեղադրություն ունեին: Նման չափերը և տեղադրությունը քացատրում են, թե ինչու Թոեղջի քազմաթիվ դամբարանաբլուրներ, ի տարբերություն մյուսների, մեզ են հասել անժեռնմբխելի վիճակում; Թոեղջի միջին բրոնզեդարյան դամբանաբլուրները առանձնանում են բազմազան թանկարժեք մետաղների՝ ոսկյա, արծաթյա զավթների, հարդարանքի առարկաների, բազմազան զինանշանների զարդարման, ոսկյա շրջանակների, փայտյա իրերի ոսկյա երեսպատների առկայությամբ:

Թոեղջյան դամբարանաբլուրների գույքին բնորոշ գծերից մեկը զենքի հազվագյուտ լինելն է: Այստեղ գտնվել են մի քանի վանակատ և մեկ կայծքարե նետասլաք, մեկ խողովակաձև նիզակ և դաշույնների երեք շեղբ /մեկը, արծաթե, երկուսը՝ բրոնզե/: Քննարկվող դարաշրջանի Թոեղջյան դամբարանաբլուրների թաղումներն իրենց բնույթով բաժանվում են երկու տիպի՝ հիմնահողային դամբանախցերով և խուց չունեցող: Երկուսն էլ նախատեսված են անհատական թաղումների համար: Երկու տիպի դամբարանների թմբերը քաղկացած են խոշոր քարաբեկորներից և գետաքարերից:

Երբեմն առանց խցի դամբանաբլուրների լիցքը կարծես թե շերտավոր կազմվածք ունի: Այն է՝ ստորին շերտը քաղկացած է խոշոր քարերից, որոնց վրա լցված է կրաքարի խիճը, իսկ վերին լիցքը կազմված է միջին մեծության քարերից:

Զգված քառանկյունու տեսքով հիմնահողային դամբանախցերը կողմնորոշված են արևելքից արևմուտք: Խոշոր դամբանախցերը հատակներն, ինչպես Հյուսիսային Կովկասի Մայկոպյան մշակույթում, պատված են խսիրով: Դամբարանների զգալի մասը ունեին հիմնահողային խուցի թեքությամբ իջնող դամբանամուտք՝ ,,դրոմոս,,: Հիմնահողային դամբարան-խցերը ծածկվել են գերանաշարքով, որի վրա լցվել է դամբարանաբլուր կազմող թումքը: Քանի որ կենդանիների ոսկորները լավ էին պահպանվել, իսկ մարդու կմախքի ոսկորներ չեն գտնվել, կարելի է ենթադրել, որ դամբարանից դուրս կատարվել է դիակիզում, իսկ մոխիրը սփռվել է դամբարանում, որը լավ կապավում է խեթական թազավորների դիակիզման ծիսակարգին: Ինչպես երևում է, հանգուցյալի աճյունը քերվել է փայտյա սայլով, որոնցից մեկը գրեթե ամբողջությամբ պահպանվել է Սաքիա-Ախչա վայրում պեղված 29 դամբանաբլուրում: Մնացած դամբանաբլուրներում խցերի հատակներին պահպանվել են ինչպես անիվների թողած հետքերը, այնպես էլ անիվների փայտյա մնացորդները: Այստեղ երբեմն հանդիպում են նաև ցլերի կմախքի մնացորդներ և լավ պահպանված զանգեր: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, կարծես թե դրվել են երկու ցուլի մորթիներ, որոնք այնպես են մշակել, որ գլուխը և ոտքերը մնացել են մորթու վրա;


1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29

ի տարբերություն հիմնահողային դամբանախցեր ունեցող դամբարան-ների, ստորգետնյա դամբանախուց չունեցողները կառուցվում էին հողի մակերեսին և ունեին գրեթե նույն չափերը: Անկասկած, սրանք նույնպես զերանածածկ են եղել, որի վրա քարծրացել է դամբանաբլուրը կազմող թումբը: Ինչպես երևում է, սայլերի հետ մեկտեղ այստեղ դրվել են նաև փայտյա մահիճներ, որի մասին է խոսում դամբարաններից մեկում մահիճները երեսպատող ոսկյա թիթեղը:

Երկու տիպի դամբանաբլուրներից գտնված խեցեղենը ներկայանում է գլխավորապես անկանոն և երկկանոն խոշոր սափորներով, որոնք ըստ թրծման բնույթի, արտաքին մակերեսի հարդարման և զարդանախշերի, բաժանվում են մի քանի խմբերի: Առանձնահատուկ խումբ են կազմում գունազարդ անոթները, որոնք իրենց հերթին ստորաբաժանվում են սև գունազարդով կարմիր անգոբապատ և սև, գորշավուն կամ դարչնագույն գունազարդերով սպիտակ անգոբապատ անոթների, որոնք զարդարված են ալիքանախշով, շեղանկյուններով, ալիքաձև գծերով տեղերազծված ուղղանկյուններով, թռչունների պատկերներով, կիսաշրջաններով, շրջանակներով և այլն:

Այս խեցանոթների հետ մեկտեղ հանդիպում են սպիտակ, ազուցված գծազարդով սև փայլեցրած անոթներ: Այս անոթների զարդամոտիվները կազմված են բուլորազծերից, պարույրներից, շեղանկյուններից, շախմատային դրոշմիչով արված նախշերը:

Թռեղքյան խեցեղենի երրորդ խումբը կազմում են խոր կտրվածքներով արված, երկրաչափական զարդանախշերով, կոպիտ խեցեղենը և սև փայլեցրած խեցեղենը, որ զարդարված է ակոսավոր-ուռուցիկ զարդագոտիներով:

Թռեղքյան դամբարանաբլուրներում խեցեղեն արտադրանքի հետ մեկտեղ լայնորեն ներկայացված են մետաղե իրեր՝ հիմնականում զարդարանքի թանկարժեք առարկաներ և տարբեր անոթներ: Սրանց թվում հարկ է նշել քարծր, սնամեջ ոտքով շքեղ բրոնզե սկահակը, ոսկրե և արծաթե թասերը, դրվագման միջոցով սյուժետային հորինվածքներով զարդարված արծաթե գավաթը և դույլիկը:

Գտնվել է նաև քարծրորակ ոսկյա գավաթ, որը զարդարված է ապլիկացիայով, լարահյուսով և ազուցված բազմագույն քարերով: Բացի նշված անոթներից, գտնվել են նաև ոսկյա մանյակների մեծ քանակությամբ դետալներ, ազաթե կուլոններ, ծարմանդներ, տարբեր թիթեղներ, խողովակաձև ուլունքներ, շքասեղներ, կենդանիների արձանիկներ, ոսկյա զինանշանների դետալներ, տարբեր կախիկներ, իրերի շրջանակներ և այլն: Կիրառման արվեստի անկրկնելի նմուշներ հանդիսացող այս իրերը ոչ միայն հաստատագրում են վարպետների անգերազանց պրոֆեսիոնալիզմը, այլև ցույց են տալիս միջին բրոնզի դարաշրջանում հասարակության ներսում

եղած հսկայական սոցիալական և զուլքային շերտավորման առկայությունը: Թվագրված իրերի շարքում բացառիկ տեղ ունեն հարուստ զարդարված արծաթյա զավաթը և դուլլը: Գավաթը կլորացող հատակով, լայնացող սնամեջ նստուկով, գլանաձև անոթ է, որի իրանը պատում են դրոշմազարդ երկու գոտիները. դրանցից վերինում պատկերված է խիտոներ հագած ձեռքերին մեծ գավաթներ պահած, գայլի դիմակով 23 մարդկանցից կազմված մի թափոր՝ դեմքով ուղղված առանց թիկնակի աթոռին նստած մարդը, որի հետևում պատկերված է ծառ, իսկ առջևում եռոտանի զոհասեղան է, քարձր անոթներ և երկու երկարապոչ կենդանիներ/շներ/: Ստորին զարդագոտու վրա պատկերված են իրար հետևից հաջորդաբար գնացող որձ և էգ եղջերուներ, եղնիկներ; ճիշտ նույնպիսի եղջերուներ և եղնիկներ են պատկերված արծաթե դուլլի զարդանախշերում: Դուլլի վերականգնված հատվածը ամբողջովին պատված է տեղական որսորդական ֆաունայի տարբեր ներկայացուցիչների պատկերներով՝ այծերով, կխտարներով, այծյամներով, երկու տեսակի վարազներով: Պատկերված կենդանիներից մի քանիսը խոցված են նետերով: Սա ցույց է տալիս, որ այստեղ պատկերված է որսորդական տեսարան:

Միջին բրոնզի 2-րդ փուլի նյութեր հայտնաբերվել են նաև Էլառի դամբարանադաշտում: Այստեղ գտնված զունազարդ անոթները ներկայացված են կարմիր, անգորապատ մակերես ունեցող խոշոր, լայնաբերան սափորներով որոնց վերին մասը զարդարված է զույգ զիգզագներով, ուղղահայաց թեք գծերով՝ ստվերագծված շերեփանման, եռանկյունաձև զարդանախշերով, բազմաշատ եռանկյունիներով, ցանցաղաշտ և ջրային թռչունների պատկերներով: Գտնվել են նաև ծաղկաշղթաներով, շախմատաձև զարդերով, ստվերագծված եռանկյունիներով, շրջանակներով նախշազարդված զունազարդ քրեղաններ: Բացի զունազարդ անոթներից, գտնվել են նաև շազանակագույն, վայլեցրած մակերեսով խոր քրեղան /մեկը՝ բռնակով/ և զորշ, խոշոր հիդրաներ:

Միջին բրոնզի դարաշրջանի եզակի հուշարձան է Նաիրիի շրջանի Քարաշամբ գյուղի մոտ /1987 թ. պեղված խոշոր դամբարանը, որը 30 մ տրամագծով, 1,5 մ բարձրությամբ քարե լիցքով դամբանաբլուր է: Թաղումը կատարվել է մայր հողի մակերեսին, որի համար բնական, ոչ բարձր թմբի վրա մեղքված, խոշոր քարերով ուղղանկյուն թաղման հրապարակ է պատրաստվել, այն երկայնական առանցքով ուղղված է արևելքից արևմուտք: Հատակը պատվել է կտորով, որի վրա էլ ափվել է դիակիզված ոսկրունը: Թաղումը ուղեկցվում է շատ հարուստ զույքով և զոհաբերված խոշոր և մանր եղջերավոր անասուններով, վայրի կենդանիներով և թռչուններով:

Ուղեկցող զույքը ներկայացված է զտածոների հետևյալ խմբերով:

Զենք: 1/ Կարճ լեզվակով, եռանկյունաձև շեղբով քրոնզե դաշույն Լեզվակի վրա բռնակի ամրացնելու համար անցք է արված:

2/ Պիաուսնաձև սայրով և հենաձողով արծաթյա սակը: 3/ Զրահաշապկի երկու կոմպլեկտ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է փորը պահպանող ուղղանկյուն թիթեղից և մամլապատ կետազարդով ու գործվածքին կամ կաշվե հիմքին կարելու համար անցքերով երկու խոշոր գրահակոճակներից:

Ոպասք: 1/Թաղման հրապարակի կենտրոնում, երեք ոչ մեծ քարերի վրա դրված էր ցածրադիր իրանով, նեղ-ձգվող վզով երկկանթ կաթսա, որի մեջ գտնվեցին թռչնի ոսկորներ և թաղման հրապարակի ծածկի գերանի մնացորդներ: 2/ Խեցանոթներ, որոնք ենթակայացված են քաց գույնի ատատով, սև փայլեցված և անփայլ մակերեսով անոթներով՝ զարդարված գծազարդով, կետազարդով և գծիներով:

Հիշանվեքյան խորհրդանիշեր: Բացի արծաթյա սակրից, սրանց թվին է դասվում զինանշանի գավազանի գագաթին ամրացվող քրոնզե սկավառակը: Սա ունի մի փոքրիկ /կոտրված/ լեզվակ, որի վրա գավազանին ամրացնելու համար անցք է արվել: Ընդ որում, այդ գավազանը պատվել է ոսկյա պարուրաձև լարերի գալարներով:

Զարդարանք: Գտնվել է երկու մանյակ: Առաջինը բաղկացած է լեռնային քյուրեղապակու, սարդիոնի, կարնեոլի, ինչպես նաև մեծ քանակությամբ ուռուցիկ, մանր ոսկյա ուլունքներից: Մանյակի կենտրոնում կան խոշոր, հարթ, ձվաձև հղկված սարդիոնիքս և երկու խոշոր, գլանաձև, ոսկյա ուլունքներ, որոնք պատրաստված են քարակ թիթեղից և զարդարված են մամլապատ զարդով: Այստեղ գտնվել են նաև գանգվածեղ ոսկյա թիթեղից երկու մարմանդներ: Սրանց արտաքին երեսը զարդարված է լարահյուս ,,վազող պարույրներով,, որոնք այնպես են զոդվել թիթեղին, որ պարույրների յուրաքանչյուր գալարը, դեպի կենտրոն աստիճանաբար բարձրանալով, ստեղծում է պարույրների կոն: Հակառակ կողմում կան խողովակաձև երկարավուն հանգույցներ՝ թելի անցկացման կամ հիմքին խրելու համար: Երկրորդը բաղկացած է ուռուցիկ, մանր ոսկյա ուլունքներից, սև գիշերից արված և կապույտ շաղախից ուլունքներից: Գտնվել են նաև քրոնզե և արծաթյա շքասեղներ, որոնք գնդաձև գլխիկների տակ, դողերին ունեն անցք: Արդուզարդի իրերից հարկ է նշել նաև ,,վազող պարույրով,, զարդարված շրջանաձև ոսկյա կախիկը:

Բացի նկարագրված իրերից դամբարանում գտնվել է երկու գավաթ: Մեկը պատրաստված է ոսկյա թիթեղից և ունի ներքևում նեղացող, գլանաձև իրան և ոսկյա նրբաթիթեղ երեսապատի մեջ տնված քրոնզե սկավառակաձև նստուկ: Շուրթը ծկված է դեպի դուրս: Գավաթը զարդարված է դրոշմով արված զոտիներով, որոնք կազմում են իրար մեջ սավերազծված անկյունների տեսքով ուռուցիկ շարք:



Նկ. 40. Մի չին բրոնզի դարաշրջանի զարդանախշեր
Էլտից, Նամոյից։

Երկրորդ զավաթը պատրաստված է արծաթից և ունի վերը նկարագրված օրինակի ձևը, սակայն ավելի քարձր նստուկով: Գավաթի ընդհանուր քարձրությունը 13 սմ է, նստուկի քարձրությունը՝ 2 սմ, իսկ վերին մասը տրամագիծը 10սմ է: Գավաթն ունի 6 զարդագոտի, որոնց վրա դրոշմված են տարբեր պատկերներով ստեղծված տեսարաններ: Վերին /առաջին/ պատկերազոտում ներկայացված է վարազի որս: Որս է անում նետ ու աղեղով նետաձիգը: Որսի դրվագին մոտենում է առյուծների և ընձառյուծների շարանը, որոնցից երկուսը հարձակվում են վարազի վրա: Երկրորդ զարդագոտու վրա պատկերված են ,,արքայական խնջույք,, ծիսական տեսարանը, զինված ջոկատներ և մարտի տեսարաններ: Երրորդ զարդագոտին ներկայացնում է ընդդիմամարտող կողմերից մեկի հաղթանակ, ավարի գրավում,գերիների մահապատիժ, ալեգորիկ տեսարաններ /,,հոշոտում,, և այլն/: Չորրորդ զարդագոտու վրա պատկերված է առյուծների և ընձառյուծների իրար հաջորդող շարան: Հինգերորդ զարդագոտու /նստուկի վրա/ զարդը ներկայացված է նետաձև վերջույթներով, երեսունութ թերթանի վարդյակով: Վեցերորդ զարդագոտին /եզրագծում է նստուկը/ պատկերում է առյուծների և ընձառյուծների ,,հերալդիկ,, դիմակայությունը:

Սյունը թաղելուց և ուղեկցող զույգը տեղադրելուց հետո թաղման հրապարակը, ըստ ամենայնի, ծածկվել է գերաններով: Գերանները դրվել են հրապարակի լայնքով, հյուսիսային պատից դեպի հարավայինը: Այդ են վկայում կաթսայի մեջ գտնված գերանի մնացորդը և նրա ուղղվածությունը: Թաղման հրապարակի շուրջը /պատերից դուրս/, շատ տեղերում նկատվում են ծիսական գոհաբերության հետքեր: Հուղարկավորության և թաղման ծիսակարգից հետո լցվել է եզրերում ցածրացող դամբանաթումբը: Դամբանախմբի կենտրոնական, ամենաբարձր մասում կանգնեցվել է Ֆալլաձև քանդակ: Գերանածածկի փտելու հետևանքով հետագայում դամբանաթումբը փլվել է թաղման հրապարակի վրա: Թաղման ծեսի և զույգի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս Քարաշամքում պեղված այս դամբանաբլուրը վերագրել միջին բրոնզի դարաշրջանի Թեղեք-կիրովականյան մշակույթին, այն թվագրելով մ.թ.ա. 2-րդ հազ-ի 1-ին քառորդով: Հարկ է նշել, որ Քարաշամքի դամբանաբլուրը Անդրկովկասի տարածքի ամենահարուստ թաղումների թվին է դասվում: Այն, ըստ ամենայնի, վաղ պետականությանը բնորոշ բազմաթիվ գծերով, խոշոր ցեղային միության առաջնորդի թաղումը: Բացառիկ գիտական հետաքրքրություն է ներկայացնում արծաթե գավաթը, որի վրա դրվագված տեսարանները հսկայական լրատվություն են պարունակում միջին բրոնզեդարյան Հայաստանի հոգևոր և նյութական մշակույթի ուսումնասիրության մասին:

Միջին բրոնզեդարի վերջին փուլի առաջնակարգ հուշարձան է Բ.Բ. Պիոտրովսկին կողմից 1948 թ. պեղված Կիրովականի դամբանաթումբը:

երեսուն քառ. մ մակերեսով, 3 մ խորությամբ հիմնահողային պատերով դամբանախուցը ծածկվել է զերանե սյուների վրա հենված սալաքարերով: Դամբարանում դրվել են կնոջազարդերով զարդարված, սև փայլեցրած և կարմիր հիմնաներկով, սև գունազարդումով անոթներ: Անոթների մոտ գտնվել են ոսկյա թաս և արծաթյա 4 անոթներ՝ դույլ, գավաթ և կանթավոր երկու բաժակ: Դամբարանի կենտրոնում, բրոնզե գամերով և արծաթյա թիթեղներով զարդարված փայտյա մահճի վրա, ըստ երևույթին սփռվել է դիակիզված անձնը: Այստեղ գտնվել է ոսկյա և ասղիոնե ուլունքներով հարուստ մանյակ: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում Կիրովականի դամբանաբլուրից գտնված աշխատանքի գործիքները և զենքը: Սրանց թվին են պատկանում սակր-կացինը, հարթ կացինը, դուրը, բրոնզե կեռիկը, երեք դաշույններ և նիզակի ծայրը: Այստեղ գտնվել է նաև խոշոր բրոնզե կաթսա:

Կիրովականի դամբանաբլուրի ոսկյա թասը պատրաստվել է միաձույլ ոսկյա թիթեղից: Նրա լայնացող մասում, երկու զարդագոտիների միջակայքում, դրոշմով արված են երախները քաց, զույգ-զույգ, դեմ-հանդիման վեց առյուծների ուռուցիկ պատկերներ: Իր ձևերով այս օրինակը հիշեցնում է Թոեղքի 7-րդ դամբանաբլուրի անզարդ թասը, իսկ նման ոճավորված առյուծների պատկերներ կարելի է տեսնել Թոեղքի 15-րդ դամբանաբլուրի ոսկյա ;, թմբուկի,, վրա: Կենդանիների պատկերազարդման ոճը շատ լավ աղերսվում է խեթական մշակույթի որոշ հուշարձանների հետ:

Ոչ մեծ արծաթյա թասը զարդարված է շուրթից կախված կիսաշրջաններով, որոնք հիշեցնում են Լճաշենի և Ուզերլիկեֆեի 2-րդ շերտի անոթների զարդամոտիվները: Շատ հետաքրքիր են Կիրովականի դամբանաբլուրի երկու արծաթյա գավաթները և դույլը, որոնք առանձնանում են բռնակների քարձր դիրքով և աղերսվում են Ոսկեվազի գունազարդ գավաթների բռնակների հետ: Նշված իրերի բռնակների, ինչպես և գավաթների ձևերը իրենց զուգահեռներն ունեն խեթական շրջանի Փոքր Ասիայի և հունական խեցանոթներում, ինչպես նաև Ալաջա-հյուկում և Փոքր Ասիայի արևմտյան շրջաններում: Արծաթյա դույլի իրանը ձևերով աղերսվում է Թոեղքի 16-րդ դամբարանի և Ալաջա-հյուկի գավաթներին, բռնակի և հատակի ձևերով՝ վաֆիոյի /Հունաստան/ գավաթներին: Գտնված բրոնզե իրերը իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի 8 անդրկովկասի տեղական արտադրանքի նմուշներում: Այսպես, ասիմետրիկ բրոնզե սակրը, որը անդրկովկասյան ուշ բրոնզի դարի սակրերի նախատիպ է, աղերսվում է Նավուրի /Հայաստան/ Գրմա-գելեի /Վրաստան/ և Խորեջի /Դաղստան/ սակրերի հետ: Այս նույն հավաքածուի տափակ կացինը՝ համեմատաբար կարճ, կիսակլոր աշխատող սայրով, նույնպես կապող օղակ է վաղ բրոնզ-

գեղարի տափակ կացինների /մերձերևանյան գանձը/ և ուշ բրոնզի դարում մեծ տարածում գտած նմուշների միջև: Բրոնզե խողովակաձև դուրը նույնպես իր բազմաթիվ զուգահեռներն ունի Լճաշենի, Սևանի, Տուլորսի ուշ բրոնզեդարյան դամբարաններում: Լավ է պահպանվել պղնձե թիթեղներից պատրաստված կաթսան: Այն ունի կլորացող հատակ, մի փոքր նեղացող իրան և շուրթին ուղղահայաց ամրացրած բարձր երկու բռնակներ: Կաթսայի հետ գտնված խողովակակոթաձև բրոնզե կեռիկը, անկասկած, ծառայել է կաթսայից միս հանելու համար: Դամբանաբլրում գտնված երեք դաշույնները արխայիկ տեսք ունեն: Բոլորն էլ տերևաձև են: Երանցից մեկը ուսին ունի երեք անցք՝ կոթանն ամրացնելու համար, մյուս երկուսն ունեն լեզվակներ: Նման դաշույնները լայն տարածում ունեին Միջագետքում, Կիլիկիայում, Փոքր Ասիայում, ինչպես նաև Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում: Ինչ վերաբերում է խողովակակոթաձև նիզակին, ապա այն շատ լավ աղերսվում է Թեղքի, Լճաշենի, Հառիճի, Նովիի, Կվասաթալիի, Ավազաբլուրի և նման հայտնի հուշարձանների այդօրինակ նմուշներին, որոնց վրա նույնպես նկատելի է փոքրասիական օրինակների ազդեցությունը:

Այլ զարդերի թվում հատկապես առանձնանում են սկավառակաձև, խողովակաձև ուլունքներն ու բաժանարարները, ինչպես նաև հրաշալի հղկված գնդաձև սարդիոնե ուլունքները: Գտնվել են նաև մեծ քանակությամբ ոսկյա նրբաթիթեղի բեկորներ, որոնցով ըստ երևույթին երեսապատել են փայտյա զարդատուփերը: Ինչպես տեսնում ենք, Կիրովականի դամբանաբլրի իրերի որոշ մասը պատրաստվել է փոքրասիական արտադրանքի ձևերի ազդեցության ներքո: Կիրովականի դամբանաբլուրի խեցանոթնեէի ձևերում, ինչպես նաև Հայաստանի և Անդրկովկասի այլ հուշարձանների նյութերում հանդիպում են փոքրասիական-էգեյան արտադրանքի ձևերը կրկնօրինակներ, ինչպես, օրինակ, Թեղքի անոթների հորիզոնական ունկերը կամ Կիրովականի սև հիդրիաների մեանդրե զարդերը: Բոլոր այս իրերը տեղական ծագում ունեն, բայց անկասկած է նաև այն, որ բրոնզագործ և խեցեգործ վարպետները ծանոթ են եղել փոքրասիական արտադրանքի ձևերին:

Միջին բրոնզեդարի վերջին է վերաբերում Շամշադինի Արծվաբերդ /Ղրղի/ գյուղում 1964 թ. բացված դամբարանը: Դամբանափոսը ունեցել է մի փոքր կլորացող անկյուններ, իսկ նրա վերին եզրերը շարված էին գետաքարերով: Դամբարանի հատակը պատված էր վառված հողով և մոխրով, այսինքն՝ դիակիզումը կատարվել է դամբարանի ներսում: Այստեղ գտնվեցին երեք խոշոր, անկանոն գունազարդ սափոր, սև, նմանօրինակ սափորի բեկոր, մեկ բաժակ և մի քանի այլ սև անոթների բեկորներ: Բացի հնագիտական նյութերից, գտնվեցին 5 խոշոր երջերավոր անասունների կմախքի

15 ոսկորներ և մեկ գանգ, երկու մանր եղջերավոր անասունի ոսկորներ, 4 ձիու կմախքի յոթ ոսկորներ, երկու շան ոսկորներ, 6 եղնիկի վեց ոսկորներ, որ վկայում է այն մասին, որ այստեղ թաղվածը ունեցել է մեծ հոտ և եղել է որսորդ: Գունազարդ անոթները պատված են կարմիր անգոբով, որի վրա սև ներկով արվել է բարդ զարդանախշ՝ բազմաձև՝ զիգ-զագազարդերով, որոնց միջև եղած դատարկ տարածությունները զարդարվել են ալիքանախշով, թռչունների պատկերներով և սկավառակներով: Թեղք-կիրովականյան մշակույթին վերագրող նման խեցանոթներ հայտնի են Թեղ-քից, Կիրովականից, Գառնիից, Նախիջևանից, Կարմիրգյուղից /Կամոյի շրջան/ և մ.թ.ա. 18-16-րդ դ.դ. թվագրվող մի շարք այլ հուշարձաններ-ից:

Միաժամանակ, նույն մշակութային շրջաններին վերագրվող նյութեր են գտնվել 1962 թվականին, Էջմիածնից մի քանի կմ հարավ գտնվող Խթունարխ գյուղը տանող ճանապարհի պեղված և ավերված չորս դամբարան-ներից: Դամբարանների ձևերը հնարավոր է վերականգնել պեղված առանձին դամբարանի օրինակով, որը մեծ քառակուսի հիմնահողային խուց /պատերի երկարությունն ու լայնությունը 2,4 մ է/, որի ծածկը չէր պահպանվել: Կմախքը գտնվում է խցի կենտրոնում, ջարդոտված կավանոթների տակ: Գույքը բաղկացած էր սև, կարմիր անգոբապատ և գունազարդ տարբեր անոթ-ներից, որոնք իրենց ձևերով շատ մոտ են Կիրովականի դամբարանի նյու-թերին: Իրենց ձևով վերոհիշյալ նյութերից չի տարբերվում նաև վանա-կատե նետասլաքները, մանր ուլունքները, ազաթե և սարդիոնե հրաշալի հղկած ուլունքները, բրոնզե դաշույնը, որի վրա պահպանվել են փայտյա պատյանի հետքեր: Խցի ձևով առաջինը չի տարբերվում և 5-ը, որն ընկած է նրանից 5 մ հարավ: Այստեղ բացի թաղվածի կմախքից գտնվել են նաև ցլի կմախքի մի մասը, մեծ քանակությամբ կավանոթներ, որոնք ներ-կայացված են կարմիր անգոբապատ, սև հիմնազույնով, բարձր վզով, եր-բեմն բերանները ծածկող քարե կափարիչներ ունեցող սափորներով, սև և կարմիր քրեղաններով, մեծ, կարմիր անգոբապատ հիդրիայով: Բացի կա-վանոթներից գտնվել են և 11 վանակատե նետասլաք, բրոնզե լեզվակա-վոր դաշույն՝ դաշունակալի համար օղակներով: Նույն ժամանակի զտա-ծոներ հայտնաբերվել են 1900 թ. Է.Ռ.Ռյոսլերի կողմից Կարսի մարզի Զարիշատ գավառի Փոքր Պարզետ գյուղում: Այստեղ գտնված սև փայլեց-րած անոթների բեկորները զարդարված են ժապավենաձև զոտեզարդով և եռանկյունիներ կազմող կարմ զծիկներով, որոնց վրա պահպանվել են սպիտակ ազուցվածքի հետքեր և իրենց զուգահեռներն ունեն Կիրովականի, Թեղքի և այլ համաժամանակյա հուշարձաններում:



Նկ. 41. Մի քանի ջրոնգի դարաշրջանի խեցեղեն էլեմենտներ։

Միջին բրոնզեդարի 3-րդ փուլի ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունեն Ս.Հ.Դևեջյանի կողմից Լոռի-բերդում կատարած պեղումները: Այստեղ պեղվել են ինչպես դամբարաններ, այնպես էլ մի քանի կացարան: Այդ խոշոր բնակատեղին գտնվում է Լոռի-բերդ գյուղի դիմաց, Ստեփանավերտից 3 կմ հեռավորության վրա, Միսխանա գետի ձախ, բարձրադիր ափին: Շինություններից մեկում կատարված պեղումները ցույց տվեցին, որ այն բաղկացած է 4 միացված սենյակներից՝ կազմելով 230մ² մակերեսով խոշոր հավալիր; Արտաքին պատերի հաստությունը 2,5 մ է, իսկ միջնապատերինը՝ 1,2 մ: Արևելյան պատի կենտրոնական մասին արտաքին կողմից հարում էր կիսակլոր, քարերով լցված մի տարածք, որն, ըստ երևույթին, ծառայել է որպես քեմահարթակ: Ամբողջովին պեղվել է միայն մեկ սենյակ: Սրա հատակին գտնվել են տարբեր կավանոթների, աշխատանքի գործիքների՝ աղորիքների, սանդաթակերի, սրոցների, կոկիչների, քերիչների, մանգաղների վանակատ ներդիրների քեկորներ և եռանկյունաձև վանակատ նեռաալաքներ, որոնց եզրերով լավ մշակված են, իսկ հիմքում ունեն փոսիկներ: Խեցանոթների քեկորները սև, փայլեցված են, զարդարված դրոշմազարդով: Դուրգի անիվի վրա պատրաստված գնդաձև կնունների, նրբախեցի գավերի այս քեկորների զարդանախշերը կազմված էին զարդաշերտերից, անկյուններից, մենադրներից և ուղիղ գծերից:

Գտնվել է կեռ-գծերով արված այլիքանախշով զարդարված գավե քեկոր: Բնորոշ զարդամոտիվներով նման խեցանոթները հանդիպում են միջին բրոնզի բազմաթիվ հուշարձաններում՝ Լճաշեն, Հառիճ, Կեթի, Ուզերլիկթափե և այլն ու թվագրվում մ.թ.ա. 17-15-րդ դ.դ.-ով: Բացի ամրոցի պեղումներից, այստեղ բացվել են տարբեր դարաշրջանների դամբարաններ, որոնցից 6-ը վերաբերում է միջին բրոնզի դարաշրջանին: Սրա երկարությունը հասնում է 5,5 մ-ի լայնությունը՝ 3 մ-ի: Այն ուներ եռաստիճան կեղծ թաղ և ծածկված էր խոշոր սալաքարերով: Խուցը մեկ անգամ ևս թաղում կատարելու համար օգտագործվել է մ.թ.ա. 7-6-րդ դ.դ.-ում, որի պատճառով հիմնական թաղումից պահպանվել են քիչ քանակությամբ իրեր, ինչպես նաև ձիերի գանգեր և վերջույթներ, որոնք դրվել են հարավարևելյան պատի անկյուններում: Խցի հենց այդ հատվածում էլ պահպանվել էին բրոնզե կաթսան, կեռիկը և ամբողջական քրեռանը: Մնացած կավանոթները, բացի մի գավաթից, շարդոտված վիճակում սփռված էին խցի հատակին: Խեցեղենը ներկայացված է միագույն գունազարդումով, ինչպես նաև սև, փայլեցրած և զորշ, անփայլ անոթներով: Գունազարդ անոթներից պահպանվել են խոշոր հիդիայի և կնունի վզի մի մասը և շուրթերը: Կարմ գծիկների, այլիքանախշի, հորիզոնական գծերի և ժանյակների տեսքով զարդանախշը արված է սև ներկով և աղերսվում է Կիրովականի, Թեղջի, Ենջիճանի, Փոքր Պարզետի զարդաձևերին: Սև, փայլեցրած խեցեղենը ներկայացված է

մեծ կնունների, քարձր վզով սափորների բեկորներով՝ զարդարված զուլզ ակոսներով, ծեփածո շրջանակներով, ցանցաղաշտով սավերազծված շեղանկյուններով, այլիքաձև զարդաձևերով և այլն, որոնք արված են սեղմումով, առամնաղրոշմով, ինչպես նաև փայլանախշով, որը մեծ տարածում է ստանում ուշ քրոնզի դարում: Նման զարդաձևեր բնորոշ են Կիրովականի, Լճաշենին, Ուզերլիկլեթեթի միջին շերտերին, Մուխանաթափային, ուշ Կարմիր բերդին և միջին բրոնզեդարյան այլ հուշարձանների: Քննարկվող դամբարանի մետաղական իրերը ներկայացված են պղնձե կաթսայով և Կիրովականյան նմուշը կրկնող բրոնզե կեռիկով:

Պատահականորեն բացված այս դարաշրջանի դամբարաններից հարկ է հիշատակել երկուսը: Սրանցից մեկը բացվել է 1966 թ., եղեռնի զոհերի հիշատակին կառուցվող հուշարձանի շինարարության ընթացքում: Սև խեցանոթների մի այլ հետաքրքիր խումբ են կազմում նոր Բայազետում /Կամո/ 1956 թ. ավերված դամբարանի նյութերը: Այն բաղկացած է կետ-զծերով արված, սպիտակ, ազուցված զիգզագներով զարդարված, սև, փայլեցրած երկու սափորներից և չորս խոր քրեղաններից, որոնք նույնպես զարդարված են զիգզագանախշով: Այս դամբարանում գտնվել են նաև հնդկական ընկույզի կիսակեղևի տեսքով չորս քրեղաններ, որոնք Հայաստանում հանդես են գալիս մ.թ.ա. 3-րդ հազ-ից: Այս անոթները զարդարված են անկանոն տեղադրված խազագծերի փնջերով: Նմանաձև երկգույն, գունազարդ քրեղաններ գտնվել են նոր Բայազետի մեկ այլ ավերված դամբարանից: Սրանցից մեկը զարդարված է քաց դեղնավուն հիմնագույնի վրա կարմիր և սև ալիքանախշերով, մյուսները՝ սև և կարմիր գույներով արված երկշար եռանկյունիների շերտով, որոնց տակով անցնում են կարմիր և սև գույնի ուղղահայաց պարույրներ ունեցող ալիքանախշեր: Մեկ այլ հետաքրքիր գունազարդ անոթների խումբ հայտնի է Երևանի Հյուսիսային ծայրամասի՝ Սևանի և Քանաքեռ տանող ճանապարհների հատման մասում, շինարարական աշխատանքների ընթացքում ավերված դամբարանից: Հիմնահողային դամբանախցում քացի ամյունի մնացորդներից գտնվել են գունազարդ սափորներ և մի քանի քրեղաններ, որոնցից մեկը նույնպես պատված է գունազարդով: Վառ կարմիր անգոբապատ սափորները զարդարված են շևրոններով, հորիզոնական զծերով, ալիքանախշով, իսկ անոթների շուրթերը՝ սև ներկով արված կարմ զծիկներով: Այս անոթների հետ մեկտեղ գտնվել է եռանկյունաձև, լեզվակավոր դաշույն: Այս համալիրի զուգահեռները իրենց աղերսներն ունեն Թոեղքի և հատկապես Կիրովականի նյութերում և թվագրում են մ.թ.ա. 17-16-րդ դ.դ.-ով:

Միջին բրոնզեդարի ավարտական փուլին է վերաբերվում Արուճի դամբանաբլուրը, որը թվագրվում է մ.թ.ա. 16-15-րդ դ.դ.-ով: Այստեղ դիակաղումը կատարվել է ընդարձակ ,,քարարկղում,,: Դամբարանում

















Աղ. 42. Մի՛ջին քրոնզի դարաշրջանի զամբոներ նկ. 1-7, 11 Արծվաբերդից, նկ. 8-10, 12 Դիլիջանից:



Աղ. 42. Մի՛ջին քրոնզի դարաշրջանի զամբոներ, նկ. 1-7 11 Արծվաբերդից, նկ. 8-10, 12 Դիլիջանից:

գտնվել են կարմիր հիմնագույնի վրա սև և սպիտակ ներկով արված զունազարդ խեցանոթներ և մեկ եզակի բազմագույն զարդանախշով, սափոր, որի վրա պատկերված է կարմիր եղնիկի վրա սև գայլի հարձակումը: Գտնվել են նաև բրոնզե զույգ, նետասլաքներ, բրոնզե անոթի բեկորներ և ուլունքների մաս կազմող ոսկյա հատիկաշար ցանցի մեջ առնված վանակատ գլանաձև կրծքազարդեր:

Միջին բրոնզեդարի վերջին են վերաբերում նաև Հառիճի դամբարանադաշտի մի քանի դամբարաններ: Դրանից է №: 44 դամբարանը: Այստեղ գտնված սև և դեղնավուն խոշոր սափորները, զարդարված սանրատամ դրոշմի չով արված նախշերով, ավելի կառարյալ ձևեր ունեն: Ջարդամոտիվներում գերակշռում են նախորդ փուլի համեմատ ավելի ձգված եռանկյունիները, որոնց մի մասը ստվերազծված է կետ-գծերով: Հանդիպում է նաև զիգզագաձև նախշազարդը: Մետաղյա գույքը ներկայացված է շեղանկյուններով զարդարված խողովակակոթառ նիզակով: Գտնվել է նաև բրոնզե փոքրիկ խողովակ և շքասեղի նմանվող իր: Մետաղե իրերի այս ոչ մեծ հավաքածուն, որն անկասկած տեղական ծագում ունի, լավ աղերսվում է Լճաշենի №: 40 դամբարանի նյութերի հետ, իսկ բրոնզե նիզակը իր զուգահեռներն ունի Հայաստանի և Անդրկովկասի այնպիսի հուշարձաններում, ինչպիսիք են Կիրովականը, Թռեղքը, Արումը, Կվասթալին, Նուլլին, Ազնաբերդը /Ազնաբյուրտ/: Նման նիզակներ հայտնի են նաև Ռաս-Շամրայից, Գազայից, Մեզիդոյից և Ալիշարից: Մետաղյա իրեր են գտնվել նաև Հառիճի №: 78 դամբարանից: Այստեղ գտնված համեմատաբար նեղ հատակով խացանոթները աղերսվում են Թռեղք-Կիրովականյան ավելի ուշ շրջանի նյութերին: Գտնվել են նաև մեծ քանակությամբ խոշոր և ոչ մեծ, լավ մշակված վանակատ նետասլաքներ, որոնց զուգահեռները հայտնի են Լճաշենից և այլ հուշարձաններից: Հատկապես անհրաժեշտ է նշել այստեղ գտնված շրջանակավոր դաստակով դաշույնը և լեզվակ ունեցող դուրը: Վաղ փուլի շրջանակավոր կոթառով դաշույնը հայտնի է Կարմիր վանքից: Վերջինս հնագիտական գրականության մեջ հայտնի է որպես „Առաջավորասիական„ տիպի դաշույն և լայն տարածում ունի Առաջավոր և Փոքր Ասիայում, Հայկական և Իրանական լեռնաշխարհներում, Անդրկովկասում և նրանց հարևան շրջաններում: Բրոնզե դաստը նույնպես Հայաստանի լեզվակավոր գործիքների առավել վաղ օրինակներից է: Հառիճի այս համալիրը համատեղում է միջին բրոնզի դարաշրջանի երկրորդ և ավարտական փուլի մի շարք հատկանիշներ և թվագրվում է մ.թ.ա. 17-16-րդ դ.դ.-ով: Հառիճի դամբարանադաշտի մնացած դամբարանները /դամբ. 11,16,20,24,65,67 և այլն/ նույնպես վերաբերում են միջին բրոնզի ավարտական փուլին, թեև կան համալիրներ, որոնք թվագրվում է մ.թ.ա. 18-16-րդ դ.դ.-ով: Խեցեղենը ներկայաց-

ված է նեղվիզ սափորներով, հիդրիաներով, կնուճներով, քրեղաններով, մեծ հետաքրքրություն ներկայացնող անոթ-կիլիկով: Այն պատրաստված է զուրգի անիվի վրա և ունի քարձր կանթեր: Ուշագրավ է կիլիկի կանթերի ձևը, որը հիշեցնում է Կիրովականի արձաթյա թասի կանթը: Նման ձևի խացանոթներ հանդիպում են Լճաշենի 6 և 46 դամբանաքլուրներում, ուր վերջինս ուղեկցվում է սանրատամ դրոշմիչով զարդարված անոթների հետ: Անոթների այս խումբը կրկնում է փոքրասիական ձևերը և հաճախակի է հանդիպում այնպիսի հուշարձաններում, ինչպիսիք են Ալիշարը, Ալաչահույուկը, Բողազքոյքի, ուր նրանք ունեն նստուկներ և այլն: Այս փաստը նույնպես խոսում է փոքրասիական ազդեցության մասին:

Բացի խեցանոթներից Հառիճի քեներկվող դամբարաններում գտնվել են նաև փոքր, վանակատ ճետասլաքներ՝ հիմքում ուղղանկյուն կտրվածքներով, բրոնզե հերուն, իլիկի քարե գլուխ և այլն:

1968 թ. Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղի մոտ պատահականորեն բացվեց ոչ քարձր քարահողային թմբով մի դամբանաքլուր: Հատակազծում ուղղանկյուն, կլորացող անկյուններով, 3,2 × 2,0 չափերի հիմնահողային դամբանախցի ծածկը չէր պահպանվել: Թաղումից հետո խուցը լցվել է հողով և քարերով: Խցի խորությունը 1,6 մ է: Գրանցվել է դիակիզված թաղում: Դամբարանում գտնվել է 40 խեցանոթների մի շատ հետաքրքիր հավաքածու: Սրանցից մի քանիսը ջարդվել են նախապես, մինչև խուց դնելը /գտնվում էին առանձին բեկորներ/: Անոթները ձեռածեփ են, լավ թրծված, քարակ պատերով և ներկայացնում են հետևյալ տիպերով. 1/ Կարմիր հիմնագույնով հիդրիաներ՝ սև, միագույն զունազարդով զարդարված: Զարդամոտիվները ներկայացված են զիգզագներով՝ սավերազծված շեվրոններով, օձազալարներով և շրջանակներով, որոնք ներկայացնում են երկնային մարմինների սիմվոլները: Կան նաև առանց զարդանախշերի հիդրիաներ: 2/ Կարմիր հմինագույնով երկու խոշոր սափորներ, որոնք զարդարված են շևրոնների երկու շարքով և արձիչների պատկերներով: 3/ Շուրթերի տակ զունազարդով արված երեք կամ չորս համակենտրոն կիսաշրջանների ծաղկաշղթաներով զարդարված խոր քրեղաններ: Միագույն զարդանախշով անոթների այս խումբը իր զուգահեռներն ունի Թոեղքի, Կիրովականի, Էլարի, Գառնիի, Ազնաբյարի, Աղավնատան դամբանաքլուրներում և թվագրվում է մ.թ.ա. 17-16-րդ դ.դ-ով:4/Կարմրադարդագույն մակերեսով խորթասեր, որոնք ներկայացված են Հայաստանի և Անդրկովկասի համար ոչ սովորական ձևերով: Անոթները փայլեցված են և, բացառությամբ սև զծիկներով զարդարված շուրթերի, մնացած մասերում զարդանախշ չունեն: Այդ թասերի համար ամենաբնորոշը շուրթերից վեր բարձրացող կանթերն են, որը հնարավորություն է տալիս վերջիններս իրենց ձևերով համեմատելու

կիաֆների հետ: Կանթերը զարդարված են սև ներկով արված երկու զուգահեռ գծերով: Գրեթե բոլոր /16 հատ/ ունեն միևնույն չափերը /բարձր. 10-15 սմ/, և ունիֆիկացված գեղարվեստական ոճ: Ոսկեվազի ,,կիաֆները,, Հայաստանում միակ զտածոները չեն: Նման անոթներ հայտնի են Էլառից, Կամակատարից /Կիրովական/: Այս խմբին են հարում Լճաշենի 6 դամբանաբլրի երկկանթանի երկկոն անոթը և բռնակի ձևով՝ Հառիճի 65 դամբարանի վերոհիշյալ իլիկը:

Բարձր կանթերով նմանօրինակ անոթներ ներկայացված են նաև Կիրովականի դամբանաբլուրի մեծաղյա սպասքում, մասնավորապես արծաթյա թասը կանթի ձևով շատ է մոտենում Ոսկեվազի թաս-կիաֆների կանթերին: Այս կիաֆների առավել վաղ օրինակները կարելի է տեսնել Զատալ-հոյուկի արևմտյան բլուրի վաղ պղնձե-քարեդարյան 2-րդ շերտում /շուրջ մ.թ.ա. 4900 թ.ծ. Սերսինում, Հունաստանում /Սիսկլո/, Կրետեի վաղ մինոյան ժամանակաշրջանի 1-ին փուլում, Կենտրոնական և արևմտյան Փոքր Ասիայի վաղբրոնզեդարյան բազմաթիվ հնավայրերում: Այս դարաշրջանում կիաֆները հատկապես տարածված Քյուլթեփեում, Փոլատլիում, Ալաջա-հոյուկում, Բողազքյոյում և այլն: Ավելի ուշ, միջին բրոնզի դարաշրջանում, մ.թ.ա. 2-րդ հազ-ի 1-ին կեսին ,,խեթական,, անունը ստացած խեցեղենի հմայլիրի կազմում անոթների այս ձևը հանդես է գալիս այնպիսի հուշարձաններում, ինչպիսիք են Քյուլթեփեն, Ալաջա-հոյուկը, Բեյֆեսուլթանը և այլն:

Միջին բրոնզի 3-րդ փուլի հուշարձաններ հայտնի են նաև Էլառի դամբարանադաշտից /դամբ. №31,34,42/: Գտնված իրերի մեջ առանձնանում են խոշոր, զունազարդ սափորը՝ զարդարված ստվերազծված բազմաշար շևրոններով, ուղղահայաց ալիքանախշերով և ձկների պատկերներով: Հետաքրքիր են նաև ստվերազծված շևրոններով, ուղղահայաց ժապավեններով և ջրային թռչունների պատկերներով զարդարված մնացած խոշոր սափորները:

Այս դարաշրջանի եզակի զտածո է Մարտունու շրջանի Ն.Գետաշեն գյուղում պատահականորեն գտնված զունազարդ հիդրիան: Կարմիր հիմնազույնով այս անոթի վրա պատկերված է հետապնդման տեսարան. երկու զայլ հետապնդում են երկու քարայծի և երկու եղնիկի /արու և էգ/: Տեսարանից վերև պատկերված են 6 սագեր կամ կարապներ, որոնք շարժվում են զազանների հակառակ ուղղությամբ: Անոթի վզիկը զարդարված է ուղղահայաց և հորիզոնական գծերով:



Աղ. 43. Միջին բրոնզի դարաշրջանի գաղութներ, նկ.1-8,11,13 Ա-Սվանի խմբից, նկ. 9-10, Ծիծեռնակաբերդ, նկ. 12 Նաումիր բերդից, նկ. 14 Երևանից։

Գար. 2 Հայաստանի միջին բրոնզի դարի տնտեսությունը և հասարակական հարաբերությունները

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի երկրորդ կեսից սկսած, Հայկական բարձրավանդակի և Անդրկովկասի ցեղերի կյանքում տեղի են ունենում զգալի փոփոխություններ, որոնց հետևանքով տեղի է ունեցել հզոր ցուն-արաքսյան մշակույթի անկումը: Տնտեսական և սոցիալական կյանքում առաջացած էական փոփոխություններին նպաստել է բնակչության շարժունակության ակտիվացումը: Մետաղագործության և առանձին այլ արհեստների աճին զգալի կերպով նպաստեց հին արևելյան աշխարհի հետ էթնո-մշակութային կապերի ընդլայնումը: Այդ բոլոր փոփոխությունները պայմանավորեցին ընդհանուր մշակութային զարգացման ուղղությունը, որն իր հերթին բերեց հին մշակույթների փոփոխության: Եվ ահա ցուն-արաքսյան մշակույթի փոխարեն հանդես են գալիս միջին բրոնզեդարի նոր մշակույթները:

Տնտեսության, արհեստների, դամբարանային կառույցների ձևերի և հատկապես խեցեղեն նյութի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս ենթադրելու որ Հայաստանի և Անդրկովկասի միջին բրոնզի դարի մշակույթները կազմել են մի մշակութային ընդհանուրություն, որի մեջ առանձնանում են չորս մշակութային խմբեր՝ Թրիալեթյան /Թոեղջյան/, Կարմիրբերդյան, Սևան-ուզերլիկյան և Կարմիրվանքյան: Չնայած ամեն խումբ ուներ տարածքաժամանակագրական սահմաններ, այնուամենայնիվ վերջին տարիների հայտնագործությունները պարզ մատնանշում են, որ այս սահմանները երբեմն խախտվում են: Այսպես, Թոեղջյան մշակույթը, որը հիմնականում տարածված է կենտրոնական Անդրկովկասում, ընդգրկելով Լոռին, հյուսիսարևելյան Հայաստանը, ներխուժել է Արարատյան դաշտ, իսկ նրա նյութերը հայտնաբերվել են անգամ Վանում: Կարմիրբերդյան մշակույթը, որը հիմնականում տարածված է եղել Արարատյան դաշտում, Արագածում և Շիրակում, եզակի ձևով հասնում է Վրաստան /Ռուսթավի/ և Նախիջևան: Սևան-ուզերլիկյան խումբը, որը տարածված էր Ղարաբաղում և Սևանի ավազանում, թափանցնում է Արարատյան դաշտ, Արագած Շիրակ և արևելյան Վրաստան: Կարմիրվանքյան մշակույթը, չնայած իր առանձին գծերի, այնուամենայնիվ, ավելի մոտ է կարմիրբերդյան մշակույթին և, ըստ երևույթին, նրա տարբերակներից մեկն է: Այս բոլոր հանգամանքները հնարավորություն են տալիս քննարկել բոլոր տեղային մշակույթները, վերլուծել ըստ խմբերի, որը առավել կբացահայտի նրանց ընդհանրություններն ու յուրահատկությունները և վերջիվերջո հնարավորություն կընձեռի պատկերացում կազմել միջին բրոնզի դարի մշակույթների ամբողջական համակարգի մասին:

Բնակավայրերը: Միջին բրոնզի հուշարձանները հիմնականում հայտնի են դամբարանային կառույցների ձևով: Ստույգ թվագրվող ամրոցներ և բնակավայրեր գրեթե չեն ուսումնասիրված: Դրանց թվին կարելի ր է վերագրել Կարմիր բերդի կիկլոպյան ամրոցը, որը, ինչպես նկատել է դեռ 1930-ական թ.թ. Բ.Բ.Պիոտրովսկին, կառուցվել է միջին բրոնզի ժամանակաշրջանում, և նրա շրջակայքում կատարված թաղումները վերաբերում են ամրոցի բնակիչներին: Ամրոցը տեղադրված է դեպի Հրազդանի կիրճը դուրս եկող եռանկյունաձև հրվանդանի վրա, իսկ հարթավայրին ուղղված կողմում ամրացված է հզոր կիկլոպյան պարիսպներով: Ներսում երևացող քաղաքային բնակարանների հետքերը խիստ ձևափոխված են երկաթի դարում և հատկապես միջնադարում: Այժմ առանց երկարատև, պարբերաբար կատարվող պեղումների դժվար է խոսել միջին բրոնզի դարաշրջանի բնակարանների ձևերի մասին:

Միջին բրոնզեդարյան բնակավայր հայտնի է նաև Հառիճում, որի տարածքում առկա է վաղ բրոնզեդարի բնակավայրը: Այն գտնվում է Հառիճ գյուղի հարավային ծայրամասում և կառուցված է մի խոշոր հրվանդանի վրա, որը հյուսիսից, հարավից և արևմուտքից շրջափակված է կիրճով: Արևելյան հատվածում ամրոցը աստիճանաբար բարձրանալով համընկնում է Արագածից սկիզբ առնող լեռնալանջերին: Այս բարձունքը ձգվում է արևելքից արևմուտք և ունի երեք հրվանդաններ: Յուրաքանչյուր դարավանդը մեկը մյուսից անջատվում է խոշոր քարերով կառուցված կիկլոպյան պարսպով: Ըստ միջին բրոնզի դարի վերգետնյա նյութերի, քննարկվող ժամանակաշրջանում բնակավայի դիրքը էապես չի փոխվել: Այդ են վկայում նաև հետախուզական պեղումները, որոնք կատարվեցին երկրորդ դարավանդի վրա:

Միջին բրոնզեդարի բնակարանի ձևի մասին որոշակի գաղափար են տալիս Այգևանի քաղաքաշերտ պեղումները, ուր վաղ բրոնզեդարյան շերտի վրա հայտնաբերվել են երեք կացարաններ՝ ուղղանկյուն հատակագծով: Այստեղ պահպանվել են միայն քարից հիմքերը, իսկ պատերի վերին հատվածները քայքայվել են վաղ միջնադարում կատարված շինարարական աշխատանքների ժամանակ: Այնուամենայնիվ կարելի է ենթադրել, որ ի տարբերություն վաղ բրոնզի ժամանակաշրջանի, բնակարանի հիմնական ձևը հատակագծում դառնում են ոչ թե կլոր հիմք ունեցող, այլ իրար կից ուղղանկյուն շինությունները:

Միջին բրոնզեդարյան ամրոցներ հայտնի են Ոսկեվազում, Մուխանաթափում:

Հետաքրքիր նյութեր է տվել հարթավայրային Արցախում գտնվող Ուզերլիկթափ բնակավայրը: Այն սկզբնական շրջանում եղել է անպաշտպան,



Սգ.44. Միջին բրոնզի դարաշրջանի գտածոները Ջորի գերեզմանից:

իսկ ավելի ուշ,երկրորդ շերտի գոյության շրջանում, շրջապատված էր աղյուսաշար կառուցված պարսպով, որի մուտքի մոտ եղել է մեկական որմնահեց: Դրանք բացի պաշտպանական նշանակությունից ունեին կառույցը ամրացնող նշանակություն: Կացարանների պատերի կմախքը ստեղծել են հողի մեջ շարքով խրված 25 սմ տրամագծով փայտե ձողունները: Միջանկյալ տարածությունը լցված է եղեգով կամ ծյուղերով և սվաղված է երկու կողմերից: Ելնելով հատակին գտնված գերանների մնացորդները՝ կարելի է ենթադրել, որ տանիքները եղել են հարթ գերանաշար և սվաղված կավով, հատակները նույնպես կավածեփ սվաղով են պատված:

Հետաքրքիր նյութեր են տվել Նախիջևանի թյուլթափա 1-ին և 2-րդ և Կարմիր վանքի բնակավայրերը: Այս հուշարձաններում հայտնաբերվել են քառանկյուն շինությունների հետքեր, որոնց հատակները պատված են եղել քարե սալերով կամ սվաղված կավով: Պատերը շարված են հում աղյուսով: Պահպանված հատվածներում դրանք ունեն 22 սմ լայնություն և 12 սմ բարձրություն /երկարությունը չի պահպանվել/: Առաձին դեպքերում, բացի քառանկյուն կացարաններից, նկատվում են կլոր կամ ձվաձև հիմքերով սենյակների հետքեր: Սակայն քանի դեռ դրանք լրիվ պեղված չեն, հնարավոր չէ որոշել դրանց ստույգ ձևը, հատակագծերը:

Հետաքրքիր մի կացարան է հետազոտվել Լոռի քերդի մոտ գտնվող կիկլոպյան ամրոցի տարածքում: Այդ կացարանը ունի ոչ ճիշտ ուղղանկյան տեսք /երկարությունը՝ 24-26 մ, լայնությունը՝ 6,25-4,25 մ/ և միջանկյալ պատերով բաժանված է 4 սենյակների: Հիմնական պատերն ունեն 2,5 մ լայնություն, միջանկյալները՝ 1,2 մ: Այստեղ պեղվել է մեկ սենյակ, որի հատակը պատված է խճաքարով և սվաղված է կավով:

Բացի քնակավայրերից հետաքրքիր պաշտամունքային կառույց է հայտնաբերվել Զորացքար վայրում: Այս հուշարձանը գտնվում է Սիսիանից 2,6 կմ հյուսիս-արևմուտք: Զբաղեցնում է արևմտյան կողմից խոր կիրճով առանձնացող եռանկյունաձև հարթություն, որի արևելյան կողմում,հյուսիս-հարավ ուղղությամբ, շուրջ 280 մ երկարությամբ ձգվում են 0,5-2,4 մ բարձրություն ունեցող ուղղանկյունաձև, սեղանաձև, կոնաձև, ժայռաբեկորները, որոնց մի մասը խրված է մայր հողի մեջ, մյուսները դրված են ժայռերի վրա: Այդ ժայռաբեկորներից 57-ի վերին մասերում 6-8 սմ տրամագծով անցքեր են փորված: Զգված քարաշարքի կենտրոնական մասում նույնպես քարակտորներով ձևավորված է մի շրջան, որի տրամագիծը 40-45 մ է: Այդ քարերից և ոչ մեկի վրա անցք չկա: Քարաշարից 30-40 մ արևմուտք ողջ հարթությունը ծածկված է տարբեր ձևեր և չափեր ունեցող կիկլոպյան կառույցների ավերակներով: Դրանցից խոխորները, որոնց մակերեսը տատանվում է 250-1000 մ², ցանցապատված

բացօթյա քակեր են, մինչդեռ փոքր, սալածածկ կառույցների մակերեսը 20-60 մ² էր: Այս կառույցներում և դրանց միջև ընկած տարածքներում առկա են ուշ շրջանի դամբարաններ, որոնք ըստ կառուցվածքի բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբին պատկանողները քարե զրահով ծածկված վերգետնյա քարարկղեր են և, ինչպես ցույց են տվել պեղումների արդյունքները, պատկանում են մ.թ.ա. 10-8-րդդ.դ.: Երկրորդ խմբի դամբարանները, որ բացված են ու կողոպտված, պատկանում են մայր հողի մեջ պատրաստված խոշոր քարարկղերի տեսակին, ինչպիսիք բնորոշ են ուշ բրոնզի-վաղ երկաթի դարաշրջաններին:

Հետախուզական պեղումներից պարզված է, որ մշակութային շերտի հզորությունը ամենուր տարածվում է 30-50 սմ միջև, որից ներքև մայր հողն է կամ ժայռեր: Հայտնաբերված սակավաթիվ նյութերը ներկայացված են տարբեր խեցանոթների բեկորներով, վանակատ ծլեպներով, աղորիքներով, կրկնաքարերով, կոկիչներով և այլն: Խեցանոթների բեկորները ներկայացված են մի կողմից վաղ բրոնզին հատկանշական սև ազաթափայլ մակերես ունեցող լայնաբերան զավաթների և այլ ամանների մասերով, մյուս կողմից՝ գունազարդ խեցանոթների բեկորներով: Վերջիններիս կարմիր մակերեսը զարդարված է մուգ-շագանակագույն, երբեմն սև գույնի արված հորիզոնական ալիքաձև կամ անկյունաձև տարված լայն ժապավեններով:

Դամբարանները: Հայաստանի միջին բրոնզի դարի դամբարանային համալիրները տարբեր ձևերև կառուցվածքներ ունեցող շինություններ են,որոնք աչքի են ընկնում բազմազանությամբ /որը բնորոշ է նաև թաղման ծեսին/: Այս դամբարանային կառուցվածքների ամենաբնորոշ հատկանիշներից են դամբանաբլուրները, որոնք ունեն փոված բլուրների տեսք և համեմատաբար կանոնավոր հատակագիծ: Կարմիրբերդյան հայտնի դամբարանաղաշտի դամբանաբլուրներն ունեն քարե կամ հողաքարե ոչ մեծ /0,7-ից մինչև 2 մ/ բլուրների տեսք: Սրանց դամբանային խուցերը, որոնք գտնվում են կենտրոնում, ունեն ուղղանկյուն փոսերի ձև և ծածկված են քարե սալերով:

Նման դամբանաբլուրներ հանդիպում են Հառիճի դամբարանաղաշտում: Այստեղի դամբանաբլուրիրերի տրամագիծը տատանվում է 10-16 մ, իսկ բարձրությունը՝ 0,7-0,8 մ միջև: Դամբանաբլուրների գերակշռող մասում, լիցքի տակ խոշոր քարերից կառուցված զրահ: Դամբարանային խցերը, ինչպես և Կարմիր բերդում, հիմնականում հիմնահողային են, չնայած որ հանդիպում են սալերով ծածկված քարարկղեր: Բոլոր դամբարանախցերը լցված են հողով և քարով: Ի տարբերություն Կարմիր բերդի, դամբանախցերն ունեն տարբեր ձևեր. հիմնականում հատակագծում ուղղանկյուն են, սակայն հանդիպում են նաև ձվաձև, կլոր անկյուններով փոսեր: Այս դամբարանների խորությունն է 0,4-3 մ, իսկ երկարությունը՝ 1,6-3,2մ



Աղ. 45. Միջին բրոնզի դարաշրջանի զաձոներ Նարմիր վանից։

Նմանատիպ դամբարաններ հայտնի են Գառնիից, Թաթուլարխից, Արծվաբերդից, Սևան Գեղից, Նոր Բայազետից և այլն:

Խոշոր, հիմնահողային դամբանափոսերով դամբանաբլուրներ հայտնաբերվել են Լճաշենում, որոնց թումբը, երկար ժամանակ մնալով ջրի տակ, քայքայվել է, սակայն պահպանվել է 1 մ բարձրությամբ քարե գրանը: Այստեղ մանր քարերի հետ հանդիպում են 4-5 մ մեծության ծածկասալեր: Հաճախակի հետաքրքիր է Կիրովականի դամբանաբլուրը, որը 30 մ^2 և 3 մ խորությամբ խոշոր փոս է: Այն ծածկված է փայտե սյուների վրա հենված քարե սալերով: Հարիճի դամբարաններից մեկում հանդիպում են գերանածածկ՝ նրան մոտեցնելով Լճաշենի դամբարաններին, ուր լայնորեն տարածված են փայտե ծածկերը:

Համեմատաբար փոքր դամբանաբլուրների հետ Թեղքում հանդիպում են և խոշոր դամբանաբլուրներ: Թեղքի դամբանաբլուրներից մեկը ուներ մինչև 5 մ բարձրություն, իսկ դամբանախցերի խորությունը հասնում է 3 մ: Թցերի մեծ մասամբ հիմնահողային են: Դամբանախցերը ուղղանկյուն են, գերանածածկ, իսկ հատակները ծածկված են եղեգնից պատրաստված խսիրով, հենվում են փայտե սյուների վրա: Արևելյան կողմից խցերն ունեն դամբանամուտք /դրոմոս/, որ երկարությունը հասնում է մինչև 40 մ:

Թեղքի դամբանաբլուրների շարքում հանդիպում են նաև վերգետնյա խցերով դամբանաբլուրներ, որոնց թմբի բարձրությունը հասնում է մինչև 8 մ: Թմբի կենտրոնական մասի տակ, մայր հողի մակերեսին, խոշոր քարերով չոր շարվածքով կառուցվել են խոշոր սրահներ, որոնցից մեկի մակերեսը հասնում է 175 մ^2: Այս շինությունների պատերի բարձրությունը հասնում է 7 մ, ծածկը նմանվում էր հիմնահողայիններին: Սրահները ունեցել են սյուների վրա հենված գերանածածկ: Նման վերգետնյա դամբանասրահով դամբարան հայտնի է նաև Քարաշամբից: Հայաստանի միջին բրոնզեդարի մի շարք դամբարանադաշտերում դամբարանների վերգետնյա հատվածներ չեն պահպանվել, իսկ դամբարանախցերը տարբեր ձևավորում ունեն: Մեծ քանակ են կազմում քարարկղերը, որոնք ունեն ուղղանկյունաձև հատակագիծ և ծածկված են մի քանի սալերով: Նման կառույցներ հայտնի են Շիրակավանից, Լճաշենից, Էլարից, Կարմիր բերդից, Լոռի բերդից և Հայաստանի այլ հուշարձաններից: Բացի դրանից Քեթիում հանդիպում են հիմնահողային կառակոմքաներ՝ ժայռե մուտքով: Այն ծածկված է երկու սալերով:

Միջին բրոնզեդարի դամբարանների մի մասը գետնի մակերեսին շրջապատվում է կրոմլեխի քարերով, առանձնանալով իբրև կրոմլեխային շրջապատ թաղումներ: Հայաստանում հայտնի կրոմլեխներն ունեն մի քանի ձևեր: Հանդիպում են կրոմլեխներ, որոնց շրջազծի քարերը թաղված են

հողի մեջ, մեկը մյուսից 0,8-1,5 մ հեռավորության վրա: Դան կրոմլեխներ, որոնց շարվածքում քարերը կապած են մեկը մյուսին: Հանդիպում են նաև այլ ձևեր: Օրինակ, արտաքին շրջազծից դեպի ներս, մինչև դամբարանի ծածկը ձգվում են ուղիղ պատեր, որոնք կրոմլեխի ներսը բաժանում են մի քանի հատվածների: Միաշարք շրջազիծ ունեցող շինությունների հետ մեկտեղ հանդիպում են նաև երկշարք կրոմլեխներ:

Միջին բրոնզեդարի դամբարանների մեջ հատկապես հետաքրքիր է Լոռի բերդի քարակղերից մեկը, որի կրոմլեխը շարված է քարերից և ծածկված է չորս սալերով /երկարությունը՝ 6,7 մ, լայնությունը՝ 2,92 մ, խորությունը՝ 2,6մ/: Դամբարանի պատերը փոքր-ինչ ներս են թեքված, որի հետևանքով կողային պատերը ներքևից վերև մոտենում են մեկը մյուսին և կազմում են երեք աստիճանաձև կեղծ թաղ՝ փոքրացնելով դամբարանի ծածկի թռիչքը, որի վրա տեղադրված են ծածկի սալերը: Այս ձևը հիմք է տալիս պնդելու, որ Հայաստանում միջին բրոնզի դարից սկսած տարածվում է թաղի գաղափարը: Այն հետագայում օգտագործվում է քաղաքացիական շինարարության մեջ և հիմք է ծառայում Հայաստանում ժողովրդական տների ,,հազարաշեն,, ծածկի համար:

Դամբանախցերը ինչպես քարակղային, այնպես էլ հիմնահողային հատակները հաճախակի ծածկված են եղել հողով, ավազով, գետաքարով: Ամանային դեպքերում սովորություն կար հանգուցյալի և ուղեկցող նյութը ծածկել ջրիկ կավով, որը չորանալով դառնում է ամուր շերտ՝ պահպանելով ամբողջ թաղման գույքը:

Քեթիի դամբարաններից մեկում հայտնաբերվել է երեք քարերից շարված մի օջախ, որն առաջին անգամ է հանդիպում Հայաստանում և Անդրկովկասում: Դամբանախցերը, որպես կանոն, դատարկ էին որևէ լիցքից, չնայած հանդիպում են դամբարաններ, որոնք թաղումից հետո լցվել են հողով և մանր քարերով:

Ննջեցյալների թաղումները կատարվում էին երկու ձևով: Ավելի հաճախ հանդիպում են դիաթաղումներ, ավելի քիչ՝ դիակիզումներ: Երկու դեպքում էլ դամբարանի հատակին, բացի վերը նշված հողից և կավի լիցքից, որը կազմում էր դամբարանի հատակը, հաճախակի հանդիպում են խճիներ: Հարուստ դամբարաններում կան փայտե պատգարակներ:

Կիրովականյան պատգարակի ոտքերի կողային փայտերը ծածկված էին արծաթյա թիթեղներով և զամերով: Ավելի մեծ դամբարաններում, հատկապես Թոնդրյան և Լճաշենյան խմբերում, հանդիպում են սալեր, որոնց վրա դրվում էր հանգուցյալի դին: Ուղեկցող նյութում բացի նյութական մշակույթի մնացորդներից, մեծ թիվ են կազմում ցուլերի, ոչխարների, շների, ձիերի և վայրի կենդանիների ոսկորները: Ուղեկցող նյութը հիմնականում խեցեղեն անոթներ էին, իսկ հարուստ դամբարաններում հաճախակի են մետաղե զենքերը, զարդերը, գործիքները և այլն: Բարձր խավին պատկանող



Աղ. 46. Միջին քրոնզի դարաշրջանի նյութեր նկ.1-3,5,7 Սևան հեկ-ից, նկ.8,9,11-13 Լճաշենից, 4,6,10,14,15 Նոր Բայազետից, նկ.16,18 Նավուրից, նկ.19 Իջևանից:

դամբարաններում բազմաթիվ են ոսկյա և արծաթյա տարբեր զարդերը, որոնք վկայում են սոցիալական խիստ շերտավորվածության, անհավասարության մասին:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ: Հայաստանի միջին բրոնզեդարյան հուշարձանների ուսումնասիրությունը կատարված է անհամաչափ: Փոքրաթիվ բնակավայրերի հետազոտումը՝ Մուխաննաթեփե, Ուզերլիկթեփե, Այգևան, Մեծամոր, Ջրահովիտ, Նախիջևանի Քյուլթեփե և այլն, կատարվել է ոչ մեծ մակերեսով, որի հետևանքով զտնվել է քիչ քանակությամբ, բայց հետաքրքիր նյութ, որը և հնարավորություն է տալիս դատելու երկրագործության զարգացման մասին: Ուսումնասիրության ընդհանուր պատկերը վկայում է այն մասին, որ միջին բրոնզեդարում Հայաստանի և Անդրկովկասի բնակչությունը սկսում է ինտենսիվորեն բնակեցնել նախալեռնային և լեռնային շրջանները, որի պատճառները ոչ միշտ են ստույգ պարզաբանվում: Մի շարք ուսումնասիրողների կարծիքով, դա կապված է անասնապահության և մետաղագործության զարգացման հետ՝ երբ ցեղերը լայնորեն օգտագործում էին արոտավայրերը և հանքերը: Գիտնականների մյուս խումբը զտնում է, որ Քուռ-արաքսյան մշակույթի մոտ մեկ հազարամյա զարգացման ընթացքում կատարվել է մասսայական անտառահատում, որը հանգեցրել է անտառների սակավության և կլիմայի փոփոխությանն: Տեղումների պակասումը, հատախակի երաշտները ստիպել են բնակչությանը որոնել քնակլիմայական ավելի հարմարավետ շրջաններ ավանդական տնտեսաձևերը շարունակելու համար: Մակայն բազմաշերտ հուշարձանների պեղումները վկայում են, որ դա կատարվել է ոչ ամենուրեք, քանի որ մ.թ.ա. 3-րդ հազարամյակին վերաբերող շերտի վրա միջին բրոնզեդարյան բնակավայրերը շարունակվում են:

Բնակավայրերի նյութերի մեջ հանդիպում են նաև բազմաթիվ աշխատանքային գործիքներ՝ սանդեր, սանդկոթեր, տրոհիչներ, վանակատից և կայծքարից մանգաղների ներդիրներ, իսկ առանձին հուշարձաններում՝ փոքրաթիվ բրոնզե մանգաղներ: Իրենց ձևերով երկրագործության հետ կապված այս գործիքները քիչ են տարբերվում քուռ-արաքսյան գործիքներից, որը հնարավորություն է տալիս ենթադրելու միջին բրոնզի ժամանակաշրջանում շարունակվող Քուռ-արաքսյան երկրագործության ավանդույթների, բրիչային և արորային երկրագործության ավելի մեծ տարածքների յուրացման մասին: Ուզերլիկթեփեում հայտնաբերված ցորենի, գարու, խաղողի կորիզների, ինչպես նաև կորեկի ալյուրի մնացորդներով ամբարների հայտնագործումը, վկայում է, որ երկրագործական բնակավայրերը դաշտային շրջաններում շարունակում էին իրենց գոյությունը: Նման պատկեր առկա է նաև Այգեվանում, որտեղից հայտնաբերվեցին միաշար ցորենի ու գարու հատիկներ, խուրձեր: Այս հանգամանքը մի կողմից վկայում է, որ ավանդաբար կատար-

վում էին խառը ցանքսեր՝ երաշտից խուսափելու համար, մյուս կողմից՝ որ կալսում էին ատիճանաբար: Տարածքների զգալի ավելացման մասին է վկայում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի քարե կամի հայտնագործումը Զանգեզուրում; Այս հանգամանքը վկայում է, որ ցանքատարածքների ավելացումը և բերքի ածը պահանջում էին կալսելու նոր եղանակներ: Քարե կամի և կալերի հանդես գալուց բացի հացահատիկը ցողունից անջատվում էր կենդանիների սմբակներով տրորման միջոցով: Երկրագործության զարգացման անուղղակի վկայությունն է խոշոր եղջերավոր անասունների մեծաքանակ ոսկորների հայտնագործումը:

Չնայած այս ոսկորները հիմնականում գտնվել են դամբարանային համալիրներից և կարող են խոհանոցային մնացորդներ լինել, այնուամենայնիվ դրանք որոշ չափով արտացոլում են անասնապահության զարգացման պատկերը:

Այսպես, Թեղջյան մշակույթի հուշարձաններում գերակշռում են խոշոր եղջերավոր անասունների ոսկորները: Նույնը վերաբերում է Արծվաբերդի դամբարաններին, ուր գտնվել են հինգ խոշոր և երկու մանր եղջերավոր կենդանիների ոսկորներ: Նման պատկեր նկատվում է Լճաշենում և Կիրովականում:

Հատկապես հետաքրքիր են Կիրովականի դամբանաքարերի նյութերը: Հայտնաբերվել են երկու ցուլի և տասնչորս խոզի գանգեր: Խոզի գանգերի այսպիսի մեծաքանակ հայտնագործումը վկայում է նստակյաց անասնապահության զարգացած ձևերի մասին: Հետաքրքիր է, որ Լճաշենի դամբարաններից հայտնաբերվել են ցլատայլերի մնացորդներ:

Մեծ քանակությամբ ոսկրաբանական նյութեր են հայտնաբերվել Հառիճի դամբարանադաշտում, ուր քանակական տեսակետից գերակշռում են մանր /չնայած զգալի են նաև խոշոր/ եղջերավոր անասունների ոսկորները:

Հետաքրքիր նյութեր են տալիս Ուզերլիկթեփեի պեղումները: Այստեղ գտնված 893 ոսկորներից մի մասը պատկանում է 26 խոշոր եղջերավոր կենդանիների, 20 այծի և ոչխարի, 5 ձիու, 11 ընտանի խոզի և մեկ շան: Նման պատկեր է դիտվում Թանլարի մոտ կատարված պեղումներում: Այստեղ տարբեր դամբարանների պեղումներից հայտնաբերված ոսկորների մեծ մասը պատկանում է ցուլերի, ըստ քանակության երկրորդ տեղում են այծերի, ապա ձիու և շան ոսկորները: Նման պատկեր նկատվում է Հայաստանի և Անդրկովկասի մնացած հնավայրերում, ուր երբեմն գերակշռում են խոշոր եղջերավոր անասունների, մյուս վայրերում՝ մանր եղջերավորի ոսկորները: Երբեմն դրանք հանդես են գալիս հավասար քանակով, բայց որակական տեսակետից ամենուրեք գերակշռում են խոշոր եղջերավոր անասուններինը, քանի որ ընդունված է 1 խոշոր և մինչև 5 մանր եղջերավոր անասունների հարաբերակցությունը համարել խոշորների գերակշռություն:

Աղ. 47. Միջին ցրոնզի դարաշրջանի զամբոներ Կիրովականից:

Նման երևույթը մի կողմից վկայում է, որ Հայաստանի և Անդրկովկասի միջին բրոնզի ժամանակաշրջանում կազմակերպվում է յուրատեսակ անասնապահություն, որտեղ զգալի դեր է կատարում կենդանիների երկու հիմնական տեսակների օգտագործումը: Հոտում զգալի քանակով խոշոր եղջերավոր կենդանիների առկայությունը հուշում է, որ նրանք կարող էին լայնորեն օգտագործվել վարելու, կալսելու, սայլերը քաշելու նպատակով: Մանրերի հայտնաբերումը վկայում է, որ շարունակվում և զարգանում էր հեռագնա անասնապահությունը, գարնանը և ամռանը անասունները բարձրանում էին նախալեռնային, լեռնային արոտավայրերը, իսկ ուշ աշնանը վերադառնում ձմեռանոցները: Խոզերի ոսկորների մեծաքանակ հայտնագործումը վկայում է, որ մի կողմից բնակչությունը լայնորեն օգտագործում էր միսը, իսկ մյուս կողմից՝ անասնապահությունը կրում էր նստակյաց բնույթ, քանի որ խոզերը չեն պատկանում քոչվորական կամ հեռագնա կենդանիների թվին:

Միջին բրոնզի դարաշրջանում ավանդական անասնապահության ճյուղերի հետ ինտենսիվ զարգանում է ձիաբուծությունը, որի հանդես գալը, ինչպես նշվեց վերը, վերաբերում է էնեոլիթյան ժամանակաշրջանին: Հայաստանի միջին բրոնզեդարյան դամբարանային հավալիրներում հայտնաբերվել են ձիու ոսկորներ, որոնց թիվը փոքր-ինչ պակաս է վաղ բրոնզի ժամանակաշրջանում: Ձիու ոսկորներ գտնվել են Արծվաբերդում, Երևանում, Վերին Նավերում, Նոր Օշականում և այլ վայրերում: Այդ ոսկորների հայտնաբերումը մեծ դեր է խաղում Հայաստանի ռազմական զորքի պարզաբանման հարցում: Հուշարձաններից հայտնաբերված սպառազինությունը որոշակի նմանություն է տալիս խեթական ռազմարվեստի հետ: Բացի դրանից կան մի շարք նյութեր, որոնք վկայում են, որ Հայկական լեռնաշխարհի ցեղերի զինվորները և մարտակառքերը մասնակցել են խեթական թագավորության կողմից վարվող պատերազմներին: Այս տվյալները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ ընդհանուր կամ շատ մոտ պետք է լինեին երկու երկրների ձիավարժեցման ձևերը: Միաժամանակ պետք է նշել, որ չնայած ձիաբուծության զարգացմանը, ձին Արևելքում դեռևս մնում էր թանկ կենդանի, և նրա գինը, հաշվի առնելով տարիքը և օգտագործման ձևը, հաշվվում էր չորսից մինչև քսան սիկլ՝ /տարբեր երկրներում 1 սիկլը հավասար էր 4,8-5,8 գրամ արծաթի/, այն դեպքում, երբ ամենաբարձր արժեք ունեցող ցուլերի գինը չէր անցնում 12 սիկլից, իսկ ոչխարի գինը՝ 1 սիկլից: Ձիու այսպիսի բարձր արժեքը պայմանավորված էր ինչպես անասնապահության զարգացմամբ, երբ հովիվները լայնորեն օգտագործում էին ձին, այնպես էլ ռազմական զորքի զարգացմամբ, երբ ամբողջ Արևելքում

խուրրիները, հեթիթները, իրանացիները, մեդիացիները, Հայկական բարձրավանդակի ցեղերը սկսեցին օգտագործել ձիերով լծված թեթև մարտակառքերից բաղկացած զորամիավորումներ: Այս նոր զորամիավորումները կարողանում էին հեշտորեն ճեղքել ոչ կայուն հետևակային միավորումները: Ձիերի մարզման համար ստեղծվել են անգամ հատուկ ձեռնարկներ, որոնցից մեզ հասած մեկում՝ ,,Կիկուլիի տրակտատ,, անվամբ, մանրամասն նշվում են մարտակառքին լծվող ձիերի ընտրության և վարժման ձևերը, որը կատարվում էր մի քանի ամսվա ընթացքում: Իհարկե, չի կարելի հին արևելյան վարժեցման մեթոդները մեխանիկորեն փոխադրել Հայկական բարձրավանդակ, սակայն ավելի ուշ ժամանակների նյութերը վկայում են ինչպես ձիաբուծության զգալի աճի, այնպես էլ Վանի թագավորության և խեթական ձիաբուծության ընդհանրությունների մասին: Դա հնարավորություն է տալիս ենթադրել, որ ընդհանրությունները սկսել են ավելի վաղ շրջանից:

ՄԵՏԱՂԱՄՇԱԿՈՒՄ: Տնտեսական և մշակութային կապերի ամրապնդումը, լայնացումը հին արևելյան մշակույթների հետ մեծ նշանակություն ունեն Հայկական բարձրավանդակի ցեղերի նյութական և հոգևոր մշակույթի զարգացման և ծաղկման համար: Այդ կապերը, որոնք ստույգ արձանագրված էին դեռ վաղ բրոնզի ժամանակաշրջանում, միջին բրոնզում հատկապես պարզորեն նկատվում են մետաղագործության մեջ, երբ Հայաստանի միջին բրոնզի ցեղերը ներմուծում էին նոր ձևերի մետաղամշակման արտադրանք խողովակակնքաո նիզակներ, շրջանակաձև բռնակներ ունեցող դաշույններ, ասիմետրիկ սակրեր և այլն: Դրանք լրացնում էին ավանդական ձևով արտադրվող տեղական տափակ կացինների, պղնձե մանգաղների, տարբեր դուրեբի շարքը, որոնք կատարելագործվելով ձեռք էին բերում նոր ձևեր:

Զուլման պրոցեսի մասին վկայում է Ուզերլիկթեփեից գտնված հաղորդը: Բացառիկ երևույթ կարելի է համարել ոսկուց և արծաթից, երբեմն կիսաթանկարժեք զարդարված կիսաթանկարժեք քարերով սպասքի հանդես գալը: Վերջիններս պատրաստվել են փորագրման և դրվագման տեխնիկայի օգտագործմամբ: Տարբեր մետաղյա նյութեր պատրաստելու ժամանակ Հայաստանում միջին բրոնզեդարյան վարպետները լայնորեն օգտագործում էին մկնդեղային բրոնզը, մկնդեղաանազային բրոնզը, մկնդեղարծնիճային բրոնզը, բազմակուվպոնենտ ձուլվածքները, ինչպես, այսպես կոչված, հատուկ բրոնզը, որը հանդիսանում է պղնձի և արծաթի խառնուրդը: Մետաղե առարկաների՝ զենքերի, աշխատանքային գործիքների, զարդերի հիմնական հայտնագործությունները կատարվել են դասբարանային համալիրներից, որոնք միշտ չէ, որ տալիս են մեծաքանակ նյութեր: Հայտնաբերված նյութերը հիմնականում ներկայացված են տարբեր կացիններով, դաշույններով, դուրերով և այլն, որոնք բաժանվում են հետևյալ



Նկ. 48. Միջին բրոնզի դարաշրջանի զարդեղեն Կիրովականից

ձևերի։

ՆԻԶԱԿՆԵՐ։ Փեղաձև սայրով, խողովակաձև կոթառով նիզակները, որոնք փոխարինում են վաղ քրոնզեդարյան պոչավոր կոթառներ ունեցող նիզակներին, հայտնի են Կիրովականից, Թռեղքից, Արուճից, Ամազաքլուրից, Ազնաքերդից, Լճաշենից, Կամոյից, Հառիճից, Կարմիր վանքից։ Դրանց մեջ հատկապես հետաքրքիր է Հառիճի մեկ նիզակը, որը ստորին մասում ունի երկու մեղքվածք՝ կոթառին ամրացնելու համար։ Նիզակի կոթառը զարդարված է փորագրված թեք գծերով լցված ուղղանկյուններով և շեղանկյուններով, մի նախշաձև, որը հայտնի է դեռ վաղ քրոնզի ժամանակաշրջանից։

ԿԱՑԻՆՆԵՐ։ Հայաստանի միջին քրոնզեդարյան կացինները կազմում են ոչ մեծ, քայց քնորոշ խումբ։ Դրանցից Լենինականում գտնված կացինը, որն ունի ասիմետրիկ ձև և կոթառի տակից ելուստ։ Այս կացինը, որը սակրաձև կացինների ամենահին օրինակն է, թվագրվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբով։ 2-րդ տիպի կացինները հայտնաբերվել են Շամշադինի նավուր գյուղի մոտ։ Դրանք ունեն ձվաձև անցքով փոքր-ինչ կախված կոթառ, առաջ քերված կեռ իրան և լայնացող սայր։ Այս տիպի կացինները թվագրվում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին քառորդի վերջով։ Սրանց մեջ վերջինն է Կիրովականի ասիմետրիկ սակրը, որի վիզը վեց նիստ ունի, թեք կոթառ և կլորացող սայրային մաս։ Անդրկովկասում այս տիպի կացիններ հայտնի են Գոմազելեից, Թոդուռնից և Ծաղկայից։ Մի քանի նման կացիններ հայտնի են Հյուսիսային Կովկասից։

ՇԱԿՐԵՐ։ Ներկայացված են երկու շքեղ օրինակներով։ Դրանցից մեկը պատահականորեն հայտնաբերվել է Հրազդանում, մյուսը պեղվել է Քարաշամրից մեծ դամբանաբլուրից։ Երկուսն էլ ունեն կիսալուսնաձև սայր, քարձր ուսեր, որոնց ծայրերին կան փոքրիկ զոգավորություններ։ Ոչ մեծ կոթառի տակով անցնում է իրանին զուգահեռ մի ծող։ Կոթառի ստորին մասում կա կլոր ելուստ։ Այդ տիպի սակրերի մոտիկ ձևեր հայտնի են Ուռի արքայական դամբարաններից, իսկ ավելի ուշ, կատարելագործված ձևերը գտնվում են Լուրիստանի, Էլամի, Սիրիայի, Պաղեստինի մի շարք հուշարձաններից։

ԴԱՇՈՒՅՆՆԵՐ։ Ներկայացված են ոչ մեծ խմբով և բաժանվում են մի քանի տիպի։ Առաջինը տերևաձև շեղքեր ունեցող դաշույններն են, որոնց կենտրոնը փոքր-ինչ հաստատված է, իսկ լեզվակը ներկայացված է Փոքր ելուստով, որի վերևում կա անցք՝ փայտե կոթառը ամրացնելու համար։ Նման դաշույններ հայտնի են Կիրովականից, Երևանից, Արծվաքերդից, Էլարից, Թռեղքից և թվագրվում են մ.թ.ա. 18-16-րդ դ.դ.։ Դրանք ձևերով մոտ են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջին հանդես եկող դաշույններ-

ին, որոնք հայտնի են Շումերից, Միքենոսից, Կիպրոսից և փոքրիկ քանակով՝ Եփրատ գետի վերին հոսանքի հուշարձաններից:

2-րդ տիպը ներկայացնում են նեղ, երկար շեղք ունեցող դաշույնները որոնց կենտրոնական մասը նույնպես հաստացված է, լեզվակը երկար է և վերին մասում ունի անցք՝ փայտե կոթառը ամրացնելու համար: Նման դաշույններ հայտնի են Էջմիածնից և թվագրվում են մ.թ.ա. 17-16-րդ դ.դ.: Դրանց մոտենում են Կարմիր վանքի դաշույնները, որոնք, ըստ երևույթին, թվագրվում են փոքր-ինչ ուշ ժամանակով: Էջմիածնից հայտնի են նույն տիպի դաշույններ, որոնց կենտրոնական մասը, փոխանակ հաստացվելու ունի լայն, միջանկյալ ող, ինչը նկատվում է նաև թռեղքում գտնված մի քանի դաշույնների վրա:

Դաշույնների 3-րդ տիպը կազմված է, այսպես կոչված, առաջավորասիական տիպի դաշույններից: Դրանց հիմնական հատկանիշը բռնակի ձևն է: Այդ տիպի դաշույնների բռնակները տափակ են և ծայրերին ունեն ելուստաձև եզր, որի մեջ տեղադրվում է փայտյա կոթառը: Կոթառի և շեղքի միացման տեղում կա փոքրիկ ելուստ: Հայաստանում այս տիպի վաղագույն դաշույնները թվագրվում են մ.թ.ա. 18-16-րդ դ.դ. և հայտնի են Հառիճից, Կարմիր վանքից: Դրանք, փոքր-ինչ ձևափոխվելով, հարատևում են մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի ավիզքը: Առաջավոր Ասիայում նման դաշույններ հայտնի են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջերից և 2-րդ - հազարամյակի սկզբից: Գտնվել են Ռաս-Շամրայում, Զաքար քաղաքում, Սեզիդոյում, Նիհավենդում և այլ վայրերում:

ՍՈՒՍԵՐՆԵՐ: Միջին բրոնզի դարաշրջանի վերջին Հայաստանում և Անդրկովկասում հանդես են գալիս սուսեր-թրեր, որոնք ներմուծված էին Կրետոմիքենյան աշխարհից: Այս սուսերներն ունեն մինչև մեկ մետր երկարություն շեղք, որի լայնությունը հասնում է 6 սմ: Սուսերների ուսերը փոքր-ինչ թեք են: Շեղքի կենտրոնով անցնում է խիստ ուռուցիկ միջանկյալ ող: Սուսերի կենտրոնից դուրս է գալիս փոքրիկ լեզվակ՝ փայտե բռնակը ամրացնելու համար: Նման սուսերներ Հայաստանում հայտնի են Զորագեսից, Դաշաղանից, Որոտնաբերդից, Մայիսյանից, Այգեշատից; Երկու այդպիսի սուսերներ հայտնի են Սամթավրոյից: Այս սուսերները թվագրվում են մ.թ.ա. 18-16-րդ դ.դ.:

Բացի զենքից, միջին բրոնզեդարյան նյութերում հանդես են գալիս ոչ մեծ խումբ կազմող բրոնզե գործիքները: Դրանցից է Կիրովականից գտնված տափակ կացինը, որը, նմանվելով վաղ բրոնզեդարյան երևանյան գանձի տափակ կացիններին, ունի ուշ բրոնզեդարյան նման գործիքներին բնորոշ մի շարք գծեր: Դրանք արտահայտվում են ավելի լայն, կլորացող աշխատանքային մասով և կողերում փոքրիկ ելուստների առկայությամբ: Այս տիպի գործիքները լայնորեն օգտագործվել են ատաղձա-



Նկ. 49. Միջին բրոնզի դարաշրջանի զտածոներ Կիրովականից։

գործության և կաշվեգործության մեջ: Կիրովականից հայտնի է նաև այլ մի առաղծագործական գործիք՝ ուրը, որը լայնացող մի խողովակ է, աւր տեղադրվում է փայտե քոնակը: Աշխատանքային ծայրն ունի կլորացող կարվածք: Բացի դրանից հայտնի են մեռազե բզեր /Կարմիր վանքից, Հառիճից/, որոնք լայնորեն օգտագործվել են կաշեգործության մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ առաղծագործության:

Միջին քրոնզեդարյան մետաղագործության մեջ ուրույն տեղ են գրավում քրոնզե կաթսաները, որոնք հափտակի հանդիպում են քրոնզե կեռիկների հետ: Կաթսաները, որոնք կազմում են մետաղյա անոթների մի հետքրքիր խումբ, հայտնի են Կիրովականից, Լոռի քերդից, Հառիճից, Երևանից, Քարաշամքից, Թեղդից: Կիրովականի կաթսան մի խոշոր անոթ է՝ կազմված երկու պղնձե թիթեղներից: Նրա բարձր իրանը կենտրոնով փոքրինչ նեղանում է: Գլորվուն հատակը պատրաստված է մեկ ամբողջական թիթեղից և ամրացված է իրանին դրվազման միջոցով: Այս կաթսային ձևով մոտ է Հառիճում հայտնաբերվածը, որն ունի փոքր-ինչ հարթ հատակ: Երկու կաթսաների քունակները ուղղահայաց ամրացված են անոթի վերին մասին: Կիրովականյան կաթսային նման կաթսաներ հայտնաբերվել են Լոռի քերդից, որոնց իրանը դեպի վեր նեղանում է: Երևանից գտնված կաթսայի քունակները տարբերվում են մյուսներից իրենց ատամնավոր ձևով: Կիրովականյան տիպին նման կաթսաներ հայտնի են նաև Թեղդի դամբանաբլուրներից: Կաթսաների հետ միասին հաճախակի հանդիպում են քրոնզե կեռիկներ, որը հնարավորություն է տվել հետազոտողներին ենթադրելու, որ դրանք ծառայել են կաթսաներից միս հանելու համար: Այդպիսի կեռիկներ հայտնի են Կիրովականից, Լոռի քերդի միջին քրոնզեդարյան համալիրներից, սրանք ունեն խողովակաձև կոթառ՝ վերին մասում անցքով՝ փայտե կոթը ամրացնելու համար: Ձողի ծայրը կորանալով կազմում է աշխատանքային մասը:

Միջին քրոնզեդարի արհեստների մեջ քացառիկ տեղ են գրավում արծաթագործությունը և ոսկերչությունը: Միանգամից այսպիսի հարուստ և մեծաքանակ արծաթե և ոսկյա իրերի հանդես գալը, որը եզակի երևույթ է նախորդ քուռ-արաքսյան ժամանակաշրջանի համար, ընդհանրապես, չի կարելի բացատրել ավանդական զարգացմամբ: Ոսկերչական իրեր նմանությունը Առաջավոր և Փոքր Ասիայի զտածոների հետ բացատրվում է արտաքին մշակութային կապերով և հին արևելյան քաղաքակրթության ազդեցությամբ: Նման երևույթ քնորոշ է նաև հարևան Վրաստանին և անգամ հեռավոր Ֆրանսիային, որտեղ Ուռի արքայական դամբարաններում հանդես են գալիս ոսկերչության հոյակապ նմուշներ: Հայաստանի և Անդրկովկասի միջին քրոնզեդարյան գեղարվեստական իրերը ներկայացված են բազմաթիվ քրոնզե, արծաթե, ոսկյա շքասեղներով, շիքերով, լարից պատրաստված ուռ-

ռաստուլյաներով, որոնք հայտնի են Հառիմից, Կարմիր վանքից, Լճաշենից և այլ հուշարձաններից: Թռեղջյան դամբարաններում հանդես են գալիս բազմաթիվ արծաթե և ոսկյա թիթեղներ, որոնցով պատվում էին բրոնզե և փայտե իրեր: Լայնորեն տարածվում են նրբաթիթեղները, որոնք հայտնի են Կիրովականից և Թռեղջից: Մեծ թիվ են կազմում ոսկյա ուլունքները: բաժանարարները /Կիրովականից և Թռեղջից/: Դրանք մեծ թիվ են կազմում հատկապես Քարաշամբում /ավելի քան 1000/: Այս ուլունքների մի զգալի մասը հարթ են, սնամեջ, մյուսները զարդարված են ալիքաձև գծերով, հատիկավոր նախշերով և այլն: Թռեղջից գտնված ոսկե և արծաթե շքասեղները զարդարված են գունավոր քարերով, զարդահյուսվածքով, ուղղված շարով և այլն: Օձունում գտնվել են ոսկյա կրծքազարդ, ուլունքներ, ինչպես նաև ազաթից պատրաստված կախիկ: Զարմանալի վարպետության էին հասել ոսկերիչները ոսկյա և արծաթե բարձրարվեստ անոթների պատրաստման գործում, որոնք հայտնի են Թռեղջից, Կիրովականից, Քարաշամբից: Այս անոթներից յուրաքանչյուրը արվեստի բարձրանվուշ ստեղծագործություն է և սոցիալական խոր շերտավորման արգասիք, օգտագործվելով հասարակության բարձր խավի ներկայացուցիչների կողմից: Իրենց ձևավորմամբ և գեղարվեստական առանձնահատկություններով այս անոթները կարելի է բաժանել երեք մեծ խմբերի՝ հարթ պատերով, ռելիեֆային նախշերով և դրվագազարդ:

Հարթ պատերով անոթների թվին են պատկանում Թռեղջում գտնված մի ոսկե գավաթ, որն իր ձևով մոտենում է աոյուծներով զարդարված Կիրովականի գավաթին: Այդ խմբին են վերաբերում նաև Թռեղջի մի այլ դամբարանից գտնված գավաթի մասերը, որը փոքր-ինչ սեղմված է կենտրոնական մասում:

Հատկապես մեծ խումբ են կազմում ուռուցիկ պատկերներով անոթները: Դրանց մեջ ուրույն տեղ են գրավում Թռեղջի 5-րդ դամբանաբլուրից, Քարաշամբից և Կիրովականից գտնված արծաթե գավաթները, որոնց մակերեսը բաժանված է մի քանի գոտիներով: Գոտիները զարդարված են երկրաչափական նախշով, իսկ մնացած տարածությունները զարդարված են առասպելական որսի, դիցաբանական էակների, մահվան պատկերներով: Այս պատկերները անուղղակիորեն պատկերացում են տալիս հնագույն կահույքի, զենքի և հագուստի ձևերի, ժամանակի հոգևոր պատկերացումների մասին: Նախշազարդման ժամանակ ոսկերիչները վարպետորեն օգտագործել են մետաղի հատկությունները: Նրանք հրաշալի ձևով հաշվի են առել էակների ավանդական պատկերազրության և այլ իրերի հարաբերությունը և խեթական ռելիեֆ-բարձրաքանդակների Ֆիգուրների նման նրանց պատկերել են կողային դիրքով, իսկ առանձին մասեր՝ դիմացից:



Նկ.50. Միջին բրոնզի դարաշրջանի ոսկուց և արծաթից գավաթներ Քարաշամբից:

Այդ զավաթների քանդակները երևում են Թալկայի դամբանաբլուրներից մեկում գտնված դուլլի վրա արված պատկերներում: Այստեղ պատկերված են եղջերուներ, այծյամներ, այծեր և քուսական նախշեր: Դրանք զարդարում են դուլլի ամբողջ մակերեսը: Ուռուցիկ պատկերներն արված են ցածր ռելիեֆային եղանակով, իսկ նրանց շրջագծերը՝ կոնաուրային գծով, որն ընդգծում է պատկերներն ու հնարավորություն է տալիս դրանք արագորեն դիտելու: Պատկերը ստանալու համար թիթեղը սկզբից մշակվում էր ներսից կողմից, իսկ հետո, այն ընդգծելու համար արտաքինից ենթարկվում էր գրաֆիկական մշակման:

Մյուս խմբի անոթներից է Թեղդի դամբանաբլուրներից գտնված ոսկյա զավաթը, որը զարդարված է գունավոր քարերով և ապլիկացիաներով: Մասնագետների կարծիքով, այս զավաթը պատրաստված է մի ամբողջական թիթեղից, որը ձգվել է խառատի դազգահի վրա նախ՝ վերևից՝ ներքև, և ապա՝ հակառակ ուղղությամբ: Պահանջվող ձևը ստանալուց հետո կտրվում էր ավելորդ մետաղը: Արտաքին կողմից ամրացված են ապլիկացիաները, իսկ հատուկ պատրաստված փոսիկների մեջ տեղավորվում են վարդագույն և կապույտ քարեր: Չնայած հայտնաբերված ոսկերչական նյութերի մեծ քանակին, հանդիպում են նաև ցածրարժեք իրեր: Դրանցից են քրոնզե, շքասեղները, թիթեղները և այլն: Չնայած այդ իրերի ոչ բարձր գեղարվեստական նշանակությանը, դրանք տեղեկություններ են տալիս միջին քրոնզեդարյան ժամանակաշրջանի գեղարվեստական մետաղամշակման տեխնոլոգիական և ոճական առանձնահատկությունների մասին: Այս իրերը պատրաստելիս լայնորեն օգտագործվել են ձգման, լցեմման, փորագրման, ներծկման և այլ եղանակներ: Այսպես, բարձրարվեստ թասեր, զավաթներ, դուլլեր պատրաստելիս օգտագործվել են մետաղի ձգման, փայլեցման, հարթեցման եղանակները, որոնք հիմնականում կատարվում էին դազգահի վրա; Մանր իրերը, ուլունքները և այլն հիմնականում ստացվում էին կոման և լցեմման եղանակով: Գեղարվեստական արհեստներում այսպիսի տարբեր եղանակների օգտագործումը համեմատություն է գտնում նաև Առաջավոր Ասիայի քաղաքակրթությունների արվեստի մեջ, մի հանգամանք, որը անկասկած, օգնում էր տեղական ցեղերի մշակութային վերելքին:

ԽԵՑԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ: Հայաստանի միջին քրոնզեդարյան խեցեգործական արտադրանքը բաժանվում է մի քանի ժամանակագրական խմբերի, ուր առավել վաղ համալիրներում դեռևս գոյատևում են վաղ քրոնզեդարյան քրուտագործության ձևերը, միաժամանակ տեղ տալով նոր տարրերի, որոնք քնորոշ են քննարկվող ժամանակաշրջանին: Դրանցից է Հառիճում հայտնաբերված խեցեղենը, որը հիմնականում բաղկացած է կոպիտ խոհանոցային իրերից և ոչ մեծ թվով սև, փայլեցված անոթներից: Հառիճի կոպիտ խո-

Հանոցային խեցեղենը հիմնականում պատրաստված է դեղին կավից և զարդարվում է մեծ թվով խառնուրդներ։ Դրանց հիմնականում քնորոշ են պատերի անհավասարությունը և հատակային մասի հաստատումը, որն անոթներին տալիս է ասիմետրիկ ձև։ Այս խմբի անոթները հիմնականում ներկայացված են մեծ և փոքր քրեղաններով, որոնց շուրթերը կտրված են, և խոշոր կնումներով, որոնց ձևերը նկատվում են Հայաստանի վաղ քրոնզեդարյան խեցեղենում։ Այս խեցեղենի զանգվածային բնույթը և պատրաստման ոչ պրոֆեսիոնալ եղանակը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ այն պատրաստել են ոչ միայն քրուտները, այլև, ինչպես Ուզերլիկֆեխեում, յուրաքանչյուր տան տնտեսուհի։ Վաղ քրոնզեդարյան խեցեղենին սերտորեն կապվում են սև, փայլեցված անոթները, որոնք պատրաստված են լավ մշակված կավից։ Ի տարբերություն խոհանոցային խեցեղենի, այս անոթները պատրաստված են ավելի կատարելագործված տեխնիկական հնարքներով, չնայած սրանց մեջ էլ երբեմն հանդիպում են ոչ հավասարաչափ հատակ և թրծում ունեցող անոթներ։ Սրանք հիմնականում սև, փայլեցված են, երբեմն էլ շագանակագույն և մուգ գորշ գույնի։ Այս խեցեղենի զգալի մասը զարդարված է ուցված զծիկներով, եռանկյունիներով, կետազարդ նախշերով ուցված եռանկյունիներով՝ մի նախշաձև, որ համախակի ենք հանդիպում վաղ քրոնզեդարյան խեցեղենի վրա, և հայտնի է Շենգավիթից, Գառնիից, Քոսի Մոթերից։ Այդ են վկայում նաև անոթների ձևերը՝ ցածր վիզը՝ շուրթի դուրս ծկումը, իրանի զնգաձևությունը և այլն։ Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ վերը նշված ավանդական ձևերից բացի հանդես են գալիս մի շարք նոր հատկանիշներ՝ անոթների հարթ հատակը, քարձրացող ուսերը։ Հանդես են գալիս նաև լայնաքերան կնումներ։ Սա քնորոշ է ոչ միայն Հառիճի խեցեղենին։ Այն հանդիպում է նաև Լճաշենի միջին քրոնզեդարյան վաղ փուլի նյութերում, որտեղ խոհանոցային խեցեղենը նյուսպես անփայլ է, իսկ նախշազարդման մեջ գերակշռում են թեք, ներծկված զծերը։ Դրանք քիչ են հանդիպում Հառիճում, իսկ Լճաշենի խեցեղենի մեջ քիչ են եռանկյունաձև նախշեր ունեցողներ, որոնք լայնորեն տարածված էին Հառիճում։

Հետաքրքրություն է ներկայացնում Գառնիի միջին քրոնզեդարյան խեցեղենը։ Այստեղ լայնորեն տարածված են ներծկված նախշամոտիվները, որոնք լայնորեն առկա են վաղ քրոնզեդարյան խեցեղենի մեջ։ Նման պատկեր նկատվում է նաև Քեթիում, ուր հայտնաբերված կնումները, զավաթները, անոթների կափարիչները, քրեղանները իրենց ձևերով և նախշազարդով միջին քրոնզեդարյան ժամանակաշրջանի են և պարզորեն բացահայտում են վաղ քրոնզեդարյան խեցեղենի հետ կապեր, նմանվելով նույն Քեթիի, Դվինի, Հառիճի, Շենգավիթի, Լճաշենի, Շրեխբուրի վաղ քրոնզեդարյան խեցեղենի ձևերին։ Էլառի և Լոռի քերդի խեցեղենը նույնպես նմանություն է գտնում վաղ քրոնզեդարյան խեցեղենին։ Սակայն ամենաքնորոշ

խեցեղենը այդ տեսակետից հայտնի է Ուզերլիկթեփեի միջին բրոնզեդարյան շերտերից: Այստեղ նույնպես գերակշռում է կոպիտ խոհանոցային խեցեղենը՝ շուրթերը կտրված թասեր և կնունեներ, կլոր իրանով և ցածր վզով կնունեներ, որոնք քնորոշ են վաղ բրոնզեդարյան մշակույթին: Այս հուշարձանի անոթների 2-րդ խումբը նույնպես ներկայացված է ներմրկված զարդով, սև, փայլեցված անոթներով: Պետք է նշել, որ Ուզերլիկթեփեի խոհանոցային խեցեղենի տիպերը քնորոշ են այդ հնավայրի միջին բրոնզեդարյան խեցեղենին, իսկ սև փայլեցվածի մեջ նկատվում են ժամանակագրական տարբերակներ:

Հայաստանի միջին բրոնզեդարյան խեցեղենի մյուս խումբը կազմում է գունազարդ խեցեղենը: Այն ինչպես նշվեց էնեոլիթին նվիրված գլխում, Հայաստանում և Անդրկովկասում հանդես է գալիս մ.թ.ա. 5-րդ հազարամյակի վերջում և 4-րդ հազարամյակի սկզբում և հայտնի է այնպիսի հուշարձաններից, ինչպիսիք են Թեղուտը Միլ Ղարաբաղյան հուշարձանները, Նախիջևանը, Շամիրամալթին և այլն, ուր այն կրում է միջազգեցության մշակույթի ազդեցությունը՝ ստանալով որոշ նոր գծեր: Սակայն մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջին Հայկական բարձրավանդակի և Անդրկովկասի համար այն նոր բնույթ է ստանում՝ հանդես գալով Այգեհատում, Ջրահովտում, մասամբ Հառիճում, սև խեցեղենին զուգահեռ հարատևելով մինչև միջին բրոնզեդարի վերջը:

Առանձին հուշարձանների գունազարդ խեցեղենը քննարկելիս պարզվում է, որ այն հանդես է գալիս սև խեցեղենի հետ միասին, ինչպես վերջիններս, համոզիչ աղերսներ է ցուցաբերում վաղ բրոնզեդարյան խեցեղենի հետ: Այսպես, Հառիճում սև, փայլեցված, գունազարդ խոհանոցային խեցեղենը հանդիպում է միջին բրոնզեդարյան ժամանակաշրջանում և իր ձևով ու գունազարդումով որոշակի նմանություն է հանդես բերում քուռ-արաքսյան մշակույթի հետ: Նույն պատկերը նկատվում է Կարմիր վանքի դամբարաններից հայտնաբերված խեցեղենում, ուր սև, փայլեցված, կետազարդ և գունազարդ խեցեղենը միասին է հանդես գալիս: Նման երևույթ նկատվում է Քեթիում, Մուխանաթափայում, Գառնիում, Ուզերլիկթեփեում, Վերին Նավերում, Մեծամորում, Թռեղքում և այլն: Թռեղքյան վաղ փուլի խեցեղենը հիմնականում բացկացած է սև, փայլեցված խեցանոթներից, որոնք ունեն վարդագույն պատատ, ինչը որ վկայում է հին ավանդական սովորությունների մասին: Այստեղ հաճախակի են հանդիպում ցածր վիզ ունեցող, կլորավուն իրանով, անոթներ, որոնք զարդարված են ներմկված շևրոններով և ուռուցիկ ելուստներով: Առաջին անգամ հանդիպում են երկար վզով խոշոր ժվաձև անոթներ, որոնք քնորոշ են այդ մշակույթի զարգացած փուլին: Այս անոթները հիմնականում զարդարված են բարակ գծերով: Հարուստ դամբանաքլուրներում գունազարդ խեցեղենը

ունի կարմիր Ֆոն, սև ներկով արված նախշազարդեր: Ծաղկային դամբանաքլուրներում գտնվել է գունազարդ խեցեղենի այլ տեսակ, որտեղ անոթների մակերեսը ծածկված է քաց կրեմագույն անգոբով, իսկ նախշազարդումը կատարված է գորշ-սև գույնով: Այս խեցեղենը հիմնականում զարդարված է շևրոններով, ալիքաձև գծերով, շեղանկյուններով, օղակներով և շախմատաձև նախշերով: Որոշ հետազոտողներ այն համեմատում են իրանական և առաջավորասիական քաց անգոբապատ գունազարդ խեցեղենի հետ:

Թոեղբյան վերջին փուլի խեցեղենն ուսումնասիրելիս առանձնանում են Կիրովականի մեծ դամբարանային համալիրները: Դրանց կապը Թոեղբի մեծ դամբանաքլուրների հետ հնարավորություն է տալիս հայ հետազոտողներին այդ մշակութային խումբը անվանել Թոեղբ-Կիրովականյան:

Կիրովականյան խեցեղենը, ինչպես և մյուս հուշարձաններից հայտնաբերվածը, բաժանվում է երկու խմբի՝ սև, փայլեցված, գորշ ատատով և կարմիր մակերեսով, գունազարդ: Կիրովականից գտնված խոշոր, սև, փայլեցված սափորները զարդարված են երկրաչափական և ատամնավոր նրբագիծ դրոշմանախշով: Անոթների մի մասը զարդարված է հորիզոնական ներմկված գծերով և ուռուցիկ շրջանակաձև ելուստներով, իսկ վիզը՝ մեանդրով և գծիկներով լցված եռանկյունիներով: Այստեղ գտնված գունազարդ խոշոր սափորները զարդարված են քարակ գծերով ուղղահայաց շևրոններով, ուղղաստույտ գծերով և այլ նախշերով, իսկ քրեղանները՝ հիմնականում լայն գոտիներով: Նման նախշազարդումով անոթներ Հայաստանում հայտնի են Էջմիածնից և Գառնիից: Մի շարք հուշարձաններում /Գառնի, Արծվաբերդ, Էլար, Զուրնաբաղ և այլն/ հանդիպում են նաև թոչնաձև նախշեր:

Կարմիր բերդի խեցեղենը, որը հայտնաբերվել է դեռ անցյալ դարի վերջին, ներկայացված է քազմաթիվ անկանթ, լայնաբերան սափորներով, որոնք զարդարված են կարմիր Ֆոնի վրա սև գույնով պատկերված շեղանկյուններով, զույգ եռանկյունիներով, թեք, ցանցաձև նախշով լցված ուղղանկյուններով, ուղղաստույտներով, զիգզագաձև, շախմատաձև զարդերով; ինչպես վերը նշվեց, հայտնաբերվել է նաև երկու անոթ՝ զարդարված գծիկային նախշով: Նման նախշերով զարդարված անոթներ հայտնի են Լճաշենից, Ուզերլիկթեփեից, Մուխանաթեփեից: Կարմիր բերդի տիպի հոյակապ զարդարված անոթներ հայտնաբերվել են Վերին Նավերից, Հառիճից, Լճաշենից, Էջմիածնից, Գառնիից: Այսպիսով, կարելի է ասել, որ կարմիրբերդյան միագույն գունազարդ անոթները հիմնականում բնորոշ են Հայաստանին, որի սահմաններից դուրս, ինչպես ասացինք, հայտնի են միայն Ռուսթավիում: Հետազոտողների կարծիքով դրանք վերաբերում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբին; սակայն Այգեհանի պեղումները հնարավորություն տվեցին հնացնել Կարմիր բերդի խեցեղենի հանդես գալը մի քանի դարով և այն թվագրել մ.թ.ա. 24-21-րդ դ.դ.: Այս խեցեղենի ծաղկուն շրջանը վերաբերում է մ.թ.ա. 20-18-րդ դ.դ., իսկ վերապրու-

կային ձևով այն հարատևում է մինչև մ.թ.ա. 15-14-րդ դ.դ.: Հարկ է նշել, որ Այգևանի խեցեղենը, կրկնելով կարմիրբերդյան խեցեղենի զարդամոտիվները, պարունակում է այլ մշակութային տարրեր: Գտնվել է մի խոշոր անոթի բեկոր, որի կարմիր մակերեսը զարդարված է կրեմագույն լայն գոտիով: Վրան քաց շագանակագույն գույնով արված են խոշոր ուղղաձույներ և ալիքաձև նախշեր: Այս եղանակը առկա է Ուզերլիկթեփեի, Հառիճի և Կարմիր վանքի խեցանոթների վրա: Նման նյութերի քննարկումը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ կարմիրբերդյան խեցեղենը հանդես է եկել դեռ ցուռ-արաքսյան մշակույթում, իսկ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին քառորդում ապրում է իր ծաղկման ժամանակաշրջանը: Բացի կարմիր, միագույն գունազարդ խեցեղենից, Հայաստանում ոչ մեծ թվով հանդիպում են նաև երկգույն գունազարդում ունեցող անոթներ: Դրանցից են նոր Բայազետում գտնված անոթները, ինչպես նաև հնդկական ընկյուզի կեղևի տեսքի անոթները, որոնք, կրկնելով կարմիրբերդյան նախշամոտիվները, գունազարդվել են սև, սպիտակ ներկերով:

Խեցեղենի վերջին տիպը, այսպես կոչված, Սևան-ուզերլիկյան տիպն է: Այս խմբի հիմնական մասը ներկայացված է գունազարդ անոթներով և սպիտակ ներկով դրվագազարդված խեցեղենով, որոնց հետ, ինչպես վերը նշվեց, հանդես է գալիս կոպիտ խոհանոցային խեցեղենը: Ուզերլիկի սև, փայլեցված խեցեղենը հարուստ զարդարված գոտիներով, ուղղանկյունիներով, եռանկյունիներով և այլ նախշերով: Վաղ փուլում հանդիպում է նաև կամարաձև նախշը, որը տարածվում է նաև ուշ շրջանում: Վերին խեցեղենի մեջ հանդիպում են ներգծված կիսաշրջաններով և շեղանկյունիներով զարդանախշեր: Այս շերտում սև, փայլեցված խեցեղենի հետ հանդես է գալիս գունազարդ խեցեղենը: Գունազարդումը կատարվում էր հիմնականում անոթների վերին մասում և պատկերում էր զուգահեռ ուղիղ, զիգզագաձև գծեր, թեք գծերով լցված շեղանկյունիներ և այլն: Մեկ անգամ հանդիպել է սպիտակ անգոբով արված գոտի, որի վրա սև ներկով նախշազարդ կա: Հատկապես հարուստ է Լճաշենի դամբարաններում գտնված խեցեղենը, որը, բացի նման նախշերից, զարդարված է փայլեցման եղանակով: Լճաշենի անոթների զգալի մասը հարդարված է ավատիկայի պատկերներով: Սևան-ուզերլիկյան տիպի գունազարդ խեցեղենը հայտնի է մի քանի դամբարաններից, սակայն քերրոշ է դրանցից մեկը, ուր գտնվել են մեծ թվով խոհանոցային անոթներ: Այստեղ գունազարդ խեցեղենը ներկայացված է ոչ մեծ սափորներով, կնդումներով, խոր ջրեղաններով, որոնք ունեն վառ կարմիր մակերես և սև ներկով կատարված գունազարդում: Ինչպես Ուզերլիկթեփեում, այստեղ հանդիպում են շեղանկյունիներ, ուղիղ և ալիքաձև գծեր: Վերջիններս բացի Ուզերլիկթեփեից որոշակի զուգահեռներ ունեն Կիրովականի, Նոր Բայազետի, Էլտի և այլ վայրերի խեցեղենի հետ: Այս նյութի, ինչպես նաև այլ հուշարձաններից գտնված սպ

տակ ներկով զարդարված անոթների, հատկապես Հառիճից գտնված-ների քննարկումը հնարավորություն է տալիս այն թվագրել մ.թ.ա. 18-17-րդ դ.դ.: Սա կարող օգնել է կարմիրբերդյան և կիրովականյան խմբերի միջև: Այսպիսով, Հայաստանի և Անդրկովկասի միջին բրոնզեդարյան խեցեղենը, ի տարբերություն վաղ բրոնզեդարյանի, պատրաստված է նոր տեխնոլոգիայով: Հանդես են գալիս գունազարդ սև, փայլեցված և սև, փայլեցված, սպիտակ ներկով խեցանոթներ: Այս անոթները հիմնականում պատրաստված են լավ հունցված կավից և պարունակում են մանր հատիկավոր խառնուրդներ: Դրանց մի մասը պատրաստված է ձեռքով, սակայն գունազարդ և քարակ պատեր ունեցող սև, փայլեցված խեցեղենի մի մասը պատրաստված է պտտվող անիվի վրա: Նաև կարծիքներ, որ անոթներին ստորին մասը ավանդաբար պատրաստվել է ձեռքով, իսկ վերին մասը՝ պտտվող անիվի վրա: Բոլոր սև անոթները նախշազարդվում էին խոնավ վիճակում: Դրանց փայլեցումը կատարվում էր քարե հերմատիզացիա ունեցող ծխեցման եղանակով, որից հետո անոթների մակերեսը ծածկվում էր մարով՝ փայլեցնելու համար: Ըստ երևույթին թրծումից և փայլեցումից հետո նախշերը գծվում էին սպիտակ ներկով և ցածր ջերմաստիճանում ամրացվում: Գունազարդ անոթներն իրենց պատրաստման տեխնիկայով չէին տարբերվում սև փայլեցվածից, սակայն որոշակի տարբերություն կար նախշազարդման տեխնիկայում: Այս անոթները չորացնելուց հետո ծածկվում էին կարմիր կամ վարդագույն անգոբով, և թրծումից, փայլեցումից հետո նրանց մակերեսը վրձինով զարդարվում էր վերը նշված նախշերով, որը նույնպես չորացնելուց հետո ենթարկվում էր թույլ թրծման՝ ներկը ամրացնելու նպատակով: Եթե սև, փայլեցված խեցեղենը պատրաստելիս բրուտները կարող էին օգտվել տարբեր դրոշմներից, ապա գունազարդ խեցեղենի զարդարումը կատարվում էր վրձինով, և պահանջվում էր որոշակի ունակություն և նկարչի պրոֆեսիոնալ հմտություն:

ՍՈՑԻԱԼԱՆԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ: Հայկական քարձրավանդակի ցեղային միությունների սոցիալական կյանքը միջին բրոնզեդարյան ժամանակաշրջանում բնորոշվում է կարուկ փոփոխություններով: Դրան մի կողմից նպաստում է տնտեսության աճը, որը տանում էր առանձին ցեղերի հարստացմանը՝ հանգեցնելով ընդհարումների, մյուս կողմից՝ հարավային և հարավարևմտյան սահմաններում արեղծված հին արևելյան պետությունները: Այսպես մ.թ.ա. 2-րդ հազարամյակի առաջին կեսին կենտրոնական Փոքր Ասիայում առեղծվում է Խեթական պետությունը՝ Խատուշաշ մայրաքաղաքով, ճարավում՝ Միտանիի թագավորությունը, որի ազդեցությունը հասնում է Տիգրիս գետի ակունքները, Վերին Եփրատ:

Հին արևելյան քաղաքակրթությունների մասին հատկապես խեթական գրավոր աղբյուրները տալիս են կցկտուր, բայց հետաքրքիր տվյալներ: Նշվում է, որ Հայկական բարձրավանդակում այդ ժամանակ առաջացել էին խոշոր ցեղային միություններ, և տրվում են դրանց մոտավոր սահմանները: Առաջին տվյալները վերաբերում են մ.թ.ա. 17-16-րդ դ.դ., դրանք քնարանաբար, վկայում են էթնիկ այդ միավորների ավելի վաղ գոյության մասին:

Այսպես, հին խեթական աղբյուրներում հիշատակվում է հզոր և անկախ Ալզի թագավորությունը, որն ունեցել է հարուստ պաշտամունքներ: Ըստ այդ աղբյուրների Ալզին տեղադրված է եղել Տիգրիս վտակների և Արածանիի հովտի շրջանում: Միտանիի թագավորության գոյության ժամանակ այն եղել է նրա հյուսիսային հարևանը և իր գոյությունը պահպանել է մինչև մ.թ.ա. 13-րդ դ.:

Ոչ պակաս հետաքրքիր տեղեկություններ կան Հայաստան երկրի մասին, որը տեղադրված է եղել Եփրատի վերին հոսանքի և ծորոխի ավազաններում; ժամանակակից Երզնկայի և Էրզուրումի շրջաններում: Իր ծաղկման շրջանում նրա հարավային սահմանները հասել են մինչև Տիգրիսի վերին հոսանքները, հարևան է եղել Ալզիի; իսկ հյուսիսում՝ մինչև արևելյան Պոնտական լեռները: Չնայած այն հանգամանքին, որ խեթական աղբյուրները Հայաստանի մասին տեղեկություններ են տալիս մ.թ.ա. 14-րդ դ. ուշ քրոնոգեոգրի շրջանից և կքննարկվեն այդ հատվածում, այնուամենայնիվ, խեթական թագավոր Խատտուսիլիս 3-րդի այսպես կոչված ինքնակենսագրությունում /մ.թ.ա. 1275-1250 թ.թ./ հիշատակվում է, որ մ.թ.ա. 16-15-դդ. խեթական թագավորության հարևան ցեղերը, օգտվելով նրանց թուլացումից, ներխուժել են խեթական տարածքները: Այդ ցեղերի մեջ հիշատակվում են Իսուա երկրի մարդիկ, որոնք, անցնելով Եփրատի աջ ափը, գրավում են Թեգարման: Վերջինս նույնացվում է քիբլիական Թոգարմայի և ավելի ուշ հայկական Թորգոմի տան հետ: Չնայած այս կցկտուր տեղեկություններին, կարելի է ենթադրել, որ Հայաստանում խեթական աղբյուրների վկայությամբ մ.թ.ա. 16-րդ դարից հանդես են գալիս ձևավորված թագավորություններ, որոնց կազմավորումը կատարվել է ավելի վաղ:

Ի տարբերություն հարավային և հարավարևմտյան հատվածներից, Հայկական բարձրավանդակի հյուսիսային շրջանները չեն հիշատակվում հին արևելյան գրավոր աղբյուրներով, սակայն, ըստ երևույթին, այստեղ ևս գոյություն ունեին խոշոր ցեղային միություններ, ուր գերիշխող դիրք էին գրավում նրանց ցեղապետները, որոնց թաղումները գտնվում են Թեղջի, Լճաշենի, Կիրովականի, Քարաշամքի և այլ վայրերի խոշոր դամբանաբլուրներում: Համեմատաբար ավելի փոքր, բայց հարուստ դամբաններում թաղվում էին ներցեղային արիստոկրատիայի ներկայացուցիչները:

Ցեղային ավազակու ամող տնտեսական պահանջը իր հերթին ստեղծում էր հզոր ստեղծագործական լիցքեր և քարենպաստ արհեստների զարգացման համար: Մյուս կողմից խոշոր դամբարանների հանդես գալը, որոնց կառուցումը պահանջում էր աշխատուժի հզոր ներդրում, քաղման բարդ ծեսը և ուղեկցող հարուստ նյութը վկայում են Հայկական բարձրավանդակում ցեղային հասարակության մեջ առաջացած խոր զույգային անհավասարության մասին: Եթե Հայկական բարձրավանդակի հյուսիսային շրջանները հնագիտական տեսակետից համեմատաբար լավ են ուսումնասիրված, ապա հարավային և հարավարևմտյան շրջանները, որոնք հսկայական նշանակություն ունեն հայ ժողովրդի էթնոգենեզի պարզաբանման հարցում, հնագիտական տեսակետից համարյա ուսումնասիրված չեն: Սակայն, ինչպես նշվեց, հին արևելյան աղբյուրները ստույգ վկայում են Հայասայի, Ալզիի, Նաիրիի հանդես գալու մասին: Այդ միությունների հարևանությունը Հին Արևելյան պետությունների հետ, հատկապես խեթական, հանգեցնում էր նրան, որ այստեղ հանդես են գալիս նախադինաստիական դարաշրջանի հասարակական հարաբերություններ: Այս հանգամանքները բերում են հզոր ցեղային արիստոկրատիայի հանդես գալուն, որի ժեռքին նույնպես պետք է կուտակված լիներ հսկայական հարստություն: Չնայած Հայկական բարձրավանդակի ցեղային միությունների հասարակական զարգացման պրոցեսը փոքր-ինչ ետ էր մնում իրենց հարևաններից, այնուամենայնիվ կարելի է ենթադրել, որ նրանցից խիստ չէր տարբերվում:

Հայկական բարձրավանդակում, ինչպես և հարևան երկրներում, հասարակության հիմքը կազմում էին ազատ համայնականները, որոնք զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ և արհեստներով՝ խիստ տարբերվելով ցեղային ավազակուց կախման մեջ ընկած մարդկանցից: Հենց այս ազատ համայնքները /գյուղը կամ ,,քաղաքը,,/, որոնք ունեին տեղական ինքնավարություն և ինչ-որ պարտավորություններ, կազմում էին հիմնական ընակչությունը: Ըստ երևույթին, ցրմերի և զինվորների վերին խավը ներկայացնում էր հասարակության այն վերնախավը, որը ընտրում էր Հայասաեի ,,թագավորին,,: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Հայասայի ,,թագավորին,, հավասար կարող էր համարվել ժողովրդական ժողովը: Այս փաստերը վկայում են, որ Հայկական բարձրավանդակում բոլոր ցեղերը կանգնած էին վաղ դինաստիական ատիճանի վրա, և խոշոր ցեղային միությունների առաջնորդները ընտրվում էին ժողովրդական ժողովի կողմից՝ ստանալով զգալի արտոնություններ և իրավունքներ:

Հանախակի պատերազմները հզոր հարևան պետությունների դեմ նպաստում էին ոչ միայն հարստության ժեռքբերմանը, այլև ստրուկների ժեռքբերման աղբյուր էին: Այս հանգամանքը հանգեցնում էր նրան, որ Հայկական բարձրավանդակի առհասցեղային հասարակության ընթացքում առաջ-

նում էր տնային տարկաբյան ինստիտուտը: Ելնելով խեթական աղբյուրներից, իմանում ենք, որ ոչ բոլոր գերիներն էին դառնում ստրուկներ: Նրանց մի մասին տեղավորում էին ազատ հողերի վրա, և հարկ վերցնում տնգամ ընդգրկում բանակի կազմում: Մյուսները դառնում էին արքունիքի և տաճարի ստրուկներ, մի մասը՝ տնային ծառաներ: Հանդես են գալիս նաև անձնական ստրուկներ, որոնք իրենց տերերի սեփականությունն էին: Իհարկե, չի կարելի խեթական ստրկական ինստիտուտը մեխանիկորեն փոխադրել Հայկական բարձրավանդակի ցեղերի հասարակության վրա: Այնուամենայնիվ խոշոր դամբանաբլուրներում հայտնաբերված ստրուկների թաղումները վկայում են, որ այդ ժամանակ Հայկական բարձրավանդակում եղել է ստրկական հասարակություն, որն, ըստ երևույթին, պետք է նմանվեր հարևան երկրներում տիրողին: Միաժամանակ հանդես են գալիս զինվորների, ցրմերի, բարձրատիճան ծառայողների խավերը: Ցղամարդը հասարակության մեջ զբաղեցնում էր գերիշխող դեր և մասամբ ազատվում տնտեսական գործունեությունից, որը քերում էր ժառանգական իրավունքի խորացման և դասակարգային հարաբերությունների հանդես գալուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ս.Ամիրյան, Հնագիտական նոր հայտնաբերում Երևանի տերիտորիայում, ՊԲՀ, 1969, նո. 3 Գ

Գ.Ե.Արեշյան, Հ.Ե.Սիմոնյան, Գ.Մ.Սարգսյան, Հնագիտական կենտրոնի 1976 թվականի դաշտային հնագիտական աշխատանքները, ԲԵՀ ՀԳ Երևան, 1977, նո. 3, էջ 266-274:

Լ.Ա.Բարսեղյան, նոր նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արվեստի պատմության վերաբերյալ, ՊԲՀ , 1966, նո. 3:

Ի.Մ.Դյակոնով, Հայաստ-Ազգի ցեղային միությունը և խեթական թագավորությունը. Հայ ժողովրդի պատմություն հ. 1-ին, Երևան, 1971:

Ս.Ա.Եսայան, Գ.Հ.Միքայելյան, Բրոնզեդարյան գունազարդ խեցեղենի նորահայտ նմուշները, ՊԲՀ, 1971 նո. 2:

Ա.Տ.Երեմյան, Հայաստ-Ազգերի տեղորոշումը, էթնիկական կազմը և լեզուն, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1-ին, Երևան, 1971:

Է.Վ.Խանզադյան, Գառնի 4-րդ, Երևան, 1967:

Հ.Ա.Մարտիրոսյան, Հայաստանը միջին բրոնզի դար ժամանակաշրջանում. Հայ.ժող. պատմություն հ. 1-ին, 1971:

Ն.Ս.Մկրտչյան, Խանզադյան Է.Վ., Է.Պարսամյան, Սենեմոր, Երևան, 1973:

Հ.Օ.Սնացականյան, Լճաշենի նյութական մշակույթի հիմնական փուլերը, ՊԲՀ 1965, 2

Հ.Ե.Սիմոնյան, Հնագիտության գիտահետազոտական լաբորատորիայի 1986 թ. դաշտային աշխատանքները, Երևանի համալսարան, Երևան, 1987, նո. 2 էջ 21-29.

Ս.Ս.Քալանթարյան, Ժ.Դ.Խաչատրյան, Սևանի ավազանի եզակի հնագիտական հայտնագործության մասին, Լրաբեր, 1969, նո. 4:

Г.Е.Арешян. Малоазийские формы в керамике Армении среднего бронзового века. СА, 1973, № 4.

Г.Е.Арешян. Индоевропейский сюжет в мифологии населения междуречья Куры и Аракса II тыс.до н.э. "Вестник древней истории", 1988, № 4.

Г.Е.Арешян, В.Э.Оганесян, Ф.М.Мурадян, П.С.Аветисян,Л.А. Петросян. Конец среднего бронзового века в междуречье Аракса и Куры. ИФЖ, 1990, № 1.

С.А.Есаян. Оружие и военное дело древней Армении. Ереван, 1966.

С.А.Есаян. Ереван (Археологический очерк),Ереван, 1969.

С.А.Есаян. Скульптура древней Армении. Ереван, 1980.

С.А.Есаян. Древняя культура племен Северо-восточной Армении. Ереван, 1976.

С.А.Есаян, А.Н.Шагинян Археологические находки в Зангезуре (Арм.ССР), СА, 1962, № 3.

К.Х.Кушнарева. Тазакендский могильник. СА, 1960, № 1.

К.Х.Кушнарева. Археологические работы 1954 г. в окрестностях села Ходжалы. МИА, 67, 1967.

К.Х.Кушнарева. К вопросу о социальной интерпретации некоторых погребений Южного Кавказа. КСИА, вып. 134, 1973.

К.Х.Кушнарева. Ходжалинский могильник. ИФЖ, 1967, № 2.

К.Х.Кушнарева. К вопросу о развитии ремесел на Южном Кавказе, в древности. ИФЖ, 1974, № 2.

К.Х.Кушнарева. Раскопки поселения Узерлик-тепе около Агдама, МИА, 67, 1959.

Б.А.Куфтин. Арехеологические раскопки в Триалети. Тбилиси. 1941

А.А.Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван 1964.

С.К.Межлумян. Палеофауна эпох энеолита, бронзы и железа на территории Армении. Ереван, 1972.

А.О.Мнацаканян. О двухцветной керамике Лчашена. Вестник общ. наук АН АрмССР, 1957, № 5.

Б.Б.Пиотровский. Археология Закавказья. Л., 1949.

А.Е.Симонян. Могильник эпохи бронзы Верин Навер. КСИАЕ вып. 176. 1983.

А.Е.Симонян. Кармирбердская культура по материалам периода средней бронзы (опыт выделения) в кн.: Культурный прогресс в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1982.

А.Е.Симонян. Два погребения эпохи средней бронзы могильника Верин Навер, СА, 1984, № 3, с.122-135.

А.Е.Симонян. Новая трактовка социокультурной общности эпохи средней бронзы Армении (по данным погребения Верин Навер). ИФЖ, № 1, 1990, с. 188-208.

Т.С.Хачатрян. Древняя культура Ширака. Ереван, 1975.

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Պարբ. 1. Ուշ բրոնզեդարի մշակույթը

Ուշ բրոնզի դարաշրջանը, Հայկական լեռնաշխարհի նյութական մշակույթի զարգացման առումով, բացառիկ տեղ է զբաղեցնում: Միջին բրոնզի դարաշրջանում նրա տարածքը բնակեցնող ցեղերի տնտեսական և հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեցին տնտեսության, մասնավորապես, արհեստների որակապես նոր, թռիչքածև վերելքի համար:

Քաղաքական կյանքում առաջին անգամ նկատվում են բազմաքանակ խուրրալեզու և հնվրոպալեզու /այդ թվում նաև հայկական/ էթնոսների կենտրոնացում ընդդեմ ասորեստանյան նվաճողների /մանրամասն տես Վանի թագավորությանը նվիրված բաժնում/: Տնտեսության հիմնական ճյուղերը՝ երկրագործությունն ու անասնապահությունը, զարգացման շատ ավելի բարձր աստիճանի են հասնում: Դեռևս վաղերկրագործության ժամանակներից տնտեսության հիմնական ճյուղ հանդիսացող երկրագործությունը, անկում ապրելով միջին բրոնզեդարում, նորից սկսում է զարգանալ շատ բարձր տեմպերով, ընդ որում ընդգրկելով ոչ միայն դաշտավայրերը, այլև նախալեռնային և լեռնային շրջանները: Անապառահատումների հաշվին մեծ չափով ընդլայնվում էին ցանքատարածությունները, իսկ դաշտավայրերը՝ ոռոգման ցանցի ընդարձակման՝ ջրանցքների ու ջրամբարների կառուցման շնորհիվ: Բացի հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունների ընդլայնումից, զարգանում էին նաև այգեգործությունը, խաղողագործությունը, գինեգործությունը և այլն:

Մեծ զարգացման է հասնում անասնապահությունը, հասնելով իր քանակական զարգացման ծայրակետին, քանի որ անասնագլխի հետագա աճը սահմանափակված էր ցանքատարածությունների և երկրագործական այլ հողամասերի մեծացմամբ և արոտավայրերի պոտենցիալով: Վերջնականապես հաստատվում է հետագա անասնապահությունը /շատ մոտ այն ձևին, որ տիրապետող է նաև մեր օրերում/: Բարձր զարգացման են հասնում նաև արհեստները, կապված բրոնզի արտադրության զարգացման հետ: Ստեղծվում են հսկայական քանակությամբ բրոնզե իրեր, որոնց արտադրության գաղտնիքները սկզբնավորվում են դեռևս միջին բրոնզի դարաշրջանից: Մետաղամշակման կատարելագործմանը նպաստում էր միջցեղային փոխանակության լայն զարգացումը:

Գյուղի մշակման բնագավառում տեղ գտած որակական փոփոխությունների լավագույն վկայությունն է բազմատեսակ համաձուլվածքների տարածումը: Ընդ որում պետք է ենթադրել, որ արտադրական կենտրոնների

վարպետները խնամքով թաքցնում էին իրենց արհեստների գաղտնիքները: Լայն տարածում է ստանում մոմե կաղապարներով ձուլումը, դրվագումը, փորագրումը, ավելի սակավ՝ փայտով, շաղախով, տարբեր գույնի և կինաթանկարժեք քարերով ագուցելը: և այլն: Ընդունված էր նաև տարբեր իրեր արծաթյա և ոսկյա թիթեղներով պատելը: Ուշ բրոնզի դարաշրջանի կարևորագույն նվաճումներից է երկաթի օգտագործման առաջին փորձը, որը մի քանի հարյուրամյակ անց հանգեցրեց այս էժան և ամուր մետաղի լայնածավալ օգտագործմանը:

Մետաղաձուլության և մետաղամշակման նման վերելքը նպաստում էր նաև մյուս արհեստների՝ կավագործության, փայտամշակության, կաշեգործության, ջուլհակության և այլնի, հատկապես շինարվեստի զարգացմանը: Սակայն արհեստագործության այս բնագավառները, բացի ըստ երևույթին, խեցեգործությունից, որը դուրգի լայն կիրառման շնորհիվ կարող էր մասնակիորեն կրել շուկայական բնույթ, ունեին փակ, ներհամայնքային բնույթ: Չնայած դրան, նյութական արտադրության կարուկ վերելքը և մասնագիտացվածությունը մետագործության բնագավառում, որի շնորհիվ արտադրվում էին արվեստի եզակի նմուշներ, բացի երկրի ներսում տնտեսական պահանջների բավարարումից, հանգեցրին միջշրջանային ինտենսիվ փոխանակության: Այս փոփոխությունները հատկապես էական էին խեթախուրիտական մշակութային շրջանի համար: Արտաքին և ներքին փոխանակման էական մասը կազմում էր անասունների փոխանակությունը: Անասունները շատ հաճախ դառնում էին թալանի օբյեկտ, որի հետևանքով ավար դարձած անասնահոտերը փոխանակվում էին շքեղ զենքի, արդուզարդի իրերի, ձիասարքի և այլնի հետ, որը, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, հաստատվում է հուշարձաններից մեծ քանակությամբ ներմուծված իրերի հայտնաբերումով: Սակայն չպետք է մտածել, թե Հայկական լեռնաշխարհի ցեղերը միայն ներմուծում կամ նմանվում էին հարևան երկրների արտադրանքի ու արվեստը: Գտնվելով Արևելքի և Արևմուտքի միջակայքում, Հայաստանը դեռևս հնագույն ժամանակներից է կապող օղակ հանդիսացել Միջագետքի, Փոքր Ասիայի և Կովկասի միջև: Այստեղից են դեպի հյուսիս և արևելք գնացել ինչպես հին արևելյան պետությունների, այնպես էլ տեղական արտադրանքի նմուշները, իսկ Հարավային և Հյուսիսային Կովկասի արտադրանքը Հայկական լեռնաշխարհով շարժվել է դեպի Փոքր Ասիա, Հյուսիսային Միջագետք, Արևմտյան Իրան, նպաստելով ոչ միայն նյութական արժեքների վերաբաշխմանը, այլև հոգևոր մշակույթի տարածմանը:

Հայկական լեռնաշխարհի ուշ բրոնզեդարի հուշարձանները ժամանակագրորեն վերաբերում են մ.թ.ա. 15-12-րդ դ.դ.-ին և բաժանվում են երկու փուլերի՝ վաղ փուլ՝ մ.թ.ա. 15-13-րդ դ.դ. և ուշ փուլ՝ մ.թ.ա.

12-րդ դ.: Երկրորդ փուլի իրերը գոյատևել են նաև ավելի ուշ շրջանում ընդհուպ մինչև մ.թ.ա. 10-8-րդ դարերը: Բայց այս ժամանակահատվածը, կապված երկաթե իրերի տարածման հետ, վերաբերում է վաղ երկաթի և երկաթի լայն տարածման դարաշրջաններին:

Ուշ բրոնզեդարի առաջին փուլի հուշարձանները

Լճաշեն: Այդ դարաշրջանի Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի հոյակապ հուշարձաններից են լայն ճանաչում գտած Լճաշենի դամբարանադաշտի դամբանաբլուրները և կրոմլեխները, որոնք 1955-1971 թ.թ. պեղվել են սկզբում Հայաստանի պատմության պետական թանգարանի, իսկ այնուհետև ՀԽՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբերի կողմից /ղեկ. Հ.Հ.Մնացականյան/: Լճաշենի դամբարանադաշտի կառույցների հիմնական մասը ներկայացված է կրոմլեխով շրջազծված, ոչ բարձր քարահողային թմբի տակ գտնվող ,,ցարարկղային,, դամբանախցերով, որոնք ծածկված են խոշոր սալաքարերով:

Այդ դամբարաններում, որպես կանոն, հանգուցյալներին պառկեցրել են չորսոտանի փայտե շրջանակավոր հիմնակմախքով, կաշեփակերով զարդված մահճի վրա: Թաղման գույքը համեմատաբար աղքատ է, բաղկացած է մի քանի, շատ քիչ զենքից՝ վանակատե նետասլաքներից կամ առանձին դեպքերում բրոնզե դաշույններից և նիզակներից երբեմն խոշոր ու մանր եղջերավոր անասունների ոսկորներից:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Լճաշենում պեղված ցեղային առաջնորդների խոշոր դամբանաբլուրները; Վերջիններս դամբանթմբերի սկզբնական բարձրությունը հասնում է 3-5 մ-ի:Պեղումների պահին դամբանաբլուրների թմբից պահպանվել էր 1-1,5 մ բարձրություն ունեցող քարե ,,զրահը,,: Նրա տրամագիծը հասնում էր 18-20 մ-ի: Դամբանասրահները 5-8 մ երկարության նեղ միջանցքի տեսք ունեին; որոնց երեք կողմի պատերը շարված էին 2-5 տ քաշ ունեցող հսկայական ժայռաբեկորներով, իսկ չորրորդ, դրամոսի կողմից մուտքը փակող շարված էր համեմատաբար փոքր, մի քանի հարյուր կգ քաշ ունեցող քարերով: Այս սրահների երկաս ծածկի քաղաղրված կառուցվածքը բաղկացած էր միաշար, աստիճանաձև կեղծ թաղից՝ կառուցված հսկայական սալաքարերով /երկ. 3 մ, լայն. 1-5-2 մ, հաստությունը՝ առաջին դեպքում մինչև 1,5 մ/: որոնց քաշը հասնում է 10-15 տոննայի: Սալաքարային այդ կառուցվածքը հենված էր հզոր գերանածածկի վրա: Դամբանասրահի փայտյա հիմնակմախքը ըստ երևույթին պատվել է գույնզգույն կտորներով, որոնք փայտին ամրացվել են բրոնզե մեխերով: Այստեղ կատարվել են ինչպես անհատական,



Նկ. 51. Եւշ բրոնզի դարաբերջանի արձանիկներ Լճաշենից:

այնպես էլ խմբակային թաղումներ /մինչև 11 մարդ/: Դամբանասրահների հատակներին մոխիր է սփռվել, իսկ ամյունների մի մասը պատվել է կարմիր օխրայով, որը նկատվում է նաև Լճաշենի շարքային թաղումներում, ինչպես նաև Գեղարոտի, Մուխանի, Ցամաքաբերդի և այլ դամբարաններում: Օխրայի հետքերը պահպանվել են նաև հազուստի կտորտանքի վրա: Այս դամբանաքլուրների ցեղային առաջնորդներ հանդիսացող տերերը թաղվել են թաղման համար շինված սայլերի վրա ճիշտ այնպես, ինչպես միջագետքյան արքաները, շարունակելով այսպիսով միջին բրոնզի դարաշրջանի թաղման ծեսը, որը հաստատագրված է ինչպես Լճաշենում, այնպես էլ Թոեղջյան դամբանաքլուրներում: Նրանց թաղում էին շքեղ կահավորված դամբանասրահներում, ուր դրվում էին հսկայական քանակությամբ ընծաներ՝ խեցանոթներ, զենք, աշխատանքի գործիքներ, պերճանքի իրեր, այդ թվում մեծ քանակությամբ ոսկյա զարդեր, մսից կերակուր, ինչպես նաև զոհաբերված ծառաներ, այսինքն այն ամենը, ինչ անհրաժեշտ էր անդրշիրիմյան կյանքի համար:

Լճաշենի դամբանաքլուրների թաղման համար կառուցված սայլերը տարբեր ձևեր ունեն: Նրանց մի մասը ներկայացված է քառանիվ սայլերով: Անիվները սկավառակաձև են՝ պատրաստված տախտակի երեք-չորս կտորներից, կենտրոնում՝ տակառաձև ելուստ-անվակունդով: Տախտակների կտորները իրար են միացված փայտյա զամերով: Անիվները հագեցված են անշարժ քառակող առնուն, որի ծայրերը կլորացված են՝ անիվների ազատ պտտվելու համար: Առնուն պինդ ամրացված թափքի ոչ մեծ, ուղղանկյուն շրջանակը 0,8 2 մ չափերի է հիմնականում ունի կամարաձև ծածկ, որն արված է 11 ցանցկեն պայտաձև ձողերով: Ծածկի յուրաքանչյուր ձող ունի մինչև 40 երկայնական անցքեր, որոնց միջով անցկացված էին ավելի քարակ հորիզոնական ձողիկներ: Թափքի շրջանակին փայտյա զամերի միջոցով ամրացված էր կիսակլոր ծայրերով լուծը: Բացառիկ սայլերից մեկի թափքը 11 դամբանաքլուր/ , ի տարբերություն մեացածների, ոչ թե կամարաձև է, այլ ունի ուղիղ քարձրացող կողեր՝ բաղկացած 1,5 մ քարձրության և 1,56 մ երկարության ուղղահայաց ամրացված երկու շրջանակներից, որոնց միջակայքը պատված է բազմաթիվ ձողերի շարքերով: Թափքի վերևի, դիմացի և հետին պատերը, սայլի այն մասերը զարդարված են եղնիկների պատկերներով, համակենտրոն շրջանների, պարույրների և այլ երկրաչափական փորագրություններով:

Նրանց հետ մեկտեղ գտնվել են նաև երկանիվ կառքեր: Նրանց անիվները նույնպես սկավառակաձև են: Այս կառքերի թափքը կազմված է 3,5 մ երկարությամբ աղեղնաձև շրջանակից, որի վերջով անցնում է կլոր սռնին: Շրջանակի վերջում տեղադրված թափքը ունի 1,5×1 մ չափեր, իսկ

առաջնային մասը, որին ամրացված է լուծը, ծառայում է որպես առեղ: Թափքը կողեր չունի:

Բացի կառքերից, Լճաշենի դամբանաբլուրներից գտնվել են թեթև մարտակառքեր: Արանցից մեկն ունի ոչ մեծ անիվներ /տրամագիծը՝ 98 սմ/: քաղկացած կլոր, ձգված անվակունդից, որի կենտրոնական մասին ամրացված են 28 անվաձողեր, որոնք արտաքին ծայրերով ամրանում են 4-5 սմ հաստության փայտյա անվագոտուն: Անիվները ազատ պտտվում են երկու մետրանոց, ծայրերում կլոր սոնիի շուրջը, որի վրա ամրացված է թեթև թափքը՝ 1,1 0,51 մ չափերի: Հիմքը արված է կաշեգոտով և երեք կողմից ունի ոչ քարձր պատեր: Դիմային մասը քաց է, ուր կարող էին նստել 1-2 մարդ: Առեղը ունի 3,5 մ երկարություն, վրա հագցված է, ինչպես վերը նկարագրվածներում, լուծ: Երկրորդ մարտակառքը նման է նկարագրվածին, միայն անիվները մի փոքր մեծ են:

Բացի կառքերից և մարտակառքերից, Լճաշենի դամբարաններում գտնվել են մարտակառքերի քրոնզե ձուլածո մոդելներ, որոնք վկայում են, որ վերջիններս լայնորեն օգտագործվել են Լճաշենի զորախմբերի կողմից: Այս մոդելները տեղադրված են զանգվածեղ սոնիով, ոչ մեծ, ցանցկեն; ուղղանկյուն հարթակների կամ խարսխաձև հենակների վրա, որոնք զարդարված են թռչնի գլխով: Մարտակառքերը երեք կողմից պատված են կտրվածքներ ունեցող կողերով, իսկ հետևի կողմը քաց է: Թափքերի վրա կանգնած են երկու ռազմիկներ՝ կողքերից կախված դաշույններով և գլխներին քարձր, կատարավոր սաղավարտներ: Անիվները զանգվածեղ են, 6-8 անվաձողերով: Թափքը ուղիղ և կորացող առեղներով միանում է լուծին, որին լծված են երկու քառատրոփ արշավող ձիեր: Լուծի վրա կան թռչունների քանդակներ: Մարտակառքի առջևում տեղադրված են վազող եղջերուների քանդակներ:

Հնագույն քանդակագործներին հաջողվել է, անկասկած, հին արևելյան զարդաքանդակներից լավ հայտնի որսի տեսարան: Որպես օրինակ կարելի է հիշել Մալթիայի քարձրաքանդակներից մեկը, որի վրա շատ ռեալիստորեն պատկերված է վազող եղնիկների հետապնդում մարտակառքերով: Այս պատկերը շատ մեծ նմանություն ունի Լճաշենի քննարկվող մոդելներին: Այս մոդելների ուսումնասիրության հիմքն վրա կարելի է պատկերացնել կազմել հնագույն կրոնական հավատալիքների մասին, որի համաձայն արևը երկրագնդի քուրը շուրջերկյա ծանապարհորդություն է է կատարում մարտակառքով, որին լծված են հրեղեն ձիեր և ցուլեր, կամ երկնային նավակով: Ասվածի լավագույն հաստատումն են Անդրկովկասյան քրոնզե գոտիների վրա պատկերված քազմաքանակ սայլերը և մարտակառքերը, արդակերպ էակների պատկերները, որոնք ուղեկցվում են արևի երկրաքա-

[illegible] [illegible]: Ինչպես արդեն ասվեց, Լճաշենի մարտակոցների արդյունքը զարդարված են թռչունների քանդակներով, իսկ խարխաշ հենակների ծայրերը՝ թռչնի գլուխներով, որոնք խորհրդանշում են երկինքարևը: Ձիերը, ըստ երևույթին, նույնպես համարվել են երկնային արարածներ: Այս տեսանկյունից հետաքրքիր է Զանգեզուրում գտնված քրոնզե սնամեջ ուղղանկյուն հենակը՝ զարդարված սեռական կարվածքներով: Հենակի կենտրոնից բարձրանում է ֆալլաձև ող, իսկ չորս անկյուններից են ձիերի գլուխները կորացող վզերի վրա: Ձիերի վզերը զարդարված են սեռական կարվածքներով, առանձնաձև գծերով, որոնք քաշ են հիշեցնում: Բոլոր ձիերի գլուխների վրա հատակ պատկերված են ականջները և աչքերը:

Լճաշենի կրոմլեխներում և դամբանաբլուրներում գտնված խեցեղենը ներկայացված է բազմապիսի կավանոթներով, որոնք ծագումնաբանական առումով պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբերի: Առաջին խմբին են պատկանում այն կավանոթները, որոնք պարունակում են նախորդ դարաշրջանին՝ միջին բրոնզին բնորոշ գծեր, մասնավորապես երկնագույն ազուցվածքով զարդարված խեցանոթները: Սրանք բնորոշ փայլով ծիամաններ են, բարձր, նեղացող վզով և ցածրադիր երկկոն իրանով և ուռուցիկ իրանով նեղվիզ մեծաքանակ սափորներ, որոնք զարդարված են ազուցված պիտակ և կարմիր ներկերով: Երկրորդ խումբն են կազմում մ.թ.ա. 14-13-րդ դ.դ. թվագրվող ուշ բրոնզեդարի վաղ փուլին վերաբերող խեցանոթները: Սրանք ներկայացված են տարբեր ձևերի թնջուկներով, անկանթ, լայնաբերան, սափորներով, գավերով և բրեղաններով, որոնք զարդարված են փայլանախշով արված հորիզոնական և ուղղահայաց գծերով, եռանկյունիներով, փայլանախշով արված հորիզոնական և զիգզագ գծերով, ռելիեֆ զոտիներով: Լճաշենի այս խմբի կավանոթներին բնորոշ են ուռուցիկ իրաններով անոթները, որոնց հատակին անցք կա: Այստեղ ոչ մեծ քանակությամբ ներկայացված են ընկույզի կիսակերևի տեսքով անոթներ: Երրորդ խումբը ներկայացված է բնորոշ ծիսական անոթներով: Այստեղ հանդիպում են խոշոր, սև փայլեցրած, իրանի պատերին անցքերով ծիամաններ: Մյուս ծիամանները երկփող անոթներ են, որոնք հայտնի են Լոռի-Բերդի, Կարմիր-բլուրի նախաուրարտական բնակատեղիից, Երևանից, Բեշտաշենից, Սամքավրոյից և Հայաստանի ու Անդրկովկասի այլ հուշարձաններից: Այս ծիամանների պատերին արված են եռանկյունաձև կարվածքներ: Իրանի պատերը զարդարված են եռանկյունիներով և՝ օժտված ռելիեֆային պատկերներով:

Բացի խեցեղեն ապաստից, Լճաշենի դամբարաններից գտնվել են մեծ քանակությամբ մեծ ու փոքր փայտյա բրեղաններ, գդալներ, շերեփներ, սէուտեղներ: Գտնվել են նաև եռոտանի սեղանի մնացորդներ: Բավական



Նկ. 52. Ուշ բրոնզի դարաշրջանի մարտակառքեր՝ նկ.1. Լճաշենից, նկ.2 Լոռի-բլուրից:

մեծ ու հետաքրքիր խումբ են կազմում մետաղյա իրերը՝ քաղկացած զենքի, ձիասարքի, աշխատանքի գործիքների, սպասքի և պերճանքի քազմապիսի նմուշներից: Առանձնահատուկ խումբ են կազմում հնագույն վարպետների արվեստի անկրկնելի ստեղծագործություններ հանդիսացող մետաղյա քանդակները: Հնաշենից պեղված զենքը ներկայացված խոշոր խողովակակոթառ, նեղ փետրաձև կամ տերևաձև շեղբերով նիզակներով, որոնք հաճախ ունեն միջանկյալ ող: Հատկապես մեծ խումբ են կազմում քրոնզե սակրերը, որոնք քուն մարտական նշանակությունից քացի, լայնորեն կիրառվել են որպես աշխատանքի գործիքներ: Այդ սակրերն ունեն զանգվածեղ, կիսալուսնաձև շեղբեր՝ ձվաձև անցքով, կենտրոնից քարձրացող գլխիկով, կոթառ, որի քլթանցքերը զարդարված են ռելիեֆային ելուստներով, կենտրոնում՝ սրացող ելուստով: Հարձակողական զենքի մեծ հավաքածու են կազմում նետասլաքները, որոնք, ի տարքերություն զենքի մյուս տեսակների, պատրաստված են կայծքարից և վանակատից: Սրանք քուլորը ձգված, նշաձև տեսք ունեն, հիմքում, փայտք ամրացնելու համար՝ ուղիղ կամ կիսակլոր փորվածք: Քուլորը խնամքով մշակված են, եզրերը՝ հիանալի ռետուշված, որոնք ներկայացված են երկու տարքերակով: Առաջինները քրոնզե տանձաև զուրգեր են, որոնք ունեն 8 թերթիկաձև ելուստներ: Երկրորդ տարքերակի նմուշները 4 թերթիկավոր ելուստներով գնդաձև զուրգեր են, որոնց թերթիկների վրա արված են եռանկյունաձև զարդեր, որը յուրաքանչյուրին տալիս է քարձր ծաղկի տեսք:

Առանձնապես հարուստ զենքի հավաքածու են կազմում դաշույնները, որոնց մի մասը գտնվել է շքեղ զարդարված քրոնզե պատյաններով: Սրանք քրոնզե միաձույլ դաշույններ են, երկար, եռանկյունաձև, քազմաթիվ երկայնական ակոսներով, շեղբով: Շեղբի հիմքը ավարտվում է զանգվածեղ խաչարդով և կիսագնդաձև գլխիկ ունեցող խողովակաձև կոթառով: Այս դաշույնների պատյանները զարդարված են գեղազարդ եռանկյունիներով, զարդաշրջանակներով և օձերի ռելիեֆային պատկերներով: Հանդիպում են նաև ավելի նեղ շեղբով խաչարդով նույնատիպ դաշույններ: Սրանց բոնակների գլխիկները զարդարված են խաչաձև հատկերներով: Խաչերի եզրերի կտրվածքները լրացված են քրոնզե թիթեղներով: Դաշույնների հետ գտնվել է նաև սրերի ոչ մեծ, քայց շատ քնորոշ խումբ, որոնք ավելի վաղ շրջանի օրինակներ են: Առաջին խումքն են կազմում եղանաձև դաստակով և երկար, կտրվածքում ձվաձև շեղբով սրեր: Դաստակի վրա կտրվածքներ են արված՝ քազմազույն ազուցվածքով զարդարելու համար: Դաստակի ստորին մասը եղանի ձև ունի և երկու կողմից կիպ գրկում է շեղբի ուսերը: Ձևով շատ մոտ, եղանաձև դաստակով սրեր հայտնի են

Պարսկական Թալիշից և Լենքորանից: Այս տիպի սրերի հետ հանդիպում են նաև շրջանակավոր բռնակով օրինակներ: Այս սրերն ունեն նեղ, երկար շեղբ և շրջանակավոր դաստակ, որը ավարտվում է կտրվածքներով արված խաչով զարդարված կիսակլոր գլխիկով:

Հարուստ հավաքածու են կազմում բրոնզե սանձերը, որոնք ըստ արտաքին հարդարանքի բաժանվում են մի քանի ձևերի: Սրանք բոլորն ունեն երկմաս լկամներ: Կան սանձեր, որոնց լկամների ծայրերը հիշեցնում են Ծաղավոր անիվներ:

Բացի սանձերից գտնվել են նաև մեծ քանակությամբ բրոնզե խոշոր ճարմանդներ, որոնք, ըստ երևույթին, զարդարել են ձիու ծածկոցները կամ կաշեփոկի լծասարքը:

Լճաշենի դամբարանադաշտի աշխատանքի գործիքները բացի վերը նշված սակրերից, ներկայացված են նաև այլ նմուշներով: Սրանց թվին են պատկանում այսպես կոչված տաշուրագները, որոնք լայնորեն կիրառվել են կաշեգործության և փայտամշակության բնագավառում: Սրանք բավականին արխայիկ տեսք ունեն՝ դեռևս ամբողջովին չձևավորված իրանով և բռնակով, ու աղերսվում են Կիրովականի միջին բրոնզեդարյան կացնին: Ձևով արխայիկ իրերի թվին են պատկանում խողովակակոթտ դուրը, որն ունի փորակավոր սայր և հարում է Կիրովականի զտածոյին:

Կաշվի մշակման համար օգտագործվել են ոսկրե կոկիչներ: Գտնված կոկիչները մի մասը /երկ. 8-19սմ/ հարթ, մի փոքր հաստացող դանակաձև գործիքներ են, որոնք արդեն մշակված կաշվի արտաքինին փայլ են տվել, վերացնելով անհարթությունները: Մյուս մասը ձևավոր են, մի քանիսի վրա 3-5 ծակերով կան՝ կաշվի վրա հավասարաչափ անցքեր անելու համար: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում ոսկրե գործիքների ատամնավոր եզուստները և ցանցավոր փորագրությունները, որոնք ծառայել են կաշվի վրա դաջվածք անելու համար: Գտնվել են նաև մեծ քանակությամբ սրված ծայրերով խողովակաձև ոսկորներ, որոնք, ըստ երևույթին, օգտագործվել են ջուլհակագործության մեջ:

Ինչպես արդեն նշվել է, Լճաշենում գտնվել է մետաղյա սպասք: Հատկապես տարբեր ձևերով են ներկայացված բրոնզե կաթսաները: Սրանցից երկուսի իրանը և հատակը ուռուցիկ են, իսկ շուրթերը մի փոքր դուրս ծկված: Կողերին զամերով ամրացված կիսակլոր կանթերը բարձրանում են շուրթերից վեր: Գտնվել են նմանատիպ կաթսաներ, որոնց բռնակները դուրգնված են ուսերին և ծկվելով իջնում են դեպի վերին մասը: Այս կաթսաների հետ գտնվել են միսը խարույկից հանելու համար օգտագործվող գործիքներ: Սրանք բրոնզե տարբեր ձևերի կեռիկներ են, որոնց մի մասը սնամեջ կոթառներով են, որոնք վերջամասում վերածվում են

ճկված, կիսակլոր ծողի: Մյուսները մի փոքր այլտեսք ունեն, սրանք երկար ծողեր են / երկ. 63-65 սմ/., որոնց երկու ծայրերը կեռացած են հակադիր կողմերի վրա: Ելնելով այս կեռիկների երկարությունից, կարելի է ենթադրել, որ սրանցով ոչ միայն կաթսաներից է միս հանվել, այլ օգտագործվել է նաև որպես կրակխառնիչներ օջախի կամ խարույկի ածուխը խառնելու, նրանից միս կամ այլ մթերք դուրս քերելու համար: Բրոնզե սպաթի թվին պետք է դասել նաև խոշոր, հարուստ զարդարված շերեփը: Այն ունի կիսագնդաձև իրան և ուղիղ, հաստացող շուրթ: Սնամեջ բռնակը զարդարված է սեպաձև կտրվածքներով և ավարտվում է ստորին մասում զոդված չորս անվամաղով, անիվով և նրա վրա նստած խիստ ծ ոճավորված թռչնի քանդակով:

Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում Լճաշենի հարուստ դամբարաններից գտնված պերճանքի իրերը: Դրանք ոսկյա կոճակներ, գնդաձև, սեպաձև կտրվածքներով ուլունքներ են՝ ազուցված կավով կամ փայտով: Գտնվել են նաև նշաձև քարե ներդիրներով ոսկյա կոճակներ, պարուրաձև կախիկներ: Բացի ոսկյա իրերից, գտնվել են տ հսկայական քանակությամբ գնդաձև, գլանաձև, վեցանիստ սարդիոնե և ագաթե հրաշալի մշակված և հղկած ուլունքներ: Այս զարդերը, հատկապես ուլունքները ունեն մաշվածքի հետքեր, որը վկայում է, որ սրանք մանյակի մասեր են և տասնամյակներով անցել են ձեռքից-ձեռք: Այս զարդերի մի մասը իր զուգահեռներն ունի շումերական, արևելամիջերկրական և փոքրասիական ոսկերչության նմուշներում և վկայում է Հայկական լեռնաշխարհի ցեղերի և հարևան ու առավել հեռավոր երկրների միջև ավանդական մշակութային կապերի մասին: Գտնվել են նաև կտրվածքներով զարդարված գնդաձև և ձվաձև մեծ քանակությամբ բրոնզե գանգակներ՝ գնդիկաձև լեզվակներով, որոնք շարժումից հաճելի զնգում են, վախեցնելով, ըստ հնագույն պատկերացումների, չար ոգիներին:

Լճաշենի բրոնզեձուլական արտադրանքում ուրույն տեղ են գրավում քանդակները, որոնք Հայաստանի և Անդրկովկասի ուշ սրոնզե դարաշրջանի քուլոր հուշարձանների մեջ առանձնահատուկ և բացառիկ հավաքածու են կազմում: Գտնված քանդակների թվում իրենց արտահայտչականությամբ առանձնանում են ցլերի քանդակները: Սրանք խոշոր, ծավալային քանդակներ են, որոնք տեղադրված են ցանցկեն խարիսխաձև հենակի վրա: Մեկ քանդակի հենակը զարդարված է երկու այծերի քանդակներով: Ցածրադիր, բայց գանգվածեղ ցուլի քանդակը պատկերված է շատ ռեալիստորեն: Սա ունի մեծ եղջյուրներով շատ փոքր գլուխ, հզոր վիզ, կարճ ոտքեր և պոչ: Ընդհանուր առմամբ քանդակի դետալները մասնատված չեն. դրանք սահուն և աննկատ միաձուլված են: Երկրորդ քանդակը մի փոքր այլ տեսանկյունով մեկնաբանում է բնօրինակը: Չնայած ավելի փոքր չափերին,

այն ավելի խոշոր է թվում: Ոտքերն ավելի երկար են, մեծ կոտոշներով գլուխը ավելի մեծ է: Խարսխաձև հենակի ծայրերը զարդարված են թռչնի գլուխներով:

Լճաշենյան այս նմուշները հիշեցնում են Ալաջա-Հույուկի՝ արևը խորհրդանշող համակենտրոն շրջանակներով զարդարված ցուլերի ավելի վաղ ժամանակաշրջանի քանդակները:

Ուշ բրոնզի դարաշրջանում ցուլի պաշտամունքը մեծ տարածում է ունեցել: Բոլոր նյութերի համակարգված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եթե վաղ բրոնզի դարաշրջանում այն հանդես է գալիս հիմնականում արտադրող և հողագործ նշանակությամբ, ապա ուշ բրոնզեդարում ցլի պաշտամունքը նշանակալիորեն ձևավոխվում է: Որպես կանոն այն կապվում է երկնքի, պտղաբերության պաշտամունքի և երկնային պատկերացումների հետ: Ցլի կապը ջրի, հետևաբար պտղաբերության պաշտամունքի հետ ցույց են տալիս ,,վիշապաքարերի,, վրա պատկերված ցլերը, որոնց բերանից ջուր է բխում: Ջրի, որպես հզորության և կյանքի խորհրդանիշի մասին, խոսվում է ,,Սասնա ծռեր ,, էպոսում, որը Ն.Վ. Տրեվերը հավեմատում է Անթեյի մասին հունական առասպելի հետ: Եթե ջրով հարուստ, բայց ցանքատարածություններով աղքատ Հելլադայում Անթեյը իր հզորությունը ստանում էր հողից, ապա Հայաստանի պայմաններում, ուր բարեկեցությունը ամբողջովին կախված էր ջրից, Սանասարի ուժի աղբյուրը ջուրն է:

Ոչ պակաս բարձր արտահայտչականությամբ և վարպետ կատարմամբ աչքի են ընկնում եղջերուների քանդակները: Օրինակներից մեկը ծուլված է բրոնզից: Այն տեղադրված է խարսխաձև հենակի վրա և ազատ պտտվում է իր առանցքի շուրջը: Եղջերուն պատկերված է գլուխը բարձրացրած, հանգիստ կանգնած դիրքում: Գլուխը պսակված է հարուստ ճյուղավորված եղջյուրներով և հստակ արտահայտված մաթրամասներով: Քիչ բացված բերանից դուրս է գալիս օղակաձև ելուստ: Լճաշենի երկրորդ նմուշը ծուլված է խարամից: և նույնպես տեղադրված է խարսխաձև հենակի վրա: Սրա իրանը այնքան էլ մեծ չէ, առջևի ոտքերը մի թեթև ծալված են, գլուխը՝ հարտ բարձրացված, ճյուղավոր հզոր եղջյուրները հետ են գցված: Ի տարբերություն առաջինի, այս քանդակը ավելի ոճավոր է և հրաշալի դիտվում է հեռու տարածությունից:

Բացի նշվածներից, Լճաշենում գտնվել են թռչունների և քարայծերի մեծ քանակությամբ քանդակներ: Վերջիններս նույնպես տեղադրված են խարսխաձև հենակների վրա, որոնց մի մասը զարդարված է զորտերի ոչ մեծ քանդակներով: Անհրաժեշտ է նշել, որ գտնվել է զորտի փոքրիկ ոսկյա քանդակ: Հետաքրքիր խումբ են կազմում առյուծների քանդակները՝



Աղ. 53. Ուշ բրոնզի դարաշրջանի զտածոներ Լոռի-քերդից։

ամրացված ցանցկեն գլխիկներին, որոնք զարդարվում են կանգուրը կամ կոքերի որևէ մաս: Գիշատիչներն ունեն երկար իրան, քիչ ձգված ոտքեր և երկար, կախված պոչ, որի ծայրը վերածվում է կլորացող հանգույցի: Գլխիկների դիմային մասին զոդված են աչյուծներին ուղղված ուռուցիկ ոչքերով, քերանները բաց նստած գորտերի պատկերներ: Գորտերի, թռչունների ու աչյուծների նման համադրությունը խորհրդանշում է երկինքը, արևը և ջուրը, ընդգծում է արևը և ջուրը խորհրդանշող քարդ կերպարի համադրությունը, առանց որի կյանքը երկրի վրա անհնար է:

Արթիկի դամբանադաշտը: Բացվել է 1959 թ. տուֆի 8 քարհանքի շահագործման ժամանակ, ընկած է Արթիկից 4 կմ արևելք, ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա: Այդ թվականից սկսած այստեղ փարքերաբար պեղումներ է կատարել Հայաստանի պատմության պետական թանգարանի, այնու հետև Երևանի պետական համալսարանի հնագիտական արշավախումբը՝ Ս.Ա.Խաչատրյանի գլխավորությամբ: Աշխատանքները շարունակվել են ընդհուպ մինչև 1970 թ, որի ընթացքում բացվել է 640 դամբարան: Դամբանախցերը կատակոմբային տիպիՀեն, որոնք կառուցվել են մինչև 1,8 մ խորություն ունեցող քառակուսի /երբեմն կլոր/ ուղղահայաց հորանի տեսքով, որի ներքևի մասում, տուֆի շերտի մեջ փորվել է դամբանախուցը: Խցերի մուտքը փակվում էր 1,2-1,7 մ երկարություն ունեցող կարմիր կամ սև տուֆե ,,խցաններով,, , որոնք բերվել են այլ վայրերից: Որոշ հորան-մուտքեր փակվել են մանր քարերի շարվածքով: Դամբանախցերի հատակագիծը ձվաձև է /երբեմն՝ ուղղանկյուն/, ունի անկանոն ուղղվածություն: Դամբանախցերի մի մասը լցված է քարով և հողով, մյուսները դատարկ էին: Նրանց բնորոշ հատկանիշներից է գաղտնարան-խցերի առկայությունը, որոնց մեծ մասը հնում կողոպտվել է: Հիմնականում կատարվել են անհատական թաղումներ, աճյունները կծկված վիճակում են, պառկեցված աջ կամ ձախ կողքի վրա, ուղղված արևմուտք, հյուսիս որոշ գնգեբմներով, երբեմն՝ հյուսիս-արևելք: Որոշ դամբարաններում / 89/ գտնվել են գործածքի հետքեր, որով ծածկվել է հանգուցյալը: Հատկապես հարկ է առանձնացնել այն փաստը, որ որոշ դամբարաններում գտնվել են լճաշենյան տիպի մահիճներ: Որոշ մահիճների ոտքերին հագցվել են բրոնզե խողովակաձև թիթեղներ: Խեցանոթները հիմնականում դրվել են կմախքի կողմից, իսկ մետաղական իրերը՝ կմախքին շատ մոտ: Զարդերը տեղադրվել են կմախքի երկայնքով: Բացի ուղեկցող զույգից, դամբարաններից գտնվել են մեծ քանակությամբ խոշոր և մանր երշերավոր ենասունների ոսկորներ, մեկ դեպքում՝ շան կմախք: Շատ հաճախ կենդանիներին դամբանախուց դրել են մասնատված վիճակում: Նման երևույթ երբեմն նկատվում է նաև մարդկանց թաղումներում: Արթիկում, ինչպես նաև Հայաստան-

նի քաղաքներում այլ դամբարաններում, մուտք-հորանների լիցքի մեջ նկատվում են զոհաբերության հետքեր: Քաղաքն ունի կարևոր հատկանիշներ են կենտրոնները և առանց կամարի ու ուղեկցող գույքի դամբանախցերը:

Արթիկի դամբարանադաշտի դամբարանների վաղ փուլը թվագրվում է մ.թ.ա. 14-13-րդ դ.դ.-ով: Արանցում առկա է բացառիկ կարևոր հնագիտական նյութ՝ ներկայացված տարբեր աշխատանքի գործիքներով, զենքի նմուշներով, խեցանոթներով և պերճանքի իրերով:

Զենք: Արթիկի դամբարանադաշտի ուշ բրոնզի 1-ին փուլի զենքի նմուշները ներկայացված են պոչուկավոր բռնակով և միաձույլ, խողովակաձև բռնակով դաշույններով, սրերով, գուրզերով և վանակատ նետասլաքներով: Պոչուկավոր բռնակով դաշույնները, տափակ, տերևաձև շեղք ունեն և ոչ մեծ պոչուկ՝ բռնակն ամրացնելու համար: Այս խմբում առանձնանում է վերին մասում լայն, սայրի մոտ խիստ նեղացող դաշույնը, որի փայտյա բռնակն ունի բրոնզե ցանցկեն զոտեկապ և ցանցկեն գլխիկ: Զևով նման դաշույններ հայտնի են միայն Լճաշենից: Ինչ վերաբերում է տերևաձև, լեզվակավոր բռնակով դաշույններին, ինչպես կտեսնենք ստորև, սրանք լայն տարածում են ստանում ամբողջ Հայաստանում, Անդրկովկասում և գոյատևում մինչև մ.թ.ա. 2-րդ հազ. վերջը, հանդես գալով այնպիսի հայտնի հուշարձաններում, ինչպիսիք են Էլարը, Կարմիր քերդը, Մեծամորը, Ստեփանակերտը, Խաչենքերդը, Սաքաշրոն, Ծաղկերին և այլն: Շատ ավելի մեծ խմբով, են ներկայացված խողովակաձև բռնակով միաձույլ դաշույնները: Այս դաշույնների շեղքերն ունեն ձգված եռանկյունու տեսք, շեղքի կենտրոնում կան եզկայնական ող կամ քաղաքաշար ակոսիկներ: Միաձույլ, խողովակաձև բռնակները ունեն եռանկյունաձև կարմատքներ: Բռնակների մեջ դրվել է փայտյա միջուկ, որը ավարտվել է ցանցկեն գլխով: Նման դաշույններ գտնվել են Լճաշենում, իսկ հեռագայում, ուշ բրոնզի դարաշրջանի քաղաքներում, գոյատևելով մինչև մ.թ.ա. 1-ին հազ. սկիզբը: Դրանք հանդիպում են Մեծամորում, Կարմիր-քերդում, Դիլիջանում, Ջարխեյում /Կուլբիշ/, Առաջաձորում /Ղարաքաղ/, Սառնամրջում, Կախեթիայում, Մինգեչաուրում և այլն:

Արթիկի դամբարաններից գտնվել են շրջանակավոր բռնակով երկու սուր: Սրանք ունեն երկար, նեղացող, հստակ ընդգծված ուղղահայաց ողերով շեղքեր,: Բռնակներն ամբողջ եզրագծով ունեն դուրս եկող կողեր և ծակավոր փոսիկներ՝ փայտյա պահպանակները պահելու համար: Նման օրինակ շրջանակավոր բռնակով սրերը միջին բրոնզի դարաշրջանի նույնատիպ դաշույնների կատարելագործված տեսակներն են և հանդիպում են Լճաշենում, Մեղրաձորում, Ալավերդիում, Թալինում և մի շարք այլ

հուշարձաններում: Ընդ որում պետք է նշել, որ ձևավորման տարբերությունները հնարավորություն են տալիս դրանք բաժանել երկու տարբերակների: Թեև սրերի և դաշույնների դասակարգումը կատարվում է ըստ բռնակի ձևերի, սակայն շրջանակավոր բռնակով սրերը իրարից տարբերվում են նաև ըստ շեղբերի հարդարման, որը հնարավորություն է տալիս խոսել ինչպես նրանց տեղական արտադրության, այնպես էլ տարբեր արտադրական կենտրոնների առկայության մասին:

Արթիկի, ինչպես և Լճաշենի դամբարանների սակրերը վկայում են դրանց տեղական ծագման, միաժամանակ որպես աշխատանքային գործիք օգտագործվելու մասին: Բացի ,,անդրկովկասյան,, տիպի սակրերից, որոնք լավ հայտնի են Լճաշենից, Արթիկում գտնվել են երկու ծիսական սակրեր: Դրանցից մեկն ունի կլորավուն իրան, լայն, ծվածև կտրվածքի կոթառ, որի կողերը զարդարված են զիգզագ գծերով և ելուստներով: Կոթառի տակ, իրանի վրա երկու սիմետրիկ անցքեր են արվել: Արթիկի 2-րդ սակրը, ի տարբերություն վերջինիս, ունի մի փոքր ծվածև իրան, որի սրացող ծայրերը, կպնելով կոթառի հիմքին, առաջացնում են երկու նշածև անցքեր: Սակրի ծվածև կտրվածքի կոթառը զարդարված է եղևնանախշով և ավարտվում է գանգվածեղ ելուստով: Կոթառի մեկ կողմում կցված է ցանցկեն խողովակ, որի մի կողմը զարդարված է կեռախաչի ռելիեֆային պատկերով:

Արթիկում գտնված զենքի տեսակներից հարկ է նշել քարե նետասլաքները; որոնց հիմնական մասը պատրաստված է վանակակից: Դրանք բոլորը խնամքով ռետուշված են: Լճաշենի և ավելի վաղ ժամանակաշրջանի քարե նետասլաքներին բնորոշ որոշ գծեր այստեղ բացակայում են, ի տարբերություն դրանց, եզրերին նկատվում է թույլ ռետուշ: Դրանք բոլորը հիմնականում ունեն հիմքում ուղղանկյուն հանվածքներ՝ փայտի ամրացման համար: Քարե նետասլաքների հետ մեկտեղ գտնվել են բրոնզե նետասլաքներ:

Արթիկի դամբարանների հնագույն խմբից գտնված զենքի տեսակների վերջին խումբը կազմում են գուրզերը, որոնք ունեն գնդաձև և տանձաձև տեսք: Դրանցից մեկն ունի կլոր ելուստներ, մյուսը զարդարված է հյուսածո նախշով:

Ուշ բրոնզի դարաշրջանի 1-ին փուլի Արթիկի դամբարաններում գտնված աշխատանքի գործիքները ներկայացված են բրոնզից, քարից, ոսկրից պատրաստված տարբեր իրերով, որոնք կիրառվել են տնտեսության տարբեր բնագավառներում: Այս խմբերի մեջ հատկապես առանձնահատուկ տեղ են գրավում N: 90 դամբարանի գտածոները, որոնք պատկանել են հյուսնի: Այս հետաքրքիր հավաքածուում առկա է բրոնզե տափակ կացին, որի վաղ օրինակները հայտնի են վաղ բրոնզի դարի վերջերից. սակր, լեզվակավոր բռնակով դուր: Եզակի գտածո է երկաբերանի սղոցը, որն ունի լեզ-



1



2

Նկ. 54. Ռեշ քրոնզի դարաշրջանի զոհաբերներ Շիրակավանից, Լոռի-քարդից։

վակավոր ուղղանկյուն տեսք, իսկ կարող սայրերին՝ սուր, մանր առամներ: Աշխատող սայրերը խիստ մաշված են, որը խոսում է նրանց տևական օգտագործման մասին: Ողոցի մանի առամները վկայում են, որ այն կիրառվել է հիմնականում ոսկորներ և փայտյա մանր իրեր սղոցելու համար:

Բացի այս հավաքածուից, Արթիկի դամբարանադաշտում գտնվել են դանակաձև վանակատե ներդիրներ, ռետուշված, քարակ եզրերով մեծ քանակությամբ հերուններ, որոնք կարող էին օգտագործվել կաշվի մշակման, մասամբ էլ փայտամշակության մեջ: Գտնվել են նաև ոսկրի իլիկների մեծ քանակությամբ գլուխներ, որոնք վկայում են մանածագործության և դերձակության մասին:

Արթիկի դամբարանադաշտի պերճանքի իրերը ներկայացված են տարբեր ծայրերի իրար եկած իրարից հեռացող, բրոնզե լարերից և ժողերից պատրաստված ապարանջաններով: Հիմնականում սրանք ունեն հարթ մակերես, բայց երբեմն հանդիպում են ապարանջաններ՝ զարդարված կտրվածքներով և գծազարդերով: Նման ձև ունեն նաև այստեղ գտնված բրոնզե օղակը: Հանդիպում են նաև թռչունների քանդակներով երկկոն, գնդաձև կամ տանձաձև ցանցկեն կախիկներ: Գտնվել են մեծ քանակությամբ կոճակներ, մակամակալներ;

Առավել քնորոշ խումբ են կազմում շքասեղները: Սրանք բուլորը սրբացող ժողի տեսք ունեն և տարբերվում են գլխիկի ձևերով: Արթիկի շքասեղների գլխիկներն ունեն քնորոշ ձևեր՝ ռելիեֆային ելուստների, ձեռնափայտի գլխի տեսքով, գլխիկը ճկված և այլն: Գլխիկները զարդարված են ռելիեֆային գծերով և գծազարդերով: Սրանցից շատերը վերին մասում ունեն օղակներ՝ այլ կախիկ-զարդեր ամրացնելու համար:

Առավել մեծաքանակ խումբ են կազմում բրոնզից, քարից, շաղախից և ապակուց պատրաստված ուլունքները: Բրոնզե ուլունքների մեջ առավել քնորոշ են բազմանիստ և նշաձև սարդիոնե ուլունքները: Հանդիպում են նաև տակառաձև կամ տափակ ուլունքներ: Շաղախից ուլունքներն ունեն գլանաձև, խողովակաձև, տակառաձև կամ գնդաձև, երբեմն ռելիեֆային մակերեսով տեսք: Բրոնզե ուլունքները հիմնականում գլանաձև են և զարդարված եռանկյունաձև կտրվածքներով, որոնք հիշեցնում են Լճաշենի նույնօրինակ ոսկյա ուլունքները: Բացի ուլունքներից գտնվել են նաև քառակուսի բաժանարարներ մի քանի անցքերով, որոնց մեջ հանդիպում են նաև ապակյա օրինակներ:

Գտնվել են մի քանի գլանաձև կնիքներ: Սրանցից մեկը զարդարված է մարդկանց շքերթի, երկրորդը՝ սրբազան ծառի երկու կողմերում ծտի գլուխներով մարդանման էակների պատկերներով: Երրորդը նույնպես զարդարված է կենաց ծառի պատկերներով: Այս կնիքները աղերսվում են Սի-

ասնական կնիքների հետ: Նմանօրինակ կնիք հայտնի է Շիրակի Պարնի-Գեղից և Լճաշենից, որի վրա պատկերված է ատվածուհի, երկու մարդկանց պատկերներ և մարտնչող կենդանիներ:

Առավել մեծ խումբ են կազմում խեցանոթները, որոնց մեծագույն մասը պատրաստված է դուրգի վրա: Անոթների մի մասը ունի սև, փայլեցրած մակերես, սակայն հիմնական մասը կազմում է մոխրագույն, կոպիտ, ինչպես նաև խոհանոցային խեցեղենը, որը հաճախ մրապատ է:

Սև, փայլեցրած խեցեղենի խմբի մեջ են մտնում բազմաքանակ անկանթ սափորներ և քրեղաններ: Անկանթ սափորներն ունեն փքված, գնդաձև իրան, նեղացող ոչ բարձր վիզ: Կան տարբերակներ ավելի բարձր վզերով: Սրանք ունեն զարդարանք՝ քաղկացած հորիզոնական սեղմված և զիգզագաձև ակոսներից: Սակայն առավել տարածված զարդաձևը փայլանախշով արված զարդերն են, որոնք ունեն հնագույն արմատներ և կրկնում են միջին բրոնզի դարաշրջանի գունազարդման մոտիվները: Այս խմբին բնորոշ են ցանցազարդերը, որոնք արված են եռանկյունիների և ուղղահայաց գծիկներից արված զարդերի մեջ: Հանդիպում են նաև քեկյալ և ալիքաձև փայլազարդեր, որոնք իրենց զուգահեռներն ունեն Լճաշենի, Գեղարոտի, Կարմիր-Բերդի, Երևանի, Մեծամորի և այլ խեցանոթներում: Այս փուլի սև, փայլեցրած քրեղանները բաժանվում են երկու տիպի, թեև նրանցից յուրաքանչյուրում հանդիպում են բազմաթիվ տարբերակներ: Առաջին տիպին բնորոշ են խոշոր քրեղանները, որոնք կողերին ունեն ոչ մեծ ելուստներ: Երկրորդ տիպի նմուշները ավելի փոքր են և ունեն կտրված շուրթեր: Զարդամոտիվները հաճախ երկնում են անկանթ սափորների զարդաձևերը՝ սավերագծված ցանցաղաշտով ուղղանկյունիներ, քեկվող ժապավենանախշեր, սեպաձև եռանկյունիներ, ալիքանախշեր և այլն:

Արթիկի դամբարանների վաղ փուլի կոպիտ խեցանոթները ներկայացված են խոշոր, լայնաբերան, ցածրավիզ, ուռուցիկ իրանով, նեղ հատակով և դուրս ծկված շուրթով կնճռներով: Սրանք հիմնականում զարդարված են եղունգանախշով:

Շիրակավանի բնակավայրը: Տեղադրված է բնական ժայռերի լանջերին ու գագաթին, Անիի շրջանի համանուն գյուղի տարածքում: Բնակավայրը բազմաշերտ է: Ստորինը վերաբերում է վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանին: Այն հարատևում է ուշ բրոնզի և վաղ երկաթի դարի ժամանակաշրջանում: Այստեղից դեպի արևելք գտնվել է դամբարանադաշտ, ուր թաղումները կատարվել են հիմնահողային՝ մ.թ.ա. 13-11-րդ դդ. և քարարկղային՝ մ.թ.ա. 9-8-րդ դ.դ. դամբարաններում; Երկու տիպի դամբարաններն էլ ծածկվել են խոշոր սալաքարերով: Ուշ բրոնզեդարի դամբարանում հայտնաբերվել են մեծ թվով բրոնզե դաշույններ, նիզակներ, ասարանջաններ և

տարբեր տիպի խեցեղեն անոթներ: Եզակի գտածո է խարսխաձև պատվանդանի երկմյուղային ելուստներից մեկի վրա կանգնած, ձեռքերը կրծքին ծալած զինվորի Ֆալլիկ արձանը: Ոտքերը փոքր-ինչ լայնացված են: Թույլ են ընդգծված դիմային մանրամասները: Արձանի գլուխը ավարտվում է կատարածև սաղավարտով: Մյուս ելուստի վրա ղեմքով դեպի մարտիկը տեղադրված է զինվորին նայող խոշոր առյուծի քանդակը, որի վզի շղթան ամուր մի ծայրով պահում է զինվորը:

ԼՈՌԻ ԲԵՐԴ: Ուշ բրոնզի վաղ փուլի հուշարձանները Լոռի քերդում ներկայացված մի քանի դամբարաններով: Սրանք հիմնահողային խցեր են, եզրերը քարաշար կամ „քարակղային„ դամբանասրահներ՝ ծածկված խոշոր սալաքարերով: Սրանք ամփոփված են 1 մ քարձրությամբ և 8-10 մ տրամագծով քարահողային թմբի տակ: Դամբանախցերում կմախքներ են գտնվել, որը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ կատարվել է դիակիզում: Բացի հարուստ ուղեկցող գույքից, դամբարաններից մեկում /№ 3/ գտնվել են ձիու գլուխ և վերջույթներ, կովի և ոչխարի կմախքի ոսկորներ: Այս դամբարանում գտնվել են գլանաձև փայտի մնացորդներ, որոնք պատված են եղել բրոնզե ժապավենաձև թիթեղներով, դա հնարավորություն է տալիս ենթադրելու, թե դամբաթանում դրվել է երկու ձի լծած մարտակառք:

Չնայած այն քանին, որ դամբարանները հնում կողոպտվել են, գտնվել է հնագիտական հարուստ նյութ, որը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ այստեղ թաղվել են ցեղային առաջնորդներ: Քննարկվող դամբարանների մեծաղյա իրերը ներկայացված են հիմնականում զարդերով և շքեղ իրերով: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում երկու ձիով լծած մարտակառքի մոդելը: Այն տեղադրված է խարիսխաձև հիմքով ուղղանկյուն, սնամեջ, ցանցկեն հենակի վրա: Հենակի մեջ տեղադրված են երկու բրոնզե գնդիկներ, որոնք շարժման ժամանակ բարեհնչյուն գնգում են: Մարտակառքը ունի թեթև թափք, որի վրա կանգնած են երկու զինվոր: Թափքի առաջնային մասը երիզված է կիսակլոր լծաղեղով, որը հենվում է բարձր ծողանին: Հետնամասում թափքը բաց է Սակին տեղադրված է թափքի հետամասում և ունի վեց ծաղավոր անիվներ: Ձիերը լծված են առեղի առջևում ամրացված լծին: Ձիերը ցամաքասմբակ են, երկարավուն գանգերով, երախները՝ կիսաբաց, բարձր, ցցված քաշով: Աչքերը ընդգծված են փոսիկներով: Մարմինը բարակ է, համաչափ, պոչերը՝ երկարա Ձինվորները կանգնած են թափքի երկու կողմերում: Սրանցից մեկը պատկերված է, կարծես թե, սանձափոկը բռնած դիրքում, մյուսը՝ հանգիստ վիճակում: Ձինվորներից մեկի գլխին կա կատարավոր սաղավարտ, երկուսն էլ զինված են դաշույններով: Մարտակառքի առջևում, ինչպես է

և լճաշենյան օրինակում, տեղադրված է վազող քանդակ: Ինչպես լճաշենյան, այնպես էլ լոռիքերդյան մարտակոթերի մոդելները իրենց ձևերով լավ կապվում են խեթական հետ: Նման աղերսներ են նկատվում նաև զենքի տեսակներում, մասնավորապես սաղավարտների ձևերը, որոնք վկայում են Հայկական լեռնաշխարհի ցեղերի ամուր կապերի մասին Փոքր Ասիայի մշակույթների հետ: Լճաշենյան մշակույթի հետ ամուր կապը ընդգծում են նաև թռչունների քանդակները, որոնք հարմարեցված են խարիսխաձև պատվանդանների կամ հարթ, ինչ-որ փայտյա իրերի ամրացվող հենակների:

Այս տեսանկյունից բնորոշ են բրոնզե խարիսխները, որոնք նույնպես աղերսվում են լճաշենյան նմուշներին: Գտնվել են նաև մեծ քանակությամբ ցանցկեն զանգակներ, կոնակներ, կաշվե զոտու մնացորդների հետքերով ճարմանդներ: Առանձին օրինակներով գտնվել են դանակներ, զավազանի գլխիկներ, մեծ քանակությամբ կոնակներ: Մետաղյա իրերի մեջ եզակի տեղ են գրավում երկու զոտեղներ: Դրանցից մեկը մ.թ.ա. 14-13-րդ դ.դ. թվագրվող բրոնզե կոմպոզիցիա է, որն իրենից ներկայացնում է խարսխաձև պատվանդան, որին թիթեղով ամրացված է կենտրոնում կանգնած արու եղջերուն՝ շքեղ ճյուղավորված եղջյուրներով: Դրան երկու կողմերից հարում են կանգնած էգ եղջերուները, որոնց հետևում կանգնած են սնվող ձագերը: Արու եղջերուի հետևում կանգնած են երկու վագրակատուներ: Բոլոր քանդակները /եղջերուները/ սնամեջ են և ունեն զնդիկներ՝ շարժելիս ձայն արձակելու համար:

Մյուս եզակի զոտեղն մ.թ.ա. 13-րդ դ. թվագրվող բրոնզե շերեփն է: Այն ունի խոշոր, կիսակլոր անոթի ձև /տրամագիծը՝ 22 սմ, բարձրությունը՝ 8 սմ/, որի եզրերը հարդարված են չորս ուռուցիկ գծերով: Եզրերից մեկին ամրացված է եռանկյունաձև և սեպաձև կտրվածքներով զարդարված ուղիղ բռնակը, որին մեջքով դեպի շերեփը ամրացվել է գինվորի գալլիկ արձան: Այն ունի ծալված արմունկներ, առաջ ձգված ձեռքեր, ոտքերը փոքր- ինչ բացված են և զարդարված փոքրիկ սեպաձև և սվաստիկ կտրվածքներով: Լայն կուրծքը ունի նույն հարդարումը: Զանգվածեղ գլուխը՝ հստակ ընդգծված դիմային մանրամասներով, ավարտվում է գլխին դրված փոքրիկ կատարավոր սաղավարտով: Բռնակի հակառակ կողմում շերեփը զարդարված է այծիկների երկու փոքրիկ քանդակներով: Հատուկ տեղ են գրավում փայտյա իրերի մնացորդների զոտեղները, որոնք զարդարված են յուրահատուկ դեկոր կազմող բրոնզե գամերով: Երբեմն հանդիպում են փայտով կամ ապակու շաղախով զարդարված իրեր: Մեծ քանակությամբ հանդիպում են բրոնզյա և հատկապես ոսկյա երկկոն, տակառաձև, գլանաձև, էլիպսաձև և այլ ուլունքներ: Մետաղյա օրինակների հետ մեկտեղ գտնվել են մեծաքանակ քարե օրինակներ: Սարդիոնե ուլունքների թվում

գերակշռում են գնդաձև, լավ հղկված կարմիր, դեղին և վարդագույն օրինակները: Գտնվել են հնգանիստ, մուգ կարմիր գույնի ուլունքներ: Զանգվածաբար հանդիպում են մանր և ,,կտրված,, ուլունքներ: Մեծ քանակությամբ հանդիպում են մածուկից և ապակու շաղախից գլանաձև և գնդաձև կապույտ, սպիտակ, սև, կարմիր ուլունքներ, ինչպես նաև սպիտակ շաղախից գլանաձև ուլունքներ; որոնք պատվել են կապույտ-կանաչ ջնարակով, երբեմն նաև սաթե ուլունքներ:

Բացի ուլունքներից գտնվել են նաև կնիքներ. մեկը պատրաստված է ալվազաքարից և զարդարված է եռանկյունիներով և արևի պատկերով, մյուսը՝ ,,կենաց ծառի,, պատկերով, որով այն մոտենում է միտաննական շրջանի Արթիկի կնիքներին:

Լոտիքերդի խեցանոթները ներկայացված են հիմնականում ծիսական անոթներով՝ լայնափող ծխամաններով՝ որոնք պատրաստված են ժեռքով և զարդարված եռանկյունիներից, ակոսներից և գալարներից կազմված գծագարդ նախշագոտիներով: Այս զարդամոտիվների նշանակալի մասը հանդիպում է եռագույն ազուցվածքով, թեև հանդիպում են նաև սև, փայլեցված օրինակներ: Ինչպես և Լճաշենում, այստեղ հանդիպում են անցքեր ունեցող պրիզմայաձև ծխամաններ: Խեցանոթների նշանակալի խումբ են կազմում բազմատեսակ քրեղանները և տոնական ու խոհանոցային նշանակության խեցանոթների քեկորները:

Վերին նավերի ուշ քրոնզի դարաշրջանի առանձին դամբարանները պեղվել են Վերին նավերի դամբարանադաշտում: Դամբարանները ծածկված են լայնակի դրված սալաքարերով և ունեն ոչ քարձր քարահողային լիցք, շրջագծված են կրոմլեխի ֆենապատով: Որոշ դամբարաններ ունեն փայտյա ծածկ: Դամբարանների մի մասն ունի դրոմոս: Թաղումը ուղեկցող գույքը հարուստ է և բազմատեսակ: Այն քաղկացած է կենցաղային և ծիսական անոթներից, քրոնզե զենքերից և զարդերից, աշխատանքային գործիքներից, սարդիոնե, ապակյա ու ծանապակյա ուլունքներից, կայծքարե, վանակատե նետասլաքներից, քրոնզե արվանիկներից, պախուրցից և այլն: Եվ փայլեցրած, և անփայլ խեցանոթները զարդարված են խորաքիր և ռելիեֆային գոտիներով, սանրատամ դրոշմով և ներկայանում են տարբեր սափորների, կճուճների, քրեղանների, աղամանների և այլնի տեսքով: Ամենի հարուստ են ծիսական անոթները՝ լայնափող ծխամանները, կեռնոսները, քառակող գոհարանները և այլ քրոնզե քանդակներ ներկայացված են քերկուտի և աղավնու արձանիկներով, որոնք տեղադրված են խարսխաձև հենակներին և պտտվում են իրենց առանցքի շուրջը: Արձանիկները սնամեջ են, նրանց մեջ տեղադրված են քրոնզե գնդեր, որոնք արձանիկը շարժելիս զնգում են: Դամբարաններում գտնվել են ընտանի և վայրի

կենդանիների խոշոր եղջերավոր անասունի, ոչխարի, ձիու, մուճլոնի, այծի, շան, առյուծի, վարազի և այլնի ոսկորներ:

ՇԱՄԻՐԱՄ: Հուշարձանախումբը տեղադրված է Արազածի հարավային փեշերին, Աշտարակի շրջանի Շամիրամ և Արուճ գյուղերի հողատարածություններում: Այստեղ 1975 թ. առ այսօր պեղումներ են կատարվում Գ.Ե.Արեշյանի գլխավորությամբ:

Շամիրամի բնակավայրը առաջացել է միջին քրոնզի դարաշրջանում, որի մասին են վկայում ստորին շերտերում գտնված կարմիր-բերդյան մշակույթին բնորոշ խեցանոթների մի քանի բեկորներ:

Ուշ քրոնզեդարը այստեղ ներկայացնող Շամիրամի մեծ դամբանաբլուրները, թվով 7 հատ, մի խումբ են կազմում, որոնցից յուրաքանչյուրը մի քարդ, ճարտարապետական կառույց է: 7-9 մ մակերեսով դամբարանախցերը կառուցված են տուֆե սալաքարերից, որոնց մի մասը կոպիտ մշակման հետքեր ունի: Դամբանախցն ծածկի սալերի վրա անցքեր կան, ըստ երևույթին, անդրշիրիմյան աշխարհի մասին եղած հավատալիքների համաձայն, հանգուցյալի հոգին դուրս գալու և մտնելու հնարավորություն ունենալու համար: Դամբանախուցը ծածկվել ր բազմաշերտ, 20-25 մ տրամագիծ ունեցող թմբով: Ստորին շերտը կազմում է հրաբխային ավազը, որը պատված է խոշոր գետաքարերից և որձաքարերից շարված ,,զրահով,,՝, որի վրայից նորից ավազ է լցվել: Վերջինս նույնպես պատվել է ,,զրահով,,: Դամբանաբլրի զագաթին կանգնեցվել է սյունաձև քարակոթ: Արտաքին լիցքը պարզծով ամրացվել է հենապատ-կրոմլեխով, որը կառուցված է կողային մասով դրված, հարթ տաշված տուֆե սալերով: 5-րդ դամբանաբլուրում գտնվել է միաանական գլանաձև կնիք, որը մնացած, գերազանցապես խեցեղեն իրերի հետ միասին հնարավորություն է տալիս Շամիրամի մեծ դամբանաբլուրները թվագրելու մ.թ.ա. 15-14-րդ դ.դ.-ով:

Ուշ բրոնզեդարի վաղ փուլի հետաքրքիր դամբարանային համալիրներ են բացվել Գեղարոտում, Մեծամորում, Նլառում, Կարմիր-բերդում, Զանգեզուրում և այլուր: Զանգեզուրի ուշ բրոնզի դարաշրջանի նյութերը հայտնի են Ցանձավեր գյուղի մոտ պեղված, մ.թ.ա. 14-13-րդ դ.դ. թվագրվող դամբարանից: Այն հենապատ-կրոմլեխով քարարկղ է, ուր հանգուցյալի դին դրվել է ձախ կողքին կծկված, պատկած վիճակով: Գտնվել են մեծ քանակությամբ սև, փայլեցված խեցանոթներ՝ կուժներ, գավաթներ, քրեղաններ՝ զարդարված հարադիր ակոսներով և ցանցաղաշտով:

1896 թ. Կարմիր-բերդի դամբարանաղաշտում միջին քրոնզի դարաշրջանի դամբարանների պեղման ընթացքում Պ.Վ.Զարկովսկին պեղել է նաև մի քանի ուշ բրոնզի դարաշրջանի վաղ փուլի դամբարաններ: Սրանք տուֆե սալաքարերով ծածկված և քարահողային ոչ բարձր թմբով պատված քա-



Աղ. 55. Ուշ բրոնզի դարաշրջանի խեցեղեն Արթիկից:

բարկղեր են: Կատարվել են ինչպես անհատական, այնպես էլ խմբային թաղումներ: Գտնվել են ոչ մեծ քանակությամբ սև, փայլեցրած խեցանոթներ՝ լայնաբերան սափորներ, կնումներ, քրեղաններ: Բացի խեցանոթներից զբաղվել են տերևածև շեղբով, լեզվակավոր գաստակով դաշույններ: Դամբարաններից մեկում գտնվել է լեզվակավոր շեղբով և առանձին ծուլված ցանցկեն, քառակող երախակալով դաշույն: Շեղբը ունի լայն, եկնտրոնական ող: Քիչ քանակությամբ գտնվել են քրոնզյա մարմանդներ, մանր կոմակներ, օղեր, ապարանջաններ:

Հետաքրքիր նյութեր հայտնաբերվել են Գեղարոտի մոտ գտնվող դամբանադաշտի պեղումների ընթացքում, որն ընկած է Փամբակի լեռնաշղթայի հարավային լանջերին, կիկլոպյան ամրոցից ոչ հեռու: Դամբարանները տարբեր չափերի, կրոմլեխով շրջագծված „քարարկղեր„ կամ գետնածածկ հիմնահողային խցեր են: Դամբարաններն ունեն ոչ բարձր թումբ: Այստեղ գտնված իրերը ներկայացված են սև, հրաշալի փայլեցրած խեցանոթներով՝ լայնաբերան սափորներով, կնումներով, քրեղաններով, բարձր նստուկ ունեցող սկուտեղով, որոնք զարդարված են փայլանախշով՝ արված խորազիր, կետազարդ գծերով: Այս խեցանոթները լավ աղերսվում են Կարմիրբերդի, Լճաշենի, մասամբ Արթիկի, Լոռի բերդի խեցեղենին: Երբեմն հանդիպում են սպիտակ ագուցվածքով զարդարված քրեղաններ, զարդանախշ, որի կատարման եղանակները հին ավանդույթ ունեն: Մետաղյա իրերի թվում անհրաժեշտ է հիշատակել քրոնզե մակատակալի և կիսագունատ գլխիկով շքասեղ նմուշները: Հատկապես հետաքրքիր են հրաշալի հղկված, կարմիր և վարդագույն սարդիոնից պատրաստված ուլունքները, թեև հանդիպում են տասարակ, հատած օրինակներ: Կան նաև սպիտակ և կանաչ մածուկից պատրաստված և սկավառակաձև ուլունքներ: Հետաքրքիր է, որ այստեղ գտնվել է սաթե նույնաձև ուլունք:

Ուշ բրոնզեդարի խոշոր դամբանաքլուրները գտնվել են նաև Էլառի դամբարանադաշտում, որոնք հիմնականում կողոպտված էին: Սակայն պահպանված խեցանոթների քեկորները, դաշույնների մնացորդները որոշակի պատկերացում են տալիս այստեղի հարուստ մշակույթի մասին: Հրազդանի շրջանի Մեղրաձոր գյուղի շրջակայքում պեղված 22 քարարկղների հետաքրքիր նյութեր է գտել Լ.Ն.Բիյազոկը: №22 դամբարանում, որը թվագրվում է մ.թ.ա. 14-13-րդ դ.դ., գտնվել են խոշոր կնում և քրեղան, լավ հղկված վանակատ և կայծքարե նետասլաքներ, խողովակաձև երախակալով քր նզե դաշույն, որը աղերսվում է Լճաշենի, Արթիկի, Կարմիրբերդի օրինակներին: Առավել հետաքրքիր նմուշ է այս դամբարանից գտնված բրոնզե սակրը: Այն ունի սկավառակաձև իրան, որի վերին մասում արված է երկու անցք: Կարմրածքներով զարդարված խողովակաձև կո-

թառի վրա տեղադրված է առյուծի արձանիկ: Գիշատիչը պատկերված է կարծես թե թռիչքի պատրաստվելու պահին, առջևի թաթերը մի փոքր ձգված են, հետևինը՝ կծկված, իսկ պոչը օդակաձև փաթաթված է:

Մեղրածորի սակրը հիշեցնում է Արթիկի օրինակը, միայն այն տարբերությամբ, որ զարդարված է առյուծի արձանիկով: Գիշատիչի պատկերազարդման ոճական առանձնահատկությունները վերջինս մոտենում են լճաշենյան առյուծների արձանիկներին, որը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ մեղրածորյան սակրը ձուլվել է տեղում, հին արևելյան էտալոնների ազդեցության ներքո, համատեղելով այն տեղական ավանդույթներին:

Ուշ բրոնզեդարի դարաշրջանի 2-րդ փուլի հուշարձանները

Ուշ բրոնզի դարաշրջանի 2-րդ փուլի հուշարձանները, ըստ վերջին տարիներին ընդունված ժամանակագրության, թվագրվում են մ.թ.ա. 12-11-րդ դ.դ.: Սակայն այս փուլը բնութագրվում է երկաթի հանդես գալով, անգամ երկաթածուլական արհեստանոցների մնացորդներով, որոնք, որպես կանոն, հանդես են գալիս բրոնզեղարյան արհեստանոցների հետ հատ մատեղ: Այդ պատճառով բազմաթիվ ուսումնասիրողներ ուշ բրոնզի դարաշրջանի 2-րդ փուլը թվագրում են մ.թ.ա. 12-րդ դ. սահմաններում; իսկ մ.թ.ա. 11-9-րդ դ.դ. վերագրում են երկաթի դարաշրջանի վաղ փուլերին: Պետք է նշել նաև, որ մի շարք իրեր, հատկապես մետաղական նմուշներ, թվագրվում են մ.թ.ա. 12-11-րդ դ.դ., որը հստակ վկայում է, մի կողմից, Հայաստանի մշակույթի ավանդականության մասին, իսկ մյուս կողմից՝ երկաթամշակման սկզբնական տարածման և զարգացման փուլում դեռևս իրերի գործածության մասին, որոնք շարունակում են գոյատևել ընդհուպ մինչև մ.թ.ա. 1-ին հազ. սկիզբը:

ԱՐԹԻԿ: Ուշ բրոնզի դարաշրջանի երկրորդ փուլի հետաքրքիր հուշարձանների թվին են պատկանում Արթիկի դամբարանադաշտի բազմաթիվ դամբարանային հավելիրներ: Դամբարանային կառույցները էական փոփոխությունների չեն ենթարկվել: Տուֆի շերտի մեջ փորված կատակոմբները կրկնում են նախորդող շրջանի ձևերը: Մ.թ.ա. 12-11-րդ դ.դ. թվագրող թաղումներն ուղեկցող զույգը ներկայացված է բազմաքանակ մետաղական և խեցեղեն իրերով, որոնց թվում հանդիպում են ինչպես նախորդող դարաշրջանին, այնպես էլ հաջորդող, վաղ երկաթի դարաշրջանին բնորոշ օրինակներ, որը ինչպես նշեցինք վերը, վկայում է Հայաստանի այդ ժամանակաշրջանի մշակույթի ավանդության մասին:

Զենքի տեսակները ներկայացված են լեզվակավոր դաստակով և խողովակաձև երախակալով դաշույններով, սրերով, սակրերով, զուրգերով և վանակատե ու քրոնզե նետասլաքներով: Ուշ քրոնզի վաղ փուլից հայտնի լեզվակավոր դաստակով դաշույնները գոյատևում են ներկայացվող ժամանակահատվածում: Սրանց քոլորին քնորոշ են կախ ուսերը և շեղջի հարուստ զարդարումը երկայնական ակոսներով և զարդերով: Հատկապես հետաքրքիր են շեղանկյուններով և եռանկյուններով զարդարված դաշույնները: Դաշույնների այս խումբն իր զուգահեռներն ունի Կարմիր քերդում, Լճաշենում, Ռեղկին լագերում, Մեղրիում, Կամոյում և այլն, ինչպես նաև Վրաստանի մի շարք հուշարձաններում /Սամթավրո, Թոեղ, Կվասաթաւի և այլն/: Խողովակաձև երախակալով դաշույնները, կրկնելով նախորդ փուլի օրինակների ձևերը, ունեն ավելի հարուստ զարդարված շեղբեր /վազող պարույրներ, երկայնական ակոսներ/ և ուլթայրանի աստղի ձևով գլխիկներ:

Դամբարանների այդ խմբից հայտնաբերվել է երեք սուր: Շրջանակավոր դաստակով սրերի հետ մեկտեղ հանդես են գալիս անդրկովկասյան տիպի միաձույլ սրերը: Սրանք ունեն հարուստ զարդարված գլխիկներով խողովակաձև երախակալեր և սուր կամ կլորացող երկար շեղբեր: Շեղբերը զարդարված են ակոսներով, կիսալուսիններով, պարույրներով և կետազարդով: Երկու սրերի շեղբերը զարդարված են գալարվող օձի պատկերներով: Այս խումբը վերջերս համալրվեց Մեղրաձորի գտածոյով: Խողովակաձև երախակալով, լայն շեղբով, կլորացող կամ կարված ծայրով սրերը գոյատևում են մինչև մ.թ.ա. 2-րդ հազ. վերջը և հայտնի են Նիրովականից, Սևանից, Գոլոգինոյից, Ռեղկին լագերից, Արդիից, Այգեձորից, Կեղաբեկից, Խանլարից, Առաջաձորից և այլն: Ընդ որում կլորացող և սուր ծայրերով սրերի հետ հանդիպում են նաև շեղջի ներքևի մասը կրճատված օրինակներ: Այս տիպի, մի փոքր այլ տարբերակի սրեր հանդիպում են Սամթավրոյում և Կախեթիայում:

Բացի սրերից, Արթիկում գտնվել են մեծ քանակությամբ միաձույլ խողովակակոթաթ նիզակներ: Այս նիզակները երկու տեսակի են: Առաջինը ունի հարթ խողովակաձև կոթաթ, իսկ երկրորդի կոթաթների վրա կան ուռուցիկ, կլոր ելուստներ: Դրանց քոլորի շեղբերը փետրաձև են, կլորացող կամ քարձր ուսերով: Նման նիզակներ գտնվել են Նոյեմբերյանում, Ռեղկին լագերում և Նորաշենում /Շամշադինի շրջան/, Կեղաբեկում, Առաջաձորում: Հատկապես մեծ քանակությամբ նման նիզակներ հայտնի են Վրաստանում /Սամթավրա, Բեշտաշեն, Կախեթ/:

Արթիկի N 433 դամբարանից գտնվել է ասիմետրիկ սակր, որը լրացնում է Արթիկի ուշ քրոնզի երկրորդ փուլի զենքի տեսակները և Երևա-

նում ու Ախթալայում գտնվածների հետ վկայում է, որ նման սակրերը օգտագործվել են մինչև մ.թ.ա. 2-րդ հազ. վերջը:

Արթիկի գենքի տեսակների թվում պետք է հիշատակել երկու գնդաձև գուրզերը և բրոնզից, վանակատից և ոսկրից պատրաստված նետասլաքները:

Արթիկի դամբարանների այս խմբում աշխատանքային գործիքները ներկայացված են մետաղից և քարից պատրաստված, քննարկվող դարաշրջանին բնորոշ ոչ մեծ խմբով: Այստեղ առանձնահատուկ տեղ է գրավում 285 դամբարանի ծուլագործ վարպետի գործիքների համալիրը: Այն բաղկացած է բրոնզե դողից և թիթեղից պատրաստված ապարանջաններից, մանր կոճակներից և տուֆակերտ կուռքի մոդելներից: Առավել բնորոշ են մասնագիտական գործիքները՝ կավե հալոցները, շերեփները; Արանք բոլորը շատ լավ թրծված են, մի մասն էլ ներսի կողմից ճաքեր ունեն՝ մետաղի հետքերով: Այս համալիրը լրացվում է քազալտե գդալաձև, հումքը մաքրելու համար նախատեսված հավանգով: Երկրագործական գործիքները ներկայացված են բրոնզե մանգաղների բեկորներով՝ պատրաստված բրոնզե բարակ թիթեղներից, որոնց ծայրերին երկու անցք է արված: Շիրակում նման մանգաղներ հայտնի են Անիից, Լենինականից և Քեթիից, որոնք աղերսվում են Կամոյի, Աշտարակի, Կիրովականի նմուշների հետ: Գտնվել են նաև այլ նշանակության իրեր՝ փոքրիկ տաշուրագ, դուր, որոնք օգտագործվել են փայտյա ներդիրները, տարբեր զենքերի բռնակները, կաղբերի կողապատերը և այլ մասերը, կահույքը ազուցելու համար: Ոչ մեծ խումբ են կազմում ջուլհակագործության և կաշեգործության հետ կապված գործիքները՝ ոսկրե իլիկի գլուխները, հելունները, ասեղները, քարե կոկիչները և այլն:

Գտնվել են մեծ քանակությամբ տարբեր զարդեր: Այս իրերի մեջ մեծ տեղ են գրավում բրոնզե լարից, դողից և թիթեղից պատրաստված ապարանջանները: Հատկապես հետաքրքիր են վերջինները՝ զարդարված հարուստ եղևանաձևով և այլ զարդաձևերով, որոնք հաճախ հանդիպում են նաև ուշ բրոնզի դարաշրջանի սրերի և դաշույնների վրա: Նման ապարանջաններ գտնվել են Հառիճում, Բայազետում, Դիլիջանում, Այումում, և այլն: Գտնվել են նաև մեծ քանակությամբ օձագլաս հերոզարդեր միջնալարով, բրոնզե ճակատակալներ: Ճակատակալների թվում առանձնանում է 270 դամբարանից գտնված նմուշը՝ զարդարված ձձի, այծի, կեռախաչի և պարույրի պատկերներով, որոնք կապվում են երկնային պաշտամունքի հետ: Զարդերի մեջ մեծ խումբ են կազմում շքասեղները, որոնց մի մասը պահպանում է ուշ բրոնզի 1-ին փուլի ավանդական ձևերը: Պահպանվում են վերին ծայրը հաստացող կամ ելուստներով զարդարված նմուշներ: Քննարկվող դարաշրջանում հանդես են գալիս գլխարկաձև կամ գնդաձև գլխիկներով,

օղակաձև ելուստներով, հատիկազարդ և այլ շքասեղներ: Գտնվել են մեծ քանակությամբ կախիկներ՝ ներկայացված թռչունների տեսքով, գեղաձև, տանձաձև, շեղանկյունաձև օրինակներով: Հանդիպում են նաև բրոնզից և մածուկից պատրաստված թիթեղե սկավառակների տեսքով կախիկներ, որոնցից կախվում էին թռչունների արձանիկներ և այլն: Սրանց մի մասը կատարել է հմայիլի դեր: Այստեղ կարելի է հիշատակել գորտի արձանիկով կախիկը, որը աղերսվում է Լճաշենի գտածոների հետ: Կախիկների մի մասը զարդարված է շրջանի մեջ արված պարույրներով, որը խորհրդանշում է արևի շարժումը:

Մեծ խումբ են կազմում բրոնզե կոճակները, որոնց մի մասը կարող է կատարած լինել նաև զրահակոճակի դեր: Կոճակները տարբեր չափերի են, սկսած շատ մանրերից մինչև մի քանի սմ տրամագիծ ունեցողները: Սրանց նշանակալի մասը զարդարված է խորադիր շեղանկյուններով, խաչերով, ուղղանկյուններով, եռանկյունիներով, որոնք իրենց հերթին ազուցված են քազմատեսակ քարերով և պարույրաձև գալարներով: Կոճակների մի մասը երեսպատված է արծաթյա թիթեղով: Նման կոճակներ գտնվել են Լճաշենում, Սևանում, Դիլիջանում, Եռմշաղինում, Կարմիր-բերդում, Տոլորսում և այլն:

Արթիկի դամբարանադաշտում գտնված զարդերի մեջ առավել տարածված են բրոնզից, սարդիոնից, ազաթից, մածուկից, ծարիրից, ապակուց և լեռնային բյուրեղից պատրաստված ուլունքների նմուշները: Այս ուլունքները առանձնանում են ձևերի քազմազանությամբ, որոնց մեջ գերակշռող են գեղաձև, տանձաձև, խողովակաձև օրինակները: Ընդ որում քարե ուլունքները հրաշալի հղկված են: Արթիկի դամբարանադաշտի քոլոր դամբարաններին բնորոշ գտածոներից քացի գտնվել են նաև ոչ մեծ խումբ կազմող այլ իրեր: Այս խմբի մեջ է մտնում քարայծի հրաշալի արձանիկը, որը հարմարեցված է խարսխաձև պատվանդանին և հիշեցնում է Լճաշենի օրինակը՝ նրանից տարբերվելով մեծ արտահայտչականությամբ և հարդարանքի որակով: Կենդանու վիզը և իրանը զարդարված են սեպաձև փոսիկներով, նշաձև գծերով, վրան թեք գծիկներ արված ռելիեֆային գծերով: Մտորին ծնոտին զոդված է ոչ մեծ օղ: Այս խմբի մեջ են մտնում երկու հրաշալի շերեփները, բրոնզե կաթսան և թասը: Շերեփներից մեկն ունի ուռուցիկ իրան և ճկված, սնամեջ բռանակ, որը զարդարված է սեպաձև փոսիկներով և վազող պարույրներով: Մյուս շերեփն ունի ավելի փոքր չափեր, քայց շատ երկար բռանակ, որը ծայրամասում վերածվում է երկմյուղ ճկված կեռիկների: Հետաքրքիր են նաև բրոնզե անոթները: Այսպես, բրոնզե կաթսան ունի ձվաձև իրան և կտրված կողապատ, որին ամրացված են կախելու համար նախատեսված կաթթեր: Ինչ վերաբերում է թասին, ապա

այն պատրաստված է ամբողջական թիթեղից և ունի կիսագնդաձև իրան:

Արթիկի խեցանոթները ներկայացված են տարբեր անոթների մեծ խմբերով, որոնց մի մասը, պահպանելով ուշ բրոնզի վաղ փուլի խեցեղենի ձևերը, մի փոքր տարբերվում է վերը նշվածներից: Փայլանախշով արված զարդաձևերը կատարված են անիուլթ, անոթները կորցնում են մակերեսի սև փայլի նախկին որակը:

Այս փուլի խեցանոթների առավել բնորոշ զարդամոտիվներն են հորիզոնական, զիգզագ, ալիքանախշ գծազարդերը, դաջազարդ եռանկյունիները, համակենտրոն շրջանները, եղևանախաշը և այլն: Սև, փայլեցրած խեցեղենի կողքին մեծ խումբ է կազմում կոպիտ, խոհոնոցային խեցեղենը: Սև, փայլեցրած խեցանոթները ներկայացված են անկանթ, միականթ, երկկանթ սափորներով և տարբեր ձևերի քրեղաններով: Անկանթ սափորների մեջ մեծ խումբ են կազմում ուռուցիկ իրանով, ոչ բարձր վզով և դուրս ծկված շուրթով անոթները: Սրանք հիմնականում նրբախնձի են և հավասարաչափ թրծված: Հանդիպում են նաև ուռուցիկ իրանով, բարձր վզով և համեմատաբար նեղ հատակով անկանթ սափորներ: Սրանց կողքին առաջին անգամ սկսում են հանդես գալ միականթ սափորները, որոնց աղեղնաձև կանթերը շուրթից կամ վզի կենտրոնից իջնում են դեպի անոթի ուսը: Ոչ մեծ խումբ են կազմում երկկանթ անոթները:

Մեծ քանակությամբ հանդիպող քրեղանները բաժանվում են մի քանի տիպերի՝ ուռուցիկ իրանով, նեղ հատակով խոր քրեղաններ, որոնց շուրթերը կամ դուրս են ծկված, կամ ուղիղ կտրված են և ուռուցիկ ուսերով, նեղ հատակով, իրանից ուսին անցման հատվածում շեշտված կողերով քրեղաններ և այլն: Առավել բազմաքանակ են միջին չափերի, բարձրացող ուսերով և ծկվող շուրթերով քրեղանները: Հանդիպում են նաև օղակաձև բռնակներով քրեղաններ: Այս անոթների զարդամոտիվները, բացի վերը նշված ընդհանուր մոտիվներից, այս կամ այն անոթի վրա տարբեր են: Այսպես, որոշ անոթների հատակները զարդարված են համակենտրոն շրջաններով , որը հանդիպում է նաև առանձին անոթների ուսերին: Մեծ տեղ են զբաղեցնում սեպաձև զարդը, ցանցաձևը, փայլանախշ շերտերը և այլն: Անոթների ձևերի և զարդամոտիվների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Արթիկի քննարկվող ժամանակահատվածի խեցեղենը, պահպանելով հնագույն ձևերը, նոր գծեր է ձեռք բերում, որը զգացվում է մինչև վաղ երկաթի դարաշրջանը, վկայելով Հայաստանի նյութական մշակույթի ավանդականության մասին:

Կոպիտ խոհանոցային խեցեղենը չի առանձնանում ձևերի ու զարդամոտիվների բազմազանությամբ: Միատիպ կավե սպասքը ներկայացված է խոշոր, ձգված իրանով, լայնաբերան, երբեմն նաև ուռուցիկ իրանով և բարձրացող ուսերով անոթներով: Հանդիպում են մեծ քանակությամբ անկանթ,



Աղ. 56. Ուշ բրոնզի դարաշրջանի խեցեղեն Արքիկից։

երքեմն ցածրադիր իրանով և տարբեր քարձրության վզերով կնուճներ: Եռոտիր խեցեղենի զարդամոտիվների ներկայացված են հիմնականում տարբեր ձևերի պարանայուս, խորադիր զոտիներով, զիգզագներով և ավելի հազվադեպ՝ ալիքաձև խ նախշերով: Առավել տարածված է եղունգազարդն ու հատիկազարդը: Հանդիպում են նաև ուռուցիկ ելուստներով զարդարված անոթներ, որ քնորոշ է մ.թ.ա. 1-ին հազ.սկզբի կավանոթներին:

ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ: Լոռի բերդի ուշ բրոնզի դարաշրջանի երկրորդ փուլը ներկայացված է երկու դամբարաններով /№8 և 9/: Առաջինը ոչ մեծ, կրոմլեխով շրջագծված հիմնահողային դամբանախուց է՝ ծածկված սալաքարերով: Այստեղ մետաղյա իրեր և զարդեր չկային: Գտնվել են 8 կավանոթներ, խոշոր և մանր եղջերավոր անասունների ոսկորներ, ինչպես նաև հանգուցյալի դիակիզված ամյունը: Երկրորդը 1 մ քարձրությամբ քարահողային թմբով դամբանաբլուր է՝ շրջագծված 13 մ տրամագիծ ունեցող կրոմլեխով: Հիմնահողային դամբանախուցը ծածկված էր խոշոր սալաքարերով, որոնք հենվել են գերանային կառուցվածքի վրա: Վերջինս ներսից պատվել է կտորով: Սալաքարերի ծանրության տակ փտած գերանները և քարերը փլվել-լցվել էին խուցը: Չնայած այն քանին, որ դամբարանը մինչև քանդվելը հնում կողոպտվել է, որոշ իրեր պահպանվել են: Այս դամբարանի մետաղյա իրերն ունեն որոշ արխայիկ ձևեր, բայց խեցանոթները քնորոշ են ուշ բրոնզի դար 2-րդ փուլին: Այստեղ գտնվել են բրոնզե կահույքի կամ կառքի զարդ հանդիսացող եղջյուրաձև իրեր և բրոնզից ցլագլուխ հրաշագեղ արձանիկ, որը նույնպես հանդիսացել է կահույքի մաս, բրոնզե թռչունների արձանիկներ, զանգակներ՝ զարդարված նռանկյունաձև կտրվածքներով, տարբեր տեսակի կոճակներ, որոնց մի մասը կարվել էր զրահաշապիկին, կլոր վահանիկներ, գամեր և այլն: Այս բազմաքանակ գտածոների մեջ առանձնանում է գլխի արձանիկը, որն ունի փոքր չափեր, սակայն դեմքի մանրամասները շատ հաջող են ընդգծված: Կենդանու աչքերը և քիթը, ինչպես նաև կոտոշները արված են շատ արտահայտիչ: Բերանը ընդգծված է ուղղանկյուն փոսիկով, իսկ ստորին ծնոտը զարդարված է սեպաձև փոսիկներով:

Երկու դամբարանների կավանոթները ներկայացված են սափորների, կնուճների, գավերի, գավաթների, սկահակ-սկուտեղների տեսքով, որոնք զարդարված են փայլանախշով արված գծերով ու շերտերով, սպիտակ և կարմիր ներկված գունազարդով, ակոսներով, համակենտրոն շրջաններով, զիգզագով, ալիքանախշով, սեպաձև զարդերով և այլն:

Լոռիբերդի նշված խեցեղենը, ինչպես նաև մետաղը արխայիկ գծեր ունենալով հանդերձ, արդեն նշանակալիորեն տարբերվում են վաղ ձևերից և իրենց հիմնական հատկանիշներով թվագրվում են մ.թ.ա. 11-10-րդ

դ.դ.-ով, որը վկայում է երկաթի դարաշրջանի վաղ փուլերում դեռևս գոյատևող ուշ քրոնզի դարաշրջանի ավանդական ձևերի մասին:

Ջանգեզուրի ուշ քրոնզի դարաշրջանի երկրորդ փուլը ներկայացված է հուշարձանների ոչ մեծ խմբով, որոնք թվագրվում են մ.թ.ա. 12-11-րդ դ.դ.: Սրանց թվին են դասվում Արծվանիկ գյուղի դամբարանի նյութերը: Այն 10 մ տրամագծով և 0,7 մ բարձրության քարահողային թմբով դամբանաբլուր է՝ քարակղային դամբանախցով: Կատարվել է մասնատված դիաթաղում: Գանգը և ձեռքի ոսկորները դրված էին խցի կենտրոնում, իսկ մնացածները՝ հյուսիս-արևելյան անկյունում: Գտնված նյութերը ներկայացված են կնումներով, քրեղաններով, զրահակոնակներով: Խեցանոթները ունեն սև-փայլատ մակերես և զարդարված են հիմնականում գծազարդով: Հեռավ նման անոթներ գտնվել են Ղափանի շրջանի Բաղաբուրջ և Շիկահող գյուղերում: Քննարկվող ժամանակահատվածով են թվագրվում Անգեղակոթից պատահականորեն գտնված քրոնզե դաշույնը, նիզակի ծայրը, սընկաձև գլխիկով շքասեղը, վանակտոտ նետասլաքները, ծարիրից քաժանարարները:

Հետաքրքիր գտածոներ կան Ս.Ա.Եսայանի կողմից ուսումնասիրված հյուսիսարևելյան Հայաստանի հուշարձաններում: Դեռևս նախախորհրդային շրջանում Բեղկին-լազերում և Քարխեչում Մուրյեի պեղումներից գտնվել էին մ.թ.ա. 13-12-րդ դ.դ. թվագրվող միաձույլ դաշույններ, զավազանի գլուխ: Խողովակաձև կոթառով նիզակների և դաշույնների գտածները հայտնի են Նոյեմբերյանից, Կրասնոսելսկից և Դիլիջանից: Մեծապես հետաքրքիր հավաքածու է գտնվել Ինչևանի շրջանի Լուսաձոր գյուղում: Այն բաղկացած է, ոչ մեծ սակրից, միաձույլ խողովակաձև երեսակալով դաշույնից, որն ունի հարթ, ակոսիկներով զարդարված շեղբ ու ցանցկեն գլխիկ, և քրոնզե մանգաղից: Առանձնահատուկ հետաքրքրություն ունի խոշոր, ուռուցիկ մակերեսով սկավառակաձև զրահակոնակը՝ զարդարված եռանկյունաձև շևրոններով, որոնք սավերագծված են կետագծերով:

Համեմատաբար մեծածավալ պեղումներ են կատարվել Շամշադինի շրջանի Արծվաբերդ գյուղի մոտ գտնվող Խուրջին-հողեր տեղամասում: Այստեղ պեղվել է 15 դամբարան: Սրանք քոլորը խոշոր քարաբեկորներով շարված քարակղեր են՝ ծածկված սալաքարերով: Դամբարանների մի մասը, հատկապես դամբանաբլուրները, թեև հնում կողոպտվել են, այնուամենայնիվ գտնվել է իրերի հետաքրքիր հավաքածու՝ բաղկացած տարբեր տեսակի խեցանոթներից, զենքի տեսակներից և տարբեր զարդերից: Խեցեղենը բաղկացած է անկանթ միականթ սափորներից, կնումներից, քրեղաններից, գավաթներից և այլն, որոնք ունեն սև կամ գորշ, փայլեցրած կամ անփայլ մակերես: Զարդամոտիվները ներկայացված են խորաքիր գծերով,

ակոս-գոտիներով, զիգզագներով, թեք գծերով արված ցանցաղաշտով, մատնեքներով, եռանկյունիներով արված շուրջներով և այլն: Առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում խոշոր զավաթ հիշեցնող սափորը: Այն ծիսական անոթ է, որն ունի ոչխարի ոճավորված ծեփածո պատկերներ հիշեցնող չորս բռնակներ, որոնց գլուխները քաջքաշանում են շուրթի վրա: Այս սափորը մտնում է ծիսական անոթների խմբի մեջ, որոնք հայտնի են Աստղիքլուրից, Դիլիջանից, Բայազետից, Մանահինից, Թալինից, Այրումից և այլն: Դրանք զարդարված են օձերի, զորտերի, խոյունների, այծերի, հովազների, մարդու գլխի ծեփաքանդակներով: Ձենքի տեսակները, ի տարբերություն խեցանոթների, թեև հանդես են գալիս ուշ բրոնզի վերջին փուլում, գոյատևում են մինչև մ.թ.ա. 1-ին հազ. սկիզբը: Առավել հետաքրքիր է խոշոր, այսպես կոչված անդրկովկասյան տիպի սուրը: Նման սրեր հայտնի են Ռեդկին-լազերից, Գոլոգինոյից, Արթիկից, Կիրովականից, Կալաքենդից, Այգեձորից և այլն: Սրի հետ գտնվել են վեց վանակատ, լավ ոռոուշված և երկու բրոնզից միջանկյալ ողի վերածվող քառակող, երկար պոչուկով նետասլաքներ: Ձենքի մասին խոսելիս պետք է նը շել նաև զրահաշապկի մասեր հանդիսացող չորս մեծ և 12 փոքր զրահակոճակները, որոնք կարվել են կաշվե կամ կտորե շապկի: Նման զրահաշապիկներ լավ հայտնի են ուշ բրոնզի դարաշրջանից, գոյատևել են նաև երկաթի դարում, հայտնի են Լճաշենում, Արթիկում, Դիլիջանում և Հայաստանի այլ հուշարձաններում: Երբեմն նման զրահաշապիկների որոգայթի հատվածից կախվել են խոշոր փայտյա ծվածկ կամ կլոր սկավառակներ՝ եզերված բրոնզե շրջանակով /Գոլովինո, Լոռիբերդ, Մեղրաձոր/, իսկ կրծքին կախվել է խոշոր բրոնզե Ճարմանդ /Գոլովինո, Լուսաձոր, Թանլար, Այգեձոր, Կիրովաբաղ և այլն/:

Քննարկվող ժամանակահատվածի հետաքրքիր հուշարձան է Ալեքսանդրապոլում /Լենինական/ 1875 թ. մարտկոցի կառուցման ժամանակ բացված ,,զինվորի դամբարանը,, որը նկարագրել է Գ.Դ.Ֆիլիմոնովը: Կատակոմբի ձև ունեցող այս դամբարանային կառույցից գտնված իրերը թվագրվում են մ.թ.ա. 12-11-րդ դ.դ.: Սրանց թվին են պատկանում տափակ շեղբով, ուսերին անցքերով դաշույնը, որը լավ հայտնի է Լոռիբերդից, Մեծամորից, Կարմիրբերդից և այլն, անդրկովկասյան տիպի սուրը, Ճանկավոր, բրոնզե նետասլաքները, կախելու համար անցք ունեցող ծովային խխունջները և այլն:

Այդ ժամանակահատվածին վերաբերող Շիրակի հուշարձանների թվում հարկ է նշել ևս մի քանի հմայիլներ: Սրանցից մեկը բացվել է 1926թ. Պառնի-Գեղ գյուղում: Վերջինիս գույքը բաղկացած է սեանյան տիպի բրոնզե դաշույնից, բրոնզե օղից, սարդիոնե վեցանիստ ուլունքներից;

վանական նեռասլաքներից: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում մածուկից պատրաստված գլանաձև կնիքը, որի վրա պատկերված է թեք գծերով արված սրբազան ծառը: Ոչ պակաս հետաքրքիր հուշարձան է Արթիկի շրջանի Վարդաքար գյուղում գտնված ,,քարարկղը,, , որը 1959թ. ուսումնասիրել է Տ.Մ.Խաչատրյանը: Վարդաքարի գտածոները բաղկացած են սակրից, սևանյան տիպի դաշույնից, հարթ կացնից, երկժանիից, դուրից, զավազանի գլխից և ինչ-որ իրի բռնակից, սկավառակաձև թիթեղներից, քրոնզե կոճակներից և այլն: Բացի մետաղյա իրերից գտնվել են միականթ սափորներ և խոհանոցային նշանակության կճուճներ:

Ուշ բրոնզի 2-րդ փուլի հետաքրքիր նյութերը գտնվել են 1894թ. Ե.Մ.Թաղայշվիլու կողմից պեղված Որնակի /Ակներ/ դամբարանադաշտից: Ծավոք, այս առաջնակարգ հուշարձանը անհրաժեշտ է նկարագրություն չունի և այդ պատճառով դժվար է որևէ բան ասել թաղման ձևի և դամբարանային կառույցների մասին: Առանձնապես հետաքրքիր նյութեր գտնվեցին Ակների 16 դամբարանից: Զարդանմուշները ներկայացված են ոչ մեծ քրոնզե օղով, զանգվածեղ, միաձույլ ապարանջանով, սարդիոնե ուլունքներից մանյակով կառուցի խիտ նիզներով: Գտնվել է նաև քրոնզե լայն գոտի՝ պատված դրվագազարդ պարույրներով: Բացի այս զարդերից, առանձնահատուկ արժեք են ներկայացնում երկաթյա իրերը, որոնք ուշ բրոնզի վերջին փուլի երկաթյա առաջին գտածոներից են: Զենքի գտածոների թվին են դասվում դանակի բեկորը, բրոնզե կոթառով երկաթյա նիզակը, որից գտնվել են նաև վերը նշված ,,Ջինվորի դամբարանում,, , Զեմո-Ակշալայում և Սամթավրոյում, որոնք վկայում են Հայաստանի և Անդրկովկասի դամբարանային համալիրներում երկաթյա իրերի հանդես գալու մասին: Այս դամբարանում գտնվել են նաև կտրված ծայրով բրոնզե սուր, հարթ կացին և զանգվածեղ բրոնզե սակր:

Ոչ պակաս հետաքրքիր գտածոներ պատահականորեն հայտնաբերվել են Ախթալայի երկաթուղային կայարանի մոտ 1957 թ. կատարված աշխատանքների ընթացքում: Գտնված զանձը բաղկացած է յոթ հարթ կացիններից և յոթ զանգվածեղ սակրերից, որոնք դրված էին բրոնզյա թիթեղից պատրաստված կաթսայի մեջ: Որնակի և Ախթալայի գտածոները վկայում են Լոռի-Փամբակի մետաղագործական օջախի խոշոր դերի մասին՝ որպես մետաղով և մետաղյա իրերով հարևան շրջանները մատակարարողի:

ՕՇԱԿԱՆ: Օշականի դամբարանադաշտը ընկած է Աշտարակի շրջանի Օշական գյուղի կենտրոնում բարձրացող ,,դիդի կոնդ,, բլրի հյուսիսային լանջերին: Դամբարաններն իրենց ձևերով ստորաբաժանվում են մի քանի տիպերի, ոչ բարձր թմբերով խոշոր դամբանաբլուրներ, որոնց դամբանախցերը խոշոր քարաբեկորներից կառուցված քարարկղեր են՝ սալերից



Աղ. 57. Ուշ բրոնզի դարաշրջանի զտածոներ Արթիկից։

կառուցված երկաստիճան-եռաստիճան է կեղծ թաղ ունեցող ծածկով, կրոմլեխով շրջազծված քարարկղեր և առանձին կառուցված քարարկղեր:

Խոշոր դամբանաբլուրներում աճյունի դիրքը որոշել հնարավոր չեղավ: քանի որ վերջիններս հնում կողոպտված էին, և կմախքների դիրքը խիստ խաթարված էր: Ոչ մեծ կրոմլեխներում և առանձին քարարկղերում հանգուցյալները պառկեցվել են խիստ կծկված վիճակում, գլխով հյուսիս, արևելք կամ արևմուտք մի փոքր շեղվածությամբ: Անհատական թաղումների հետ հանդիպում են նաև խմբակային թաղումներ, հատկապես խոշոր դամբարաններում;, ուր գտնվել է ավելի քան 10 զանգ:

Դամբարանների հիմնական մասը վերաբերում է երկաթի դարաշրջանի վաղ փուլերին, և միայն 4-ը՝ ուշ բրոնզեդարին: Այստեղ գտնված նյութերը ներկայացված են հրաշալի սև, փայլեցրած անկանոն սափորներով՝ զարդարված ցանցաղաշտով, փայլանախշով թեք գծերով: Գտնվել են նաև խոշոր կնիքներ, որոնց մի մասը ունի սեղանաձև բռնակներ, ինչպես նաև ոչ մեծ սափորներ, որոնք կցված են եղել մեծ անոթների ուսերին /գտնվել են բեկորային վիճակում/, կազմելով յուրահատուկ կեռասներ: Անոթների մի մասի հատակը զարդարված է եղունգազարդով, հատիկազարդով արված շրջանակներով: Այս քուր խեցեղենը շատ լավ աղերսվում է Լճաշենի, Արթիկի, Կարմիրբերդի, Գեղարոտի և այլ խեցեղենի հետ ու թվագրվում է մ.թ.ա. 15-14-րդ դարերով:

Բազմազան են քննարկվող դամբարանների մեռաղյա իրերը: 95 դամբարանից գտնվել է բրոնզե նակատակալի բեկոր, որպիսիք լայն տարածում են ստանում ուշ բրոնզի 2-րդ փուլում: Այստեղ հանդիպում են ավելի ուշ շրջանի նյութեր: Քանի որ դամբարանը կողոպտվել էր և նյութերը խառնված էին աճյունի դիրքը որոշել հնարավոր չէր: Կարելի է ենթադրել, որ մինչև կողոպտվելը այստեղ կատարվել է երկրորդ թաղումը, որի ընթացքում խեցեղենի հետ մեկտեղ դրվել է մեկ օձագլուխ ապարանջան: Ուշ բրոնզեդարյան նյութերի մասին խոսելիս պետք է նշել 88 դամբարանից գտնված թուջնի արձանիկների տեսքով ոչ մեծ ցանցկեն կախիկները, որոնց մեջքին օղակներ են կցվել կախելու համար: Այս արձանիկները թեև հանդիպում են մ.թ.ա. 14-13-րդ դ.դ., ավելի բնորոշ են ուշ բրոնզի դարաշրջանի 2-րդ փուլին:

Հատկապես հատկանշական է ոչ մեծ բրոնզե դաշույնը, որն ունի եռանկյունաձև շեղբ, որի ամբողջ երկայնքով անցնում է միջանկյալ ող: Երկծյուղ դաստակը ամուր գրկում է շեղբի ուսերը: Ինչպես հայտնի է, երկծյուղ դաստակները հանդիպում են ուշ բրոնզի դարաշրջանում: Սրանց վաղ օրինակները հանդիպում են Լճաշենում: Այս օրինակը ավելի մոտ է Էջմիածնից գտնված սրին, որը թվագրվում է մ.թ.ա. 13-12-րդ դ.դ.-ով:

Բացի այդ, մի փոքր անփույթ ձևավորումը ենթադրել է տալիս, որ սա ավելի ուշ շրջանի արտադրանք է: Վերջին նշվածը, հնարավորություն է տալիս այս համալիրները թվագրել մ.թ.ա. 13-րդ դ. վերջով և մ.թ.ա. 12-րդ դ.-ով: դ.-ով:

Ներկայացվող փուլի հուշարձաններից Գոլովինոյի N 6 դամբարանը: Վերջինս երկու մեծ սալաքարերով ծածկված ,,քարարկղ,, է: Այստեղ գտնված տղամարդու աճյունը պառկեցվել է աջ կողքի վրա, կծկված վիճակում: Նրա ոտքերի տակ դրված էին 23 մեծ ու փոքր կավանոթներ: Դաստակի անրակոսկրի միջև դրված էր որնակյան օրինակը հիշեցնող հրաշալի սուր: Ոտքավանդակի մոտ գտնվեցին հիմքում ուղղանկյուն հանված քարով վանակոտ նետասլաքներ: Գոլովինոյից այս ժամանակաշրջանից գտնված զրահաշապիկը կաշվից տյուսված լանջապանակ է, որի վրա բրոնզե սկավառակներ, ծարմանդներ, կոճակներ են կարված: Որովայնի մասում կախվել է փոքրիկ բրոնզե զամերով փայտյա սկավառակ:

Երկաթի հանդես գալու վաղ փուլի համեմատաբար ավելի ուշ հուշարձան քացվել է Ինջանի շրջանի Խաշտարակ գյուղի մոտ: Խաշտարակի համալիրը բաղկացած է լավ պահպանված կտրված ծայրով, որից որն ունի կենտրոնական ող և զարդարված է սլաքաձև ակոսիկներով, երկշար պարույրով և այծի 2 պատկերներով: Միաձույլ, կիսակլոր դաստակը ավարտվում է կիսազնդաձև գլխիկով, որը զարդարված է աստղաձև զարդով: Այս համալիրի մյուս գտածոներից են խոշոր բրոնզե երկու սակրերը և չորս մանգաղները:

Ուշ բրոնզի 2-րդ փուլի հետաքրքիր գտածոներ կան Ղարաբաղում: Կարևորագույն հուշարձաններից Խոջալուի դամբարանաղաշտը՝ բաղկացած է մեծ և փոքր դամբանաբլուրներից, ինչպես նաև քարարկղերից, որոնք թվագրվում են ուշ բրոնզի վերջով և վաղ երկաթի դարով: Խոջանլուի դամբարանաղաշտի ուսումնասիրությանը անդրադարձել են բազմաթիվ հետազոտողներ: Սակայն առ այսօր առավել նշանակալից գտածոները ձեռք են բերվել դամբարանաղաշտերի առաջին ուսումնասիրողի՝ Է.Դյուլերի պեղումներից, որոնք ուսումնասիրել է Կ.Խ.Քուշնարյովան: Այս հուշարձանի դամբանաբլուրները բաժանվում են երեք խմբի և 6 առանձին քարարկղերի, որոնք վերաբերում են մ.թ.ա. 13-11-րդ դ.դ., 11-9-րդ դ.դ. և 8-7-րդ դ.դ.-ի: Այս գլխում կքննարկվեն փոքր, հողային թմբով դամբանաբլուրները, որոնք թվագրվում են մ.թ.ա. 13-11-րդ դ.դ.-ով, իսկ մնացածները կքննարկվեն հաջորդ գլուխներում:

Այս խմբին են վերաբերում քարահողային կամ քարե և ավազե թմբով ոչ մեծ դամբարանները, որոնց տրամագիծը հասնում է 10-20 մ, իսկ բարձրությունը՝ 1-3,5 մ: Դամբանաքցերը հիմնահողային են, երբեմն թաղումները կատարվել են անմիջապես մայր հողի վրա կամ դեղին ավազի

շերտերում և շրջազծվել գետաքարերով: Աճյունները դրվել են մեջքի վրա պառկած վիճակում: Հետաքրքիր հիմնահողային խցով դամբարան է պեղվել այստեղ: Դամբանաթումբը շրջազծված է կրոմլեխ հիշեցնող գետաքարերով: Հիմնահողային դամբարանը /չափերը 4 1,85 1,5/ ծածկված է փայտյա տախտակամածով: Դամբարաններից մեկում կմախքից բացի գտնվել են շատ կմախքի ոսկորներ: Դամբարանաթմբի այս խմբի գույքը աղքատ է, բաղկացած ոչ մեծ քանակությամբ կավանոթներից, բրոնզե շքասեղներից, կոճակներից, վանակատե և կայծքարե նետասլաքներից և սարդիոնե ուլունքներից:

Ոքր դամբարանաթմբերում շքեղ զտածոների բացակայությունը ցույց է տալիս, որ սրանք հասարակ համայնականների թաղումներ են և թվագրվում են մ.թ.ա. 13-11-րդ դ.դ.-ով:

Այս թվագրությունը չեն հակասում Կ.Խ.Քուշնարյովայի պեղած երկու դամբարանաթմբերը, որոնք ընկած են Նոր գյուղի խաղողի այգիների տարածքում եղած դամբանաբլուրի արևմտյան հատվածում: Այստեղ գտնվել են մի քանի կավանոթներ: Երկու դամբարաններն էլ ունեն փայտյա տախտակամածով ծածկված հիմնահողային դամբանախցեր: Այստեղ կծկված վիճակում պառկեցված աճյուններից բացի, դամբարաններից մեկում գտնվել են կովի վերջույթների ոսկորներ:

Այս դարաշրջանին են վերաբերում Խանլարի մի շարք դամբանաբլուրները: Սրանց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Ց.Ի.Գումելի՝ Ելենենդորֆի /Խանլար/ մոտ պեղված դամբանաբլուրը, որն ունեցել է 30 մ տրամագիծ և 4 մ բարձրություն: Լիցքի տակ բացվեցին 7 դամբանախցեր, որոնցից կենտրոնականը հիմնահողային էր /չափերը՝ 13×3, 5×2,8մ/: Երկայնական պատերին կից դրված են եղել մայրու և կաղնու 12-ական հենասյուներ: Խցի կենտրոնում դրված է եղել 55-60 սմ տրամագծով կաղնու հենասյուն: Վերջիններս պահել են ծածկի գերանները: Դամբարանի հարավարևմտյան անկյունում դրվել է դամբարանի տիրոջ աճյունը, որը եզրագծված էր գետաքարերով: Կենտրոնական դամբարանում կատարվել է խմբակային թաղում. գտնվել են 7 կմախք, ինչպես նաև ձիու ոսկորներ: Գտնված հարուստ գույքը բաղկացած է անդրկովկասյան տիպի բրոնզե սրից, սևանյան տիպի մի քանի դաշույններից, բրոնզե սայրերից, որոնցից մեկը երկսայր է, վահանի ումբոներից, վանակատե և կայծքարե նետասլաքներից, մեծ քանակությամբ պերճանքի իրերից՝ մարմարե գլխիկ, գլխածածկի զարդեր, խոշոր կախիկներ և մեդալիոններ, թռչունների տարբեր արձանիկներ, զդալաձև իրեր, խողովակաձև, լուսանաձև զարդեր, կոճակներ, բրոնզե անոթների մասեր, սարդիոնե և շաղախից ուլունքներ: Գտնվել է նաև կավանոթների ոչ մեծ խումբ՝ սափորներ, գավեր, քրեղաններ՝ զարդարված



Աղ. 58. Ուշ բրոնզի դարաշրջանի զենքեր և գործիքներ Սրթիկից:

խաչերով, կեռախաչերով, եռանկյունիներով և զիգզագներով: Հանդիպում են նաև կենդանակերպ՝ այծերի, ուղտի, ձիու, օձի պատկերներ: Այս զարդաձևերի մեծ մասն արված է գծազարդով, որն ագուցված է սպիտակ շաղախով, այդ ընդգծված առանձնանում է անոթների սև ֆոնի վրա:

Ուշ բրոնզի դարաշրջանի 2-րդ փուլի վաղ հուշարձանների թվին կարելի է դասել նաև Զուռնաբաղ գյուղի մոտ գտնված խմբակային թաղումները դամբարանները: Բացի խմբակային դամբարաններից, այստեղ հանդիպում են նաև միախուց դամբարաններ, որոնք ընկած են Խանլարից և Կիրովաբադից հարավ-արևմուտք, Կոշկար-շայ գետի ձախ ափին, Կիլիդաղ լեռան մոտ:

Մեկ այլ խումբ են կազմում Կեղաբեկյան հուշարձանները: Քննարկվող դարաշրջանի վաղ դամբարանները ներկայացված են քարարկղերով, որոնք պեղվել են Մենքենդի, Վերին Դաշքեսանի, Բայանի, Զովղարի և Դաշքեսանի մոտակայքում և թվագրված են մ.թ.ա. 13-11,րդ դդ.-ով: Հիմնականում այստեղ հանդիպում են կծկված, ձգված և նստած վիճակում թաղումներ; Բայան գյուղի մոտի դամբարաններում երբեմն հանդիպում են դիակիզված թաղումներ: Այս խմբի դամբարաններում գտնվել է գլխարկաձև գլխիկով շքասեղներից, ապարանջաններից, օղերից և մատանիներից կազմված պերճանքի իրերի ոչ մեծ խումբ: Զենքը, որպես կանոն, այստեղ բացակայում է: Սև, զորշ, կարմիր մակերեսով խեցանոթները ներկայացված են գնդաձև տափորներով, գավաթներով և քրեղաններով՝ երբեմն զարդարված եղունգանախշով և ակոս-գոտիներով:

Ուշ բրոնզեդարի այս մշակույթը, որը որոշ ուսումնասիրողների կողմից անվանվել է հյուսիս-հայկական, իսկ մյուսների կողմից՝ արևելավրացական, հիմնականում քնորոշ է Անդրկովկասի կենտրոնական և արևելյան շրջաններին և փաստորեն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասը: Այս երեք խմբերի հուշարձաններում, բացի ընդհանուր գծերից, կան նաև տարբերություններ: Այսպես, դարաբաղյան և Կիրովաբաղ-Խանլարյան խմբերում գերակշռող են դամբանաթաղերները, իսկ Կեղաբեկյան խմբում՝ քարարկղերը: Շատ նման են թաղման ծեսերը՝ անբյունի թաղումը և դիակիզումը: Միայն Կիրովաբաղ-Խանլարում նկատվում են մասնատված թաղումներ, որը նկատվում է նաև Հայաստանի քազմաթիվ շրջաններում:

Ուշ բրոնզեդարի տնտեսությունը և հասարակական հարաբերությունները

Մ.թ.ա. 2-րդ հազ-ի երկրորդ կեսից Հայկական լեռնաշխարհի և Անդրբրկովկասի ցեղերի կյանքում տեղի են ունենում զգալի փոփոխություններ, որոնք պայմանավորված էին միջին բրոնզեդարյան ժամանակաշրջանի տնտեսության ճյուղերի՝ երկրագործության, անասնապահության, արհեստների աննախընթաց աճով:

Երկրագործության և անասնապահության զարգացումը, բրոնզի ինդուստրիայի ամբ հանգեցրին արհեստների ծաղկմանը: Հին արևելյան աշխարհի հետ կապերը իրենց հերթին նպաստեցին երկրի մշակութային զարգացմանը:

Տնտեսության և արհեստների տարբեր ճյուղերի վերլուծությունը, ինչպես նաև բնակավայրերի, դամբարանների ձևերի և հոգևոր մշակույթի ուսումնասիրությունը վկայում է, որ տեղի է ունենում Հայկական լեռնաշխարհի ցեղերի մշակույթների համախմբում: Միաժամանակ բացահայտվում են տեղական արտադրական կենտրոնների յուրահատուկ ,,մասնագիտացումը,, արհեստներ: Նյութական արտադրանքի կտրուկ աճը ապահովում է տնտեսական լայն կապեր ինչպես Հայաստանում, այնպես էլ հարևան երկրների հետ, հիմնականում՝ հարավային, արևմտյան և հյուսիսային շրջանների հետ /Սիրիա, Վերին Միջագետք, Թալիշ, Էլամ-Զագրոս, արևմտյան Վրաստան, Հյուսիսային Կովկաս/:

Ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանում Հայաստանը, շնորհիվ իր աշխարհագրական բարենպաստ դիրքի, կարևոր դեր է խաղում Կովկասի, Առաջավոր Ասիայի ընդարձակ շրջանների հետ կապեր հաստատելու գործում: Գտնվելով արևմուտքի և արևելքի խաչմերուկներում, Հայաստանը կապող օղակ էր Պարսկաստանի, Փոքր Ասիայի, Սիրիայի, Կովկասի միջև: Դրա ապացույցն են Հայաստանի մի շարք հնավայրերից գտնված բարձրարվեստ ներմուծված գտածոները:

Հայաստանը նշված ժամանակաշրջանում ներմուծող պասիվ երկիր չէր: Հին Արևելքի երկրներից Հայաստանով ապրանք էր փոխադրվում դեպի Հարավային Կովկաս, Պարսկաստան կամ այլ շրջաններ, ապա Կովկասի, ինչպես և Հայաստանի արտադրանքը տարածվում էր Ասիա, Իրանական բարձրավանդակի արևելյան շրջաններ, Հյուսիսային Միջագետք, մինչև Պաղեստինի սահմանները, նպաստելով ոչ միայն ապրանքափոխանակությանը, այլև հոգևոր գաղափարախոսական տարբեր երևույթների տարածմանը:

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ: Հայաստանի բնակավայրերը հիմնականում ներկայացված են կիկլոպյան ամրոցներով և մի քանի հայտնի հնավայրերով: Սակայն բնակավայրերի և բնակարանների մանրամասն ուսումնասիրությունը ժամանակում է դրանց սակավ պեղված լինելու պատճառով: Դրանցից է

Լենինականի բնակավայրը, որը թվագրվում է ուշ բրոնզի և երկաթի դարով; Այստեղ պեղված կացարանները հատակագծում ուղղանկյուն են, կավածեփ հատակներով: Դրանք ծածկվել են մոխրի և փայտածուխի հաստ շերտով՝ վրա-կայելով հրդեհի պատճառով տանիքի փլուզման մասին: Աենյակներից մեկը, ուր գտնվել է ծուլման կաղապար, ծուլման մի արհեստանոց է, որի մեջ եղել են նաև վառարանի մնացորդներ և այրված խարամ: Լենինականի շրջանում նշված բնակավայրը միակը չէ: Քաղաքի հյուսիսարևելյան մասում գտնվող Կումայրի ամրոցի պեղումների փամանակ հայտնաբերվել են կիկլոպյան շարվածքով ամրոցի պարսպապատեր և ուշ բրոնզի ժամանակաշրջանով թվագրվող խեցեղեն առարկաներ: Շիրակի ուշ բրոնզեդարյան հուշարձաններից պետք է նշել Հառիճի ամրոցը, որը, ինչպես նշվել է, հիմնադրվել է վաղ բրոնզեդարում: Ինչպես ցույց են տալիս դարավանդներում գտնված նյութերը, այն գոյատևել է նաև ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանում: Ամրոցի 3-րդ դարավանդում բացվել են հատակագծում ուղղանկյուն մի քանի կացարաններ՝ նեղ մուտքով: Այս կացարանների պատերը խ շարված են տարբեր մեծության տուֆով, կավե շաղախի օգնությամբ:

Ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանի նյութեր գտնվել են Շիրակի մի շարք բնակավայրերից՝ Հոռոմ, Ծառնաղբյուր, Քեթի և այլն, որոնք, հիմնադրվելով վաղ բրոնզեդարում և լքված մնալով միջին բրոնզի դարաշրջանում, վերաբնակեցվել են ուշ բրոնզեդարում: Նույնատիպ ամրոց է Էլարի ամրոցը, ուր վաղ բրոնզեդարյան մշակութային շերտի վրա գտնվել են մ.թ.ա. 1^{4}-1^{3}-րդ դ.դ. խեցեղեն իրեր, սա վկայում է, որ վերջինս բնակեցված էր նաև ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանում: Խոսելով ամրոցների մասին, անհրաժեշտ է նշել, որ ուշ բրոնզի դարում նրանց քանակն զգալիորեն աճում է նախորդ շրջանի համեմատությամբ: Մեծ թվով ամրոցներ հայտնաբերվել են Սևանի ավազանում, Լոռիում, Զանգեզուրում, հյուսիսարևելյան Հայաստանում և այլ վայրերում: Իրենց քնությամբ այս ամրոցներն ունեին Ֆունկցիոնալ տարբեր նշանակություն: Դրանց մի մասը ամրոց-բնակավայրեր են, օրինակ՝ Հոռոմը, Քեթին, Ծառնաղբյուրը, Կառնուտը, Էլարը, Լճաշենը, Կամոն և այլն, մյուսները՝ անասուններին հարձանումից պահելու կետեր: Ամրոցների մի մասը պաշտպանական փոքրիկ կառույցներ էին, որոնք պահակակետեր էին ծառայում խոշոր ամրոցների, բնակավայրերի արվարձանները պաշտպանելու նպատակով: Դրանք կառուցում էին լեռնանցքներում, մարզերի սահմաններում, գետահովիտների մուտքերում և այլուր:

Բնակավայրերից հիշարժան են Արարատյան դաշտի և Սևանի ավազանի մի քանի հուշարձանները, օրինակ, Արմավիր բլուրի բնակավայրը, ուր հետազայում կառուցվել է Արգիշտիխինիլի ամրոցը: Բնակավայրը հիմնադրը-



Սղ. 59. Ուշ բրոնզի դարաշրջանի զենքեր և գործիքներ Արթիկից:

վել է մ.թ.ա. 13-12-րդ դ.դ.: Այստեղ կառուցվել են քարե բազմաթիվ կացարաններ և արհեստական քարայրներ: Պեղումներից գտնվել են ժայռափոր, քառանկյուն հատակագծով 12 կացարաններ, որոնք, ինչպես և Մեծամորի նման կառույցները ունեցել են պաշտամունքային նշանակություն: Նույն տիպի շինություններ բացվել են նաև Նոր Արմավիր բլուրում: Այս ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հաստատագրելու, որ երկու բլուրների վրա եղել են երկու տարբեր բնակավայրերի հետքեր: Հետաքրքիր է Մեծամորի բնակավայրը, որի ամրաշինական համակարգը ընդգրկում է շուրջ 30 հա տարածք: Այստեղ մեծ բլուրի ժայռերի վրա, ուր կառուցվել է միջնաբերդը, հայտնաբերվել է արտադրական կառույցների մի համալիր՝ ձուլարան-արհեստանոցներ: Մեծ բլուրի զագաթը և փոքր բլրակը հիմնականում կառուցապատվել են պաշտամունքային շինություններով: Արտադրական շինություններում գտնվել են մեծ թվով կլոր կամ ուղղանկյուն թոնիր-հալոցներ: Հայտնաբերվել են նաև փուքսի կավից անոթներ, հալանյութի ոսկրե և կավե քրիկետներ: Ոչ պակաս հետաքրքիր են նաև պաշտամունքային ժայռափոր սրբարանները, որոնք նման են վերը հիշատակված Արմավիր բլուրի շինություններին: Եզակի են միջնաբերդի հյուսիսարևելյան լանջի շինությունները, որոնք կառուցվել են մ.թ.ա. 2-րդ հազ. վերջին, մ.թ.ա. 1-ին հազ. սկզբին: Դրանք մի մեծ համալիր են կազմում՝ հատակագծում ուղղանկյուն, 60-80 մ քառ. տարածքով շենքի տեսքով: Այստեղ, կենտրոնական մասում, տեղադրված են կավածեփ զոհարաններ, իսկ հարավային պատի տակ՝ կավածեփ տարբեր նշանակությամբ բաժանմունքներ: Արևելյան կողմը զբաղեցված է խոշոր կավե կանացի կուռքերով և սյունաձև զոհարաններով ու այլ պաշտամունքային կառույցներով՝ ձոնված պտղաբերության մայր աստվածուհուն:

Հայաստանի ուշ բրոնզեդարյան հուշարձաններից հետաքրքիր է նաև Կարմիր բլուրի նախաուրարտական բնակավայրը: Այդ բնակավայրը կազմված է առանձին մեծ շինություններից, որոնք ունեցել են հում աղյուսե պատեր՝ բարձրացված քարե հիմքի վրա: Յուրաքանչյուր համալիր ծածկված էր մեկ ընդհանուր տանիքով: Բնակարանային համալիրները բաղկացած էին մի շարք կացարաններից: Կացարանները օժտված են տնտեսական և պաշտամունքային օջախներով, հացահատիկի հորերով, մարդակերպ կանացի արձաններով և կուռքերով, տնտեսական ու արտադրական նյութերով: Կարմիր բլուրի այս նախաուրարտական բնակավայրի շինարարական և ճարտարապետական առանձնահատկությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս համարել, որ դրանք պատկանել են նահապետական ընտանիքի:

Այս շինությունների ստորին հորիզոններում հայտնաբերվել են մետաղաձուլական արհեստանոցի հետքեր՝ փայտածխի և մոխրի հզոր շեր-

տերի ուղեկցությամբ, ուր հայտնաբերվել են հալոցներ, բրոնզի խարամ, որոնք վկայում են մետաղամշակման արհեստանոցի գոյությունը: Հետաքրքիր է այն, որ նույն շերտում հայտնաբերվել են երկաթի մնացուկներ, որոնք վկայում են այն մասին, որ Հայաստանի ուշ բրոնզեդարում վարպետները միաժամանակ արտադրում էին երկաթի առարկաներ:

Հայաստանի ուշ բրոնզեդարյան կիկլոպյան ամրոցների շարքում մեծ տեղ է գրավում Լճաշենի ամրոցը, որն ընդգրկում է 55 հա տարածք: Այստեղ հետազոտողների կողմից գտնվել են տարբեր ժամանակաշրջանների /վաղ բրոնզից մինչև միջնադար/: Նյութեր: Դրանց մեջ ուրույն տեղ են գրավում ուշ բրոնզի հավաքածուները: Նշված ժամանակաշրջանում Լճաշենի ամրոց-բնակավայրը եղել է հզոր ցեղային միության առաջնորդների նստավայր, որը կեխունի անվանումով հիշատակվում է ուրարտական ավելի ուշ արձանագրություններում: Լճաշենի ամրոցի պաշտպանական պարիսպների երկարությունը 5 կմ է, լայնությունը՝ 3-4 մ: Արևելյան և հյուսիսարևմտյան հատվածներում, տեղանքից զգալի բարձր բլրաշարերի վրա, կառուցված են երկու հզոր միջնաբերդեր, որոնք իրարից անջատվում են 200 մ լայնությամբ խոր կիրճով: Նշված միջնաբերդերը ամրացված են անկյունային աշտարակներով և մի քանի տասնյակ որմնահեցերով, վերածելով այն հզոր պաշտպանական համակարգի: Ամրոցի ամբողջ տարածքը, ինչպես նաև միջնաբերդը, զբաղեցրել են մեծ ու փոքր կացարաններ և օժանդակ տնտեսական շինություններ: Բնակելի համալիրները հիմնականում կազմված են 3-4 սենյականոց տներից; ուր գտնվել են օջախների բազմաթիվ հետքեր: Այս շինություններում գտնվել են փայտե սյան մնացորդներ, քարե խարիսխներ, որոնք վկայում են, որ կացարանների տանիքները գլխատան ձև են ունեցել, պատկանելով մեծ ընտանիքի; Լճաշենի ամրոցների կացարաններից հայտնաբերվել են երկաթի ծուլարան-արհեստանոցի հետքեր, որոնք, ինչպես և Կարմիր բլուրի նախաուրարտական ժամանակաշրջանի նյութերը, վկայում են, որ Հայաստանի ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանի բրոնզ ծուլող վարպետները մ.թ.ա. 13-12-րդ դ.դ. սկսել էին մշակել երկաթը:

<u>ԴԱՄՔԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐ:</u> Հայաստանի ուշ բրոնզեդարյան դամքարանները աչքի են ընկնում իրենց ձևերի բազմազանությամբ: Ստորգետնյա դամքանաքցի սովորական և առավել տարածված ձևը, այսպես կոչված, քարարկղն է, որի կողային պատերը խոշոր քարերից էին, երբեմն կոպիտ մշակված և ծածկում էին խուցը մի քանի սալերով: Քարարկղի ձև ունեցող այս դամքարաններն ունեին մի քանի տարբերակներ, որոնք կապվում են հայթայթվող շինությունների և թաղման ծեսի հետ: Երբեմն մեկ ճակատային պատը բաց է մնում, ստեղծելով յուրօրինակ մուտք, որի միջոցով,



1



2



3

Աղ. 60. Ուշ բրոնզի դարաշրջանի զարդեր Արթիկից:

դամբարանը ծածկելուց հետո, ներս էր բերվում հանգուցյալը՝ ուղեկցող նյութով: Վերջում այն փակվում էր մեծ քարերով և ծածկվում հողով: Հայաստանում նման դամբարաններ կան Լճաշենում, Շամիրամում, Ռեդկին Լագերում, Շամշադինում և այլուր: Որոշ դեպքերում կողային պատերն ավելի ցածր էին և ճակատայինի հետ հավասարեցնելու համար շարված էին մի քանի շարք մանր քարերով: Կառուցված դամբարանը ծածկված է սալերով: Մի այլ դեպքում դամբարանախուցը հիմնահողային էր, սակայն նրա կողապատերի վերին եզրը մայր հողի վրա շարված էր մանր քարերով՝ ստեղծելով յուրահատուկ շրջանակ, որի վրա դրվում էին ծածկասալերը:

Քարարկղերի հիմնական մասը զուրկ էր լիցքից: Սակայն հանդիպում են դամբարաններ, որոնք թաղումից հետո մինչև ծածկվելը լցվում էին քարահողով: Քարարկղաձև դամբարանների հետ մեկտեղ հանդիպում են հիմնահողային հատակագծում ուղղանկյուն և քառանկյուն տարբեր մեծությունների՝ խցեր, որոնք ծածկվում էին քարե սալերով կամ գերաններով: Հայաստանի ուշ բրոնզեդարյան դամբարանների վերգետնյա ձևավորումը բնորոշվում է կրոմլեխներով, որոնք հանդիպում են Արագածոտնում, Շիրակում, Լոռիում, Շամշադինում, Զանգեզուրում, Տավուշում և այլուր: Իրենց ձևերով կրոմլեխները, ինչպես և միջին բրոնզեդարում, բաժանվում են մի քանի տիպի, որոշ մանրամասներով կրկնելով նախորդ շրջանի ձևերը: Ուշ բրոնզեդարյան կրոմլեխների տրամագծերը հասնում են երկու և ավելի տասնյակ մետրերի: Կրոմլեխների շրջագծի մեջ ներգծված դամբարանային կառույցները բաժանվում են մի քանի ձևերի: Ամենատարածվածը քարարկղերն են, հանդիպում են դամբանաքլուրներ, ինչպես նաև հիմնահողային դամբանախցեր: Կրոմլեխներից աչքի են ընկնում Շամիրամի լավ մշակված տուֆե ցանկապատերով դամբարանները, որոնց սալերին կան կենդանիների և երկնային նշաններ:

Շիրակի դամբարանային կառույցներում ուշ բրոնզում հանդես է գալիս թաղման մի նոր ձև՝ կատակոմբները, որոնք հայտնի են Արթիկից, Հառիճից, Ոսկեհասկից, Լենինականից և այլն: Միայն Արթիկում պեղվել է ավելի քան 600 կատակոմբ: Դրանք ունեն ուղղահայաց հորան, որը տանում է դեպի տուֆի մեջ փորված դամբանախուցը: Հորանը հատակագծում քառակուսի է կամ կլորավուն: Այն ստորին մասով ձուլվում է դամբանախցին՝ ստեղծելով մի ընդհանուր շինություն: Դամբանախուցը սովորաբար ձվաձև է՝ հազվադեպ՝ ուղղանկյուն: Հորանի մուտքը ծածկվել է կոնաձև քարե խցաններով, որոնց երկարությունը 1,2-1,7 մ է: Այս խցանները կարմիր կամ սև տուֆից են և բերված են այլ հանքավայրից, քանի

որ տուֆը վարդագույն է: Եզակի դեպքերում հանդիպում են մուտքի ծածկի այլ ձևեր, երբ դրանք լցվել են մանր քարերով և ապա ծածկվել սալաքարերով: Դամբանախցերին բնորոշ են ուղղանկյուն զաղտնարան-խցերը, որոնք կցվել են հիմնական դամբանախցին:

Հայաստանի ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանի մի խումբ դամբարանների վերգետնյա ամենանշանավոր հատկանիշը դամբանաքուրն է: Դամբանաքուրները լայնորեն տարածված են Տավուշում, Արցախում, Լոռիում, Արագածոտնում, Սևանում և այլուր: Երբեմն 4-5 մ բարձրության թմբով նման կառույցները շրջանագծվում են կրոմլեխաշարով՝ 30-40 մ տրամագրծով: Դամբանաքուրների խցերը, ըստ Լոռիի, Օշականի, Լճաշենի նյութերի, ունեն 5-10 մ երկարություն, 2,5-3 մ լայնություն, մինչև 3 մ խորություն: Դամբանախցերը, որոնք փորված են հողի մեջ, երեսապատված են խոշոր, կոպիտ մշակված 3-7 տ սալերով: Դրանց ծածկերը կազմված են սալերի երկ կամ եռաստիճան շարվածքով, ստեղծելով կեղծ թաղ: Թաղի և ծածկի քարերի կշիռը հասնում է 4-5, երբեմն 10 տ: Թաղը, որպես կանոն, հենվում էր երկշար գերանների վրա, իսկ պատերը երբեմն երեսապատվում էին տախտակներով: Հանգուցյալները ծածկված խուց էին քերվում դրոմոսի միջոցով, որը հետագայում լցվում էր հողով և մնում դամբանթմբի տակ:

Բազմաձև են ոչ միայն թաղման կառույցները, այլև ծեսերը: Դրանք ամբողջովին համապատասխանում էին ննջեցյալների սոցիալական դիրքին: Սևանի ավազանի, հատկապես Լճաշենի, Ներքին Գետաշենի նյութերը վկայում են, որ ցեղային առաջնորդների դիակները տեղադրվում էին սալերի վրա, որոնք լծված էին եզներով: Երբեմն սայլեի հետևից կապում էին ձիեր: Դամբարաններում տեղ չզբաղեցնելու համար դամբանախցում դրվում էին միայն այդ կենդանիների գլուխները: Մինչդեռ Լոռիի, Մեծամորի դամբարաններում հայտնաբերվել են հեծյալ ձիերի ամբողջական կմախքներ: Դամբանախուցը լցվում էր հսկայական հարստությամբ, զինանշաններով, զենքով, խեցեղենով, արդուզարդով: Թաղման ժամանակ կատարվել են մարդկային և կենդանիների զոհաբերություններ, որոնք հաստատագրվել են Արցախի, Լճաշենի և այլ վայրերի դամբանաքուրների պեղումների ժամանակ: Դամբանթումբը լցնելուց առաջ կատարվում էր հոգեհացի արարողություն, որի մասին են վկայում խցի ծածկասալերի վրա և թմբի մեջ հայտնաբերված մոխրի, փայտածուխի, կենդանիների ոսկորների, ամբողջական, ինչպես նաև կոտրատված անոթների բեկորները: Քարարկղերի և հիմնահողային թաղումների ծիսակարգը ըստ էության չնչին տարբերությամբ նույնն էր: Հանգուցյալների կմախքները, որպես կանոն, կծկված են աջ կամ ձախ կողքի վրա: Խմբակային թաղումներում երբեմն հանդիպում են նստած կամ մեջքի վրա պառկած կմախքներ: Դրանք ունեն արտոնյալ



Սղ.61. Ուշ բրոնզի դարաշրջանի զարդեր Արթիկից։

դիրք. նրանց մոտ մեծ քանակի աշխատանքային գործիքներ, զենք և այլ ուղեկցող նյութեր կան: Հայաստանի ուշ բրոնզեդարյան թաղումներում առանձին դեպքերում հանգուցյալների գլխի տակ կամ խցում հանդիպում են գետաքարեր, որոնք վկայում են դամբարանը ,,ջրով մաքրելու ,,ծեսի մասին: Այս ձևը հատկապես տարածված է Գուլովինոյի, Քաղսիի, Արթիկի և այլ դամբարաններում: Մի շարք դամբարաններում, հատկապես Լճաշենում, Արթիկում պահպանվել է դեռևս միջին բրոնզի ժամանակաշրջանից /Կիրովականի մեծ ժամբանաբլուրը/ եկող այն սովորությունը,երբ հանգուցյալներին թաղում էին փայտե կամ կաշե պատգարակների վրա: Պատգարակի ոտքերն ունեին մինչև 0,4-0,5 մ բարձրություն:

Բացի դիաթաղումից /կծկված, նստած, պառկած, ձգված դիրքով/ այս ժամանակաշրջանի դամբարաններում հաստատագրված է դիամանատում,ինչպես նաև գլխի առանձին թաղում նույն խցում: Երբեմն գլուխները դրվում էին քրեղանի մեջ: Բնորոշ սովորություններից է, երբ դամբարանի մեջ կամ դամբանաթմբի վրա դրվում էին քարե ֆալլոսներ, սյուներ, մարդակերպ արձաններ: Ֆալլոսներ և սյուներ հանդիպում են Շամիրամում, Արթիկում, Լճաշենում, Պատաշարում, Զաղալուում: Մարդակերպ արձաններ գտնվել են Շամիրամից, Կարմիր բլուրից, Մեծամորից, Կարմիր բերդից և այլն: Այդ քարե կոթողների մի մասը հարդարված է խաչերի, պարույրի պատկերներով, որոնք կապվում են արևի պաշտամունքի հետ և հնարավորություն են տալիս ենթադրել որոշ թաղման ծեսերի հիմքի մասին, ուր ընկած է հարություն առնելու գաղափարը: Ինչպես դամբանաբլուրների վրա, այնպես էլ շարքային թաղումներից հայտնի են հոգեհացի հետքեր, որը վկայում է այդ սովորության լայն տարածման մասին բնակչության բոլոր խմբերի մեջ:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵՎԵՐԸ: Ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանի հուշարձանների ուսումնասիրությունը հետաքրքիր նյութեր է տալիս պատկերացում կազմելու Հայկական լեռնաշխարհի ցեղերի տնտեսական կյանքի մասին: Հատկապես արագ է զարգանում երկրագործությունը: Ընդլայնվում են ցանքատարածքները, որին նպաստում են մի շարք հանգամանքներ: Այստեղ հիմնական դեր ունեն հարթավայրերի կրկին բնակեցման փաստը, երբ լեռնային վայրերից լրացուցիչ բնակչություն էր իջնում դաշտավայրեր, ինչպես և անտառհատումը՝ նոր ցանքատարածություններ յուրացնելու համար: Զարգանում է նաև այգեգործությունը, խաղողագործությունը, քանջարաբոստանային կուլտուրաների մշակումը: Դրան նպաստում է արորի կատարելագործումը: Նախորդ շրջանների համեմատությամբ զգալիորեն ընդլայնվում են ոռոգման ցանցերը, որոնց հետքերը առկա են Արագածի հարավային լանջերում, Մեծամորում և այլուր: Քննարկվող ժամանակաշրջանում հիմնական վարող գործիքն արորն էր, որի պատկերը

պահպանվել է Արցախի Խոջալուի դամբարանաշտից հայտնի մի կավաթեկոր վրա: Այստեղ պարզ երևում է փայտի արորի և նրան քաշող ցուլի պատկերը: Արորն ունի սրածայր ելուստ, իսկ վերին մասում՝ խաչաձև բռնակը մածկալին հենելու համար: Նման արորներ հայտնի են Սյունիքի ժայռապատկերներում: Հողը փխրեցնելու համար օգտագործվում էին նաև բրոնզե և քարե բրիչներ: Ուշ բրոնզեդարի հիմնական հնձող գործիքներից են բրոնզե մանգաղները, որոնք լայնորեն հայտնի են Կիրովականից, Լուսաձորից, Խաչտարակից և այլն: Դրանց հետ մեկտեղ ավանդաբար օգտագործվում էին քարե ներդիրներով փայտե մանգաղներ: Հնձված բերքը դիզվում էր փայտե եղաններով: Հայաստանում Լճաշենից, Վարդաքարից, Ներքին Գետաշենից և այլ վայրերից գտնված բրոնզե եղանները, ըստ ամենայնի, խորհրդանշում էին առաջնորդի զինանշանները և տնտեսության մեջ չէին կարող օգտագործվել, քանի որ նրանց առամները բարակ էին և կարող էին ծռվել ծանրության տակ: Հավաքված բերքը տեղափոխվում էր զրաստների և տարբեր ձևերի սայլերով, որոնք հայտնի են Լճաշենից և Ներքին Գետաշենից: Զնայած այստեղ սայլերը պատրաստվել են թաղման համար, անկասկած, նման սայլեր տարածված էին ամբողջ Հայաստանում և գործածվել են տնտեսական գործունեության ընթացքում: Գտնված սայլերը 2-4 անիվներով են: Քառանիվ սայլերն ունեն ոչ մեծ թափք /1×2 մ/, որը նպաստում էր նրա շարժունակությանը: Անիվները պատրաստվում էին 3-4 խոշոր տախտակներից և ազատ պտտվում էին անշարժ սռնու շուրջը: Սայրերից մի քանիսն ունեին թաղակապ ձևի ծածկ: Երկանիվ սայլեն ունեին քաղաքի տեսք, որոնց երկարությունը կազմում էր 3 մ: Քաղաքի վերջնամասում տեղադրված էր թափք /1×1,5 մ/, որի տակ տեղադրված էր կլոր վերջավորություններով անշարժ սռնին: Այս ձևն ավելի շարժունակ էր, քան քառանիվը և գործնականում կիրառելի էր ցանկացած պայմանների համար:

Կալսելու համար օգտագործվել են քարե կամեր, որոնք հայտնի են Լճաշենից: Սակայն, ի տարբերություն նախորդների, սրանք ավելի կատարելագործված էին, ստորին աշխատակողի վրա կային խոր ակոսներ, որոնք առավել արդյունավետ էին դարձնում կամի աշխատանքը:

Ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանում Հայաստանում, Անդրկովկասում երկրագործությանը զուգահեռ շարունակում է զարգանալ անասնապահությունը: Կենդանիների բնական ամը պահանջում էր կերի բազայի ընդլայնում, արոտավայրերի ընդարձակում: Այդ նպատակով ձմեռվա կերի համար հեռու խոտհարքի տարածքներից խոտը սայլերով ու քաշաններով բերվում էր բնակավայր, իսկ ամառանը օգտագործվում էին ամենահեռավոր արոտավայրերը: Սակայն հոտերի հետագա քանակական մեծացումը սահմանափակ



Նկ. 62. Ուշ բրոնզի դարաշրջանի զտածոներ նկ. 1-7 Լոռի-քերդից. նկ. 8-12 Գեղարոտից:

վում էր արոտավայրերի չբավարարելու պատճառով: Այդ իսկ նպատակով ուշ-բրոնզեդարյան ժամանակաշրջանում սկսվում է ջրի պաշարների կուտակումը արոտավայրերում, կառուցվում են ջրամբարներ: Ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանում հիմնականում ձևավորվում է հետագա անասնապահությունը՝ հասնելով իր զարգացման գագաթնակետին: Երկրագործությամբ և անասնապահությամբ զբաղվել են, թեպետ մասնակիորեն, թե դաշտավայրային, թե լեռնային շրջաններում: Այդ է վկայում հնավայրի հարուստ ոսկրաբանական նյութը: Չնայած դրան, ոսկրաբանական նյութը կարող էր լինել սննդի մնացորդ, ինչպես նաև ծիսական անհրաժեշտություն դամբարանային հավալիրներում: Այս բոլորը որոշակի պատկեր է տալիս անասնապահության քանակական և որակական վիճակի մասին: Եթե ոսկրաբանական ողջ նյութը հավաստիացնում է քանակի մասին, ապա որակականը որոշելու համար ընդունված է հետևյալ հարաբերակցությունը: Մանր եղջերավորների գերակշռության մասին է վկայում 1:5 և ավելի բարձր համեմատականը խոշորի նկատմամբ, իսկ 1:4 և ավելի ցածրը խոսում է խոշորի գերակշռության մասին: Հետաքրքիր է նշել, որ բավականին մեծաքանակ ոսկրաբանական նյութերում /Կարմիր բլուրի վաղ շերտ/ գտնվել են եզների ոսկորներ, որոնք խոսում են կենդանիների ամորձատման մասին: Բացի կովերի և եզների ոսկորներից, գտնվել են գոմեշների բազմաթիվ ոսկորներ /Շամշադին, Սևանի ավազան/ , որոնց ընտելացումը սկսվել է դեռևս վաղ բրոնզի դարաշրջանում: Լայնորեն տարածված էր նաև ձիաբուծությունը: Ձին օգտագործվում էր ոչ միայն հեծնելու, այլև մարտակառքերին լծելու համար: Դրա ապացույցն են Լճաշենից և Լոռի բերդից հայտնի բրոնզե մանրակերտերը, ինչպես նաև Մեծամորի և այլ դամբարաններից հայտնի ձիերի ոսկորները:

ԱՐՀԵՍՏՆԵՐ: Ուշ բրոնզեդարյան Հայաստանում արհեստները մեծ զարգացում են ապրում: Դա պայմանավորված էր ամբողջ տնտեսության զարգացմամբ, տոհմացեղային ավազանու հզորացմամբ, որի պատվերներով պատրաստվում էին զենքեր, զարդեր, ծիսական առարկաներ և այլն: Նման սոցիալ-տնտեսական վերելքը նպաստում էր նաև բարձր մշակույթի զարգացմանը, որը առաջավոր ասիական մշակույթի անքաժան մասն էր:

ՄԵՏԱՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ: Տնտեսության և արհեստների զարգացումը, մինչցեղային քախումները, պատերազմները Հին արևելյան պետությունների միջև հանգեցրին զենքի նոր տեսակների, առանձին գործիքների ստեղծմանը: Վերջինս էլ իր հերթին նպաստում էր մետաղամշակման զարգացմանը, որի հետևանքով բրոնզի ծուլումը հասավ իր զարգացման գագաթնակետին: Բրոնզ ծուլող վարպետները պատրաստվում էին բազմաթիվ բարձրորակ զեն-

քեր, զարդեր, պաշտամունքային առարկաներ, որոնք հարդարում էին տոհ-
մացեղային ավագանու սրբարանները և աղոթատեղիները:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ: Հայաստանի ուշ բրոնզեդարյան հնագիտա-
կան նյութերում զգալի տեղ են գրավում աշխատանքային գործիքները, որոնք
օգտագործվում էին ամենատարբեր առարկաներ պատրաստելու համար: Նկատ-
վում է, որ արհեստավորական արտադրանքի զարգացման հետ տեղի է ունե-
նում գործիքների պատրաստման խիստ մասնագիտացում: Վերջինս ուղիղ հա-
մեմատական է դրանց կիրառական նշանակությանը: Մի շարք գործիքներ վը-
կայակոչում են ատաղձագործության զարգացման մասին: Հատկապես հետաքրքիր
են Արթիկից ու Լճաշենից գտնված ատաղձագործի գործիքները, որոնք
թվագրվում են մ.թ.ա. 14-15-րդ դ.դ. Արթիկի դամբարաններից մեկում,
բացի առանձին գործիքներից գտնվել են սակր, ձեռքի տափակ կացին, չորս
տարբեր դուրեր և սղոց: Նման սարքաների հավաքածու կա Լճաշենում՝
սակր, ձեռքի կացին, դուր: Սրանք շքեղ բրոնզե երկժանու հետ միասին
գտնվել են բրոնզե կաթսայի մեջ: Արթիկի դուրերն ունեն նեղ աշխատան-
քային մակերես, ինչպես նաև պոչուկ՝ փայտե բռնակը ամրացնելու համար:
Ըստ կառուցվածքի դրանք օգտագործվել են նուրբ աշխատանքների համար:
Շիրակում, բացի Արթիկից, հայտնի են լայն աշխատանքային մակերեսով
խողովակաձև դուրեր, որոնք նմանվում են Լճաշենի և Կիրովականի
օրինակներին: Ի տարբերություն Արթիկի խմբի, այս դուրերը օգտագործ-
վել են կոպիտ խոշոր առարկաներ պատրաստելու համար: Փայտամշակման
համար բնորոշ գործիքներից են Անդրկովկասում լայն տարածում ունեցող
սակր-կացինները, որոնք բացի Լճաշենից, Արթիկից հայտնի են մի շարք
հնավայրերից: Դրանք օգտագործվել են նաև իբրև զենք: Մինչև մ.թ.ա.
12-րդ դ. այս սակրերը միատիպ են և գոյատևում մինչև մ.թ.ա. 10-րդ դ.
կրում են ձևաբանական փոփոխություն կոթաձի մասում, իսկ եզրերը ավելի
են նեղանում: Այս գործիքները լայնորեն օգտագործվել են անտառահատման,
գերաններ ճեղքելու, տախտակ պատրաստելու և այլնի համար: Տարբեր նը-
շանակություն ունեն նաև տաշուրազները, որոնք շարունակում են միջին
բրոնզի դարի նույն գործիքների զարգացած ձևերը՝ օգտագործվելով
փայտամշակման և կաշեգործության մեջ: Հետաքրքիր և կարևոր գյուտ է
Արթիկից հայտնաբերված սղոցը: Այն բրոնզե թիթեղ է՝ կլոր անցքերով՝
փայտե բռնակը ամրացնելու համար, իսկ երկու կողերը հարդարված են մա-
նրը ատամներով: Ավելի քազմազան են նշված շրջանի ուշ փուլի աշխատան-
քային գործիքները, որոնք հարատևում են մինչև մ.թ.ա. 12-13-րդ դ.դ.:
Այսպես, Ախթալայի գանձերից մեկում, մի կաթսայի մեջ գտնվել են յոթ
սակր և նույնքան էլ տաշուրազ: Վարդաքարի պեղումներից հայտնաբերվել
են կացին, սակր և դուր: Հանդիպում են բրոնզե մանգաղներ, որոնք հայտ-



Աղ. 63. Ուշ բրոնզի դարաշրջանի նյութեր Սևքարայից։

նաքերվել են Խաշտարակից, Կիրովականից, Լենինականից, Արթիկից, Լուսաձորից, Կետաքեկից, Գալաքենտից և այլ հնավայրերից: Դրանք բոլորն էլ կտրված են քրոնզե թիթեղից և ունեն դեպի ներս արված միակողմանի սայր: Մեջքի լայն մասում կան երկու-երեք անցքեր՝ փայտե բռնակները ամրանալու համար: Հետաքրքիր նյութեր են գտնվել՝ կապված բուն մետաղամշակման, մետաղաձուլման հետ: Բացի կացիններ ձուլելու կաղապարներից /Լենինական, Կարմիր բլուր, Կետաքեկ և այլն/ շատ հետաքրքիր զորձիքներ են հայտնաբերվել Արթիկի և Կարմիր բլուրի պեղումներից: Այսպես, Արթիկի դամբարաններից մեկում գտնվել են տարբեր ձև ունեցող հալոցներ և գդալներ: Դրանք լավ թրծված են և ներսի մասի ճաքերին կան ձուլված մետաղի մնացորդներ: Այս նյութերը համահնչյուն են Կարմիր բլուրի մետաղագործի արհեստանոցից հայտնի օջախ ձուլարանի, հալոցների, խողովակների- փքախողովակների, խարամի և այլ գտածոներին:

ՁԵՆՔ: Հայաստանի նշված շրջանի զենքերը ներկայացված են տարբեր թրերով, սակրերով, գուրզերով, նետասլաքներով, նիզակներով, դաշույններով և այլն: Դաշույնները հիմնականում բաժանվում են երկու խմբի՝ պոչուկով և խողովակաձև: Պոչուկավոր դաստակով դաշույնները տերեվաձև են, տափակ, սուր կամ կլորավուն ծայրերով: Կարճ, տափակ պոչուկը երբեմն ունենում է անցք՝ բռնակի ամրացման համար: Նման դաշույններ հայտնի են Էլառից, Լճաշենից, Արթիկից, Մեծամորից, Կարմիր-բերդից և այլն: Այս դաշույնների տարբերակները երբեմն ուսերին ունեն 2-3 անցք՝ բռնակը ամրացնելու համար:

Ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանում հանդես են գալիս միաձույլ խողովակաձև դաշույններ: Դրանք ունեն ձգված եռանկյունու տեսքով շեղբեր, որոնք երբեմն զարդարվել են երկայնական ակոսներով: Դաստակի կիսագնդաձև գլուխները հարդարված են տարբեր ձևի անցքերով, որոնք ազուցվել են փայտով: Նման դաշույններ հայտնի Լճաշենից, Արթիկից, Կիրովականից, Նոյեմբերյանից, Լուսաձորից, Քեթիից, Առաջաձորից: Տարածված են նաև միջին բրոնզի ժամանակաշրջանից հայտնի առաջավորասիական տիպի դաշույնները, որոնց օրինակները հայտնի են Էջմիածնից, Արթիկից: Քննարկվող դարաշրջանի վերջում հանդես են գալիս Սևան-դարաբաղյան տիպի դաշույնները: Դրանք ունեն միաձույլ փոքրիկ պոչուկով ոչ մեծ շեղբեր: Փայտե երախակալները շեղբից միացնելու հատվածում զոտեվորվել են բրոնզե թիթեղով, իսկ առանձին ամրացվող գլխիկները՝ ներդիրներով: Այդ դաշույնները լայնորեն տարածված են Անդրկովկասում, իսկ սկսած մ.թ.ա. 10-9-րդ դ.դ.-ից նրանց բրոնզե շեղբերը փոխարինել են երկաթով:

Նշված ժամանակաշրջանում, բացի դաշույններից, լայնորեն տարածված են եղել նաև սրերը: Դրանցից վաղագույնները մ.թ.ա. 14-13-րդ դ.դ. թվագրվող երկժանի ծայր ունեցող դաստակով օրինակներն են, որոնք հայտնի են Լճաշենից, Էջմիածնից: Այս սրերն ունեն նեղ, միջանկյալ ողով օժտված շեղբեր և կլորացող ուսեր: Երկժանի բռնակի ելուստները կիպ ընդգրկում են շեղբի ուսերը՝ միացնելով դրանք միմյանց: Սրանց հետ մեկտեղ հանդիպում են առաջավորասիական տիպի շրջանակաձև դաստակով միաձույլ թրեր, որոնք հայտնի են Լճաշենից, Արթիկից, Ալավերդուց: Սրերի վերջին տիպն են ներկայացնում, այսպես կոչված, Անդրկովկասյան միաձույլ խողովակաձև դաստակով թրերը, որոնք գոյատևում են մինչև երկաթի դարը: Սրանց բռնակները խողովակաձև են, ուսերը՝ կլորացող, ունեն լայն շեղբեր, որոնք ավարտվում են կլոր ծայրով: Շեղբերը զարդարված են երկար ակոսներով, որոնց վերին մասերում փորագրված են երկրաչափական կամ կենդանական պատկերներ: Նման թրեր հայտնի են Դիլիջանից /Գուլովինո, Մեծ Զալ/, Խաչթառակից, Արծվաբերդից, Այգեձորից, Ակներից, Արթիկից, Լենինականից և այլն:

Մյուս զենքի տեսակներից լայն տարածում են ունեցել նիզակները, վերջիններիս ծայրերը ունեն խողովակաձև կոթառ, փետրաձև շեղբեր: Դրանք հայտնի են մ.թ.ա. 14-13-րդ դ.դ. թվագրվող հուշարձաններից՝ Կամո, Նորաղուգ, Արթիկ, Լենինական, Գետաբեկ, /Կեղաբեկ/ և այլն: Մ.թ.ա. 13-րդ դարից հանդես գալիս տերևաձև շեղբերով նիզակները, որոնց խողովակաձև կոթառները շեղբի միացման տեղում ունեն կլորավուն կամ տափակ միջանկյալ ողեր: Նման նիզակներ հայտնի են Լճաշենից,Արթիկից՝ շարունակելով հարատևել մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակը:Ուշ բրոնզեդարի վերջում Հայաստանում հանդես է գալիս խողովակաձև կոթառով նիզակների մի այլ խումբ, որոնց կոթառները առանց կարի են և միաձույլ Դրանք գտնվել են Արթիկում, Դիլիջանում, Նոյեմբերյանում, Շամշադինում /Նորաշեն/, տարածված են նաև Վրաստանում /Սամթավրո, Նախեթիա/:

Գտնվել են քարից և մետաղից մեծ քանակությամբ նետասլաքներ: Դրանց վաղ օրինակները կան Լճաշենում, Արթիկում: Բրոնզե թիթեղից կտրված այս նետասլաքներն ունեն կարճ ճանկեր և պոչուկներ: Դարաշրջանի վերջում հանդես են գալիս խոշոր ճանկերով, միջանկյալ ողով պոչուկավոր նետասլաքներ՝ հարատևելով նաև երկաթի դարում:

Տարածված զենքի տեսակ էին սակրերը, որոնք օգտագործվել են նաև փայտամշակման համար: Դրանցից վաղերը հայտնի են Լճաշենից;Արթիկից և աչքի են ընկնում կոթառի և իրանի հարթությամբ: Ալավերդուց Ակներից, Խաչտարակից, Վարդաքարից, Սառնաղբյուրից և այլ վայրերից



Աղ. 64. Ուշ քրոնզի դարաշրջանի խաչաղեն նկ. 1,2,4-11, Խուրջին-հողերից, նկ. 3 Էջմիածնից:

հայտնի ավելի ուշ ժամանակաշրջանի սակրերը կոթառի վերին մասում ունեն ուռուցիկ, իսկ կողային մասում՝ սեպաձև ելուստներ, որոնք իջնում են իրանի վրա: Այս սակրերը տարբերվում են իրարից շեղբերի և ուսերի ձևերով՝ բաժանվելով մի քանի տիպերի:

Ուշ բրոնզեդարյան Հայաստանում գտնվել են նաև մի քանի մարտական և ծիսական սակրեր: Դրանցից են Լճաշենի և Խանլարի օրինակները, որոնց կոթառի վերնամասը զարդարված է մի քանի կոնաձև ելուստներով: Բացի այս փոքր չափի սակրերից, Կարմիր-Բլուրից գտնվել է մետաղաձուլական քարե կաղապար, որի վրա արտահայտված են վերը նկարագրված ելուստների տեղերը: Սրանց ծիսական նշանակության մասին է վկայում խեթական Բողազքյոյի քարձրաքանդակների վրա թեշուբ աստծո ձեռքին պատկերված սակրը, որը ժամանակագրորեն մոտենում է Լճաշենի օրինակներին: Բացի այս տեսակներից Արթիկում և Մեղրաձորում գտնվել են սակրերի այլ օրինակներ: Արթիկի սակրի իրանը կլոր է, իսկ կոթառը՝ լայն, ձվաձև կտրվածքով, որի մակերեսը հարդարվել է զիգզագ ելուստներով: Շեղբի վերին մասում կան կլորավուն երկու անցքեր: Արթիկի երկրորդ սակրը ունի փոքր-ինչ ծռված իրան, կոթառը զարդարված է եղևնանախշով և սվաստիկայով: Նրա վերին մասում կա ուռուցիկ ելուստ: Մեղրաձորի սակրը իր ձևով նման է Արթիկի առաջին օրինակին, սակայն կոթառի վրա տեղադրված է առյուծի քանդակ:

Տարածված զենքերից էին գուրզերը, որոնց հիմնական մասը գնդաձև կամ տանձաձև էին: Նման գուրզերը հիմնականում հարթ են, առանձին օրինակներ հարդարված են ուռուցիկ ելուստներով: Դրանք հայտնի են Լճաշենից, Արթիկից, Կիրովականից, Կամոյից: Այս տարածված ձևերի մեջ Լճաշենից հայտնի են նաև առանձին գուրզեր, որոնց կողերին ամրացված են ուռուցիկ տերևաձև ելուստներ:

Բացի հարձակողական զենքից, նշված ժամանակաշրջանում Հայաստանում լայն տարածում ունեին զենքի պաշտպանական տեսակները: Դրանք բաժանվում են երկու խմբի: Մի մասը կաշվից կամ հաստ կտորից զրահաշապիկներ են, որոնց կրծքի և որովայնի հատվածում կարված են տարբեր չափի բրոնզե վահանակներ, ծարմանդներ, կոնակներ: Դրանք հայտնի են Լճաշենից, Արթիկից, Կիրովականից և Խուրջին հողերից: Դրանց կատարյալ ձևերը, որոնք ունեն իրանից կապվող զոգնոցի տեսք, հայտնի են Գուլովինոյից: Այն դիմացից, բացի կոնակներից և ծարմանդներից հարդարվել է նաև փայտե սկավառակներով և ավելի խոշոր բրոնզե սկավառակներով: Նման զրահի մասեր հայտնի են Լոռի բերդից, Մեղրաձորից, Ջանգեզուրից: Չնայած այս ժամանակի սաղավարտներ չեն հայտնաբերվել, սա-

կայն Լճաշենից և Լոռի քերդից գտնված մարտակառքերի մանրակերտերի թափքերին կանգնած զինվորների գլուխներին կան սաղավարտներ, որոնք կիսակլոր գլխարկի տեսք ունեն և վերնամասում ավարտվում են կտարով: Այս սաղավարտները, որոնք թվագրվում են մ.թ.ա. 14-13-րդ դ.դ., նման են Բողազքյոյից և Կարքեմիշից հայտնի սաղավարտների ձևերին: Այս փաստը վկայում է խեթական և Հայկական լեռնաշխարհի ուշ բրոնզեդարյան բնակիչների զենքի տեսակների նմանության մասին: Վերը նշված զենքերի մի մասը քարձրարվեստ ձևավորված է, որը հնարավորություն է տալիս նաև այս գտածոները վերագրելու կիրառական արվեստի նմուշների շարքին: Քրերի շեղբերը հարդարված են ոլորանախշով, կիսալուսնաձև, կայծակի, այծերի պատկերներով և այլ նախշազարդով: դաստակների կիսաբոլորակ գլխիկները զարդարված են սեպաձև, կլորացող, միջանցիկ կտրվածքներով, ուր տեղադրվել են գունավոր փայտեր: Հատկապես հետաքրքիր են Արքիկի, Դիլիջանի, Մեղրաձորի սրերը և դաշույնները, որոնց շեղբի ամբողջ երկարությամբ արված են օձաձև ակոս-նախշեր: Այստեղ տեղադրվել են այլ գույնի մետաղից կամ գունավոր շաղախից լցված օձի պատկերներ՝ ստեղծելով յուրօրինակ երանգավորում: Հատկապես հարուստ զարդամոտիվներով հագեցված են Կիրովականից, Լճաշենից հայտնի դաշույնների պատյանները: Դրանց մակերեսը հարդարվել է սեպաձև և կլոր կտրվածքներով, ուռուցիկ կամ կտրված ուղղանկյուններով, շեղանկյուններով՝ վարդյակներով՝ օձերի պատկերներով, որոնց մի մասը երկգլխանի է: Նոր Բայազետի դաշույնի ստորին մասը զարդարվել է նատած առյուծի քանդակով:

ԶԻՄՄԱՐՔ: Զնայած նրան, որ ծիաբուծությունը Հայաստանում զոյություն է ունեցել դեռևս էնեոլիթում, և որպես ընտելացված կենդանի ծին օգտագործվել է վաղ բրոնզում, ձիասանձերը, որպես ձիասարքի բաղադրիչներ, հանդես են գալիս ուշ բրոնզի ժամանակաշրջանից: Այս հանգամանքը կարելի է բացատրել միայն նրանով, որ ավելի վաղ ժամանակաշրջանում դրանք կաշվից էին և, բնական է, կաշին չէր կարող պահպանվել: Ձիավարժության խնդիրները հասկանալու համար անհրաժեշտ է կանգ առնել ձիուն ենթարկելու ձևերի վրա: Ձիուն ենթարկելու հիմնական միջոցը հեծյալի ձեռքերն են, երբ կատարվում է սանձափոկի օգնությամբ համապատասխան գործողություն: Այն մի կողմից միանում էր գլխասանձին, իսկ մյուսով՝ մետաղական սանձերին: Այս գլխասանձն ամրացված էր այնպես, որ կենդանին հնարավորություն չուներ երախից հանելու մետաղական սանձերը: Բուն մետաղական սանձը քաղկացած էր լկամից, որը տեղադրվում էր ձիու բերանում, պալյայից /կենդանու բերանում տեղադրվող տարբեր ձևի ելուստներ, որոնք երկու կողմերից ամրացվում էին լկամին, այժմ ձիավարժության մեջ չեն կիրառվում/: Վերջիններիս միանում էին փոկերը: Այս սանձերը, որոնք դասակարգվում են ըստ պալյայների ձևերի, նշված ժամա-



Աղ. 65. Ուշ ցրոնզի դարաշրջանի զտածոներ, նկ. 1,6,10-12,17 Լուսաձորից, նկ. 2,4 Նոյեմբերյանից, նկ. 5,9 Դիլիջանից, նկ. 3,7,8, 13-16 Խաշտարակից:

նակաշրջանում բազմազան են, և դրանց որոշ մասը հարատևել է երկաթի դարում: Դրանք բոլորը բաղկացած են երկմասանի շարժական լկամներից և բաժանվում են չորս տիպի: Առաջին տիպն են ներկայացնում Լճաշենում և Արթիկում գտնված մ.թ.ա. 14-13-րդ դ.դ. սանձերը, որոնց պսալյանները սկավառակաձև են՝ զարդարված ծակոտկեն երկրաչափական նախշերով: Երկրորդ տիպը հայտնի է մ.թ.ա. 15-13-րդ դ.դ. թվագրվող Վերին նավերից գտնված սանձով, որի պսալյան կենտրոնում լայնացող ուղղանկյուն թիթեղ է: Վերջինիս միջով անցնում է երախակալի օղակաձև ծայրը՝ փոկանին ամրացնելու նպատակով: Երրորդ տիպի սանձերը հայտնի են Արթիկի մ.թ.ա. 12-11-րդ դ.դ. դամբարաններից: Դրանք զուրկ են պսալյաններից և երախակալի ծևերով նմանվում են առաջին տիպի սանձերին: 4-րդ տիպին պատկանող սանձերը հայտնի են Արթիկից, Կալաքենդից և այլ վայրերից: Սրանք չունեն պսալյաններ, իսկ երախակալները ավարտվում են կլոր ելուստներով՝ փոկերը ամրացնելու համար: Պսալյանների բացակայությունը չի նշանակում, որ առանձին օգտագործման ժամանակ զուրկ էին այդ մասերից, և դրանք, հավանաբար, ըստ ավելի ուշ շրջանի սանձերի, ունեցել են ոսկրե կամ եղջյուրե պսալյաններ, որոնք չեն պահպանվել: Չորս տիպերի համարյա միաժամանակ հանդես գալը վկայում է, որ դրանք պատրաստվել են ձին Արևելյան սանձերն ընդօրինակելով: Վերջիններս ունեն ավելի վաղ թվագրվում: Բացի սանձերից, Լճաշենում, Արթիկում և այլ վայրերում գտնվել են մեծ թվով խոշոր ճարմանդներ, որոնք կապվում, ամրացվում էին ոչ միայն զրահների, այլև ձիու ծածկոցների վրա: Հայտնաբերվել են նաև տարբեր բոժոժներ, օղակներ, որոնք օգտագործվել են փոկերը միացնելու և ձիու վզից կախելու համար:

ԽԵՑԵՂԵՆ: Հայաստանի ուշ բրոնզեդարյան հուշարձաններից գտնվել են հսկայական քանակի խեցանոթներ, որոնք ամենազանգվածային գտածոներն են և հանդիպում են բոլոր հնավայրերում:

Այս ժամանակաշրջանին առաջին փուլի մ.թ.ա. 14-13-րդ դ.դ. հուշարձանների /Լճաշեն, Արթիկ, Գեղարոտ, Քարաշամբ, Թալին և այլն/ խեցեղենի հիմնական մասը ներկայացված է տարբեր մեծության անկանոն սափորներով, ըրեղաններով: Դրանք ունեն սև, փայլուն մակերես, զարդարվել են փայլեցման եղանակով արված ցանցկեն զարդով, ալիքաձև, զիգզագաձև և այլ հորինվածքներով: Հիմնական մասը պատրաստվել է դուրգով, կան նաև ձեռաձեռ օրինակներ: Բացի կենցաղային խեցեղենից, հաճախ հանդիպում են ուղղանկյուն, խոշոր կտրվածքներով կավե ծխամաններ, որոնք հայտնի են Լճաշենից, և մեկ կամ երկու նույն նշանակությամբ ծխանոթներ, որոնք զարդարված են կտրված եռանկյունիներով, կետազարդ ու սեպաձև նախշերով, օձի պատկերներով: Նման իրեր հաճախակի են հան-

դիպում Լճաշենում, Թարմիր բլուրի նախաուրարտական շերտերում, Լոռի բերդում և այլ հուշարձաններում:

Սկսած ուշ բրոնզեդարի երկրորդ փուլից նկատվում է, որ անոթների մի մասը, պահպանելով հին ձևերը, հանդես է գալիս խամրած- անփայլ մակերեսով: Միաժամանակ հանդես են գալիս նոր տիպի անոթներ՝ իրենց բազմաթիվ ձևերով: Դրանցից են նեղ բերանով, երբեմն սեղանաձև երկու կանթերով սափորները /Լճաշեն, Արթիկ, Թուրջին հողեր և այլն/:

Հատկապես մեծ խումբ են կազմում մեկ կամ երկկանթ սափորները, որոնք ունեն բարակ խեցի, որակյալ թրծում, զարդարված են ուղղահայաց, հորիզոնական, ալիքաձև, զիգզագաձև, եռանկյունի ներծկված նախշերով: Մեծ տեղ են գրավում տարբեր չափերի քրեղանները, որոնք զարդարված են հորիզոնական ալիքաձև, զիգզագաձև նախշերով: Այս անոթների մի մասն ունի օղակաձև հատակ: Դրանք հայտնի են Արթիկից, Հառիճից, Քեթիից, Կիրովականից, Գառնիից, Մեծամորից և այլ հնավայրերից: Սրանց հետ մեկտեղ կան անոթների եզակի ձևեր, եռոտանի և տարբեր սափորներ՝ զարդարված մարտակառքերի, զոհաբերվող կենդանիների, առյուծների, խոյերի, եղջերուների պատկերներով: Այդ անոթները հայտնի են Սանահինից, Արթիկից, Նոյեմբերյանից և այլն:

ԶԱՐԴԵՐ: Հայաստանի ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանի հուշարձաններում հանդիպում են մեծ թվով տարբեր զարդեր, որոնք պատրաստված են ոսկուց, արծաթից, բրոնզից և քարերից: Նշված ժամանակաշրջանի վաղ փուլի մետաղի զարդերը հատկապես հայտնի են Լճաշենից, Արթիկից, Լոռի բերդից: Լճաշենի դամբարաններում հայտնաբերվել են մեծ թվով ոսկյա կոճակներ, որոնց մի մասը ազուցված է նշված քարերով՝ կազմելով հատիկաշար նախշազարդ: Հանդիպում են նաև մետաղյա /ոսկյա/ մանր օղակներով եռակցված հուլունքներ: Կան բոլորանախշերով կախիկներ: Բացի ոսկյա զարդերից, կան սարդիոնից, ազաթից կլոր, նշաձև, գնդաձև, վեցանիստ հոյակապ հղկված և հազարների հասնող նույն քարերից հատարակ հուլունքներ: Նման հուլունքներ գտնվել են Գեղարոտում, Լոռի բերդում, Արթիկում և համաժամանակյա այլ հնավայրերում:

Հետաքրքիր են Արթիկից հայտնի զարդերը՝ բրոնզե լարից ապարանջանները, բունքազարդերը, գնդաձև, նշաձև, երկկոն կախիկները, որոնք համեմատական են լճաշենյան օրինակներին: Գտնվել են նաև շղթաներով կախիկներ, թռչունի պատկերներ, տարբեր կոճակներ: Վերջիններիցս առանձնանում են ներսի կողմից մածուկով լցված օրինակները: Դրանք հանդիպում են Լճաշենում, Ռեդկին, լագերում, Թուրջին հողերում և այլուր: Առանձին խումբ են կազմում բրոնզե շքասեղանները, որոնց գլխի



Աղ. 66. Ուշ քրոնզի դարաշրջանի զտածոներ նկ. 1,18 Կիրովաբադից, նկ. 3,10 Այգեձորից, նկ. 2,4-9,11-17, 19,20 Խուրջեն հոգերից:

ները զնդաձև, կոնաձև ելուստավոր զարդարանք են ներկայացնում:

Ուշ բրոնզեդարի երկրորդ փուլի զարդերը հանդիպում են համարյա բոլոր շրջաններում և հատկապես Արթիկում, Անի, Պեմզայում, Սևանի ավազանում, Լոռի քերդում: Ջարեարի մեջ հանդիպում են միաձույլ հաստ թիթեղից և լարից պատրաստված ապարանջաններ: Դրանք զարդարված են եռանկյունիներով, ուղղանկյունով և զորտերի պատկերներով: Եզակի գյուտ է Արթիկի ճակատակալը /դիադեման/, որը զարդարված է սվաստիկայի, բուլորապտույտի և այծի պատկերներով: Նույն տեղից գտնված շքասեղները զարդարված են կենդանիների, կիսալուսինների տարբեր պատկերներով: Արթիկում, Լոռի քերդում, Կարմիր բլուրում և այլուր գտնվել են մեծ թվով ճարմանդներ, կրծքազարդեր, թռչնակերպ և զորտի պատկերներով կախիկներ, սարդիոնից, ազաթից ուլունքներ:

ԱՐՀԵՍՏԸ ԵՎ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ: Նյութական-արտադրական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման հետ մեկտեղ զարգանում են Հայաստանի ցեղերի հավատալիքները և արվեստը: Այն հոգևոր պաշտամունքի կարևորագույն ձևերից է:

Երկրագործական պաշտամունքը պաշտամունքներից հնագույնն է, և կարևորագույնը: Սրա մեջ յուրօրինակ տեղ է գրավում հողի՝ մայր-աստվածուհու խորհուրդը: Դրա լավագույն արտահայտություններից են Կարմիր բլուրի նախաուրարտական շերտի կծմիր և սև տուֆից կանանց խոշոր արձանները: Դրանք ,,նստած,, կանանց արձանիկներ են, ունեն նեղ կոնք, առանց վզի ուղղանկյուն գլուխ, դեպի վեր բարձրացող ձեռքեր: Այդ կուռքերի իրանները զարդարված են բույսերի, նաև ծառերի պատկերներով, իսկ մեկի վրա արված է խաչ: Երկրագործության, պտղաբերության պաշտամունքի հետ է կապվում Մեծամորից գտնված նստած կնոջ կավե արձանիկը: Նրա դիմային մասերամասներով ընդգծված փոքրիկ գլուխը տեղադրված է խոշոր վզի վրա; իրանը զարդարված է հասկանախշով: Նույն պաշտամունքի հետ են կապվում Մեծամորի քարե խոշոր կուռքերը, որոնք նման են Կարմիր բլուրի կանանց արձանիկներին: Երկրագործական պաշտամունքի մյուս խորհրդանշանը ցուլի կերպարն է:

Նկատի առնելով ցլի կերպարին վերագրված պաշտամունքային բազմապիսի հատկություններ, պետք է կանգ առնել միայն վերջինիս երկրագործական պաշտամունքին վերաբերող բնույթի վրա: Վարող, ցանող ցուլի կերպարը հաճախակի է հանդիպում քանդակի և գրաֆիկ պատկերների ձևով: Ինչպես նշվեց վերևում, վարող ցուլի պատկեր հայտնի է Խոջալիից գտնված խեցու վրա: Նման պատկերներ մեծ քանակով կան Սյունիքի ժայռապատկերներում: Այս պաշտամունքի մասին են վկայում Լճաշենից հայտնի բրոնզե

հոյակապ արձանագրությունները: Երկու խոշոր արձանիկներ ձուլվել են խորխոր-ձև պատվանդանների վրա: Դրանցից մեկի վրա տեղադրված են այծերի, իսկ մյուսը՝ թռչնի քանդակներ: Դարաշրջանի վերջում հանդես են գալիս նաև քրոնզե զավազանների ցլակերպ գլխիկներ /Կալաքենտ, Առաջաձոր, Տոլորս և այլն/:

Անասնապահական և որսորդական պաշտամունքը արտացոլված է Հայաստանի, Անդրկովկասի հուշարձաններից հայտնի կարծրազարդերից մի քանիսի պատկերներով, ուր պատկերված են այծեր և տարբեր կենդանիներ: Հատկապես վայրի և ընտանի կենդանիների պատկերներ շատ կան Արագածի, Գյունեյի, Վարդենիսի, Գեղամա լեռների ժայռապատկերներում՝ ներկայացված որսի տեսարաններով, որոնք կատարվում են միայնակ կամ խմբային ձևերով: Երբեմն հանդիպում են որսի տեսարաններ՝ շների ուղեկցությամբ, կան նաև ձուղակներ կենդանիներ բռնելու համար:

Խոսելով որսորդական պաշտամունքի մասին, պետք է նշել Լճաշենում և Լոռի բերդում հայտնաբերված մարտակառքերի մանրակերտները, որոնց լծված ձիերի առջև տեղադրված են սրընթաց վազող երջերուների պատկերներ: Վերջիններիս հետապնդում է մարտակառքի թափքին կանգնած զինվոր որսորդը:

Երկրագործական պաշտամունքի մասին խոսելիս անդրադարձանք ցուլի կերպարի Ֆունկցիաների բազմազանությանը: Պաշտվում էր նաև նրա՝ ընտանի կենդանիների բազմացնելու հատկությունը: Բացի ցուլից, Հայաստանում պաշտվել են նաև մանր երջերավոր կենդանիները: Այծերի, այլ կենդանիների քանդակներ են գտնվել Ներքին Գետաշենում և Արթիկում: Դրանք հատկապես պաշտվում էին ոչ միայն իբրև կենդանի, այլև որպես ուշխար հոտի առաջնորդ:

Ջրի պաշտամունքը սակավաթիվ Հայաստանում ունեցել է հսկայական նշանակություն և իր հերթին սերտորեն առնչվում էր երկրագործ-անասնապահական, պտղաբերության պաշտամունքի հետ: Հատկապես մեծ էր ցուլի դերը, որը տվյալ պարագայում խորհրդանշում է երկնային ջուրը: Պատահական չէ, որ վիշապ քանդակների վրա կան ցուլի գլուխներ, որոնց բերանում հոսում է ջուրը: Գեղամա լեռների ժայռապատկերներում հանդիպում են երկնային ցուլի պատկերներ, որոնք երկրի վրա ջուր են հեղում և իրենց նշանակությամբ կապված են վիշապների վրայի պատկերների հետ: Ջրի պաշտամունքի հետ կապված էր օձը: Այն շատ է հանդիպում երկփող անոթների և ծիսական տարբեր սպասքի վրա, որոնք հայտնի են Լճաշենից, Արթիկից, Նոյեմբերյանից և այլ վայրերից:

Արևի պաշտամունքը նույնպես կարևորագույններից է: Ինչպես և այլ ժողովուրդների մոտ, Հայաստանում այն կապված էր անիվի գաղափարի

հետ: Այդ են վկայում սկավառակաձև՝ արևը խորհրդանշող խաչով և սվաստիկայով տարբեր կախիկները: Արևի պատկերի նմանությունը անիվին իր հետ բերեց նաև արևի, քայլի, մարտակառքի իմաստը, որի վրա արևի սկավառակը իր շրջապտույտն էր անում: Լճաշենից հայտնի բրոնզե վերը նշված մանրակերտի լուծը զարդարված է արևի խորհրդանշանը արտահայտող թռչունի քանդակով: Արևն էին խորհրդանշում նաև ձիերը, որոնք երկնային էակներ էին համարվում: Թռչունը նույնպես լավ հայտնի է հայկական քանահյուսությունից և նույնպես խորհրդանշում է արևը: Բացի Հայաստանից /Լճաշեն, Լոռի բերդ, Հացառատ, Վերին Նավեր/ թռչունի կախիկներ և խարսխի կամ սրացող ձողերի վրա տեղադրված բրոնզե թռչուններ հայտնի են Հին Արևելյան մի շարք հնավայրերից: Այս բոլոր թռչունները սնամեջ քանդակներ են, պատկերված են ընդգծված մանրամասներով; անգամ փետուրները: Լճաշենի մի քանի արձանիկների խարիսխներին կան նստած գորտի պատկերներ: Հայաստանում ավելի քիչ է հանդիպում արևի մի այլ խորհրդանիշ հանդիսացող կենդանու՝ առյուծի պատկերը: Բացի Մեղրաձորի սակրի և Կիրովականի դաշույնի պատկերներից, առյուծներ հանդիպում են նաև այլ առարկաների վրա: Հետաքրքիր են խոշոր, ձանձրակեն ճարմանդները Կիրովականից, Առաջաձորից, Ջովաղարից, որոնց երկու կողմերում վեր են բարձրանում առյուծների շորսական գլուխներ:

Սայլի փայտե մասերի ծայրապանակների /Լճաշեն/ վերին հատվածում քանդակված են առյուծների մեկական պատկերներ, որոնց դիմային կողմում կան նստած գորտի մանրակերտեր:

Այս պաշտամունքի բացատրման համար եզակի նմուշ է Լոռի բերդից հայտնաբերված բրոնզե Ֆալիկ քանդակով շերեփը: Այստեղ սվաստիկայով զարդարված զինվորը խորհրդանշում է, հավանաբար, արևի աստվածը: Նույնն նշանակություն ունի, ըստ երևույթին, նաև Շիրակավանից գտնված խարիսխաձև պատվանդանի վրա առյուծի հետ կանգնած զինվորը:

Արևի պաշտամունքի հետ սերտորեն կապվել են նաև մարդու պատկերացումները երկնային և տիեզերական զաղափարների մասին: Հետաքրքիր են երեք աշխարհների մասին պատկերացումները՝ երկնային /վերին/, երկրային /միջին/ և ջրի /ստորին/ հասկացություններով: Պտղաբերության պաշտամունքի հետ են կապվում վերը նշված բոլոր պաշտամունքային հավատալիքները, որոնք միավորվում են անասնապահ-հողագործական պաշտամունքի համակարգում: Ինչպես նշվեց, Կարմիր բլուրից, Մեծամորից գտնվել են մայր-երկիր խորհրդանշող արձաններ, որոնք իրենց նախշազարդերով առնչվում են պտղաբերության հետ: Միևնույն ժամանակ դրանք կրում են հողի պտղաբերության սկզբնավորման խորհուրդ: Այս իմաստի հետ են կապվում արևի և ջրի խորհրդանշանները: Լճաշենի սայլերի ծայրապանակների պատկերները կապվում են արևի և ջրին: Նույն

համադրություն ունեն Լճաշենի թռչունների արձանները, որոնց պատվանդանների վրա կան գորտի արձաններ: Դարելի է խոսել Հին Հայաստանի բնակիչների մոտ պտղաբերության պաշտամունքի այն տմաստի մասին, որի գլխավոր խորհրդանիշեն են արևը, ջուրը:

Բարդ կերպար ունեն երջերուի քանդակները Լճաշենից, Լոռի բերդից, Տուրուսից: Եղջերուի և այծի կերպարները սերտ կապված են ամարոպի, կայծակի, երկնային ջրի գաղափարի հետ, որոնք պտղաբերության պաշտամունքի բաղադրամասերն էին: Եթե հիշենք, որ Լճաշենի եղջերուի խարսխաձև պատվանդանի ծայրերը զարդարված են թռչունի ոճավորված պատկերներով, ապա պարզ կդառնա, որ վերջիններս խորհրդանշում են արևը, կայծակը, ջուրը՝ այսինքն պտղաբերությունը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Հնագիտական պեղումները և Հին արևելյան գրավոր աղբյուրները ստույգ նշում են, որ ուշ բրոնզեդարում խիստ ուժեղանում է սոցիալական և գույքային շերտավորման պրոցեսը: Ռազմական և քրմական վերնախավի թաղումները ուղեկցվում էին հսկայական հարստություն ներկայացնող առարկաներով և իրենց պարունակությամբ տարբերվում էին շարքային համայնականների թաղումներից, որոնք, որպես կանոն, ուղեկցվում են պարզ ու հասարակ սակավաթիվ խեցանոթներով, զարդերով, զենքի և գործիքների նմուշներով: Միաժամանակ առավել հաճախ են հանդիպում խմբակային թաղումները, երբ առաջնորդի հետ թաղում էին տասնյակ ստրուկներ, երբեմն ցեղակիցներ՝ տիրոջը անդրշիրիմյան կյանքում սպասարկելու համար: Այս տեսակետից ցնորոշ են Լճաշենի դամբարաններից մեկում սայլի լծի տակ ցուլերի փոխարեն տեղադրված մարդկային զանգերը: Մարդաբանական տվյալներով ստրուկների կմախքները երբեմն տարբերվում են հիմնական թաղածներից, որ վկայակոչում է ստրուկներին այլ երկրներից բերելու մասին: Այս երեվույթը բացատրվում է Հայաստանում կատարվող խոր սոցիալական փոփոխությունների հանգեցնող ստրկության լայն տարածմամբ: Տերերի հետ ստրուկների թաղման փաստը մի կողմից վկայում է Հայաստանում ստրկատիրական հարաբերությունների, մյուս կողմից՝ պարզունակ ստրկության մասին: Հետագայում ստրուկները գնահատվում էին ավելի քարձր և չէին զոհաբերվում: Ստրուկներ էին դառնում առաջին հերթին ռազմագերիները: Հայաստանի հարավային շրջաններում ստրուկներին գնում էին փյունիկացի ստրկավաճառները: Բնական է, որ ստրուկների երեխաները որպես ըստրուկ զարգացնում էին տնային ստրկության ինստիտուտը: Այնուամենայնիվ Հայաստանը չդարձավ ստրկատիրական երկիր: Չնայած տնային և, հնարավոր է, տաճարային ստրկության լայն տարածմանը՝ հիմնականում շարունակվում էին տոհմահամայնական հարաբերությունները: Հայաստանում



Աղ. 67. Ուշ բրոնզի դարաշրջանի գտածոներ Քարաշամքից։

սփռված են ազատ համայնականների բնակավայրեր ու դամբարաններ: Այս բնակավայրերը, որպես կանոն, տեղադրվում էին կամ կիկլոպյան ամրոցների մոտ, կամ էլ դրանց տիրույթի շրջանակներում: Բնակավայրերի յուրաքանչյուր թաղամաս մյուսներից անջատվում էր նեղ անցումներով, իսկ կացարանները միևնույն տանիքի տակ էին: Յուրաքանչյուրում ապրում էր մեծ նահապետական ընտանիքը, որը ստորաբաժանված էր առանձին բջիջների՝ ընդհանուր գործիքներով, քաշող ուժով, միևնույն արհեստագործական ապրանքներով: Ընդհանուր էր փոխանակային գործունեությունը: Մեծ նահապետական ընտանիքը տոհմահամայնական կազմակերպությունների տնտեսական, հասարակական միավորն էր:

Նահապետական ընտանիքի կազմը բազմաքանակ էր և հասնում էր մի քանի տասնյակ մարդու: Վանի և Ուրմիո լճի ,,արքայական ընտանիքների,, թվաքանակը հասնում էր 260 մարդու: Անկասկած, այս թվերը վկայում են, որ մեծ ընտանիքի կազմը ծագում է միևնույն ծնողներից և աճում է մի քանի սերունդների ընթացքում: Սակայն արքայական տների կազմը չպետք է շփոթել արքունիքի հետ, որը կազմվում էր տարբեր ընտանիքի և տարբեր սոցիալական խմբերի ընդհանրությունից:

Հավանաբար, Հայաստանի ցեղերի ուշ քրոնզեդարի հասարակական կարգը կարելի է համեմատել վաղ խեթերի ու խուրիտների հետ, որոնք կազմված էին նահապետական ընտանիքներից: Ենթարկվելով նահապետների իշխանությանը, որոնցից յուրաքանչյուրը ուներ անբաժան հողային Փոնդ և, ինչպես կտեսնենք ստորև, դամբարանային համալիրներից խիստ հաստատագրված հասարակական ստորաբաժանում և վարկ ստանալու իրավունք, այն ի վերջո, հանգեցրեց վաշխառությանը և պարտքային ստրկության հանդես գալուն:

Ավելի խոշոր ցեղերը և դրանց միավորները ունեին ընդհանուր լեզու, էթնիկական ինքնագիտակցություն, տարածք և միասնական պաշտամունքը: Հայաստանում կային հարյուրավոր ցեղեր, ցեղային միություններ, որոնք ունեին իրենց որոշակի տարածքները, երբեմն նաև քոնի ճանապարհներով ձեռք բերված, որի հետևանքով հաճախակի էին դառնում միջցեղային բախումները և պատերազմները: Յուրաքանչյուր նման ,,երկիր,, ուներ իր ավազակների խորհուրդը, ժողովրդական ժողովը, իր տոհմական առաջնորդը և կառավարիչը /իշխան/: Սակայն ռազմական վտանգի դեպքում նրանք կարող էին միավորվել տարբեր միությունների հետ, որը կրում էր միջցեղային բնույթ, և հանդես գալ դաշինքով թշնամուն դիմակայելու համար: Այսպես, Ուելիկուխեի երկիրը /Գավառ գետի հովիտ, Սևանի ավազանի/ ուներ 22 կիկլոպյան ամրոց:Դատելով ավելի ուշ շրջանի քիմայական արձանագրություններից, Ուելիկուխե երկրում կային նաև 3 երկրներ՝ Աղթունի, Արկուկինի և Լուխիանի, որոնցից յուրաքանչյուրն ու-

ներ իր ամրոցների շարքը: Նման պատկեր է նկատվում Շիրակում, Արագածոտնում և Հայաստանի այլ շրջաններում:

Սակայն էթնիկական պրոցեսները անհավասարաչափ էին զարգանում Հայկական բարձրավանդակում: Հայաստանի հյուսիսային մարզերի ցեղերը ապրում էին համեմատաբար հանգիստ պայմաններում և չունենալով վտանգ Հին արևելյան երկրների կողմից, խոշոր ցեղային միությունների մեջ չէին կազմավորվում, որը կտաներ դեպի պետության ստեղծում: Այնուամենայնիվ դրանք բռնել էին պետության ստեղծման ճանապարհը: Միևնույն ժամանակ Հայաստանի հարավային և արևմտյան մարզերը բնակեցնող ցեղերը կազմեցին մի շարք միություններ: Այսպես, հարավային մարզի ցեղերը ասուրական էքսպանսիայից պաշտպանվելու համար ստեղծեցին Նաիրի-Ուրարտուի միությունը, որը մի քանի տասնյակ ցեղերի կոնգլոմերատ է: Ասուրական թագավոր Թուկուլտի Նինուրտան նշում է, որ Նաիրի երկրի 43 ,,թագավորների,, հետ մարտնչել է: Հետաքրքիր է, որ նրա արձանագրություններից մեկում այս առաջնորդների հետ հիշատակում է նաև ,,թագուհիներ,, որոնք իրենց Ֆունկցիաներով համապատասխանում են Հայաստանի հարավային մարզերի և խեթական աշխարհի ,,կին թագուհիներին,, և մեծ դեր են խաղացել քաղաքական, տնտեսական հոգևոր կյանքում:

Հայ ժողովրդի պատմության տեսանկյունից հատկապես կարևոր են խեթական վկայությունները Հայասա երկրի մասին: Հատկապես հետաքրքիր են Թութիալիաս 3-րդի /1400 մ.թ.ա./ և նրա որդի Շուպիլուլիումասի /1380-1346 մ.թ.ա./ արձանագրությունները, որոնցից երևում է, որ հայացիները Ազզի երկրի միավորումով գրավեցին Եփրատի վրա գտնվող տարածքները: Չնայած այս աղբյուրները խոսում են Հայասա-Ազզիի պարտության մասին, պետք է կարծել, որ խեթական զորքերը Շուպիլուլիումասի առաջնորդությամբ չհասան վերջնական հաղթանակի: Փոքր-ինչ ավելի ուշ, Միտաննիի դեմ արշավելիս տեղի ունեցավ Շուպիլուլիումասի և Հայասայի միջև մի այլ բախում, որից հետո կնքվեց Հայասայի թագավոր Խուկկանասի և խեթական թագավորի միջև պայմանագիր, ըստ որի Հայասայի թագավորը հավատարմության երդում տվեց Շուպիլուլիումասին՝ պարտավորվելով օգնել ռազմական ուժով, պահպանել խեթական գաղտնիքները, վերադարձնել Հայասա փախած խեթերին: Խեթական թագավորը Խուկկանային կնության տվեց քրոջը հետևյալ վերապահումով.,,Խեթիի երկրում կա կարևոր օրենք՝ եղբայրը իրավունք չունի նայել քրոջը, քանի որ այդ անարդարացի է, ով որ այսպես կանի, նա կմահանա, իսկ ձեր երկիրը քարքարոս է, և այստեղ սովորաբար եղբայրը ճանաչում է քրոջը և իր զարմուհուն, որը խատիում չի թույլատրվում: Եվ երբ քեզ մոտ կըգա կնոջդ միածին կամ միարյուն քույրը, տուր նրան ուտելիք և

և խմիչք, և կերեք ու խմեք և ուրախացեք, քայց չհամարձակվես ցանկանալ նրան ծանաչել, քանզի դա կպատժվի մահով,,: Շարունակելով նշվում է, որ խեթական արքայի նորաթուխ փեսան կժամանի Խաթուշաշ, նա պիտի խուսափի հարեմի կանանցից և քերվում է զգուշացող օրինակ, երբ ռամ Մարիասը /ըստ երևույթին Ազզի երկրի առաջնորդը/սպանվեց միայն նրա համար, որ խեթական թագավորը նրան տեսավ պալատական կնոջը նայելիս. ,,Խուսափիր պալատական կանանցից, ազատ կլինի նա, թե հարց, մի մոտեցիր, նրան, մի խոսիր նրա հետ ոչ մի խոսք, թող քո ստրուկը և ստրկուհին նույնպես չմոտենան նրան և զգույշ եղիր: Երբ գալիս է պալատական կինը, փախիր նրա առջևից՝ նրան տալով ճանապարհ: Բացի դրանից Խուկկանային կարգադրվում է. ,,Մի վերցրու կին Ազիի երկրից և այլն/ կնոջը, որին դու տիրում ես, համարիր քո կինը և դարձրու նրան գլխավոր կին/: Այսպիսով պարզ է դառնում, որ միայն խեթական արքայի քույրը պիտի լիներ Հայասայի լիարժեք և միակ թագուհին: Զսահմանափակվելով դրանով, Շուպիլուլիումասը տալիս է ևս մեկ պատվիրան. ,,Եթ վերցրու Մարիասից քո աղջկան և տուր եղբորդ /այսինքն հարազատ ցեղակիցներին/,,: Այստեղ Մարիասը վերը հիշատակված սպանված անձնավորությունը չէ,այլ Ազզի երկրի թագավորը, որը հայասացիների հետ դաշինքի մեջ էր՝ կապվելով էնդոգամ ամուսնությամբ: Այս արձանագրության հատվածը հետաքրքիր տվյալներ է հաղորդում հայասական վերնախավի կյանքի և քարքերի մասին: Նման երևույթ թերևս կարող էր լինել Հայասայի այլ երկրներում: Պարզ երևում է, որ ցեղային ավազանին ուներ հարեմ, հարներ և բազմաթիվ կանայք, որոնց մեջ առանձնանում է գլխավոր կինը, որի երեխաները օրինական ժառանգորդն էին համարվում զույգի և իշխանության: Այդ ժամանակ Հայասայում տիրապետում էր ամուսնության մի կարգ, ըստ որի տղամարդը ամուսնական իրավունքներ ուներ նաև իր կնոջ քույրերի և նրա տոհմի այլ կանանց նկատմամբ:

Վերը նշվեց, որ քննարկվող ժամանակաշրջանում /2-րդ հազարամյակի երրորդ քառորդ/ Միտանի հյուսիսային հարևան էր ուժեղ և անկախ Ազիի /Ալզի, հետագայում՝ Աղձնիք/ թագավորությունը, որը Հայասայի հետ կապված էր հարևանական հարաբերություններով: Ազիում նույնպես տիրապետող էին նույն սոցիալական հարաբերությունները: Չնայած մանրամասների սակավությանը, հայտնի է թագավորներից մեկի՝ Անտառատլիմի /Անդառատլիս/ անունը, որը գտնվում էր խեթական թագավոր Շուպիլուլիումասի հետ դաշինքի մեջ, մասնակցելով պատերազմներին ընդդեմ Միտանիի, որի համար նա ստացավ միտանական Կուղմար ամրոցը:

Հին արևելյան երկրների միջև հաճախակի կռիվները, ինչպես նաև հյուսիսային ցեղերի միջև քախումները իրենց պաշտպանականությունը

արտաքին էքսպանսիայից ամրացնելու նպատակով քարձրացնում էին առաջնորդների դիրքը, որոնք ունեին երբեմն մի քանի հազարանոց ցեղային ջոկատներ՝ բաղկացած թեթև և ծանր հետևակից, մարտակառքեր, հեծելազոր: Դրանց սպառազինության մասին, քացի դամքարաններից գտնված զենքերից, խոսում են նաև Լճաշենից և Լոռի քերդից հայտնի բրոնզե մարտակառքերի մանրակերտերը: Ռազմական ավազանու հզորացումը ոչ միայն նպաստում էր իշխանության հզորացմանը, այլև խթանում էր տոհմատիրական կարգերի քայքայմանը; հանգեցնելով դասակարգային հարաբերությունների առաջացմանը, պետության ստեղծմանը: Հաճախակի պատերազմները զգալիորեն հարստացնում էին ցեղային ավազանուն, որի ձեռքին են գտնվում անասունների հոտերը և ոսկյա և արծաթյա իրեր: Դրանք ժառանգաբար էին անցնում և դառնում մասնավոր սեփականության համար հիմք: Ցեղային ավազանին աստիճանաբար կտրվում էր ցեղակիցներից: Եթե առաջ կիկլոպյան ամրոցները ամբողջ ընակչությանն էին պատկանում, ապա այժմ դրանց ներսում կառուցվում էր ավազանու միջնաբերդը:

Ինչպես վերը նշվեց, Լճաշենի, Արթիկի, Խուրջին հողերի, Լոռի քերդի թաղումները վկայում են գույքային անհավասարության մասին: Հատկանշական է, որ նշված և այլ դամքարանաղաշտերում տասնյակ և հարյուրավոր դամքարանների մեջ առանձնանում են սահմանափակ քանակությամբ հարուստ թաղումներ: Այսպիսի շքեղությամբ և հարստությամբ թաղված առաջնորդները այն ,,թագավորներն,, էին, որոնց մասին վկայակոչում են խեթական, ասորական և ավելի ուշ շրջանի քիայնական սեպագիր արձանագրությունները:

Սոցիալական և գույքային անհավասարությունները բնորոշ էին ոչ այն ռազմաքրմական վերնախավի, այլև նրան հարող մեծ խումբ կազմող հարուստ երկրագործների, անասնապահների, զինագործ-ոսկերիչ արհեստավորների դասին, ինչպես և խոշոր առևտրականներին, որոնք կազմում էին հատուկ սոցիալական խումբ՝ վաղուց կտրվելով իրենց իսկ միջավայրից, մերվելով ցեղային ավազանու հետ:

Նշվածը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ ուշ բրոնզեդարում Հայաստանում ձևավորվել էր տոհմացեղային ավազանին իր շրջակայքով, միջավայրով, ապահովելով սոցիալական և տնտեսական զարգացման առաջընթացը, նախապայմաններ ստեղծելով պետականության ստեղծման համար: Սակայն այդ պատմական պրոցեսը իր ավարտին չհասավ Քիայնական պետության ստեղծման պատճառով, որի կազմում ընդգրկվեցին նախապետականության շեմին կանգնած վերոհիշյալ ցեղային միությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արեշյան Գ., Սիմոնյան Հ., Սարգսյան Գ., Քոչարյան Գ., Օհանյան Հ., Հայագիտական կենտրոնի 1977-1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները, ԲԵՀ, ՀԳ, Երևան, 1979, նո. 2, էջ 205-204.

Բարսեղյան Լ.Ա., Ուշ բրոնզի էպոխայի մի քանի նորահայտ պաշտամունքային հուշարձաններ, ՊԲՀ, 1926 նո. 3

Բարսեղյան Լ.Ա., Գեղամա լեռների վիշապները, ՊԲՀ, 1967, նո.4

Բիյագով Լ.Ն., Սոյուզի պատկերներով նոր զոհաբերներ Մեղրաձորից, Լրաբեր ԳԱ, 1984, նո 1:

Դեվեջյան Ս.Գ. Տաշիր-Զորագետի բրոնզեդարյան մի քանի ոսկե և արծաթի իրեր Լրաբեր, ԳԱ, 1966, նո. 12:

Դեվեջյան Ս.Գ. Ուշ բրոնզեդարյան մետաղագործության մի քանի հարցեր ըստ Տաշիր-Զորագետի յնութերի, Լրաբեր, ԳԱ, 1968, նո. 8:

Դեվեջյան Ս.Գ. Եղջերվի պաշտամունքի հետքերը Հին Հայաստանում, ՊԲՀ, 1982, նո. 2:

Դեվեջյան Ս.Գ. Թազակիր իշախնի պատկերը Լոռի բերդի բնակավայրերից, Լրաբեր ԳԱ, 1986, նո. 8:

Դեվեջյան Ս.Գ. Լոռի բերդի նո. 2 դամբարանի ոսկե և արծաթե զարդերը, ՊԲՀ 1971, նո. 1:

Դեվեջյան Ս.Գ. Լոռի-բերդի նո. 2 դամբարանը, ՊԲՀ, 1972,նո.2:

Դեվեջյան Ս.Գ., Լոռի բերդի մարտակառքը ուշ բրոնզի դարում, ՊԲՀ, 1986, նո. 1:

Դեվեջյան Ս.Գ. Լոռի բերդի քրմի դամբարանը աքհ, 1986, նո. 3:

Եսայան Ս.Ա., Կարապետյան Լ.Լ., Հնագիտական հայտնաբերումներ Երևանում, ՊԲՀ, 1963, նո. 3:

Իսրայելյան Հ.Ռ., Հայաստանի բրոնզե զոտիների որսորդական տեսարանները, ՊԲՀ, 1966, նո. 2:

Իսրայելյան Հ.Ռ., Արևի պաշտամունքի հետքերը բրոնզեդարյան Հայաստանում, Լրաբեր ԳԱ, 1967, նո. 4:

Իսրաելյան Զ.Ռ. Պաշտամունքն ու հավատալիքները ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973:

Խանզադյան Է.Վ. Գառնի 4-րդ, Երևան, 1967:

Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ.Հ., Պարսամյան Է.Ս. Մեծամոր, Երևան, 1973:

Խնկիկյան Օ.Ս. Հետախուզական պեղումներ Ղափանի շրջանում /1970-1971թթ/ ՊԲՀ, 1973, նո. 3:

Խնկիկյան Օ.Ս., Պեղումներ Տանձավեր և Շիկահող գյուղերում,ՊԲՀ, 1975, նո. 2:

Ղարիբյան Ի.Գ., Բիազով Լ.Ն., Ուշ բրոնզեդարյան նորահայտ դամբարան Մեղրաձոր գյուղի տարածքից, ԲԵՀ, 1987, նո. 2:

Մարտիրոսյան Հ.Ա. Հայաստանը զարգացած կամ ուշ բրոնզի ժամանակաշրջանում Հայ ժողովրդի պատմության, հ.1, Երևան, 1971թ.

Մնացականյան Հ. Հնագիտական պեղումներ Սևանա լճի ցամաքած տարածքում, Էրաբեր, 1952, նո. 8:

Մնացականյան Հ. Հին դամբարանադաշտ Ցամաքաբերդ գյուղի մոտ, Էրաբեր 29, 1954, նո. 5:

Մնացականյան Է. Լճաշենի նյութական մշակույթի զարգացման հիմնական էտապները, ՊԲՀ, 1965, նո. 2:

Арешян Г.Е. К проблеме отнесительной независимости развития культуры и социальной организации (По материалам бронзевого века Армянского нагорья и Южного Кавказа). В кн.: Культурный процессы в эпоху бронзы и раннего железа. Тезисы докладов. Ереван, 1982.

Арешян Г.Е. Орудия труда артикского могильника. ИФЖ, 1970, №3

Арешян Г.Е. Материалы из раскопок Кармирбердского могильника музея Грузии. Вестник, ЕГУ, 1971, № 1.

Арешян Г.Е. Вопросы типологии поселений Армении позднего бронзового и раннего железного веков, в кн.:Научные сообщения Гос.музея искусства народов Востока, вып. X.М.,1978,

Геворкян Р.Ц. Из истории древнейшей металлургии Армянского нагорья, Ереван, 1980.

Гогинян С.К. К истории древней металлургии железа в Армении ИФЖ, 1964, № 3.

Деведжян С.Е. Лорибердский могильник,СА,1974, № 2.

Деведжян С.Г. Лори берд I, Ереван, 1981.

Есаян С.А. Оружие и военное дело древней Армении.Ереван, 1966.

Есаян С.А. Ереван (археологический очерк).Ереван,1969.

Есаян С.А. Скульптура древней Армении, Ереван, 1980.

Есаян С.А.Древняя культура племен Северо-Восточной Армении. Ереван 1976.

Есаян С.А. Об одной неправильной реконструкции. Труды ГИМА Арм.ССР, т.У, 1959.

Есаян С.А.Защитное вооружение древней Армении, ИФЖ,1962,№1.

Есаян С.А.Каменная статуэта из Шамшадина.СА,1969, № 1.

Есаян С.А.,Мнацаканян А.О. О статуэтках из Лчашена.ИФЖ,1975 № 2.

Есаян С.А.,Шатинян А.И. Археологические находки в Зангезуре. СА, 1962.

Куфтин Б.А. Археологические раскопки в Триалети. Тбилиси.1941.

Кушнарева К.Х. Археологические работы 1954г. в окрестностях села Ходжалы. МИА, 67.

Кушнарева К.Х. К вопросу о социальной интерпретации некоторых погребений Южного Кавказа. КСИА, вып. 134, 1973.

Кушнарева К.Х. Ходжалинский могильник, ИФЖ, 1967, № 2.

Кушнарева К.Х. К вопросу о развитии ремесел на Южном Кавказе в древности. ИФЖ, 1974, № 2.

Мартиросян А.А. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1954.

Мартиросян А.А. О древнем населении около Ленинакана. Изв.АН АрмССР, 1952, № 10.

Мартиросян А.А., Хачатрян Т.С. Комплекс изделий из могильника Такиа. Изв. АН АрмССР, 1959, № 11-12.

Мартиросян А.А. Новые памятники первобытной культуры Армении, ИФЖ, 1969, № 3.

Мартиросян А.А. Поселения и могильники эпохи поздней бронзы. Ер., 1969.

Мелхумян С.К. Палеофауна эпохи энеолита, бронзы и железа на территории Армении. Ереван, 1972.

Мнациканян А.О. Находки предметов бронзового века в селе Толорс (в Зангезуре). АрмССР,КСИИМК,1954,вып. 54.

Мнацаканян А.О. Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан. СА , 1960, № 2.

Мнацаканян А.О. Раскопки курганов на побережье оз. Севан.СА, 1952, № 2,

Мнацаканян А.О. Лчашенские курганы (Раскопки 1956 г.) КСИА, 1961, вып. 85.

Пиотровский Б.Б. Археология Закавказья. Л., 1949.

Пиотровский Б.Б. Вишапы - каменные в горах Армении. Л.,1939.

Симонян А.Е. Раскопки могильника Верин-Навер. В кн.: АО,1979. М., 1979.

Торосян Р.М. Хнкикян О.С.,Петросян Л.А. Раскопкив Ширакаване. В кн.: АО за 1978 г. М., 1979.

Хачатрян Т.С.Древняя культура Ширака, Ереван, 1975.